Յակոբ Պարոնյան

Խոզնոցան

1956
12 月

Խաչիկ Պետրոսյան

Խողեղան

ՎԵՊ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1956

Յակոբ Պարսամեան

Խողեղան

ՎԵՊ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1956

АЧИК ПАЩТЕНИ

ХОДЕДАН

роман

(На армянском языке)

е государственное издательс
(Айпетрат)
Ереван — 1956

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
38	4 ն.	բոխի ինճ	բոխինճ
102	8 վ.	Բաղլվա Մխսակը	Բաղլվա Սիսակը
183	6 վ.	երեք հովիվներ	երեք հովիվները
184	3 վ.	գլգել արտերը	գլգլի արտերը
257	16 ն.	բայց մենակ կատարեցինք	բայց մենք կատարեցինք
327	8 ն.	տասնմեկ սասունցիները	տասներեք սասունցիները
335	2 վ.	Դրախտաձոր	Դրախտաքար
344	6—7 վ.	Սեմալցի Կրպեն	Սեմալցի Թաթոն
344	14 վ.	բնակություն	բարեկամություն

ԽՈՍՔ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Սիրելի՛ վարպետ.

1943 թվականին, Հայրենական պատերազմի օրերին, Դուք երկու ամիս ապրեցիք Թալինի շրջանի Իրինդ և նրա հարևան կոլխոզային գյուղերում։ Հիշո՞ւմ եք Շղարշիկ գյուղի այն կարմրաշեն տունը, ճանապարհի վրա, ուր Դուք մի շաբաթ հյուր եղաք։

Ես հիշում եմ Ձեր խոսքերը Իրինդի աշխատավոր գյուղացիներին հանդիպելու ժամանակ.— սիրելի սասունցիներ, ես վաղուց երազում էի ձեզ տեսնել ձեր ծննդավայրում, Սասունցի Դավթի նվիրական հողի վրա, բայց ճակատագրի բերումով տեսնում եմ այստեղ՝ Արագածի լանջին, ձեր նոր հայրենիքում։ Սովետական իշխանությունը ձեզ փրկեց ֆիզիկական բնաջնջումից և հնարավորություն տվեց Արագածի վրա վառել ձեր դյուցազնական տոհմի ծուխը, որն այժմ պալա՞ն-պալա՞ն ելնում է ձեր ակութներից։

Հիշում եմ նույնպես այն սրտաշարժ և ուշագրավ դեպքը, Ներքին Սասունաշենից դեպի Վերին Բազմաբերդ տանող ճանապարհի վրա, երբ դիմացից սրընթաց եկող մի ձիավոր իրեն թամբից վայր նետեց Ձեր առաջ, խնդրելով, որ իր՝ ձին նստեք և այնպես գնաք Բազմաբերդ, որ Ձեր ոտքերը չցավեն։

Եվ, վերջապես, հավետ անմոռանալի կմնա մեր վերելքը ձիերով դեպի Արագածի կանաչ բարձունքները (Իրինդի ֆերման և Արագածի ոչխարաբուծական սովխոզը), մի վայր, որտեղ Դուք եղել էիք դրանից հիսուն տարի առաջ։ Ի՞նչ խրոխտ և պարթև հասակ ունեիք դուք երիվարի վրա և որքան համադիր էր այն՝ Ձեր երգած Արագածի լեռնային չքնաղ բնանկարի հետ։

Ո՛ւր գնում էինք՝ սասունցի աշխատավոր ժողովուրդը Ձեզ դիմավորում էր ջերմագին սիրով, թե՛ իր գոչգոչուն աղբյուրների առաջ և թե՛ իր ընտանեկան հարկի տակ։ Այդ ամենը տեսնելով, ես հրճվանքով մտածում էի, թե, որքան խորն եք Դուք արմատավորված հայ ժողովրդի սրտում։

Ահա այդ պարզ և աշխատավոր մարդկանց մասին է գրված այս վեպը։

Սասունցի մի չքավոր ընտանիքի նկարագրությամբ այս գրքում ներկայացված է մի ամբողջ շինական աշխարհ՝ իր կենցաղով, սովորություններով և առաքինի գործերով։

Մի շասված խոսք կար իմ սրտում։ Այդ խոսքն էր որ վայր ընկավ։ Սա մի պատմություն է այն սերնդի մասին, որին Դուք սիրել եք և որն այլևս չի կրկնվելու։

Այդ սերնդի մարդկանցից շատերն այժմ չկան։ Վեպի կենտրոնական անձին՝ Հովիվ Խոդեգանին, Դուք տեսաք 1943 թվին Իրինդում, ամառային մի խաղաղ երեկո, երբ նստած զրուցում էինք գյուղի դպրոցի առաջ։ Ցավով հայտնում եմ, որ նա նույնպես չկա ապրողների մեջ։

Ավարտելով այս գործը սասունցի այդ հասարակ ու ավանդապահ մարդկանց մասին, ես այն սիրով ձոնում եմ Ձեզ, ի հիշատակ տարիներ առաջ դեպի Արագած կատարած մեր այն անմոռանալի և երկարատև ուղևորության։

1956 թ. մայիսի 28·
Երևան

ՀԵՂԻՆԱԿ

ԽՈՍՔ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Վաղո՜ւց, վաղո՜ւց մտորում է իմ մեջ
մի անհուն ցանկություն։ Վաղո՜ւց ելք է
փնտրում կուտակված մի կարոտ։

Ե. Չարենց

«Խոդեդանը» վեպ է մի հայ շինականի և նրա սերնդի մասին։ Այդ վեպը 1950 թվականին Երևանում լույս տեսած մեր համանուն վիպակի նյութի վրա գրված մի բոլորովին նոր և ամբողջական գործ է։ Ինչ որ այս գրքում պատմված է՝ մեծ մասը եղած-կատարված բաներ են։ Վեպի որոշ գլխներում զգացվող առասպելի պատրանքը, հեքիաթային ու երազային շունչը արդասիք է այն բանի, որ նկարագրված մարդիկ Հայաստանի լեռների բնակիչներ են (ծնված են մեծ մասամբ Սասունում) և, գրեթե, ամենքն էլ իրենց համարում են սերված Սասնա ծռերի տոհմից։ Ամեն մեկը նրանցից առանձին վերցրած մի սասնա ծուռ է։

Այդ մարդկանց ավագ սերունդը հետզհետե անհետանում է։ Եթե որևէ հետաքրքրվող կամենա տեսնել նրանցից մեկն ու մեկին, նա պետք է գնա Թալինի և Աշտարակի շրջանի լեռնային ամենահեռավոր գյուղերը։ Այդ հին, ավանդապահ սասունցիների մի մասի պատկերը (այդ թվում և Խոդեդանի դիմանկարը) նա կարող է այժմ տեսնել մեր Պետական Պատմական թանգարանի ազգագրական բաժնում։

Նրանք արդեն անցյալ են դարձել։

Աշխի և առաքինի էին այդ մարդիկ։ Նրանք ծնված էին գյուղական անշուք խրճիթների մեջ, ունեին երկրագործի կոշտացած ձեռքեր, ստեղծագործ բազուկ, և ամենքն էլ մի նվիրական իղձ էին փայփայում.— տեսնել Հայաստանը ազատագրվա՛ծ օտարազգի բռնապետների դարավոր լծից։ Այդ մարդիկ հետագայում դարձան Սովետական Հայաստանի համայնական դաշտերի առաջին շինարարները գյուղում։ Նրանք մասնակցեցին այն մեծ սխրագործությանը, երբ բացվում էր առաջին համայնական ակոսը և շաղ էր տրվում առաջին համայնական հունդը նորաստեղծ Հայաստանի հողի մեջ։

Իմ աչքերն այս գրքում հառած են ահա այդ հասարակ, բայց մեծ մարդկանց վրա։ Քաղցր է ինձ համար մի պահ լինել նրանց հետ, լսել նրանց ձայնը, խոսել նրանց մասին։

Սույն վեպի հերոսների մի մասի հետ ես անձնական ծանոթություն եմ ունեցել և ամառային լուսնյակ գիշերներին գյուղական քարափներին նստած երկար զրուցել եմ նրանց հետ։

Թամոյին ես չեմ տեսել, իսկ Խոդեդանի (Ասատուրի) հետ ես հաց եմ կիսել 1942 թվականի ամռանը իր ընտանեկան հարկի տակ, Իրինդ գյուղում։

Կարելի է ասել՝ տեսել եմ նաև Թելո Մեսրոպին։ 1953 թվականի օգոստոսի 25-ին Ն. Թալին գյուղում ինձ ցույց տվեցին այդ անունը կրող մի հարգելի ծերունու, սակայն պետք է հայտնեմ, որ իմ նկարագրած Թելո Մեսրոպը Մշո Բերդակ գյուղացի է, և միայն իր անունով և զբաղմունքով է հիշեցնում վերոհիշյալ Թելո Մեսրոպին։

Առհասարակ պետք է նկատեմ, որ թեև իմ հերոսներից շատերը իրական մարդիկ են, բայց ես ամենևին նպատակ չեմ ունեցել հետևելու նրանց կենսագրությանը։ Նրանք իրենց բնավորության որոշ գծերով, անուններով կամ զբաղմունքով հիշեցնելով այս կամ այն շինականին, միաժամանակ հանդիսանում են ընդհանրացած տիպեր։ Այդպես են նաև Խոդեդանը և Բայազը։ Մասամբ այդպես է նաև բռնաշենցի Հովիվ Տոնեն, որի հիշատակի առաջ ես պարտական եմ թե՛ իբրև որդի և թե՛ իբրև հայ շինականի զավակ։ Կարելի է ասել այս գրվածքը ձեռնարկելու ամենանվիրական ազդակներից մեկը նրա անմոռաց պատկերն է եղել։ .

Սիրելի՛ հայր, ես քո դեմքը երազի պես եմ հիշում։ Քառասուն տարի է անցել այն օրից, երբ դու ինձ շալակելով անցար Մեղրագետի ափերով, կամենալով փախցնել Արևելյան Հայաստան։ Քո կյանքի ուղին ընդհատվեց Մուշ քաղաքում։ Եվ այժմ, քառասուն տարի հետո, իմ աչքերից թափվում են այրող արցունքներ քու հեռավոր ու անհայտ գերեզմանի վրա և բոլոր նրանց շիրիմների վրա, որ հանգչում են քեզ հետ Մշո դաշտում . . . . . .

. . . . . .

Լավ թե վատ՝ այս է այն ամենը, ինչ որ ես կարողացել եմ փրկել մոռացության երախից։

Մեծ վիպասան Բաֆֆին ասել է թե՝ հողագործ մարդկանց կյանքը լավ ճանաչելու համար պետք է «...նրա խրճիթը մտնես»։ Մնված լինելով այդ խրճիթներից մեկում, ես մանկությունից սիրել եմ այդ շինական աշխարհը։ Ես եղել եմ նրանց հին ու նոր տներում, և հարազատ է ինձ գյուղի ճամփան։

Ե՛կ, սիրելի ընթերցող, խոնարհենք մեր գլուխը և պատկառանքով կոխենք այն նվիրական շեմքը, որ մեզ մի քանի ժամով կառաջնորդե այն տնակներից ներս, ուր ապրել և գործել են մեր պապերը։

Լուսաբացի շաղը ոտքիս վրա է, և դեմքիս փչում է մի բաղձալի զեփյուռ։

Ե՛կ գնանք ինձ հետ։ Հնարավոր է, որ շտապելուց սայթաքեմ, բայց չեմ մոլորվի։

Ես այդ ճամփաներին ծանոթ եմ։

ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑ

1956 թ., մայիսի 28
Երևան



ՇԵՆՈՒՄ

Ցրտոտ գետի ալիքները հանկարծակի կարմրեցին։

— Տունդ վառվո՞ւմ է, Խոդեդա՛ն,— հևիհև վազելով գոչեց նախրապահ Մկրտն, որ հեռվից նկատել էր հրդեհը։

Ասատուրը գետի միջից վերև նայեց։ Թեթևակի շառագունել էր նաև գյուղի երկինքը։

— Շտապի՛ր,— ձեռքով արավ Բոլոռ Մկրտն և, նախիրը գետափին թողնելով, սարն ի վեր սուրաց։

Շորերը արագորեն հագնելով, նախրապահի ետևից դեպի վեր սլացավ տագնապահար հովիվը։ Նրա դեմքը լուսավորված էր հրդեհի բոցերով։ Նա սլանում էր առաջ մրրիկի արագությամբ՝ հովվական գավազանը ձեռքում պահած։

Եվ իսկապես, բարձր քարափի վրա վառվում էր Խոդեդանի հայրենական տունը։

Ասատուրի պապը՝ Զորո-Դավիթը, հարյուր քսան տարի առաջ Մոտկան էր եկել Տալվորիկի Հոսնոտ ավանից։ Նա այդ գավառակի

Շեն գյուղում, Ցրտուտ գետի ակունքին, շինել էր մի խրճիթ, որ գավառում հայտնի էր Զորո-Դավթի տուն անունով։

Խոդեդանի հայրը՝ Հովիվ Գալուստը, որ իր երկրի ազատագրության համար մարտնչել էր 1877 թվականի կռիվներում, վերջին տարիներին մշակություն էր անում Դիարբեքիրում։ Նա զանգակավոր ուղտերով հարուստների բոստաններից ձմերուկ էր տեղափոխում դեպի քաղաքի շուկան։ Զմռանը՝ իր ավագ որդու՝ Ճնճուղ Լևոնի հետ Դիարբեքիրից Շեն վերադառնալիս, ծերունի Գալուստը մնացել էր ձյունի վիթխարի հուսինի տակ և խեղդվել։ Աստուրի մորը՝ պառավ Ատլասին, որ հայ և քուրդ աղաների թոնիրներն էր վառում, տեսել էին տարերում մի կապոց հաց շալակին։ Կասկածելով, որ ուտելիք է տանում ֆիդայիների համար, և որդու հետ մասնակցել է օսմանյան բռնապետության դեմ ուղղված 1894 թվականի գյուղացիական ապստամբությանը, մի օր, կաթ եռացնելիս, Շաբաթ բեկի երկու տղաները, գաղտագողի մոտենալով, նրան հրել էին բոցավառ թոնրի մեջ և վառել։

«Ամուսինը ձյունների մեջ, իսկ ինքը կրակի մեջ», ինչպիսի՞ հակադիր և խորհրդավոր վախճան,— պատմում էր ժողովուրդը այդ դժբախտ ընտանիքի մասին։

Այդ ծանր հարվածից երկու տարի հետո Ճնճուղ Լևոնի կինը՝ պառավ Ոսկեհատը և կրտսեր տղան՝ Ստեփանը մի քանի հայրենատանիքների հետ Մոտկանից տեղափոխվել էին Բռնաշեն, իսկ Խոդեդանը մնացել էր Շենում իր պապի՝ Զորո-Դավթի ամայացած օջախը կենդանացնելու համար։ Բայց վրա էր հասել մի կործանարար հարված ևս։ Նրա աչքերի առաջ, օրը ցերեկով, վառվում էր իր հայրենի տունը։

Գյուղի հարուստ հողատեր Շաբաթ աղան, ընդարձակելով իր կալվածքը, հետզհետե տեր էր դարձել այն բոլոր վայրերին, որ գտնվում էին Ցրտուտ գետի ակունքի մոտ։ Նա մի քանի անգամ կամեցել էր գրավել նաև Աստուրի տունը և փոքրիկ կալը, բայց սատանցին խստորեն մերժել էր նրա պահանջը։

Բեկը կատաղելով հրկիզել էր նրա խրճիթը։

Աղան իր շարագործությունը կատարել էր կեսօրին, երբ բոլոր տղամարդիկ և աշխատավոր կանայք բացակայում էին գյուղից և զբաղված էին երկրագործական աշխատանքներով՝ լեռներում կամ խորախոր ձորերի մեջ։

Կանգնած էր Շաբաթ աղան հրդեհվող տան մոտ և տիրաբար նայում էր կրակի բոցերին, որ ճարակում էին Խոդեդանի խրճիթի ծխոտ գերանները, պատերի հնամաշ գորգերն ու կարպետները, ամբարների հացը, խնոցին, անկողինները։

Տանիքն արդեն փուլ էր եկել։

Մի քանի պառավ կանայք և հարսներ կժերով և մեծ տաշտակներով ջուր էին լցնում կրակին՝ հրդեհը մարելու համար, իսկ ոմանք ձեռները խաչած՝ շարվել էին վառվող տան շուրջը և անզոր, բայց կատաղի հայացքներով նայում էին շարագործ բեկին։ Նրանցից մեկը, որ մի հաղթանդամ գեղջկուհի էր՝ Գյուլե անունով, աշխատում էր բոցերի միջից գոնե փրկել Աստուրի հարսանիքի սնդուկը, որի վրա մի սև ծանր կողպեք կար։

Գյուլեն Բոլոռ Մկրոյի կինն էր, որ գյուղում հռչակված էր իր համարձակությամբ։ Երբ տղամարդիկ կռվում էին, բավական էր, որ Գյուլեն երևար նրանց մեջտեղը, և կողմերը դադարեցնում էին կռիվը։ Դիմադրողին ապտակում էր՝ համարելով նրան կնոջ ներկայությունը չհարգող ցածոգի տղամարդ։

Գեղջկուհին գրկեց կիսավառ արկղը, բայց դեռ շեմքին չհասած, վայր գցեց այն, որովհետև առաստաղի գերաններից մեկը վառվելով՝ իր վրա ընկավ։

— Օգնեցե՞ք, սնդուկը դուրս քաշենք կրակի միջից, օգնեցեք, մինչև մեր տղամարդիկ հասնեն,— բղավում էր Գյուլեն բոունցքը թափ տալով բեկի վրա, որն արգելում էր բազմությանը մոտենալ վառվող խրճիթին։ Նա կռացավ և սկսեց ակիշներով դուրս քաշել ահագին սնդուկը։ Ակիշներից մեկը Գյուլեն անցկացրեց կողպեքի օղակից, մյուսով նրա վրայից դեն հրեց վառվող գերանը։ Սնդուկը, որ բռնկված էր բոցերով, դեմ առավ շեմքին և մնաց տեղում անշարժ։ Հրդեհը, լափելով կափարիչը, արդեն թափանցել էր ներս։

Խոդեդանի հայրը Դիարբեքիրից տեսակ-տեսակ ծաղկավոր չթեր էր բերել և պահել սնդուկում, հավանորեն որդու ապագա հարսնացուի համար։ Այդ տեսակ արկղերի մեջ էին պահվում բոլոր թանկարժեք զարդերն ու գանձերը հայ ընտանիքներում։

— Ա՜խ, լա՛ռ, շարժանացար անգամ հարսանիքիդ ուրախությանը,— հառաչեց Գյուլեն, տեսնելով, թե ի՛նչպես բոցերի միջից կարմրին էին տալիս ծաղկավոր չթերի հրավառ երիզները։

— Փրկե՞նք, գոնե նրա հարսանիքի սնդուկը փրկե՞նք,— վերջին անգամ գոչեց Գյուլեն և ակիշներով բարձրացնելով ահագին արկղը, ինչպես պուտուկն էր բարձրացնում թոնրի միջից, շեմքի վրայով տարավ և շպրտեց կանաչների վրա։

— Էլ ի՞նչ մնաց խեղճի սնդուկից, որ փրկենք,— նկատեց պառավներից մեկը, գլուխը դառնորեն օրորելով և սրբելով արտասուքը։— Ա՜խ, աստված, դու ե՞րբ պիտի տեր կանգնես քու անպաշտպան ժողովրդին։

— Մի՛ խոսիր աստծու մասին, Փառո, նա հարուստների և զորեղների կողմն է,— սաստեց նրան Գյուլեն ետ-ետ գնալով և ակիշի կեռը խրելով վառված չթերի խորքը։ Սնդուկի միջից դուրս թռավ մի փոքրիկ բուունցքաչափ կապոց և զարկված սարյակի պես շրմփաց գետնին։ Գյուլեն կոխկրտեց այն ոտքով, հովացրեց և արագությամբ վերցնելով պահեց իր ծոցում, որ Աստուրին հանձնի։ Երևի այդ էր Զորո-Դավթի բովանդակ գանձը։

Ամբողջ տունը վառվեց։

— Քանի անգամ ես նրան ասացի, մարագս նեղ է, Խոդեդան, քո տունը իմ դարմանի կեսը կարող է ամբարել, տուր ինձ մարագ դարձնեմ՝ չտվեց,— ինքն իրեն բարձրաձայն խոսելով գանգատվում էր աղան, դիտելով, թե ի՛նչպես թեթև քամին լեռնիվար էր քշում Աստուրի այրված տան տաք մոխիրը։

— Վա՜յ, անա՛ստված բեկ, դու անխի՛ղճ գազան, էս ի՞նչ արեցիր,— արտասվալից, բայց կատաղի աչքերով իր հրաճարակ տանը մոտեցավ Խոդեդանը։

— Բեկին դիմադրողի տունը էսպես պիտի վառվի։ Ա՜յ, տես, դարմանս ձյունների տակ մնալով փտել է,— ասաց Շաբաթ աղան, ոտքով ցրիվ տալով քարափին դիզված բորբոսնած հարդը։— Ինչո՞ւ մերժեցիր իմ խնդիրը։ Ինչո՞ւ չթողեցիր, որ տունդ մարագ դարձնեմ, Խոդեդան։ Դու հովիվ մարդ ես, չոլումն էլ կարող ես ապրել։

— Դե հիմա՛ տեսնենք, թե ո՛վ պետք է չոլում ապրի։

— Չհամարձակվե՛ս, իմ ետևում կանգնած է Բիթլիսի վալին և Մուշի փաշան։

— Նաև աստվածը,— բացագանչեց Աստուրը։ Ահագին մահակը տարուբերվեց օդում, և մի հարվածով ամեհի բեկը գետին տապալվեց։

— Բռնեցե՞ք այդ հային։ Բիթլիսի նահանգապետին իմաց տվեք, որ մի գյավուր ինձ գավազանով ցած գլորեց,— գոռում էր Շաբաբ աղան իր բորբոսնած հարդին տարածված։

Խոդեդանը չոքել էր բեկին և խեղդում էր նրան, երբ երեք օսմանցի զինված ոստիկան և երկու համիդիե հանկարծակի հայտնվելով կալանեցին նրան։

— Դրան դո՛ւրս քշեք իմ գյուղից, նա կապված է Գևորգ Չաուշի չանբեզարների հետ։ Նրա մայրը հաց էր տանում ֆիդայիներին,— շարունակում էր գոռալ բեկը՝ բերանը հարդից մաքրելով։

— Քե՛զ պետք է քշել գյուղից, անխիղճ գազան, ինչո՞ւ անմեղ մարդու տունը վառեցիր։ Հիմա տեղը չէ՞, որ էս կեռ ակիշով աղիքներդ բերանիցդ դուրս քաշեմ։

— Էդ ակիշը կոխիր փորդ,— բղավեց բեկը պառկած տեղից մի քացի տալով հայ կնոջը, և ձեռքը մոտեցնելով իր դաշույնին։

— Հե՞յ, թշվառակա՛ն, սասունցին կնոջ վրա ձեռք չի բարձրացնում։ Բայց դու մի անարդ լեռնցի ես, որ տարբերություն չես դնում կնոջ ու տղամարդու միջև։ Ինձ Գյուլե կասեն, որ կատաղեցի, աչքերդ կհանեմ կդնեմ ծոծրակիդ։ Երևի ուզում ես էն շուն Մուսաբեկի բախտին արժանանալ,— բղավեց Գյուլեն և, մոտենալով, մի շառաչուն ապտակ հասցրեց անպատկառ բեկին։

ԲոլոՀ Մկրոն ճանապարհը թեքելով գնացել էր սարերը գյուղացիներին օգնության կանչելու։

Տեսնելով, որ դրությունը կարող է բարդանալ, ոստիկանները բեկին փախցրին, իսկ Ասատուրին բռնատուն տարան։

Մի ամիս բանտում պահելուց հետո Խոդեդանին վտարեցին գյուղից, մեղադրելով այն բանում, որ նա մասնակցել է 1894 թվականի ապստամբությանը և ձեռք է բարձրացրել իրենց գյուղի հարուստ հողատեր Շաբաբ աղայի վրա։

Մեղադրական գրության մեջ ասված էր նաև, որ Զորո-Ասատուրը ապստամբության պարտությունից հետո ցանկություն է հայտնել մնալ սարերում, բայց ֆիդայիները նրան ետ են ուղարկել, ի նկատի ունենալով, որ այդ հովիվը գիշերները քնի մեջ հարայ է կանչում։

ԴԵՊԻ ԲՈՒՆԱՇԵՆ

Առավոտ էր։

Մոտկանի Շեն գյուղից, որ շինված էր Յրտուտ գետի ակունքի վրա Փորակ սարի առաջ, դեպի Սասունի լեռներն էր ելնում մի երիտասարդ։

Նա ուսին դրել էր մի ահագին ճոկան, որից կախված էր իր հովվական մախաղը։ Այդ հաբանի մեջ, որ մի չորացած պարկ էր, կար ընկույզի փայտից շինված մի հաստ կաթնաման և մի գդալ։

Երիտասարդը հագել էր գոմշու կաշուց դաբաղած տրեխներ՝ գույնզգույն գուլպաներով, բրդյա զոլավոր անդրավարտիք և այծի երկայն մազերից գործած կիսաթև աբա, որի տակից երևում էին կապույտ ելակը և նախշուն վերնաշապիկը։ Մեջքին փաթաթել էր կարմիր գոտի, իսկ գլխին՝ ծածկել էր ասեղնագործված գդակ, որի շուրջը ոլորած հնամաշ փուշու երկայն ծոպերը ճակատին և քունքերին իջնելով, մեղմիկ օրորվում էին նրա տխրամած դեմքի վրա։

Խիստ նկատելի թախիծը տրտում համաչափություն էր ստեղծել նրա քայլվածքի մեջ։ Նա ընթանում էր առաջ լուռ և գլխահակ, անդուլ ելնելով դեպի վեր և շարունակ շարժվելով դեպի հյուսիս-արևմուտք։

Այդ երիտասարդը Խոդեդանն էր։

Շուտով նա անցավ Կուսգետի վանքը և հայտնվեց Աստվածածնի լեռների վրա։ Այդ սարերը բաժանում էին Խութ-Բռնաշենը Մոտկանից։

Բարձունքի վրայից Աստուրի աչքերի առաջ երևացին Ծովասարը, Կեփինը և Անդոկը։ Այնքան մոտ՝ պեծպեծին էր տալիս և ձյունը Մարութա լեռան ճղլակ գագաթին։

— «Սասո՜ւն»,— մրմնջաց նա, անհագորեն նայելով իր հանդեպ տարածված խորդուբորդ ձորերի և հսկա սարերի լեռնաշխարհին։

— «Սասո՜ւն»,— վերստին գոչեց Խոդեդանը մի վշտագին հառաչանքով։

Դեռևս անհիշելի ժամանակներից այդ փոքրիկ լեռնաշխարհը եղել էր պատվար օտար զավթիչների և տիրապետողների դեմ։ Նրա հերոս որդիները օգնության էին շտապում հարևան ճնշված ազ-

գություններին։ Իսկ այժմ Հայաստանի այդ ծայրամասը տնքում էր օսմանյան բռնապետների դաժան լծի տակ։

Գնում էր Աստուրը և ճանապարհին մտածում էր կատարված ահեղ փորձությունների մասին։ Կործանվել էր Զորո-Դավթի դարավոր օջախը։ Մեկը մյուսից մռայլ պատկերներ հաջորդում էին իրար և սաստկացնում նրա ծանր վիշտը։ Հայրենի լեռներով նա շտապում էր դեպի Բռնաշեն։ Գնում էր բախտ որոնելու հարևան գավառակներից մեկում։

Ճանապարհին՝ բարձրաբերձ մի ժայռի կատարին՝ արծիվ էր նստած։ Խոդեդանը թևքի թափահարումով փախցրեց նրան, և բարձրանալով, նստեց թռչունի գահի վրա։ Քարաժայռի խոռոչում ձյուն կար։ Սկսեց ձյուն ուտել և նայել ներքև։ Իր ոտքերի տակ տարածված էր վեհատեսիլ և հերոսական Սասունը։

Քիչ հետո Աստուրը հասավ մի լեռնային աղբյուրի, որ ոլոլալով հոսում էր երկու ապառաժի միջից։ Շուրջը խռնվել էին լայնաթուփ դրմաճներ և սուտավելուկներ, որ տակավին ծածկված էին առավոտի ջինջ ցողով։ Աղբյուրից ոչ հեռու կանգնած էր մի մենավոր տաղավար։

Երիտասարդը, ջուր խմած, նոր էր բարձրացել ակունքից, երբ մի բրդոտ գամփռ ուժգին հաչոցով հարձակվեց նրա վրա։ Ուղևորը ազդանշան տվեց։ Կատաղի գամփռը հնազանդ փռվեց թաթերին և պոչը շարժելով սկսեց լիզել նրա տրեխները։

Խուղը, որին մոտեցավ Աստուրը, շինված էր տերևախիտ ծառերի կանաչ ճյուղերից, որոնց միջից արեգակի շողերը ներս թափանցելով նախշուն շրջանակներ էին գոյացրել հողե հատակին։ Տաղավարի կանաչ տանիքին չորթան էր շարում մի գեղեցիկ քրդուհի։ Նա հագել էր էժանագին չթից կարված տարբեր գույնի մի քանի շրջազգեստ, որոնց վրա կապել էր կարմիր գոգնոց։ Կանաչ ելակի վրա պսպղում էր սպիտակ սաղաֆների շարանը։ Գլխին դրած էր հնամաշ քոֆի՝ մետաղյա հասարակ պուլկներով զարդարված։ Լայնեզր գոտու վրա երևում էին թռչունների պատկերներ, որ պաշտամունքի նշան էին։

Քրդուհին, որի անունը Զոզան էր, նկատելով մոտեցող երիտասարդին, վերևից ձայն տվեց ամուսնուն.

— Շնկո, մեվան է գալիս մեզ մոտ։

Ամուսինը ուտենու դալար շիվերից զամբյուղ էր գործում դը-

տան առաջ։ Կնոջ ազդանշանն առնելով իսկույն ելավ տեղից և, երկայն քոլոզը ուղղելով գլխի վրա, նայեց եկվորի կողմը։ Նրա մինչև մեջկապը երկարող աբայի տակից երևում էր կեռ դաշույնը։

Ո՞վ էր Շնկոն։

Հայաստանի քրդերը մեծ մասամբ մահմեդական էին, սյունի աղանդին պատկանող։ Նրանք բաժանվում էին երեք դասի. սաադաթ, աշիրեթ և ռայաթ։ Առաջիններն իրենց համարում էին արաբական ծագումից և մարգարեի ցեղից սերված։ Նրանք քրդության մեջ կատարում էին հոգևորականի դեր։ Աշիրեթները ցեղապետություններ էին, որոնք տիրում էին լեռնային և դաշտային ընդարձակ տարածությունների և վարում էին խաշնարած ժողովրդի կյանք։ Նրանց գլխավոր զբաղմունքն էր ձիախաղը և զինախաղը։ Ռայաթը քուրդ հասարակ ժողովուրդն էր, որ զբաղվում էր երկրագործությամբ և հարկ էր վճարում պետությանը։

Շնկոն պատկանում էր այս վերջին դասին։

Սասունում ապրող քրդական ցեղերից մեկը կոչվում էր բալաքցի։ Այս ցեղի մեջ նշանավոր էին Շեկո և Բտրը կոչվող քրդական ճյուղերը։ Սրանք բնակվում էին գլխավորապես Մոտկանի և Խուլթի լեռներում։ Բտրը տան քրդերը թշնամաբար էին տրամադրված հայերի հանդեպ, իսկ Շեկո տան քրդերը լավ հարաբերության մեջ էին հայերի հետ։ Սրանք շեյխ և մուլլա չունեին, տաճարներ և աղոթատուններ չէին շինում, խոսում էին արաբական մի բարբառով և համարյա ամենքն էլ գիտեին հայերեն։ Շեկոները հայերի հետ ուխտի էին գնում միևնույն վանքը։ Մեռոն էին խնդրում իրենց նորածիններին կնքելու համար։ Շեկոները քաջ ժողովուրդ էին, միմյանց պատիվը պահող և իրար պաշտպանող։

Շնկոն ոչ միայն ռայա էր, այլ և Շեկո տան քուրդ էր։

Նա Խոդեդանի և Ճնճուղ Լևոնի հետ երկար տարիներ հովվություն էր արել Մոտկանի գյուղերում։ Օրական քնում էին մեկի տանը, ուտում էին այդ տան հացը և հագնում էին այդ տան տիրոջ հնամաշ տրեխները։ Այնուհետև նրանց վարձել էր Շաբաթ աղան, որի խաշները արածում էին Շենի ամենաճոխ արոտներում։

Հովվական կյանքը և աշխատանքի միանման պայմանները այդ երեք մշակների և նրանց ընտանիքների միջև ստեղծել էր սերտ բարեկամություն, մոռացության տալով նրանց ազգային պատկանելությունը։

Մտերմությունն այնքան խորն էր, որ Շնկոն և Ասատուրը եղբայր էին դարձել, ուխտելով նեղության մեջ օգնել միմյանց։

— «Եթե ե՛ս շուտ մեռա, իմ երեխոցը դո՛ւ տանես պահես, դու շուտ մեռար, քու երեխոցը ես բերեմ պահեմ»,— ասել էին նրանք և իրենց մատները կտրելով արյունները խառնել էին իրար՝ փբրև եղբայրության նշան։

Միայն քրիստոնյա և ոչ քրիստոնյա պետությունների պատերազմների ժամանակ այդ հասարակ մարդիկ զգում էին, որ իրենք պատկանում են տարբեր ազգության։ Այդ խնդիրն էլ նրանք շատ որոշակի էին լուծել. օսմանցիների առաջխաղացման դեպքում քրդերն էին օգնելու հայերին, իսկ խաչապաշտների հաղթության դեպքում՝ հայերն էին պաշտպան հանդիսանալու քրդերին։

Չհանդուրժելով Շաբաթ բեկի շահագործման սոսկալի պայմանները, և ընդհարվելով նրա հետ՝ պառավ Ատլասին վառելու համար, լեռնցի քուրդը վերջին տարիներում թողել էր հովվությունը և, քաշվելով իր լեռնական տաղավարը, սկսել էր զբաղվել զամբիլներ գործելով։

Այդ մեկուսացմանը օգնել էր նաև մի դեպք, որ առիթ էր տվել ոմանց նրան հալածելու։ Նրա երկու անդրանիկ զավակները մեռել էին կարմրուկից մեկ օրվա ընթացքում։ Քուրդը համոզված էր, որ այդ բանում հանցավոր էր արարիչը։ Նա զայրացած մերկացրել էր կեռ դաշույնը, ելել էր տանիք և բացագանչել աստծու հասցեին. «Թե տղամարդ ես, արի ես ու դու կռիվ անենք, խեղճ երեխոց հետ ի՞նչ գործ ունես»։

— Խոդեդա՛նն է,— ուշադիր նայելուց հետո ասաց Շնկոն, ընդառաջ գնալով իր բարեկամին։

— Բարի օր, քիրվո,— գոչեց Ասատուրը, ձեռնափայտը հաբանի հետ վայր բերելով ուսից։

— Սար սարան, սար ճավան,— սիրալիր ողջունեց քուրդ զամբյուղագործը, հրավիրելով նրան մտնել իր կանաչ տաղավարը։

— Նստելու ժամանակ չէ, Շնկո, ես եկել եմ մնաս բարևի,— ասաց Խոդեդանը։

— Ո՞ւր ես գնում,— հարցրեց քուրդը։

— Մոտկանից քոչում եմ Բռնաշեն։

— Ինչո՞ւ։ Իսկ քու պապ Զորո-Դավթի տո՞ւնը։

— Պապական տունս վառված է, Շնկո, մոխիրն էլ քամին տարավ։

Այս խոսքերն ասելու միջոցին Ասատուրը գլուխը շուռ տվեց, որ քուրդ քարեկամը չնկատեր իր կոպերի տակ ուռճացող արցունքը։

— Ո՞վ վառեց քու տունը,— անհամբերությամբ հարցրեց Շնկոն, խիստ վրդովված կատարված դժբախտության հանդեպ։

— Շաբաթ աղան։

— Վայ լըմը՞ն, վայ լըմը՞ն,— գլուխը ծեծելով գոչեց Շնկոն։

— Աղան ուզեց իմ տունը մարագ դարձնել, թույլ չտվի, կրակ գցեց ու վառեց։

— Եվ դու նրան կենդանի՞ թողեցիր։

— Գավազանով մեջքին զարկեցի, վայր ընկավ։

— Գլուխը պիտի փշրեիր։ Էդպիսի մարդը իրավունք չունի ապրելու արևի տակ։ Ատլասի պես կնոջը թոնրի մեջ վառեց, հիմա էլ քե՞զ-է ուզում քշել գյուղից։

— Նրա մեջքին սուլթանն է կանգնած, Շնկո, Բիթլիսի վալին ու Մուշի փաշան, իսկ իմ ետևը՝ սարի քամին է...

— Ինչ լավ էին առաջվա ժամանակները,— խորը հառաչանք արձակելով ասաց զամբյուղագործը։— Հայ և քուրդ մարդիկ ախպոր պես ապրում էին կողք-կողքի։ Եկավ օսմանցին՝ մեզ լարեց իրար դեմ, որ ինքը տիրի մեր երկրին։ Հիմա ի՞նչ պիտի անես,— կարեկցաբար հարցրեց Շնկոն։

— Գնում եմ Բռնաշեն։ Անցյալ տարի Ճնճուղ Լևոնի քոչը գնաց, հիմա էլ ես կերթամ։

— Շատ բարև կանես քույրիկ Ոսկեհատին։ Ոսկի կնիկ է Ոսկեհատը։ Ամեն գարունքին Շենից գալիս էր սար՝ Զոգանի հետ չորթան չորացնելու և բանջար հավաքելու կերակուրների համար։ Ամեն գալու ժամանակ իր ծոցի մեջ հավկիթ կդներ ու կբերեր երեխաներիս։ Ասա՝ խաչեղբայր Շնկոն բարևում է։ Ստեփանին էլ շատ բարև կանես։ Լսել եմ՝ հովիվ է Սև սարում։

— Ես էլ Սև սար եմ գնում։ Արինոքում մի քուրդ կա, անունը Հաջի է։ Գնում եմ նրա մոտ հովվության։

— Դաշտ տեղ չապրես, Խոդեդան, Արինոքը հով տեղ է, գնա ու ապրիր էնտեղ։ Խաչառաշում շատ դաղպա կա։

— Ասում են՝ գեղեցիկ սար է։

— Լսե՞լ ես Իրիցանքի մասին։

— Չեմ լսել։

— Աշխարհում էդպիսի սիրուն տեղ չկա։ Արինոքի մոտ է, անտառի մեջ։ Ա՜յ, ապրելու տեղ։

Նրանք զրուցելով առաջացան դեպի աղբյուրը և կանգ առան։

— Ես քեզ էստեղ բերեցի, որ ցույց տամ քո օրորոցը։ Դու էս աղբյուրի մոտ ես ծնվել, Խոդեդան,— շարունակեց քուրդը։— Մի օր քու ողորմածիկ մայրը հյուր էր մեզ մոտ։ Առավոտ կուժն առավ եկավ աղբյուր ջրի։ Դու ընկար էս կանաչ խոտերի ու ծաղիկների մեջ։ Իմ դայեն վազեց և քեզ իր գոգնոցի ու բեժոկների մեջ փաթաթելով բերեց տուն։ Երբ ճրագվառոցին հայրդ Շենից եկավ, իմ աբոն նրան աչքալուսանք տվեց ու քու անունը դրեց Խոդեդան, այսինքն՝ Աստվածատուր։

Ասատուրը, որ վաղուց ծանոթ էր այդ տխուր պատմությանը և վերստին կլանված լսում էր քրդի պատմածը՝ ասաց.

— Ջրի առաջ ծնվողը ջրի հետ էլ կերթա։

— Ա՜յ, էստեղ էր, էս կանաչ խոտերի մեջ,— ասաց Շնկոն, մատնացույց անելով աղբյուրի առաջ բուսած կանաչ սերթուփերը։

— Նույն աղբյուրի առաջ մնաս բարով եմ ասում քեզ, Շնկո։ Իմ ծնողները և մեծ եղբայրը վաղուց մեռած են։ Մի խրճիթ ունեի Շենում, էն էլ կործանված է։ Անտուն Խոդեդանը խաղաղություն է ցանկանում քու լեռնական կանաչ տնակին։

— Իմ խրճիթի դուռը միշտ բաց է քո առաջ, Խոդեդան, ուզած ժամանակ եկ ինձ մոտ և խաչեղբայրդ քեզ ներս կընդունի ախպոր պես։ Յոթ սարի ետև էլ լինես՝ փորձանքի մեջ ընկար՝ Շնկոն կողքիդ է։

— Շնորհակալ եմ, քիրվո,— ասաց Ասատուրը։

Քուրդ զամբյուղագործի թախանձանքները՝ գիշերն իր մոտ լուսացնելու համար՝ ապարդյուն անցան։

Շնկոն նրան ուղեկցեց մինչև անտառի խորքը։ Նախապես զամբյուղագործի կինը նրա հաբանի մեջ հաց ու պանիր էր դրել։

Բաժանվելիս Շնկոն ասաց.

— Բարի ճանապարհ, Խոդեդան։ Եթե նորից հովիվ դառնաս և գելխեղդ շներ ուզենաս առնել, գնա Մշո Բուլանուխի Կուշտիան

գյուղը՝ Զաչան բեկի մոտ։ Նրա շները հայտնի են մեր կողմերում։ Էս գամփռը նրանց ցեղիցն է։

Քուրդ լեռնականը և հայ հովիվը գորովալից փարվեցին իրար Մարութա սարի դեմ և բաժանվեցին։

Ձեռնափայտը ուսին դրած և մի ծանր կսկիծ իր հոգում՝ առաջ էր գնում Աստուրը, ճեղքելով ճանապարհի չքնաղ անտառները, որոնք մեղմիկ օրորվում էին լեռնաստանի դուրեկան զեփյուռից։

Աստվածածնու լեռների վրայից նա ետ դարձավ և նայեց դեպի Մոտկան։ Նախ երևաց Շենը՝ իր հայրենի գյուղը՝ բազմած Ցրտուտ գետի դալարագեղ ակունքին։ Մի քիչ այն կողմ երևացին Նիչը, Արծվիքն ու Սպիտակ ջուրը։ Այդ բոլոր գյուղերում նա Շընկոյի հետ հովվություն էր արել։ Այդ սարերում ծնվել ու մեծացել էր ինքը։ Այժմ նա բաժանվում էր հարազատ ծննդավայրից, անջատվում էր այդ սիրասուն վայրերից։

Լեռան արևոտ կողին մեկ անգամ էլ ցոլաց Շնկոյի մենավոր տաղավարը։ Զոզանը կռացած՝ չորթան էր շարում կանաչ տանիքին։

ԹԱՄՈՅԻ ՄՈՏ

Կեսօր էր, երբ Աստուրը հասավ Մարութա լեռան թավշյա լանջերին և, վերստին անտառների մեջ մտնելով, սկսեց ընթանալ դեպի Ծովասար։

Առաջին գյուղը, ուր նա ոտք դրեց՝ Ճախրկանքն էր։ Դա գտնվում էր Ծովասարի հարավային ստորոտում։

Ավանդությունը պատմում է, որ այդ գյուղը շինել է Սասունցի Դավիթը։ Երբ նա Մսրա Մելիքի հարկահանների ձեռքից ազատում է սասունցի կանանց և աղջիկներին, քաղաքի արվարձանում նրանց համար մի տուն է շինում, պատրաստել է տալիս մի քանի տասնյակ ճախարակներ և գործի է դնում ազատագրված աղջիկներին ու կանանց։

Դավիթը չքավորների համար շինում է նաև մի ջրաղաց։ Տարիների ընթացքում այդ շինության մոտ ավելանում են նոր տներ։ Կազմվում է մի նոր գյուղ, որը դառնում է քաղաքի մի թաղը և

կոչվում է Ճախրկանք կամ Ճախրական՝ Դավթի պատրաստած ճախարակների անունով։

Դավթի ջրաղացը գտնվում էր գյուղից դուրս՝ Կապաս գետի վրա։ Ջրաղացի ջուրը ապառաժների վրա բախվելով և լուսափրփուր ջրվեժներ գոյացնելով, ուժգին սահանքով մտնում էր ջրաղացի տակ և այնտեղից դուրս ժայթքելով, նույնպիսի հմայիչ տեսարաններ էր ստեղծում իր ճանապարհին։

Ասատուրը գետակի մոտ մի մոխրագույն այծ նկատեց, որ սովորական այծերից երկու անգամ մեծ էր։ Նրա մի ոտքը հազիվ էր դիպչում գետնին։ Այդ կենդանու խոշոր, խելացի աչքերը, կեռ, փայլուն եղջյուրները և գեղանի սրունքները վեհություն էին տալիս նրա կեցվածքին։ Հովիվը հանեց կաթնամանը և ետևից գնալով, բռնեց նրա պտուկներից ու կթեց։ Ապա, սառեցնելով այն, ախորժակով խմեց այդ առասպելական այծի փրփրալի անուշահամ կաթը։

Դեռևս Մոտկանում եղած միջոցին նա շատ էր լսել Ճախրական գյուղի ջրաղացի մասին։ Ասատուրը գիտեր, որ այնտեղ աշխատում էր Թամոն, մի ինքնամփոփ ու ավանդապահ մարդ, որ կարճ ժամանակով մշակ էր եղել Հալեպում։

Նրան պատմել էին, որ այդ ջրաղացպանը պանդխտության գնալիս՝ Հալեպի ճանապարհին, իբրև թե, տեսել էր այն ահագին քարը, որ Դավիթը Մարութա սարի գագաթից պարսատիկով շպրտել էր Մսրա զորքի ետևից։

Թամոյի ջրաղացն էին գալիս Սասունի գրեթե բոլոր կողմերից։ Ամեն ոք փափագում էր ուտել այն հացը, որի ալյուրը աղացել էր Թամոն։ Մոտիկ ապրող հայ շինականները և քրդերը իրենց բնաղունն այնտեղ էին բերում։ Նրա մոտ շատ էին գալիս մանավանդ չքավոր դասի մարդիկ, որոնց օգնելու համար Դավիթը շինել էր այդ ջրաղացը։

Բացի նրանց հատիկը աղալուց, Թամոն եկվորներին պատմում էր Սասնա ծռերի պատմությունը՝ ճյուղ առ ճյուղ։ Պատմում էր Սասնո բարբառով։ Նա այդ ամբողջ էպոսը անգիր գիտեր։ Նրա շնորհիվ ժողովրդական այդ հրաշալի վեպը իր հասարակ ալրաղացից դուրս գալով և բերնե-բերան անցնելով՝ անմեղ ապրում էր Սասնո լեռներում։

Այնքան հայտնի մարդ էր Ճախրականցի Թամոն, որ նրա մասին երգ էր հորինված.

Ծովասարի վրեն շինված
Մեր հին ջաղաց, Դավթի ջաղաց,
Թամոն էնտեղ ալյուր կաղա,
Դավթի քարը հա՞ կխաղա։
Պատերն ալրոտ, սյումը դեղնած,
Թամոն էնտեղ կեփե բաղարջ,
Ու մինչև լույս հավախոսին
Քեզ կպատմե Դավթի մասին։
Ոռերն էնտեղ, աշխարհն էնտեղ,
Իր անունն է Ճախրական գեղ։

Ջրաղացի դուռը բաց էր։

Դռանը մի կանաչ ուռենի կար։ Ուռենու տակ, ջվալներին թիկնած, ծխում էր մի գլխաբաց ծերունի՝ հայացքը Ծովասարին հառած։

Այդ Թամոն էր։

Նա բարձրահասակ էր, արտահայտիչ խոշոր աչքերով, ոտքից մինչև գլուխ ալյուրի հաստ շերտով ծածկված։ Նույնիսկ իր թուխ երկայն թարթիչները սպիտակին էին տալիս ալյուրից։

Հաստ զոլավոր գոտու մեջտեղը խրված էր ծխախոտի տուփը, իսկ ձեռնափով գրկել էր լայնաբերան ծխամորճը, որ նոր էր վառել։ Կարճ, մազոտ բթամատը կողքից բարձրացնելով նա մեքենաբար կարգավորում էր յուր կրակը՝ ներս հրելով եզրերից թափվող կիսավառ մոխիրը և աչքը երբեք Ծովասարից չհեռացնելով։

— Բարի օր, քեռի Թամո,— ողջունեց Ասատուրը մոտենալով։

— Բարով, հազար բարի,— պատասխանեց ալրաթաթախ ջրաղացպանը, ջվալների վրայից վեր կենալով։

— Հո՞ստե կիգաս,— յուրովի հարցրեց նա։

— Մոտկանից։

— Ո՞ւր կերթաս։

— Բռնաշեն։ Էսպես անցա, որ Դավթի ջաղացը տեսնեմ։

— Անո՞ւնդ բարի։

— Անունս Ասատուր է։

— Տղա, լաո, չլինի՞ թե դու Խոդեդանն ես,— զարմացած հարցրեց ջրաղացպանը, ուշադրությամբ դիտելով եկվորին։

— Ճիշտ կռահեցիր, քեռի Թամոն։ Իմ անունը Ասատուր է, բայց քրդերն ինձ Խոդեդան են ասում։ Ես Աստվածածնու լեռների վրա եմ ծնվել՝ աղբրի առաջ։

— Դու էն չե՞ս, որ քրդերը փաթաթել են բեժոկների մեջ ու տուն տարել։

— Է՛ն եմ։ Բարուր չի եղել, բեժոկների մեջ են փաթաթել։

— Լսե՞լ եմ, լսել եմ քու մասին, Խոդեդան,— կարեկցական ձայնով ասաց Թամոնն։— Քու պապու անուն Զորո-Դավիթ էր։ Ես նրա հետ տաք փուռնիկ եմ կիսել, լա՛ռ։ Իմ պատմածը հիսուն տարվա բան է։ Քսան տարեկան էի, երբ քու պապ Մոտկանից մի օր իմ ջաղացն էկավ։ Էսօրվա պես հիշում եմ. գոմշովով մի թեռ կորեկ էր բերել աղալու։ Աղացի։ Գիշերը ինձ մոտ հյուր եղավ։ Մի մեծ բաղարջ եփեցի՝ կերանք։ Առավոտ վաղ ճամփա ընկավ գնաց։ Էն գնալն էր, որ գնաց։ Իսկ հորդ չեմ տեսել, լաո։

— Հայրս մշակ էր Դիարբեքիրում։ Մեռել է սրանից տասներեք տարի առաջ։ Տուն դառնալու ժամանակ իմ մեծ եղբոր հետ մնացել է հուսինի տակ ու խեղդվել։ Մորս էլ Շաբաթ աղի լամուկները թոնիր գցեցին։

— Մենա՞կ ես։

— Մենա՛կ եմ, քեռի Թամոն։ Ես եմ ու էս ձեռքիս փետը։ Աշխարհում էլ բան չունեմ։ Բռնաշեն եմ գնում։ Ասացի անցնեմ Մովասարի տակով ու Դավթի ջաղացը տեսնեմ։

— Վա՜յ դու բարով եկար, իմ աչքի ու գլխի վրա եկար, լաո։ Ո՞վ չի գալիս Դավթի ջաղացը տեսնելու։ Աշխարհի ամեն կողմից Մովասար մարդ է գալիս ու գնում։ Առաջ-առաջ ես քեզ Դավթի ջաղացի ջոջ քարը ցույց տամ։

Այս ասելով, Թամոն Ասատուրին առաջնորդեց իր ջրաղացը։ Դա մի պարզ ու անշուք տնակ էր, որի մեջտեղը թավալվում էր մի վիթխարի ջրաղացքար։ Հատիկը կրիճակից հոսքով լցվում էր քարի բերանը և ալյուր դառնալով թափվում էր մսախի՝ փոքրիկ ալրատան մեջ։ Թամոն ձեռքը մեկնելով դեպի գոռացող վերնաքարը, ասաց.

— Դրա տակի քարը Դավիթն է բերել, լաո։ Նա է էդ ածդահա սալաքարը մեջքով ձորից հանել, գցել էս ջրի վրա ու գնացել։

Հազար տարի է անցել, էդ վերնաքարը հա՛ կոլորտի, հա՛ կֆռա դրա վրա։ Հիմքի քարը երկնային է, լաո։ Նրան ոչ մաշվել կա, ոչ կռանվել։

— Իսկի չի՞ կռանվում,— զարմացած հարցրեց Խոդեդանը, աչքը չհեռացնելով գոռացող ջրաղացքարից։

— Սրան կռանվել չկա, լաո։ Էդ էն քարն է, որով Սանասարը վիշապին սպանեց։ Էնօրվանից որ Դավիթ էդ սալը գցել է էս ջրի վրա ու գնացել, մարդու կռան չի դիպել նրան։

— Էստեղ նայիր,— ասաց Թամոն, ձեռքը մեկնելով դեպի աղորիքի պատերի վրա սպիտակին տվող դեղնավուն փոշու շերտը։— Էս Դավթի ալյուրն է նստած ջաղցի պատերին։ Նրա աղունից էս է մնացել։ Էդ փոշին նշխարք է, լաո։ Հազար տարի է անցել, բայց նա դեռ կպած է ջաղցի պատերին, ու հա՛ կա, հա՛ կա։

— Ուրեմն առաջին աղունը նա՞ է աղացել։

— Առաջ նա աղաց, հետո Ջենով Օվանը, հետո Քեռի Թորոսիկը, հետո մյուսները։

Ասատուրը, որ առաջին անգամն էր մտել Դավթի ջրաղացը, այդ խոսքերի վրա գդակը հանեց ու սկսեց խորին ջերմեռանդությամբ նայել շուրջը։ Ե՛վ այդ հսկա ջրաղացաքարը, և՛ այդ դեղնավուն պատալյուրը նրան այնպիսի սրբություններ երևացին, որ նա ակամա բռնեց Թամոյի թևից՝ ասելով.

— Թող պագե՛մ քու ձեռքը, քեռի Թամո։ Դու սուրբ մարդ ես, որ մեր Դավթի անտեր ջաղացին տիրություն ես անում։

— Էս թվեկն էլ Դավիթն է շինել։ Առաջին բաղարջը նա է եփել էստեղ,— ասաց ծերունին՝ պատի մեջ մի սևացած հին կրակարան ցույց տալով։ Կրակարանի մոտ դրված էին իր մաշված գդակը և աքան։ Թամոն հյուրին նստեցրեց ներսի ջվալների վրա և նրա հետ կիսեց իր նոր թխած հացերից մեկը։

ԴԱՎԹԻ ԲԵՐԴՈՒՄ

— Հիմա էրթանք ես քեզ Դավթի բերդը ցույց տամ,— ասաց Թամոն գդակը ծածկելով և կրակարանի մոտից ելնելով։

Ասատուրը հետևեց ջրաղացպանին։

Նրանք անցան մայր առուն և կանաչ լեռնալանջով շարժվեցին դեպի հյուսիս։

Դավթի բերդը, որ կոչվում էր նաև Սասունի բերդ, շինված էր Ծովասարի ստորոտի Բոզկանք կոչվող մասում, այնտեղ ուր Կուս ու Կապաս գետերը խառնվում են իրար և, դեպի վար խուժելով, միանում են Բաթմանա ջրին։ Հասնելով Քաղքիկ արվարձանին, նրանք սալաքարե մի հին ճանապարհով ընթացան դեպի վեր։

Հետզհետե Խոդեդանի աչքերի առաջ բացվեց մի վիթխարի ամրոց, որ տիրաբար իշխում էր շրջապատի վրա։ Խոր վիհերով եզերված լեռնակի կատարին բարձրանում էին Սասնո բերդի ավերակները։ Հսկա քարե սյուներ կանգնած էին ուրիշ քարե սյուներին։ Դրանցից շատերը բերդի գագաթից պոկվելով գլորվել էին անդունդը կամ թափվել էին նրա առաջ։ Շրջապատը ներկայացնում էր իր վեհության մեջ ամայացած մի տեսարան։ Թրաձև խոտերն ու ծաղիկները աճելով ծածկել էին իրար վրա անկարգորեն ընկած ժայռերը։ Բարձրում՝ վեհանիստ ամրոցի կանգուն մնացած աշտարակի շուրջը սավառնում էին հարյուրավոր հավքեր, որոնք մի տեսակ կենդանություն էին հաղորդում այդ կիսակործան ահարկու շինվածքին։

— Էս Դավթի բերդն է, լաո, Ծովասարի վրեն է շինված։ Սաննասարն՝ ու Ադրամելիքն են էս բոլոր քարերը մեջքով ձորից հանել ու դրել մեկ-մեկու վրա։ Ջոջ-ջոջ քարեր կրեցին, քարե սուն քարե սան զարկեցին ու շինեցին Սասունը։

— Էստեղ նայիր,— խորհրդավորությամբ ասաց Թամոն, ձեռնացույց անելով երկու ահռելի սալաքարեր Բերդի բակի մեջ կողք-կողքի դրված։— Էս մեկի տակ Դավիթն է պառկած, էն մյուսի տակ՝ Խանդութ։

Երբ Դավիթն ու Խանդութը մեռան, երկուսին էլ պատանքեցին ու բերեցին Ծովասարի բերդի առաջ թաղեցին։

Թամոն համոզված էր, որ Սասնա ծռերի ամբողջ տոհմը հանգստանում էր այդ քարե սյունազարդ ամրոցի մեջ և նրա շուրջը։ Ըստ նրա՝ այդ տարածության վրա հանգչում էր Սասնո հերոսական տունը։ Հանգչում էր մի անմահ սերունդ իր առաքինություններով, վսեմ գործերով ու հիշատակներով։ Յուրաքանչյուր անգամ, երբ որևէ առիթով այցելում էր այդ վայրը, նա ժամերով կանգնած խորհրդածում էր այս կամ այն շիրմի առաջ։ Մանավանդ սաստիկ հուզվում էր նա, երբ մոտենում էր Դավթի և Խանդութի սալաքարերին։ Որքա՜ն նվիրական, որքա՜ն մարդկային ու

սիրելի էին այդ անունները նրա հոգու համար։ Թագավոր և թագուհի չէին քով-քովի պառկած, այլ մի դյուցազուն շինական իր նույնքան դյուցազուն հերոսուհու հետ։

— Հանի՛ր գդակդ, լաո, Զոչանց տան հանգստարանը ծածկված գլխով չեն մտնի,— ասաց ծերունին իր գլխանոցը վերցնելով և ծալելով թևի տակ։

«Դավիթ և Խանդո՜ւթ»,— մրմնջաց Ասատուրը գդակը հանելով և ակնապիշ նայելով այդ վայրատաշ ու բիրտ քարերին։

Նրանց շուրջը Թամոն մեկ առ մեկ ցույց տվեց Առյուծաձև Մհերի, Զենով Օհանի, Քեռի Թորոսի, Ճնճղափորիկի և Խոր Գուսանի շիրիմները։

— Հիմա էնտե՛ղ նայիր,— ասաց ճախրականցին, ձեռքը մեկնելով դեպի բերդի աշտարակից անդունդի վրա կախված երկու սև մազանման փնջեր։— Դրանք Խանդութ Խաթունի ծամերն են, լաո։ Երբ Դավիթ կլողանար լոխորա ջրերի մեջ, Շամշրամ խանումի աղջիկը գողտուկ լարեց իր աղեղը, ու մի դեղված նետ Դավթի պառեկի միջով անցավ։ Դավիթն էնպես գոռաց, որ իր ձեն մինչև Սասուն հասավ։ Քեռի Թորոս, Զենով Օվան, Խոր Գուսան, Ճնճղափորիկ, Ցոան Վերգոն ու ամենքը վազեցին հավարի։ Քովնտի փուշերու մեջ տեսան շինի աչքերով մի աղջիկ, որ վախից սատկել էր։

Երբ Դավիթ սպանվեց դամիշների մեջ, Խանդութ կսկծու էլավ բերդի գլուխ, փերթկեց իր մազերն ու իրեն էնտեղից ցած սարեց։ Իր ծամերից երկու փունջ ակոկավ Բերդի ծերին ու մինչև էսօր վառված գերանի պես կերևան էնտեղից։ Երկու բոլորակ ջրբուխ կա բերդի ետև,— շարունակեց Թամոն։— Էդ Խանդութ Խաթունի ծծերն են, լաո։ Երբ Խանդութ վերևից ընկավ, իր պտուկներից երկու պաղ աղբյուր բխեցին։ Հազար տարի է անցել, բայց դրանց ջուրը գլգլալով կերթա կխառնվի Զոչ առվի ջրին։

Թամոն Խոդեղանին տարավ Բերդի ետև և ցույց տվեց այդ աղբյուրները։

— Սրանք են,— ասաց ծերունին։

Ասատուրը շոքեց և երկու ակունքից էլ ջուր խմեց։

Ծածկելով իրենց գդակները, և այդպես մտերմիկ խոսելով, նրանք ելան ամրոցի ամենաբարձր աշտարակը, որտեղից տեսանելի երևում էր ամբողջ Սասունը։

— Մեր պապերի սիրո՜ւն աշխարհ, մեղրի պես քա՜ղցր, մայ-

ական կաթի պես անո՞ւշ,— շշնջաց Թամոն հոյակապ տեսարանից ազդված։

— Ժամանակին մենք էլ տեր ենք ունեցել, լաո։ Մեր աշխարհը անտիրական չի եղել,— շարունակեց նա։— Տիգրանակերտ քաղաքը տեսա՛ծ կլինես, Մոտկանին մոտիկ է։ Դրա քարերը արնով են դրված, լաո։ Ուրիշ է էս Բերդը։ Էս ամրոցը նրա համար էր, որ Մսրա Մելիքը չմտներ Սասուն ու մեր սիրուն աղջիկներին ու կանանց գերի չտաներ։ Ոչ մի թագավոր չի հավասարվի մեր թլոլ Դավթին։

Այնուհետև Թամոն հանգամանորեն պատմեց, որ Դավթի պատմությունը ստույգ է, որ այն գրված է գրքի մեջ և ինքը սեփական աչքերով տեսել է այդ գիրքը։

— Մեկ լիտր կքաշեր ու պահվում էր Գոմաց վանքում,— ասաց նա։

— Հետո ի՞նչ եղավ Դավթի գիրքը։

— Կռիվների ժամանակ բալաքցի քրդերը վառեցին,— հառաչելով պատասխանեց ծերունին։

Շատ բաներ, որ բացարձակ առասպել էին՝ իրողություն էին ճախրականցի Թամոյի համար, աչքով տեսած ճշմարտություններ։ Անկարելի էր նրան առարկել։

— Ճի՞շտ է, որ Հալեպի ճամփին ընկած է էն քարը, որ Դավիթը պարսատիկով շպրտել է Մսրա զորքի ետևից,— հարցրեց Աստուրը։

— Աչքովս եմ տեսել։ Ինձ հետ էին դարբին Զենոբը և տալվորիկցի մի քանի մշակներ։ Կանգնեցի՞նք, նայեցի՞նք, լաց եղանք ու անցանք. գնացինք,— ասաց Թամոն։

ՔՈՒՎԻ ԱՅԾԵՐ

Թամոն և իր ուղեկիցը Բերդի աշտարակից իջնելով, սկսեցին ելնել դեպի Մովասար։ Նրանք ժայռերից մեկի ստվերում երկու խոշոր քարայծ նկատեցին, որ պարանոցները երկարած՝ լիզում էին մամռոտ սալաքարերը։ Նրանցից մեկը, անցորդներին տեսնելով, մագլցեց ժայռն իվեր և սկսեց վեհաբար իր շուրջը նայել։

Թամոն հավատացած էր, որ Մարաթուկի և Մովասարի ան-

տառներում թափառող վայրի այծերն ու մաքիները Սասունցի Դավթի պահած հոտի մնացորդներն են, որոնք անտիրական մնալով և գազանների հետ խառնվելով, դարերի ընթացքում կորցրել են իրենց ընտանի կերպարանքը։ Նա հատուկ խնամք էր տանում դրանց և, Ծովասարի լանջերը զբոսանքի դուրս գալու ժամանակ, սովորություն էր դարձրել իր հետ աղ վերցնել հիվանդ այծերի համար։ Երբեմն էլ կթում էր և կաթը խմում։

— Դավթի էծերն են,— ասաց ճախրականցին, բռնելով ստվերում կանգնած մոխրագույն քարայծի երկայն մորուքից։— Բերդից չեն հեռանում։ Գարնանը գնում են անտառ, իսկ աշունքին ետ են գալիս ահագին հոտ դառած ու գազանների հետ խառնված։ Դրանց ասում են քուվի այծեր։

— Իսկ էս երկուսը ինչո՞ւ են առանձին,— նկատեց հովիվը։

— Փախել են հոտից։ Էս հեշին իծու ոտքը կոտրած է,— ասաց նա մի բուռ աղ ծոցից հանելով և շաղ տալով ստվերում կանգնած քարայծի առաջ։ Խոդեդանը ուշադիր նայելիս, տեսավ, որ դա այն միևնույն այծն էր, որ Ճախրական իջնելիս կթել էր ճանապարհին։ Նրա ոտքը, իսկապես, կապված էր սրունքի մոտ և հագիվ էր դիպչում գետնին։

— Գրքոյին կանչել եմ, որ ոտքը կապի։

— Գրքոն ո՞վ է,— հարցրեց Խոդեդանը։

— Սնրդչի է։ Ապրում է Ընկոզնակում։ Երկու շաբաթը մեկ անգամ գալիս է Բերդ, բժշկում է Դավթի հիվանդ այծերին ու գնում։ Էսօր իր գալու օրն է։

— Իսկ ո՞վ է պահում Դավթի հոտը,— հետաքրքրվեց մոտկանցին։

— Նրանց հովիվ չկա, լաո։ Բոլոր մարդիկ գիտեն, որ դրանք Դավթի էծերն են, ու ձեռք չեն տալիս։ Դավթի կսկծու չեն հեռանում Բերդից։ Հինգ-տաս տարի մեկ անգամ ճախրականցիք մի-մի էծ կամ մաքի են խառնում նրա հոտին, որ իր ոչխարը միշտ ավելանա ու չպակասի։ Հազար ոչխար ունեցող սասունցին իր մեկ ոչխարը պարտադիր թողնում է սար։ Եթե մեկ տարի հետո ետ չեկավ, կնշանակի խառնվել է Դավթի հոտին։ Ուրիշ տեղերից էլ են բերում։ Մեկ ամիս առաջ խութեցի երկու շինական մեկական էծ բերին և արձակեցին նրա հոտի մեջ։

— Ո՞վ է կթում նրանց։

— Ո՞վ պիտի կթի, լաու։ Քեզպես Սասուն եկող ու գնացող մարդիկ, Ծովասարով անցնող ու դարձող խեղճ ճամփորդներ։ Դավիթը մեռել է, բայց իր բարին անպակաս է աշխարհից։

Ծովասարի ամբողջ լանջը ծածկված էր կանաչ խավարծիլով։ Դա քաղցրաթթու, հյութալի մի բույս է, որ իր բնի մոտ լայն տերևներ է արձակում շուրջը։ Նրա ցողունը բարձրանում է մարդահասակ՝ գլխին կապելով գինարբուկի ծաղիկներն հիշեցնող մի փունջ։ Հյուրն ու հյուրընկալը սկսեցին խավարծիլ քաղել և դանդաղ ընթանալ դեպի վերև։

Սարի գագաթին մի թասաձև լիճ կար, որին տեղացիները ծով էին ասում։ Դրա համար էլ այդ լեռը կոչվում է Ծովասար։ Ամռանը, երբ ջուրը պակասում է, լիճը ստանում է կիսալուսնի ձև։ Այդ ծովակի շուրջը բազմագույն և բազմատեսակ ծաղիկներ են բուսնում, որոնցով զմայլվում է ամենայն արարած։ Թամոն Աստուրին տարավ լճի մոտ և ցույց տվեց նրա եզրին դրված մի սալաքար, որի վրա, ըստ ավանդության, Դավիթը խավարծիլ է կերել լողանալուց հետո։ Նրանք նստեցին այդ միևնույն քարին և, Դավթին հիշելով, կեղևեցին ու կերան իրենց քաղած դալար խավարծիլները։

Երբ հանգստացան, Թամոն կանգնեց ու երկու ձեռքով փորը պահած, ուժեղ ձայնով սուլեց։ Այդ ազդանշանի վրա հարյուրավոր վայրենացած այծեր, որ մինչև այդ անտեսանելի որոճում էին լճափի բարձրահասակ ծաղիկների ու քարերի ստվերներում, ոտքի ելան և սկսեցին խրտնած վազել լճի եզրերով։ Նրանց պատկերը ջրի մեջ արտացոլվելով, մի զմայլելի տեսարան ստեղծվեց, որի նմանը խողեղանը ամենևին տեսած չկար առաջներում։ Հովիվը կանգնեց սալաքարին և սկսեց ակնապիշ դիտել հրաշալի պատկերը։

Կարմիր, սև, սպիտակ և մոխրագույն այծեր էին դրանք, ամեն մեկը մի երինջի չափ։ Նրանք ունեին երկու կողմից ճնշված անկյունավոր եղջյուրներ։ Ոմանց եղջյուրները կոտրված էին արմատի մոտ, իսկ ոմանց այնքան էին երկարել ու ոլորվել, որ խճճվել էին իրար, ամուր վահան ստեղծելով նրանց ճակատների վրա։ Շատերի կոտոշները ճեղքված էին երկայնությամբ և լցված հողով, որոնց մեջ վայրի խոտեր էին բուսել։ Մի այծ իր ճակատի վրա տանում էր մի սպիտակ շուշան, որի արմատը խրված էր նրա

ականջի շուրջը ոլորված հաստ եղջյուրի մեջ։ Բոլորն էլ ունեին պիսակավոր և սլացիկ պարանոցներ։ Մեկի եղջյուրներից կախված էր սարդի մի պատառոտված ոստայն։ Այծերից շատերը ծածկված էին թաղիքացած մազերով, իսկ մյուսները մերկ էին և միայն գեղանի սրունքների, փորի կամ գավակի վրա նկատվում էին կոշտացած փնջեր։ Նրանց մեջ կային նաև վայրի մաքիներ՝ կարճ բրդով և հորթանման կերպարանքներով։ Կային և այնպիսիներ, որ հիշեցնում էին առյուծի և հովազի դեմքեր։ Նրանց աչքերը սև էին, խոշոր և թանձր թարթիչներով պատսպարված։ Թե՛ այծերի և թե՛ մաքիների պտուկները հաստ էին և մազոտ։ Մի քանի մաքիների դմակները խսիրի պես քարշ էին գնում ծաղիկների ու խոտերի վրայով։

— Անտառից են եկել։ Կեսօրին գալիս են ջուր խմելու և որոճալու լճի եզրին։ Իրիկվան ետ են գնում ու խառնվում Ծովասարի ջանավարների ու գազանների հետ,— ասաց ծերունին, աչք ածելով տարօրինակ հոտի վրա, որ իր զորավոր ձայնից սթափված, թեթև աղմուկով թաքնվում էր Բերդի անտառի մեջ։

— Էս է Դավթի հոտը, լաո,— շարունակեց Թամոն, այդ խառնածին, վայրենացած ոչխարի բազմությունն ակնարկելով, որ խաղաղ որոճալով տեսիլի պես չքացավ լճի եզրից։

ԵՐԿՈՒ ԸՆԿՈՒԶԵՆԻ

— Քանի որ հասանք մինչև էստեղ, իջնենք էն երկու ընկուզենին էլ տեսնենք ու ետ դառնանք,— առաջարկեց Թամոն և ծխամորճը վառելով ու ձախ գուլպայի արձակված հաստ կարմիր թելը կապելով, սկսեց ցածրանալ Ծովասարի արևմտյան երեսը, որ Տալվորիկին էր նայում։

Խոդեդանը մտազբաղ հետևեց նրան։

Արևմուտքում երևում էին Մերկեր և Սպիտակ սարերը, իսկ դրանցից դեպի հյուսիս-արևմուտք, Անդոկի ուղղությամբ, ցոլանում էին Արքնաղբյուր և Հեղին սարերը՝ արեգակի շլացուցիչ լույսով ողողված։

Ճանապարհը մի նեղ արահետ էր, և նրանք գնում էին իրար ետևից՝ համրաքայլ ու գլխահակ։ Միաժամանակ երկուսն էլ լուռ էին։ Ոչ ոք չէր խոսում։

— Դու քու պապուն հիշո՞ւմ ես,— հարցրեց ջրաղացպանը ընթացքի ժամանակ։

— Երբ նա ապրել է, ես ծնված չեմ եղել,— պատասխանեց հովիվը։

— Ճիշտ է, դու փոքր ես, լաո, նրան չես կարող հիշել։ Իսկ բան-ման լսած կա՞ս նրա մասին։

— Լսել եմ, հայրս է պատմել։

— Զոր օրինակ, ի՞նչ ես լսել։

— Իմ պապը սպանվել է կռվում։

— Ո՞ր կռվում։

— Զեյթունի։

Թամոն շանթահարվածի պես կանգ առավ։ Խոդեդանը նրա կանգնելը չնկատելով, ետևից եկավ ու դիպավ նրան։ Ծխամորճից մի քիչ մոխիր թափվեց։

— Ա՜յ տղա, չլինի՞ նա եղել է էն սասունցիների մեջ, որ Դիարբեքիրից գնացել են Զեյթուն և կռվել են Ազիզ փաշայի հիսուն հազար զորքի դեմ,— նկատեց ջրաղացպանը, ետ դառնալով և հարցական նայելով Ասատուրին։

— Ասում են նրանց մեջ է եղել։

— Ես էլ մտածում էի, թե ինչո՞ւ նա հետո չերևաց Ծովատարի կողմերը։ Դու մի՛ ասա ողջ չի եղե՞լ,— ծոր տվեց ծերունին։

— Սպանվել է զենքը ձեռքին, մինչև վերջին փամփուշտը կրակելով։

— Ողորմի իր հոգուն, լաո։ Էդ կռիվը շատ մեծ կռիվ էր. երկու-երեք հազար անիրավի դիակ է մնացել դաշտում,— ասաց Թամոն և ետ դառնալով սկսեց ընթանալ։

Խոդեդանը հետևեց։

— Լավ եմ հիշում պապիդ։ Բեղերը թանձր էր, ճակատը բարձր։ Ամեն ուսի վրա մի երեխի օրորոց կտեղավորվեր,— խոսեց ճախրականցին առջևից գնալով։— Հիմա ես քեզ նրա հիշատակը ցույց կտամ։

— Ի՞նչ հիշատակ։

— Պապիդ հիշատակը։

Այստեղ ծերունին կռացավ և քարերից մեկի վրա թափ տվեց ծխամորճը, ապա մեկ-երկու անգամ փչեց փողանցքի մեջ և, բարձրանալով, խրեց գոտու ծալքը՝ ծխատուփի ձախ կողմից։

Այդ ամբողջ ժամանակ երկու ուղևորները զրուցում էին իրար հետևից գնալով։ Թամոն երբեմն-երբեմն կռանում էր և կապում գուլպայի կարմիր թելը, որ արձակվելով խանգարում էր նրա ընթացքը։ Վերջապես նրանք դադար առան երկու դալարագեղ ընկուզենու տակ, որ բուսել էին մի ընդհանուր հիմքի վրա։ Նրանց միացնող բունը նստարանի ձև ուներ։ Այդտեղից շատ որոշակիորեն կարելի էր տեսնել Ֆոֆրա քարը, այն սատանայական կամուրջը, որի տակով Անդոկի ջուրն էր անցնում առապարներին զարկվելով։ Սուր, ուղղահայաց եզերքներով և ժեռուտ կողերով նրանց հանդեպ տարածված էր Տալվորիկի ահագին ձորը, որի հյուսիսային աջ ու ձախ մասերը ամբողջապես պատած էին ընկուզի ծառերով։ Հաստաբուն, վիթխարահասակ ծառեր էին դրանք, որ զորավոր արմատները ապառաժների և պարեխների մեջ խրած, գլուխները մղել էին դեպի երկինք։ Կանգնած էին դրանք խմբերով, զույգ-զույգ կամ առանձին-առանձին։ Կանգնած էին կիրճերի և ծործորների մեջ, լեռների անմատչելի կատարներին, քարափների և դարավանդների վրա։

— Ագռավներն են տնկել,— ասաց Թամոն։

— Ի՞նչը։

— Էդ ընկուզենիք։

Թեպետ Ասատուրը, իբրև տեղացի, շատ անգամ էր լսել, որ այդ ծառերի գոյությունը ագռավների հետ էր կապված, բայց երբեք չէր ըմբռնել, թե այդ ի՛նչպես է կատարվում։

— Ագռավն ի՞նչպես կարող է ընկույզ տնկել,— հարցրեց նա, կամենալով հաստատապես ստուգել այդ պատմությունը։

— Երկնքի ամպը նշան է բռնում ու տնկում,— հանգիստ պատասխանեց ծերունին։

Եվ իսկապես, ժողովրդի մեջ պահպանված էր մի գեղեցիկ ավանդություն, ըստ որի Սասունի, Բաղեշի, Մոկսի և Շատախի բոլոր ծառերը տնկված էին ագռավների կողմից։ Պատմում էին, որ ագռավը շատ սիրահար է ընկուզի։ Երբ նա ուտում կշտանում է, մի քանի հատ էլ ծառից պոկելով տանում թաղում է անմատչելի լեռների վրա, որ հետո ուտի։ Ընկույզը պահելիս, նա նշան է դնում երկնքում երևացող այս կամ այն ամպը։ Եվ որովհետև ամպը անկայուն նշանացույց է, հետևաբար, որոնելիս նա հեշտությամբ կորցնում է իր պահած ընկույզների տեղը, որոնք հետո

քուսնելով, աժդահա ծառեր են դառնում և ծածկում բարձրաբերձ լեռներն ու ձորերը։

— Էս երկու ընկուզենին աչքիս առաջ տնկեցին,— նկատեց ջրաղացպանը։

— Ե՞րբ։

— Սրանից հիսուն տարի առաջ։ Երբ պապիդ կորեկը աղացի, իրիկվա կողմը էս սարի վրա զբոսանքի եկանք։ Լիճը տեսնելուց հետո, ես նրան բերեցի էս կողմերը, որ Ֆոֆըռ քարը ցույց տամ։ Կանգնած նայում էինք Տալվորիկի ձորին, մեկ էլ տեսանք, երկու ագռավ երևացին. ճանկերի մեջ բռնել էին՝ մեկը երկու, իսկ մյուսը մեկ ընկույզ։ Մեկ ընկույզը բռնողը գնաց ձորի կողմը, իսկ մյուսը եկավ ու էս մեր կանգնած տեղը ընկույզները հորեց։ Հորելուց առաջ կտուցը քսեց քարին ու մի քանի անգամ երկնքի ամպին նայեց։

— Հորե՞ց։

— Նայեց, հորեց ու թռավ գնաց։

— Հետո չգտա՞վ,— հարցրեց Խոդեդանը։

— Էլ ի՞նչպես գտներ։ Մեկ տարի հետո, երբ ես եկա էս կողմը, տեսա ընկույզները բուսել էին։ Հետո ծառ դարձան։ Հիմա մենք կանգնած ենք էդ ծառերի տակ։

— Սրա՞նց համար ինձ բերեցիր էստեղ։

— Քու լուսահոգի պապի հիշատակն է, լաո։ Բերեցի, որ ցույց տամ։ Մեր սարերում ինչքան ընկուզենի տեսնես՝ ագռավներն են տնկել։ Էս երկուսն էլ երևի մեզ համար տնկեցին, որ իրար չմոռանանք։ Ինչքան տեսնում եմ սրանց, պապիդ եմ հիշում, իսկ ինչքան պապիդ եմ հիշում, ագռավի ու ընկուզի էս գեղեցիկ զրույցն է միտս գալիս։

— Թող էս երկու կանաչ ընկուզենին հիշատակի ծառ դառնան նաև ինձ ու քեզ համար, քեռի Թամո,— ասաց Անատուրը, երանությամբ նայելով այդ հեքիաթային ծառերին։

— Մի՛ հուսահատվիր, լաո, դու դեռ երիտասարդ ես։ Գրպանդ դատարկ է, բայց թևերիդ մեջ ոսկի կա։ Երբ քո նոր բախտի հիմքերը կդնես, ագռավի նման չնայես ամպին,— խրատեց Թամոն։

Մերունին լռեց։

ԴԱՐԲԻՆ ԶԵՆՈԲԸ

— Տեսա՞ր, մոռացա,— աջ ականջակոթը մտազբաղությամբ քորելով, ասաց ճախրականցին։

— Ի՞նչը մոռացար։

— Տեսնեմ, Զենոբը տա՞նն է. հետը մի քիչ կռվել եմ։

— Ինչո՞ւ։

— Դավթի էծերին է սպանում։ Էս կես տարվա մեջ հինգ հատ քուվի է գլորել ձորը։ Մեկ ամիս առաջ մի խուլ տրաքոց լսեցի։ Գնացի իր մոտ։ Տեսնեմ շոքել է մի հեշին ինձու վրա ու երեխի պես լաց է լինում։

— Էդ ի՞նչ ես արել, Զենոբ,— հեռվից գոռացի ես։

— Մի էծ սպանեցի, քեռի Թամո։

— Մինչև ե՞րբ դու Դավթի էծերին գլորես Անդոկաջուր,— բարկացած հարձակվեցի վրան։

— Զգիտությամբ եղավ, քեռի Թամո, ուզեցի խազալի (եղնիկի) զարկել, սրան դիպավ,— մղկտաց Զենոբը, երեսը սեղմելով այծի արյունոտ կրծքին։

— Ա՜յ անխիղճ, անհոգի, դու չգիտե՞ս որ Դավթի էծերին մեղք է սպանելը։ Մի լավ կռվեցի հետը, ամոթանք տվի ու հեռացա։

— Որ ինքը զղջացել է, էլ ինչո՞ւ հետը կռվեցիր,— նկատեց Ասատուրը։

— Էսօր կզղջա, բայց վաղը էլի սխալմամբ կսպանի։ Հետը կռվել եմ, որ մյուս անգամ էծն ու եղջերուն զանազանի իրարից։

— Էս կողմը ֆթլենք (դառնանք),— փոքր լռությունից հետո ասաց Թամոն և ընթացքը թեքեց դեպի ձախ։

Դարբին Զենոբի տունը շինված էր մի ապառաժի վրա Ֆրոֆրը քարի ստորոտում և հեռվից նմանվում էր անդունդի պռկին դրած մի ածդահա կարասի։

— Դարբին Զենո՞բ,— բղավեց ծերունի ջրաղացպանը, աջ ձեռքը ճակատին դնելով՝ արևի ճառագայթներից պաշտպանվելու համար։

— Զենոբը տանը չէ,— պատասխանեց մի մեծամարմին կին, շեմքը ելնելով։

— Սոսե, դո՞ւ ես։

— Հա, ես եմ, քեռի Թամո, ներս արի։

— Ո՞ւր է Զենոբը։

— Գնացել է Հալեպ։

— Ինչո՞ւ։

— Մի հնչակյան տուն էր շինել Հալեպում։ Գնաց, որ նրա տունը քանդի ու գա։ Էսօր իր վերադարձի օրն է։

Այս խոսքի վրա անտառի եզրի ծառերը ցնցվեցին և նրանց միջից, մի ահագին քլունգ ուսին դրած, հայտնվեց տալվորիկցի երկաթագործ բնակիչը։

— Բարև, Զենոբ։

— Բարին արևդ, քեռի Թամո,— Ֆոֆրու քարի մոտից ջրաղացպանին ողջունեց Զենոբը։

— Ո՞ւմ տունն էր։

— Մի շուն-շան որդու։ Եկել էր Տալվորիկ և քարոզում էր, թե հայրենիքը լավ բան է, հարկավոր է կռվել հայրենիքի ազատության համար, իսկ ինքը գնացել էր Հալեպ և օտար հողի վրա տուն էր շինել։

— Քանդեցի՞ր։

— Սրնչև հրմքերը,— պատասխանեց դարբինը ձորի մյուս պռկից։

Զենոբը Սասնա ծոերից էր։ Նրան գրեթե բոլոր տեղացի բնակիչները ճանաչում էին կամ լսել էին նրա մասին։ Դեմքը մրոտ էր սևության չափ, բեղերը թանձր ու խոշոր, հոնքերը շերտ-շերտ՝ ածուխի պես կախված աչքերի վրա։ Նա ապրում էր Ծովասարի դիմաց, Տալվորիկի Հոսնուտ գյուղում։ Նրա տունը գտնվում էր Ֆրոֆրու քարի արևմտյան եզերքին։ Ետևը անտառ էր։ Իր ազատ ժամերին նա հաճախ Սատանի կամուրջն անցնելով գալիս էր Դավթի ջրաղացը՝ Թամոյի հետ զրուցելու։

Զենոբը արհեստով դարբին էր։

Ինչպես Տալվորիկի շատ մասերում, այնպես էլ Հոսնուտ գյուղի շրջակայքում երկաթահանքի շատ պաշարներ կային։ Պապերի ավանդական օրինակին հետևելով, Զենոբը երկաթ էր հալում և սասունցոց համար շինում էր տնային գործածության իրեր։ Մի շերտ երկաթահանք էր դնում, վրան լցնում էր անտառափայտ, որից հետո դնում էր երկրորդ շերտ հանքաքար, վրան դարձյալ փայտ էր ավելացնում և այսպես մի քանի շերտ հանքաքար ու անտառա-

փայտ իրար վրա դասավորելով՝ կրակ էր վառում և թողնում, որ այն մի ամբողջ շաբաթ վառվի։ Երկաթի հալոցքը հոսում էր Զենոբի պատրաստած ձողաձև կաղապարների մեջ։ Նա այդ ձուլվածքը այնուհետև քարշ էր տալիս իր դարբնոցը, որ գտնվում էր անտառում, և շինականների համար գործիքներ էր պատրաստում, գլխավորապես խոփ և խաչերկաթ։

Տալվորիկը Սասունի սիրտն էր, իսկ այդ սրտի կենտրոնը կոչվում էր Ֆոֆրա քար։

Տալվորիկի զավակ եմ քաջ,
Զեմ խոնարհվի բեկի առաջ։
Իմ մամ ծնավ ինձ ժայռի ծոց,
Ընկուզի կոճ ինձ օրորոց։
Շինեմ փետատ, խոփ, խաչերկաթ,
Ամեմ քուվի այծերի կաթ։

Այդպես էր՝ երգում Զենոբը։

Շաբաթվա որոշ օրերին Զենոբը զբաղվում էր որսորդությամբ։ Որսը անում էր իր տան բոլորակ պատուհանից, որ շրաք էր կոչվում։ Ուղղակի տան միջից չախմախլի հրացանով կրակում էր կամուրջի մոտով անցնող արջերի և եղնիկների վրա։

Թեպետ աշխատավոր սասունցիք ավանդաբար հինգ-տասը տարին մեկ անգամ մեկական այծ էին խառնում Դավթի հոտին, բայց այդ հոտը չէր բազմանում, որովհետև կորուստները մեծ էին։ Մի մասը գլորվում էր ժայռերից, մի զգալի մասին գազաններն էին ոչընչացնում, իսկ մի չնչին մասն էլ էծապակաս, չքավոր շինականներն էին իրենց տուն տանում, գլխավորապես՝ անտիրական պառավներն ու ծերունիք։ Այդ էր պատճառը, որ արգելված էր Դավթի այծերին սպանել, և Թամոն մեկն էր նրանցից, որ խստությամբ հետևում էր այդ զարմանալի հոտի պահպանությանը։

Սուր լսողություն ուներ ճախարականցին։ Նրա ականջը որսում էր ամենանուրբ շշուկները։ Գիշերային խոր լռության մեջ ջրաղացի դռանը կանգնած նա որսում էր մոտիկ ծերպերով անցնող այծերի ու մաքիների ոտնաձայնը, զանազանում էր նրանց հազը։ Զենոբի կրակոցը նա առնում էր ջրաղացի ներսում, ջվալների վրա նստած պահին։

— Ընկա՜վ խեղճ քուվին,— հանկարծ բացագանչում էր նա և

դուրս թռչելով, վառված ծխամորճը ձեռքին պահած, քայլերն ուղղում էր դեպի Ֆոֆրո քարի կողմերը։

Զարմանալի մարդ էր Զենոբը, մի կատարյալ ծուռ։ Նա մի անգրագետ հայրենասեր փիլիսոփա էր, որ քարոզում էր, թե՝ ով սիրում է իր հայրենիքը, նա պետք է իր տունը հայրենյաց հողի վրա շինի։ Ցուր դարբնոցում նա մի մեծ քլունգ էր շինել։ Հենց որ նկատում էր որևէ մեկին, որ խոսքով հայրենասիրություն էր քարոզում, իսկ գործով հակառակ էր գնում այդ գաղափարին, վերցնում էր իր քլունգը և գնում կործանում էր նրա տունը, որտեղ էլ շինված լիներ այն։ Վերադարձից հետո դարբին Զենոբի հողոտ քլունգը սրբում էին երկու նշանավոր գյուղացի, որոնցից մեկը կոչվում էր Սեմալցի Թաթո, իսկ մյուսը Գուլթան Հարութ։ Սրանք ապրում էին Սիմ լեռան ստորոտում։ Քլունգի ծայրը մաքրելով, նրանք այդ փոշին խառնում էին ջրին և դրանով թրջում էին հայրենյաց հողի վրա շինվող տան պատերը։

Զենոբը, իբրև բնիկ սասունցի, ատում էր այն բոլոր հայ գործիչներին, որոնք Հայաստանի ազատագրության հույսը կապում էին եվրոպացոց դիվանագետների կեղծ խոստումների հետ։ Սասուն եկած մի քանի դաշնակ գործիչների դարբինը քլունգով վտարել էր Տալվորիկից։

Հայ պարտիզաններից Զենոբը սիրում էր միայն Անդրանիկին և մեծ հայրենասեր Գևորգ Չաուշին։ Այդ երկուսը նրա մոտ հաճախ էին հյուր լինում։ Զենոբը նրանց միջոցով ուզում էր վերականգնել հայ և քուրդ ժողովուրդների նախկին բարեկամական հարաբերությունները՝ օսմանյան բռնապետության դեմ միասնաբար գործելու համար։

— Բա տուն քանդելու համար մինչև Հալե՞պ կերթան,— հարցրեց Խոդեդանը, որ ամբողջ ժամանակ լուռ կանգնած, զարմանքով դիտում էր այդ հեքիաթային հսկային։

— Այ տղա, ծուռ հո չե՞ս,— նեղացած նկատեց Զենոբը, Սատանի կամուրջն անցնելով և մոտենալով նրանց։— Կերևա՝ դու սասունցի չես։ Ո՞վ է,— հարցրեց դարբինը, խոսքը Թամոյին ուղղելով։

— Զորո-Դավթի թոռն է։

— Որ էդպես է, բարև, ախպեր։ Քու պապ մեր գյուղից է քոչել Մոտկան։ Մի պոպոքի ծառի համար վիճել է հարևանի հետ և, իր

ճոկանն առնելով, խռոված հեռացել է գյուղից։ Գիտե՞ս ինչ, ախպեր Ասվատուր,— շարունակեց երկաթագործ դարբինը,—ամեն բանից քաղցրը հայրենիքն է։ Ով իր տունը հայրենիքից հեռու է շինում, նա ազգի դավաճան է։

— Դու ճիշտ ես, Զենոբ, լավ ես անում, որ քանդում ես դավաճան մարդու տունը, բայց Դավթի էծերին ինչո՞ւ ես վնաս տալիս։ Չէ՞ որ նրանք հայրենյաց հողի բարիքն են,— միջամտեց ճախրականցին։

— Սխալվեցի, քեռի Թամո, սրանից հետո զգույշ կլինեմ,— խոստացավ Զենոբը։

Հողոտ քլունգը թիկունքին դրած՝ Ֆոֆրու քարի մոտ կանգնած էր Հալեպից վերադարձած սևադեմ հաղթահասակ դարբինը, հոնքերը ծալծալ պղտորած, մազեղեն սև աբան և բրդյա անդրավարտիքը հագին։

Անտառի մոտ նոր ոտնաձայն լսվեց։

— Քլունգ մաքրողներն եկան,— հեռվից ձայնեց Սոսեն դուռը լայն բանալով Սեմալցի Թաթոյի և Գուրեան Հարութի առաջ։

Արևը մայր էր մտնում։ Սատանի կամուրջի տակ Անդոկի ջրերը գնալով մթանում էին։

Թամոն և իր ուղեկիցը Ծովասարի լանջով շտապեցին տուն վերադառնալ։

ՀԱՑ ՄՇԱԿՆԵՐԸ

Ջրաղաց հասնելով, Թամոն և Խոդեդանը այնտեղ երկու շինականի տեսան, որ նոր էին իջեցրել իրենց բեռները։

Նրանցից մեկը սնրղչի Գրքոն էր, որին սպասում էր ջրաղացպանը, իսկ մյուսը մի հաղթանդամ մշակ էր Կիրակոս անունով։ Երկուսն էլ եկել էին Խիանքի Ընկուզնակ գյուղից։ Կիրակոսը բերել էր իր տանուտերի ցորենը աղալու, իսկ Գրքոն եկել էր գլխավորապես Դավթի հիվանդ այծերի գործով՝ իր հետ առնելով մի եղջյուր բոխի ինճ՝ այծերի վերքերը օծելու համար։ Նրանք մեկ ու կես օրում կտրել էին Սպիտակ սարը, ապա անցել էին Ֆոֆրու քարը և, Ծովասարի լանջերը բարձրանալով, այդ տարաժամ պահին հասել էին Ճախրական։

Կիրակոսի բեռն այնքան ծանր էր, որ այն իջեցնելուց հետո նա դեռ երկար ժամանակ փնչում էր մի ահագին եզան պես։ Հնամաշ տրեխների միջից երևում էին նրա հաստ բթամատները՝ երկայն, կեռ և սև եղունգներով։

Իր հյուրին եկվորների հետ ծանոթացնելուց հետո Թամոն հարցրեց.

— Ի՞նչ կա Ընկուզնակում։

— Քու ողջությունը,— պատասխանեցին մշակները միաձայն։

— Մշակությունից չպրծա՞ր, Կիրակոս,— հարցրեց Ճախրականցին ակնարկելով նրա ծանր փնչոցները։

— Մեզ մշակությունից ազատվել չկա, քեռի Թամո։ Մեր բաժինը աշխարհքի մեջ մշակությունն է,— հևալով պատասխանեց Կիրակոսը իր ուսերի և մեջքի մազե պարանները քակելով, որոնք բեռն իջեցնելուց հետո դեռ կախված մնում էին իր վրա։

— Կարգվեցի՞ր։

— Չէ։

— Կարգվիր, լաո, ղոչ տղա ունեցիր, որ քեզ օգնական լինի։

Մշակը նորից փնչաց։ Նա լռությամբ բռնեց Թամոյի թևից և նրան տարավ դեպի շողտունը՝ ջրաղացի այն նկուղային ցուրտ մասը, որտեղ ջուրը վերևից թափվելով շարժում էր անիվը։

— Էս շողտունը տեսնո՞ւմ ես,— հարցրեց Կիրակոսը կռանալով խավար նկուղի վրա, որի միջով թափանցել էր արևի շողքը։

— Տեսնում եմ,— ասաց Թամոն։

— Մեր պես մարդկանց կյանքը սրա պես մի բան է։ Վերևից պաղ ջուրը գոռալով կզարկվի մեր վրա, իսկ հարուստ մարդիկ դրա գոռոցի տակ իրենց աղուն կաղան։

— Բոլորիս կյանքն էլ էս ցրտնտան պես մի բան է,— հաստատեց ջրաղացպանը։— Ամեն մարդ իր չափով է տանջվում։ Կարգվիր, լաո, որ ժառանգ ունենաս և մեջքիդ հով լինի։

— Որ ի՞նքն էլ մշակ դառնա։

— Ինչո՞ւ մշակ։ Մի քանի ոսկի դատիր ու տղիդ կարդալու տուր։ Ուսումը, լաո, էփուկ հաց է, մարդու ծոց դրուկ։

Կիրակոսը մեկն էր այն հայ մշակներից, որոնք տարին մի քանի անգամ գնում ու գալիս էին Ճախրական։

Սասունում փոխադրական միջոցներ չկային։ Այդ լեռնային քարքարոտ երկրում հնարավոր չէր անգամ լծկանների օգտագոր-

ծոմը։ Ամեն տարի հարյուրավոր եղներ, ջորիներ և ավանակներ էին գլորվում սարերից ու ջախջախվում։ Ամբողջ աշխատանքը կատարվում էր շալակով։ Շալակով սասունցի մշակները փոխադրում էին հացահատիկ, ալյուր, խոտ, տերև, գերաններ և ջրաղացաքարեր։ Այնպիսի շալակտարներ կային, որ տասնյակ փթանոց բեռներ շալակած սարից-սար էին գնում։ Մի քանի մարդով հազիվ շարժվող գերանը սասունցի շալակվորը կարող էր մի ճյուղի պես դնել ուսին և անտառից գյուղ տանել։ Աղբյուրի հանդիպելիս, նա, առանց բեռն իջեցնելու, չոքում, խմում էր և անցնում։ Նրանք առողջ և տոկուն մարդիկ էին, քաջահմո՛ւտ իրենց լեռնային արահետներին ու ճանապարհներին։

Թամոն իր մոտ եկող-գնացող մշակներին ճանաչում էր անուններով։ Գիտեր թե նրանցից ո՛վ ո՛ր գյուղից է։ Ծանոթ էր այդ շարքաշ շինականների ընտանեկան վիճակին և սաստիկ կարեկից էր դեպի այդ մարդիկ։ Յուրաքանչյուր անգամ հարցուփորձ էր անում նրանց և հետաքրքրվում էր այդ խեղճ բեռնակիրների դրությամբ։

Իբրև տարեց, Թամոն անձամբ ճանաչում էր այդ շինականներից շատերի պապերին ու հայրերին։ Գիտեր թե նրանցից ո՛վ ո՛ր անցուգնացին կամ քանի՛ տարի դրանից առաջ իր ջրաղացն էր եկել, ի՛նչ էր բերել աղալու, քանի՛ գիշեր էր անցկացրել իր հարկի տակ և այլն։

Թամոն Սասունցի Դավթին համարում էր բոլոր աշխատավոր սասունցիների պապը, ուստի ուշի-ուշով ստուգում էր, թե այս կամ այն մշակը ազգակցական կամ արենակցական ի՛նչպիսի կապերով էր առնչվում Դավթի հետ, ի՛նչ ճյուղերով էր մոտենում կամ հեռանում նրանից։ Նա շատ հաճախ Դավթի ասելու փոխարեն ուղղակի ասում էր մեր պապը, մեր ջոջ պապը և այլն։

— Չէ՛, քու ճուղը հեռու է մեր պապից,— ասում էր նա մեկին։

— Դու մոտիկ ես Ջենով Օվանի կողմից,— նկատում էր նա մյուսին։

— Քուկդ քեռի Թորոսիկի ճուղն է,— համոզում էր երրորդին։

Իրենց հերթին հայ շալակտարները խոր ակնածանքով էին վերաբերվում ծերունի ջրաղացպանի անձնավորությանը։ Ուշադրությամբ ունկնդրում էին նրա ամեն մի խոսքը և Ծովասարի առաջ նստած, երկա՛ր-երկար զրուցում էին նրա հետ իրենց հուզող հար-

ցերի շուրջը ու, բեռներն առած, գոհ սրտով վերադառնում էին իրենց տեղերը։

Թամոն ստուգում էր ոչ միայն բեռնակիրների ճյուղաբանությունը, այլև իր մոտ երթևեկող բոլոր ուղևորներին։ Նա այն համոզումն ուներ, որ Դավթի ճյուղն անաղարտ է մնացել, ուստի սրտանց ուրախանում էր, երբ հայտաբերում էր դրա ժառանգներից մեկն ու մեկին։ Ծերունին այդպիսիներին ճանաչում էր հարցուփորձ անելով և նրանց արյան ջերմությունը ստուգելով։ Սովորաբար բռնում էր ուղևորի դաստակը. ում ձեռքը տաք էր, կռահում էր, որ նա Սասնա ծռերի տոհմին է պատկանում։

Խոդեղանի հարցաքննությունը շատ կարճ տևեց։

— Քու ճուղը ուղիղ Դավթին է դիպչում, լաո,— հանդիսավոր տոնով ասաց ջրաղացպանը, մոտկանցու աղգատոհմը ոտքի վրա պեղելուց և նրա դաստակը թեթևակի շոշափելուց հետո։— Բոլոր տալվորիկցիք Դավթի ճյուղին են պատկանում, բացի մի քանի տնից, որ Զեյթունից են եկել,— ավելացրեց ծերունին ծնոտը քորելով։

— Իսկ քու ճյուղը ո՞րն է, քեռի Թամո,— հետաքրքրվեց Ասատուրը։

— Ես Ճնճղափորիկի սերնդից եմ,— հպարտությամբ պատասխանեց նա։ Ըստ Թամոյի, այդ տան հետագա սերունդները հայտնի ջրաղացպաններ դարձան և ցրվեցին Հայաստան աշխարհում, որոնցից մեկն ինքն էր։

Այդ գիշերը Խոդեղանը, Գրքոն և Կիրակոսը հյուր եղան Թամոյին և լուսացրին բեռների վրա իրենց աբաներով ծածկված։ Քնելուց առաջ ջրաղացպանը նրանց համար բաղարջ եփեց և պատմեց Սանասարի և Բաղդասարի ճյուղը։

Վաղ արևածագին Գրքոն շտապեց Բերդ՝ Դավթի հիվանդ այծերին բուժելու, իսկ Կիրակոսը սկսեց հաստ մախաթով կարել մազե թեռը, որ գյուղ վերադառնան։

Դեռևս առավոտ էր, երբ երկու մշակները սրտագին հրաժեշտ տվեցին Թամոյին ու Ասատուրին և, իրենց բեռները շալակելով, ճանապարհ ընկան։

— Բեռս թեթևացրու, քեռի Թամո,— խնդրեց Կիրակոսը, դուրս գալուց առաջ։ Ճախրականցին մի քանի խոշոր քար գետնից վերցնելով դրեց մշակի շալակի վրա։ Երբ բավականաչափ հեռացել էր,

Կիրակոսը տակից մի փոքրիկ ցնցում գործեց։ Քարերից մեկը վայր ընկավ։ Մնացյալ քարերը նա պետք է թափեր հետզհետե գնալով։ Քար դնելու այդ սովորությունը, որ շատ հին էր, համարվում էր մեծ բեռը տեղ հասցնելու կարևոր պայման։ Ամեն անգամ մի քար գլորելիս, մշակները թեթևություն էին զգում և հեշտությամբ էին կրում ծանր բեռները։

Առջևից ընթանում էր սնդղչի Գրքոն, կորեկալրով լի պարկը շալակին և կեռ եղջյուրը գոտկում խրած։ Նրա ետևից ահագին բեռի տակ կորացած, Ծովասարի կանաչ ստորոտով, դանդաղ գնում էր Կիրակոսը։ Ծանրությունից նրա կքած ոտները ճապաղելով դուրս էին ընկնում կողքերից՝ իրենց միջև թողնելով լայն տարածություն։ Թեռի վրայով և թևերի տակով անցնող հաստ պարանը, ամուր ճընշելով նրա վիզը և ուսերը, հարկադրում էր նրան հևալ և շարունակ առաջ նայել։

Թամոն և Խոդեդանը ջրաղացի մոտ կանգնած՝ երկար նայեցին նրանց ետևից։՝

— Անխիղճ տանուտեր ունի։ Հայ է, բայց քրդից վատ է,— ասաց Թամոն, կարեկցելով տառապյալ մշակին։ Ապա ավելացրեց.— իր աղուն պետ աղացի։

— Լավ արիր,— նկատեց Ասատուրը, ի սրտե ուրախանալով այդ բանի համար։

Թամոն սովորություն էր դարձրել խոշոր աղալ այն հարուստ մարդկանց աղունը, որոնք անգթաբար էին վարվում իրենց մշակների հետ։ Դրանով նա մի տեսակ վրեժխնդիր էր լինում այդպիսիներից, ծառաների հետ վատ վարվելու համար։

Նրանց գնալուց հետո Խոդեդանը նույնպես ճանապարհ ընկավ։ Հրաձեշտի պահին Թամոն ալրոտ ձեռքը դնելով նրա ուսին՝ ասաց.

— Բոլորին եմ ասել, քեզ էլ եմ ասում, լաո. եթե ուզում ես անմահ լինել՝ ժառանգ ունեցիր։ Անժառանգ անմահությունը անեծք է։ Էդպես է՝ ասված Դավթի պատմության մեջ։

Ասատուրը համբուրեց նրա ձեռքը, լուռ նայեց նրա աչքերի մեջ ու գնաց։ Նա գնաց իր հետ տանելով ուժգին տպավորություններ Թամոյից և Դավթի ջրաղացից։ Միակ բանը, որ ճնշում էր նրա հոգին, այդ Կիրակոսի վիճակն էր, այն դժբախտ մշակի, որին նա

տեսավ Ճախրականում և որը, ահագին բեռի տակ կքած, լեռներով ճանապարհ ընկավ դեպի Ընկուզնակ։

Խոդեդանի աչքերի առջևից չէին հեռանում նրա ճապաղ քայլերը, նրա ծանր տնքոցը և տառապանքից դուրս ընկած սև, խոշոր աչքերը։

ԱՐԻՆՈՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Ծովասարի հյուսիսային լանջին հասնելով, Ասատուրը կանգ առավ և նայեց դեպի Սև սար։

Իր առջև առավոտի թափանցիկ ոսկեփոշու միջից երևում էին Բռնաշենի գյուղերը իրենց երդիկների գալարուն ծուխով։ Անդրակից դեպի հյուսիս-արևելք նայելիս, Խոդեդանի աչքը հանգչեց Սիմ լեռան վրա, որի թիկունքից խոյանում էր Ծիրնկատարը՝ տիրական հայացքը Մուշին հառած։

Ահա և Խութը՝ հազարամյա կաղնիների և կաղամախիների առասպելական աշխարհը, Սասնո հին քաջազունների բնակատեղին։ Այդ խորդուբորդ երկրի անդնդախոր ձորերը ճեղքելով հոսում էր Բռնաշենի գետը՝ Տիգրիսի արևմտյան վտակներից մեկը, իր լուսաջուր ալիքները հրելով դեպի հարավ, դեպի Ցրտուտ գետի գեղատեսիլ ափերը։ Նրա եզերքներին, Սև սարի սաղարթախիտ կաղնուտների մեջ նկատելի երևում են Կոստ, Հնդկձոր, Լորդնձոր, Թաղվու և Թաղավանք հինավուրց գյուղերը։ Այստեղ ու այնտեղ, անտառների բացատներում և գետաբերաններին, նա տեսնում էր արածող խոշոր եզների և գոմեշների ցաք ու ցրիվ խմբեր, որ կազմում էին այդ ավանների հիմնական քաշող ուժը։ Լեռնալանջերին, հովիտների և կիրճերի մեջ ամենուրեք կանաչին էին տալիս կորեկի, գլգբլի և գավարսի անհամար արտեր։ Խութի և Բռնաշենի չարքաշ հայ գյուղացին հերկել ու ցանել էր յուրաքանչյուր թիզ հող։

Լոիկ անցնում էր Ասատուրը՝ հայրենի սարերով՝ ճնշված իր անձնական և համայնական վշտի ծանրության տակ, գլուխը ջրաղացպան Թամոյի ցույց տված պատկերներով և շքեղ պատմություններով լի։

Լեռնային գունագեղ տեսարանները հաջորդում էին միմյանց։ Ամենուրեք մոտկանցի հովիվը տեսնում էր գետինը ծածկված երփ-

ներանգ ծաղիկներով։ Ձքնաղ նարգիզն ու վայրի շուշանը ժպտում էին քարափների ծերպերից։ Պուտն ու պուտվարդը, ոսկեծաղիկն ու ծիլծափը կանչում էին՝ այս կողմով անցիր։ Այնտեղ իր դեղնափառ ծաղիկները արձակած, երազում է արջաթաթիկը։ Այստեղ իր փշաձև սուր տերևները գետնին տարածած՝ արևի պես վառվում է ոսկեշող պուպուն։ Ահա ցողաշաղախ փառչուկը, որ մտորում է գառան դմակի թանձր տերևների կողքին։ Մի փոքր այն կողմ երևում է պառավի գոգնոցը՝ ճաճանչաթերթ ծաղիկները բացած։ Ահա և մի ուրիշ զարդարանք. այդ մաճկալն է։ Նրա վառ կարմիր թիթեռնածաղիկները պճնում են սքանչելի մարգագետինը։ Արջաթաթիկների դեղնավուն մարգերի առաջ սպիտակին են տալիս փառ-փառ ծաղկախմբերը։ Ահա և թորթեկը՝ իր բիլ աչիկները բազմաճյուղ ցողունի շուրջը բաժակած։ Ահա և շղշղուկը, որ պերճ ծաղկեպսակները վերևից թեքելով զարդարել է ուրիշ անպսակ ծաղիկների ճակատները։ Ահա և թավաթուփ շերեփիկը, և բայլակը՝ բլթակաձև կանաչ տերևների վրա իր ծաղիկների գինդերը կախած։ Որքա՜ն գեղեցիկ է հայրենի բնությունը, որքա՜ն սիրելի է այն։

Բայց այս ի՞նչ բան է։ Մի ահագին փուշ իր թրաձև երկայն ասեղներով պատառոտել է շուրջը բուսած ծաղիկների և կանաչների ցողունները, զրկելով նրանց ազատորեն աճելու հնարավորությունից։ Խոզեղանը դրան նայելով հիշեց Շաբաթ աղին, որոշ նմանություն գտնելով այդ տատասկի և վայրագ բեկի միջև։ Նա ոտքի մի ուժգին հարվածով պոկեց այդ հոխորտագին ուղտափուշը և զայրացած՝ անդունդ շպրտեց, ազատ ասպարեզ բանալով շրջապատի ընկճված բույսերի համար։

Որքան Ասատուրը մոտենում էր Արինոքին, այնքան նորանոր մտածություններ զբաղեցնում էին նրան։ Սասունի վերջին կռիվների ժամանակ քրդական շատ ցեղեր դավել էին հայերին։ Միայն մեկ տուն հավատարիմ էր մնացել իր բարեկամության մեջ. դրանք շեկոներն էին։ Սասունցի հայը երբեք քրդի տանը ծառա չէր մտնում, իսկ եթե այդպիսի դեպքեր լինում էին, ապա նախապատվությունը տալիս էր շեկոներին։ Հայերի համար Շեկո տան քրդերի հետ կապվելը այլ կեղեքիչներից պաշտպանվելու միջոց էր։ Այդ նրանք անում էին գլխավորապես թյուրքական հարստահարիչներից պաշտպանվելու և իրենց ունեցվածքը քրդական բեկերի հափշտակությունից փրկելու նպատակով։ Ահա մի այդպիսի ազդեցիկ քրդի մոտ էր

դիմում Խոդեդանը, որի համբավը նա առել էր Մոտկանում։ Սակայն ի՞նչ էր անելու, եթե այդ քուրդը իրեն ծառայության չընդուներ, կամ թույլ չտար բնակվելու իրենց գյուղում։ Գուցե այդ դեպքում նա գնար Դաշտի հայաբնակ գյուղերը, կամ անցներ հեռավոր Խնուս՝ որևէ գործ որոնելու։

Երբեմն-երբեմն բարձրադնաց ճանապարհների վրա և կիրճերի դժվարանցանելի արահետներում հանդիպում էին սասունցի տղամարդիկ և կանայք, որոնք կանաչ խոտի ահագին դեզերը շալակած՝ վայր էին իջնում սարերից։

Աստատուրը ոտքը դրեց վերջին քարքարոտ անդունդի եզրին, որի կողերով դեպի Բռնաշենի գետն էր իջնում մի վտանգավոր արահետ։ Նա մտքերով տարված՝ պատրաստվում էր իջնել, երբ մի որոտալի ձայն խոցեց նրա ականջը։ Մի ինչ-որ քուրդ Արինոքի կողմից ամբողջ ուժով գոռում էր դեպի Ծովասարի լանջին գտնըվող քրդական գյուղերից մեկը, որտեղից մի ուրիշ քուրդ, հավանորեն նրա ազգականներից, նույնպիսի որոտընդոստ ձայնով պատասխանում էր նրան։

«Այստեղ էլ քուրդ աղաներ են տիրում»,— տխրությամբ մտածեց Խոդեդանը և սկսեց իջնել։

Ահա մի հուժկու սարվոր, որի կրունկները հազիվ երևում են անդունդի եզրով դանդաղորեն սահող դեզի տակից։ Նրա ետևից օրորվելով և իր դեզի ծայրերը կողքի ժայռերին զարկելով, ընթանում էր երկրորդ լեռնականը՝ մանգաղը ծաղկավոր խոտի մեջ խրած։ Այդ նրա կինն էր։

— Ուշիկ քելե, Գասպա՛ր,— լսելի եղավ ետևից գնացող սարվորի կանչը։ Այդ ազդանշանի վրա այր շինականը դանդաղեցրեց իր գնացքը և սկսեց զգուշորեն իջնել դեպի անդունդը։ Վիհի եզերքին կանգնած՝ Աստատուրը վայր նայեց։ Սարսափի մի դող անցավ նրա մարմնով։ Տղամարդու դեզի մեջ նա տեսավ երեք տարեկան մի երեխայի, որ գլուխը հանած, բարձրից նայում էր ահռելի ձորին։ Աստված իմ, եթե մի վտանգ պատահի և դեզը շուռ գա՞։ Այս մտածությամբ էր տարված մոտկանցին, երբ մի ահագին կոշտ պոկվեց լեռնականի ոտքի տակից և նա, մարմնի հավասարակշռությունը կորցնելով, թեքվեց վիհի վրա։ Մի ակնթարթ՝ և հայր ու որդի պետք է ջախջախվեին ապառաժոտ անդունդի մեջ։ Աստատուրը արագ մի

ցատք կատարեց և, ետևից հասնելով, բռնեց շալակտարի պարանի երկու ծայրից։ Նա աջ ոտքը մի ժայռի հենած՝ սկսեց ձգել։ Դեզը վայր գնաց, իսկ սարվորը փրկվեց։

— Երեխա՞ն,— ահաբեկված բացագանչեց Խոդեդանը։ Սարսափից նրա աչքերը մթնեցին։ Նրան թվաց թե մանուկը դեզի հետ վայր գնաց։ Բայց, ո՞վ զարմանք, երեխան, հաստ պարանի ծայրից կախված սկսեց տարուբերվել անդունդի վրա։ Նախապես հայրը նրա մեջքից պարան էր կապել, որ փորձանքի ժամանակ խուսափեր վտանգից։ Ամատուրին ուրախացրեց այդ հնարագիտությունը։ Նա պարանը զգուշությամբ ձեռքի վրա փաթաթեց և անդունդի երախից դուրս կորզեց մանկան։ Շալակտար գեղջկուհին և այրը սեղմեցին իրենց փրկարարի ձեռքը։ Մայրը բազուկների մեջ առավ զավակին և համբուրեց նրան։

— Անունը ի՞նչ է,— հարցրեց Խոդեդանը։

— Պետրոս։

Մինչդեռ նրանք խոսում էին, սարվորն իջավ և անդունդի ցից քարերին դեմ առած խոտի պատառները հավաքելով, բերեց և, շալակ անելով, պատրաստվեց ուղևորվել։

Այդ շինականները Թաղվու կոչվող գյուղից էին, որ շինված էր Բռնաշեն գետի ձախ ափին, խութա նշանավոր բերդի ավերակների դիմաց։

— Ապրուստդ ծանր է երևում, քեռի Գասպար,—նկատեց մոտկանցին։

— Ամեն քարի տակ դարդ կա, լաո։ Էս ապրուստ չէ, որ մենք ապրում ենք,— տնքաց Թաղվեցի ծերունին իր ծանր շալակը մի ժայռի հենելով։

— Բարկացած ես երևում։

— Մուդուռն է պատճառը։

— Ինչո՞ւ։

— Էս ձմռանը Ռաբաթից եկավ մեր գյուղը։ Ինչպես գիտես, ո՛ր գյուղը որ գնալու լինի, էդ գյուղի շինականները պետք է դոշակ ու բարձ տանեն փռեն մուդուրի տակը և դահուկի քթից բռնած՝ ձյունների միջով քաշեն բերեն իրենց գյուղ։ Ես չգնացի. ախպեր,— ասացի,— ես դոշակ ու բարձ չունեմ, որ էստեղից տանեմ Ռաբաթ ու էնտեղից էլ մուդուռին քաշեմ բերեմ Թաղվու։ Հերիք

չէ՞ մուդուռը մեզ եղների պես լծի։ Էս իմ խոսքը ընկել էր նրա ականջը։

— Որ էդ գյուղացին չի եկել իմ դահուկը քաշելու և իմ ետևից դոշակ ու բարձ չի բերել, կնշանակի նա ուզում է ինձ մորթել,— ասել է մուդուռը։— Ինչպես որ Մուսաբեկը արքավանքցի հայ գյուղացուն գիշերով կապկապեց ու դրեց բուխարիկի մեջ վառեց, էդպես էլ ես էդ անհնազանդ թաղվեցի Գասպարին մի օր կբռնեմ ու կճխտեմ բուխարիկի ծակը։— Թո՛ւհ քու մորուքին, սուլթան Համիդ, էս ի՞նչ անիրավ աշխարհ ես ստեղծել.

Հալեպա երկրից մինչև Հայ Թալին
Քաշեցիր պատից մեր կարպետն ու խալին,
Անասուն չթողիր մեր գոմի սալին,
Խոլոռ կնայես մեր եղի ուխալին,
Թե՛ գարնան կուզես, թե՛ աշնան կալին,
Էլ ինչպե՞ս պահեմ ես իմ խեղճ բալին,
Վա՜յն եկավ անտեր գյուղացու հալին։

բարկացած գոչեց շինական Գասպարը։ Նորից ծանր տնքաց և դեզը վերցնելով սկսեց ցածրանալ։ Ետևից գնում էր կինը։ Ասատուրը օգնեց վտանգավոր ճանապարհը անցնելու և մինչև գյուղի սահմանը շալակած տարավ երեխային։

Բտերը և Շեկո տան քրդերը Մոտկանից և Խութից գաղթելով, հետզհետե տարածվել էին նաև Բռնաշենի գյուղերում՝ գլխավորապես համախմբվելով սուրբ Աղբերիկի շուրջը։ Նրանցից յուրաքանչյուրը պատկանում էր մի պապի, այսինքն ծագում էր մի արմատից։ Խութի Շամիանք և Ներքին Շնիստ ավաններում ապրում էին Չխլո և Զմո տան քրդերը։ Արուք, Թաղվու և Թաղավանք գյուղերում տիրում էր Ղասըմի տունը։ Վերին Շնիստում բնակվում էին Բաբիրի քրդերը, Բլրիկում իշխում էր Բլալի ճյուղը։

— Էն քուրդն ո՞վ էր, որ մի քիչ առաջ գոռում էր Արինոքի կողմից դեպի Ծովասար,— հարցրեց Խոդեդանը երեխային ուսից ներքև առնելով։

— Զատոն է։

— Ո՞վ է։

— Բտերցի քուրդ է, ապրում է Դաշտադեմում։

— Ի՞նչ զորեղ ձայն ունի անիծվածը։

— Էլ մի՛ հարցնի, ախպեր Ասվատուր,— գանգատվեց շալակ-տար կինը։— Զատոն մեր գլուխը տարել է իր բռռալով։ Մզրեի նախարապահների վրա է գոռում։ Երևի նորից նախիր է տեսել իր հորեղբոր արտերի մեջ։

Նորից թնդաց այդ քրդի ահարկու ձայնը։ Այս անգամ այն ավելի մոտիկից եկավ։ Խոդեդանը նույնիսկ տեսավ, թե ի՛նչպես մի քոլոզավոր քուրդ դիմացի գյուղում, խրճիթներից մեկի տանիքին կանգնած, բղավում էր դեպի Ծովասար։ Շատ որոշակի լսվում էին նրա հանդիմանական խոսքերը նախարապահների հասցեին.

— Նախիրը հանե՛ք իմ հորեղբոր արտերից, անիծվածներ, քնա՞ծ եք, ի՛նչ է,— գոռում էր նա։

— Մեկ շաբաթ առաջ էդ քրդի ձենից մի գյուղացի փախավ Դաշտի գյուղերը,— ասաց շինական Գասպարը։

— Ո՞րտեղից։

— Դաշտադեմից։ Անունը Շինական Պողոս է։ Կռվեցին ինքն ու Զատոն։ Քիչ մնաց գործը զենքի հասներ։

Թաղվեցի Գասպարը հրավիրեց Խոդեդանին կոխել իրենց շեմքը և այդ գիշեր հյուր մնալ իրենց մոտ, բայց վերջինս շտապում էր տեղ հասնել։

— Աստված քո գործին հաջողություն տա,— ասաց շալակվոր լեռնականը, սրտագին հրաժեշտ մաղթելով իր մոտկանցի բարեկամին։

Ասատուրն անցավ հարևան գյուղը և ձեմի ջուրը կտրելով (այդպես էր կոչվում Բռնաշենի գետը), սկսեց ելնել դեպի Սև սար։

Երեկո էր, երբ նա հասավ Արինոք։

ԵՐԿՈՒ ՔՈՒՐԴ

Արինոքը շինված էր Սև սարի վրա։ Երեսունութ տունը քուրդ էր, յոթ տունը հայ։ Հարևան գյուղը Դաշտադեմն էր։ Սա գերազանցապես հայաբնակ վայր էր։ Մի մեծ ձոր էր այդ շենները բաժանում իրարից։ Դաշտադեմը երեք կողմից շրջապատված էր Սև սարի անտառներով, իսկ հարավային կողմից նրա առաջ բացվում էր մի ընդարձակ դաշտ, որի միջով հոսում էր Բռնաշենի գետը։

Այդ դաշտի պատճառով էլ գյուղը կոչվում էր Դաշտադեմ։ Այս գյուղերում տիրում էին քրդական երկու տներ։

Արինոքի գլխավորը կոչվում էր Ավեսի Հաջի։ Սրա տունը Բրոնաշենում հայտնի էր Նասրի տուն անունով և պատկանում էր շեկոների ցեղին։

Մոտ հիսուն տարեկան բարձրահասակ, քաջասև բեղերով մի հաղթանդամ տղամարդ էր Հաջին։ Դաշտադեմում և հեռավոր գյուղերում բնակվող չքավոր քրդերն ու հայերը իրենց աղաներից փախչելով գնում էին Արինոք և աշխատանքի էին մտնում այս քրդի մոտ։

Ավեսի Հաջու տունը գտնվում էր գյուղի ներքև, մի բոլորակ հողաթմբի վրա։ Դռան առաջ տարածված էր գլգելի մի ընդարձակ արտ, որի կողքերին սպիտակին էին տալիս խոշոր դդումները թմբերի վրա կախված։ Տան ետևը, որ նայում էր դեպի արևմուտք, շարված էին Նասրի տան կավե փեթակները, որոնց մեղուները թռչում էին մինչև Ծովասար։ Բակի առաջամասում կար մի տափակ որձաքար, որի վրա կռացած էր մի ծերացած թթենի։ Քարի վրա փռված էր մի հաստ թաղիք՝ երկու բարձերով։ Իր ազատ ժամերին այդտեղ էր հանգստանում Նասրի տան քուրդը։

Շատ արտեր և բանջարանոցներ ուներ Ավեսի Հաջին, բայց նրա տնտեսության հիմնական բարիքը իր բազմաքանակ խաշներն էին, որոնց պահպանության համար նա փորձված հովիվներ էր որոնում։

Իր ապարանքից դեպի հարավ գտնվում էին Նասրի տան հինգ ընդարձակ գոմերը, որոնց մեջ ոչխարն էր փարախում ձմռան ամիսներին։ Իսկ դեպի հյուսիս-արևմուտք, Սև սարի լանջին, երևում էր մի ավերակ բերդ, որի փլատակների վրայով գալարվելով անցնում էր Հաջու թոնիրների կապտավուն ծուխը։ Գրեթե ամեն օր այդ ծուխը լիզում էր կործանված բերդի ամայացած պատերը՝ իբրև խնկարկություն անցյալի հիշատակների վրա։

Նասրի տան քուրդն ուներ մի սպիտակ նժույգ, որ միշտ թամբած վիճակում արածում էր մարգագետնի մեջ՝ իր տան ետև։ Այդ ձին նա հեծնում էր սար գնալու կամ ռազմադաշտ ուղևորվելու համար։

Հաջին հաճախակի այցելության էր գնում վերոհիշյալ բերդի ավերակներին։ Գնում էր միայնակ, երբեմն ձին քարշ տալով ետե-

վից, մտքերի մեջ խորասուզված։ Պտտվում էր բերդի շուրջը, նըստում, թախծում էր որևէ փլատակի վրա և, ձին հեծնելով, դանդաղ հեռանում էր այդտեղից։

Նրան ճանաչող տեղացի բնակիչները մի տարօրինակ խորհրդավորություն էին նկատում այդ քրդի մեջ։ Պատմում էին, որ իբրև թե նա մեծաքանակ ոսկի ունի պահած, որի տեղը կորցրել է և չի կարողանում գտնել։ Բտըրցի քրդերը տարածել էին, թե նա կապված է հայերի հետ և գաղտնի օգնում է սարերում պատըսպարված հայդուկներին։

Մի բան պարզ էր, արդարև, որ Ավեսի Հաջին ներքուստ ատում էր օսմանցիներին և իբրև Շեկո տան քուրդ, շահախնդիր էր հայերի հետ խաղաղ և բարեկամաբար ապրելու քաղաքականությանը։ Հայ ընտանիքների հետ սերտ հարաբերության մեջ էին նաև Հաջու եղբայր Ավեսի Սալիմը և Նասրի տան գրեթե բոլոր քրդերը։ Այդ մարդիկ այն համոզումն ունեին, որ հայերն ու քրդերը մեկ արյունից առաջացած սերունդներ են՝ բաժանված ցեղով և կրոնով։ Նրանց մեջ պահպանված էր մի վիպական պատմություն, ըստ որի հայերն ու քրդերը եղբայրներ են եղել։ Նրանց կենցաղի երկու գլխավոր ուժերը եղել են սուրն ու գութանը։ Նրանք մի օր բաժանվել են. հայերը վերցրել են գութանը, իսկ քրդերը՝ սուրը։

Կար նաև մի ուրիշ հանգամանք։

Հայ շինականը դարավոր բարեկամությամբ ավելի կապված էր քրդի հետ, քան թե օսմանցու։ Թե՛ հայ և թե՛ քուրդ աշխատավորը զրկվել էին անկախությունից և հայրենիքից օսմանյան տիրապետության հետևանքով։ Երկուսն էլ ձգտում էին իրենց ազգային անկախությանը։ Երկուսն էլ երազում էին ազատագրվել սուլթանների և փաշաների լծից։

Մի ուրիշ զորավոր պատճառ էլ կար։ Հաջին ուներ երեք կին, որոնցից ամենագեղեցիկը մի հայուհի էր՝ Սալվարդ անունով։ Քրդերը նրան Հուրի Մալաք էին ասում։ Թե ո՛վ էր այդ գեղեցկուհին, կամ ո՛ր աղջիկն էր նա, ոչ ոք չէր իմանում։ Հաջին նրան իր ապարանքն էր բերել սարերի վրայով, իբրև չերքեզ աղջկա, բայց թե որտեղի՞ց՝ մի տեսակ հանելուկ էր այդ։

Սալվարդը ամուսնությունից երկու օր առաջ ասել էր նրան.

— Միայն մի պայմանով ես քեզ կին կդառնամ. երդվիր, որ

չես դրժի այդ պայմանը։ Քուրդը պատից վայր առնելով Նասրի տան սուրը, երդվել էր նրա վրա։

— Իմ պայմանն այն է,— ասել էր Հուրին,— որ դու, հանուն իմ հանդեպ տածած սիրո, սիրես և օգնես այն ժողովրդին, որին պատկանում եմ ես ազգությամբ։

— Ես հայերին օգնել եմ և դարձյալ կօգնեմ,— ասել էր Հաջին։— Դու հետո կիմանաս, թե ես ինչու պարտավոր եմ այդ ժողովրդին օգնել։— Եվ քուրդը, բազմագուշակ ժպտալով, իր սուրը կախել էր պատից։ Ասում են՝ այն օրվանից, երբ Սալվարդը ոտք էր դրել Արինոք, Նասրի տան քուրդը սկսել էր ավելի ջերմությամբ վերաբերվել հայերին։ Ոչ մի հայ նրա դռնով դատարկ չէր անցնում։ Հուրի Մալաքը ուշի-ուշով հետևում էր, թե ինչպես է իր ամուսինը կատարում նվիրական ուխտը։ Այն սենյակը, որտեղ պահվում էին Հաջու զենքերը՝ սուրը և հրացանը, ոչ ոք չէր համարձակվում մտնել։ Միայն Սալվարդն իրավունք ուներ ազատ ելումուտ անել այնտեղ։ Այդ միևնույն սենյակում գտնվում էր մի խորհրդավոր սնդուկ, որի մեջ Նասրի տան քուրդը պահում էր մի շատ թանկարժեք մատյան։ Թե ինչի՛ մասին էր այն, կամ ե՛րբ էր գրված, դրա վերաբերմամբ ոչ ոք ոչինչ չգիտեր։ Ավելի Հաջին այդ բանը այնքան ծածուկ էր պահում, որ ոչ մի մարդ չէր հանդգնում այդ ուղղությամբ որևէ ակնարկ անել։ Նույնիսկ Հուրի Մալաքը չէր համարձակվում մոտենալ խորհրդավոր գաղտնարանին։ Ասում էին, թե այդ գաղտնիքը լուծվելու է այն ժամանակ, երբ Հաջու տոհմը անհետանար աշխարհից։

Խորհրդավոր էր ոչ միայն այդ արկղը, այլև այն բանալին, որով փակված էր այն։ Աշխարհում, բացի իրենից, ոչ ոք չէր իմանում, թե ո՛րտեղ է պահված այդ սնդուկի բանալին։

Դիաշտադեմ գյուղի գլխավորը կոչվում էր Զատո։ Սա մի ծերունի քուրդ էր, որ աշիրեթի աղայական դասին էր պատկանում։ Զատոն բարբրցի քուրդ էր։ Նրանց տոհմը Բռնաշենում կոչվում էր Ախուպի տուն։

Զատոյի պապը՝ Ախուպը, որ մի քաջ և ռազմաշունչ մարդ էր, ժամանակին ապրել էր Ծովասարի լանջին գտնվող քրդական Մզրե կոչվող գյուղում։ Դեռևս տասնհինգ տարեկան հասակում Ախուպն իրենց տան անունը նշանավորել էր մի հերոսական դրվագով, որի մասին երգ էր հորինված։ Իրենց կորած եզը որոնելիս, նա գիշե-

ռով կալանել էր մի հաղթամարմին արջի և, ականջներից բռնած, քարշ էր տվել դեպի գյուղը և փակել ախոռի մեջ։ Իսկ Զատոյի հայրը հայտնի ավազակ էր։ Նա ամբողջ Սև սարը հայտարարել էր իր սեփականությունը և չէր ենթարկվում ոչ մի իշխանավորի։ Եվրոպացի մի ճանապարհորդ սուլթանի թուղթը ձեռքին գալիս է Սև սարն ուսումնասիրելու։

— Ո՞վ ես դու, ի՞նչ գործ ունես մեր սարերի վրա,— հարցնում է այդ ավազակը՝ նրա առաջը կտրելով։

— Ճանապարհորդ մարդ եմ։ Սուլթանից թուղթ ունեմ ձեռքիս։

— Էս սարերի սուլթանը ես եմ,— ասում է քուրդը և եվրոպացուն կողոպտելով, վտարում է Բռնաշենից։

Զատոն իր ռազմատենչ պապի և հոր պատգամին հավատարիմ, գրավել էր հայ ընտանիքներից մեկի տունը, նրա բակն ու տոհմական ընկուզենին և ապրում էր այնտեղ։ Պատմում էին, որ նա Մզրեից Դաշտադեմ էր եկել ընդամենը մի փալասով և, օսմանցիների հովանավորությամբ, հայերին ճնշելով, իշխանավոր էր դարձել այդ գյուղում։

Մոտկանի և Խութի քրդական տների միջև հաճախակի բռնկվում էին արյունահեղ կռիվներ։ Տոհմական մի այդպիսի կատաղի ընդհարման պահին, որի ժամանակ սպանվել էր նրա հայրը, Զատոն զրկվել էր ձախ աչքից։ Թշնամու գնդակը խրվել էր քրդի ակնակապիճի մեջ։ Նրա ձախ աչքը շարունակ կապված էր սև կերպասով։ Արևի տակ նստելիս, գնդակը տաքանում էր և գլուխը սկսում էր սաստիկ ցավել։ Այդ պատճառով էլ Զատոն խույս էր տալիս արևից և շարունակ նստում էր իր տերևախիտ ընկուզենու շվաքում, որ գրավում էր ընդարձակ բակի կեսը։

Այդ ծերունի քուրդը դատապարտված էր մի տարօրինակ գոյության։ Երբ գյուղից ուզում էր բացակայել, ճանապարհ էր ընկնում արևամուտին կամ գիշերով, երբեմն էլ վաղ լուսաբացին, երբ օդը պաղ էր։ Սովորաբար քայլում էր ստվերախիտ ծառերի տակով, կամ լեռների ստվերոտ կողերով։

Ցեղական վրիժառու կռիվները այնքան խորն էին ազդել այդ քրդի վրա, որ նա ամեն անգամ ասում էր. «ավելի լավ է յոթ տարի անբերրիություն լինի, քան թե մեկ տարի պատերազմ»։

Զատոն հագնում էր Բիթլիսի կարմիր սոլեր և երկնագույն

շալե շալվար։ Գլխին կապում էր սև փուշի։ Նրա ծխամորճը այնքան երկայն էր, որ ծխելիս այն ժամերով դնում էր հենակի վրա։ Ծխամորճի գլուխը շինված էր կաղնձյա կավից։ Մի սպասավոր շարունակ կանգնած էր ծառի տակ. նրա պաշտոնն էր՝ կրակ դնել քրդի ղայլոնին, թափել մոխիրը և պարբերաբար մաքրել նրա փողանցքը գոյացող կեղտից։ Դրված կրակը պետք է անբիծ լիներ, այսինքն կաս-կարմիր՝ մոխրի բարակ շերտով պատած։ Չատոյի ծխամորճի կրակից կայծ էին առնում հարևան գյուղերի Դաշտադեմով անցնող ու դարձող հարուստ քրդերը։ Շատերը նրա կրակով իրենց թոնիրներն էին վառում։

Ընկուզենու տակ նստած ժամանակ Չատոն ուշի-ուշով հրսկում էր ոչ միայն Դաշտադեմի հանդերին, այլև աչք էր պահում Մզրե գյուղի արտերի վրա, ուր ապրում էր իր ավագ հորեղբայրը՝ Խաչոն։ Հենց որ որևէ նախիր կամ անասուն էր նկատվում հորեղբոր արտերի մեջ, Չատոն Դաշտադեմից գոռում էր դեպի Ծովասար։ Նրա ձայնի վրա Մզրեի նախրապահները դուրս էին թափվում տներից և շտապում էին հանդերը՝ նախիրը արտերից հանելու համար։ Այդ ահագին տարածության վրա Չատոն սովորական խոսակցություն էր վարում յուրայինների հետ։ Մզրեում ապրող իր ազգականներից բոռալով բանվորական ուժ էր ուզում՝ արտերը քաղելու կամ այլ գործեր կատարելու համար։ Հարևան գյուղերի բնակիչները արդեն ընտելացել էին այդ քրդի որոտագոչ ձայնին։ Շատերն իրենց ականջները փակում էին, երբ նա գոռում էր դեպի Ծովասար։

Չատոն ոչ միայն հետամուտ էր իր հորեղբոր արտերի պահպանությանը, այլև աչք էր պահում գյուղի ճանապարհների վրա։ Ուշի-ուշով հետևում էր, թե ո՛վ է գալիս Բռնաշեն, ո՛րտեղից է գալիս և ինչ նպատակով։ Նա այն քրդերից էր, որ սերտ հարաբերության մեջ էր օսմանյան կեղեքիչների հետ և, իբրև մոլեռանդ մահմեդական, ատում էր խաչապաշտ ժողովուրդներին։

Երբ օսմանյան պաշտոնյաները գալիս էին Դաշտադեմ, Չատոն էր նրանց ուղեկցում կամ ցուցմունքներ տալիս այս կամ այն գյուղացու վրա։ Նա ուզած ժամանակ կարող էր ինքնակամ բաց անել այս կամ այն շինականի փակված դուռը և ներս մտնել որևէ գործիք վերցնելու կամ նրա լծկանը աշխատանքի տանելու համար։ Իսկ քուրդ ռայայի հետ Չատոն վարվում էր ցան-

կացածի պես։ Քուրդ հասարակ գյուղացին նրա կատարյալ ճորտն էր։

Ըստ Զատոյի, ուժը, իշխանությունը և բախտը մի քոլոզ էր, որ այսօր իր գլխին էր, վաղը մեկ ուրիշի։ Այդ քոլոզ կրողը պարտավոր էր տիրաբար վարվել շրջապատի հետ։

— Որքան աստղ կա երկնքում, այնքան մարդ կա երկրի վրա,— քարոզում էր Զատոն։— Պայծառ աստղերը հարուստների և տիրողների աստղերն են, իսկ խավար աստղերը՝ աղքատների և հպատակների։ Հայի աստղը խավար է, որովհետև նա հպատակ է օսմանցուն և քուրդ բեկերին։

Ախուպի Զատոն սուր հակամարտության մեջ էր Նասրի տան հետ։ Նա ատում էր Շեկո տան բոլոր քրդերին, այդ թվում և Ավեսի Հաջուն։ Զատոն աչք էր դրել իր ախոյանի մի քանի արտերի վրա, որ գտնվում էին Արինոքի ձորաբերանին՝ իր հողերին կից։ Մի քանի անգամ փորձ էր արել խլել դրանք, բայց վախենալով Շեկո տան կատաղի քրդերից՝ ետ էր կանգնել։ Հողերից բացի, նա աչք էր դրել Նասրի տան խաշների և արոտավայրերի վրա։ Ախուպի քուրդը ամենևին չէր հանդուրժում Հաջու և նրա եղբոր Ավեսի Սալիմի բարեկամական վերաբերմունքը խաչապաշտ ժողովուրդների հանդեպ։

Զատոն զբաղվում էր նաև բժշկությամբ։ Նա էր քաշում հիվանդ քրդերի ատամները։ Հիվանդի ատամը թելով կապում էր ընկուզի ծառից, իսկ ինքը գնում էր իբրև թե գործիքներ բերելու։ Մի շամփուր շիկացնելով ետևից թափով մոտեցնում էր հիվանդի հետույքին։ Վերջինս սարսափից գլուխը բնազդաբար արագությամբ ետ էր դարձնում։ Այդ հանկարծական ցնցումից հիվանդի ատամը դուրս էր թռչում բերանից։ Ահա այս եղանակով էր Զատոն կատարում իր բժշկությունը։

Շեկո քրդերից մեկի ատամը հանելու ժամանակ, հիվանդը մեռել էր, որի պատճառով թշնամությունն ավելի էր խորացել Նասրի և Ախուպի տան քրդերի միջև։

Այդ երկու քրդերի երկպառակության մեջ զգալի դեր էին խաղում նաև Զատոյի պառաված կանայք, որոնք թվով յոթ հոգի էին և նախանձով էին լցված Հաջու ավելի գեղեցիկ կանանց վերաբերմամբ։ Մասնավորապես նրանք նախանձում էին Հուրի Մալաքին, որը, օտարազգի լինելով, իր սիրունությամբ նսե-

մացրել էր Ախուպի տան խանումներին։ Նրանց ականջին հասել էր, որ Հուրին խմորի վրա գաղտնի խաչ էր քաշում։

— Այդ գյավուրին հարկավոր է քշել Արինոքից կամ խեղդել,— առաջարկել էին քրդուհիներից մի քանիսը։ Բայց արթուն և աչալուրջ էին Շեկո տան քրդերը։ Ամեն քայլափոխին նրանք զինված հսկում էին Ախուպի տան քրդերի և նրանց կանանց ոտնձգությունները։

Ունենալով այդքան շատ թշնամիներ, Ախուպի Զատոն, բնականաբար, ապրում էր մի տեսակ մշտնջենական տագնապի մեջ։ Ամեն րոպե ոսոխի դարանակալ գնդակը կարող էր խոցել նրան։ Այդ պատճառով էլ նա երեկոները իր դռան առաջ կրակ չէր վառում, ոչ էլ թույլ էր տալիս, որ հարևանները ճրագներ վառեն։ Մութի մեջ ծխամորճը վառելիս Զատոն հողե հատուկ կափարիչով ծածկում էր այն, որ Շեկո տան անցնող ու դարձող քրդերը չնկատեին իր կրակը և չսպանեին նրան հեռվից։

Քնելուց առաջ նա մի թաս շարբաթ էր խմում, լվանում էր ձեռները և մշակներից մեկին կանչելով, իր քոլոզը նրա հետ ուղարկում էր յոթից մեկի մոտ։ Ո՛ր կնոջ մոտ ուղարկեր, նրա մոտ էլ գնում էր պառկելու։

Ամբողջ Դաշտադեմում միայն Զատոյի տանը շաքար կար։ Շաքարի կոշտը նա պահում էր հատուկ տուփի մեջ։ Երբեմն կես գիշերով նա վեր էր կենում, բաց էր անում տուփը, լեզվի ծայրով լիզում էր շաքարի կողը և նորից շորի մեջ փաթաթելով դնում էր տեղը։ Եթե կինը արթուն էր լինում, թույլ էր տալիս, որ մեկ անգամ էլ նա լիզի։

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԱՏՎԱՁՈՐՈՒՄ

Այն ձորը, որ բաժանում էր Արինոքը Դաշտադեմից, կոչվում էր Արինոքի ձոր։ Դրա ջուրը գալիս էր Սև սարի աղբյուրներից և գնում խառնվում էր Բռնաշենի գետին։ Ձորի հյուսիսային մասը, որտեղից անտառն էր սկսվում, կոչվում էր Կատվաձոր։

Բռնաշենի հայ և քուրդ գյուղացիները իրենց տների վնասակար կատուներին այդտեղ էին նետում։ Անհիշելի ժամանակներից այնքան կատու էին գցել, որ նրանք բազմանալով տա-

ռածվել էին անտառի մեջ։ Ասում էին, որ այդ նետված կատուներից էլ գոյացել էր վայրի կատուների ցեղը Բոնաշենում։

Արինոք հասնելով, Ասատուրը իջևանեց իր եղբոր կնոջ՝ Ոսկեհատի տանը, որ գտնվում էր Ավեսի Հաջու մեծ արտի կողքին։

Թոնիրներ շինող էր Ոսկեհատը։ Ո՛ւր գնում էր՝ ակիշը ձեռքին էր կամ թևատակին։ Այդ մեկ տարվա մեջ նա մի քանի թոնիր էր շինել Արինոքում և նրա հարևան գյուղերում։ Մի թոնիր էլ շինել էր Ավեսի Հաջու տանը։ Այստեղ էլ նա առաջին անգամ հանդիպել էր Սալվարդին։ Աչքի տակով նկատել էր, որ Հուրի Մալաքը խմորի վրա խաչ էր քաշում։

— Աղջի, դու հա՞յ ես,— հարցրել էր նա, երբ նրանք առանձին էին մնացել։

— Հայ եմ, նանե, բայց քրդերը կարծում են, թե ես չերքեզ աղջիկ եմ,— պատասխանել էր Սալվարդը, զգուշությամբ նայելով դռանը։

Այնուհետև նրանք սկսել էին հանդիպել գյուղից դուրս։

Կատվաձորի մեջ մի աղբյուր կար, որտեղից Սալվարդը փոքրիկ կժով ջուր էր վերցնում իր ամուսնու համար։ Այդ աղբյուրը հռչակված էր իր պաղ ու անուշահամ ջրով, բայց գյուղից հեռու գտնվելու պատճառով, քչերն էին օգտվում դրանից։

Գրեթե ամեն երեկո Հուրի Մալաքը կուժն առած միայնակ գնում էր այնտեղ։ Ճանապարհին նա ոչ մի տղամարդու հետ չպիտի տեսնվեր, ոչ ոքի հետ չպիտի խոսեր։ Նասրի և Ախուպի տան հավերն ու աքաղաղները մինչև ուշ երեկո քուջուջ էին անում այդ ծառերի տակ։ Իրիկնապահին աղաների մշակները իջնում էին ձորը և նրանց ածած հավկիթները զամբյուղների մեջ լցնելով, տուն էին տանում։ Երբեմն էլ Ոսկեհատն էր գալիս հավկիթ ժողովելու։

Թեպետ Ավեսի Հաջին բարեկամաբար էր տրամադրված հայերի հանդեպ, այնուամենայնիվ Ասատուրը մեծ կասկածանքով էր վերաբերվում իր ընդունելության հարցին։ Ոսկեհատը վճռեց ծածուկ միջամուխ լինել այդ գործում։

Հետևյալ օրը, իրիկնապահին, նա գնաց Արինոքի ձորը հավկիթ ժողովելու։ Նրա նպատակն էր այնտեղ հանդիպել Սալվարդին և խնդրել նրան բարեխոսելու Խոդեդանի համար։ Իր սովորական ժամին Հուրին եկավ աղբյուրը ջրի։ Նա կուժն ուսից վայր

առնելով դրեց չոր կոկի տակ և լռիկ նստեց աղբյուրի քարին։ Ջրի հանդարտիկ կարկաչի հետ նրա շուրթերից ինքնաբերաբար վայր ընկան հին և ծանոթ երգի բառերը.

Պարզի՛ր, աղբյուր, պարզի՛ր, քեզնից ջուր տանեմ,
Պարզի՛ր, պարզի՛ր, բեկի տղին ջուր տանեմ։
Աղբյուր, գիտե՞ս քուրդը մեզի ի՛նչ կանե,
Կը կողոպտե, կը հալածե, կը սպանե։
Աչքս բացի, սուգ ու շիվան ես տեսա,
Նամարդ ազգին, օ՜հ, զոհ գնաց իմ փեսան։
Կար ժամանակ, որ մենք ազատ կապրեինք,
Մեր սեփական հայրենիքը ունեինք։
Աղբյուր, հիմա սուգ է պատեր մեր աշխարհ,
Ջուլո՜ւմ, զուլո՜ւմ, ջարդ ու սարսափ, սև խավա՜ր։
Դե շո՛ւտ պարզիր, բեկի տղին ջուր տանեմ,
Պարզի՛ր, պարզի՛ր, Խան-Մուրադին ջուր տանեմ։

Կուժը վաղուց էր լցվել, իսկ Սալվարդը շարունակում էր երգել աղբյուրի վրա կռացած՝ արցունքն աչքերին։ Նրա ականջների բլթակներից կախված ոսկեփայլ օղերը և պարանոցի ադամանդյա մանյակը ցոլանում էին ջրերի մեջ։ Սպիտակ դաստակի ոսկեհուռ ապարանջանի շողքը անդրադարձել էր նրա հրաշագեղ դեմքին։ Ջորը խաղաղ էր և զարմանալի ամայի։ Նույնիսկ վայրի կատուները, որոնց մլավոցը հաճախակի լսելի էր այդտեղ, պապանձվել էին այդ պահին։ Միայն մի կին էր գաղտագողի հեռուում Հուրի Մալաքին։ Այդ Ոսկեհատն էր, որ կողքի քարաժայռի ետևից, շունչը պահած, հափշտակությամբ ունկնդրում էր նրան։ Երբ Հուրին երգելն ավարտեց և կռացավ, որ կուժը վերցնի, գոգնոցը ձվերով լի նրան մոտեցավ Ոսկեհատը։

— Սալվա՛րդ։

Հուրին ցցնվեց։ Տեսնելով, որ իր կողքին կանգնած էր Ոսկեհատը, նա խաղաղվեց և ձեռքը կամաց ետ քաշեց կանթից։

— Էստեղ ի՞նչ ես անում, նանե,— հարցրեց նա՝ ոտքի կանգնելով և երկյուղածությամբ շուրջը նայելով։

— Հավկիթ եմ ժողովում, Սալվարդ։

— Դու իմ երգը լսեցի՞ր։

— Լսեցի։

— Ուրիշ ո՞վ լսեց։

— Ոչ ոք։ Էս ձորում մենակ ես ու դու ենք, Սալվարդ։ Մեկ

էլ երգիր, Հուրի։ Դու ո՞ր սարումն ես սովորել էդ երգը։ Ասա, ո՞ւմ աղջիկն ես դու։

— Ես հայ եմ, նանե, բայց թե ո՞ւմ աղջիկն եմ, ինքս էլ չգիտեմ։ Ես էս երգը սովորել եմ սարերի վրա, հեռո՜ւ, հեռո՜ւ սարերի վրա։ Բայց դու ոչինչ մի՛ հայտնիր դրա մասին։ Ես առջևից կերթամ, իսկ դու կամաց արի իմ ետևից, որ մեզ միասին չնկատեն,— պատվիրեց Հուրին և նորից կռացավ կուժը վերցնելու։

— Սալվա՜րդ,— անհամարձակ գոչեց Ոսկեհատը,— նրա թեվից թեթևակի քաշելով։

— Ի՞նչ կա, նանե։

— Քեզ մի խնդիր ունեմ, Սալվարդ։

— Ի՞նչ խնդիր է։

— Մոտկանից իմ տեգր Ասվատուրն է եկել։ Խոսիր աղա Հաջու հետ, որ ծառայության ընդունի նրան և թույլ տա Արինոքում ապրել։

— Սասունի կռիվներին մասնակցե՞լ է։

— Մասնակցել է։

— Մի քիչ դժվար է, բայց կխոսեմ։

— Ինչո՞ւ է դժվար։

— Ախուպի քրդերը հետապնդում են, թե ո՞վ է աշխատանքի անցնում Հաջու մոտ։ Չատոն մի քանի անգամ ասել է, թե նասրի տան քրդերը կապված են ռուսների հետ, օգնում են փախստական հայերին։

— Ասատուրը փախստական չէ, Սալվարդ, նրա տունը վառել են, դրա համար է Բռնաշեն եկել։

— Ինչո՞ւ չի փախել ֆիդայիների մոտ։

— Մեկ անգամ փախել է, բայց նորից ետ է եկել։

— Ինչո՞ւ։

— Որովհետև գիշերները քնի մեջ հարայ է կանչում։

— Երևի հայտնի շուն պահող է եղել։

— Մանկությունից շների հետ է մեծացել։ Իր սովորությունն է էդպես։

— Ուրեմն հարկավոր է օգնել նրան։

— Քու բախտն եմ, Սալվարդ,— թախանձեց Ոսկեհատը, մայրաբար փաղաքշելով նրա ուսը։

— Անպայման կխոսեմ, նանե,— ասաց Հուրին, սաստիկ կարեկցելով ազգակից պառավին։— Էնպես կանեմ, որ մի քանի ընկուզի ծառ տա նրան, տուն շինելու իրավունք տա։

— Մեր ուզածն էլ էդ է։ Մեղք է, լաո, մենք որ իրար չօգնենք, Զատոյի պես աղաները մեր ազգը կուտեն։

— Զատոն շուն է, ինչքան ուզում է, թող հաչի։ Ճիշտ է, նա կապված է օսմանցու մեծավորների հետ, բայց շան պես վախենում է շեկոներից։ Շեկոները որ ուզենան, մեկ օրվա մեջ նրա ցեղը կջնջեն աշխարհից,— ավելացրեց Սալվարդը և արագ կռացավ կուժը վերցնելու։

Նրանց ետևում կատվի մլավոց լսվեց։ Աղբյուրին մոտեցավ մի երկարապոչ բրդոտ կատու, որ առջևի ձախ ոտքից կաղում էր։

— Ինչքան շատ կատու կա էս ձորում, նանե, ես ուզղակի վախենում եմ մենակ էստեղ գալ,— նկատեց Սալվարդը և սափորը բարձրացնելով՝ դրեց ուսին։

— Ե՞րբ գանք,— հարցրեց Ոսկեհատը։

— Վաղը,— պատվիրեց Հուրին, և շտապեց դեպի տուն։

— Սուրբ Կարապետ ամպհովանի լինի վրադ, Սալվա՛րդ,— շշնջաց Ոսկեհատը նրա ետևից։

Մոռացված հավկիթներ կային խոտերի տակ։ Նա կռացավ հավաքեց դրանք և գոգնոցի մեջ ածելով դիմեց դեպի գյուղ։

ՆՈՐ ՏՈՒՆ

Մյուս օրը՝ թոնրի վառէջքին, Ասատուրը Ոսկեհատի հետ ներկայացավ Ավետի Հաջուն։

Աղան նոր էր վերադարձել սարից և հանգստանում էր իր դռան առաջ։ Երեք ջահել աղախիններ սպասարկում էին նրան։ Նրանցից մեկը մաքրում էր նրա բրդյա սպիտակ երկայն քոլոզը, իսկ երկուսը ոլորում էին գույնզգույն խաս փուշիներ։ Երբ առաջինն ավարտեց իր գործը, վերջինները մոտեցան և փուշիները քրդի քոլոզի շուրջը փաթաթեցին։ Նրանց գնալուց հետո տարբեր դռներից դուրս եկան երկու քուրդ մշակ։ Առաջինը մոտեցավ և մի ոսկեփող ծխամորճ երկարեց տիրոջը։ Երկրորդ մշակը, որ

ունելիով կրակ ուներ բռնած, առաջացավ և, չոքելով, կրակը դրեց ծխամորճի վրա։ Թանձր գորշագույն ծուխը սկսեց հորդել աղայի քթածակերից։

Խոդեդանը և Ոսկեհատը, որ մի կողմ կանգնած դիտում էին այդ արարողությունը, համարձակություն ունեցան մոտենալ նրան։

— Քանի՞ տարվա հովիվ ես, —հարցրեց Հաջին ուշադրությամբ զննելով երիտասարդ հային։

— Տասնութ տարվա։ Հինգ տարի էլ գառնարած եմ եղել, աղա։

— Ծնողներ ունե՞ս։

— Չունեմ,— պատասխանեց Ասատուրը։ Այդ խոսքի վրա Ոսկեհատը գոգնոցի ծայրը բարձրացնելով սրբեց ջրակալված աչքերը։

— Հայրս ու եղբայրս խեղդվել են Դիարբեքիրի ձյունների մեջ, իսկ մայրս Շաբաթ աղի թունդիրն ընկավ։

— Ինչո՞ւ եկար Մոտկանից։

— Աղան տունս վառեց։

Ոսկեհատը, որ արդեն իրազեկ էր դարձել Զորո-Դավթի տան հետ պատահած սրտաճմլիկ պատմությանը, չկարողացավ զսպել իր արտասուքը և սկսեց հոնքուր-հոնքուր լաց լինել։

— Ես քո տունը չեմ վառի, ֆլահ,— փոքր լռությունից հետո ասաց Հաջին։— Քանի որ դու Ոսկեհատի հետ ես եկել իմ դուռ, ես քեզ դատարկ չեմ դարձնի։ Ոսկեհատն ու իր տղան անցյալ տարի եկան Արինոք։ Ես նրանցից շատ գոհ եմ։

— Մենք էլ քեզնից ենք գոհ, աղա,— պատասխանեց Ոսկեհատը, կամենալով շահել քրդի բարեսրտությունը։

Այդ ժամանակ դռների մեջ երևաց Սալվարդը, որը գլխի լուռ շարժումով հասկացրեց կնոջը, թե ինքը ամուսնու հետ խոսել է և կարիք չկա անհանգստանալու։

— Վաղվանից ես քեզ թույլ կտամ, որ դու նոր տուն շինես Արինոքում և դառնաս ինձ հովիվ,— ասաց Հաջին։

— Շնորհակալ եմ, աղա,— ասաց Խոդեդանը։

— Բայց պայման եմ կապում,— շարունակեց քուրդը,— դու պետք է ընտանիք կազմես։ Քո կինը և երեխաները շաբաթական երկու օր պարտավոր են աշխատել իմ արտերում։ Կինդ պետք է

գարնանը և ամռանը քաղհանի իմ արտերը, անծեղներից ու ճրնճուղներից պաշտպանի իմ ցանքը։ Աշնանը նա պետք է գազպա քաշի ինձ համար, դդում շերտի, շաղգամ հորի, ձմռանը բուրդ գզի ու թել մանի։

— Համաձայն եմ, աղա։

— Դու կլինես իմ հովիվը, բայց, երբ կարիք զգացվի, պարտավոր ես սարից իջնել գյուղ իմ արտերը ջրելու և իմ հունձը արջերից պաշտպանելու համար։ Իսկ ձմռանը դու պետք է իմ տանիքների ձյունը թափես և իմ թավը (տերև) սարից բերես տուն։ Այդ բոլորի դիմաց ես պարտավոր եմ քո կյանքը պաշտպանել վտանգներից։ Քանի դու իմ տնտեսության մեջ ես, քո մազին դիպչող չի լինի։

— Իսկ վա՞րձը։

— Վարձ էլ կստանաս։ Բայց ամենամեծ վարձդ էն կլինի, որ ազատ ման կգաս քո պապերի հողի վրա։ Կխմես Յոթակնանի աղբյուրի ջուրը, կկթես սև մաքու կաթը, կքաղես Սև սարի գազպան և վայրի ճանճի մեղրը։ Արինոքի ձորում ինչքան ասես կարմիր ալուջ ու պղինձք կա։ Իսկ ընկույզն էնքան շատ է, որ մնում է ձյունի տակ։ Իրավունք ունես աշնանը և գարնանը գնաս, հավաքես, լցնես պարկի մեջ ու տանես Մշո դաշտ՝ ցորենի հետ փոխելու։ Հատկապես դրանցից հինգ խոշոր ծառ քեզ եմ հանձնում։ Վաղը կբարձրանա՞ս Խաչառաշ։

— Կբարձրանամ, աղա։

Ասատուրը կամենում էր հեռանալ, երբ քուրդն ասաց.

— Տեսնո՞ւմ ես էն կանաչ քարափը գյուղից վերև։

— Տեսնում եմ, աղա,— պատասխանեց Խոդեդանը դեպի հյուսիս-արևելք նայելով։

— Վաղվանից քեզ համար տուն շինիր էդ քարափի վրա։ Անտառից փայտ կտրիր, գերաններ բեր և տունդ շինիր։ Մինչև օթևան չունենաս, թույլ չեմ տա բարձրանաս Սև սար։ Այն հովիվը, որ իր առջևը տուն չունի, իսկ ետևը՝ շուն, իրավունք չունի հովիվ կոչվելու։

— Ճշմարիտ է, աղա,— ասաց Ասատուրը և, կրկին գլուխ տալով, Ոսկեհատի հետ հեռացավ։

— Լսի՛ր, հետը գնա և ընկուզի ծառերը ցույց տուր իրեն, կարգադրեց Հաջին մի քուրդ մշակի, որ աղայի ձին արոտը կա-

պած, ապատում էր նոր հրամանի։ Ծառան գլուխ տալով շտապեց նրանց ետևից։

Ավեսի Հաջու մատնանշած քարափը գտնվում էր գյուղից դուրս, Արինոքի ձորաբերանին։ Վայրը բարձրադիր էր և իր դիրքով իշխում էր շրջապատի վրա։ Մեծ, սրածայր ժայռեր կային այնտեղ, որոնց մոտից լսվում էր ձորամիջով անցնող գետակի խշշոցը և երևում էին Կատվաձորի ընկուզենիների կանաչ կատարները։

— Էս հինգ ծառերը քոնն են,— ասաց քուրդը և գետնից մի քանի քար վերցնելով վերևից նետեց նրանց վրա։ Ընդամենը նետեց հինգ քար՝ քրդերեն էս մեկ, էս երկու, էս երեք, էս չորս, էս հինգ հաշվելով։

Մի քանի մեծամարմին սև ագռավներ կռնչալով դուրս թռան տերևախիտ ճյուղերի միջից և փախան ձորն ի վեր։

— Իմացա՞ր որոնք են քու ծառերը,— հարցրեց քուրդը։

— Իմացա,— ասաց Խոդեդանը, ինքն էլ մեկ անգամ դրանք հայերեն բարձրաձայն հաշվելով և մատով ստուգելով վերևից։ Մեկ անգամ էլ Ոսկեհատը հաշվեց։

— Անուշ ընկույզ է։ Կճեպն էնքան բարակ է, որ երկու մատը սեղմելով կարող ես ջարդել։ Հիմա էլ որ իջնես ձորը, անցյալ տարվա ընկույզը տակը թափված է,— ավելացրեց մշակը։— Զմոռանամ ասել, որ մեկ հատ էլ սառը աղբյուր կա։

— Ո՞րտեղ։

— Ծառերի տակ։ Մեր հարս խանումը էդ աղբյուրից է ջուր տանում։

— Իսկ ինչո՞ւ է ձորը Կատվաձոր կոչվում։

— Որովհետև մեջը վայրի կատուներ կան,— բացատրեց քուրդը։

— Անունդ ի՞նչ է։

— Բախչո։

— Ռայա՞ ես,— հարցրեց Աստատուրը,— նկատելով քրդի հասարակ հագնված լինելը և խոսակցության պարզ ձևը։

— Մշակություն եմ անում աղա Հաջու մոտ։

— Օրինակ, ի՞նչ ես անում։

— Մեկ-մեկ կրակ եմ դնում նրա ծխամորճին։ Ձին հեծնելիս՝ սանձն եմ բռնում, ասպանդակներն եմ պահում։ Հավերը ձորի մեջ հավկիթ ածելիս, գալիս հավաքում տուն եմ տանում։

Նասրի տան ավելորդ կատուներն եմ ձորը գցում։ Անելիք շատ կա։

Երբ մշակը հեռացավ, Խոդեդանը Ոսկեհատի հետ կանգնած՝ աչք ածեց շրջապատին։ Իսկապես այդ վայրի դիրքը շատ գեղեցիկ էր, առողջարար և հաճելի՝ բնակության համար։ Քարափի վրա և ձորում ամեն տեսակ ծաղկունք ու բանջար կարելի էր գտնել։

Արևը բավական խոնարհվել էր։ Սրածայր ժայռերի ստվերները երկարել էին ներքև՝ լուծվելով ծառերի արձակած շվաքների մեջ։ Նրանք իջան ձորը, տեսան աղբյուրը, ջուր խմեցին, լվացվեցին և բարձրանալով նորից կանգնեցին քարափի վրա։

— Չէ, լա՛վ տեղ է։

— Արևոտ, սիրուն տեղ է, լաո։ Ջուր կա, աղբյուր կա։ Ցախը մոտիկ է։ Էն ձորի պռկին էլ Օնեի տունն է, էն էլ իր տանձի ծառերն են։

— Իսկ էս ճամփեն ո՞ւր է տանում։

— Սուրբ Աղբերիկ,— պատասխանեց Ոսկեհատը, երեսը աննկատելի խաչակնքելով։

Հետևյալ առավոտ Ասատուրը սկսեց իր նոր տունը շինել։ Նա ընտրել էր շինության վայրը և ցցերն էր ամրացնում բարձունքի վրա, երբ նրան մոտեցավ մի երիտասարդ ատաղձագործ, գործիքներով լի տոպրակը ուսը գցած։ Եկվորը բարև տվեց և պայուսակը թևից հանելով նետեց գետին։

— Տո՞ւն ես ուզում շինել։

— Ուզում եմ,— ասաց Խոդեդանը, քրտինքը սրբելով։— Անունդ ի՞նչ է։

— Հակոբ։

— Բարով եկար, ուստա Հակոբ։ Ազա՞տ ես։

— Ազատ եմ։

— Ուրեմն շինե՞նք։

— Շինե՛նք,— ձեռքերը ոգևորությամբ իրար շփելով պատասխանեց վարպետը։

Հակոբը դաշտադեմցի էր։ Նկատելով, որ տուն շինող կա, գործիքները վերցնելով, առանց հրավերի, շտապել էր այդտեղ։

— Հազարաշեն ես ուզում, թե՞ հասարակ։

— Հասարակ։ Հազարաշենը հարուստների բանն է,— նկատեց հովիվը։

— Լավ, էնպիսի մի տուն շինեմ, որ հազարաշենից բանով պակաս չլինի, ու դու շատ գոհ մնաս։

— Քանի՞ դերան կգնա,— հարցրեց Աստուրը։

— Մի տաս-տասնհինգ հատ։ Էս ձորից մի քիչ վերև լավ կաղնի ծառեր կան, էնտեղից կբերենք։ Մի քանի հատ էլ բարդու ծառ հարկավոր կլինի։

Հակոբը ամուսնացել էր դրանից մի քանի տարի առաջ, և ամուսնացել էր շատ վիպական ձևով։ Նա սիրահարվել էր Մշո դաշտի Ծղակ գյուղի քահանա Տեր-Ավետիսի աղջկան՝ Ծաղկանուշին։ Հայրը մերժել էր աղջկան տալ, պատճառաբանելով, թե տղան աղքատ է, հարստություն չունի։ Հակոբը որոշում է աղջկան փախցնել։ Հաջու եղբայր Ավետի Սալիմը օգնում է նրան։ Սալիմը Հակոբին տալիս է իր ձին և իր երկու զինված տղաներին՝ աղջկա փախուստը կազմակերպելու համար։ Հանդիպումը տեղի է ունենում գյուղի աղբյուրի մոտ, իրիկվա հովին։

— Ես եկել եմ քեզ փախցնելու, Ջիշո,— ասում է երիտասարդը՝ ձիուց վայր թռչելով։

— Գնամ շորերս փոխեմ, հետո փախցրու,— պատասխանում է աղջիկը, ակնարկելով իր հագի հասարակ զգեստը։

— Չէ՞, Ջիշո ղուրբան, քու խաս ու ղումաշ շորերը ինձ հարկավոր չեն, դու ես ինձ հարկավոր,— ասում է Հակոբը և Ծաղկանուշին գրկելով դնում է թամբին ու փախցնում Դաշտադեմ։ Ձին ամբողջ ճանապարհն անցնում է քառատրոփ վազքով։

Հենց առաջին օրը Հակոբը Խոդեդանին պատմեց, թե ի՛նչպես էր փախցրել սիրած աղջկան։

— Իսկ տերտերը քեզ դատի չտվե՞ց։

— Ի՞նչ դատ, աղջիկը ինքը համաձայն էր։ Սուտ բան է, եթե աղջիկը համաձայն չլինի, նրան ոչ ոք չի կարող ձիու վրա դնել, Աստվատուր ախպեր։

— Ուրեմն հաջողությա՞մբ փախցրիր։

— Փախցրի՞, լավ փախցրի՞, բայց ի՛նչ արած, որ հայրը անիծել է աղջկան,— հառաչեց վարպետը։

— Ինչպե՞ս։

— «Քանի որ դու փախար իմ չուզած տղայի հետ, թող

ցրեմն, անսերունդ մնաս ու քու երդիկից ծուխ չբարձրանա»,— ասել է Տեր-Ավետիսը աղջկա ետևից։ Լսողներ են եղել։

— Բանի տեղ մի՛ դիր էդ անեծքը, կարևորը ձեր երկուսի սերն է,— խրախուսեց մոտկանցին։

Ստաղձագործ Հակոբը թեև երիտասարդ էր, բայց փորձված մարդ էր երևում և համակրելի զրուցակից։ Բացի իր ամուսնության պատմությունը անելուց, նա նույն օրը Խոդեդանին, իբրև նորեկի, պատմեց թե Հայաստանի այս կամ այն շրջանի ժողովուրդը ի՛նչ տեսակ բնություն ունի։

— Ալաշկերտցին որ պողպատե կամուրջ լինի՝ վրայով չանցնես,— զգուշացրեց նա։— Մշեցու հետ տուն շինիր և սեղան նստիր։ Սասունցու հետ ճանապարհ գնա, նա քեզ ապահով կբերի կհասցնի տուն։ Բիթլիսցի տեսնելիս՝ ճանապարհդ փոխիր։ Բուլանուխցոց փաստաբան բռնիր, քանի մի հատ սուտ կա՝ նրանք ճիշտ չեն խոսի։ Խնուսցոց հետ ոչխար փախցնելու գնա, հաջողություն կունենաս և այլն։

Աշխատանքը ավարտվում էր։

Ասատուրը և ատաղձագործ Հակոբը ապառաժ քարերից պատեր կանգնեցրին, անտառից գերաններ բերեցին և Արինոքի այդ բարձունքի վրա պատրաստեցին մի փոքրիկ հազարաշեն խրճիթ, թմբաձև տանիքով, որ հեռվից ծիծեռնակի բույնի էր նմանվում։ Շինությունն ավարտվեց մի բոլորակ երդիկով, որ բացվում ու փակվում էր ներսից՝ պարանի օգնությամբ։

Վերջին օրը դաշտադեմցին դուռը հագցնելով շեմքի վրա՝ ասաց.

— Բարի վայելում, Ասվատուր ախպեր, բախտավոր ապրես։ Ինչ որ արեցի՝ օգնության կարգով արեցի։ Հարուստ չես, որ քեզանից վարձատրություն առնեմ։ Ոսկեհատը էս մեկ տարվա մեջ հինգ թոնիր է շինել իմ ազգականների տներում։ Էս աշխատանքն էլ նրա տեղը կհաշվեմ։ Այս ասելով, ուստա Հակոբը հավաքեց գործիքները, պայուսակը ուսը գցեց և մնաս բարով ասելով՝ հեռացավ։

Նույն օրը Ոսկեհատը Խոդեդանի նորաշեն խրճիթի մեջտեղը մի սիրուն թոնիր շինեց։ Բոլորակ երդիկից արևի շողքն ընկավ թոնրակին։ Երբ տնակը բոլորովին պատրաստ էր, նրա քիվերի տակ դրսի կողմից բույն դրեցին երկու ծիծեռնակ և սկսեցին

աշխույժ ճովողությունով ելոմուտ անել։ Ասատուրն այդ բանը համարեց բախտավորության նշան և շատ ուրախացավ, որ հեռացել էր Մոտկանից։

Բոնաշենում նրա համար սկսվեց բոլորովին նոր կյանք։

Յոթերորդ օրվա լուսաբացին Խոդեդանը, իր նոր տնակի պահպանությունը ապապրելով Ոսկեհատին, ձեռնափայտը վերցնելով, ճանապարհ ընկավ դեպի լեռներ։

ՀԱՐԵՎԱՆԻ ՇԵՄՔԻՆ

Թեպետ Ասատուրի տունը շինված էր Արինոքում, բայց տարածությամբ նա ավելի մոտ էր գտնվում Դաշտադեմին։ Այնքան մոտիկ էր, որ դռանը կանգնած և փոքր ինչ բարձրաձայն խոսելով, նոր բնակիչը կարող էր հեշտությամբ զրուցել ձորի հակառակ եզրին ապրող հարևանների հետ։

Առաջին հարևանը Օնեն էր։

Օնեի կամ Հովհաննեսի տունը գտնվում էր Խոդեդանի նորաշեն տան դիմաց։ Նրա դռան առաջ երեք բարձրահասակ տանձենի կար, որոնց տանձերի մեծ մասը թափվում էր ձորը։ Հին էին այդ տանձի ծառերը և ճյուղակոտոր։ Մեջտեղի տանձենին դեպի ետ էր կռացած, իսկ կողքի ծառերը թեքված էին անդունդի վրա։

Երբ Ասատուրը անցնում էր Օնեի ծառերի տակով, որ Սև սար գնա, տեսավ թե ի՛նչպես սարյակներից մեկը, մի սպիտակ օղակաձև տաշեղ կտուցի մեջ առած, թռչում էր դեպի անտառ։ Նրան հետևում էր երկրորդ սարյակը՝ դարձյալ մի տաշեղ բերանին։ Դրանք անտառի հավքերն էին, որ վաղ արթնացած, նրա տան շուրջը թափված տաշեղները տանելով նորոգում էին իրենց հին կացարանները, կամ նոր բներ էին շինում իրենց համար։ Խոդեդանը ժպտաց, մի հաճելի թեթևություն զգաց իր մեջ և, ձեռքը մեկնելով աջակողմյան տանձենուն՝ կանգ առավ։

Նա գտնվում էր յուր առաջին հարևանի շեմքին։

Միջահասակ, լիքը մարդ էր Օնեն։ Բեղերն այնքան երկայն էին, որ կապում էր վզի ետև։ Ուներ հինգ տղա, որոնք զբաղվում էին հողագործությամբ, իսկ ինքը հովիվ էր սարում։

Օնեի տան դիրքն ավելի բարձր էր ու քարքարոտ։ Այնտեղից երևում էր Կատվաձորի աղբյուրը, որ կարկաչելով գնում խառնվում էր գետակի փրփրոտ ալյակներին։ Տան գլխավոր մուտքը նայում էր Արինոքի վրա։ Պատի տակ ընկած էր մի ծանրաշարժ արոր իր ամբողջական լծասարքով։ Ցվիքի (տան կտուրի դուրս ընկած մասը) տակ, նորքենու ոլորած շիվերով կախված էր կավակուռ խնոցին։ Մի առողջակազմ հաղթանդամ գեղջկուհի, թևերը մինչև արմունկները քշտած, հարում էր իրենց խնոցին, որի միջից լսվում էր սառը թանի ուժգին ճղփոցը խնոցու պատերի վրա։

Այդ Քիշոն էր, Օնեի կինը։

Աստատուրը իր հարևանին չէր ճանաչում, բայց նրա անունը լսել էր։ Իսկ Քիշոյին տեսել էր միայն հեռվից։ Շինարարության ամբողջ ընթացքում նա նկատել էր, թե ի՛նչպես ամեն առավոտ այդ հաղթահասակ ժրաջան գեղջկուհին ցվիքի տակ կանգնած հարում էր խնոցին։

Քիշոն էր առաջին կինը, որ Ծաղկանուշի և Ոսկեհատի միջոցով մի քանի անգամ ամանով կերակուր էր ուղարկել իր նոր հարևանին, անկեղծորեն ցանկանալով, որ Մոտկանից եկած իր անտուն հայրենակիցը շուտով մի ապաստարան ունենա այդքան զրկանքներից ու անիրավություններից հետո։

Օնեի բակում կանգնած նայում էր Խոդեդանը, երբ նրա ականջին թնդաց մի հաղթական ծուղրուղու, այնքան բարձրագոչ, որ նա մեջքով թեքվեց դեպի ձորը, ամուր բռնելով տանձենու ճյուղից։ Այդ Օնեի կարմրակատար աքաղաղն էր, որ իր վերջին շունչից կանչով ազդարարում էր արևածագը։ Նա կանգնել էր ձորի եզրին, մի բարձրացից կողովի վրա և, թևերը ուղիղ նրա երեսին թափահարելով, ամբողջ կոկորդով հնչեցնում էր լուսաբացի շեփորը, կարծես կամենալով ասել. «Բարի եկար Բռնաշեն, Արինոքի նոր բնակիչ, սրանից հետո դու իմ կանչով պիտի արթնանաս»։

Մութը ճեղքվեց, և արեգակի հորդաբուխ լույսը Սև լեռան վրայով թափվեց Բռնաշեն՝ վարդագույն ներկելով Օնեի տանձի ծառերը, Աստատուրի դեմքը և հաղթական աքաղաղին, որ մի խումբ հավերի հետ թռավ դեպի ձորը, ետևից հրեղեն փետուրներ արձակելով։

Հանկարծ մի սպիտակ գրկաչափ մշուշ Օնեի տանիքի վրայով գլորվեց բակը և, Քիշոյի խնոցուն քսվելով, սպիտակ ուլի պես ցատկեց ձորի մեջ։ Նրան հետևեց մի երկրորդ մշուշ, շառագունված արևի հրաշափայլ լույսով։

Խոդեդանը նայեց վերև։ Անտառի վրայով մերթ այստեղ, մերթ այնտեղ գլորվում էին սպիտակ գեղեցիկ մշուշներ։ Նրանք ճերմակ շղարշների պես փաթաթվում էին ծառերի կատարներին և ներքև սահելով ցնդում էին հանկարծակի։ Նորից էին գոյանում և նորից գլորվելով՝ տեսիլների պես չքանում էին։

Արինոքի նոր բնակիչը առաջին անգամն էր դիտում այդպիսի զարմանալի տեսարան արևածագի դեմ։

— Աստղիկը լողանում է, երևի նորից մարդ է գնացել նրան տեսնելու,— լսվեց մի կանացի ձայն բակի միջից։ Այդ Քիշոն էր, որ ձեռքերը գոգնոցով սրբելով ընդառաջ էր ելնում սար գնացող իր նոր հարևանին։

— Ո՞րտեղ է լողանում։

— Սիմ լեռան ետև։

— Բռնաշենից մա՞րդ է գնում նրան տեսնելու։

— Բոլոր ջահելներն էլ գնում են։ Անցյալ տարի մեր Օնեն գնաց։ Ատաղձագործ Հակոբը մինչև ամուսնանալը հինգ անգամ գնացել է։

— Երբ Աստղիկն իմանում է, որ անտառի ծմակներից իրեն մարդիկ են նայում,— շարունակեց Քիշոն,— նա ջրի փրփուրները գունդ-գունդ շպրտում է նրանց երեսին։ Էդ փրփուրներն են, որ Սև սարի վրայով գլորվելով հասնում են մինչև Բռնաշեն։ Մի մասն էլ Մառնիկա սարով թափվում է Մշո դաշտ։

Ասատուրը տակավին ուշքի չէր եկել այդ գեղեցիկ պատկերից, երբ նկատեց, թե ի՛նչպես մի ահագին տղամարդ մի մեծ պարկ շալակած, արագ քայլերով մոտենում էր Կատվաձորին։ Նրա բեռը անվերջ շարժվում էր։ Շալակտարի ետևից վազում էին մի խումբ երեխաներ, բարձրաձայն գոչելով.

— Մի պարկդ բաց արա, տեսնենք ի՞նչ կա մեջը, Արծիվ քեռի։

— Պնտխցի Մանուկի կատուներն են, բերել եմ, որ գցեմ Կատվաձոր,— ասաց նա, շալակը ձորի պռկին իջեցնելով։

— Էդ կատուները մեզ տուր, քեռի, մի՛ գցիր Կատվաձոր,— աղաղակեցին մանուկները շրջապատելով նրան։

— Սրանք պահելու կատուներ չեն, ճժեր, սրանք գիշերով հորթ են կերել,— ասաց Արծիվ քեռին, և պարկը բաց արավ։

Պարկի մեջ դրված էին հինգ խոշոր կատուներ, ամեն մեկը մի ուլի չափ։ Քեռին հանեց առաջին կատվին, նրա մազոտ պոչից բռնելով թափահարեց օդի մեջ և շպրտեց ցած։ Այդ ձևով անդունդ գլորվեցին երկրորդ և երրորդ կատուները։

— Իսկ էս մեկը բոռո կատու է, խեղդել է կատվի մանր ձագերին,— ասաց նա պարկից դուրս քաշելով մի որձ, ծերացած չար կատու։

— Դրան էլ գցիր, —գոչեցին մանուկները, ձորաբերանին կռանալով։ Արծիվ քեռին բթնխեղդ արավ նրան և, բարձրացնելով օդի մեջ, շպրտեց անդունդ։ Հերթը հասավ հինգերորդ կատվին, որ պլշած, վախեցած աչքերով նայում էր Արծիվ քեռուն և պոչը շարժելով նռռում էր։

— Իսկ էս սև կատուն շուտ է տվել Պնտխցի Մանովի եղամանը։

— Ե՞ղն իս կերի, կնռռաս, նրռ ու զրխո՞մ,— յուրովի, բարկացած ձայնով գոչեց Արծիվ քեռին և նրա գլխին զարկելով, գլորեց ձորը։

Երբ պարկը դատարկվեց, քեռին թափ տվեց շորերը և մանուկներին դառնալով՝ գոչեց.

— Ճժեր, մկա կրակ վառեք, որ խարկվեմ։

Մանուկները, որ, ինչպես երևում էր, ծանոթ էին Արծիվ քեռու սովորությանը, անմիջապես դես ու դեն վազելով մի քանի գիրկ չորացած ցախ ու խռիվ հավաքեցին և պատրաստեցին մի մեծ բոց։ Հսկան հանեց իր անթև աբան և սկսեց մերկ իրանը շուռ ու մուռ տալ խարույկի դեմ՝ մերթ աջ թիկունքը դարձնելով կրակին, մերթ ձախ թիկունքը։

Ամեն անգամ, երբ նա իր ածդահա մարմինը ոլորում էր բոցերի վրա, թևատակով երկար նայում էր Կատվաձորի աղբյուրին, կարծես թե այդ աղբյուրի մոտ ինչ-որ մեկին էր որոնում։ Վերջին անգամ նա իր խանձված կուրծքը դեմ տվեց կրակին, աչքը երկար պահելով Ավեսի Հաջու ապարանքի կողմը և, մի խոր հառաչանք արձակելով, թևով աննկատելի սրբեց աչքերը։ Ապա

հագավ իր փոստը և, պարկը գետնից վերցնելով, ծանր քայլերով հեռացավ։

— Էդ ո՞ւր կերթաս, Արծիվ քեռի,— բղավեցին մանուկները նրա ետևից։

— Սուրբ Վանդեմիր։ Գնամ վանքի կատուներին բերեմ ձորը գցեմ։

Խոդեդանը, որ այդ ամբողջ ժամանակ կանգնած էր իր առաջին հարևանի շեմքին, թևը նրա տանձի ծառին հենած, կարծես երազանքի մեջ լիներ։

— Ո՞վ է,— հարցրեց նա, ակնարկելով այդ տարօրինակ օտարականին, որի ոտնաձայնը լսվում էր հեռվից։

— Ես էլ չգիտեմ, թե ո՛վ է,— պատասխանեց Քիշոն։— Վերջերս է էդ մարդը երևացել մեր կողմերում։ Գյուղերի անտիրական, վնասակար կատուներին է բերում գցում խորխորատ։

Նորից լսվեց ուժգին ճղփոցը խնոցու պատերին, իսկ վարդագույն մշուշները շարունակում էին գլորվել անտառի վրայով։

Քիշոն մի ման պաղ թան ձեռքին վերադարձավ հյուրի մոտ։

Խոդեդանը խոր շունչ առավ այդ զարմանալի իրական ու հեքիաթային արևածագի դեմ և գավը սեղմեց շուրթերին։ Նա մի հանգով խմեց այդ լեռնական կազդուրիչ ըմպելին, ձեռքի ափով բավականությամբ շփեց սև ընչացքների թրջված ծայրերը և ճակատը ուղղեց դեպի Սև սար։

— Եղբայր Ասվատո՞ւր,— նրա ետևից ամոթխածությամբ ձայնեց Քիշոն։

Խոդեդանը ետ դարձավ։

— Մեր Օնեն հովիվ է սարում։ Մեջքից խեղճ է, մեկ-մեկ ծածկեք նրան, որ գիշերները չմրսի։

ՍԵՎ ՍԱՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Սև սարը կազմում է հայկական Տավրոսի լեռնաշղթայի մի թևը։ Նա սկսվում է Մեղրագետի ակունքներից և հասնում է մինչև Քանասար՝ Մուշ քաղաքի մոտ։ Այդ լեռը, որ Սև է կոչվում իր մթին անտառների համար, հայտնի էր նաև Բռնաշենի կամ Խուլթա սար անունով։ Քրդերը նրան Խաչառաշ էին ասում։

Այնտեղ, ուր վերջանում է Սև սարը և սկսվում է Մշո դաշտը, լեռան ապառաժոտ կողի վրա ցցված է մի ահռելի ժայռ, որ կոչվում է Դավթի քար։ Այդ քարի մոտից սքանչելի տեսարան է բացվում դեպի Մշո դաշտը։ Երևում է Մեղրագետի հովիտը՝ մեծատարած կապույտ երկնքով։

Ավանդությունը պատմում է, որ երբ Դավիթը հովիվ է եղել, լեռան լանջից մի հսկա քարաժայռ պոկվելով գլորվել է դեպի հոտը։ Հովիվ հսկան սարն ի վեր վազելով, իր աջ բազուկը դեմ է տվել շարժվող ժայռին և կասեցրել է նրա մոլեգին ընթացքը՝ փրկելով խաշներին ու կթվոր կանանց։ Ուժգին հարվածից քարը մխրճվել է գետնի մեջ և կանգ առել։ Բնակիչները պատմում են, որ մինչև այսօր էլ Դավթի ձեռքի դրոշմը նշմարվում է այդ ապառաժի վրա։ Երևում են նրա հինգ մատների տեղերը ակոսների պես, որոնցով ձնհալին և անձրևների ժամանակ ջուր է հոսում։

Քարաժայռն այնքան բարձր է, որ առավոտյան կողմ նրա թանձր, լեռնային ջրի պես պաղ ստվերը պառկում էր անտառի վրա, իսկ երեկոյան պահերին, աստիճանաբար երկարելով, իջնում էր մինչև լեռան ստորոտը, նույնիսկ մի քանի մարդահասակ տարածվելով դաշտի մեջ։

Դավթի ժայռը հանգրվան էր այդտեղով անցնող ու դարձող բոլոր ուղևորների համար։ Սիրելի էր մանավանդ նա դաշտեցի բանջարքաղ աղջիկների համար, որոնք խմբվելով նրա վրա, հյուսում էին իրենց ժողոված բանջարները և երգելով վայր էին իջնում սարից։

Սև լեռան մյուս նշանավոր վայրը, որ մոտ էր Դավթի քարին, կոչվում էր Իրիցանք։ Դա Արինոքի և Դաշտադեմի հովիվների բնակատեղն էր, նրանց գիշերային հանգստավայրը։ Այդ անունը դարձյալ առնչվում էր ավանդության հետ։ Իբրև թե մեկ անգամ Դավիթը անտառում մրսելով, մի արևոտ տեղ է փնտրում տաքանալու համար։ Հանդիպելով մի արևկող բացատի, բացագանչում է. «Էստեղ տաք է, հորեղբայր, իրիցանք» (այսինքն վառվեցինք)։ Այն օրվանից այդ վայրը կոչվել է Իրիցանք։

Իրիցանքում կար Յոթակնանի մի աղբյուր, որի ջուրը կանաչ ձորակով գնում թափվում էր Արինոքի ձորը։ Յոթակնանի աղբյուրի մոտ կանգնած էր մի հաստաբուն կաղնի, որի լայն փչակի մեջ անձրևների ժամանակ պատսպարվում էին սարի հովիվնե-

ը։ Պատմում էին, որ այդ ծեր կաղնին երկու հազար տարեկան էր, և նրա փչակը եղել էր գառնարած Դավթի սիրած վայրերից մեկը։

Կաղնու վրա բնակություն էր հաստատել մի զարմանալի ջանասեր փայտփորիկ, որ ամռան գիշերներին սովորություն էր դարձրել իր ուրագաձև կտուցով համաչափ հարվածել ծառի բնին։ Նա իր երկայն սրածայր լեզվով այնտեղից հանում էր զանազան միջատներ և ուտում։ Սև սարի բնակիչներից ոչ ոք տեսած չկար նրան, թեև այդ տարօրինակ թռչունը ամբողջ ժամանակ լինում էր ծառի վրա։ Հենց որ փայտփորիկը սկսում էր հարվածել դարավոր կաղնուն, լեռնականները իրար հետևից քուն էին մտնում խարույկի առաջ։

Լուսնյակ գիշեր էր։

Յոթակնանի աղբյուրի մոտ, մի մեծ կրակի առաջ, նստած էին երեք հովիվ։ Խարույկի բոցերը ծառանում էին մինչև աստղերը։ Նրանցից պոկվող խոշոր կարմիր կայծերը փայլ արձակելով ընկնում էին աղբյուրի ջրերի վրա և հանգչում։

Հովիվներից մեկը Օնեն էր, մի մարմնեղ լեռնաբնակ՝ մուգ-կարմիր անդրավարտիքով և մորթե գդակով։ Նրա բեղը կապված էր վզի ետև, իսկ մեջքին, աբայի տակից բրդյա մի թանձր շալ էր փաթաթված։ Նա նստած էր խարույկի մեջ վառվող հաստ ծայրով մի գերանի վրա և, գլուխը կախած, խորին խաղաղության մեջ ունկնդրում էր մի սրտակեղեք երգ։ Երգողը լայնաճակատ, սևահոն, թխաթույր աչքերով մի մարդ էր, որ Դարավոր կաղնու բնին հենված և գլուխը ձեռքի ափերի մեջ առած՝ հուզված օրորվում էր երգի ազդեցության տակ։ Նա իր ձեռքի ափերը երբեմն դնում էր ականջների վրա, փոքր ինչ կորելով դրանք, որ արձագանքը թափ տա երգին,— և հինգ անգամ թառ՝ւ, թառ՝ւ էր ասում, վերջին անգամ այն երկարացնելով և աստիճանաբար մարելով իր սրտի խորքում։ Ապա վերստին սկսում էր երգել ավելի հուզված և ավելի ոգեբուխ, իր քաղցրաձայն խաղով հմայելով համակ շրջապատը։ Նրա երգի հնչյունները գնում խառնվում էին Յոթակնանի աղբյուրի խոխոջների հետ, դիպչում էին կրակի խոշոր կայծերին և, նրանց հետ ճախրելով, մարում էին խաղաղության մեջ։

Դողդոջուն լորենիները, բացատի աջ ու ձախ կողմերում շար-

ված, հիացքից սեղմվում էին սիրատոչոր կաղամախիներին և հազարավոր ականջներով փախցնում էին լեռնական երգչի լուսաթրթիռ դաշնակները՝ իրենց ետևում կանգնած տարփավոր կաղնիների համար, որոնց լանջերը մերթ խավարում, մերթ լուսավորվում էին կրակի փայլից։

Երրորդ անձը, որ նստած էր կրակի մոտ և ունկնդրում էր խանդավառ երգչին, տասնութամյա մի պատանի էր, որի բոլորակ երեսը նոր էր ծածկվել աղվամազով։ Պատանին մեջքը կրակին տված և ձախ բազուկը նեցուկ արած գլխին, մտասույզ նայում էր լիալուսնին։ Նա հագել էր այծենուց պատրաստված ելակ, որի երկայն մազերը կրակից տաքանալով՝ ախորժելի ջերմություն էին հաղորդում իր մեջքին։

— Հեղ՛մ լե երգիր, Տոնե,— ասաց Օնեն, վառվող գերանի ծայրը խարույկի մեջ հրելով։

— Էսօր հերիք է, վաղը կերգեմ, վաղը նոր հովիվ է գալիս Սև սար։

— Ո՞վ է,— հետաքրքրվեց Օնեն։

— Խոդեդանը։

— Իմ հողբե՞րն է գալիս,— բացագանչեց լուսնին նայող երիտասարդը՝ ոտքի կանգնելով։

Մոտկանցի հովվի անունը վաղուց հռչակված էր Սև սարի բնակիչների մոտ։ Պատմում էին, որ նա մարդկային բարձր առաքինություններով օժտված մի տղամարդ էր՝ թշնամի՛ ամեն կարգի անարդարության և անհավասարության։

Պատանի լեռնականը, որի անունը Ստեփան էր, ընկավ մտածությունների մեջ։ Ինչո՞ւ պետք է իր հորեղբայրը քոչած լիներ Մոտկանից։ Չէ՞ որ նա հովվություն էր անում Շենի հարուստ քրդերի մոտ։ Երևի մի վատ բան էր պատահել։

— Դու ո՞րտեղից իմացար, որ գալիս է,— հարցրեց Ստեփանը։

— Վանքի քահանան ասաց։— Նոր տուն է շինել Արինոքի ձորաբերանին և ճանապարհ է ընկել դեպի Իրիցանք։

Սև սարի հովիվները ամիսներով մարդու երես չէին տեսնում։ Այդ էր պատճառը, որ երբ որևէ հյուր էր գալիս, սիրով ընդունում էին և նրա պատվին ոչխար էին մորթում։

— Վաղը Աստուրի պատվին իմ ոչխարից մի շիշակ մորթիր, Ստեփան,— ասաց Տոնեն։

— Իսկ օղին ո՞րտեղից ճարենք,— հարցրեց Օնեն՝ աբայի ծայրերը հավաքելով մեջքին փաթաթված շալի վրա։

— Վանքից կբերեմ,— լսվեց Տոնեի պատասխանը։

Ստեփանը շների հաչ առնելով՝ գնաց դեպի ոչխարների մակաղատեղին։ Նա ցածրացավ դեպի աղլեզները։ Սեղանաձև հսկա քարերը, աղի բարակ շերտով պատած, փայլում էին լուսնի տակ։ Հովիվներն արդեն քնած էին, երբ նա ետ եկավ։ Ծառի վրա գործի էր անցել փայտփորիկը։ Ուրագի հարվածների պես հատու լսվում էին նրա համաչափ զարկերը հաստաբուն կաղնու վրա. թա՛կ, թա՛կ, թա՛կ։

Նա մոտեցավ Յոթակնանի աղբյուրին։ Երկու բարձրասրունք եղջերու, լուսնի շողերի տակ պարանոցները երկարած, ջուր էին խմում։ Երբ նրանք հեռացան, Ստեփանը կռացավ և աղբյուրից ջուր խմեց։ Ապա կանգնեց և նայեց Մարութա լեռան սպիտակափառ գագաթին։ Սասունը քնած էր։ Քնած էին Անդոկը, Կեպինը և Ծովասարը։ Վերադառնալով գլուխը դրեց Օնեի ոտքերի մոտ և ամբողջ հասակով տարածվեց կրակի առաջ։

Նա նույնպես քուն մտավ։

ԽՈՐՈՎԱԾԻ ԱՎԵԼՈՐԴ ՊԱՏԱՌԸ

Արևածագին Տոնեն ուղևորվեց ս. Աղբերիկի վանքը օղի բերելու։ Նա մի քանի կապոց սունկ էր տարել վարդապետների համար։ Նույն օրը երեկոյան Օնեն և Ստեփանը բորբոքեցին մի հրսկայական խարույկ, որի բոցերը հասնում էին մինչև երկինք։

Գարնանային անուշ գիշեր էր։ Լուսինը կախված էր Սև սարի վրա։

Խոդեդանը, որ արդեն մոտենում էր Իրիցանքին և վաղուց զրկված էր հովվությունից, մի տեսակ խայտանք զգաց անտառից վեր խարույկի ցոլացող բոցերը նկատելով։ Առաջինը մոտկանցի հովվին նկատեց Ստեփանը, որը համբուրվեց իր հորեղբոր հետ և, դանակը հանելով, Տոնեի գեր մաքիներից մեկը անմիջապես մորթեց նրա ոտքերի առաջ։

Վայրը շատ գրավիչ երևաց եկվորին։ Ե՛վ հազարամյա վիթխարի կաղնին, և՛ Յոթակնանի աղբյուրը, և՛ գարնանային գիշերվա մեջ բուրող հրաշալի անտառը իր բազմապիսի ծառերով, այդ ամենը խիստ տպավորիչ ներգործություն արեցին նրա վրա։

Ստեփանը մորթը կախեց ծառից և սկսեց քերթել, իսկ Օնեն զբաղված էր խորոված համար շամփուրներ պատրաստելով։ Երբ ամեն ինչ ավարտված էր, պատանին մանրեց ոչխարի լյարդը և կտորները մի երկայն ձողի անցկացնելով, պահեց կրակի վրա։ Փոքր ինչ եփելուց հետո նա ոչխարի փորի սպիտակ ճարպաքողը շերտեց և թոքի պատառները նրա մեջ փաթաթելով, շամփուրը նորից բռնեց կրակին։ Խորոված այդ տեսակը կոչվում էր ճարկաբազ և շատ պատվական կերակուր էր համարվում Սև սարի հովիվների մոտ։ Այդ խորոված համար, որ քիչ էր լինում և շատ համեղ էր, հաճախակի ծիծաղաշարժ վեճեր էին ծագում սարվորների մեջ։

Ընթրիքը գրեթե պատրաստ էր, երբ Տոնեն վերադարձավ։ Նա ողջունեց նորեկ հյուրին և, հաբանից մի փարչ օղի հանելով՝ դրեց աղբյուրի մեջ։

— Ո՞րտեղից բերեցիր,— հարցրեց Ասատուրը։

— Ս. Աղբերիկից։

Երբ Խոդեդանն իմացավ, որ Տոնեն սունկ էր տարել վարդապետների համար՝ նեղացած ասաց.

— Մի՛ գնացեք մեր վանքերը։

— Ինչո՞ւ,— զարմացավ Տոնեն։

— Եթե ուզում եք մի արժանի բան տեսնել, գնացեք տեսեք Դավթի ջաղացն ու Դավթի բերդը,— խոսքը լեռնականներին ուղղելով նկատեց Ասատուրը։ Մոտկանցի հովիվը պատմեց, թե ի՛նչպես ինքը ճանապարհին հյուր էր եղել Թամոյի մոտ։ Թամոն նրան ցույց էր տվել Դավթի երբեք չկռանվող ջրաղացաքարը։ Նա իր աչքով տեսել էր Դավթի ալյուրը ջրաղացի պատերի վրա և Խանդութ Խաթունի մազերը՝ երկու սյունի պես կախված բերդի աշտարակից։ Խորին պատկառանքով Խոդեդանը նկարագրեց իր տեսած հսկա սալաքարերը, որոնց տակ հանգչում էին Դավիթն ու Խանդութը։ Նա խորապես հառաչեց, պատմելով այն վայրենացած այծերի մասին, որ թափառում էին Ծովասարի անտառներում։

Սև սարի հովիվները շունչները պահած լսում էին նրա յոթ-
բաքանչյուր խոսքը։

— Խոդեդանի կենացը,— գոչեց Օնեն օղու փարչը աղբյուրից վերցնելով և բարձրացնելով վեր։

Բոլորը նրան նայեցին։

— Երնե՞կ, հազար երնեկ մեր թաղլան Դավիթը մեկ էլ ողջանար, հեծներ իր Քուռկիկ Ջալալին, առներ իր Թուր Կեծակին ու գար մեզ ազատեր էս անիրավ Մսրա Մելիքի ձեռքից։ Բայց ափսո՞ս, Խոդեդան, ինչքան էլ ախ ու վախ անենք, մեր թլոլ Դավիթը էլ ետ չի դառնա։ Նրան Շմշըմ խանումի աղջիկը սպանեց եղեգնուտի մեջ։

Մինչդեռ նրանք խոսում էին, Ստեփանը մատուցեց խորոված, նախապես զգուշացնելով, որ ամեն մեկը պետք է չափավոր ուտի։ Նա դեռ չէր ավարտել իր խոսքը, երբ Օնեն, ձեռքը ամանի մեջ մտցնելով, անուշահամ խորոված երրորդ պատառը բերանը տարավ։ Տոնեն նկատելով վտանգը, ամանը քաշեց Աստուրի և Ստեփանի առաջ։

— Էս ի՞նչ համեղ խորոված է,— բացագանչեց Օնեն և, ձեռքը երկարելով, հինգերորդ պատառը վերցրեց այնտեղից։

— Ցա՛ծ դիր, էդ իմ բաժինն է, անցյալ անգամ էլ ես զուրկ մնացի,— ասաց Ստեփանը, որ նոր էր պատրաստվում ամանի միջից մի պատառ քաղելու։

— Դու մի՞շտ ուրիշի բաժինն ես ուտում,— հարցրեց Խոդեդանը։

— Միշտ ուտում է, հորեղբայր,— գանգատվեց Ստեփանը։— Մենք դեռ մի պատառ չվերցրած, նա ամանի կեսը դատարկում է։

— Շատ ուտելը շնություն է, լաո, իսկ փոր խաբելը՝ շանորդություն,— նկատեց Աստուրը։

— Օնեի համար հավասարություն գոյություն չունի,— հաստատեց Տոնեն կիսակատակով և ամանը նորից քաշեց Ստեփանի և Խոդեդանի առաջ։

— Որ էդպես է, խորոված ցա՛ծ դիր։

— Չե՛մ դնի,— ընդդիմացավ Օնեն և յոթերորդ պատառը բերանը դրավ։

Աստուրին թվաց, որ սևսարեցին իր համբերությունն էր

փորձում։ Ինչպե՞ս կարելի էր հավասար սեղանի առաջ ուտել ընկերոջ բաժինը։

— Ցա՛ծ դիր,— նորից գոռաց նա։

— Չեմ դնի,— ասաց Օնեն և ութերորդ պատառը մոտեցրեց բերանին։

Խոդեդանը հանկարծ վեր թռավ տեղից, բռնեց Օնեի վզից և, մյուս հովիվների քրքջի տակ, այնպես սեղմեց նրա կոկորդը, որ ավելորդ պատառը դուրս թռավ բերանից։

— Ապրի՛, ապրի՛ Ասատուրը,— բացագանչեց Տոնեն ծիծաղելով։— Ավելորդ պատառը լեղի է, Օնե, տեսա՞ր թե ինչպես թռավ քու բերնից։

Օնեն այնպես էր շշմել անակնկալ դիպվածքից, որ ոչինչ չկարողացավ պատասխանել։ Կոկորդի ուժգին հպումից նրա աչքերը ջրակալվել էին։ Երբ հանգստացավ, գնաց աղբյուրը, լվացվեց, և վերադառնալով նորից նստեց իր տեղը՝ գերանի ծայրին։ Տոնեն և Ստեփանը աչքի տակով նայում էին նրան և ծիծաղում։

— Սասնա ծո՞ւռ,— փնչաց Օնեն՝ գերանի վրայից խեթ-խեթ նայելով նորեկ հովվին և մեջքի շուրջը ուղղելով արձակված շալը։

Խոդեդանը զգուշացրեց նրան՝ ասելով.

— Քանի ես Սև սարումն եմ, չտեսնեմ, որ դու իմ ներկայության մի ավելորդ բրդուճ դնես քու բերան։

— Պիտի դնեմ,— հոխորտաց Օնեն։

Խորոված ավելորդ պատառի այս չափազանց հետաքրքրական միջադեպը կրկին անգամ հաստատեց այն պատմությունը, որ սևսարեցիները լսել էին մոտկանցի այդ զարմանալի հովվի վերաբերյալ։

— Բարի գալուստ, Խոդեդան,— խոսեց Տոնեն՝ փարչը իր ձեռքը վերցնելով։— Բարով եկար Բռնաշեն։ Էսօրվանից դու Յոթակնանի աղբյուրի բնակիչ ես։ Տես՝ ինչքան սիրուն է մեր անտառը։ Ուզո՞ւմ ես քեզ համար մի խաղ ասեմ, Խոդեդան, ծառթըխը (փայտփորիկը) դեռ քնած է։

— Երգի՛ր, Տոնե, երգի՛ր,— ուրախացած գոչեցին Ստեփանը և Օնեն։— Դու մեզ խոսք ես տվել։

Տոնեն խմեց մի քիչ օղի, մեջքը տվեց հաստաբուն կաղնուն և, գլուխը առնելով ձեռափերի մեջ, սկսեց երգել։

Լուսինը դանդաղ սահում էր Սև սարի վրայով։ Մինչև ուշ գիշեր Տոնեն երգեց խարույկի առաջ նստած։ Օնեն արդեն քնել էր։ Ստեփանը մորթը փաթաթեց մաշկի մեջ և անթեղած կրակի տակ դնելով, նույնպես քուն մտավ։ Արթուն մնաց միայն Աստուրը։ Նա հափշտակությամբ ունկնդրում էր սևսարեցու երգը։ Նորեկ հովիվը առաջին անգամն էր տեսնում այդպիսի զորավոր երգիչ։

Լուսնի լույսով ողողված կաղնու վրա լսվեց գիշերահավի կանչը։

— Քնե՛նք,, Խոդեդան, քնե՛նք, ծառերին ելավ իր քնարանից։

Երգիչը քնաթաթախ նայե՛ց իր հյուրին և, հորանջելով ու ծոծրակը քորելով, տապալվեց կրակի առաջ՝ աջ թևը կիսավառ գերանին դրած։ Հակառակ կողմի վրա փուլ եկավ Աստուրը։

Կես գիշերին մոտկանցին արթնացավ։ Օնեի մեջքը բաց էր։ Նա հանեց իր հաստ, տաք աբան և նրանով կամացուկ ծածկեց ընկերոջ մեջքը։

— Ի՞նչ ես անում,— քնից վախեցած վեր թռավ սևսարեցին։

— Մեջքդ բաց էր, ծածկեցի, որ չմրսես։

«Երկու պատառ խորոված համար ինձ խայտառակ արավ, իսկ մեջքիս մասին մտածում է»,— ինքն իր մեջ խոսեց Օնեն և զարմացած նայելով նորեկ սասունցուն, ծանր գլուխը նորից գերանին իջեցրեց։

Խոդեդանը աչքերը ուղղեց լուսնյակին, հորանջեց և հոգնած թիկունքը դրեց կողքի խանձված կոճղի վրա։

Գիշերահավը երգում էր ծառին։

ԲՈՒՆԱՇԵՆՑԻ ՀՈՎԻՎԸ

Տոնեն ապրում էր Դաշտադեմ գյուղում։ Այն տունը և տոհմական ընկուզենին, որ գրավել էր Ախուպի Զատոն, եղել էր սրա պապերի սեփականությունը։ Այնքան նշանավոր էր այդ ծառը, որ տան հիմնադիրը ժառանգներին ավանդած վտակի մեջ գրել էր դրա մասին «...և նույնպես իմ դռան ընկուզենին, որ սեփական

ձեռքով տնկեցի։ Եվ նմանապես երեք նույնանման ծառ, որ գտնվի Արինոքի ձորալանջին»։

Զրկվելով հորենական տանից և կայքից, Տոնեն և իր եղբայր Շինական Պողոսը մի նոր խրճիթ էին շինել գյուղի արևելյան ծայրամասում, Զատոյի գրաված տան հանդեպ։ Գրեթե բոլոր տարին այդ տան երդիկից ծուխ չէր բարձրանում։ Միակ աչքի ընկնող կարասին, որ շատ գործածական էր այդ խրճիթում, փայտյա մի հին սնդուկ էր, որի մեջ Տոնեն ընկույզ էր պահում ձմռան համար, նաև վայրի տանձի և խնձորի չիր։ Հարևանների աքաղաղներն ու հավերը ամռանը քուջուջ էին անում նրա պատերի տակ, այնտեղ գոյացնելով լայն անցքեր։ Ձմռանը նապաստակներն ու աղվեսները կռանալով վայր էին նայում երդիկից։

Բնության մարդ էր Տոնեն։ Մանուկ հասակից սիրտը տվել էր հովվությանը։ Մեկ ոչխարը եզան հետ չէր փոխի, այդպես էին ասում նրա մասին։ Հենց որ գարունը գալիս էր, նա հաբանը կապում էր մեջքին և բաց էր անում գոմի դուռը։

— Ձմեռը պրծանք,
Առնիմ զիմ իծանք
Երթամ Իրիցանք,—

ասում էր հովիվը և իր մի քանի տասնյակ ապիտակ այծերն ու մաքիները վերցնելով շտապում էր դեպի Դարավոր կաղնին։

Տարվա մեծ մասը այդ շինականը անց էր կացնում լեռներում։ Նրան հարցնողը պետք է սար գնար։ Տոնեն գյուղ էր իջնում միայն ձմռան ամիսներին։ Իջնում էր բոլորից վերջը, երբ անտառում ոչ ոք չէր մնում։ Սարից գալիս, գլխավորապես ամռան ամիսներին, այդ լեռնականը հաճախ իր հետ մի կուժ լիքը սառը ջուր էր բերում։ Մեկ երկու օր նա պետք է խմեր այդ ջուրը, մինչև որ ընտելանար գյուղի աղբյուրների ջրերին։

Գյուղում եղած ժամանակ. էլ Տոնեն զբաղված էր լինում ընկույզի փայտից գդալներ և շերեփներ շինելով գյուղացիների համար։ Նա այդ գործն անում էր, որովհետև չէր սիրում պարապ նստել։ Նրա շինած գդալներն ու շերեփները մեծ հարգ ունեին գյուղում։

— Ախպեր Տոնե, մեզ համար մի շերեփ շինի, մեր հին շե-

բեփը կոտրվել է, —այդպես էին դիմում նրան Դաշտադեմի և Արինոքի տանտիկիններին։ Նրա աշխատանքի վարձը ընդամենը մի փոքր հարիսա էր, կամ մի քանի ձվից պատրաստված ձվածեղ։

Գդալ և շերեփ շինելը սակայն արհեստ էր, ձեռքի գործ։ Տոնեն բնականից օժտված էր մի ավելի զորավոր շնորհքով։ Նա հրաշալի խաղ ասող էր։ Բոնաշենում չկար նրա պես երգիչ։ Տոնեի խաղի համբավը հասել էր մինչև Մուշ ու Բաղեշ։ Զմռան ամիսներին Դաշտադեմի և նրա հարևան բոլոր հայաբնակ գյուղերի հարսանիքներում նա էր միակ պատվական երգիչը։ Հաճախ էր պատահում, որ աշնանը, երբ ինքը դեռ սարումն էր, նրա ետևից մարդ էին ուղարկում, խնդրելով, որ շտապի՝ իրենց հարսանիքը զարդարելու համար։

Ի՞նչ էր երգում Տոնեն։

Նա գիտեր մի քանի քրդական սիրային վիպերգներ, իսկ մեծ մասամբ նրա երգածը հայերեն ռամիկ խաղեր էին, որ ինքն էր հորինել կամ լսել էր պապերից։ Հայ շինականի թոնիրը, նրա կանաչ կալը, հայրենի տան երդիկը, մրոտ խաչերկաթն ու պուտուկը՝ ահա նրա երգի նյութը։ Նրա խաղերից մեկը կոչվում էր «Թոնդրան երգ», մյուսը՝ «Երդկան ծուխ», երրորդը՝ «Մեծ պուտուկ» և այլն։

Երբեմն Տոնեին սարից կանչում էր Զատոն, որ հատկապես իր համար խաղ ասի։

— Էն երգի մղարային ասեք, թող գյուղ գա,— պատվիրում էր քուրդը սար գնացողներին։

Հովվի դռանը կային մի քանի սալաքարեր, որոնց վրա ամեն երեկո երկարում էին այդ տան բարդիների բարակ ստվերները։ Տոնեն նստում էր մեջտեղի մեծ սալաքարին՝ իր սովորական տեղը։ Նրա շուրջը շարված էին երգի կարոտ հայ շինականները և քուրդ մշակները։ Հով երեկոյին, իր ընկուզենու տակից ելնելով, երգչի մոտ էր գնում Զատոն և բազմելով մի չեչոտ սալաքարի, հայացքը Ծովասարին հառած, մինչև ուշ գիշեր ունկնդրում էր այդ զարմանալի երգչին։ Մանավանդ սաստիկ հուզվում էր նա, երբ Տոնեն երգում էր Ախուպի տան երգը, որի մեջ փառաբանվում էր նրա քաջազնական տոհմը։

Սև սարի բնակիչների ապրուստի մի կարևոր մասը կազմում էր այդ սարի մանանան, որին տեղացիները գազպա էին ասում։

Ամառային ամիսներին Բյուրակնյա լեռների միլիոնավոր ծաղիկների բուրմունքի հետ օդ էր բարձրանում նրանց նեկտարային քաղցրությունը, որը հյուսիսային քամիների կողմից քշվում էր դեպի հարավ։ Հանդիպելով Սև սարին, այդ քաղցրությունը նստում էր նրա ծառերի ու կանաչության վրա։

Հավաքած գազպայի մի մասը շինականներն ուտում էին, իսկ մյուս մասը լցնում էին կարասների մեջ և պահում ձմռան հարսանիքների համար։ Շատ գյուղացիներ իրենց մանանան տանում էին Մշո Դաշտի գյուղերը ցորենի հետ փոխանակելու, կամ վաճառելու քաղաքի շուկայում։ Սև սարի գազպան մեծ հռչակ ուներ ամեն տեղ։ Սովորաբար լցնում էին մածնի վրա և ուտում։ Տոնեի կերածը գլխավորապես այդ մանանան էր։ Կանգնում էր այս կամ այն ծառի տակ և ուղղակի լիզում էր մեղրոտ տերևները։

Հովվի տանը գազպա պատրաստող չկար, դրա փոխարեն բրոնաշենցին զբաղվում էր ընկույզի կամ կարմիր ու սպիտակ ալուչի փոխանակությամբ։

Խոր աշնանը, երբ գետակի ջուրը նվազում էր, նա վերցնում էր իր ձեռքի ուրագը, որով նա գդալներ էր շինում, մի երկու պարկ, և գնում էր Արինոքի ձորը ընկույզ թափ տալու։ Կատվաձորում, խոդեդանի ծառերից ոչ շատ հեռու, երեք թևանցուկ ընկուզենի կային, այնքան խոշոր, որ նրանց վերևի ճյուղերը դիպչում էին ձորի բերանին, իսկ ներքին ճյուղերը կռանալով օրորվում էին նրա քարքարոտ հատակի վրա։ Դրանք այն ծառերն էին, որ հիշատակված էին կտակի մեջ և համարվում էին հովվի սեփականությունը։ Տոնեն բարձրանում էր ծառը և ուրագով թեթևակի հարվածում էր։ Ձորը ծածկվում էր ընկույզներով։ Նրանք կարկուտի պես թափվում էին վար և քարերին դիպչելով, դուրս էին թռչում իրենց թաղամած փոճոկներից։ Շատերը մեջտեղից կիսվում էին դեռ գետին չհասած՝ օդում իրար զարկվելով։ Սև խոշոր ագռավները, այդ հարվածներից ահաբեկված, խռպոտ կռանչելով դուրս էին թռչում տերևախիտ ճյուղերի միջից և թևերը իրար բախելով հեռանում էին՝ մեկական ընկույզ իրենց կտուցների կամ մագիլների մեջ պահած։ «Ղա՜, ղա՜, ղա՜» անում էր հովիվը, ծիծաղելով նրանց ետևից։

Հավաքած ընկուզի մի մասը Տոնեն պահում էր ձմռան համար, իսկ մյուս մասը տանում էր Դաշտի գյուղերը և փոխանակում ցորենի հետ։

Մյուս վայրը, ուր բռնաշենցի հովիվը սովորություն ուներ հաճախակի երթևեկել՝ ս. Աղբերիկի վանքն էր։ Այդ մենաստանը շատ մոտ էր գտնվում Իրիցանքին։ Տոնեն վանականների համար դդալներ էր շինում, իսկ տարին մեկ անգամ՝ մի մեծ շերեփ։ Նա այդ աշխատանքի համար օղի էր վերցնում վանքից և տանում էր Սև սար՝ հովիվների հետ խմելու։

Վանքի ծեր կրոնավորները շատ սիրահար են խորոված սնկի։ Իսկ Սև սարի սունկերը համեղ էին և խոշոր, ամեն մեկը գրկաչափ, մանավանդ բոխի սունկը։ Տոնեն նրանց համար սունկ էր տանում, երբեմն էլ վայրի մեղր, որ նա քաղում էր ծառերի փչակներից։ Այդ ամբողջ ծառայությունը նա անում էր դարձյալ օղի ստանալու նպատակով։ Զարմանալին այն էր, որ այդ խմիչքը նա հայթայթում՝ էր ոչ այնքան իր համար, որքան Օնեին, Ստեփանին և մյուս լեռնաբնակ հովիվներին զվարճացնելու։

Մի իղձ ուներ Տոնեն։ Սև սարի վրայից նա տեսել էր Հայաստանի գրեթե բոլոր լեռները։ Միայն մի սար նա չէր տեսել. այդ Մասիսն էր։ Պատմել էին, որ դա Հայաստանի ամենաբարձր լեռն է, որի գագաթը օրվա որոշ ժամերին երևում էր Մուշի սարերից։ Նա երկու անգամ բարձրացել էր Ծիրնկատար և բացագանչել. «էՀ՝ն է Մասիսը»։ Բայց նրան ասել էին, որ երևացողը ոչ թե Մասիսն է, այլ ամպի մի պատառ, որ իսկական Մասիսը կարելի է տեսնել միայն Նեմրութ սարի գագաթից։

Այդպես էր ապրում բռնաշենցի այդ հովիվը։ Մի չափազանց բարի, միամիտ և սրտաբաց մարդ էր նա։ Գործի մեջ շիտակ էր, խոսքի մեջ ազնիվ և արդարամիտ։ Խմում էր սև մաքու կաթ, ուտում էր գազպով մածուն և շրջում էր սաղարթախիտ անտառների մեջ։

Սևասարեցին ուներ զորավոր տեսություն։ Նրա մասին պատմում էին, որ լեռան գագաթից կարող էր նկատել կիրճի հատակում գտնվող ընկույզը։

Տոնեի հաբանը շատ հին էր։ Այծի մորթուց պատրաստված այդ պարկի մեջ նա պահում էր խութա ընկուզի փայտից շինված մի կաթնաման, որ մոտ հարյուր տարվա պատմություն ուներ։

Ամենազարմանալի իրը, սակայն, բռնաշենցի հովիվը պահում էր իր ծոցի մեջ։ Դա խոյի ամորձքներից մի պարկ էր, որ նա արևի տակ չորացնելով դարձրել էր քսակ։ Սև, խորդուբորդ մաշկով բռունցքաչափ մի տոպրակ էր դա։ Այդ քսակի մեջ, որի տեսակը շատ գործածական էր սասունցի հովիվների մոտ, Տոնեն գաղտնի պահում էր մեկ ու կես կարմիր ոսկի՝ իր հարսանիքի համար։ Այդ ոսկիները նա վաստակել էր տարիների ընթացքում ընկույզ և կարմիր ալուչ վաճառելով Դաշտի գյուղերում։

ՇԻՆԱԿԱՆ ՊՈՂՈՍԸ

Հետևյալ օրը սար եկավ մի գյուղացի, որի անունը Շինական Պողոս էր։ Լսելով, որ Մոտկանի կողմից մարդ է եկել Իրիցանք, նա շտապել էր իմանալու թե, ի՛նչ նորություններ կան Սասունում։

Պողոսը Տոնեի մեծ եղբայրն էր։ Այդ այն շինականն էր, որ Խոդեղանի Արինոք գալուց մեկ շաբաթ առաջ սաստիկ ընդհարվել էր Ախուպի քրդերի հետ, որոնք ոչ միայն զավթել էին իրենց տունն ու տոհմական ընկուզենին, այլև գրավել էին գյուղի ամենալավ հողերը և օսմանցիների հովանավորությամբ սկսել էին ճնշել աշխատավոր հայերին։ Մանավանդ նա բոլորովին չէր հանդուրժում, երբ առավոտ կանուխ Ջատոն գալիս կանգնում էր իրենց տանիքին և ամբողջ կոկորդով գոռում էր դեպի Ծովասար։

— Հերիք չէ՞ գոռաս մեր տանիքներին, Ախուպի արջ,— ասել էր նա մի առավոտ և սերմնացանի իր գոգնոցը վերցնելով, զայրացած հեռացել էր Դաշտադեմից։

Փախչելով Դաշտի գյուղերը, Շինական Պողոսը սկսել էր զբաղվել մշակությամբ։ Գարնանը գյուղացիների արտերն էր սերմանում, իսկ հնձի ժամանակ քաղում էր նրանց խոտը կամ ցորենը։ Նա ամուսնացել էր Աղրութ անունով մի տեղաբնակ աղջկա հետ և հաստատվել էր Մշո դաշտի Քոլոսիկ գյուղում, որ կպած էր Սև սարին։

Օնեն, Ստեփանը, ատաղձագործ Հակոբը և հովիվ Տոնեն, ինչպես նաև շատ բռնաշենցիք, իրենց ընկույզը և տանձը սովորաբար տանում էին Պողոսի տունը և մեկ-երկու օր այնտեղ մնալով փոխանակում էին ցորենի հետ։

Շինական Պողոսը ավանդապահ հողագործ էր, հմուտ սերմնացան։ Նրա համբավը այնքան մեծ էր, որ Դաշտի շատ գյուղացիք նրան էին հրավիրում իրենց արտերը ցանելու։ Սերմանելիս դեմքը ուղղում էր դեպի աղոթարան։ Առաջին երկու բուռը գոգնոցից վերցնելով, նա, ըստ սովորության, նվիրաբերում էր երկնքի հավքերին, անցվորներին ու պանդուխտներին։

«Անունն է աստծուն,
Դու տաս հաջողում.
Էս մի բուռը անցվորականին,
Էս էլ աղքատներին։
Ըռլուն-թըռլուն
Կերեք իմ ցանածից
Կշտացեք,
Նվ իմ ցանածին
Բարաքյաթ ասեք»։

Ապա երեսը խաչակնքելով սկսում էր ոսկեհատիկ ցորենը շաղ տալ ցելերի մեջ։ Շարունակ ընթանում էր ակոսի կողքով, ձեռքի շարժումները զուգակցելով իր ռանչպարական հաստատուն քայլերի հետ և սերմը հավասարապես ու համաչափ սփռելով ահագին տարածության վրա։ Հատիկները արեգակի արծաթափայլ լույսի մեջ թաթախվելով բուռ-բուռ ընկնում էին արգավանդ հողի դիրկը։ Հրճվում էր Շինական Պողոսը, տեսնելով, թե ի՛նչպես իր ձեռնափով շաղ տված միլիոնավոր հատիկները ծլելով ոսկեծածան հասկերով էին ծածկում հայրենի դաշտերն ու անդաստանները։

Այդ շինականի ամբողջ ուշքն ու միտքը կլանված էր հողի գործով։ Ճամփով անցնելիս, երբ թափված հատիկ էր տեսնում, վերցնում-նետում էր ցելերի մեջ, որ այնտեղ բուսանեն։

Ամառվա հով երեկոներին Պողոսը պպզում էր Սև սարի լանջին և այս կամ այն գյուղացուն ձեռնացույց էր անում դաշտի մեջ երևացող հարյուրավոր արտերը՝ ասելով, թե ո՛րը դրանցից ինքն է սերմանել, ո՛ւմ արտն է և ի՛նչքան բերք է սպասվում։

Շինական Պողոսը Քոլոսիկից երբեմն այցելության էր գնում Սև սարի բնակիչներին և մինչև ուշ երեկո զվարճանում էր հովվական խարույկի շուրջը։

— Ինչո՞ւ փախար Դաշտադեմից,— հարցրեց Խոդեդանը նրան տեղ տալով իր կողքին։

— Ջատոյի ձենից փախա։

— Իսկ քո նոր տեղից գո՞հ ես։

— Շատ գոհ եմ, եթե չհաշվենք Շմլակա շների ձայնը։

Այդ գյուղի շները այնքան արտասովոր էին, որ անուն էին հանել ամբողջ գավառում։

— Ես Շմլակի անունը Մոտկանոմն եմ լսել։ Շա՞տ շուն կա էդ գյուղում։

— Հաշիվ չկա... Մեկը որ հաչում է, բոլոր շները հավաքվում են նրա մոտ և սկսում են աղմկալի հաչել ու միասին վազվզել գյուղի թաղերով, մանավանդ գիշեր ժամանակ։

— Շների շատությունը հարստության նշան է, իսկ կատուների առատությունը՝ աղքատության,— փիլոսոփայեց Օնեն գերանի վրայից։

Շինական Պողոսը գյուղ վերադառնալիս անցավ Դավթի քարի մոտով։ Սարի արտերից մեկը դեռ ցանված չէր։ Պողոսը ցորենը լցրեց գոգը և առաջին բուռը վերցնելով շաղ տվեց ցելերի մեջ.

— Էս էլ Մոտկանից եկած մեր նոր բարեկամի բախտի համար,— մրմնջաց նա և երեսը խաչակնքելով սկսեց սերմանել արտը։

Ս. ԱՂԲԵՐԻԿԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Մի ամիս հետո բռնաշենցի հովիվը Խոդեդանին տարավ ս. Աղբերիկի կողմը իրենց անտառի գաղտնիքները ցույց տալու։

Ս. Աղբերիկը նշանավոր ուխտատեղի էր։

Այդ վանքը (հին Վանդեմիր) շինված էր մի բարձր սարավանդի վրա։ Առաջը մի խորունկ ձոր էր բացվում։ Մայր տաճարի խորանի տակ մի հրաշալի աղբյուր կար, որի պատճառով վանքը կոչվում էր ս. Աղբերիկ։ Այդ աղբյուրի ջուրը գաղտնի անցքով հոսում էր վանքից դուրս գտնվող մի ուրիշ գուռի մեջ։ Վանքի և այդ աղբյուրի շուրջը ամեն տարի մեծ բազմություն էր հավաքվում։ Այդտեղ գալիս էին ոչ միայն Խութ-Բռնաշենի, այլև Սասունի մյուս գավառակների գյուղերից։ Քրդերը նույնպես այդ վայրը

համարում էին նվիրական և հայերի հետ միասին ուխտի էին գնում այնտեղ։

Վանքի կրակը տարվա բոլոր եղանակներին վառ էր։ Նրա ծուխը գալարվում էր անտառի վրայով՝ ուղեցույց դառնալով մոլորված ճամփորդների համար։

Այդ քարաշեն վանքի խորհրդավոր վայրերից մեկը Սատանաների տունն էր, որ կից էր մայր տաճարին և Դևատուն էր կոչվում։ Դա մի խոնավ ու մութ խուց էր, որի մեջ իբրև թե արգելակված էին մի քանի դևեր։ Պատմում էին, որ նրանք կաշկանդված են շղթաներով և շարունակ ճիգ են գործադրում այնտեղից ազատվելու։ Երբ որևէ ուխտավոր ճրագ էր վառում, նրանք խավարի միջից փչում մարում էին նրա լույսը, իրենց շղթաները ուժգին զրնգացնելով։ Հոգևորականները ահագին գումարներ էին կորզում ռամիկ ժողովրդից այդ դևերի կացարանը նրանց ցույց տալով։

Սատանաների տան հսկողությունը հանձնված էր վանքի ծերունի լուսարար Կաթմոսին։ Սրա ձեռքին էր գտնվում Դևատան բանալին, որ շինված էր սատանայի կերպարանքով։ Կողպեքը նույնպես դևի երևույթ ուներ՝ սև եղջյուրներով, պոչով և կրունկները ետ ծռված։ Դևատան պատին, դրսի կողմից, կախված էր մի կծիկ մազե սև պարան՝ փախչող սատանաներին կապկապելու համար։

Ս. Աղբերիկի վանահայրը փոքրիկ մորուքով մի վարդապետ էր, որին Կլկըլ Օհան էին ասում։ Սա գուշակի, հրաշագործի և գիտունի համբավ ուներ։ Ժողովուրդը պատմում էր, թե նա կարող է նույնիսկ ծովը մակարդել։ Բռնաշենցի հովիվը ճանապարհին մի քանի սունկ էր քաղել Կլկըլ Օհանի համար։ Ի վարձատրություն դրա, Օհանը ցանկություն հայտնեց Աստուրի բախտը բանալ։

— Տասներկու տանուտեր կա,— ասաց Կլկըլ վարդապետը Սողոմոնի գիրքը բանալով,— դրանցից ամեն մեկը կառավարում է մեկ տարի։ Եթե տանուտերը Զուկն է, ուրեմն ջրերը առատ են և տարին լի է։ Եթե տանուտերը Կարիճն է՝ տարին վատ է։ Խաչուփառը (խեցգետին)՝ կողք-կողքի կերթա, նրա իշխանությունը շատ չարագուշակ է։ Ղոչը եթե իր ոտքը խփեց կոտոշին՝ երաշտ է, իսկ եթե կոտոշը գցեց դմակին՝ տարին լիություն է բերելու։ Խոզեղանի մահվան օրը տանուտերը Զուկն է լինելու։

— Քանի՞ տարի է ապրելու,— հարցրեց Տոնեն։

— Հարյուրից մեկով պակաս։

— Շաբաթվա ո՞ր օրն է մեռնելու։

— Ուրբաթ օրը։

— Ի՞նչ փորձանք կա իր առաջ։

— Նրա առաջ երեք մեծ փորձանք կա,— ասաց Կլկըլ Օհանը։— Սթե դրանցից ազատվի, կապրի մինչև հարյուր երեսուն տարեկան հասակը։

— Ուրեմն Զո՞ւկն է տանուտերը,— հարցրեց սարեցին։

— Հաստատապես Զուկն է,— ասաց վանահայրը և, Սողոմոնի գիրքը փակելով, շտապեց դեպի վանքի խոհանոցը Տոնեի բերած սնկերը խորովելու։

Վանքից դեպի հարավ-արևմուտք շարժվելիս, բռնաշենցի հովիվը իր հյուրին ցույց տվեց ձորի եզրին կանգնած մի նշի ծառ, որի ներքին ճյուղերի նուշը սկսել էր հասունանալ, մեջտեղի ճյուղերի պտուղը տակավին խակ էր, իսկ գագաթի ճյուղերը նոր էին ծաղկել։ Նշտարաձև, կոթունավոր տերևների միջից երևում էին ճերմակ, գեղեցիկ ծաղիկները։ Ասատուրը ասես քարացել էր մի անման տեսիլի առաջ։

— Քանի՞ տարեկան է,— հարցրեց նա։

— Էս ծառը հին է։ Դաշտադեմցի Գևորգն է գտել մի հին գիրք կարդալով։

— Իսկ ո՞վ է Դաշտադեմցի Գևորգը։

— Կլկըլ Օհանի որդին։

— Ո՞րտեղ է ապրում։

— Հիմա ես քեզ նրա կացարանը ցույց կտամ։

Այս ասելով բռնաշենցի հովիվը կռացավ, գետնից վերցրեց մի ուրագաձև քար և հարվածեց դիմացի սալաքարին, որ դռան ձև ուներ և պատապարված էր նշենու ճյուղերով։ Այդ ձայնի վրա քարե դռնակը ներսից բացվեց։ Ճրագը ձեռքին նրանց առաջ կանգնեց կարճահասակ, բայց տոկուն կազմվածքով մի երիտասարդ, մազեղեն աբան հագին։

Դա Դաշտադեմցի Գևորգն էր։

Գևորգի առաջնորդությամբ Տոնեն և Խոդեդանը մտան մի ստորերկրյա նկուղ, որ գնալով խորանում էր անտառի տակ։ Դա քարայրի մեջ խնամքով փորված մի ընդարձակ սենյակ էր, որ

ծառայում էր որպես ձեռագրատուն վանքի համար և գաղտնի ելքով միացված էր մայր տաճարին։

Մուտքի մոտ դրված էր քարյա մի ցածլիկ գրասեղան, որի վրա հաստատված էր մի կեռ եղջյուր, որպես թանաքաման։ Վերևում կախված էր ճրագը՝ ծայրը կտուցաձև։

Պատի փորակներում շարված էին հայոց ամենահին պատմիչների ձեռագրերը։ Այնտեղ էր Եղիշեի «Պատմություն Վարդանանց» գործի հազվագյուտ օրինակներից մեկը, որ արտագրված էր բնագրից՝ Մուշ քաղաքում՝ յոթերորդ դարի վերջին։ Այնտեղ էր Հովնան Մամիկոնյանի «Պատմություն Տարոնո» գրքի բնագիրը քարայծի ընտիր մագաղաթի վրա։ Բուխարիկի սալաքարին դրված էին Առաքելոց վանքի նշանավոր «Ճառընտիրը», որ մի հորթի ծանրություն ուներ և մի ծաղկագիր ավետարան՝ գրված Մշո դաշտի Օձ քաղաքում, 602 թվականին։ Պատի փորագրերից մեկում խնամքով պահվում էին Հոմերոսի «Իլիականի» հայերեն առաջին թարգմանությունը, կատարված վեցերորդ դարի առաջին կիսում և մի վեպ Ալեքսանդր Մակեդոնացու մասին, դարձյալ մագաղաթի վրա։

Դաշտադեմցի Գևորգը այդ ձեռագրատան վերակացուն էր։ Նա ոտքով շրջում էր Բռնաշենի և նրա հարևան գավառակների գյուղերը և բնակիչներից հավաքելով այդ հնադարյան մագաղաթյա ձեռագրերը, վանքի միջոցով փոխադրում էր Մուշ՝ Էջմիածնի գլխավոր Մատենադարանին ուղարկելու համար։ Եղիշեի «Պատմություն Վարդանանց» մատյանը նա գտել էր հայ ուխտավորներից մեկի խուրջինում, իսկ «Ճառընտիրը» և Հոմերոսի «Իլիականի» թարգմանությունը նրան հանձնել էր ջրաղացպան Թամոն՝ ս.Աղբերիկ ուխտի գալու ժամանակ։

Մի խնդիր շատ էր զբաղեցնում Դաշտադեմցի Գևորգին։

Մագաղաթյա մի հին ձեռագրի մեջ նա կարդացել էր, թե այդ քարայրում գրվել է Բռնաշենի նշանավոր ավետարանը, որի տեղը անհայտ է։ Այդ միտքը տանջում էր Գևորգին և նա ամենայն եռանդով որոնում էր այդ կորած գիրքը։ Գևորգը Հուրի-Մալաքի և Ոսկեհատի միջոցով գաղտնաբար տեղեկացել էր այն մատյանի մասին, որ Ավեսի Հաջին պահում էր իր տոհմական սնդուկի մեջ։ Նա միջոց էր որոնում այդ խորհրդավոր գիրքը ձեռք բերելու համար և ենթադրում էր, թե հավանորեն դա այն կորած մատյանն է, որ գրվել է ս. Աղբերիկի քարայրում։ Այդ գործով նա նույնիսկ

դիմել էր ջրաղացպան Թամոյին, խնդրելով նրա օգնությունը։ Մտածել էր նաև մի ուրիշ միջոց։ Հաջին երբեմն-երբեմն վանքից մեռոն էր խնդրում Նասրի տան նորածիններին կնքելու համար։ Մեռոն տվողը իր հայրն էր։

— Մյուս անգամ, որ կգա մեռոն ուղելու, չտաս, մինչև չխոստանա վանքին հանձնել իր սնդուկի մատյանը,— ասել էր որդին։ Բայց Կլկել Օհանի և նրա որդու բոլոր ջանքերն ապարդյուն էին անցել։ Ավելի Հաջին նրանց համոզել էր, թե այդ բանը նույնքան անկարելի է, որքան միջամտությունը մարդկային սրտի ամենախոր գաղտնարանին։

Գևորգը Սալվարդի միջոցով ուզեցել էր գոնե իմանալ, թե ո՞ր տեղ է պահվում այդ խորհրդավոր սնդուկի բանալին։ Սալվարդը Ոսկեհատի միջոցով հայտնել էր՝ որ ինքն էլ չի իմանում դրա տեղը։

Գևորգը այծի թթված կաթից սոսինձ էր շինում և, գիշերային լռության մեջ, իր քարայրում նստած, զգուշությամբ իրար էր միացնում այս կամ այն մագաղաթի պատառոտված թերթիկները։

Մի ուրիշ պարտավորություն էլ ուներ Դաշտադեմցի Գևորգը։ Հայրը նրան էր հանձնել Խութ-Բռնաշենում ամուսնացող զույգերի արձանագրության գործը։ Նրա մոտ պահվում էր մի սևակազմ հաստ ցուցակ, որի վրա գրված էր. «Մատյան նորապսակ զույգերի ի գավառակն Խութ-Բռնաշեն»։ Գևորգը իր մանրիկ սիրուն ձեռագրով այնտեղ հերթականությամբ գրանցում էր, թե իրենց գավառակում ո՛վ ո՛ւմ հետ ամուսնացավ և ո՛ր թվականին։ Այնտեղ գրանցված էին Օնեն և Քիշոն, ատաղձագործ Հակոբը և Ծաղկանուշը։ Վերջին զույգին արձանագրելիս, Գևորգը չէր զլացել փակագծի մեջ նշել, որ «Հակոբը Ծաղկանուշին փախցրել էր Ծղակա աղբյուրի մոտից՝ երկու քուրդ երիտասարդների ընկերակցությամբ»։

— Հիմա ես ձեզ ցույց կտամ ս. Աղբերիկի ամենամեծ գաղտնիքներից մեկը, որ կապված է այս քարայրի հետ, և այն կորած մատյանի հետ, որի մասին պատմեցի ձեզ,— ասաց Գևորգը և ճրագը վերցնելով ընթացավ դեպի խորքը։

Առաստաղի և հատակի միացման տեղում կար մի քարե փորակ, որի վրա դրված էին մի սղոց, մի ուրագ և տարբեր մեծության մի քանի ժանգոտ խարտոց ու փորիչ։

— Սրանք ի՞նչ գործիքներ են,— հարցրեց Ասատուրը։

— Դրանցով շինվել է Թարգմանչաց վանքի դուռը։

— Ե՞րբ։

— Սրանից ութ հարյուր տարի առաջ։

— Ո՞րտեղ։

— Այս միևնույն քարայրի մեջ։ Դաշտադեմցի Գևորգը ճրագը մոտեցրեց մի մագաղաթի, որ ամրացված էր պատին և նրա վրա կարդաց ու թարգմանեց հետևյալը.

«Մենք՝ Տեր-Թորոս, Գրիգոր և Ղուկաս քանդակագործներս, Սասունի Վիգեն իշխանի և ս. Աղբերիկի վանահոր բաղձանոք եկանք այս քարայրը և այն արհեստանոցի վերածելով, կառուցեցինք մի երկփեղկանի դուռ, Թարգմանչաց վանքի համար իբրև նվեր։

Այդ քարայրում մենք գտանք մի շատ հին ավետարան (Բրոնաշենի ավետարանը), որ դրված էր այս միևնույն փորակին, բաց վիճակում, վերջին էջի վրա։ Մենք վերոհիշյալ նշանավոր դուռը շինեցինք եբենոսյան փայտից, 1134 թվին և նրա վրա դրեցինք այնքան նախշ, որքան բառ կար այդ մատյանի մեջ։ Մենք այդ դուռը այս քարայրից հանելով գիշերով տարանք և հանձնեցինք Թարգմանչաց վանքի խորանին, որի արևելյան պատի տակ հանգչում են անմահ քերթողներն ու պատմիչներն հայոց։ Վերադառնալով մեր արհեստանոցը, մենք մի պահ նստեցինք այս քարեղեն գետնին, կերանք խորոված սունկ, խմեցինք մի գավ ջուր և, մեր գործիքները թողնելով այդ պաղ սալաքարին, ելանք գնացինք, նախապես քարայրի դռանը տնկելով մի նշենու ոստ, որպես հիշատակ մեր տքնության։ Սալաքարի վրա թողեցինք նաև Բռնաշենի զարմանալի մատյանը, բաց վիճակում, վերջին էջի վրա, ինչպես տեսել էինք։

Ո՞վ անցվորական, երբ կանցնես այս քարայրի առջևով կամ կնայես Թարգմանչաց վանքի այդ շքեղազարդ դռանը, օրհնությամբ հիշիր Տեր-Թորոս, Գրիգոր և Ղուկաս վարպետներիս և նմանապես Սասունի Վիգեն իշխանին, որի հրամանով շինեցինք այդ դուռը։ Եթե դու կարողանաս հաշվել, թե ո՛րքան սաղարթ կա ս. Աղբերիկի անտառում, դու կհասնես աշխարհի վախճանական թվականին, որի համար մենք մեր քանդակած դռան վրա նկարեցինք ութթև աստղեր և դրեցինք հավիտենականության նշանը»։

Երբ նրանք դուրս եկան Դաշտադեմցի Գևորգի քարայրից, տեսան մի ձիավորի, որ պարիսպների մոտից հեռանում էր՝ ետ-ետ վարելով իր ձին։ Անտառի խորքն անցնելով, երբ վանքը բոլորովին

անհետացավ նրա աչքից, ուղևորը շուտ եկավ և ձիու գլուխը ուղղեց դեպի առաջ։

— Ո՞վ է,— հարցրեց Աստուրը։

— Չճանաչեցի՞ր։

— Առաջին անգամն եմ տեսնում։

— Արաբոն է։

— Ո՞վ է Արաբոն։

— Ավետի Հաջին։

— Ինչո՞ւ է ս. Աղբերիկ եկել,— զարմացած հարցրեց Խոդեգանը։

— Երևի եկել է իմ հոր մոտից մեռոն ուզելու։

— Իսկ ինչո՞ւ է իր ձին ետ-ետ քշում։

— Շեկո տան բոլոր քրդերը վանքից հեռանալիս ետ-ետ են վարում իրենց ձիերը։ Քանի դեռ ս. Աղբերիկի ճակատը երևում է, նրանք իրավունք չունեն ձիու մեջքը վանքին դարձնել։ Երբ իջնում են որևէ բլուրի ետև, նոր միայն շուտ են տալիս իրենց երիվարների գլուխները դեպի առաջ։

— Շատ խորհրդավոր վանք է ս. Աղբերիկը, —ասաց Տոնեն։

— Սուրբ Աղբերիկի գաղտնիքները շատ են,— ավելացրեց Գևորգը։

— Բայց բոլորից խորհրդավորը Ավետի Հաջին է,— նկատեց Աստուրը։

— Նրա ամբողջ գաղտնիքը իր սնդուկի մեջ է, որ ոչ մի կերպ հնարավոր չէ բաց անել։ Բացի իրենից ոչ ոք չի իմանում, թե նա ո՞րտեղ է պահում այդ սնդուկի բանալին։

— Ինչո՞ւ են նրան Արաբո ասում։

— Վանքում նա այդ անունով է հայտնի։ Երևի դա էլ մի գաղտնիք է, որ կապված է ս. Աղբերիկի վանքի և այս քարայրի կորած մագաղաթի հետ,— բացատրեց Գևորգը։

ԳՈՄՍԱ ՄԵԼԻՔԻ ԽՈՒՄԲԸ

— Ս. Աղբերիկի գաղտնիքները դուք չեք իմանա, եթե չտեսնեք Թարգմանչաց վանքը, որի վրա ագուցված է այդ դուռը,— ասաց Դաշտադեմցի Գևորգը։— Վաղը այդ վանքում տոնախմբություն

կա։ Այդ հանդեսին մասնակցելու է նաև Գոմսա Մելիքը իր խմբի հետ։

— Գոմսա Մելի՞ք։— Խոդեդանը վարանած կանգ առավ։

— Դա այն հայտնի ֆիդային է, որ ծպտված ապրում է տարերում, երդվելով մինչև վերջին շունչը կռվել սուլթանական անարգ կարգերի դեմ։

Տոնեն վերադարձավ Իրիցանք, իսկ Ասատուրն ու Դաշտադեմցի Գևորգը ոտքով ճանապարհ ընկան դեպի Մուշի կողմերը։ Նրանք անցան Ծիրնկատարի հյուսիսային լանջերը և մոտեցան Թարգմանչաց վանքին։

Թեպետ Խոդեդանը առանձին ջերմությամբ չէր վերաբերվում դեպի այդ կարգի շինությունները, բայց Գևորգը նրան բացատրել էր, թե կան վանքեր, որոնք բերդերի և ամրոցների դեր են կատարել հայ ժողովրդի կյանքում։ Այդ թվում նա առանձնապես հիշատակել էր ս. Կարապետի և Թարգմանչաց վանքի անունները։

Տասնութերորդ դարի վաթսունական թվականներից ազատագրական ուժեղ շարժումներ էին սկսվել Արևմտյան Հայաստանի քաղաքներում և գյուղերում, հատկապես Մշո դաշտում, Սասունում, Կիլիկիայում, Վանում և Էրզրումում։ Ազատագրական շարժումների գլխավոր կենտրոնը դարձել էր Գլակա կամ ս. Կարապետի վանքը, որը գտնվում էր Մշո դաշտի հյուսիս-արևմտյան մասում։ Գուսանները նրա մասին երգում էին.

Սուրբ Կարապետն է մեջ դաշտին,
Սրբությունքը իր հետ հաշտին,
Շատ խաչապաշտ իրեն պաշտին,
Մշո սուլթան սուրբ Կարապետ։

Այդ բոլոր շարժումների երկրորդ նշանավոր կենտրոնը եղել էր Թարգմանչաց վանքը, որ գտնվում էր Մուշ քաղաքից դեպի հարավ-արևելք, Ծիրնկատարի հյուսիսային ստորոտում, մի հրաշագեղ հովտի եզերքին, և ռամիկ ժողովրդի մեջ հայտնի էր Առաքելոց վանք անունով։

Այդ բնակատեղին շատ հին էր։ Վանքի շինությունից դեռ շատ առաջ դա եղել էր հայոց մեծ պատմիչների և թարգմանիչների անդրանիկ ամառանոցը։ Այդտեղ էին իրենց մատյանները գրել

Մովսես Խորենացին, Մեսրոպ Մաշտոցը, Դավիթ Անհաղթը, Եղնիկ Կողբացին և ուրիշներ։

Վաղ գարունքից սկսվում էին այդ նշանավոր վանքի տոնախմբությունները և հանդեսները։ Վանքի մոտիկությունը, նկարչագեղ դիրքը և հովասուն ծառաստանները ամեն կիրակի դեպի այդ վայրն էին գրավում Մուշ քաղաքի և նրա հարևան գյուղերի հազարավոր բնակիչներին։

Խոդեդանը և Դաշտադեմցի Գևորգը վանքին մոտեցան արևմտյան կողմից։ Քարե վեց բարակ սյուների վրա կանգնած էր ահագին զանգակատունը երեք փոքրիկ մարմարակերտ գմբեթներով, որոնց շուրջը ճախրում էին հարյուրավոր լուսաթև աղավնիներ։

Խորանի գեղաքանդակ դուռը Աստուրին ցույց տալուց հետո, դաշտադեմցի Գևորգը նրան առաջնորդեց վանքի արևելյան պարըսպից դուրս, ուր երկու շարք մամռոտած հին տապանաքարեր կային, որոնցից յուրաքանչյուրի վրա մի խաչքար էր տնկված։

— Սա Մովսես Խորենացու գերեզմանն է,— ասաց Գևորգը մացառուտները ետ հրելով մի մաշված սալաքարի վրայից։— Այն մեկի տակ Ղազար Փարպեցին է հանգչում։ Սա Սահակ Պարթևի շիրիմն է։

— Ե՞րբ են մեռել։

— Հազար հինգ հարյուր տարի առաջ։

Տապանաքարերից մեկի վրա, որ հեռու էր գտնվում պարըսպից, նստած էին մի խումբ շինականներ, ամեն մեկը տարբեր դիրքով։

— Ովքե՞ր են դրանք։

— Գոմսա Մելիքի ջանֆիդայիներն են։

— Ո՞ւմ գերեզմանի վրա են նստած։

— Դավիթ Անհաղթի։

Մեջտեղում նստած էր մի թիկնեղ թխադեմ տղամարդ, դեմքի դաժան արտահայտությամբ, ձեռքը մազեղեն արայի տակով արծաթաբուռ դաշույնին դրած։

Դա ինքը Գոմսա Մելիքն էր։

Նրա դեմքի սաստիկ արտահայտությունը երբեմն երբեմն մեղմանում էր պայծառանալու չափ և, վերստին մթնելով, ահեղ թուխպի պես կուտակվում էր նրա թանձր հոնքերի վրա, որ եզերված էին իր գդակի շուրջը ոլորված մետաքսյա փուշու սև ծոպերով։ Իր

ցեղի և ընտանիքի հետ կապված մի սոսկալի ոճիր հարկադրել էր նրան վաղ հասակից թողնել շինականի խաղաղ աշխատանքը և խաչի, ավետարանի ու դաշույնի վրա երդվելով՝ քարձրանալ սար։

Գոմսա Մելիքի աջ կողքին նստած էր Շերվանշեխցի հայտնի ֆիդայի Զուլումաթ Սմբատը, որ համարվում էր Մելիքի օգնականը։ Սրա հոր գլխին օսմանցիք շիկացած թաս էին դրել և խոշտանգելով սպանել։

Զուլումաթ Սմբատի կողքին նստած էր մի երրորդ շինական, որին Ընկնավոր Մանոն էին կոչում։

Սա Մշո Առնիստ գյուղացի էր։ Օսմանցի հարկահավաքները քշել-տարել էին սրա անասունների կեսը։ Մյուս կեսը կոտորվել էր ժանտախտից մեկ օրվա ընթացքում։ Մնացել էր միայն մեկ գոմշի ձագ։ Մանոն զայրույթից մորթել էր այն, վերցրել էր նրա մեկ ազդրը, վազելով ելել էր իրենց տանիքը և ցասմամբ դեպի երկինք բարձրացնելով գոչել էր առ աստված. «Աստրո, աստրո (աստված, աստված) ըմմեն սուլթան կերավ, էս մեկ բրդուճն էլ տու կեր, քու պապու գանգ...»։

Մանոն ընկնավոր էր կոչվում հետևյալ պատճառով։

Երկու քուրդ ընկնում են սրա ետևից, որ սպանեն։ Սա գնում է գոմ և գլուխը կախում է հորի մեջ, իբրև թե ուշաթափվում է։

— Ինչո՞ւ ես գժի պես ներքև նայում,— հարցնում է քրդերից մեկը։

— Ջրհորի մեջ ոսկի ունեմ պահած։ Քանի որ ուզում եք ինձ սպանել, թողեք ոսկին հանեմ, հետո սպանեք։ Քրդերը ոսկու անունը լսելով՝ հային մի կողմ են հրում և իրար ետևից կախվում են հորի մեջ։ Մանոն ետևից երկուսին էլ գլխի վրա շուռ է տալիս ջրհորը և, զենք վերցնելով, փախչում է սար։

Չորրորդ շինականը, որ նստած էր Գոմսա Մելիքի ձախ կողմը, խաչեղցի Մտքամոլոր Առաքելն էր, որ հայտնի էր նաև Օֆ-օֆ Առաքել անունով։ Նստած թե պառկած վիճակում, միայնակ թե ուրիշների հետ, այդ շինականը միայն մի խոսք էր ասում. «Օֆ-օֆ, չգիտե՞մ, չգիտե՞մ»։ Այնպիսի խոր հոգոցով էր օֆ-օֆ ասում, կարծես թե ամբողջ աշխարհի դարդը իրեն էին տվել։

Ասում էին, որ նա իր գլուխը կորցրել էր, երբ մի անհաջող սիրո պատճառով իրեն նետել էր Մեղրագետը և բավական ջուր էր

կուլ տվել, և մանավանդ, բոլորովին մտքամոլոր էր դարձել, երբ առաջին կնոջ մահից հետո գնացել էր Ռուսաստան և այնտեղից մի շեկ ռուս կին էր բերել։ Նա այդ կնոջը կողովի մեջ դրած անց էր կացրել սահմանից։ Կնոջ անունը դրել էր Վարսենիկ և տարածել էր, թե անտառումն է գտել։ Մուշի գավառապետը և ոստիկանապետը իմացել էին այդ պատմությունը և որոշել էին սպանել այդ շինականին՝ իրենց երկիրը ռուս կին բերելու համար։ Մտքամոլոր Առաքելը վախից փախել էր սար և միացել Գոմսա Մելիքի խմբին։ Վարսենիկն այնքան բուռն էր սիրում Առաքելին, որ խնամում էր նրա առաջին կնոջ որբացած երեխաներին և, կուժն ուսած, ամեն օր գնում էր աղբյուրը ջրի։ Նա սովորել էր հայերեն և, ամեն կիրակի հաց էր ուղարկում իր ֆիդայի ամուսնուն։

Հինգերորդ շինականը, որ նստած էր Մտքամոլոր Առաքելի ձախակողմը, մի ջրվոր էր, որին Քեռի Վարդան էին ասում։

Գարունը բացվեր մինչև խոր աշուն, Քեռի Վարդանը արտերի մեջ էր, միշտ թիակը ձեռքին կամ ուսին դրած և ոտքերը քշտած մինչև ծնկները։

Սրա հարևանը մի օսմանցի բռնակալ բեկ էր, որ իրեն հայտարարել էր սուլթանի ազգականներից։ Երբ որևէ մեկին կամենում էր վախեցնել՝ ասում էր. «Էս մեր սուլթա՞նը...» և բազմախորհուրդ լռում էր։ Քեռի Վարդանը աշխատում էր օրնիբուն, հենց որ աշնանը նա իր վաստակը լցնում էր ամբարը, բեկն անմիջապես հայտնվում էր շեմքին։

— Կալ ու կուտից պրծա՞ր, Վարդան էֆենդի։

— Հրամանքդ, աղա։

— Սուլթանի հարկը տվեցի՞ր։

— Տվեցի, էֆենդի։

— Բա իմ բաժի՞նը։

— Երեխեքս մեղք են, բեկ, հազիվ եմ ծայրը ծայրին հասցընում։

— Դե, դու գիտես, ես գնացի,— խորամանկ ժպտում էր աղան և ծոծրակը քորելով խռովածի պես հեռանում էր։

Եվ տալիս է Քեռի Վարդանը, տալիս է մեկ տարի, տասը տարի։ Քեռի Վարդանի ընտանիքը մատնվում է քաղցի, իսկ բեկի տունը լողում է լիության մեջ։

Մի անգամ, երբ Քեռի Վարդանը հանդից գիշերով վերադառ-

նում է տուն, տեսնում է բեկը իրենց վառված ճրագը առած դուրս է գալիս շեմքից։

— Էդ ո՞ւր ես տանում մեր տան ճրագը,— հարցնում է շինականը։

— Իմ երեխեքը մութի մեջ են, Քեռի Վարդան։ Քո ճրագը վերցրի, որ կախեմ մեր պատից։

— Բա իմ երեխե՞քը։

— Քո երեխեքը թող մութի մեջ մնան, վնաս չկա։ Քաղցած մարդը էնքան չի զգում լույսի կարիքը, որքան կուշտ մարդը։ Էս մեր սուլթանը...

Քեռի Վարդանը այլևս չի համբերում. հենց շեմքի վրա ձեղքում է բեկի գլուխը և փախչում է սար։

Թեև ջանֆիդա էր դարձել, բայց զենք չէր կրում։ Շրջում էր թիակը ձեռքին և միշտ ոտքերը քշտած։ Գիշերը գնում էր լեռն ի վայր և ջրում էր գյուղացիների արտերը, առանց խտրություն դնելու, թե արտպտերը հայ է, թե քուրդ։

Վեցերորդ շինականը, որ Ընկնավոր Մանոնի կողքին էր նըստած, կոչվում էր Պանդուխտ Ավագ։

Սա մի օր վերադառնում է պանդխտությունից, տեսնում է իր տունը ավերակ է, իսկ կինը կիսամերկ նստել է թոնրի շրթին։

Հարցնում է.

— Կնի՜կ, մեր հավերն ո՞ւր են։

— Հաո՜ւ, քու տունը սուքվի.
Ուրուրն ի եկավ
Ձագերն ի տարավ,
Տարավ ու տարավ,
Տարավ ու կերավ,—

երգով պատասխանում է կինը։

— Կնիկ, մեր կովն ո՞ւր է։

— Հաո՜ւ, քու տունը սուքվի.
Հըմզեն ի եկավ,
Կովն ի մեր տարավ,
Տարավ ու կերավ,

ասում է կինը։

— Կնիկ, մեր ճժերն ո՞ւր են,— հարցնում է պանդուխտ գյուղացին։

— Հաո՜ւ, քու տունը սուքվի.
Ճժերն ի լացան,
Լացան ու լացան,
Լացան ու լացան,
Անոթի փիցան։
Տերտերն ի եկավ,
Առավ ու տարավ,
Տարավ ու իքեց,
Մըչ հողին շիքեց։

— Իսկ դու ի՞նչ արեցիր, անիծյալ կնիկ,— հարցնում է վըշտահար ամուսինը։

— Հաո՜ւ, քու տունը սուքվի.
Գացի հարսնատուն,
Թևերս տնկեցի,
Թևերս տնկեցի
Գովընդ խաղացի,
Գովընդ խաղացի,
Սիրտս ի հովցուցի,

պատասխանում է ցնորված կինը և խելագարի պես պար է գալիս ամայացած տան մեջ։ Ավագը, առանց իջեցնելու իր պանդխտական գավազանը, ծածկում է դուռը և շտապում է դեպի Միրնկատար։

Յոթերորդը և ութերորդը, որ կանգնած էին Գոմսա Մելիքի և Ջուլոմաթ Սմբատի ետևում, երկու սասունցի եղբայրներ էին, որոնցից մեկի անունը Կայծակ Պետո էր, իսկ մյուսինը՝ Կայծակ Սեթո։

Մի օր սրանք Սասնո լեռներից իջնում են Մշո դաշտ։ Կես օրվա ճանապարհ անցնելուց հետո նստում են մի քարափի տակ հանգըստանալու։ Հանում են իրենց ծխատուփը, որ գլանակ պատրաստեն։ Առաջինը ձեռքը տանում է ծոցը, տեսնում է կրակհանը մոռացել է տանը։

— Աստված հախ է մեր տուն ակոլավ (ավերվեց),— բացագանչում է նա վեր ցատկելով տեղից։

— Ի՞նչ եղավ, Պետո, իմա՞լ թե մեր տուն ակոլավ,— հարցնում է Սեթոն։

— Աստված հախ է, զիմ չախմախ մոռացել եմ տուն։

— Վա՜յ, աստված ավրե զքու պապու տուն, Պետո, դու էլ կախ

(ուրիշ ժամանակ) հրմալ էշ չբր էղեր է, էս հորի՞ հրմալ էշ մք էղար,— բարկացած հանդիմանում է Սեթոն։

— Բան չեղնի, ղուրբան, բան չեղնի, մինչև դու քո ջղարեն փաթաթես, ես կհասնեմ տուն, կառնեմ զիմ կրակհան ու կդառնամ,— ասում է Պետոն և ճանապարհ ընկնում։

— Տղա, կանգնի՛ր, ամպը գոռաց, կեծկից (կայծակից) կվառենք։ Շուտ տար քու ջղարեն կպցրու կեծկի բերնին ու բեր,— նրա ետևից բղավում է Սեթոն դեպի երկինք նայելով։

Եվ իսկապես, նույն միջոցին կայծակը հարվածում է մերձավոր կաղնիներից մեկի բնին։ Ծառը բոցավառվում է։ Պետոն ու Սեթոն, լեռն ի վեր վազելով, իրենց գլանակները վառում են ամպրոպի կրակով և շարունակում են ճանապարհը։

Գոմսա Մելիքի խմբում այս երկու սև աբավոր շինական եղբայրները՝ Կայծակ Պետոն և Կայծակ Սեթոն նույն պաշտոնն էին կատարում։ Երբ սարի գլխին իրենց կրակը մարում էր, նրանք գնում էին կայծակի հարվածի ուղղությամբ և գլանակները ամպրոպի կրակով վառելով՝ վերադառնում էին Ծիրնկատար։

Իններորդ վրիժառուն, որ խմբի վերջոմն էր կանգնած ու ձեռքը դրել էր խաչքարին, մի մշեցի քահանա էր, որին Տեր-Քաջեր էին ասում։

Սա գյուղական մի բարեպաշտ կրոնավոր էր, որին թյուրք մեծավորները ստիպել էին մի շան լակոտ գրկել, իբրև գառն ասածո, և դնել եկեղեցու խորանին, ուր պատարագ են մատուցում։ Տեր-Քաջերը ընդդիմացել էր բարբարոսների հարկադրանքին և, զենք վերցնելով փախել էր սար։

Տասներորդը, որ կանգնած էր Կայծակ Պետոյի աջ կողմը՝ մի քուրդ էր Սայդո անունով։ Սրա մոր փորի վրա օսմանցիք երկանք էին աղացել, իսկ հորը կապել էին կամից և եզան նմանությամբ կալի մեջ պտտեցնելով՝ տանջամահ էին արել։ Սայդոն սպանել էր օսմանցի բռնակալին և դարձել էր փախստական։

Տասնմեկերորդը, որ կանգնած էր Կայծակ Սեթոյի կողքին, մի ասորի էր Բաղալ անունով։

Սա մի օր սխալ ճամբա է ցույց տալիս օսմանցի հարկահաններին։ Նրանք խրվում են ճահիճը և, խեղդվելուց հազիվ ազատվելով, ուզում են սպանել նրան։

— Ես գիտեի, որ դուք շիտակ գործի համար չեք գալիս, դրա

համար էլ ձեզ սխալ ճամփա ցույց տվի,— ասում է ասորի Բաղայը և փախչում է սար։

Ահա սրանք էին այն տասնմեկ շինական ջանֆիդայիները, որ իրենց խրճիթներից ու հանդերից փախչելով, ապավինել էին Միրնկատարի լանջերին։

Գոմսա Մելիքի վրիժառուների սահմանագիծը տարածվում էր Անդոկ սարից մինչև Խամուրա լեռները՝ Խնուսի մոտ։ Բայց նրանց գլխավոր բնակատեղին Միրնկատարն էր։ Նրանք ապրում էին մի ծածկված քարայրի մեջ և երբեմն սարից իջնելով մասնակցում էին Թարգմանչաց վանքի տոնախմբություններին։ Երբ վանքի զանգակը ղողանջում էր, նրանք՝ արևելյան պարսպի տակ հավաքվելով՝ ծնրադիր աղոթում էին։ Շինական վրիժառուների սիրած նստավայրը այդ խաչաձարդ, մամռոտած շիրիմներն էին, հատկապես Մովսես Խորենացու և Դավիթ Անհաղթի տապանաքարերը։

Խոդեդանը երկար նայեց այդ փախստական գյուղացիներին։ Ահարկու էին Գոմսա Մելիքի և նրա օգնական Զուլոմաթ Սմբատի կերպարանքները, մանավանդ առաջինի, որի մազոտ կուրծքը և խիստ դիմագծերը հիշեցնում էին այն թափառաշրջիկ տղամարդուն, որ կատուներ էր նետում Արինոքի ձորը։ Ո՞րքան կուզենար ինքն էլ ձուլվել այդ պարտիզանների խմբին և շարունակ անբաժան լինել նրանցից։ Սակայն մի հանգամանք խափանում էր նրա ցանկությունը։ Աստուրը քնի մեջ երբեմն հարայ էր կանչում։ Այդ էր պատճառը, որ տարիներ առաջ Գևորգ Չաուշը, իսկապես, նրան ետ էր ուղարկել, ասելով. «որևէ հարուստ քրդի մոտ հովվություն անելով, դու ավելի օգտակար կլինես մեր ընդհանուր գործին, քան թե ֆիդայի դառնալով»։

— Նե՛րս մտնենք,— ասաց Դաշտագեմցի Գևորգը։

Խոդեդանը հետևեց նրան։

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՆՔԻ ԲԱԿՈՒՄ

Հայոց վանքերը ոչ միայն կրոնական ծիսակատարություններ, այլև մասսայական զբոսանքների և մրցությունների վայրեր էին։ Այնտեղ ամեն տարի կազմակերպվում էին ժողովուրդ-

դական տոնահանդեսներ, ուր ըմբիշը ըմբիշի, գուսանը գուսանի և փահլևանը փահլևանի հետ էր մրցում։

Սասունցի և մշեցի երիտասարդները, այլև հասակավոր մարդիկ, դյուցազնական ոգի և ընդունակություն զարգացնելու համար հատուկ վարժություններ ունեին։ Աղատ օրերին գյուղական հրապարակներում, իսկ տոն օրերին իրենց վանքերի շուրջը նրանք փորձնական հարձակումներ էին կատարում միմյանց վրա մեծ մահակներով և պաշտպանվում էին վահաններով, որ կոչվում էին մորթալ։ Այդ վահանները պատած էին հաստ կաշիով, որոնց վրա լայնագլուխ բևեռներ էին դամված։ Դրանցով սասունցին երբեմն փորձում էր նույնիսկ հրացանի գնդակը ետ մղել յուր անձից։

Բակը մտնելիս, Խոդեղանը և Դաշտադեմցի Գևորգը տեսան ժողովրդի մի ստվար բազմություն, որ ընդարձակ շրջան կազմած դիտում էր երկու շինականների մարտական վահանախաղը։ Վանքի բոլոր պատշգամբներն ու շինությունների տանիքները լեփ-լեցուն էին երկսեռ հանդիսականներով։ Ժողովրդի մի մասը տեղ չգտնելու պատճառով թառել էր պարիսպներին։

Փահլևաններից մեկը, որին Թելո Մեսրոպ էին կոչում, մոտ երեսունհինգ տարեկան թխադեմ, ամուր բազուկներով, լայն կրծքով մի տղամարդ էր Դաշտի Բերդակ գյուղից։ Հռչակավոր էին նրա հագի կարմիր սոլերը՝ բրդյա կանաչ գուլպաներով, ծոպավոր աբան, կապույտ անդրավարտիքը, որին նա ժանգառի թոմբա էր ասում, և նամանավանդ, խիստ ուշագրավ էին նրա թավ երկայն բեղերը, աջ կողմինը դեպի վեր ուղղված, ձախ կողմինը՝ դեպի վար։ Այդ շինականը զբաղվում էր սարից ավել քաղելով և վաճառելով Մշո շուկայում։

Բերդակը մոտ էր Թարգմանչաց վանքին։ Ժամանակին այն եղել էր այդ վանքի կալվածքը, ուստի Թելոն, գրեթե ամեն կիրակի, գալիս էր այնտեղ տոնահանդեսի։ Այնտեղ էր նա սիրահարվել մառնիկցի Հուլունքին։ Վայելուչ զգեստ չունենալով, Թելոն հագնում էր ծանոթ երիտասարդների տոնական շորերը և առավոտ վաղ Մովսես Խորենացու գերեզմանին նստելով, սպասում էր մինչև Հուլունքը կգար։ Այնքան ջահել էր, որ նրա գլխի սև ու սուր մազերը կարմիր արախչին ծակելով ցցվում էին դուրս։ Եվ այժմ թեպետ մոտ մեկ տասնյակ տարի էր անցել ամուսնության օրից, բայց Թելոն շարունակում էր պահպանել իր հպարտ կեցվածքը և

գրավել ամենքի ուշադրությունը։ Գրեթե բոլոր ուխտավորները նրան ճանաչում էին։ Թելոն քայլում էր ուղիղ, ձեռնափայտը թեք դրությամբ երկու ձեռքով մեջքի վրա պահած։ Վերին աստիճանի համաձակ էր և զվարճաբան։

Մի երեկո, Մուշից Բերդակ վերադառնալիս, Թելո Մեսրոպը դաշտի մեջ մի աքաղաղ է բռնում։ Երբ մոտենում է տանը, աքաղաղը զանազան ձայներ է հանում և թռչում-գնում է։ Թարգմանչաց վանքի վանահայրն ասել էր, թե դա սատանան է եղել, որը աքլորի կերպարանք առնելով, կամեցել է մոլորեցնել պարզամիտ շինականին։ Այդ լուրը ավելի հռչակել էր Թելո Մեսրոպի անունը, հասնելով մինչև ոստիկանապետի ականջը։ Ամենքն էլ ցանկանում էին տեսնել այդ քաջասիրտ շինականին, որ գրկել էր աքլորի երևույթ առած սատանային։

Թելո Մեսրոպն իր մարտական վարպետ խաղով արդեն հաղթել էր վեց հոգու և մաքառում էր հերթական մրցակցի հետ։ Նա ձախ ձեռքով ծանր վահանը կրծքի առաջ պահած, աջով մահակի ծայրը անվրեպ նշանառությամբ ուղղում էր հակառակորդի կրծքին, թևերի տակ, գլխին, պարանոցին։ Ապա նա յուր հարվածն ուղղեց սխոյանի գագաթին, նպատակ ունենալով գդակը գլխից թռցնել առանց նրան մարմնական վնաս պատճառելու։ Մեկ, երկու, և հակառակորդի գլխանոցը սրընթաց հարվածով օդը բարձրացավ։ Պարտությունը կատարյալ էր։

— Կեցցե՛ Թելո Մեսրոպը։

— Ուռա՜ բերդակցի Թելո Մեսրոպին,— աղաղակում էր ժողովուրդն այս ու այն կողմից։

Կարգ էր՝ յուրաքանչյուր մրցությունից հետո բազմության ներկայությամբ պետք է բարձրաձայն հայտարարվեին հաղթողների և պարտվողների անունները։

— Քանի՞ հոգի եղավ,— հարցրեց Թելոն, դիմելով դատավորին, որին կոչում էին Փղորկվա Կարո։ Սրա պաշտոնն էր հետևել խաղին և մատների վրա պահել պարտվողների հաշիվը։ Երբ ամեն անգամ, որևէ մեկը դուրս էր գալիս ասպարեզից, նա յուր մեկ մատը ծալում էր։

— Յոթ հոգի,— ասաց դատավորը, ձախ ձեռքի մատնեմատը ծալելով ճկույթի կողքին։

— Ասա՛ անունները։

Փղորկվա Կարոն, որ մի քանի քայլ ետ էր կանգնած հռչակավոր փահլեվանից, անմիջապես առաջ եկավ.

— Առաքելոց վանքի բակում բերդակցի Թելո Մեսրոպի հետ մրցության մտնելով մարտական վահանախաղի մեջ, պարտվեցին հետևյալ մարդիկ. նախ և առաջ պարտվեցին առնիստա Ընկնավոր Մանոն և Մտքամոլոր Առաքելը։ Երրորդ և չորրորդ զարկին չոքեցին արուքցի Խոշե Իսոն և ծղակցի ածդահա Բաղդասարը։ Ապա իրար ետևից գլխկոնձի եկան խաագեղցի Արջ Հլղաթը, Բաղլվա Միսակը և Ալիշնա Ազոն։

— Բավական է, հաշիվը պարզ է, հերթը ո՞ւմն է,— գոչեց Թելո Մեսրոպը, հենվելով իր մահակին և աչքը բազմության վրա հաղթականորեն աջ ու ձախ ոլորելով։

Հանդիսականները լուռ էին։

— Հը, երևի դո՞ւ կուզես ուժդ փորձել,— դիմեց նա Աստուրին, որ դաշտադեմցի Գևորգի մոտ կանգնած և իր հաստ ձեռնափայտին հենված, ամենայն հետաքրքրությամբ դիտում էր մրցության տեսարանը։

— Ի՞նձ հետ կուզես մրցվել,— հարցրեց խոդեդանը։

— Կուզեմ,— եղավ Թելոյի հաստատակամ պատասխանը։

Բազմությունը մեկ մարդու պես իր հայացքն ուղղեց զոլավոր անդրավարտիք և սև աբա հագած սասունցուն։

— Որ էդպես է, մրցվենք։

Այս ասելով, Աստուրը գդակը ուղղեց գլխի վրա և համարձակ քայլերով նետվեց մեջտեղ։ Նա կռացավ գետնից վերցրեց վերջին պարտվածի մահակն ու վահանը և գլխով դատավորին նշան արավ՝ սկսել։

Փղորկվա Կարոն մոտեցավ, իմացավ նրա անունը և աջ ձեռքը վեր բարձրացնելով, ազդարարեց մրցության սկիզբը։

Ամենից առաջ խոդեդանը հեռվից մի ոստյուն գործելով, դիպուկ նշանառությամբ հակառակորդի գդակը այնպիսի ուժգնությամբ թռցրեց նրա գլխից, որ Թելոն ինքն էլ չկարողացավ հետևել նրա թռիչքին։ Գլխանոցը բարձրացավ օդի մեջ և արևելյան պարսպի վրայով գնաց ընկավ Մովսես Խորենացու գերեզմանի վրա։

— Պատմիչի գերեզմանի վրա ընկավ,— միաբերան գոչեցին Մտքամոլոր Առաքելն ու Ընկնավոր Մանոն պարսպի ետևից։

Փղորկվա Կարոն, որ պատրաստվում էր ձախ ձեռքի միջնամատը ծալել մատնեմատի և ճկույթի կողքին, հանկարծադեպ եղավ։ Մինչդեռ նա պատրաստվում էր ցատկել պարսպի վրա, որ գդակը բերի, Քեռի Վարդանը, գլխարկը Խորենացու տապանաքարի վրայից թիակի պոչով նետեց բակի մեջ։ Դատավորը վերցրեց այն և, թափ տալով, դրեց Թելո Մեսրոպի գլխին։

— Շարունակենք խաղը, թե՞ սրանով ավարտենք,— հարցրեց Փղորկվա Կարոն, նկատելով, որ հետագա ընթացքը ոչ մի լավ բան չէր խոստանում օրվա հերոսի համար։

— Շարունակե՞նք,— ոգևորությամբ գոչեց Մեսրոպը։

— Թող շարունակեն,— աղաղակեց բազմությունը ծափահարությամբ։

Փղորկվա Կարոն մոտեցավ Թելո Մեսրոպին և նրա ականջին ասաց.

— Դու չես կարող էս սասունցուն հաղթել, եկ հրաժարվիր խաղից։

— Իսկ եթե հաղթեմ, ի՞նչ կխոստանաս ինձ,— բարձրաձայն գոչեց Թելոն, մի վիրավորական հայացք նետելով դատավորի վրա, որ համարձակվում էր անվստահությամբ վերաբերվել իր ուժերին։

— Եթե դու էդ սասունցուն հաղթես, ես էս բազմության առաջ խոստանում եմ քեզ շալակելով էստեղից մինչև ձեր գյուղը տանել։ Համաձա՞յն ես։

— Համաձայն եմ,— ասաց Թելոն։

Դրանից մեկ տարի առաջ Թելոն Փղորկվա Կարոյին շալակել էր Թարգմանչաց վանքից մինչև Մուշ քաղաք։ Ահա թե ինչու նա ուզում էր, որ այս անգամ, գոնե, Փղորկվա Կարոն իրեն շալակի մինչև Բերդակ՝ այդ ընդհանուր բազմության ներկայության։ Գոմսա Մելիքը, Զուլումաթ Սմբատը և իրենց մարդիկ քահ-քահ ծիծաղում էին՝ նստած Դավիթ Անհաղթի գերեզմանի վրա, իսկ ժողովուրդն ուժգին ծափահարում էր։

— Իսկ եթե չհաղթես, դո՞ւ ինչ ես խոստանում ինձ,— հարցրեց Փղորկվա Կարոն։

— Եթե չհաղթե՞մ...

— Այո, եթե չհաղթես,— կրկնեց դատավորը առաջ գալով։

— Եթե չհաղթեմ, մի ավանակ ունեմ տանը, քեզ կտամ։

— Ո՞ր ավանակը։

— Վա՜յ, տնաշեն, ինչո՞ւ, դու մեր մառնիկա իշուն չգիտե՞ս,— բացագանչեց Թելոն՝ զարմացած նայելով դատավորին։

— Խոսքը գրաստի՞դ մասին է։

— Մեր անբան ավանակի, որով Միրնկատարից սարի ավել եմ տանում Մուշ։ Էշը վատ կենդանի չէ։ Քրիստոսը նրանով է Երուսաղեմ գնացել։

— Հաստատ՝ տալի՞ս ես։

— Տալիս եմ,— ասաց Թելոն։

— Երդվի՛ր։

— Երդվում եմ էսքան մարդու առաջ, որ եթե էս սասունցին ինձ հաղթի, ես իմ ավանակը կտամ Փղորկվա Կարոյին։ Ամոթ է մի էշի համար ձեռքը տանել բեղին, բայց իմ գրաստը մի արաբական ձի արժե։— Իբրև գրավական իր տղամարդկային խոսքի, Թելո Մեսրոպը բազմության ներկայությամբ պոկեց իր ընչանցքից մի մեծ մազափունջ և մեկնեց Փղորկվա Կարոյին՝ ասելով.

— Պահի՛ր։

Դատավորը մազափունջը ցույց տվեց ժողովրդին և, մի կտոր շորի մեջ փաթաթելով, դրեց ծոցը։

Խոդեդանը, որ արդեն գրավել էր հանդիսականների համակրանքը, անվրդով սպասում էր մրցության վախճանին։

— Դե սկսե՛նք,— գոչեց Փղորկվա Կարոն ետ-ետ քաշվելով և ասպարեզը թողնելով երկու ախոյաններին։

Թելո Մեսրոպը նախ ոլորեց իր հռչակավոր բեղերը, մի հատ ժժխեց իրեն, փնչաց, մռնչաց և, ետ քաշվելով, ամբողջ թափով նետվեց դեպի հակառակորդը՝ իր զենքերն օդում շողացնելով։

Ասատուրը ետ մղեց նրա հարվածը և անցավ հարձակման։ Չէր անցել ընդամենը մի կարճ միջոց, երբ Թելո Մեսրոպը պարտված տապալվեց գետին, և սասունցին մի ձեռքով վահանը պահած, մյուսով ծանր մահակը սեղմեց պարտվողի կրծքին, ինչպես լինում է պատերազմի դաշտում։ Հաղթողի հարվածից և պարտվողի անկումից գետինն այնպես թնդաց, որ վանքի զանգակատան քարե սյուներին թառած բոլոր աղավնիները երկինք թռան։

— Հիմա կսպանեմ,— գոչեց Խոդեդանը, սպառնագին կռանալով Թելո Մեսրոպի կրծքին, ձախ ոտքը առաջ մղած, աջը՝ ետև։

Բարձրացավ փոթորկալի ծափահարություն։ Դաշտադեմցի Գևորդը և Փղորկվա Կարոն մոտենալով՝ սասունցուն ետ մղեցին

Թելո Մեսրոպի կրծքից։ Ասատուրը դեմքը շուռ տվեց և տեսավ թե ի՛նչպես վանքի վրայով սլանում էր հավքերի երամը։ Բազմությունը ոգևորությամբ ծափահարում էր, իսկ բոլորից բարձր ու խանդավառ ծափահարում էին Գոմսա Մելիքը, Զուլոմաթ Սըմբատը, Ընկնավոր Մանոն, Մտքամոլոր Առաքելը, Կայծակ Պետոն ու Սեթոն և Քեռի Վարդանը, որոնք թառել էին վանքի հյուսիսային պարսպին և ուշադրությամբ դիտում էին տոնահանդեսի վերջին տեսարանը։

Երբ բազմությունը լռեց, Փղորկվա Կարոն հպարտությամբ ոլորեց իր շեկ բեղերը և առաջ գալով հանդիսավոր ձայնով ազդարարեց.

— Թարգմանչաց վանքի բակում բերդակցի Թելո Մեսրոպին, որ հաղթել էր յոթ հոգու, պարտության մատնեց արիանոքցի հովիվ Խոդեդանը։ Հարվածից գետինն էնպես թնդաց, որ զանգակատան աղավնիները օդը թռան։

Մրցությունը ավարտվեց։

ԱՍԱՏՈՒՐԸ ԳՆՈՒՄ Է ԳԵԼԽԵՂԴ ՇՆԵՐ ԲԵՐԵԼՈՒ

Երկրորդ տարին էր, որ Խոդեդանը ապրում էր Սև սարում։ Նա ընտելացել էր բռնաշենցի հովիվների նիստ ու կացին, նրանց բնավորությանը և սովորություններին։ Ցերեկները հոտի գլուխն անցած թափառում էր զով անտառների մեջ, իսկ գիշերները Օնեի և Ստեփանի հետ հափշտակությամբ ոնկնդրում էր հովիվ Տոնեի հրաշալի խաղերը։

Հաջու ոչխարը բազմանում էր, իսկ հոտի շները ծերացել էին։ Ասատուրը ամենայն ջանք գործադրում էր նրանց լավ խնամելու համար, բայց իզո՞ւր։ Նրանք ատամնաթափ էին եղել, խրոպոտ էին հաչում, մի քանիսը կուրացել էին և այլևս սարսափելի չէին հաճախակի երևացող գայլերի համար։

Մի օր՝ ցերեկով, Ավեսի Հաջին զինված այցելության գնաց իր հովիվներին։ Խոդեդանը հայտնեց նրան, որ շները լավ չեն հաչում, գայլերը մեծ վնաս են պատճառում հոտին։

— Թույլ տուր գնամ գելխեղդ շներ բերելու ոչխարիդ համար, աղա,— առաջարկեց Ասատուրը։

Նկատելով նորեկ հովվի հոգատարությունն իր խաշնի վերաբերմամբ, Հաջին անմիջապես կարգադրեց, որ նա շուտափույթ ճանապարհ ընկնի նոր շներ բերելու։

— Ո՞ւր ես գնալու,— հարցրեց քուրդը։

— Բուլանուխի կողմերը։

— Տես, որ լավ շներ բերես,— զգուշացրեց նրան տերը։

— Անհոգ կաց, աղա, էնպիսի ընտիր շներ բերեմ, որ Բրոնաշենում ոչ ոք չունի։ Ես մանուկ հասակից հայտնի շուն պահող եմ եղել։ Մոտկանում բոլոր հովիվները գիտեն ինձ։

— Որ էդպես է, շտապիր։ Ես եկա, որ քեզ ու Ստեփանին տանեմ իմ արտերը քաղելու, բայց շների խնդիրը այժմ ավելի կարևոր է։ Վաղը ճանապարհ ընկիր։

Հետևյալ առավոտ Խոդեդանը, հոտից վերցնելով հիսուն ոչխար, ուղևորվեց դեպի Բուլանուխ։ Այդ վայրի քրդերի շները հռչակված էին Մուշի կողմերում։ Դեռևս Աստվածածնի լեռների վրա Շնկոն խորհուրդ էր տվել նրան գելխեղդ շներ առնելու դեպքում գնալ այդ շրջանի Կուշտիան գյուղը, Զաշան բեկի մոտ։

Ստեփանն իր հորեղբորը ուղեկցեց մինչև Դավթի քարը և վերադարձավ։

Մոտկանցի հովիվը առաջին անգամն էր տեսնում գեղեցիկ Տարոնը։ Հանկարծ նրա ականջին հնչեց լեռն ի վեր ելնող մի խումբ աղջիկների հրաշալի երգը.

Մշո սարեր մշուշ է,
Իր հողն ու ջուրն անուշ,
Ի՞նչ կանեմ ես դըրախտը,
Տարե՛ք ինձի Մուշ։

Դրանք դաշտի բանջարքաղ աղջիկներն էին, որ գնում էին Սև սար լեռնային բանջարներ ու ծաղիկներ ժողովելու։ Որքա՜ն գեղեցիկ, որքա՜ն հարազատ հնչում էր այդ երգը հայրենի հողի վրա։ Ասատուրը աչքերով երկար որոնեց նրանց։ Ահա վերջապես երևացին գեղջուկ աղջիկները։ Թվով տասնվեց հոգի էին նրանք։ Ոմանք հագած էին կարմիր սոլեր, իսկ ոմանք ոտաբոբիկ էին։ Նրանց գույնզգույն շրջազգեստների վրա երևում էին կարմիր գոգնոցներ՝ հավաքած բանջարները պահելու համար։ Նրանցից երեքը թևանցուկ գնում էին առջևից։ Նեռևից ընթանում էին մյուս

կարմրաթուշ գեղջկուհիները, դարձյալ բաժանված խմբերի։ Բնության շքեղությամբ ու երիտասարդ հասակով արբած, նրանք երգելով ելնում էին հայրենի լեռան կանաչ կողերով։

Երբ աղջիկների խումբը ծածկվեց անտառի մեջ, Խոդեդանը կանգնեց Դավթի քարին և նայեց Մուշի հարթության վրա։

Այդտեղից իր առաջ բացվեցին հրաշալի տեսարաններ։

Ուղիղ դաշտի միջով հոսում էր Մեղրագետը։

Արգավանդ դաշտի հարավակողմում, արևմուտքից դեպի արևելք, երկարաձգված էր Տավրոսի շղթան՝ խութի անտառապատ լեռներով։ Արևելքի ուղղությամբ, Նեմրութ և Գրգուռ սարերի ետևից, դաշտի վրա փչում էր Վանա ծովի արգասաբեր զովությունը։ Հյուսիսի կողմից Մուշի դաշտը եզերված էր Բյուրակնի լեռներով։ Բուն դաշտում Սև սարը՝ ընդհատվելով Ալվառինջ և Բերդակ գյուղերի մոտ՝ իր տեղը զիջում էր Քանասարին։ Այդ լեռան ամենաբարձր գագաթից մի ժայռոտ լեռնաթև երկարելով կրնկաձև իջնում էր դեպի Մշո դաշտը, համանուն քաղաքը պարըսպելով շրջակա գյուղերից։

Այդ նշանավոր կրունկը կոչվում էր Ծծմակա Քիթ։

Գեղեցիկ է Մշո դաշտը։

Նայողի սիրտը թրթռում, հոգին վեհանում ու վերանում է այդ կախարդական պատկերի առաջ։ Բնության հազվագյուտ անկյուններից մեկն է դա, որի կողքով ոչ մի ճանապարհորդ չի կարող անտարբերությամբ անցնել։ Ամենուրեք գյուղական տանիքների, բարձր շինությունների և երկնասլաց բարդիների կատարներին երևում էին արագիլների բույներ։ Ամբողջ հարթությունը նման էր դեղին ծովի՝ կանաչ երիզներով։ Այստեղ ու այնտեղ լսվում էր Տարոնի ժրաջան շինականի գերանդու ջափյունը։

Ասատուրը իջավ լեռան ստորոտը և սկսեց ընթանալ դեպի խասգյուղ։ Սա Դաշտի ամենամեծ ավանն էր, որի անունը նա լսել էր դեռևս մանուկ հասակում։

Թոնիրների վառէջքի ժամանակն էր։ Թարմ լոշի բուրմունքը բռնել էր շրջապատը։ Զատվորները ցերեկվա կերակուրն էին տանում դաշտում աշխատողներին։

Խոդեդանը, ոչխարը զգուշությամբ վարելով, անցավ այդ հին ու հռչակավոր շենի միջով։

Շատ շուտով նա հասավ Բուլանուխի շրջանը՝ հին Հայաս-

տանի Հարք գավառը։ Նա մոտեցավ մի գյուղի, որ Շերվանշեխ էր կոչվում, և որը մի զարմանալի տեսարանով գրավեց իր ուշադրությունը։ Գյուղը շինված էր մի հարթ սարալանջի վրա։ Այդտեղից երևում էին մի կողմից Ձեռնակա սարը, մյուս կողմից՝ Բլեջանն ու Սիփանը։

Շերվանշեխի առջևով հոսում էր արևելյան Բինգյոլը, որն իր սկիզբն առնելով Բյուրակնի աղբյուրներից, այդ գյուղի տակով գնում-թափվում էր Մուրադ գետի՝ Արածանու մեջ։ Տներից մեկի պատշգամբում, որ կախված էր Բինգյոլի վրա, կանգնած իլիկ էր մանում մի պառավ կին։ Նրա գլխի, ուսերի, մեջքի վրա թառել էին բազմաթիվ ճնճղուկներ։ Ուղևորին տեսնելով նա մտավ թոնրատուն և մի քանի լոշ վերցնելով ուղարկեց նրան։

— Ո՞ւր ես գնում, լաո,— հետաքրքրվեց պառավը։

— Գնում եմ գելխեղդ շներ բերելու։

— Ո՞ւմ մոտ ես գնում։

— Ջաչան բեկի մոտ։

— Լավ շներ ունի։ Կուշտիանի ճամփեն էդ է,— ձեռնացույց արավ պառավը դեպի արևելք։

— Իսկ դու ո՞վ ես, նանե,— հարցրեց Ասատուրը։— Երևի դարիբության մեջ մարդ ունե՞ս։

— Որդիս ֆիդայի է, լաո։

— Անունն ի՞նչ է։

— Զուլումաթ Սմբատ։ Նրա հոր գլխին օսմանցիք երկաթե վառված թաս դրեցին։ Սերոբ Աղբյուրի, Հրայրի և Գևորգ Ջաուշի ընկերն էր։

— Ես քու որդուն տեսել եմ, նանե,— ձեռնափայտին հենվելով ասաց Խոդեդանը։

— Ո՞րտեղ։

— Թարգմանչաց վանքում։

— Ե՞րբ տեսար։

— Սրանից մոտ երկու տարի առաջ։

— Գոմսա Մելիքին էլ տեսա՞ր։

— Երկուսին էլ տեսա իրար վողքի նստած։

— Երանի աչքերիդ, լաո,— հառաչեց պառավը, աչքերը սրբելով։

Երբ նա իր տեղը վերադարձավ, ճնճղուկները ետ եկան և

լցվեցին նրա գոգը, թառեցին նրա գլխի և ուսերի վրա։ Այդ տեսարանն այնքան գրավիչ էր, որ Խոդեդանը ստեպ-ստեպ ետ էր դառնում ստուգելու՝ ճնճղուկները գնացին, թե՞ մնացին թառած պառավի վրա։

Կուշտիան կոչվող քրդական գյուղը, դեպի ուր դիմում էր լեռնական հովիվը, շինված էր Սև և Կարմիր սալաքարերի միջև, մի ապառաժոտ և անդնդախոր կիրճում։ Այդտեղ և նրա հարևան գյուղերում ապրում էին շատ դարեր առաջ բռնությամբ մահմեդականություն ընդունած հայեր, որ պատկանելիս են եղել Քուշանաց ցեղին։ Նրանք պահպանել էին հայկական շատ սովորություններ։ Այդ ամբողջ գյուղը, որն ուներ մոտ հարյուր հիսուն տուն, պատկանում էր քուրդ ցեղապետ Զաչան բեկին։

Ցեղապետի քյոշկը բարձրանում էր մի քարաժայռի վրա։ Նա իր դիրքով և արտաքին տեսքով հիշեցնում էր քրդական հին ամրոցներից մեկը։ Տունը շինված էր ամբողջապես սպիտակ քարից և երեք կողմից շրջապատված էր անանցանելի ժայռերով։ Առաջամասը, որ նայում էր թեքությամբ իջնող մի հարթության վրա, եզերված էր սալաքարե հնամաշ պարսպով, որի մեջտեղը մի դրոնակ կար։

Ասատուրը ձեռքի մահակով երեք անգամ զարկեց թակը։ Շատ չանցած՝ երկաթե փոքրիկ դարբասը բացվեց, և շեմքին երևաց սպիտակ քոլոզով մի քուրդ, կեռ դաշույնը կողքին կապած։ Նրբ սպասավորը իմացավ, որ եկվորը հովիվ է և իր տիրոջն է ուզում տեսնել, նրան ներս հրավիրեց։

Ոչխարներին թողնելով պարսպից դուրս, Խոդեդանը մտավ մի քառակուսի բակ, որի մեջտեղը մի տերևախիտ ընկուզենի կար։ Ընկուզենու ընից բխում էր մի սառնորակ աղբյուր։ Աղբյուրի, մոտ, նախշուն խալիչայի վրա, թավշյա փափուկ բարձերին թիկն տված, հանգչում էր ծերունի բեկը։ Նրա քոլոզի շուրջը հյուսված էին տարբեր գույնի գեղեցիկ փուշիներ, որոնց ծոպերը երկարում էին մինչև ուսերը։ Կրկնակ արխալուղների վրա նա հագել էր ոսկեգույն կլապտոնով եզերված կապտավուն չուխա։

Ցեղապետի աջ ձեռքի բոլոր մատները և ձախ ձեռքի ցուցամատը զուգված էին արծաթյա և ոսկյա մատանիներով։ Գոտուց քարշ ընկած ոսկեպատյան խենչարը հանգչում էր ճտավոր ոտնամանների վրա։ Բարձերից մեկին ընկած էր նրա գեղաքանդակ

ծխատուփը։ Սաթե ծխամորճի ծուխը օղակներով բարձրանալով ցրվում էր ընկուզենու կանաչ ճյուղերի մեջ։

Օտարականին տեսնելով, քուրդը ուղղվեց և ընդունեց նստած դիրք։ Փոխադարձ ողջույններից հետո Զաչանը թույլ տվեց, որ եկվորը խոսի։ Ասատուրը խոնարհաբար գլուխ տվեց և ասաց քրդերեն.

— Ես Բռնաշենի Արինոք գյուղի Նասրի տան հովիվն եմ, բեկ։ Իմ տերը քեզ շատ բարև է անում։

— Անունդ ի՞նչ է։

— Խոդեդան։

— Ինչո՞ւ համար ես եկել։

— Եկել եմ գելխեղդ շներ տանելու։ Ինձ Հաջի աղան է ուղարկել։

— Քանի՞ ոչխար ես բերել։

— Հիսուն։

— Տաս հատ գամփռ տվեք սրան,— կարգադրեց քուրդը։ Ապա ավելացրեց.— իմ փոխադարձ ողջույնը հաղորդիր Հաջի աղային։ Նա իմ լավ բարեկամն է։— Այս ասելով ծերունին վերստին թիկն տվեց բարձերին և սկսեց ծխել։

Ասատուրը երկու զինված քուրդ սպասավորների ուղեկցությամբ, որոնցից մեկի անունը Ջնդո էր, մյուսինը՝ Ուսե, մեկնեց դեպի ցեղապետի գազանանոցը։ Այդ հսկայական որջը գտնվում էր նրա ամրոցի ետև, արևավառ և լերկ ապառաժների մեջ։ Դրանք թվով երեսունի չափ ընդարձակ այրեր էին, որոնցից յուրաքանչյուրի մեջ պահպանվում էին տասը-տասնհինգ շուն իրենց բազմաթիվ լակոտների հետ։ Օրվա այն պահն էր, երբ գազանանոցում մեծ աշխուժություն էր տիրում։ Մի տեղ հինգ քրդուհիներ տակերից կաթ էին լցնում որջերի առաջ փորված սալաքարերի մեջ։ Ներսունի չափ շղթայակապ շներ գոմռալով լակում էին փրփրալի կաթը։ Մի այլ տեղ ծառաները նոր բերված գայլաձագեր էին շպրտում երկու ամսական լակոտների առաջ։ Քարափներից մեկում քուրդ դաշունավոր երիտասարդները կտրում էին փոքրահասակ լակոտների ականջները և պոչերը։ Կտրված ականջները տալիս էին նրանց ուտելու, որ ավելի կատաղի լինեն։ Ավելի վերը՝ մի խումբ շների վարժեցնում էին անդունդի վրայով թռուցիկներ գործելու և կատաղի հաչելու եղանակներին։

Խոդեդանը ակնապիշ դիտում էր այդ գազանային տեսարանը։ Նա կատաղի շներ շատ էր տեսել, բայց առաջին անգամն էր ականատես դառնում գելխեղդ շների այդպիսի մի զարհուրելի և հետաքրքիր որջի։

Փոխանակությունը կատարվեց։

Կեսօրից անց էր, երբ Ասատուրը դուրս եկավ ցեղապետի գազանանոցից տասը շղթայակապ գամփռներով, որոնց տեսքից անցորդներն ահ ու դողի մեջ էին ընկնում։ Նրանց բերանների վրա երկաթե դնչկալներ էին դրված։

Ջաշանի սպասավորները՝ Ջնդոն և Ուաեն, իրենց հյուրին ուղեկցեցին մինչև հարևան հայկական գյուղը և վերադարձան։

Ճանապարհին Խոդեդանը շներին անուններ դրեց։ Առջևից ընթացող կատաղի շանը, վզի շուրջը սպիտակ երիզ ունենալու համար, կոչեց Դողո։ Երկրորդ շանը, որ իր մորթու վրա աստղանման բծեր ուներ, անվանեց Բինգյոլ։ Երրորդ շան աչքերը շատ նման էին Շաբաթ աղի խորամանկ աչքերին։ Հովիվը նրա անունը Շաբո դրեց։ Չորրորդին սև բերանի համար կնքեց Դավրոշ։ Հինգերորդի անունը դրեց Մրո և այլն։

Գիշերը Ասատուրն անցկացրեց Բուլանուխի Լիզ ավանում, իսկ առավոտ վաղ, Քոսուր սարը անցնելով, Աբուլ Բուհարի ձորով մտավ Մշո դաշտ։

ԴԱՇՏԻ ԳԱՅԼԸ

Առաջին մեծ գյուղը, որ Խոդեդանը անցավ, Ցրոնքն էր։ Այդ գյուղից հետո նա հասավ Հացիկ։ Այստեղ հովիվը տեսավ ոսկրոտ կազմվածքով մի գեղջուկ տղայի, որ ծայրամասի տան քարե ցանկապատին հենված արտասվում էր։ Գլուխը մի պուտուկի չափ էր։ Պատանին հագել էր մի քրքրված վերնաշապիկ և կարկատված անդրավարտիք։ Մեջքին կապել էր ուռենու ոլորած շիվ՝ իբրև գոտի։ Ծակ գդակի տակից երևում էին գռուզ մազերը։ Ոտքերը մերկ էին և ուռած։

— Ի՞նչ է պատահել, ձագուկ,— հարցրեց Ասատուրը, շներին կանգնեցնելով ճանապարհի եզրին, մի ծառի տակ, և մոտենալով։

— Աղեն վարձս չի տալիս։

— Ո՞վ է աղեդ։

— Գոմեշ Մխոն։

— Ի՞նչ ես անում նրա մոտ։

— Փորմշակություն։ Գարնանը հորիկ եմ քշում։ Կալոցի ժամանակ հունձը դաշտից տեղափոխում եմ գյուղ։ Գիշերները հրսկում եմ ցորնի բարդոցները։

— Անունդ ի՞նչ է։

— Թորգոմ։

— Ես փորմշակի կարգը լավ գիտեմ, լաո։ Մինչև մեկ տարի փորմշակին վարձ չի տրվում։ Մեկ տարուց հետո տերը պարտավոր է նրան երկու շնիկ ցորեն տալ, մեկ շապիկ և մեկ վարտիք, բացատրեց Ասատուրը։

— Իսկ իմ տերը ինձ ոչինչ չի տվել։

— Ուրեմն հին պա՞տք է։

— Երեք տարվա։ Պուճուր ախպերս վարդախտով (կարմրբուկ) հիվանդ է, ուզում եմ գնալ մեր տուն, մի կոտ ցորեն չի տալիս, որ հետս տանեմ։

— Ո՞ր գյուղից ես։

— Վարդով։

Մինչդեռ Թորգոմը արտասուքով պատմում էր Ասատուրին իր ցավալի պատմությունը, դուռը բացվեց և գոռգոռալով դուրս պըրծավ Գոմեշ Մխոն։ Սա եզան աչքերով, կարմրադեմ, լիքը մարմնով մի տղամարդ էր, որ բրդե անդրավարտիքը խոնջանով փոնթել էր մեջքի շուրջը։ Վերևից հագել էր կանաչ ելակ՝ առանց թևերի։

— Տո գեռնիմուտ,— Թորգոմին դիմելով ասաց նա,— իմ տան մեջ կուշտ-կուշտ կղխտվես ու հիմա էլ ինձնից վա՞րձ կուզես։ Քեզ պես շներ ես տարին քսան փորմշակ կպահեմ։ Անոթի չսատկեցիր քիչ չէ, վա՞րձ կպահանջես։ Նա հարձակվեց, որ բռունցքով հարվածի խեղճ մշակին, բայց Խոդեդանը նրա բազուկը բռնեց՝ ասելով.

— Ե՛տ պահիր ձեռքդ։

— Ձեռքը ետ պահելու բա՞ն է, ախպեր։ Էս տղան հոգիս հանեց։ Կանաչ մեռոն (հավատա), քիչ մնա քեզ թյուրքի փաշայի ձեռքը հանձնեմ,— սպառնաց աղան։

— Դու թյուրքի փաշայից ինչո՞վ ես պակաս։

— Զե՛նդ, նեխուկ քոթոթ։ Բա տեղը չէ՞, որ քեզ գցեմ ոտքիս տակ մի լավ տրորեմ։

— Քի՞չ ես տրորել։ Երեք տարի ձրի եմ աշխատել քո դռան։

— Աշխատել ես, իմ հացն ես կերել։ Մի փոր հաց չէ՞ քո բաժինը, ախպեր. կեր ու դատիր, էլ ո՞ւր ես անցող-դարձողին գանգատ անում։

— Բա դու խիղճ չունե՞ս։ Ախպերս վարդախտով հիվանդ է, տանը հաց չկա, մի կոտ ցորեն չես տալիս, որ տանեմ մերոնց։

— Ո՞ւմ տամ, ախպեր։ Քե՞զ տամ, օսմանցո՞ւն տամ, բեկի՞ն տամ, տերտերին ու վանքի՞ն տամ, ո՞ր մեկին տամ։ Ախր ես էլ մեղք եմ։ Ով գալիս է՝ իմ սեղանից ու ամբարից է քաշում, իմ կովի պտկին է բերանը դեմ տալիս։ Եվ ի՞նչ է իմ ունեցվածքը. քսան լուծ եզ, ութսուն մատակ, հարյուր կով, քառասուն գոմեշ, հազար ոչխար, հինգ հատ ջորի, վաթսուն հինգ արտ...

— Քի՞չ է,— նկատեց Թորգոմը։

— Բա շա՞տ է,— նեղացած խոսեց Գոմեշ Մխոն։— Իսկ որ Ավզուտա Մալխասի նախիրը տեսնես, ի՞նչ կասես։ Ամեն ինչով ինձնից երեք անգամ շատ է։ Իր մեկ թոնդրան վրա տասներկու խաչերկաթ է կարմրում։

— Իսկ ձեր թոնդիրները պակա՞ս են։ Ձեր պապոնց թոնդրան մեջ երկու գոմեշ կոլորտի, էնքան մեծ է։

— Տղա, լաո, քեզ մի հարց տամ,— որ իմ թոնդիրը պաղի, դու կտաքանա՞ս։

— Չեմ տաքանա, բայց էսքան էլ պաղ չենք լինի։

— Ուրեմն մե՞նք ենք ձեր խեղճության պատճառը։

— Իհարկե դուք եք։ Եթե դուք չլինեք, աշխարհի վրա հավասարություն կլինի,— պատասխանեց փորմշակը։

— Հավասարությո՞ւն։ Երբ քո բոյը հավասարվեց իմ բոյին, էն ժամանակ հավասարություն կլինի,— քմծիծաղով նկատեց Գոմեշ աղան՝ ահագին հասակով կռանալով յուր փորմշակի վրա։— Տղա լաո, մուկը նրա համար է, որ նրան կատուն ուտի...

Ասատուրը կարկամել էր. նա իր տեսածին չէր հավատում։ Նրա աչքի առաջ իրար էին բախվում կարիքն ու լիությունը։ Դեմ առ դեմ կանգնած էին մի թշվառ հայ մշակ և մի ունևոր ու անխիղճ հայ հողատեր։ Նա պատրաստ էր այդ րոպեին ձեռքի գավազանով վայր տապալել այդ ցածոգի մարդուն, բայց զսպեց

իրեն։ Այդ միջոցին, իլիկ մանելով, պատի տակով անցավ մի պառավ, որ ծանոթ էր Թորգոմի պատմությանը։

— Հայ քրիստոնյա է, լաո, անմամ, անպապ փորմշակ է, մի երկու կոտ ցորեն տուր, թող տանի իր տուն։ Ախպերը վարդախտով հիվանդ պառկած է։ Իր հախն է ուզում, լաո, ավել բան չի ուզում քեզնից,— ասաց նա դիմելով Գոմեշ Մխոյին։

— Ոչ մի կոտ էլ չեմ տա։

— Ո՛չ, պետք է տաս, ամբողջ հասանելիքը պետք է տաս,— վճռաբար միջամտեց Խոդեդանը, որ մինչև այդ լուռ էր։

— Դու ո՞վ ես, ախպեր,— հարցրեց աղան խեթ-խեթ նայելով անծանոթ ուղևորին։

— Ճամփորդ մարդ եմ։

— Ճամփորդ ես, գնա քու ճամփեն, ինչո՞ւ կխառնվես իմ ընտանեկան գործին։

— Սա ընտանեկան գործ չէ, սա բոլորիս գործն է։ Դու որբին զրկում ես,— նկատեց հովիվը։

— Խղճո՞ւմ ես սրան։ Թե խղճում ես՝ քեզ լինի, ախպեր։ Կանաչ մեռոն, ես կշտացել եմ։ Մշակներ շատ ունեմ։ Մի քանիսն էլ քուրդ են. սրա գործն էլ նրանց վրա կդնեմ։

— Ուրեմն վարձը չե՞ս տալիս։

— Ի՞նչ վարձ, փորմշակ է, պրծավ-գնաց։ Երեք տարի ինձ մոտ իր փորով հաց է կերել։ Թե կուզես իմանալ, մի բան էլ ինքն է պարտական ինձ։

Ասատուրի զայրույթը հասավ իր գագաթնակետին։ Բարկությունից նրա դեմքի մկանները խաղում էին։ Մի իսկական գայլ էր կանգնած իր առաջ, մի անկուշտ, պատառոտող գայլ։

— Տեսնո՞ւմ ես էս շներին։ Տաս հատ են։ Բոլորի դնչկալները կարձակեմ ու քեզ էս բոպեիս կտոր-կտոր անել կտամ,— սպառնաց հովիվը։

Գոմեշ աղան, որ մինչև այդ բոլորովին չէր նկատել ճանապարհի մոտ կանգնած գամփռներին, նրանց ահարկու կերպարանքները տեսնելով, սկսեց դողալ։

— Ո՞ւր ես տանում դրանց։

— Արինոք։ Առաջին գելը դու ես, մինչև քեզ չուտեն, ես էստեղից հեռացողը չեմ։

— Ես գե՞լ եմ,— իրեն մատնացույց անելով հարցրեց Մխոն-

— Գել ես, որ մարդ ես ուտում։ Օրը ցերեկով ճանկել ես էս խեղճ գառնուկին ու լափում ես ճանապարհի վրա։

— Չլինի՞ թե դու սասունցի ես,— հարցրեց աղան, կասկածելի ժպտալով և ոտքից գլուխ չափելով Խոդեդանին։

— Սասունցի եմ։

— Դե, որ էդպես է, գնանք ինձ մոտ հաց կեր։ Սասունցիք քաջ ժողովուրդ են։ Լավ են կռվում օսմանցու դեմ։

— Ես քու հացին ձեռք չեմ տա, շուտ արա տղային ճամփու դիր։

— Լավ, մեկ կոտ կտամ։

— Ոչ, իր ամբողջ հասանելիքը պետք է տաս,— պնդեց Հովիվը։

— Կանաչ մեռոն, ծուռ է էս սասունցին։

— Քանի դեռ բոլորովին չեմ ծռվել, հաշիվը փակիր։ Թե չէ՞ վայ կտամ քեզ։

— Ի՞նչ կանես։

— Դատաստանդ իմ ձեռքով կանեմ։

— Ուրեմն ես գե՞լ եմ։

— Գե՛լ ես։

— Վա՜յ, ծուռ սասունցի։ Իսկապես որ ծուռ եք։ Բա թե՞ճապես բարի, հրեշտակ մարդուն կհամեմատեն գելի հետ։

— Դու գել չես, մարդագել ես,— ոտղեց Աստուրը։

— Գնա՜նք, գնա՜նք իմ տուն, հաց կեր։

— Ասում եմ, սրա հաշիվը փակիր,— պնդեց Հովիվը։

— Մեկ կոտից ավելին չեմ տա։

Խոդեդանը ոչինչ չպատասխանեց։ Նա արագ մոտեցավ իր գազաններին։

— Դե, ձեզ տեսնեմ, շներ, դաշտի մեջ մի մեծ գել է կանգնած։ Մինչև նրան պատառ-պատառ չանեք, ես ձեզ Սև սար չեմ տանի,— ասաց նա և առաջին երեք գելխեղդի դնչկալներն արձակեց։

Գոմեշ աղան շփոթվելով, փոխանակ տուն մտնելու, վախից բարձրացավ կտուրը։

Անծանոթ գամփռների մուտքը գյուղի մեջ ծայր տվեց այդ ավանի շների կատաղի հաչոցին։ Գելխեղդ շներն իրենց ճանապարհին խեղդելով մեկ-երկու շուն, թռան տանիք։ Աղան թռավ

հարևանի տանիք։ Շները ընկան ետևից։ Նա թռչում էր տանիքից տանիք և սարսափահար գոռում.

— Բռնիր շներիդ, թե չէ ինձ կուտեն։

— Ես էլ ուզում եմ, որ քեզ ուտեն,— հանգիստ բղավում էր Խոդեդանը ներքևից։ Տանիքներին խոտի դեզեր կային։ Գոմեշ Մխոն տափ արավ մի դեզի ետև։ Երբ շները հասան, նա հակառակ կողմով դուրս պրծավ և վազեց դեպի իր տունը։ Բայց Դոդոն, Բինգյոլը և Շաբոն հասան ետևից և ճանապարհը կտրեցին։ Ճանիքին մի մեծ դեզ կար։ Տեսնելով որ ճար չկա, գլուխը կոխեց դեզի մեջ և ծածկվեց խոտով։ Շները հաջոցով հարձակվեցին նրա վրա և սկսեցին ետևի ոտքերով խոտը ցրիվ տալ։ Դեզը փուլ եկավ։ Գոմեշ Մխոն վերևից խոտի դեզի հետ գլորվեց բակը։

Օրը ցերեկ էր և գյուղում ոչ ոք չկար, բացի մի քանի պառավներից ու մանուկներից, որոնք, շների հաչը լսելով, բարձրացել էին՝ տանիքները և զարմանքով նայում էին, թե ինչ է կատարվում գյուղում։

— Համաձայն եմ, արի ամբողջը տամ,— սարսափահար գոռում էր Գոմեշ աղան խոտի պատառների տակից։ Գելխեղդ շները կտուրից ցած թռչելով երեք կողմից շրջապատել էին նրան և հաչում էին ամենայն սաստկությամբ՝ ժանիքները սրած։

— Ուրեմն կտա՞ս փորմշակիդ վարձը։

— Մի բան էլ ավել կտամ, միայն թե շներիդ պահիր,— աղաղակում էր նա դիվահարի պես՝ իր մարդկային կերպարանքը կորցրած։ Նա պառկած էր խոտի պատառներին, ձեռքերը ամուր սեղմելով գետնին, կարեկցական հայացքը հովվին ուղղած։

Եվ ճիշտ այն պահին, երբ երեք ամեհի գամփռները, օդի մեջ ծառս եղած, պատրաստ էին պատառոտել գոմեշ Մխոյին, վրա հասավ Աստուրը և զսպեց նրանց։

— Մյուս անգամ մշակներիդ հանդեպ անգութ չլինես, թե չէ շների կեր կդարձնեմ քեզ,— սպառնաց հովիվը։— Ինչպես երևում է, դու մշեցի չես։

— Մշեցիք խղճով մարդիկ են, լաո, սա մշեցի չի։ Սրա պապերը պոռեցի են։ Դա հայտնի Գոմեշ աղաների ցեղն է, որ Բիթլիսի կողմից է եկել մեր գյուղ, Խոդեդանի ականջին մոտենալով փսփսաց իլիկավոր կինը։— Դրանց տունը մի գիշերվա մեջ երկու

գոմեշ է կերել. դրա համար էլ գոմեշ են կոչվում,— ավելացրեց պառավը։

Մի քիչ անց, Թորգոմը, ամբողջ երեք տարվա հասանելիքը մի ավանակի բարձած, ուղևորվեց Վարդով, իսկ Ասատուրը թեթևացած սրտով Հացիկից շարժվեց դեպի Քրդագոմ։

«Որտեղի՞ց լույս ընկավ իր գելխեղդ շներով»,— ինքն իրեն ասաց Գոմեշ աղան, դողալով և վիրավոր ինքնասիրությամբ երկար նայելով անծանոթ հովվի ետևից։

ԷՍ ԻՄ ԽՍՄԱԹՆ Է

Քրդագոմը շինված էր Ծծմակա Քթի դիմաց, Մեղրագետի աջ ափին։ Այդ գյուղի մեջտեղը մի բարձր հողաբլուր կար, որի վրա կանգնած էր մի հին զանգակատուն։ Շուրջը ոսկեփայլ արտեր կային, հանդամիջյան գեղեցիկ անցուղիներ։

Խոդեդանը իր ճանապարհին հանդիպում էր գյուղացիների, որոնք, սայլերի վրա երկար գերաններ բարձած, վայր էին իջնում խութա լեռներից։ Դրանք գլխավորապես Բուլանուխի և Մշո դաշտի բնակիչներ էին, որ իրենց շինարարական փայտը վերցնում էին Սև սարի թավ անտառներից։

Կեսօր էր։

Ասատուրը անցնում էր Մեղրագետի ափերով։ Կռունկների և արագիլների երամները հոտերի նման արածում էին հնձած մարգագետիններում և գետի շամբուտներում։ Թեպետ ամառը կիսվել էր, բայց կանաչության վրա դեռ իշխում էր այդ դաշտի ամենագունագեղ և հոտավետ ծաղիկը՝ յոթ աղբրանց արունը։

Ոչխարի փոխանակությունը գելխեղդ շների հետ հաջողությամբ էր ավարտվել։ Ճանապարհին նա, իր արդարացի միջամտությամբ, օգնել էր նաև մի հարստահարված փորմշակի, ահա թե ինչու Խոդեդանը ընթանում էր առաջ զվարթ տրամադրությամբ, աջ ու ձախ նայելով, երբեմն էլ նույնիսկ վազելով այս կամ այն արագիլի և կռունկի ետևից, որոնք, իր շներից ահաբեկված, ոստնում էին այս ու այն կողմ։

Նա մի պահ սկսեց մտածել շերվանշեխցի զարմանալի պառավի և նրա ճնճղուկների մասին։ Այդ միջոցին նրա ուշադրությունը գրավեցին մի խումբ հնձվոր աղջիկներ, որ շամբերի ետե-

վում պատսպարված լողանում էին Մեղրագետի մեջ։ Շատ մոտիկից լսվում էր ջրի ճղփոցը։ Նրանց մանգաղները դրված էին մի դեզի մոտ, որի կողքով աղբյուր էր հոսում։ Քաղվոր աղջիկներն իրենց մածնի և կերակուրների կճուճները դրել էին աղբյուրի սառնորակ ջրի մեջ՝ կանաչ դդմաճների տակ, որ լողանալուց հետո ուտեն։ Դեզի հովը ընկել էր աղբյուրի վրա։ Տեսարանը այնքան հմայիչ էր, որ Ասատուրը շներին կանգնեցրեց և երիտասարդի անզուսպ հետաքրքրությամբ սկսեց եղեգների միջով գաղտագողի դիտել լողացող աղջիկներին։

Քիչ հետո գեղջկուհիներն իրար ետևից շտապեցին ջրից դուրս գալ և հագնվել։ Գետի մեջ մնաց միայն մի հնձվորուհի, որն իր գեղեցիկ մարմնի շուրջը ալիքներ առաջացնելով, խաղում էր փրփուրների հետ։ Ընկերուհիները կանչում էին.

— Աղջի Բայա՜զ, դուրս եկ ջրից, աղջի, Բայա՜զ, դուրս եկ ջրից։

Խոդեդանին մի պահ թվաց, որ դա պատրանք էր, աչքի տեսիլ։

Նա դեզի ետևով մոտեցավ աղբյուրին։ Կճուճները, որոնց բերանները ծածկված էին սարեկներով, դրված էին կողք կողքի։ Բոլորի մեջտեղը մի կարմիր կճուճ կար։ Նրա ուռուցիկ կողի վրա նկարված էր մի երկարավիզ արագիլ, աջ ոտը վեր բարձրացրած՝ կանաչ եղեգների միջից։

— Էս լագլագով կճուճը իմ խամաթն է,— մրմնջաց Ասատուրը և, սարեկով ամանը վերցնելով, խիտ շամբերի ետևով շտապեց առաջ։ Նրա սիրտը հուզմունքից տրոփում էր։ Նրան թվում էր, թե ետևից բարձրաձայն կանչում էին.— փախցրե՜ց, սև սարեցին փախցրեց կճուճը։

Ծծմակա Քիթը հսկայական ստվեր էր տարածել Մշո դաշտի վրա։ Մի ինչ-որ երիտասարդ սայլապան, եզները դանդաղ քշելով, երգելով իջնում էր Մառնիկա սարից.

Հո՜վն ընկավ, հո՜վն ընկավ,
Սանամ կաքավ ձեռքես պրծավ
Ծովն ընկավ։

Հեռվում երևաց Դավթի քարը։ Ասատուրը սկսեց ելնել Սև տարով և դիմել դեպի Յոթակնանի աղբյուրը։ Հովիվը ճանապար-

հին տեսնում էր, թե ի՛նչպես կանայք ու աղջիկները աշխուժորեն ելումուտ էին անում անտառի մեջ։ Վերջալույսի շողերի տակ փայլում էր ամբողջ շրջակայքը։ Այդ տարի առատ գազպա էր իջել ծառերի վրա։ Խուլթեցի և դաշտեցի բնակիչները ձմռան պատրաստություն էին տեսնում։

Դավթի քարի վրա այդ օրը բանջարքաղ աղջիկներ էին նստել։ Ժայռի վրա ցաք ու ցրիվ երևում էին հյուսված բանջարների և կիսաթառամ ծաղիկների փնջեր։

Անուշ երեկո էր։

Խոդեդանը կանգ առավ և նայեց ետև։ Մեղրագետը կրկին գալարվում էր, բայց ոչ մի աղջիկ չէր երևում նրա եզերքին։

— «Բայա՜ղ»,— շշնջաց նա ինքնաբերաբար և այդ մեկ բառով ամբողջ Մշո դաշտը և իր սիրտը լցվեց։

Լուսնեղջյուրը դժգույն լուսավորում էր սաղարթալի անտառը, երբ Ասատուրը հասավ Իրիցանք և արձակեց գելխեղդ շների դնչկալները։ Տասը կատաղի գամփռներ ուժգին հաչոցով սասանեցին օդը։ Նրանց սարսափից Տոնեն, Ստեփանը և Օնեն կաղնու փչակի մեջ մտան։ Հետո դուրս եկան և Խոդեդանի հետ կերան խորհրդավոր կճուճի սերն ու մածունը։

— Ո՞րտեղից փախցրիր,— հարցրեց Տոնեն։

— Աղբյուրի ակից,— պատասխանեց մոտկանցին։

Հաջորդ օրը Արինոքում լուր տարածվեց, որ նորեկ հովիվը տասը հատ գելխեղդ շներ էր բերել, որոնք մի գիշերվա մեջ խեղդել էին տասնյոթ գայլ։ Հաջին տեղեկանալով այդ մասին, շների գլխավոր խնամքը Ասատուրին հանձնեց։ Միաժամանակ նա լուր ուղարկեց սար, որ Մոտկանից եկած հովիվը մտածեր իր ամուսնության մասին։

ՄԱՏԱՆՈՒ ԵՏԵՎԻՑ

Խոդեդանի վերադարձի երկրորդ օրը բռնաշենցի հովիվը Սև սարից իջավ Արինոք։ Նա իր այծապարիկի մեջ դրել էր մի դատարկ կճուճ և հետը վերցրել էր մի կապոց սունկ։ Նրա դեղին սուրմաներով բսքուն աքան և սև շալից գործած անդրավարտիքը, ինչպես նաև կարճեղր արախչու շուրջը ոլորած մետաքսե ճաճան-

չափայլ փուշին պատած էին անտառի ցողով և ջարդված ծաղիկների մնացորդներով։

Ասատուրի տնակի մոտով անցնելիս, Տոնեն ժպտաց։ Ծիծեռնակների ճռվողյունից բացի ոչինչ չէր լսվում քարափին կանգնած այդ մենավոր խրճիթի միջից։

— Էս աշնանը ես երկու ծլվլան խորոտիկ ծիծեռնակ կդնեմ էս տան մեջ,— ասաց նա և արագացրեց քայլերը։

Ոսկեհատը իր բանջարանոցում նստած քաղհանում էր կաղամբի և ծաղկած ծխախոտի մարգերը։ Դդմոների մագլցող թփերը երկարելով ծածկել էին նրա հողաշեն տնակի հյուսիսային պատը և հասել մինչև երդիկ։

— Բարի օր, մամո,— ողջունեց սարեցին, ծխախոտի չորացած թփերից մեկը պոկելով և փշրելով բռի մեջ։

— Լուս քեզ տեսնողին, լաո,— ասաց պառավը ոտքի կանգնելով և հավաքած բանջարը գոգնոցի մեջ պահելով։

— Քելե տուն երթանք։

— Տուն գալու ժամանակ չէ։ Ես շտապ եմ։

— Ու՞ր կերթաս։

— Մուշ։

— Ինչո՞ւ,— զարմացավ Ոսկեհատը։

— Գործ ունեմ։

— Ա՛յ տղա, դու ծուռ հո չե՞ս։ Մեր էս խորոտիկ աղջիկներին թողած ինչո՞ւ Մուշ կերթաս։

— Ես աղջկա համար չեմ գնում, նանե,— պատասխանեց հովիվը։

— Չէ՞, լաո, լուն ընկել է քու թոմպեն՝ կխլվլա։ Դու անպատճառ աղջկա համար կերթաս Մուշ։

Տոնեն ծիծաղեց։

— Տղա, դու մինչև ե՞րբ ազապ օլորտիս,— կես հանդիմանական, կես խրատական եղանակով շարունակեց Ոսկեհատը։— Մի փետ մենակ՝ ծուխ կիտա, լաո։ Երկու փետ իրար վրա դրուկ՝ խորոտիկ բոց կիտան ու կվառվեն։ Հովիվ մարդ ես, կիմանաս, որ էդ էդպես է։

— Էդպես է, նանե։

— Որ էդպես է, էլ ո՞ւր ես կանգնել։ Արդեն դարձար քսաներեսուն տարեկան մարդ։ Այ, տեսնո՞մ ես, էս կանաչ դդմի թու-

ռեք մինչև ո՛ւր հասան։ Ո՞ւր է քու թուռեն, լաո։ Կարգվիր, որ ծիլ արձակես, թուռա քշես աշխարհքի մեջ։

— Միտք ունեմ կարգվելու, նանե, բայց առաջ-առաջ ուզում եմ մի գործով Մուշ երթալ։

— Ի՞նչ գործ է։

Տոնեն, Ոսկեհատի միտքը բուն նպատակից շեղելու համար՝ ասաց.

— Աշունը մոտենում է։ Մի քիչ ընկույզ ու վարդալուշ եմ քաղել, ուզում եմ տանել Մշո կողմերը ցորենով փոխելու։ Էս տարի հացս պակաս է։

— Որ պակվես, հացն էլ կշատանա, տունն էլ կլիանա, սիրտն էլ կլենանա,— նորից խոսքը նույն հարցի վրա տարավ Ոսկեհատը։ Բայց զգույշ եղիր, որ ոստ կնկա ձեռք չընկնես։

— Իմ վախն էլ էդ է, մամո։ Վայ թե մի ծուռ, օռոսպի կնկա հանդիպեմ՝ գժվեմ, փախչեմ տնից։ Մեկ էլ՝ ճիժ ու ճիվ կեղնի, ես նրանց ինչպե՞ս պահեմ։

— Էն սունկը, որ տանում ես ս. Աղբերիկի վարդապետներին, էլ էնտեղ չես տանի, կբերես քու տուն։ Էն վերունի մեղրը, որ քաշում ես կաղնուտից, էլ քոռ ու փուչ չես անի, կբերես քու տուն։ Մի քանի պարկ ալուճ ու ընկույզ կքաղես Կատվաձորից, էն էլ կփոխես ցորենի հետ, կբերես քու տուն։ Կնիկդ էլ մեկ օր շուրվա կեփի, մեկ օր ապուր ու ճվջուր, և էդպես՝ մի օր թաց, մի օր բաց կապրեք։ Ամենքս էլ էդպես ենք ապրում, լաո։

— Դու գաղպա քաշե՞լ ես, նանե, էս տարի շատ գաղպա կա սարում,— նրա խոսքը ընդհատեց Տոնեն։

— Քաշել եմ, լաո։ Դու պսակվիր, հարսանիքիդ գաղպեն վրես լինի։ Ինչպե՞ս է իմ Ստեփանը։

— Ստեփանը աչքաբաց հովիվ է դարձել։ Խոդեդանը նոր շներ է բերել Բուլանուխից։ Շուն մի՛ ասա, գազան ասա, դեռ ձագ են, բայց առաջին գիշերը տասնյոթ գել խեղդեցին։

Դաշտադեմում Տոնեն գրեթե չսպասեց։ Քիշոյի տանը մի շերեփ պաղ թան խմելով, բռնաշենցի հովիվը դուրս եկավ գյուղից։ Նա անցավ Դավթի քարը և Ծծմակա Քթի տակով բարձրացավ Մուշ։

Հայոց կարմրաշեն այդ քաղաքը շինված էր Տավրոսի ստո-

ֆոտում Արջգլոր կոչվող բարձունքից անզգալիորեն անջատված մի բլրակի վրա, որ Բերդ էր կոչվում։

Լեռան գագաթին կանգնած էր քաղաքի հիմնադիր Մուշեղ Մամիկոնյանի կիսավեր ամրոցը, որպես վկա անցյալի փառավոր հիշատակների։ Այս ու այն կողմից վեր էին խոյանում հին եկեղեցիների գմբեթները իրենց ահասարսուռ հայացքները գամած Ալադին բեյի նորակերտ մզկիթի զանգվածային աշտարակին։

Ներքևում, Մուշի միջով, որոտալով անցնում էր քաղաքի աղմկալի գետակը, որ գալիս էր Սասնո լեռներից և Բերդի տակով գնում-խառնվում էր Մեղրագետի ջրերին։ Գետակի ընթացքով դեպի վեր ելնելով, ձորը սեղմվում էր մի խորունկ կիրճի մեջ։ Այդ մասը կոչվում էր Ջորաթաղ։

Յուրաքանչյուր անգամ, երբ Տոնեն որևէ առիթով Մուշ էր գնում, քաղաքին մոտենալիս նրա ուշադրությունը գրավում էին Արջգլոր սարը և գետակի վրա շինված տախտակե անհարթ թեքվածքը, որ Տաշո կամուրջ էր կոչվում։ Հին ժամանակներում մի բրդոտ արջ այդ կամուրջի մոտով գլորվել էր ձորը և խեղդվել՝ իր անունը անմահացնելով վերոհիշյալ սարի վրա։

Բայց այս անգամ ոչ Արջգլորի ապառաժե բարձունքը, ոչ այդ կամուրջը և ոչ էլ որևէ ուրիշ բան չէր զբաղեցնում Տոնեի միտքը։ Մի ավելի կարևոր պարտականություն այնպես էր կլանել նրա էությունը, որ ինքն էլ չիմացավ, թե ի՛նչպես հասավ քաղաքի փոր-փրաղեզ գետակին։ Նա մեկ անգամ էլ ստուգեց իր սունկերի կապոցը և, Տաշո կամուրջը արագորեն անցնելով, երկնասլաց բարդիների տակով սկսեց ելնել դեպի կենտրոնական հրապարակը։

Քաղաքի շուկան ուրախ եռուզեռի մեջ էր։ Այնտեղ կարելի էր հանդիպել Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից՝ Սասունից, Բաղեշից, Վանից, Խնուսից և Էրզրումից եկած մարդկանց։ Շատ էին գալիս մանավանդ Սասնո Գելիեգուզան, Սեմալ և Շենիկ գյուղերից։ Գալիս էին գլխավորապես առևտրական նպատակներով։

Տոնեն ուշի-ուշով աչք ածեց շուկայի վրա։

Մի ահագին ձմերուկ քաղցրությունից այնպես էր տրաքել շուկայի մեջտեղում և կարմրությունից այնպես պեծին-պեծին էր

տալիս, ասես մի կին թասով կրակ էր տարել հարևանի տանից, բայց ձեռքը վառվելով կրակամանը շպրտել էր ու հեռացել։ Մի իշատեր մոլորված նայում էր իր ավանակին, որը, խաղողի ծանր քթոցներով բեռնված, դեմ էր առել մի ուրիշ ավանակի և չէր իմանում՝ առա՞ջ գնա թե ետ։

— Տա՜նձ, լավ տա՜նձ,— բղավում էր մի այգետեր, տանձերից մեկը ուռած քսակի պես օրորելով օդում։

— Չամի՜չ, Մշո չամիչ,— կանչում էր մի մրգավաճառ՝ շիկագույն չամիչների ահագին քթոցի մոտ կանգնած։

— Գազպա՜, Սև սարի գազպա՜,— ձայն էր տալիս մեկ ուրիշը, փայտյա երկարապոչ շերեփով խառնելով մի մեծ կաթսա։

— Թթվա՜շ, անո՜ւշ,
Ոսկեծիլ,
Սասնա սարի
Խավրծի՜լ...

բղավում էր մի ուրիշ մշեցի, որ նոր էր ստացել Ծովասարից բերված խավարծիլների առաջին հյութալի կապոցները։

Տոնեն, որ տարին մեկ անգամ էր այցելում Մուշ, հրճվում էր՝ տեսնելով շուկայական այդ աշխույժ եռուզեռը։ Նա մոտեցավ չամչավաճառին, հանեց կճուճը, լցրեց այն Մշո ընտիր չամչով, մի երկու բուռ չամիչ էլ իր թաշկինակի մեջ ածեց, կճուճի բերանը ծածկեց, դրեց պարկի մեջ և արժեքը վճարելով հեռացավ։

Բերանի մեջ մերթ ընդ մերթ մեկ կամ մի քանի չամչահատիկ գցելով և հետաքրքրությամբ շուրջը նայելով ընթանում էր Տոնեն։

Հազիվ էր մի քանի քայլ արել, երբ մեկը ետևից կանչեց.

— Շալակիդ ի՞նչ կա, քեռի։

— Սունկ,— պատասխանեց հովիվը, արագորեն ետ դառնալով։

— Վաճառո՞ւմ ես։

— Փոխում եմ մատանու հետ։

— Ի՞նչ տեսակ մատանի է քեզ հարկավոր։

— Իմ սունկերին համեմատ մի մատանի։

— Գնանք ինձ մոտ,— ասաց անծանոթը նրա թևից քաշելով։

— Ո՞րտեղ ես ապրում։

— Վերին թաղում։ Իմ տունը գտնվում է Խաչփողանի վրա՝ Սև ավետարան եկեղեցու մոտ։

— Անունդ ի՞նչ է։

— Եղիշե։

— Իսկ իմ անունը Տոնե է,— ասաց սևսարեցին և սեղմեց իր նոր բարեկամի ձեռքը։

Եղիշեն, որի հետ ծանոթացավ Տոնեն, քաղաքի ամենաերիտասարդ ակնագործն էր, որ սաստիկ սիրված էր քաղաքի հայ և թյուրք արհեստավորների կողմից։

Բնիկ մշեցի էր Եղիշեն։ Նրա պապը եղել էր «Արծվիկ Տարոնո» լրագրի գործունյա թղթակիցներից մեկը, որի դեմ հալածանք էին կազմակերպել գավառական իշխանավորներն ու հայ խավարամիտ կղերականները։

Եղիշեի հայրը, որ նշանավոր դարբին էր, օսմանյան կառավարության կողմից աքսորվել էր Միջագետք։ Կասկածել էին, որ նա երկրագործական գործիքներից բացի իր արհեստանոցում սրեր է կռում իշխանության դեմ։

Չկարողանալով ազատորեն զբաղվել հոր արհեստով, որդին սովորել էր մի ուրիշ արհեստ՝ ոսկերչություն։ Նա ականջի օղեր, մատանիներ և ապարանջաններ էր շինում նորապսակ զույգերի համար։ Քաղաքում ամենքը նրան կոչում էին Մատնիք Եղիշե։

Եղիշեն գժի պես սիրում էր իր հայրենի քաղաքը։

Հայրենի քաղաքս է Մուշ,
Ամենից անուշ,
Ի՞նչ կանեմ ես դրախտը,
Տարե՞ք ինձի Մուշ։

Մի կողմը Սաչկի դուրան,
Մի կողմ՝ Արջգլոր,
Իր առաջը դաշտ է լեն,
Ետև՝ սար ու ձոր։

Մշո սարեր՝ մշուշ է,
Իր հողն ու ջուրն անուշ,
Ի՞նչ կանեմ ես դրախտը,
Տարե՞ք ինձի Մուշ...

երգում էր նա ամեն անգամ դեպի իր արհեստանոցը գնալիս։

Այդ սիրալիր բարևից և ծանոթությունից հետո Մատնիք Եղիշեն լեռնցի հովվին տարավ իր տուն։

Նրանք անցան Ալադին բեյի մզկիթի մոտով և մտան հայ արհեստավորների աղմկալի թաղամասը։ Աջ ու ձախ երկաթագործների մուրճերն ուժգնորեն զրնգում էին սալերի վրա։ Հազարավոր լուսափայլ կայծեր շողալով դուրս էին թռչում արհեստանոցների դռներից։ Դեպի արևմուտք թեքվելով, նրանք հասան բրուտների թաղը, ուր պատերի տակ շարված էին տարբեր տեսակի հարյուրավոր կարասներ, պնակներ և ճոռիկավոր ճրագներ։ Մշեցի բրուտները հասարակ կավից շինում էին շատ նուրբ ամաններ, որոնք հռչակված էին Հայաստանի բոլոր նահանգների մեջ։ Այն կճուճը, որ գտնվում էր հովվի ուսապարկում, նույնպես այդ հրաշագործ վարպետներից մեկի մատներով էր կերտված։

Վերին թաղը տարածված էր Արջգլորի ստորոտով դեպի Տաբեի ձորը՝ քաղաքի հարավ-արևմտյան մասում։ Տներն այստեղ մեծ մասամբ միահարկ էին և հաջորդում էին իրար սանդուղների պես։ Շատ տեղերում նրանք այնքան խիտ էին, որ մեկի տանիքը որպես բակ էր ծառայում մյուսի համար։

Եղիշեի տունը գտնվում էր Խաչփողանի վրա։ Դա երկհարկանի մի շինություն էր կարմիր դռնով։ Փոքրիկ լուսամուտից, որ Ջորաթաղի այգիների վրայով նայում էր Ծիրնկատարին, երևում էր Սաչկի դուրան կոչվող նշանավոր բարձունքը, որի վրայով մի ոլորապտույտ քարուղի էր իջնում դեպի քաղաք։ Սենյակի պատին կախված էր Եղիշեի հոր մաշված լուսանկարը՝ ծանր կռանով սալին հարվածելիս։

— Ծանոթացի՛ր, Հայկանո՛ւշ, այս հրաշալի մարդու հետ,— ասաց մշեցին, երբ նրանք փայտե նեղ սանդուղով վեր ելան։

— Ո՞վ է,— հարցրեց կինը, օրորոցի կողքից շուռ գալով։

— Բռնաշենցի հովիվ է։

— Տղա՞ է,— նկատեց սևսարեցին, կռանալով օրորոցի վրա։

— Մեր անդրանիկ որդին է։

— Բարով մեծանա և բարով նրա արևշատությանը արժանանաք,— բարեմաղթեց լեռնցին և սնկերի կապոցը փութկոտությամբ հաբանից անջատելով՝ դրեց սեղանին։ Ամբողջ տունը լցվեց թարմ սնկահոտով։

— Ո՞ր տեղից ես ճարում այս հրաշալի սնկերը,— հարցրեց մշեցին։

— Սև սարից։ Սրանց տեղը միայն ես գիտեմ,— պատասխանեց հովիվը և ուսապարկը շալակեց, որ գնա։

— Ու՞ր ես շտապում։

— Դաշտի գյուղերը։ Մատանու ետևից եմ եկել։

— Մատանին պատրաստ է։ Ո՞ր գյուղն ես գնում հարսնախոսության։

— Քրդագոմ։

— Ո՞ւմ տունն է։

— Հայտնի չէ։

— Ինչպե՞ս թե։ Հարսնախոսության ես գնում և չե՞ս իմանում, թե ո՛ւմ աղջիկն է,— տարակուսանքով հարցրեց մշեցին։

— Ոչ տունն է հայտնի, ոչ էլ աղջիկը։

— Լեռնցու գործը ո՞վ է հասկացել, որ ես հասկանամ։ Անպատճառ մի զարմանալի բան կլինի։ Նստի՞ր, նստի՞ր, սնկով փլավ ուտենք,— առաջարկեց տանտերը։

— Դուք անուշ արեք, իսկ ես կուշանամ, նստել չեմ կարող,— թախանձեց հովիվը։

— Լավ, քանի որ շտապում ես, մենք քեզ չենք պահի։ Բարևիր մեր անծանոթ հարսին։ Այս ասելով, մշեցին Տոնեի հետ իջավ իր տան գետնահարկը։ Այնտեղ փայտյա մի կարմիր արկղ կար հաստ կողպեքով փակված։ Եղիշեն բացեց սնդուկը, նրա միջից հանեց մի ոսկե մատանի, սրբեց, խնամքով փաթաթեց մի կտոր շորով և հանձնեց իր բարեկամին։ Հովիվը մատանին քսակը դրեց և, մեկ-երկու թաս օղի խմելով ու մնաս բարով ասելով, դուրս եկավ Մատնիք Եղիշեի ներքնահարկից։

ՀԱՐՍՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԿՃՈՒՃՈՎ

Թոնիրները վաղուց հանգել էին, երբ Տոնեն հասավ Քրդագոմ։ Արտամիջյան ճանապարհի վրա խաղում էին մի քանի երեխաներ։ Սևսարեցին նրանց մի բուռ չամիչ տվեց և մածնի ամանը ցույց տալով հարցրեց.

— Սա վի՞ր կճուճն է։

Մանուկները զարմացած նայեցին գեղեցիկ անոթին, որի կողին նկարված էր ձախ սրունքը վեր բարձրացրած երկարավիզ մի արագիլ։

— Խոշանց տան փարչն է,— բացագանչեց լիքը կժով ետևից եկող մի կին։

«Իմ առաջ լիք կուժ ելավ, գործս հաջող է»,— մտածեց Տոնեն։ Կժավոր կինը մոտեցավ ճանապարհի եզրին կանգնած մի երիտասարդ կնոջ, որ նույնպես աղբյուրից էր գալիս, և, ցած ձայնով, նրա ականջին ասաց.

— Բայազի կորած փարչն է։

— Քա վո՜ւյ, զուզրն զկան զէ,— այսինքն՝ ուզնկան է,— ճնճղկերեն գոչեց երիտասարդ կինը՝ դնչկալը քթին քաշելով և աչքի տակով նայելով եկվորին։ Երկու հարևանուհիները սկսեցին իրար հետ արագ-արագ ճնճղկերեն խոսել։ Այդ ծածկալեզուն, որ կանայք ու աղջիկները գործածում էին իրար գաղտնիքները ասելու ժամանակ, շատ էր տարածված Մշո դաշտի գյուղերում։

— Եղբորը Խոշո Մարտոյի տուն տարեք,— երեխաներին դիմելով ասաց առաջին կժավոր կինը, հարևանի բակից դուրս գալով և մտնելով իրենց բակը։

Խաղընկեր տղաները չամիչ ուտելով, երկու բանջարքաղ աղջիկների հետ, որ մաստակ ծամելով վերադառնում էին դաշտից, Տոնեին առաջնորդեցին փարչի տիրոջ տունը։ Գյուղում շշուկով բերնե բերան տարածվեց, որ Խոշո Մարտոյի տունը հարսնախոս է եկել, որ Բայազին ուզում են։

Անծանոթ տղամարդուն տեսնելով, պատերի տակ և բակերում նստած կանայք իսկույն տեղերից վեր էին կենում։ Նահապետական կարգի համաձայն շատերը նրան հրավիրում էին իրենց տունը, նոր թխած հաց էին հանում նրա դեմ։

— Խութեցի է,— ասում էին ետևից, երբ նա բավականաչափ հեռացած էր լինում։ Խութեցիներին և բռնաշենցիներին դաշտեցի գյուղացիները անմիջապես ճանաչում էին նրանց լեռնական քայլվածքից և մազեղեն հագուստից։ Այդ մարդիկ դաշտավայրում անգամ քայլում էին ինչպես լեռներում, խոշոր, մեծ քայլերով, ոտքերը հաստատորեն բարձրացնելով և ծանրորեն իջեցնելով գետնի վրա։

Համառ թե ձմեռ նրանք միևնույն հանդերձն էին հագնում։ Նրանց դեմքերից, որ թուխ էին, և հագուստներից, որոնց ծալքերում սովորաբար որևէ կանաչ ցողուն կամ չարդված ծաղիկ էր քարշ ընկած լինում, խիստ նկատելի զգացվում էր լեռնաստանի շունչը։ Այդ վայրերի բնակիչներին կարելի էր զանազանել նաև իրենց զորավոր ձայնով։ Նրանք շատ բարձր էին խոսում։ Դրանք առողջ թոքերով և ամուր կրծքերով մարդիկ էին, որ իրենց լեռների մեջ սովորել էին սարից սար իրար ձայն տալ, հովտից հովիտ միմյանց կանչել։

Այն տունը, ուր մտավ բռնաշենցի հովիվը, գտնվում էր գյուղի արևմտյան մասում։ Տան առաջ մի սլսլան բարդի կար, որի կատարին բույն էին դրել երեք արագիլ, ամեն մեկը մի ճյուղի վրա։ Բոլորակ բակում, ուր կատարյալ մաքրություն էր տիրում, կար մի թոնիր, որի միջից լոշերն էր հանում տանտիկինը։ Նրա աջ դաստակը և ձեռքի մատները զուգված էին ոսկե օղերով։

Անծանոթ հյուրին տեսնելով, հացթուխ գեղջկուհին աննկատելի խաչակնքեց երեսը՝ վերջին լոշը քաշելով բարկ թոնրից։ Ապա, վեր կացավ, բռնեց հյուրի ձեռքը և գլուխը լռությամբ խոնարհեց նրա վրա։

— Մտնե՞մ,— ասաց սարեցին դուռը դեպի ներս հրելով։

— Տունը դուռը բացողին է,— նկատեց ամոթխած կինը ետևից։

Տոնեն տանտիկնոջ հետ մտավ մի ընդարձակ հացատուն, որի մի մասը ծառայում էր անասունների համար իբրև օթևան։ Առաստաղը շինված էր երկար գերաններից և հենված էր հատակից բարձրացող սյուների վրա։

Տիրուհին իսկույն կարպետ պարզեց թախտի վրա, երկու բարձ դրեց և հյուրին առաջարկեց թիկնել։ Երբ եկվորը նստած էր, տանտիկինը մոտեցավ, նորից բռնեց նրա աջը և խոնարհելով՝ ասաց.

— Բարով եկար, ախպեր։

— Ես սևսարեցի եմ։ Իմ անունը Տոնե է,— ասաց լեռնական հովիվը զրնգուն ձայնով։

— Ղոնաղն աստծունն է, ախպեր Տոնե,— պատասխանեց տանտիկինը, կարծես կռահելով, թե ինչու համար էր լեռնցին եկել։

— Քեռի Մարտոն ո՞ւր է,— հարցրեց Տոնեն խորհրդավոր ձայնով։

— Գնացել է քաղի, հիմա կգա,— եղավ պատասխանը։

Տանտիկինը շտապեց հացի պատրաստություն տեսնելու։ Նույն պահին փողանում մի թանձր հազ լսվեց և շեմքին երևաց մի հաղթանդամ գյուղացի՝ գերանդին ուսին։ Նա գործիքը կախեց պատից և մոտենալով Տոնեին՝ ասաց.

— Ղոնաղն աստծունն է։

— Ես ղոնաղ չեմ, քեռի Մարտո, ես ձեր կճուճն եմ բերել,— ծիծաղելով նկատեց հովիվը։

— Ի՞նչ կճուճ,— զարմացավ շինականը։

— Ձեր կորած կճուճը։

Տանուտերը նստեց։ Լեռնցին բաց արավ իր ուսապարկը և այնտեղից դուրս հանելով լագլագով կճուճը՝ դրեց թախտի վրա։

— Աղջի Մանիշակ, շուտ էստեղ արի, դեպի դուրս ձայնեց երկրագործ Մարտոն և, ձեռքերը կողքերին կանթած, սկսեց զարմացած նայել ամանի վրա և մանավանդ բարձրասրունք արագիլի պատկերին։ Մանիշակը, որ ներս էր մտնում սեղանհացով, իրենց կճուճը տեսնելով թախտի վրա, բարձրաձայն գոչեց.

— Էդ մեր կճուճն է, լագլագ կա վրեն նկարած։— Նա արագությամբ սեղանհացը դրեց թախտին և զարմանքով ամանին նայեց։

— Հինգ տարի առաջ ես էս կճուճը Մշո հայտնի բրուտ Արիստակեսի մոտից առա։ Տաշտ կամուրջի մոտ մի քուրդ մեկ զոզանի կարմիր գառ տվեց, որ տամ իրեն, չտվի,— ասաց Խոշե Մարտոն թավ բեղերը ծանրորեն ոլորելով։

— Մեր կճուճն է, կանթիցն է հայտնի,— նկատեց Մանիշակը ուրախացած։

— Որ սա ձեր կճուճն է, հարսո,— ասաց Տոնեն,— ուրեմն ես փոշման չեմ գալուս համար։ Թող աստված շեն պահի ձեր տունն ու տեղը, կովն ու կթանը, եղն ու չորթանը։ Թող ձեր աղջիկն էլ էն մարդու խամաթը լինի, որ գտել է էդ ուխալը։

Հինավուրց ժամանակներում մի գողտրիկ սովորություն է եղել։ Սիրահար երիտասարդները լեռներով անցնելիս աղբյուրների ակերից փախցնում էին հնձվոր աղջիկների մածնի կճուճները։ Կճուճ փախցնող պատանին ուրիշի միջոցով որոնում էր

աղջկան և համարելով նրան իր խմաթը, ամուսնանում էր նրա հետ։ Մոտավորապես այդպիսի հեքիաթանման մի դեպք էր կատարվել նաև այժմ։ Եվ ահա սևսարեցի հովիվը, կճուճը առած, իջել էր Քրդագոմ հարսնախոսության։

— Ո՞վ է կճուճը աղբյուրից փախցրել,— լռությունը խզելով հարցրեց Մարտոն։

— Արինոքցի մի հովիվ։

— Անո՞ւնը։

— Խոդեդան։

Նույն միջոցին ներս մտավ բարեկազմ մարմնով և արևավառ դեմքով մի գեղեցիկ աղջիկ, ձախ ուսին ցորենի մի խուրձ, աջ ձեռքում՝ մանգաղը։ Հնձվորուհին մոտեցավ և մանգաղը ոլորելով հասկերի վրա, խուրձը իջեցրեց հյուրի ոտքերի առաջ, որ նշան էր սիրալիրության և պատվի։

— Իր աջը առ,— կարգադրեց հայրը։

Աղջիկը ամաչելով բռնեց հովվի ձեռքը և գլուխն անձայն խոնարհեց նրա վրա։ Ապա մի կողմ քաշվելով՝ լուռ կանգնեց։

— Ասում էիր՝ մեր ուխալը կոտրվել է,— դիմեց նրան հայրը, խորհրդավոր ժպիտով։

Բայազը, որ դեռևս դրսում լուր էր առել գտնված կաթնամանի և իրենց տունը իջևանած հյուրի մասին, հոր հարցի վրա գլուխը կախեց և ասաց կամացուկ.

— Ես ձեզ խաբել եմ։ Աղջիկների հետ լողանում էի Մեղրադետի մեջ, դուրս եկա ջրից, տեսա իմ փարշը չկա։ Աղբյուրի ակից տարել էին։

— Ես գիտեի, որ իմ առած կճուճը չէր կարող կոտրվել։ Ծախող ուստեն Մշո շուկայի մեջ վերևից գցեց գետին, հետո տվեց ինձ։

— Ի՞նչ կար փարշի մեջ,— հարցրեց Մարտոն։

— Մածուն։

— Վրան երկու մատ սեր կար,— ավելացրեց Մանիշակը։

— Անուշ լինի ուտողին։ Էս չամիչն էլ քեզ անուշ լինի,— ասաց Մարտոն, կճուճից մեկ-երկու բուռ չամիչ վերցնելով և ամանը հանձնելով աղջկան։

Բայազը առավ կճուճը, աչքի տակով նայեց հյուրին և կարմրելով դուրս գնաց։

Երբ նրանք երեքով մնացին, հայրը հարցրեց.

— Տղան լա՞վ տղա է։

— Էդպիսի երիտասարդ Բռնաշենում չկա, քեռի Մարտո,— պատասխանեց Տոնեն։— Մոտկանցի հարուստ քրդերի մոտ տասնյոթ տարի հովիվ է եղել։

— Ի՞նչ ունի։

— Բան չունի։ Ինքն է մենակ ու իր ձեռքի փետը։

— Տո՞ւն էլ չունի։

— Ունի, մի ծիծեռնակի բույն ունի Արինոքում։

— Ի՞նչ կասես, աղջի,— դիմեց Մարտոն կնոջը։

— Ի՞նչ պիտի ասեմ, մարդու խսմաթն է,— ասաց Մանիշակը թևերը խաչելով կրծքի վրա։

Ուշ երեկոյան ծնողները տվեցին իրենց վերջնական համաձայնությունը։

— Դե որ խսմաթի բան է, մեզ օղի բեր, Բայազին էլ էստեղ կանչիր,— կարգադրեց Մարտոն։

Մանիշակը պատրաստեց մի փոքրիկ ընթրիք և, օղին սեղանի վրա դնելով, գնաց աղջկա ետևից։

Բայազը այդ ամբողջ ժամանակ մտել էր իրենց փլած մարագը, և կանաչ խոտի վրա նստած չամիչ էր ուտում։ Այնտեղ էին նաև իր ընկերուհիներից մի քանիսը։

— Աղջի, հերդ կանչում է,— մարագի դուռը բանալով ասաց Մանիշակը։

Երբ Բայազը ներս մտավ, խոշե Մարտոն գավաթը վերցնելով ասաց.

— Համաձայն եմ։ Էդ է քու բախտը։ Ձեռքդ բեր տեսնեմ։ Բայազը ձեռքը դրեց հոր ափի մեջ։

— Նշանը բերե՞լ ես,— հարցրեց երկրագործ Մարտոն հովվի կողմը դառնալով։

Տոնեն ծոցից դուրս բերեց քսակը, նրա միջից հանեց մի ոսկյա մատանի և ծնողների ներկայությամբ հագցրեց աղջկա մատը։

Գավաթները չխկացին։

Բայազը փախավ մտավ իրենց մարագը և հեկեկալով գլուխը թաղեց ընկերուհիների ծոցում։ Նրա միջնամատը այրվում էր։

Մյուս օրը կեսօրին, երբ ուզընկանը մեկնելու էր Սև սար,

Մարտոն մի կողմ կանչելով նրան և սև, թանձր ընչացքները ոլորելով ասաց.

— Խնամի Տոնե, տեսնո՞ւմ ես էն մակրտոցը պատի տակ։

— Տեսնում եմ,— ասաց Հովիվը։

— Երբ կգաք աղջկան տանելու, ու ես տանը չեմ լինի, հինգ կարմիր ոսկի կհամրեք, կդնեք էն մակրտոցի վրեն ու նոր աղջկան կտանեք։

— Հինգ կարմիր ոսկի՞... Շատ չէ՞,— նկատեց Տոնեն։

— Ոչ ավել, ոչ պակաս,— խիստ հանդիսավոր եղանակով պատասխանեց տանտերը։— Իմ աղջիկը, խնամի Տոնե, հախ աստծո, մի փութ ոսկի արժե, բայց քանի որ խսմաթի պես բան դուրս եկավ, հինգ ոսկի կուզեմ տանողից։

— Էլի շատ է։

— Խոսելն ավելորդ է։ Տե՞ս, մարագս փուլ է գալիս, գերանները փտել են,— դուռը բանալով դեպի դուրս մատնացույց արավ Մարտոն։— Գոնե էնպես լինի, որ մի լուծ գոմեշ առնեմ։

— Լա՞վ, խնամի Մարտո, քու պայմանին համաձայն ենք։ Ասա, ե՞րբ ենք գալու։

— Երբ լագլագները թռնեն,— իր կանաչ բարդու կատարին նայելով, ասաց Մարտոն։

Սևսարեցին սեղմեց տանտիրոջ ձեռքը և մախաղը գաթով լիքը ճանապարհ ընկավ դեպի Բռնաշեն։

ԱՎՎԱՌԻՆՋՈՒ ՀԱՐՍԸ

Տոնեն դեռ չէր հեռացել գյուղից, երբ ետևում մի կանացի կանչ լսեց.

— Ուզընկան ախպե՞ր, ուզընկան ախպե՞ր։

— Ի՞նչ է, մորքուր,— գոչեց Հովիվը արագորեն ետ դառնալով։

— Կանգնիր՝ բան ասեմ։

Տոնեն կանգ առավ։

Փութկոտ քայլերով նրան մոտեցավ տարիքավոր մի կին՝ գեղջկական հասարակ հագուստով և գրավիչ դեմքով։

Նրա անունը Սանամ էր։

Սանամին Քրդագոմում կոչում էին Ալվառինջու հարս։ Եվ գրեթե ամենքն էլ այդ անունով էին ճանաչում նրան։

Ալվառինջը շինված էր Քանասարի արևելյան ստորոտում՝ Ծծմակա Թթի տակ, և ուներ հարյուր վաթսունյոթ տուն։

Դրանից շատ տարիներ առաջ Սանամը իրենց գյուղից հարս էր բերվել Քրդագոմ։ Եվ թեպետ նա այժմ հասակավոր կին էր, բայց դարձյալ նրան Ալվառինջու հարս էին ասում։

Մշո դաշտի գյուղերում յուրաքանչյուր աղջիկ մի տնային դաստիարակչուհի ուներ, որին ուստա կամ վարպետ էին ասում։ Սրա պարտականությունն էր մանկությունից հսկել մեծացող աղջկա վրա և սովորեցնել նրան մանելու, գործելու, կարելու, ճաշ եփելու, հաց թխելու, լվացք անելու և տունը մաքրելու բոլոր պարագաները։ Աղջիկը պարտավոր էր լռելյայն կատարել իր դաստիարակչուհու բոլոր կարգադրությունները և հետևել նրա խորհուրդներին։ Առանց վարպետուհու թույլտվության նա իրավունք չուներ ամուսնանալ։ Նույնիսկ երբ ծնողները համաձայնում էին, դաստիարակչուհին կարող էր քանդել պայմանը և իր ուզած ձևով տնօրինել աղջկա ճակատագիրը։

Բայազի վարպետուհին Քրդագոմում Ալվառինջու հարսն էր, որ վաղ հասակից հետևել էր նրա դաստիարակության գործին և պատրաստել էր նրան հարսնության համար։ Դրանից երեք օր առաջ նա գործով գնացել էր Ալվառինջ։

— Էդ դո՞ւ ես աղջիկ ուզել Քրդագոմում,— հարցրեց Սանամը, բարկացած մոտենալով Տոնեին։

— Հրամանքդ,— պատասխանեց հովիվը, իսկույն կռահելով, որ ինքը գործ ունի մի կատակաբան կնոջ հետ։

— Մի կճուճ չամիչ ես բերել, կուզես մեր գյուղի հրեշտակին տանե՞լ։ Առ քու նշանդրեքն ու գնա,— ասաց Ալվառինջու հարսը և մի մատանի ծոցից հանելով, շպրտեց հովվին։

— Դու գժվե՞լ ես, այ կնիկ, ինչո՞ւ ես աղջկա ձեռքից մատանին հանել։ Մեր մեջ ամեն ինչ վերջացած է, ծնողները համաձայն են,— բարկությամբ նկատեց Տոնեն։

— Ծնողները համաձայն են, իսկ ես համաձայն չեմ,— խստությամբ ասաց Սանամը։— Ես աղջկա վրա քսան տարի ամագ թափեմ, պահեմ, մեծացնեմ, որ դու գաս մի կճուճ չամչով խաբես-տանե՞ս։ Մի տե՞ս, թե ինչպես տոպրակը գաթով

լցրել է ու արագ-արագ կերթա,— ասաց նա ոտքից գլուխ արհամարհանքով չափելով արտի եզրին կանգնած երիտասարդ հովվին։

— Ուրեմն նշանը ե՞տ ես տալիս,— կռանալով և մատանին գետնից վերցնելով, հարցրեց սևսարեցին։

— Պայմանը քանդում եմ։ Էս համայն Մշո դաշտում Բայազի պես աղջիկ չկա։ Քանի՞-քանի՞ շենքով-շնորհքով, եզ ու լուծքով հարուստ երիտասարդներ հալ ու մաշ են լինում նրա համար։ Մենակ նրա մեկ իլիկ մանելը աշխարհ արժե։

— Մենք հարստություն չունենք, մորքուր։ Բախտի բան է, դրա համար ենք ձեր աղջկա ետևից եկել։

— Ի՞նչ բախտ։

— Ճամփով անցնելիս, մեր փեսացուն ձեր կճուճն է վերցրել աղբյուրի ակից։

— Կճուճը բարդոցի տակ է եղել, ոչ թե աղբյուրի մեջ,— շորությամբ նկատեց Սանամը։

— Բարդոցի տակ մանգաղներն են եղել, իսկ կճուճն եղել է աղբյուրի մեջ,— ուղղեց հովիվը։

— Իսկ ուրիշների ամանների՞ն ինչո՞ւ ձեռք չի տվել։

— Ո՛րը վերցներ, էն էլ կլիներ նրա խամաթը։ Ձեր կճուճն է վերցրել, ուրեմն իր բախտը խոշոնց տան աղջիկն է։

— Երբ կրիան ծառ ելնի՝ նա էլ խոշանց տան աղջկան կառնի։ Էդ էն հովիվը չէ՞, որ գելխեղդ շներ է արձակել Գոմեշ Մխոյի վրա,— հարցրեց Սանամը։

— Դո՞ւ էլ ես իմացել։

— Բան կա՞, որ ես չիմանամ։ Ալվառինջի աղբյուրի վրա իմացա, որ ուզընկան է եկել Բայազի ետևից։

— Իսկ իմացե՞լ ես, որ նա հաղթել է Մշո Դաշտի հայտնի փահլևան Թելո Մեսրոպին։

— Էդ նա՞ է եղել,— զարմացավ պառավը։

— Ապա ո՞վ է եղել։ Ամեն ինչ լավ գնաց, բայց դու փչացրիր գործը,— նկատեց Տոնեն, գլուխը տհաճությամբ օրորելով։— Խրսմաթի բան է, մորքուր, եկ համաձայնիր, պսակենք Բայազին։ Փեսացուն հավանել է աղջկան։

— Ի՞նչ արժեք ունի նրա հավանելը կամ չհավանելը, քանի որ ինքը շուն պահող է։

— Փեսացուն հովիվ է և ոչ մի հարստություն չունի, կուզեք տվեք ձեր աղջկան, չեք ուզի, ձեր գործն է,— նեղացած ասաց Տոնեն և գլուխը շուռ տվեց, որ գնա։

— Ես մինչև տղին չտեսնեմ, Բայազին ոչ ոքի չեմ տա։

— Արի Արինոք՝ տես։

— Բա անխղճություն չի՞, որ էդ տեսակ հրեշտակ աղջիկը բաժին դառնա մի աղքատ չոբանի։

— Հարստի տվեք, մենք չենք զոռում։ Բայց իմ կարծիքով, կարևորը աշխարհքի մեջ բախտավոր ապրելն է։

— Առանց հարստությա՞ն։

— Շատ մարդիկ կան, որ հարստություն ունեն, բայց բախտավոր չեն։ Կան մարդիկ էլ, որ կարողություն չունեն, բայց բախտավոր են։

— Քու կարծիքով Բայազը նրա հետ բախտավոր կլինի՞։

— Շա՞տ բախտավոր։

— Իսկ հարուստ ազգականներ ունի՞։

— Չունի։ Իր ազգականն էլ, բարեկամն էլ մենք ենք։ Բոլորս էլ սարվոր մարդիկ։ Մեր ուտածը սունկ է, շաղգամ ու գազպա։ Մեր խմածը թան է և սարի ջուր։ Մեր հագուստ-կապուստը էս մազեղեն շորերն են,— ասաց Տոնեն իր հագի բսքուն աբան և շալե անդրավարտիքը ցույց տալով։

— Սնդուկներում ոսկի չունե՞ք։

— Ոչ մի հատ։ Մեր ապրուստը ի՞նչ է, որ ոսկի ունենանք։ Նեղ օրվա համար միգուցե ամեն մեկիս ծոցում մեկ-երկու հատ գտնվի, ավելին չունենք։

— Քանի որ դուք էդքան պարզախոս մարդիկ եք, էդ աղջիկը հալալ լինի ձեզ,— ասաց Սանամը։

— Մեր բռնած գործը շիտակ է, մորքուր։ Մենք զոռով աղջիկ տանող չենք, ոչ էլ սովորություն ունենք պարծենալու, թե աղջկան խաս ու զոմաշի մեջ կպահենք,— զվարթացած նկատեց ուզընկանը։

— Չէ՞, դուք շատ ազնիվ մարդիկ եք երևում։

— Ուրեմն պայմանը չե՞ս քանդում։

— Խսմաթի գործը քանդողի տունը աստվածն է քանդում։ Ես տեսնում եմ, որ լուն ընկել է մեր փեսի թոմպեն։ Շուտ եկեք աղջկան տարեք։ Ե՞րբ եք գալու,— հարցրեց Սանամը։

— Արդեն խոսված է. երբ լաքլաքները թռնեն։ Իսկ դու էս մատանին տար ու նորից դիր աղջկա մատը, մորքուր։ Էնպես դիր, որ մարդ չիմանա,— խնդրեց Տոնեն, նշանդրեքը Ալվարինջու հարսին վերադարձնելով։

— Դու հանգիստ գնա, նշանը աղջկա մատին է։

— Իսկ սա ի՞նչ օղ է, —զարմացավ հովիվը։

— Սա իմ մատանին է։— Այստեղ Ալվարինջու հարսը երկար ծիծաղեց, մի խոր հառաչանք արձակելով։

— Տե՞ս, դիմացը Ծծմակա Քիթն է։ Ալվարինջը նրա կողքին է,— ձեռքը դեպի սարն ուղղելով, ասաց Սանամը։— Քառասուն տարի առաջ Ալվարինջից մինչև Քրդագոմ սիսեռ թափեիր, գետին չէր առնի, էնքան ժողովուրդ կար։ Երկու մեծ դհոլ ու զուռնա փոխնեփոխ կփչեր։ Աղավնի թռցնելով ու շամիչ թափելով մի հարս էին տանում։

— Չլինի՞ էդ դու ես եղել, մորքուր,— կռահեց Տոնեն, հարցական նայելով նրա երեսին։

— Ես էի,— ասաց Սանամը, և թևով աննկատելի սրբեց աչքերը։— Հարսանիքիս օրը իմ պատճառով երկու մարդ սպանվեց, իսկ խասգեղցի մի երիտասարդ իրեն գցեց Մեղրագետի մեջ։

— Դարդի՞ց։

— Իհարկե դարդից։

— Ո՞վ էր։

— Երևի լսած կաս. անունը Մտքամոլոր Առաքել է։

— Լսել եմ նրա մասին։ Խեղդվե՞ց։

— Կիսախեղդ հանեցին ջրից, կախեցին գլխի վրա և ջուրը փորից թափեցին։ Հետո նա իմ դարդից գնաց Ռուսաստան և էնտեղից մի ռուս կնիկ բերեց կողովով։

— Անխիղճ ես եղել, մորքուր,— նկատեց հովիվը։

— Ի՞նչ անեմ, լաո, ես մեկ եմ, մեկին պիտի բաժին դառնայի, հազար ու մեկին չէի կարող առնել։

— Երևում է՝ շատ սիրուն ես եղել։

— Էնքան սիրուն էի, որ ջահելներն իմ շուրջը կֆռային, ինչպես մեղուները մեղրածաղկի բոլորը։

— Բայց վերջը ո՞մ բաժին դարձար։

— Իմ պատմությունը երկար է, լաո։ Ամ որ առա ես, հայտնի

ֆիդայի Գոմսա Մելիքի քեռին էր։ Դու պետք է նրան իմ հարսանիքի օրը տեսած լինեիր, որ իմանայիր, թե ի՛նչ բան է տղամարդը։

Տղա, Մկրո, բոլի վառիս,
Ես գինամ որ ընձի կառնիս,
Վախենում եմ որ Ալաշկերտ տանիս,
Ըդրա համար սիրտսի կախ է։

Ելա երդիկ թափ քելեցի,
Խանչալ զարկի, երդիս բացի,
Փրիշան տուն չէր, նստա լացի,
Դո՞ր է գացեր մեր Փրիշան։

Ա՜խ, մեր երկիրն էր ծովու բերան,
Ճամբեք գուրան, չայիր-չիման,
Իմ ախպրտիք մեկ-մեկ ֆիդան,
Էրթա՞նք մեր երկիր, խորոտ է...

երգեց Սանամն ու ու աչքերը թևնոցով սրբեց։

— Անցած-գնացած բաներ են, լաո, որ մեկ-մեկ կհիշեմ, արցունքը գլուլ-գլուլ կթափվի իմ աչքերից։

— Քաղցր բան է, չէ՞, մորքուր, անցած-գնացած օրերը հիշել, մանավանդ հարսանիքի օրերը։

— Դրանից քաղցր բան չկա աշխարհում, լաո։

— Դե, ուրեմն էնպես անենք, որ մեր Ասվատուրն ու Բայազն էլ իրենց ջահելության օրերը հիշեն։

— Կհիշե՞ն, անպայման կհիշեն։

— Հովթափ է (իրիկնամուտ), մորքուր, ես ուշացա,— ասաց Տոնեն և, մնաս բարով ասելով Ալվարինջու հարսին, շտապեց դեպի Սև սար։

Նրա գնալուց հետո ետևից կանաչ արտերի միջով Սանամին մոտեցավ Բայազը իլիկը ձեռքին։ Նրա մատը այրվում էր մատանու շողքից։

— Աղջի, դու էստե՞ղ ես։

— Էստեղ եմ, նանե,— ասաց Բայազը և գլուխը դրեց վարպետուհու ուսին։

— Թող պագեմ երեսդ։ Եվ Սանամը, Բայազի գլուխը ամուր գրկելով, համբուրեց նրան։ Հարսնացուն շիկնեց։

— Շողցա՞վ երեսդ։ Բա որ Ասվատո՞ւրը պագե, ինչ կդառնաս. թոնդրան կրա՞կ։

— Ասվատուրն ո՞վ է։

— Չգիտե՞ս։ Էն որ քեզ պիտի պագե ու կարմրացնե աշնան խնկալուճի պես։ Ամեն օր պիտի պագե։ Էնպե՞ս պիտի շողնաս, էնպե՞ս պիտի շողնա՞ս...

— Քա ամոթ է, նանե, լռի՛ր,— սաստեց Բայազը և գլուխը թաղեց Սանամի գրկում, ձախ ձեռքով փակելով նրա բերանը, աջով՝ իլիկը բռնած։

— Ա՜յ, էն սարերի վրա պետք է ապրես,— ասաց Ալվառին ջու հարսը, մատնացույց անելով դեպի Մառնիկա սարի կողմը։— Էն Դավթի քարն է։ Նրա կողքին Պնտխներ գյուղն է։ Իսկ դրանցից էն կողմը, էն մութ սարերի ետև՝ Արինոքն է։

Բայազը երազուն աչքերով նայեց դեպի մանիշակագույն լեռները՝ այծամորթի հագած այն հովվի ետևից, որ արտերի միջով գնալով հեռանում, լուծվում էր այդ ամեհի բարձունքների մեջ։

ՊՆՏԽՑԻ ՄԱՆՈՒԿԻ ՄՈՏ

Այդքան բարեհաջող հարսնախոսությունից հետո, Տոնեն, առանց ժամանակ կորցնելու, սկսեց զբաղվել հարսանիքի գործով։

Երբ Ոսկեհատը իմացավ խոդեդանի՝ աղբյուրից փախցրած կճուճի և Տոնեի դեպի Մուշ կատարած խորհրդավոր ուղևորության բուն նպատակի մասին, այնքան խոր հուզվեց, որ գրկեց Տոնեի գլուխը և համբուրեց նրան՝ ասելով.

— Էդ քու սիրտ իմա՞լ սիրտ է, լաո, իսկի հավատալու բան չէ, թե քեզ մարդ է ծնել։

Տոնեն նախապես լուծեց ոսկիների գործը։ Մի ոսկի ինքը տվեց, մի ոսկի տվեց Օնեն։ Երկու կարմիր ոսկի հանեց Ոսկեհատը, մի ոսկի էլ Ասատուրի մոտ գտնվեց։ Այդ բոլոր ոսկիները սևսարեցին հավաքեց, լցրեց իր քսակի մեջ, ամուր կապեց բերանը և դրեց ծոցը։

Մնում էր լուծել ալյուրի գործը։

Խոդեդանը ինքը ձեռնամուխ եղավ դրան։

Արինոքի ընկույզը լավ տեսակի էր։ Նա հռչակված էր Դաշտի գյուղերում և շատ անգամ մեկով երկուս փոխանակվում էր ցո-

ռենի հետ։ Առանձնապես հարգի էր Կատվաձորի ընկույզը, որ խոշոր էր, փոքր ինչ ձվաձև և միջուկով լիքը։ Փուչ չկար։

Ալյուրի հարցը լուծելու համար Օնեն խորհուրդ տվեց մի ջվալ ընկույզ տանել Դաշտի գյուղերը ցորենի հետ փոխանակելու։

— Տար Պնտխներ, հորեղբայր,— ասաց Ստեփանը։

— Ուղիղ Պնտխցի Մանուկի տուն կերթաս, ինչ-որ պետք է՝ նա կանի,— ավելացրեց Տոնեն։

— Զամաշես, լաո, Մանուկի մոտ կիջնես,— պատվիրեց Ոսկեհատը։— Նա էնպիսի մարդ է, որ ճամփի վրա կանգնած՝ մարդ է կանչում իր տուն, որ մի բանով օգնի։

Այդ խորհրդից քաջալերված, Ասատուրը մտավ Արինոքի ձորը, իր հինգ ծառերից երկուսը թափ տվեց, բարձեց գյուղացիներից մեկի ավանակին և ուղևորվեց Պնտխներ։

Այդ գյուղը գտնվում էր Դավթի քարի մոտ, անտառի մեջ։ Կպած էր ձորի պռկին։ Պնտխներ էր կոչվում, որովհետև այդտեղ շատ վայրի պնդուկ կար։ Ամբողջ անտառը դրանից էր։ Գյուղն ուներ քառասուն տուն՝ բոլորն էլ հայեր։

Մանուկն ապրում էր այդ գյուղում։ Նրա տունը հազարաշեն առիքով մի խրճիթ էր, որ բաղկացած էր հինգ մասից. թոնրատուն, ախոռ, օդա, հարդնոց և բակ։

Տոնեն, Ստեփանը, Օնեն, Շինական Պողոսը և ատաղձագործ Հակոբը Դաշտ գնալիս կամ Դաշտից վերադառնալիս գրեթե միշտ իջնում էին Պնտխցի Մանուկի մոտ։ Նույնիսկ անծանոթ ուղևորը ճամփով անցնելիս մի շերեփ պաղ թան էր խմում նրա ցվիքի տակ։

Ամբողջ Մշո դաշտում և Խութ-Բռնաշենում Պնտխցի Մանուկի տունը ճանաչված էր իբրև առաքինի և պատվավոր գյուղացու օճախ։ Մանուկը ոչ մի մշակ չէր պահում և ապրում էր բացառապես իր և իր որդիների սեփական վաստակով։ Աղջիկներից վեցը հարս էին տարված երկրի զանազան վայրերը՝ Սասուն, Մուշ, Խնուս, իսկ տղաներն ամուսնացած էին տանը։ Բոլորն էլ՝ մեծ թե փոքր, բնակվում էին մի ընդարձակ հարկի տակ։ Մշեցու և սասունցու ընտանիքում եղբայրների բաժանություն չկար։ Բաժանություն հրահրող եղբայրը դիտվում էր ընտանիքի պառակտիչ և առանց բաժինքի դուրս էր արվում տանից։

Տղամարդիկ առանձին էին սեղան նստում, կանայք՝ առանձին։ Վերից մինչև վար և վարից մինչև վեր կար դարերով որբագործված մի սովորություն. ավելի փոքրը հպատակվում էր ավելի մեծին։ Երբ նոր հարս էր տուն գալիս, Պնտխցի Մանուկը հենց առաջին օրը նրան ասում էր, թե նա ո՛ւմն է ենթարկվելու և ո՛վ է իրեն ենթարկվելու։ Այդպես ամեն մարդ այդ ընտանիքում գիտեր իր տեղը և իր պարտականությունը իրենից վերևում կանգնածի և ներքևում գտնվողի վերաբերմամբ։ Բոլորի մեծը ինքը Պնտխցի Մանուկն էր։ Սա վաթսունին մոտ, մինչև ականջները հասնող, փոքր ինչ շիկագույն բեղերով և թանձր հոնքերով մի աղամարդ էր, որ, տան սպիտակ մորուքի մահից հետո, կանգնելով այդ բազմանդամ ընտանիքի գլուխ, յուր հմուտ ձեռքերով վարում էր նրա ամենօրյա բազմապիսի գործերը։

Յուրաքանչյուր առավոտ այդ ազնիվ գերդաստանի աքաղաղի ծուղրուղուն տարածվում էր Դաշտի վրա։ Այն լսելի էր անգամ Արինոքում։ Մանուկը և իր որդիները արթնանում էին միշտ առաջին աքլորականչին և, իրենց գործիքները վերցնելով, շտապում էին գործի։ Իսկ հողի աշխատանքն անվերջանալի էր։ Այդ երկրում տարվա չորս եղանակները կանոնավորապես հաջորդում էին իրար, և նրանք ամեն եղանակի համապատասխան փոխում էին իրենց աշխատանքի ձևը։

Ամառային հով երեկոներին Պնտխցի Մանուկը երբեմն գալիս էր Դավթի քարի մոտ զբոսնելու և, մանավանդ, տեսնելու թե ի՛նչ նոր եկվոր կա Սասնո կողմերից։ Այդտեղով անցնում էր մի լեռնային քարուղի, որ կապում էր Խութ-Բռնաշենը Դաշտի հետ։ Սովորություն ուներ պպզած նստել Դավթի քարի առաջ և, բեղերը մերթ ընդ մերթ ոլորելով ու հանգիստ ծխելով, երկար զրուցել այս կամ այն անցորդի հետ, կամ արմուկը հենած այդ քարին, հարցուփորձ անել Դաշտը մշակության գնացող խութեցի սակավահող գյուղացիներին, փորմշակներին և կույր երգիչներին։ Երբ մի ուշացած, հոգնած ուղևոր էր նկատում, կանչում էր մոտը և օթևան տալիս։— Գնանք տուն, հաց կեր, հետո կգնաս,— այս էր Մանուկի սովորական խոսքը այն մարդկանց, որոնց նա հանդիպում էր Դավթի քարի մոտ կամ իրենց գյուղի շրջապատում։

Պնտխցի Մանուկն արդեն լուր էր առել, որ Ասատուրը պատ-

բաստվում է ամուսնանալ։ Այդ մասին նրան հայտնել էր Տոնեն՝ հարանախոսությունից տուն վերադառնալիս։

Նախիրը գյուղ էր իջնում սարից, երբ Դավթի քարի ստվերոտ կողմով երևաց ընկույզով բարձած ավանակը։ Ճանապարհը քարոտ էր։ Չոր ընկույզներից թեռը չխչխկում էր գրաստի մեջքին։

— Չո՜շ, չո՜շ,— ասաց Խոդեդանը,— շվարած կանգ առնելով մի սաղարթալի ճյուղի ետև, որ կաղնու ծառից երկարելով վարագույրի պես ծածկել էր քարուղին։

Ճանապարհը այդտեղից երկճղվում էր։ Մեկը գնում էր դեպի Քոլոսիկ ու Շմլակ, իսկ մյուսը՝ դեպի Ալվառինջ և Բերդակ գյուղերը։ Թեպետ նա դուրս էր եկել Մանուկի տանը իջևանելու հաստատ որոշումով, բայց ճամբահատման այդ կետում սկսեց վարանել։

— Ի՞նչ անեմ, մտնեմ Պնտխներ, թե՞ քշեմ-անցնեմ դեպի Քոլոսիկ,— իր մեջ մտմտաց Ասատուրը։ Նորափեսաները սովորաբար ամաչկոտ են լինում, մանավանդ երբ չքավոր են և միայնակ։ Ինչպե՞ս ասել Մանուկին, որ իրեն օգնել է պետք։

— Չէ՞, լավ կլինի, քանի դեռ մի քիչ լույս կա, իջնեմ Քոլոսիկ։ Գիշերը կլինեմ Շինական Պողոսի մոտ, իսկ առավոտ կգամ Պնտխներ ու կվերադառնամ Արինոք։ Թե Մանուկը մի բանով օգնեց՝ լավ, չօգնեց՝ իր գործն է։ Այս մտածությամբ տարված, Խոդեդանը խթանեց ավանակին և, կռանալով, անցավ սաղարթալի ճյուղի տակով։

— Չո՜շ, չո՜շ,— նորից լսվեց նրա ձայնը և ընկույզների շխկշխկոցը կիսամութի մեջ։

— Ասատո՜ւր։

Հովիվը ետ նայեց։ Կանչողը Պնտխցի Մանուկն էր։

— Ո՞ւր ես գնում։

— Քոլոսիկ։

— Ուշ է, գնանք ինձ մոտ։ Գողտուկ-գողտուկ ուզում ես պսակվե՞լ,— նկատեց Մանուկը մոտենալով։

— Ինչո՞ւ գողտուկ, եկել եմ քեզ ասելու, որ կարգվելու եմ։

— Որ էդպես է, գնանք։

Քիչ անց, Խոդեդանի ավանակը կանգնած էր Պնտխցի Մանուկի ցվիքի տակ։ Դա տան կտուրի այն դուրս երկարած մասն էր, որ հաստատված էր երեք սյուների վրա՝ մուտքի դռան ամ-

բողջ երկարությամբ։ Ցվիքը տանեցիներին պաշտպանում էր շոգից և անձրևից։ Ամառ ժամանակ դրա տակն էին պահում թանը և կժով ջուրը։

— Ասում են՝ լավ գելխեղդ շներ ես բերել։

— Էդ անիծվածների համար մինչև Բուլանուխ գնացի, Մանուկ ախպեր։

— Աղա Հաջին գո՞հ է քեզնից։

— Շատ գոհ է։ Մեկ ամիս չկա՝ հարյուր քսան գել են խեղդել։

Երբ գրաստը մի փոքր հանգստացավ, Մանուկը կարգադրեց մի թեթև տղայի՝ ընկույզը տանել Քոլոսիկ և փոխանակել ցորենի հետ։ Տղան անմիջապես ճանապարհ ընկավ։

Տանտիկինը հաց բերեց։ Մինչդեռ նրանք ուտում և զրուցում էին, Նեմրութ սարի ետևից ելավ լուսինը և ամբողջ Մշո դաշտը ողողեց կաթնագույն լույսով։

Այդ նույն պահին գերանդիքն ուսերին բակ մտան Մանուկի յոթ երիտասարդ որդիները՝ իրար ետևից։ Քաջակազմ և հաղթաբազուկ էին նրանք, ամեն մեկը մի բարդու չափ։ Երբ նրանք ներս մտան, ամբողջ տունը, մեծ թե փոքր, մեկ մարդու պես ոտքի կանգնեց։ Նրանք սիրալիր ողջունեցին իրենց հյուրին, լվացվեցին սառն աղբյուրի ջրով, որ կարկաչում էր դռան առաջ, և նստեցին ընթրիքի։ Հողե խոշոր չոխտրիկի մեջ, որ մի տաշտակի չափ էր, նրանց թան մատուցեցին։ Եղբայրները բրդեցին և մեծ-մեծ գդալներով սկսեցին ուտել։ Ի՞նչ ախորժակով է ուտվում հացը լեռներում, ի՞նչ հրաշալի է երեկոն սարերում՝ աշխատավոր շինականի հարկի տակ։

Ընթրիքից հետո եղբայրները կարգի բերեցին իրենց գործիքները, մի փոքր զրուցեցին հյուրի հետ և, գիշեր բարի մաղթելով ամենքին, իսկույն քուն մտան։

Տանտերը և Աստուրը երկար նստեցին դրսում։ Քոլոսիկի կողմից մերթ ընդ մերթ լսվում էր մի բարակ մանկական կանչ. «Արինոքի ընկո՞ւյզ, երկու ցորեն մեկ ընկո՞ւյզ»։ Այդ Մանուկի ուղարկած տղան էր, որ լուսնյակ գիշերին, բարձրաձայն գոռալով, հացահատիկի հետ էր փոխանակում Խոդեդանի ընկույզները։

Հյուրի անկողինը շինված էր օդայում, որը բաց դռնով միա-

ցած էր թոնրատան հետ։ Լեռնային օդը սառն էր, ուստի բոլորն էլ ներսումն էին պառկել։ Այդ նահապետական հարկի տակ շնչում էր քառասունհինգ հոգի, որոնցից տասներկուսը՝ օրորոցների մեջ։

Բռնաշենում և Դաշտի գրեթե բոլոր գյուղերում տների առաստաղների վրա, ամեն երեկո, մանավանդ ձմռան երկար գիշերներին, երգում էին անթիվ ճռիկներ։ Գյուղացիները դրանց ճիճիրա էին ասում։ Այն տունը, որ զուրկ էր դրանից, համարվում էր դժբախտ, փորձանքի ենթակա։

Այդ գիշերը Ասատուրը լսեց դրանց երգը։ Մշտապես սարերում ապրելով և գիշերելով բացօթյա, նա հնարավորություն չէր ունեցել ունկնդրելու այդ հրաշալի երգիչներին։ Օ՜, ինչ անուշ էին երգում նրանք։ Նա փորձեց իմանալ, թե ո՞րտեղից է գալիս այդ երաժշտությունը։ Պարզվեց, որ այն լսվում էր թոնրատան հինգ ամբարների միջից, որ շարված էին կողք-կողքի, առաստաղի գերանների վրայից, թոնրի շուրթերից և այն բուխարիկի միջից, որ շինված էր օդայում, հենց իր կողքին։

«Ի՜նչ երջանիկ գերդաստան է»,— անցավ Խոդեդանի մտքով։ Այդպիսի երաժշտություն կար նաև Օնեի և ատաղձագործ Հակոբի հարկերի տակ։ Նա երազի պես հիշեց, թե ի՛նչպես մանկության օրերին այդպիսի համերգ ինքը լսել էր Մոտկանում՝ իր հայրենական առաստաղի գերանների վրա, երբ տակավին կանգուն էր իրենց գերդաստանը։ Երևակայությամբ պատկերացավ նրան, որ երբ ինքը ամուսնանա, իր տան մեջ նույնպես կսկսեն երգել այդ ճիճիրաները, գերդաստանի բախտավորության ծղրիդները, որոնք ժողովրդի խորը հավատքով հայտնվում են միայն այնտեղ, ուր աշխատավոր ընտանիք կա, ուր կա օրորոց և բուխարիկի կրակ...

Պնտխցի Մանուկի և իր ռանչպար որդիների կազդուրիչ, նախանձելի շնչառության հնչը միախառնվելով ճիճիրաների երգին, մի տեսակ երանելի սրբարան էր դարձնում այդ օջախը։

«Երկու ցորեն մեկ ընկո՜ւյզ»,— այդ վերջին աղոտ կանչն էր, որ, Քոլոսիկից գալով, փշրվեց նրա ականջի մեջ՝ բարձի վրա։

Լուսինն արդեն հասել էր Ծծմակա Քթին։ Այդ սարի կողմից երբեմն-երբեմն լսվում էր Շմլակա շների կատաղի հաչոցը։

Դեռևս մութն էր, երբ Պնտխցի Մանուկն արթնացավ։ Հյուրը

խոր քնած էր։ Յուրաքանչյուրը, ով ինչով կարող էր, օգնել էր Աստուրին։ Մանուկը որոշեց իր բարեկամին օգնել հացահատիկով։ Չէ՞ որ հարսանիքի համար մեծաքանակ ալյուր և կորկոտ էր հարկավոր։

Կինը նույնպես արթնացավ։ Նրանք բաց արին առաջին մեծ ամբարը և երեսուն կոտ ցորեն քաշելով, մի ջորու բեռնած, ուղարկեցին Արինոք։

Աքլորները կանչեցին։ Յոթ եղբայրներն արթնանալով, կիսամութի մեջ լվացվեցին, հաց կերան և, գործիքները վերցնելով, դիմեցին աշխատանքի։

Երբ Խոդեդանը արթնացավ, արդեն արևածագ էր։ Քոլոսիկից վերադարձել էր հացահատիկով բեռնված ավանակը։ Թեպետ մի քանի չարաճճի մանուկներ թեռը ծակելով թոցրել էին մեկ-երկու գլխարկ ընկույզ, բայց ընդհանուր առմամբ փոխանակությունը շատ հաջող էր անցել։ Մեկ չափ ընկույզը փոխանակվել էր երկու չափ ցորենի հետ։

— Դե ես գնացի, Մանուկ ախպեր,— ասաց հովիվը, երբ նախաճաշը կերել-պրծել էին։— Իմ հարսանիքին անպայման կգաս։

Մանուկը նրան ուղեկցեց մինչև Դավթի քարը։

— Ներող եղիր, Ասվատուր ախպեր, ջորին մի քիչ թեթև գնաց,— ծոծրակը քորելով ասաց Մանուկը։

— Ի՞նչ ջորի,— զարմացավ հովիվը։

— Մի քանի կոտ ցորեն ուղարկեցի քեզ։

— Դու ինձ պարտական թողեցիր, Մանուկ ախպեր,— հուզված ասաց Խոդեդանը, արմուկը Դավթի քարին հենելով։— Էդ ե՞րբ ուղարկեցիր, որ չիմացա։

— Կես գիշերով։ Ջորին հիմա հասած կլինի Արինոք,— պատասխանեց Մանուկը։

— Աստված շեն պահի քու տունն ու տեղը, քու ռանչպար որդկերանց։ Հոգեպես գոհ եմ վարմունքիդ համար, Մանուկ ախպեր։ Բարի համբավդ միշտ անպակաս լինի մեր ականջներից։

— Քու մասին հոգալով, ես ազգիս, ժողովրդիս համար եմ հոգում, Աստուր։ Բոլորս պետք է օգնենք իրար։ Վա՜յ էն մարդուն, որ մենակ իր համար կապրի։ Գետնիմուտ դառնա էդպիսի մարդը։ Ա՜յ, նայիր էս ածդահա քարին։ Եթե Դավիթը իր ձեռքը

դեմ չտար սրան, էս ապառաժը կղլորվեր ու տակով կաներ թե՛ կթվորներին և թե՛ գեղացոց ոչխարը։

— Ճի՛շտ է,— նկատեց Հովիվը։

— Աշխարհը ելևէջ է, խոդեդան,— շարունակեց Պնտխցի Մանուկը։— Բախտը չի թողնի, որ մարդու ճրագը վառվի մինչև լույս։ Բոլորս էլ անցողական ենք։ Ինչո՞ւ թողնենք, որ քու երգիկը անծուխ մնա։ Ընդհանուր գյուղի ծուխը քամին թող քշի նաև անծուխ տանիքների վրայով։ Օգնենք իրար, Ասատուր, սիրենք իրար, պաշտպանենք իրար։ Բոլորս էլ մեկ սալի ծաղիկ ենք։ Մեկս մյուսին չմոռանանք մինչև մահ-դերեզման։

Քիչ անց, խոդեդանը, ցորենով բարձած ավանակն առաջն առած, միայնակ գնում էր դեպի Արինոք։ Այն մարդը, որ Հացիկ գյուղում տեսել էր հայ հարուստ տանուտերին, որն այնքան անգթորեն էր վերաբերվել իր տարաբախտ փորմշակի հանդեպ, այժմ մխիթարվում էր՝ տեսնելով հայ աշխատասեր և ազնիվ գյուղացու տիպարը։

«Մեր ժողովուրդը չի մեռնի, քանի դեռ իր մեջ էսպիսի սըրտացավ մարդիկ ունի»,— իր ներսում ասաց լեռնցին։

Արինոքում նա իմացավ, որ Պնտխցի Մանուկը ոչ թե մի քանի կոտ, այլ երեսուն կոտ կարմրահատ ցորեն էր ուղարկել իր հարսանիքին։

— Դեռ ասում էր, թե ջորին թեթև գնաց,— նկատեց Ասատուրը, գլուխը երախտագիտությամբ օրորելով։

— Ափսոս չէ՞ Պնտխցի Մանուկը,— ասաց Տոնեն։

— Նրա պես մա՞րդ կա,— վկայակոչեցին Օնեն և Ստեփանը։

ՃԱԽՐԱԿԱՆՈՒՄ

Երբ ցորենի թեռը պատրաստ էր, խոդեդանն ասաց.

— Իմ հարսանիքի հացը կուզեմ Դավթի ջաղացում աղալ։

Քավորը համաձայնեց։

Թեպետ Արինոքում և Դաշտադեմում ջրաղացներ կային, բայց շատերն իրենց հարսանեկան և տոնական ուրախությունների հացերը գերադասում էին Թամոյի մոտ տանել, մանավանդ աշխա-

տավոր դասի մարդիկ, որոնք ավանդաբար հարգանք էին մատուցում Դավթի հիշատակին։

Մի ուրիշ պարտավորություն էլ կար։

Արինոք տեղափոխվելուց ի վեր Ոսկեհատը, Ստեփանը և Աստուրը տակավին իրենց բաժին ոչխարը չէին միացրել Դավթի հոտին։ Դա մի առիթ էր խղճմտանքի հետ կապված այդ գործն էլ կարգավորելու։ Որոշեցին մի սպիտակ ով տանել։

Ճախրական տարվող այծերի ձախ ականջի վրա մի հատուկ նշան էին անում՝ նրանց սովորական հոտից զանազանելու համար, իսկ բուրդը խուզում էին և դնում ամուսնացող զույգի բարձի մեջ՝ որպես հիշատակ։

Ոսկեհատը այդ օրը զբաղված էր ապագա ընտանիքի անկողինը պատրաստելով։ Ջքավոր էր Խոդեդանը։ Շուտով կին էր առնելու, բայց տանը կահ-կարասի չկար։ Ոսկեհատը մեկ-երկու կավե աման և մի մաղ էր տարել նրա տունը և փութկոտությամբ սկսել էր մի ձեռք տեղաշոր պատրաստել, որ հարսանիքին փեսան ամոթով չմնար։ Նա արդեն շինել էր ներքնակը և այժմ զբաղված էր ամուսնական բարձը պատրաստելով։

— Շուտ դարձիր, լաո, շատ չմնաս Ճախրական։ Քեռի Թամոյին կասես՝ հատիկը մանր աղա,— պատվիրեց Ոսկեհատը։

— Մինչև դու նորապսակների անկողինը պատրաստես, ես ալյուրը կբերեմ,— ասաց Ստեփանը և ուլի մազը խուզելով հանձնեց մորը։

— Շնկոյի մոտ գնացող կլինի, լուր կուղարկես, որ Աստուրը պսակվում է, թող հարսանիքին գա,— զգուշացրեց Ոսկեհատը։

— Անպայման կասեմ,— խոստացավ որդին և ճանապարհ ընկավ։

— Ճախրական գնալու համար Ստեփանը վերցրել էր Օնեի եզը, որին բարձել էր հարսանիքի աղունը։ Ուլը դժվարությամբ էր գնում։ Նա շարունակ մկկում էր և, ետ դառնալով, նայում էր դեպի Սև սար։ Երիտասարդ հովիվը գրկեց նրան և դրեց եզան վրա։

Կեսօրից անց էր, երբ Ստեփանը Ճախրական հասավ։ Ջրաղացի առաջ մի քանի ավանակներ էին արածում։ Նա ուլը կապեց մի ծառից և, թեռը դռանը իջեցնելով, մտավ ջրաղաց։

Թամոն տեղեկանալով Խոդեդանի հարսանիքի մասին, շատ

ուրախացավ և նրա հատիկը հերթից դուրս աղաց՝ առանց աղունավարձ վերցնելու։

— Ո՞ւմ աղջիկն է,— հետաքրքրվեց ծերունին։

— Քրդագոմցի Մարտոյի,— պատասխանեց հովիվը։

— Սիրո՞ւն է։

— Շատ սիրուն է,— ասաց Ստեփանը և ոգևորված պատմեց Աստուրի բերած գելխեղդ շների ու աղբյուրից փախցրած կճուճի հետաքրքիր պատմությունը։

Թամոն ուշադրությամբ լսեց մինչև վերջը։ Երբ աղունը պատրաստ էր, նա վեր կացավ, ջրաղացի պատի վրայից զգուշությամբ մի պտղունց դեղնավուն ալրափոշի առավ և հանդիսավորությամբ ցանեց նորափեսի ալյուրի մեջ։ Ապա իր ձեռքով կարեց թեռը և, դնելով եզան մեջքին, յուրովի ասաց.— Դավթի ալյուրից է խառնուկ, հարսանիքի հացը անուշ կեղնի։

— Իսկ էս ուլը ինչպե՞ս հասցնեմ Դավթի հոտին,— հարցրեց Ստեփանը։

— Հիմա կհասցնեմ,— պատասխանեց ծերունին։ Նա, Ստեփանի և մի քանի ուրիշ հայ և քուրդ ալրատերերի ներկայությամբ, բռնեց ուլի վզակապից, քաշեց նրան մի կողմ, կարմիր թաշկինակով կապեց նրա աչքերը և բավական հեռավորության վրա տանելով, թաշկինակն արձակեց։ Ապա նրա վզից հանեց պարանը, խուտուտ տվեց պոչատակին և Ծովասարի գագաթին նայելով երկա՜ր սուլեց։ Սևսարեցու ուլը, խրտնելով, արագորեն մագլցեց լեռան լանջն ի վեր և անհետացավ տեսադաշտից։

— Խառնվե՞ց,— հարցրեց Ստեփանը Ծովասարին նայելով։

— Խառնվեց,— պատասխանեց Թամոն, քաջալերելով ավանդապահ գյուղացուն։

Ներկաների մեջ Շնկոյին ճանաչող մի քուրդ կար, որ գնում էր Մարութա սարի կողմերը։ Ստեփանը նրան քրդերենով ասաց հետևյալը.

— Խոդեդանը պսակվում է, ասա նրան, որ անպայման ներկա լինի իր խաչեղբոր հարսանիքին։

— Աչքիս վրա,— ասաց քիրվոն և ճանապարհ ընկավ։ Նա գնաց դեպի Մոտկանի կողմերը, իսկ Ստեփանը իր բարձկանով ուղևորվեց դեպի Արինոք։

ԽՈԴԵԴԱՆԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Ստեփանի վերադարձից մի օր հետո Տոնեն նկատեց Բռնաշենի վրայով անցնող արագիլների մի խումբ։

— Տղե՛րք, լագլագները թռնում են, գնա՛նք հարսին բերենք,— ասաց նա դեպի երկինք նայելով։ Եվ, իսկապես, իրենց թիակաձև սպիտակ թևերը պարզած, Մուշի դաշտի կողմից դեպի Ծովասար էր սլանում արագիլների մի ահագին երամ։

Հետևյալ առավոտ քավոր Տոնեն, Ստեփանը և Օնեն ձիեր նստելով ճանապարհ ընկան դեպի Քրդագոմ։ Վերջինս իր թամբի վրա դրած տանում էր մի սպիտակ մաքի։ Այդ ոչխարը տանում էին փեսայի կողմից հարսի տանը մորթելու։

Քավոր Տոնեն մեջքին կապել էր մի խուրջին։ Մեջը կար հինա և շամշով զարդարված մի խաչ-գաթա։

Քոլոսիկի մոտ նրանց միացավ Շինական Պողոսը։

Երբ նրանք տեղ հասան՝ Տոնեն ասաց.

— Լագլագները թռան, քեռի Մարտո, եկել ենք աղջկադ տանելու։

— Բարով եք եկել,— ողջունեց տանուտերը և ավելացրեց.

— Ոսկիները բերեցի՞ր։

— Բերել եմ, խնամի Մարտո,— պատասխանեց քավորը, ձեռքը դեպի ծոցը տանելով։

— Մակրտոցն էն է,— պատի տակին մի մեծ կաթնաման ցույց տալով, ասաց Մարտոն։

— Սրա վրա դնե՞մ։

— Խերն ու բարին դրա մեջ է,— հանդիսավորությամբ բացատրեց շինականը՝ բեղերը ոլորելով։

Տոնեն մոտեցավ և, քսակը բաց անելով, հինգ կարմիր ոսկի իրար ետևից համբելով զնգացրեց մակրտոցի խուփի վրա, տանտիրոջ մատնանշած տեղը։

Հյուրերը մի փոքր հանգստացան և ապա հավաքվելով խոշոր հարկի տակ, սկսեցին զվարճանալ։ Միայնակ քահանան, որ ներկա էր այնտեղ, աղջկա տանից երեք լոշ վերցնելով դրեց միմյանց վրա և առաջարկեց երկու նոր խնամիներին (Խոդեդանը հայր չուներ, ուստի խնամու դերում հանդես եկավ քավոր Տոնեն) բռնել հացի ծայրերից ու քաշել։

Երբ նրանք բռնեցին, քահանան ասաց.

— Աստվածային հրամանով և կանոնյուք հայրապետաց, քու աղջկադ՝ Բայազին, տվի՞ր Արինոքցի Ասատուրին։

— Հրամերեք, ամենայն սիրով տվի,— ասաց Երկրագործ Մարտոն։

— Աստված շնորհավոր անի,— դոչեցին հանդիսականները։

Վերջին խոսքի վրա երկու խնամիները քաշեցին իրենց բռնած հացը։ Տոնեն լավաշի խոշոր մասը պոկելով դրեց ծոցը, որ տանի Արինոք։

— Հարսի խսմաթը փեսի տուն գնաց,— ազդարարեց քահանան։

Հացը կտրելուց հետո, քավոր Տոնեն հինան և խաչ-գաթան դրեց մաղի վրա ու, ցլխին առնելով, սկսեց պարել։ Ալվառինջու հարսը քավորին մի թաշկինակ տալով, վերցրեց հինան, ջրով շաղախեց և դրանով ներկեց թագուհու ձեռքը։ Ընկերուհիները մոտեցան և իրենց ձեռքերը քսեցին Բայազի հինա դրած ձեռքին։ Ապա խաչ-գաթան մաս-մաս անելով՝ բաժանեցին հանդիսականներին։

Մինչդեռ խորվուն կպատրաստվեր, Բայազի ընկերուհիները հերթով կարմիր ներկեցին հյուրերի եղոնգներն ու զույգ ձեռափերը և, իրար մոտեցնելով, շորով ամուր կապեցին։

Ուշ երեկոյան խնջույքն սկսվեց, որ տևեց մինչև կես գիշեր։ Երբ տանտիրոջ աքաղաղը կանչեց, վարպետուհին սկսեց զարդարել հարսին։ Ընկերուհիները նրա շուրջը բոլորած երգեցին.

Տնիկ ու շեմքիկ,
էլ դուք մի՞ ժաժա,
Մենք ենք ժաժալու,
Բայազ տանելու։

Ավլիկ ու կժիկ
էլ դուք մի ժաժա,
Մենք ենք ժաժալու
Բայազ տանելու։

Քավոր Տոնեն զուռնի հնչյունների տակ կես ոսկի տվեց Ալվառինջու հարսին։ Սանամը վերցրեց նվերը և, թագուհու ճակատը համբուրելով, նրան առաջ քերեց։

Բայազը հագած էր հարսանեկան շորեր։ Գլխին դրել էր

հարսնթագ, արծաթե մահիկներով և նախշերով, որի շուրջը մետաքսե փուշի էր ոլորած։ Ճակատի մեջտեղը տասը խոշոր ոսկեդրամներ էին շարված, որ փեսան էր ուղարկել։ Թագի վրայից մինչև գոտկատեղը մի բարակ վարդագույն շղարշ էր իջնում, որի տակից երևում էր հարսի ամոթխած գեղեցիկ դեմքը։

Երկրագործ Մարտոն նկատելով, որ իր աղջկա երեսին միայն մեկ քող էր գցած, զարմացած հարցրեց.

— Էս ի՞նչ բան է, քավոր Տոնե, չլինի՞ կարծում եք, թե Դաշտից թալան եք տանում։

— Ի՞նչ է պատահել, խնամի։

— Ո՞ւր է հարսի յոթ տակ քողը։

— Յոթ տակ քո՞ղ,— ծոր տվեց Տոնեն։

— Կանաչ մեռոն, երևում է՝ դուք թալանի եք եկել։

— Տանողը մենք ենք, քեռի Մարտո, մեզ մեկ քողն էլ ձեռք կտա,— զվարճախոսեց քավորը։

— Չեղա՞վ, չեղա՞վ, բռնաշենցիք, իմ աղջկան յոթ քող է հասանելի, մեկը փեսի կողմից, վեցը՝ քավորի և բարեկամների։

— Յոթ ծալի տակ մութ կլինի, խնամի,— նորից կրկնեց Տոնեն։

— Պապական կարգ է, ախպեր, դու յոթ գույնը գցիր, թող մութ լինի։ Տե՞ս, հարսի երեսն երևում է։

— Աղջիկդ սիրուն է, Մարտո ախպեր, թե կուզես իմանալ, սիրուն դեմքին խակի քող էլ հարկավոր չէ,— վրա բերեց Օնեն։

— Տո ծուռ սարեցիք, լեզվակոխ տալով կուզեք աղջկաս փախցնե՞լ։ Շատ էլ գիժ եք։ Կարծում եք մեր Դաշտի ծուռերը ձեզնից պակա՞ս են։ Ուրիշ տեղ՝ մեկ-մեկ ծուռ, մշեցիք՝ մեծ ու պստիկ ծուռ,— ասաց խոշո Մարտոն, ծխելով և նայելով մի անորոշ կետի։

— Մենք ձեր ծուռերի մասին լսել ենք,— նկատեց Շինական Պողոսը։— Ալոյին էլ գիտենք, Նալխոան Մանուկին էլ։

— Որ էդպես է, էլ ո՞ւր եք պարապ կանգնել,— շուռ եկավ Մարտոն։

— Հիմա ի՞նչ անեմ, էս կես գիշերով մեկ էլ Մուշ երթա՞մ։ տարակուսանքով հարցեց քավորը։

— Կուզես Բիթլիս գնա։ Մինչև իմ աղջկա երեսին յոթ գույնի քող չլինի, շեմքից դուրս չեմ թողնի նրան։ Աղջի, նե՛րս գնա,— Բայազին դառնալով, խստությամբ հրամայեց հայրը։— Հարսին

ներս տար,— հոնքերը վարպետուհու վրա սպառնալի կիտելով՝ կարգադրեց Մարտոն։

Մանիշակը ձեռները ծալած կանգնած էր դռան մոտ։— Դու էլ ներս գնա։ Չէի՞ր տեսնում, որ աղջկադ երեսը բաց է։ Ինչո՞ւ թույլ տվեցիր, որ մինչև շեմքը բերեն,— գոչեց բարկացած շինականը, դուրս ելնելով տանից։

Տոնեն և Ստեփանը իրար նայեցին։

Դրությունը լուրջ էր։

Շինական Պողոսը խորհուրդ տվեց գնալ Խասգյուղ։ Նա և Ստեփանը շտապեցին այդտեղ, գիշերով արթնացրին մի ծանոթ չթավաճառի և, հարկավոր քողերը վերցնելով, վերադարձան Քըրգագոմ։

Սանամը ներս առնելով հարսին, յոթ տարբեր գույներով ծածկեց նրա երեսը։

— Ա՜յ, հիմա եղավ, հիմա կարող եք տանել,— ասաց Երկրագործ Մարտոն։

Արևածագին թափորը շարժվեց։ Հարսը իր ընկեր-աղջիկներով շրջապատված, զուռնի նվագակցության տակ, ծանրաքայլ գնացքով պտտվեց իրենց տան շուրջը, ապա խոնարհվելով համբուրեց հայրական տան շեմքը, ծնողների և վարպետուհու ձեռքը և ճանապարհ ընկավ։

Բոլորից առաջ գնում էին Ստեփանը, Շինական Պողոսը և Տոնեն։

Բայազը նստած էր սպիտակ ձիու վրա։ Հարսի առջևից գնում էր քավոր Տոնեն՝ ձիու սանձը պահած։ Աջ ու ձախ կողմերից ընթանում էին ընկերուհիները՝ մանգաղները բռնած։ Ձիու ետևից գնում էր հարսնեղբայրը, իսկ բոլորից վերջը՝ Ալվարինջու հարսը, Մարտոն և Մանիշակը։ Վերջին երեքը դեռ Մեղրագետին չհասած, ետ դարձան, իսկ ընկերուհիները Բայազին ուղեկցեցին մինչև հարազատ գետի շամբերը և այն աղբյուրը, որտեղից անհետացել էր զարմանալի կճուճը։

Մի հրաշալի սովորություն՝ կար այդ կողմերում, որ ռամիկ ժողովրդի մեջ պահպանվել էր վաղուց։ Հնձվորներն առանձին-առանձին չէին հնձում իրենց արտերը, այլ խմբերով՝ նախ մեկի, ապա մյուսի։ Ո՛ւմ արտը շուտ էր հասունանում, առաջ նրանն էին հնձում։ Ուշ հասունացող արտի տերը սիրով էր շտապում հարևանի

քաղին, որովհետև գիտեր, որ երբ իր արտի հերթը գար, ինքը անօգնական չէր մնալու։

Քանի՞ տարիներ Բայազն այդպես աշխատել էր ընկերուհիների հետ։ Նրանք այնքան մտերմացել էին, որ միասին էին բաժանում իրենց ամանների ուտեստը և միասին էին մտնում գետը լողանալու։ Ո՞րքան տարիներ նրանք խմբով շրջել էին Մշո ծաղկած դաշտերում, բանջար հավաքելով գնացել-հասել էին մինչև Դավթի քար։

Այդ էր պատճառը, որ երբ Բայազը զգաց, որ ինքը ընդմիշտ հեռանում էր նրանց շրջապատից, աչքերը արցունքով լցվեցին, և նա իր ծածկոցի տակ հեկեկաց։

— Էլ Մեղրագետում մեզ հետ չպիտի լողանաս,— ասացին նրանք։ Այս խոսքերն ավելի սուր խոցեցին Բայազի սիրտը և նա, թուլացած, թեքվեց ներքև։ Ընկերուհիները մեկ առ մեկ փարվեցին նրան և իրենց արցունքները թափեցին նրա հարսանեկան շորերի վրա։ Ապա եր դարձան և մանգաղները բռնած պարեցին հնձի պարը։ Ուշ հասունացած մի արտ կար գետաբերանին։ Գեղջուկ աղջիկները ծունկի գալով քաղում էին ոսկեգույն ցորենը և բարձրանալով յուրաքանչյուրը մի պտույտ էր անում իր շուրջը՝ ձախ ձեռքով լասերի փունջը բռնած, աջով մանգաղը։ Նորից էին խոնարհվում և նորից բարձրանալով խաղում էին նույն հրաշալի պարը։ Դա մի հուզիչ և զմայլելի տեսարան էր, որ շարունակվեց այնքան ժամանակ, մինչև հարսանքավորները բոլորովին անհետացան տեսադաշտից։

Դավթի քարին չհասած, Ստեփանը, Շինական Պողոսը և Օնեն արագացրին երթը։ Ո՛վ որ հաղթեր այդ ձիարշավում, նա դառնալու էր հարսանիքի աղվեսը։ Ստեփանը վազքում հաղթեց մյուս երկուսին և ամբողջ թափով սլացավ դեպի Արինոք։ Նրա նժույգը, զսռիվերը սրընթաց ելնելով, խրխնջաց Դավթի քարի մոտ և անհետացավ անտառի մեջ։

— Սեղանները բացե՛ք, հարսը գալի՞ս է,— ազդարարում էր նա գյուղերի մոտով անցնելիս։

Պնտիցի Մանուկը և նրա հարևանները մեծ սեղան էին պարզել Դավթի քարի առաջ։ Եկողը խմում էր ու անցնում։ Նույնպիսի սեղան էին պարզել Դաշտադեմում Քիշոն և Ծաղկանուշը՝ Օնեի տանձի ծառերի տակ։

Արինոքում Աստատուրի դռանը մի երկայն սեղան էր բացված։ Սեղանի մոտ իր երեք աղապ չարիներով շրջապատված կանգնած էր փեսան։ Միակ զարդը, որ փայլ էր տալիս նրա լեռնական հագուստին, այդ աջ ուսի երկու կողմից իջնող և ձախ թևի տակ հանգուցվող խաչափուշին էր։

Ոսկեհատը կարգի էր բերել տունը, պատրաստել էր հարսանիքի հացը, եփել էր ճաշը և անհամբեր սպասում էր աղվեսի երևալուն։

Հարսանիքի աղվե՞սը...

Քավորից հետո այդ ուրախ անձը ամենամեծական դերն էր խաղում գյուղական հարսանիքների մեջ։ Աղվեսի երևալը նշան էր, որ հարսին բերում են։ Նրա ուշացումը ամենամռայլ մտքերն էր հարուցում և ստեղծում էր անթիվ կասկածներ։ Չզղջացի՞ն արդյոք հարսի ծնողները և իրենց աղջկան ճանապարհից ետ դարձրին։ Մտափոխ չեղա՞վ արդյոք աղջկա վարպետուհին։ Մի անախորժ բան չպատահե՞ց տանը կամ ճանապարհին։ Երբ հեռվից երևում էր աղվեսի նժույգի բաշը, այդ բոլոր կասկածները փարատվում էին և ուրախություն էր փայլատակում փեսայի և նրա ազգականների դեմքերին։

Անտառի մեջ աղվեսի վրա մի քանի անհայտ մարդիկ հարձակվեցին, կամենալով նրան փախցնել։ Նրանցից մեկը ետևից մոտենալով, փորձեց այրել նրա վիզը, բայց Ստեփանը հասկացավ, որ այդ բոլորը հարսի բարեկամների կողմից էր սարքված։ Նա ժպտաց և գնդակի արագությամբ սլացավ դեպի տուն։

Ոսկեհատը, ձեռքում մի կարմիր փուշի պահած, կանգնած էր փեսայի կողքին։ Երկուսն էլ շվարած հայացքներ էին փոխանակում, անհանգստանալով աղվեսի ուշացման համար։ Նորափեսին հակող երեք աղապ չարիները մի բարձր ժայռի թառած ակնդետ նայում էին դեպի Օնեի տանձի ծառերը, որտեղից պետք է երևար ավետաբեր ձիու բաշը։

— Աղվեսը գալի՞ս է,— ուրախացած գոչեցին նրանք՝ քարաժայռից ներքև թռչելով։

— Հարսին բերում են,— արձագանքեցին Օնեի տանիքին կանգնած մանուկները։

Խոդեդանի բակը աշխուժացավ։ Դաշտադեմից և հարևան գյուղերից դեպի Արինոք հարսանիքի շտապող փորմշակներն ու հո-

տաղները, այդ լուրն առնելուն պես, ավելի արագացրին իրենց քայլերը։

Շատ չանցած հայտնվեց աղվեսը։

— Պատրաստվեցե՞ք հարսին դիմավորելու,— գոչեց Ստեփանը դռակը օդի մեջ խաղացնելով։ Նրա ձին խրխնջաց Օնեի դռան առաջ և, ձորն իջնելով, բարձրացավ դեպի Աստատուրի խրճիթը։ Այդ լուրի համար Ոսկեհատը մոտեցավ և ձեռքում պահած մետաքսյա կարմիր փուշին օդակաձև հագցրեց երիվարի պարանոցը։ Աղվեսի ձին մի կատաղի պտույտ գործեց խրճիթի առաջ և հողմի պես սլացավ դեպի հարսանքավորները, որոնց շարանը Օնեի տանձի ծառի տակով սկսել էր իջնել դեպի ձորը։

Հարսը իջևանեց Ոսկեհատի տանը։ Կարճատև հանգստից հետո թափորը ուղևորվեց դեպի ս. Աղբերիկ։

Տարբեր ճանապարհով այնտեղ ներկայացավ նաև Խոդեդանը՝ իր ազապ չարիներով։

Նորապսակ զույգերն առաջին անգամ այդ վանքումն էին հանդիպում իրար։ Այդ վայրում առաջին անգամ իրար հանդիպեցին նաև Աստատուրը և Բայազը։

Թագուհին վայր եկավ ձիուց, կռացավ, խմեց վանքի աղբյուրի ջրից և թագավորի ետևից ընթացավ ներս։

Լուսարար Կաթմոսը վառել էր տաճարի լույսերը և շեմքին կանգնած սպասում էր նորապսակ զույգին։ Խոդեդանը և Բայազը մտան պսակատուն, որ գտնվում էր մայր տաճարի մեջ, և կանգնեցին խորանի առաջ՝ գլուխ գլխի տված։

— Խաչեղբայրը թող առաջ գա,— կարգադրեց վանքի քահանա Կլկել Օհանը։ Քավոր Տոնեն մոտեցավ և խաչը բռնեց նորապսակների գլխին։

— Այսուհետև կաղ էղնի, կույր էղնի, տե՞ր ես,— հարցրեց քահանան, խոսքը փեսային ուղղելով։

— Տեր եմ,— պատասխանեց Աստատուրը։ Նույն հարցը քահանան առաջարկեց հարսին։ Բայազը գլխի շարժումով համաձայնության նշան տվեց։

— Մի բարձի ծերանաք,— զույգին օրհնելով ասաց Կլկել Օհանը և մի գավաթ գինի առնելով, մատուցեց նրանց։ Նախ խմեց Խոդեդանը, ապա Բայազը։ Մնացորդը ըմպեց խաչեղբայր քավոր

Տոնեն, որ իր ներկայությամբ առհավետ վկա էր դառնում նորապսակների ամուսնական դաշինքին։

Երբ խոստովանությունը ավարտվեց, թափորը ս. Աղբերիկից շարժվեց դեպի Արինոք։ Հարսը և փեսան նստած էին ձիերի վրա։ Սպիտակ ձիու վրա նստած էր Բայազը, կարմիր ձիու վրա՝ Ասատուրը։ Ճանապարհին նրանց առաջ երևացին երեխաներ, որոնք, երեսներին ալյուր քսած, զանազան խեղկատակություններ էին անում։ Մեկը նրանցից ավանակի վրա թարս նստած, անհամար ծամածռություններով զբաղեցնում էր հարսանքավորներին։

Մոտիկ գյուղերից ու հանդերից նորանոր փորմշակներ ու հոտաղներ, գդալներն առած, շտապում էին հարսանիքի։

— Գդալդ վերցրու և եկ,— կանչում էին իրար և վազում դեպի Արինոք։

— Ո՞ւմ հարսանիքն է։

— Խոդեդանի,— ձայն էին տալիս մեկմեկու և փութացնում քայլերը։

Տեղ հասնելուն պես, երբ թագուհին վայր իջավ ձիուց, Ոսկեհատը մոտեցավ և նրա գլխին երկու լոշ դրեց՝ խաչուփակ։ Երկու հաց էլ ձեռքին բռնած՝ սկսեց պարել։ Այդ միջոցին աղապ չարիներից երկուսը տանիքից բուռերով չամիչ շաղ տվին նորապսակների գլխին։ Երեխաները սկսեցին չամիչ ժողովել։ Մեկ ուրիշ աղապ չարի, ճեղքելով հարսանքավորների շարքերը, մոտեցավ Ասատուրին։ Նա երկու ձեռքով բռնել էր մի կատաղի աքաղաղ, որը, բոսորագույն փետուրները փքած, պատրաստ էր գրոհել փեսայի վրա։ Խոդեդանը բռնեց աքաղաղի վզից և, բազմության ներկայության, այնպես ուժգնակի թափահարեց, որ նրա մարմինը գլխից պոկվելով բախվեց խրճիթի պատին։ Փեսան աչքի տակով հաղթական նայեց Բայազի գոհունակ դեմքին, թուլունի կիսաշունչ զլոխը տիրոջը վերադարձնելով։

Լուսինը դուրս էր եկել։ Քավոր Տոնեն այդ տեսարանից ազդված՝ երգեց.

Մեջքիս Մշու կարմիր գոտիկ,
Ես խորոտիկ, դու խորոտիկ,
Ուրախ մանենք մենք հարսնատուն,
Գովանդ խաղանք, երթանք մեր տուն։

Մուտքի մոտ դաշույնները կամարաձև պահած կանգնած էին երկու երիտասարդ։ Այդ զենքերի տակով, որ հայերին թույլատրվում էր մերկացնել միայն վերոհիշյալ ծիսակատարությունների ժամանակ, հարսը և փեսան մտան ներս՝ նախապես աջ ոտքը դնելով շեմքի վրա։

Ս. Աղբերիկի վարդապետ Կլկըլ Օհանը զգեստավորվելով և «Առավոտ լուսո» շարականը ասելով, յոթ անգամ պտտվեց թոնրի շուրջը, որին հետևեցին նորապսակները իրենց շքախմբով։

Ասատուրի հարսանիքին մեծ բազմություն էր հավաքվել։ Այնտեղ ներկա էին Արինոք, Դաշտադեմ, Օշուտ, Կծանք և Պնտխներ գյուղերի շքավոր ու միջին դասի շինականները։ Եկել էին բազմաթիվ հայ և քուրդ հովիվներ, նախարապաններ և հոտաղներ։ Հարսանքավորները ծալապատիկ շարվել էին խրճիթի պատերի տակ։ Շատերը, տեղ չլինելու պատճառով, նստել էին շեմքի վրա։ Ավելի ուշ եկողները հավաքվել էին դռանը, կամ կանգնել էին տանիքին։ Մի քանի փորմշակներ կռացած նայում էին երդիկից՝ գդալները ձեռքերում պահած։

Թոնրի մոտ զարդարված քուրսու վրա նստել էին հարսը և փեսան։ Պատվավոր հյուրերի շարքում բազմել էին Ավեսի Հաջին և սրա եղբայր Սալիմը։

Սեղանապետ ընտրվեց քավոր Տոնեն։

Նախ խմեցին Կլկըլ Օհանի, ապա Ավեսի Հաջու և Սալիմի կենացը։

Արմատի, այսինքն Բայազի և Խոդեդանի ծնողների կենացը խմելուց հետո քավոր Տոնեն առաջարկեց խմել երիտասարդ զույգի՝ թագավորի և թագուհու կենացը։ Սեղանապետը ոգևորված գովեց Բայազի գեղեցկությունը, համեստությունը և աշխատասիրությունը։ Նա ոչ մի բառ չխնայեց զարդարելու Ասատուրին։ Քավոր Տոնեն այդ կենացի վրա երգեց «Գովասանք փեսային և հարսին» հռչակավոր երգը՝ մինչև սրտի խորքը հուզելով ներկաներին.

Թագվոր, ինչ բերեմ քեզ նըման,
Քու կանաչ արև, քեզ նըման։

Էն աղոթրան, որ կըբացվեր,
Բացվեր քու արևուդ նըման։

Էն արեգակ որ կըծաղկեր,
Մաղկեր քու արևուդ նըման։

Անթառամ ծաղիկ որ կըծաղկի,
Մաղկեր քու արևուդ նըման։

Իալասան ծաղիկ որ կըծաղկի,
Մաղկեր քու արևուդ նըման։

Համասփյուռ ծաղիկ որ կըծաղկի,
Մաղկեր քու արևուդ նըման։

Գարնան վարդենիս որ կըծաղկի,
Մաղկեր քու արևուդ նըման։

Դինարբուկ ծաղիկ որ կըծաղկի,
Մաղկեր քու արևուդ նըման։

Քաֆուր վարդը որ կըծաղկի,
Մաղկեր քու արևուդ նըման։

Թագվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,
Քու կանաչ արև, քեզ նըման։

Շուշան ծաղիկ որ կըծաղկեր,
Անուշ բուրեր քու թագուհին։

Նարդիզ ծաղիկ որ կըհոտեր,
Անուշ բուրեր քու թագուհին։

Սարի սուսան որ կըհոտեր,
Անուշ բուրեր քու թագուհին։

Աղբրանց արուն որ կըհոտեր,
Անուշ բուրեր քու թագուհին։

Ոսկեծաղիկ որ կըհոտեր,
Անուշ բուրեր քու թագուհին։

Թագվոր, ի՞նչ բերեմ քեզ նըման,
Քու կանաչ արև, քեզ նըման։

Միրանի ծառ որ կըծաղկեր,
Մաղկեք դուք էլ դըրա նըման։

Խնձորի ծառ որ կըծաղկեր,
Մաղկեք դուք էլ դըրա նըման։

Նշի ծառեր որ կրծաղկեն,
Ծաղկեք դուք էլ դրրանց նման։

Տանձի ծառեր, որ կրծաղկեն,
Ծաղկեք դուք էլ դրրանց նման։

Խաղողի ուռ կոճակ կապեր,
Պրտկեք դուք էլ դրրա նման։

Պընտուկի ծառ պնտուկ կապեր,
Պրտկեք դուք էլ դրրա նման։

Գոզի ծառեր պտուղ կախեն,
Պրտղեք դուք էլ դրրանց նման։

— Անթառամ կյանք ունենաք, բախտավոր ապրեք,— գոչեցին հարսանքավորները այս ու այն կողմից և դատարկեցին իրենց գավաթները։

Դրանից հետո սեղանապետի առաջարկով հյուրերը խմեցին Ճախրական գյուղի ջրաղացպան Թամոյի կենացը։

— Խմենք էն մարդու կենացը,— ասաց Տոնեն,— որ մեր թառլան Դավթի ջաղացի մեջ կաշխատի, էն ազնիվ մարդու, որ Դավթի հազար տարի առաջ աղացած ալրից մի պտղունց է խառնել էն հացին, որ հիմա դրված է մեր առաջ։

Հարսանքավորները մի տեսակ ջերմեռանդությամբ նայեցին իրենց առաջ դրված հարսանքհացին։

— Կիսեք ու կերեք էդ սրբազան հացը և զորացեք Դավթի պես,— շարունակեց Տոնեն։— Թող Դավթի արդար ուժը քաշվի ձեր թևերի մեջ և ձեր թևերից անցնի ձեր թոռների ու ծոռների թևերին։ Ով ալյուր ունի աղալու, թող տանի Դավթի ջաղաց, տանի Թամոյի մոտ։

Այդ խոսքի վրա Տոնեն ոգևորված երգեց Դավթի ջրաղացի գովքը։ Այդ երգը այնքան խորը ներգործեց ներկաների վրա, որ նրանցից յուրաքանչյուրը մի պատառ կտրեց հարսանյաց հացից, որի մեջ Դավթի ալյուրից էր խառնած, համբուրեց և դրեց ծոցը, որ տուն վերադառնալիս, բաժանի իր ընտանիքի բացակա անդամներին։

Այնուհետև հարսանքավորները խմեցին Պնտխցի Մանուկի

կենացը, որ նոր էր ներս մտել և նստած էր քավորի կողքին։ Այդ կենացի վրա փեսայի կողմից գովաբանական խոսք ասաց Շինական Պողոսը։

— Քու տունը մեր տունն է, Մանուկ ախպեր,— ասաց նա։— Քու աղ ու հացը բոլորս ենք ճաշակել։ Քու սրտի բարությունը ամենքին է հայտնի։ Էն մեկ հանդը, որ հոդնած ճամփորդը քու դռնով անցնելիս առնում է ցվիքիդ տակ՝ աշխարհ արժե։ Թող մեր ժողովրդի մեջ անպակաս լինեն քու պես հայրենասեր, աշխատասեր ու բարի կամեցող մարդիկ։ Էն օժանդակությունը, որ դու ցույց տվիր մեր փեսային, երբ նա մեկ թեռ ընկուզով քու տունն եկավ, մոռանալու բան չէ։ Երբ դու մտար Խոդեդանի վիճակի մեջ ու էս նեղ օրվան օգնեցիր նրան, ուրեմն թող հաստատ մնա քու տունն ու տեղը, քու տաք բովարին ու ճիճերեն։ Էրնեկ էն ժողովրդին, որ Թամոյի պես ու քեզ պես հոգացավ մարդիկ ունի իր մեջ։

— Ամե՜ն,— գոչեցին հարսանքավորները միաբերան և դատարկեցին Պնտխցի Մանուկի կենացը։

— Էդ լավ մարդկանց շարքում իր պատվավոր տեղն ունի Մշեցի Մատնիք Եղիշեն,— գոչեց քավորը և առաջարկեց խմել նրա կենացը, որը նույնպես իր լուման էր մտցրել Աստուրի հարսանիքին, մի ոսկե մատանի հայթայթելով հարսի համար։

— Թանկագին կենաց է,— գոչեցին ներկաները։

— Էս հացը վկա, մի կապոց սնկով ենք ծանոթացել,— շարունակեց քավորը։— Խմելով մեր ազնիվ բարեկամ Եղիշեի կենացը, մենք դրանով կխմենք մեր Մուշ քաղաքի և նրա աշխատավոր ժողովրդի կենացը։

Հայրենի քաղաքս է Մուշ,
Ամենից անուշ,
Ի՞նչ կանեմ ես դրախտը,
Տարե՞ք ինձի Մուշ...

բարձր, ոգևորիչ ձայնով երգեց սեղանապետը, իր գավաթը զարկելով ներկաների գավաթներին և ամեն զարկին մի քանի անգամ կրկնելով «Մուշ-անուշ» բառերը։

Հերթը հասավ ատաղձագործ Հակոբին, որ շինել էր Խոդեդանի տունը։

— Քարերը պի՞նդ են շարված,— հարցրեց Օնեն։

— Շատ ամուր են,— պատասխանեց Հակոբը պատի տակից։

— Գերանները ամո՞ւր են խփված,— վրա բերեց Պնտխցի Մանուկը, առաստաղն ի վեր նայելով։

— Իմ շինած տանը քանդվել չկա մինչև հավուր դատաստանի,— լսվեց ատաղձագործի հաստատակամ ձայնը։

— Որ էդպես է՝ անուշ լինի,— մաղթեցին հարսանքավորները միաբերան։

— Անուշի ծոցում մնաք,— շեկ բեղերը գոհունակությամբ ոլորելով, պատասխանեց դաշտադեմցին և գավաթը դատարկեց։

— Փորմշակների և հոտաղների պնակների մեջ հարիսա լցրեք, ամանով ճաշ տարեք տանիքին նստածներին,— կարգադրեց սեղանապետը դեպի երդիկ նայելով։ Մի քանի նախրապահներ և ավագ մշակներ, որ նոր էին եկել, գդալները դուրս քաշեցին իրենց գոտիկներից և պատրաստվեցին ուտելու։

— Կուշտ կերեք, փորմշակներ, բոլորդ էլ բարով եք եկել իմ հարսանիքին։ Մի՛ ամաչեք, ղուրբա՛ն։ Սա էլ ձեր մեծ ախպոր տունն է։ Կուշտ-կոռ՞ուշտ կերեք,— ասաց Խոդեդանը դեպի դուրս նայելով։

— Շնորհակալ ենք, ախպեր Ասվատուր, ուրախությունով վայելես քու նոր տունը մեր հարսի հետ, աստված թող կանաչ պահե ձեր պսակն ու պուրակը,— գովեցին մշակները, շարվելով տաք ամանների շուրջը և գդալները չխկացնելով։

Այդ մաղթանքից հետո Տոնեն առաջարկեց խմել տարիքավոր ամենամեծ կնոջ՝ Ոսկեհատի կենացը, որի հոգատարությունը անպակաս էր եղել Խոդեդանի վրա։ Ոսկոն էր կարել նորապսակների բարձն ու վերմակը։ Նա էր թխել հարսանյաց հացը և պատրաստել պսակի ճաշը։ Այն թոնիրը, որի շուրջը բոլորել էին, նույնպես այդ կնոջ ճարտար մատների գործն էր։ Սեղանապետը նայելով Ասատուրի կավակուռ թոնրին, խիստ ազդվեց և, Ոսկեհատի կենացը ծաղկեցնելու համար, երգեց «Թոնդրան» երգը։

Կբոցկլտաս, մեզ կվառես,
Սուրբ է մոխիրդ, երբ կսառես։
Հարստի տան կարմիր վարդ ես,
Աղքատի տան ցավ ու դարդ ես։

Երբ խոսքը տվեցին Ոսկեհատին, նա հուզմունքից գրեթե չկարողացավ խոսել։ Գոգնոցի ծայրով սրբեց աչքերի արտասուքը և մոտենալով Խոդեդանին՝ ասաց.

— Միայն մի փափագ ունեմ սուրբ երկնավորից, լաո, էնքան ապրեմ, որ տեսնեմ քու ու Բայազի ծոռներին էս տան մեջ խլվլալիս, հետո թող սուրբ Աղբերիկն իմ հոգին առնի։ Ապա ձեռքը դնելով քավոր Տոնեի ուսին՝ ասաց.— կարգվիր, լաո, քու հարսանիքի գազպեն էլ քաշված է։

Լուսինը, որ վաղուց ծագել էր, մտել էր ամպերի ետև։ Օնեի և Շինական Պողոսի կենացը խմելու ժամանակ դրսում ծանր ոտնաձայն լսվեց։

— Տեղ տվեք՝ անցնի,— գոչեցին բակում կանգնած մի քանի հարսանքավորներ ետ-ետ գնալով։

— Ո՞վ է, —գոչեց քավորը դեպի դուրս նայելով։

— Պատվական հյուր է, տեղ տվեք՝ անցնի,— լսվեցին զանազան կանչեր խավարի միջից։ Շեմքին նստած հոտաղներն ու փորմշակները իրենց ամաններով մի կողմ քաշվեցին։ Նրանց մոտով հարսանքատուն մտավ մի քոլոզավոր մարդ։

— Բարի իրիկուն,— ողջունեց նորեկը և գլխարկը հանելով բարձրացրեց դեպի առաստաղ։

— Շնկոն է,— գոչեց Ասատուրը հարսի կողքից արագ շուռ գալով։

— Շնկոն է,— ուրախացած բացագանչեցին Ոսկեհատն ու Ստեփանը։

Եվ իսկապես, նորեկը Շնկոն էր, Խոդեդանի խաչեղբայրը, որ լեռներն ու ձորերը կտրելով, կես գիշերով հասել էր Արինոր։

Ասատուրը, Ստեփանը և Ոսկեհատը գրկվեցին նրա հետ և տարան նստեցրին Տոնեի ու Պնտխցի Մանուկի կողքին։

— Դու բարով եկար, քիրվո, բարի հասար քու խաչեղբոր հարսանիքին,— բացագանչեց սեղանապետը և կարգադրեց խմել Շնկոյի կենացը։

— Քու կարոտը ինձ մաշում էր, Խոդեդան։ Ես ուզում էի տեսնել քու նոր տունը։ Ուզում էի տեսնել հարսիկ Բայազին։ Կարոտել էի պառավ Ոսկեհատին ու Ստեփանին։ Երբ Ծովասարի կողմից մարդ եկավ ու ջուղաբ բերեց, որ դու պսակվում ես, ես աշխարհով մեկ եղա։ Իմ ու Զոզանիս կողմից քեզ ու հարսիկ Բայազին բախ-

տավորություն եմ ցանկանում։ Ինչքան ապրեք, լավ ապրեք։ Թող քու տունը լցվի զանգակ երեխաներով։ Թող կենդանանա քու պապ Զորո-Դավթի քանդված օջախը։ Շուքր եմ քեզ, աստված,— երդիկն ի վեր նայելով շարունակեց Շնկոն։— Մի անգամ դամես քաշեցի վրադ, բայց՝ ներող եղիր։ Թեպետ դու քու աչքը միշտ հարուստների ու զորեղների կողմն ես պահում, բայց մեկ-մեկ էլ աչքիդ պոչով մեզ նայիր։ Մեզ գցել ես էս գետնի վրա, մեկիս անունը Խոդեդան ես դրել, մեկիս անունը՝ Շնկո։ Գոնյա կիսով չափ հալալ արա էս կյանքը մեզ, որ մրջեմի կողքով անցնելիս՝ չամաչենք նրանից։

Այս ասելով Շնկոն ծոցից հանեց մի արծաթե սիրուն գոտի և իր ձեռքով կապեց հարսի մեջքին։

— Ապրի՛ մեր փեսի եղբայրը։ Զորանաս դու, Շնկո,— ազդարարեց սեղանապետը, և հարսանքատունը թնդաց ծափերից։

Վերջին բաժակով հարսնքավորները խմեցին քավոր Տոնեի կենացը, որից հետո ամենքը բարձրացան ու սկսեցին գովանդ պարել։ Քավոր Տոնեն, որ առաջնորդում էր պարը, բռնել էր փեսայի ձեռքը։ Վերջինի կողքին պարում էր հարսը։ Հարսի ձեռքը բռնել էր ազապ չարիներից մեկը։ Նրանից հետո շարվել էին Պնտխցի Մանուկը, Շնկոն, Շինական Պողոսը, Տոնեն, ատաղձագործ Հակոբը, հարսանիքի աղվեսը և մյուս մասնակիցները։ Գովանդի մի ծայրը ներսումն էր, իսկ մյուս ծայրը հասել էր մինչև անտառ և կախվել Կատվաձորի մեջ։

Փոքրահասակ երեխաները գնացել էին քնելու, իսկ ավելի մեծահասակները հաղթահարելով թմբիրը, դեռևս սպասում էին։ Նրանք առանձին թոնոցի էին պարում դրսում՝ լուսնյակի լույսով ողողված քարափի վրա.

Սասման կ'էլներ բարակ ծուխ,
Յարիկ մ'ունենք Բուլանուխ.
Զարկեց մախճան, թալեց պուխ,
Երես կարմիր, աչքեր թուխ։

Նախընդրենն վար կ'էնենք,
Քոռ անծեղուն քար կ'էնենք,
Իմ հեր քեզ աղջիկ չի տա,
Ջահելություն թարկ էնենք։

Թմբուկի ու զուռնի ձենից թնդում էր Արինոքը։ Մինչև առավոտ հարսանքավորները պարեցին։ Երբ լուսինը կարմրած մայր էր մտնում Ծովասարի ետև, հարսանիքն ավարտվեց։

Բոլորը գնացին։

Քարափին կանգնած խրճիթի մեջ մենակ մնացին Ասատուրը և Բայազը։

Տոնեն, պատի տակով անցնելիս, բարձրաձայն ասաց.

— Բարի գիշեր, Խոդեդան։— Ապա կամացուկ ավելացրեց,— երնեկ մի կճում էլ էղներ, մենք պատկվեինք...

* * *

Հետևյալ օրը Դաշտադեմցի Գևորգը իր ճրագի կտուցը վառելով և Խութ-բոնաշենի նորապսակ զույգերի մատյանը բաց անելով՝ մանրիկ տառերով արձանագրեց. «Երեկ, 1899 թվականի սեպտեմբերի 25-ին, Արինոք գյուղի նոր բնակիչ Ասատուրը (Խոդեդան), որ եկել էր Մոսկանից երկու տարի առաջ՝ ընտանիք կազմեց։ Նա ի բարձ եկավ քրդագոմցի Բայազի հետ (հոր անունը Մարտո, մոր անունը Մանիշակ՝ շինական դասից)։ Նրանց խրճիթը շինված էր Արինոքի ձորաբերանի բարդու ծառերից։ Տա աստված, որ նրանց տունը լցվի երեխաներով և ուրախությունով։ Ամե՞ն»։

ՓՐԿԱՆՔ

Նոր էր ամուսնացել Խոդեդանը, հազիվ էր զգացել ընտանեկան կյանքի առաջին քաղցրությունը, երբ նրա գլխին պայթեց մի անսպասելի փորձանք։

Հացիկ գյուղի հարուստ հողատեր Գոմեշ Մխոն գելխեղդ շների հալածանքից երկու տարի հետո հանկարծամահ էր եղել։ Մահից առաջ նա գրավոր գանգատ էր ներկայացրել Մուշի գավառապետին, որի մեջ մանրամասն նկարագրել էր, թե ի՞նչպես արինոքցի մի հովիվ, օրը ցերեկով, գելխեղդ շներ էր արձակել իր վրա գյուղի մեջ։

Ասատուրը սարումն էր, երբ Ավետի Հաջին նրան շտապ իր մոտ կանչեց։

— Քեզ վրա զոռ գանգատ կա,— ասաց աղան։— Փաշան կարգադրել է, որ քեզ դատի տան և բանտարկեն։

— Ինչո՞ւ,— զարմացավ Խոդեդանը։

— Նրա համար, որ դու ճանապարհով անցնելիս գելխեղդ շներ ես արձակել մի հարուստ հայի վրա։

— Բայց դա երկու տարի առաջ է եղել, հին պատմություն է,— պարզաբանեց Հովիվը։

— Աղան նոր է մեռել։ Մեռնելուց առաջ գանգատ է ներկայացրել գավառապետին։

— Բայց չէ՞ որ ես արդար գործի համար եմ շներ արձակել նրա վրա։ Նա հրաժարվում էր վճարել իր փորմշակի վարձը։

— Միևնույն է, օրենքով դու մեղավոր ես ճանաչված։ Հենց հիմա գնա Մուշ և խնդիրը լուծիր։

— Ո՞ւմ մոտ գնամ։

— Գավառապետի։ Նրա սարայը գտնվում է Ասլան-Ղափլան խանի մոտ, Ալադին բեյի մզկիթի դիմաց։ Մի անճոռնի շինություն է, փայտե կիսալուսինը ճակատին։ Էնտեղ են նստում գավառապետ Շեֆքեթ փաշան, ոստիկանապետ Թալիպ էֆենդին, մեջլիսի պատգամավոր Քաչալ Աբդուլը և մյուս մեծ ու փոքր պաշտոնյաները,— պարզաբանեց աղան։

— Բայց փաշան կարող է ինձ բռնել տալ։

— Դու աշխատիր նրան բռնել,— մտերմական անկեղծությամբ ասաց Հաջին։

— Ինչո՞վ։

— Բաշխիշով։

— Մի՞թե Մուշի գավառապետը կաշառք է վերցնում,— զարմացավ Ասատուրը։

— Օսմանյան օրենքն է էդպես։ Գավառապետն էլ է կաշառք վերցնում, նահանգապետն էլ, մոլլան էլ։ Նույնիսկ սուլթանին կարող ես կաշառել։

Ավետի Հաջու այս անկեղծ խոստովանությունը երկու հանգամանք պարզեց Խոդեդանի համար, որ օսմանյան տերության մեջ կաշառքը իշխում է օրենքի վրա և, երկրորդ, որ իր աղան կատաղի հակառակորդ է այդ տերությանը։

— Հիմա՞ գնամ,— հարցրեց Հովիվը։

— Անմիջապես մեկնիր։

— Բայց երթամ ի՞նչ ասեմ,— ծոծրակը մտահոգությամբ քորելով նկատեց Աստուրը։

— Գնա մի բան դիր բուռը և գլուխդ ազատիր, թե չէ կարող են քեզ աքսորել։ Ոսկի ունե՞ս։

— Չունեմ։

— Գոնե մի քանի հին ոսկեդրամ։ Դրանք ավելի թանկարժեք են։

— Ոսկեդրա՞մ։

— Մի որևէ բան, միայն թե ոսկի լինի։

— Գնացի,— ասաց Խոդեդանը և, հուզված ծխելով, դուրս եկավ Ավեսի Հաջու մոտից։.

Այն քսակը, որ Գյուլեն հանել էր սնդուկի միջից հրդեհի ժամանակ, պահվում էր Ոսկեհատի մոտ։ Այնտեղ ընդամենը տասը հատ հին ոսկեդրամ կար։ Դաշտադեմցի Գևորգը ասել էր, որ դրանք հայոց Տիգրան թագավորի հայտնի ոսկեդրամներն են, նրա նկարով և արքայական թագը գլխին։ Հարսանիքի օրը այդ դրամները փայլեցնելով շարել էին Բայազի թագին փբրև զարդարանք։ Աստուրը այժմ հարկադրված էր այդ ոսկեդրամները տանել Մուշ և հանձնել գավառապետին։ Նա մտավ տուն, սնդուկից հանեց հարսընթագը, դրանցից յոթ հատ բարկությամբ պոկեց նրա վրայից և ճանապարհ ընկավ։

Թեև նա այդ օրը մեծ կորուստ էր կրելու, բայց առիթ էր ներկայանում փորձելու այդ պաշտոնյաների սրիկայությունը։ Իսկ դա, սրոշ իմաստով, ուրախացնում էր նրան։

Պնտխներ գյուղի մոտ հովիվը հանդիպեց Շինական Պողոսին, որ խասգյուղից էր գալիս։

— Ո՞ւր ես գնում,— հարցրեց Պողոսը։

— Մուշ։

— Ի՞նչ գործով։

— Գավառապետն է կանչել։ Ինձ վրա դատ կա,— հայտնեց Աստուրը և պատմեց եղելությունը։

— Դու Մուշում գավառապետին չես կարող տեսնել։ Նրա մոտ ընդունվելու համար հարկավոր կլինի մի քանի դռնով անցնել և ամեն դռնապահին կաշառք տալ։

— Ապա ի՞նչպես անեմ։

— Մի քիչ առաջ Շեֆքեթ փաշան և Թալիպ էֆենդին եկան

Խասգեղ։ Դու աշխատիր նրանց տեսնել և գործը վերջացնել առանց քաղաք գնալու,— խորհուրդ տվեց Պողոսը։

— Ո՞ւմ տունն են իջել։

— Գուրսե Սլոյի։

— Ի՞նչ մարդ է։

— Թյուրք պաշտոնյա է, ապրում է Խասգեղում։ Մուշից նրա մոտ են գալիս գավառապետ Շեֆքեթ փաշան, Թալիպ էֆենդին և Մեջլիսի պատգամավոր Քաչալ Աբդուլը։

— Գործո՞վ են գալիս։

— Ի՞նչ գործ։ Դրանց գործը ուտել-խմել և մարդ թալանելն է։ Թալիպ էֆենդին և Գուրսե Սլոն հայտնի կաշառակերներ են։ Նրանք են հավաքում գավառապետի կաշառքը։ Գուրսե Սլոն գյուղից է բաշխիշ հավաքում, իսկ Թալիպ էֆենդին՝ քաղաքի բնակիչներից։

Շինական Պողոսի այս բացատրությունից հետո այլևս ոչ մի կասկած չէր մնում, որ Խոդեդանը այդ օրն անվերադարձ զրկվելու էր իր յոթ ոսկեդրամներից։

Շատ շուտով նա Խասգյուղ հասավ։

Շեֆքեթ փաշան, Թալիպ էֆենդին և Քաչալ Աբդուլը իսկապես իջել էին Գուրսե Սլոյի տունը, որ գտնվում էր Խաժուռիք կոչվող թաղում։ Ասատուրն ուղղեց իր փեսայական հագուստը, քառորդ ոսկի դրեց հակիչի բուռը և, մոտենալով, ձեռնափայտի գագաթով մեկ անգամ հարվածեց դռանը։

— Մտե՛ք,— լսվեց մի խռպոտ կանչ ներսից։

Հովիվը բացեց դուռը և մնաց շեմքին արձանացած։ Տունը մի գետնափոր նկուղի տպավորություն էր թողնում։ Իսկական մի որջ էր դա, որից փչում էր նարգիլեի և այրված տուրճի խեղդող օդ։ Պատերը զարդարված էին համիդական զենքերի բոլոր տեսակներով, զանազան մորթիներով և կոշտ գորգերով։ Հատակին թաղիք և խսիր էր փռված։

Խոդեդանի դիմաց կանգնած էր մի բարակադեմ ոստիկան մոնղոլական դիմագծերով, այտոսկրները դուրս ցցված, ֆեսը գլխին։ Համազգեստի վրա փայլում էր պղնձյա կոճակների շարանը՝ կիսալուսնի պատկերով։

Այդ Թալիպ էֆենդին էր։

Խորքում բացվող երկրորդ դուռը առաջնորդում էր դեպի ճրագ-

ներով լուսավորված մի ավելի ընդարձակ սրահ, որ համարվում էր այդ ավազականոցի կենտրոնը։ Հատակին, նախշուն գորգերի վրա նստած, թուղթ էին խաղում երեք տղամարդ։ Դրանցից մեկը, որ մեջտեղումն էր, գավառապետ Շեֆքեթ փաշան էր, իսկ մյուս երկուսը Քաչալ Աբդուլն ու Գուրսե Սլոն էին։ Ամեն մեկի թևի տակը մի մինդար էր դրված, իսկ կողքը՝ նարգիլե և սուրճ։

Գավառապետը թիկնած էր բոլորից բարձր մի ճոխ մինդարի վրա։ Նրա կոշտ դիմագծերը, կախված փորը և անսովոր մեծ ականջները զարշանք առաջացրին Ասատուրի մեջ նրա նկատմամբ։

— Դուռը փակիր և մոտ եկ,— հրամայեց ոստիկանապետը։ Հովիվը դուռը ծածկեց և մի երկու քայլ շեմքից առաջացավ դեպի խորքը։

— Ի՞նչ նվեր ես բերել փաշայի համար, —հարցրեց ոստիկանապետը։

— Մի քանի ոսկեդրամ,— պատասխանեց խոդեղանը։

— Ի՞նչ գործով ես կանչված։

— Գոմեշ Մխոյի։

— Ա՜, այդ դո՞ւ ես մեր հարազատ գյուղացու վրա գայլեր արձակել,— գոչեց էֆենդին, սպառնական մոտենալով նրան։

— Ես գելեր չեմ արձակել։

— Ապա քու կարծիքով ի՞նչ են եղել դրանք։

— Շներ։

— Իսկ ինչո՞ւ արձակեցիր։

— Որովհետև նա իր մշակի վարձը չէր տալիս։

— Քեզ հայտնի է, ռամիկ, որ Գոմեշ աղան մեռել է և նրա մահվան պատճառը դու ես։

— Սխալ է, էֆենդի։ Ես նրա վրա շներ արձակել եմ երկու տարի առաջ, իսկ նա վերջերս է մեռել։

— Միևնույն է, ցնցումը նա ստացել է այդ օրվանից։ Փաշան կարգադրել է, որ քեզ աքսորեն Միջագետք։ Գործը իմ ձեռքին է։ Ա՜յ, սա է քո գործը։— Այդ ասելով Թալիպ էֆենդին մի ինչ-որ թուղթ հանեց ծոցից և ցույց տվեց Ասատուրին։

— Քանի՞ ոսկով կարելի է հարցը փակել, էֆենդի,— կարճ ու կտրուկ հարցրեց հովիվը։

— Ամենաքիչը տասը ոսկով։

— Բայց իմ ունեցածը ոսկի չի։

— Ապա ի՞նչ է։

— Հին ոսկեդրամ։ Դրանք էլ իմ կնոջ թագի վրայից պոկեցի։

— Իսկ կարմիր ոսկինե՞րդ ինչ արեցիր։

— Ես կարմիր ոսկի չունեմ, էֆենդի։ Մի քանի հատ կար՝ հարսանիքիս վրա ծախսվեց։

— Հարսանի՞ք։ Հարսանիք անում եք, իսկ փաշային մոռանո՞ւմ եք բաժին հանել,— նկատեց ոստիկանապետը խոժոռ դեմք ընդունելով։

— Ինչո՞ւ եք նեղանում, էֆենդի, ձեր բաժինը բերել եմ։

— Կաթեցրու,— առանց շարունակությունը լսելու, ասաց Թալիպ էֆենդին, մեջքով դառնալով դեպի խոդեդանը, ձախ ձեռքը ետևում պահած։

Ասատուրը տեսնելով, որ ինքը գործ ունի մի բացահայտ կաշառակերի հետ, ոսկիները ծոցից հանելով և մեկ, երկու, երեք հաշվելով իրար ետևից զրնգացրեց ոստիկանապետի բռի մեջ։

— Մեկ էլ դիր, հինգերորդն էլ դիր, վեցերորդն էլ...

— Էլ չունեմ, էֆենդի՛։

— Գցիր, ասում եմ, ես դրա ձայնը շատ եմ սիրում։

— Էս մեկ հատն էլ թող ինձ մնա, աղա, կնոջս ճակատին պիտի կախեմ...

— Կաթեցրո՛ւ,— բուռը ետևում խաղացնելով, հրամայեց էֆենդին։

— Լավ, էս մեկն էլ դավառապետի պատվին,— նկատեց խոդեդանը քմծիծաղով, աննկատելի թքեց վրան և կաթեցրեց վերջին ոսկին։ Դուրեկան, հնչեղ մի ձայն արձակելով, յոթերորդ ոսկեդրամն էլ զրնգալով պառկեց մյուսների վրա։

— Սաղ օլտուն,— գոհունակությամբ գոչեց ոստիկանապետը։

— Պրծա՛նք, էֆենդի։

— Էլ չունե՞ս։

— Յոթ հատ էին, ավելին չունեմ։ Թալիպը, որ մինչև այդ բռի մեջ մատներով շոշափում էր ոսկիները, երեսով շուռ եկավ դեպի հայ շինականը և նկատեց, որ դրանք խոշոր, փայլուն ոսկեդրամներ էին՝ մի վեհատեսիլ թագավորի պատկերով։

— Ո՞վ է,— զարմացած հարցրեց էֆենդին։

— Տիգրան թագավորն է։

— Ե՞րբ է ապրել։

— Սրանից մոտ երկու հազար տարի առաջ։

— Ուրեմն դուք, հայերդ, երկու հազար տարի առաջ թագավո՞ր եք ունեցել,— բարկացած գոչեց ոստիկանապետը։

— Ասում են՝ ունեցել ենք։

— Չլինի՞ թե սա է կառուցել Տիգրանակերտ քաղաքը։

— Հրամանքդ, էդպես են ասում։

— Դու եղե՞լ ես Դիարբեքիրում։

— Ես չեմ եղել, բայց հայրս շատ է եղել։ Էդ դրամները նա է գտել նրա ավերակների մեջ։

— Երևի դուք էս պատկերին նայելով ուզում եք ձեր կորած թագավորությունը վերականգնել։

— Մենք նոր թագավոր չենք ուզում, էֆենդի։ Մեր նոր թագավորի անունը Աբդուլ Համիդ է։

— Ապա ի՞նչ եք ուզում։

— Ազատությո՛ւն։

— Ազատությո՞ւն։ Դու ճանաչո՞ւմ ես Մտքամոլոր Առաքելին։

— Լսել եմ նրա մասին, բայց իրեն չեմ տեսել։

— Էդ էն մարդն է, որ կողովով ռուս կին է բերել մեր տերության սահմանից ներս։

— Ուրեմն քաջ սիրահար է եղել, որ շալակով օտար կին է բերել մեր երկիրը։ Բայց ես լսել եմ, որ նա էդ կնոջն անտառումն է գտել,— խոսեց Ասատուրը։

— Էդ ինքն է պատմում, որ իբրև թե անտառումն է գտել։ Ո՞վ կհավատա էդ հեքիաթին։ Ռուս կինը որտեղի՞ց բուսավ մեր անտառում։ Իսկ մեզ հայտնի է դարձել, որ նա այդ կնոջը Երևանի կողմերից է բերել։ Դրել է կողովի մեջ, վրեն կանաչ խոտ է ածել և անց է կացրել սահմանից։ Հիմա էլ որ դուրս գաս փողոց, էդ կնոջը աղբյուրի մոտ կտեսնես։ Անունը Վարսենիկ է։ Ժամերով կանգնում է աղբյուրի առաջ ու գյուն չիչակի (արևածաղիկ) է չըրթում։

— Վնաս չկա, էֆենդի, էսքան ժողովրդի մեջ թող մի հատ էլ ռուս կնիկ լինի։

— Մենք նրա կնոջից վախ չունենք, նա մեր բռի մեջ է։ Մեր-

ցավն էն է, որ նրա ամուսինը գիշեր ու ցերեկ օ՞ֆ-օ՞ֆ է անում։

— Երևի մի դարդ ունի, որ օֆ-օֆ է անում։

— Ի՞նչ դարդ։

— Բա գյուղացի մարդը առանց դարդի կլինի՞։

— Չէ՞, երևում է, որ բոլորդ էլ դեմ եք օսմանյան տերությանն։ Է՛դ է ձեր դարդը։ Ուզում եք մեր թագավորությունը կործանել։ Կարծում եք, որ եթե ուրիշ տերության մեջ ապրեք, առանց դարդի՛ կապրեք։ Գնա և էդ բոլոր օֆ-օֆ Առաքելներին և Գևորգ չաուշներին ասա, թող զենքը ցած դնեն։ Հազար հատ Գոմսա Մելիք լինի, Զուլումաթ Սմբատ և Ընկնավոր Մանոն, դուք անկարող եք մեր օսմանյան տերությունը կործանել։

— Ո՞ւմ տերությունն է հաստատ մնացել աշխարհում, էֆենդի, որ սուլթան Համիդի թագավորությունը մնա։ Էդ ոսկեդրամները երկու հազար տարի առաջ, ով գիտե, ո՛ր իշխանի կնկա բարձի վրա էին դրված, իսկ հիմա եկան մտան քու բուռը։

— Լա՞վ, լա՞վ, վերջացրու, կարող ես գնալ,—ասաց ոստիկանապետը, ոսկիները գրպանը դնելով և խեթով նայելով հայ շինականին։

— Իսկ գործը, էֆենդի։

— Գործը կարճված է։ Նայիր, թղթերդ ճեղքում եմ քո ներկայությամբ։ Բայց մյուս անգամ աղաների վրա շուն ու գել չարձակես։ Բոլոր Գոմեշ աղաները մեր պետության հիմքն են։ Նրանց մեջքին զարկողը մեր մեջքին է զարկում։ Սրան օսմանյան տերություն կասեն։ Մենք բոլորս ազնիվ մարդիկ ենք, և մեր թագավորության շահը ամեն բանից բարձր է մեզ համար։

Խոդեդանը գդակը ծածկեց և դուրս եկավ այդ ավազականոցից։

— Թքած քու թագավորության վրա, քու տերության վրա,— դեպի ետ դառնալով գոչեց վրդովված գյուղացին։ Վերջապես փորձեցի ձեզ։ Եվ սրա՞նք են մեր երկրի տերերը։ Սրա՞նք են մեր աշխարհի կառավարիչները. էս երկարականջ գավառապետը, էս Թալիպ էֆենդին, էս Քաչալ Աբդուլն ու Գուրսե Սլոն։ Թո՛ւ ձեր կաշառակեր պետությանը։ Ամաչեք գոնե էս ոսկեդրամից, որ դրեցի ձեր բռի մեջ։ Որքան մանր եք դուք էդ թագավորի համեմատությամբ։

Հովիվը մոտեցավ Արինոքին։ Հեռվից երևաց իր երդիկի կապույտ ծուխը։

— Ինչքա՜ն լավ են մեր հողե խրճիթները և որքան կեղտոտ են ձեր քյոշկերն ու ապարանքները,— բացագանչեց նա, Օնեի տանձի ծառերի տակից դեպի արևմուտք նայելով։

Արինոքի ձորում նա մի կատվի ձագ տեսավ, որ մլավում էր քարերի մեջ։

— Արի քեզ տուն տանեմ,— ասաց Խոդեդանը և կռանալով բռնեց կատվին։ Անունը դրեց Նարգիզ և, թևի տակ առնելով, բերեց տուն։

Յոթ ոսկիների կորուստը այնքան վիշտ չպատճառեց Ասատուրին, որքան ուրախացրեց նրան այդ փոքրիկ անբան կենդանին։

ԸՆՏԱՆԻՔ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Խոդեդանի անդրանիկ երեխան ծնվեց 1900 թվականի գարնանը, կես գիշերին։ Նրա պորտը կտրեց Ոսկեհատը։ Երբ լույսը բացվեց, նա նորածնին գրկած դուրս եկավ շեմքը և, դեպի արևելք նայելով, երեք անգամ խաչակնքեց խանձարուրի վրա։ Այնուհետև մտավ տուն, թոնրի շուրջը երեք՝ պտույտ գործեց և, մոտենալով ծննդկանին, երեք անգամ հարցրեց.

— Ես եմ թեթև, թե՞ դու։

Բայազը երեք անգամ պատասխանեց՝ ես։

— Թեթևությունով անցնի,— ասաց Ոսկեհատը և երեխային նրա աջ կողմը դրեց։

Սակայն հազիվ երեք տարին բոլորած, այդ երեխան զոհ դարձավ մի դժբախտ պատահարի։ Տանիքին քնած ժամանակ նրան վերմակի տակից հափշտակեց անտառի գայլը։

Ասատուրի երկրորդ երեխան ծնվեց 1903 թվականի աշնանը։ Երբ մայրը ծանր ցավերի մեջ էր, Ոսկեհատը խնդրեց մի արոր հանել տանիք և մասերն իրարից արձակել, որ երկունքը թեթևանար։ Անհիշելի ժամանակներից մնացած այդ սովորությունը դեռևս պահպանվում էր ռամիկ ժողովրդի մեջ։

— Ես արոր չունեմ,— ասաց Խոդեդանը։

— Օնեի արորը բեր։

— Մինչև բերեմ՝ կուշանա։

— Ձեն տուր՝ թող ինքը հանի։

— Օնե՜,— ձորի պռունկին մոտենալով, գոչեց հովիվը։

— Ի՞նչ է, Ասվատուր,— հարցրեց հարևանը՝ շեմքը դուրս գալով։

— Արորը հանիր տանիք։ Շուտ արա, Բայազը ցավերի մեջ է։

Օնեն իսկույն հասկացավ, թե ինչ էր խնդրում Խոդեդանը։ Նա անմիջապես արորն իր ամբողջ սարքով դրեց ուսին և, իրենց տանիքն ելնելով, սկսեց մասերն իրարից արձակել։

Նորածինն աղջիկ էր, անունը Հեղինե դրեցին։

Ասատուրի երրորդ զավակը ծնվեց 1906 թվականին։ Անունը Լևոն կնքեցին (Ճնճուղ Լևոնի անունով)։ Սա երկու տարեկան դարձավ, բայց ոտքի չէր կանգնում։ Այդ ժամանակ Արինոքով անցավ մի թափառական պառավ։ Նա խորհուրդ տվեց երեխային լողացնել շան լակամանի մեջ, որ շուտ ոտքի ելնի և արագավազ լինի։

Այդպես էլ արեցին։

Ընտանիքի չորրորդ երեխան ծնվեց 1908 թվականի ամռանը։ Աղջիկ էր, անունը Աշխեն դրեցին։ Սա մեծ դժվարությամբ բաժանվեց կրծքից։ Մայրը մուր քսեց պտուկին և վախեցրեց նրան սարդով ու ակլատիզով։

— Ակլատիզ,
Չվանը վիզ
Կգա կախվի երդիկեն,—

շշնջաց Բայազը, առատաղը ցույց տալով և այնպես ձևացնելով, թե ակլատիզը շուտով իջնելու է երդիկից։

Ահա այսպես, տարի առ տարի, բազմացավ Խոդեդանի ընտանիքը։ Տունը լցվեց, ծղրիդները սկսեցին երգել։

Հենց առաջին տարին Ասատուրն իր նոր խրճիթի շրջապատը մաքրեց քարերից և հատկացրեց ցանքսի։ Առջևի փոքրիկ տարածությունը բանջարանոց դարձրեց, իսկ ետևի հողակտորը՝ արտ։ Առաջինում նա ցանում էր շաղգամ, իսկ երկրորդում՝ գլգել և կորեկ։

Գլգելը շատ բերքատու բույս էր։ Մեկ հատիկ ցանողը հնձում էր հազար հատիկ։ Բարձրանում էր մարդահասակ, երկայն, կանաչ տերևներով, որի ծայրին գլխիվայր կախվում էր կլոր, սպիտակ խոշոր հատիկներով լի ողկուզաձև մի գունդ։ Դրա մի տեսակը, որ շատ տարածված էր նաև Մշո դաշտի գյուղերում, կոչվում էր

ղ ը լ դ։ Գույնը սև էր, բայց, ցորենի հետ խառնուրդ կազմելով, համեղ հաց էր տալիս։ Ասում էին, որ դա եղել է այն անդրանիկ հացաբույսը, որ մշակել էին խալդերը և ուրարտացիք երեք հազար տարի դրանից առաջ։ Եվ ղ ը լ դ անունն էլ, հավանորեն, խ ա լ դ բառի մնացորդն էր։

Խոդեդանի ընտանիքն ապրում էր գլխավորապես կորեկով և այդ ղ ը լ դ կոչվող գլգել հացով, բայց առանց խառնուրդի, որովհետև ցորեն չունեին։ Նրանք ուտում էին այն միևնույն ավանդական հացը, որ կերել էին խալդերն ու ուրարտացիք երկրի այդ մասում հազարավոր տարիներ առաջ։

Ինքը Ասատուրը ուտում էր փայտե հաստ գդալով և կավե խոր ամանից, որ կոտիկ էր կոչվում։ Ուտելիս նստում էր թոնրի մոտ, զմբիլի կամ քուրսու վրա, երդիկից շեղակի ներս թափանցած արևի հաստ շողի տակ, որի ծիրանագույն շերտը, երբեմն նրա պնակի վրայով անցնելով, մի պահ ոսկեզօծում էր նրա համեստ շինական ճաշը։ Երբեք գլուխը չէր բարձրացնում։ Երբեմն ձեռափով սրբում էր բերանը, հարդարում, մաքրում էր բեղերը և նորից շարունակում էր ախորժակով ուտել։

Բայազը սովորաբար պպզում էր նրա դիմաց, տաք եղամանը ձեռքին պահած, ուշադրությամբ հետևելով, որ ամուսնու ճաշը չպաղի։ Երբ նկատում էր, որ կերակուրը շորացել է, նա փայտե գդալով ճեղքում էր նրա ճաշը և մեջը յուղ էր ածում կամ նորոգում էր կերակուրը։

Երեխաներն առանձին էին ճաշում։ Ուտում էին մեկ գդալով՝ փոխն ի փոխ։ Հաճախ կռիվներ էին ծագում նրանց մեջ, երբ մեկն ու մեկը գդալը ուշ էր փոխանցում մյուսին կամ ավելի էր ուտում։ Բայազը մոտենալով սաստում էր նրանց, վերականգնելով գդալի խափանված կարգը։

Երբեմն Խոդեդանը, մեկ-երկու գդալ թան կամ մածուն թողնելով կոտիկի մեջ, ամանը հրում էր երեխաների առաջ, ասելով.

— Բրդեք ու քրթեք։

Պատահում էր, որ տանը՝ ճաշ չէր լինում, և Ասատուրը կեսօրին նստած ցամաք հաց էր ուտում։ Հանկարծ այդ ժամանակ ներս էր մտնում Բայազը՝ մի ծածկված ման թևի տակ։

— Ո՞վ է ուղարկել։

— Քիշոն։

Մեկ ուրիշ անգամ, երբ Օնեն էր ցամաք հաց ուտում, ներս էր մտնում նրա կինը և մի պնակ տաք թանապուր դնում էր ամուսնու առաջ։

— Ո՞վ է ուղարկել։

— Բայազը։

Մի երրորդ անգամ Ծաղկանուշն էր ուղարկում։ Եվ այսպես, իրար փոխն ի փոխ օգնելով և օժանդակելով, ապրում էին այդ հարևան հայ ընտանիքները։

Ճաշը ավարտելուց հետո, Խոդեդանը թիկնում էր հատակին փռած թաղիքին՝ բարձը թևի տակ և հանգիստ ծխում էր, կամ ելնում էր դուրս, նստում էր ձորի կանաչ պռունկին գլգելի տվերում և, հայացքը շնկշնկան հովերին տված՝ նայում էր դիմացի սարերին։

Ասատուրը Բայազին սովորաբար կանչում էր Մարտե աղջիկ՝ նրա հոր անունով։

— Մարտե աղջիկ, ուշ դարձրու՝ երեխեքը չգլորվեն Կատվաձոր։ Մարտե աղջիկ, մի գդալ թանջուր տուր՝ խմեմ։ Մարտե աղջիկ, ծերացանք, և այլն։ Մոտավորապես այս ձևով էր նա դիմում կնոջը, թե՛ իր ուրախ և թե՛ տրտում ժամերին։

Հրաշալի էր Խոդեդանի շաղգամանոցը։ Սասունում գրեթե ամեն գյուղացի շաղգամ էր ցանում։ Հնձած արտը ջրում էին և դարձնում շաղգամատեղի։

Բայազի շաղգամն ամենից շուտ էր կանաչում Արինոքում։ Կողքերին, մանավանդ արևելյան կողմից, Ասատուրը ամեն գարնան դդում էր ցանում։ Քարքարոտ ժայռերի վրա, ձորի պռկից մինչև ընկուզենիները, ամեն տարի երկարում էին նրա դդումների տունկերը՝ գետնատարած երկայնակոթ տերևներով և նարնջագույն ծաղիկներով։ Դդումներն այնքան խոշոր էին, որ նկատվում էին դիմացի քարափից, ուր ապրում էր Օնեի ընտանիքը։

Ինչպես բոլոր սասունցիք, այնպես էլ Խոդեդանը սիրահար էր շաղգամի։ Կուշտ լիներ թե քաղցած, նա սովորություն էր դարձրել գիշերով մտնել բանջարանոցը և շաղգամ ուտել, մանավանդ աշնան գիշերներին։ Այնպիսի ախորժակով էր ուտում, որ Բայազը ներսից լսում էր նրա ատամների խռփխռփոցը շաղգամանոցում։ Երբ ինքը հոգնած էր լինում, կնոջն էր ուղարկում բերելու.

— Մարտե աղջիկ, գնա մի քանի թուփ շաղգամ քանդիր, բեր ուտեմ,— ասում էր նա։ Մրսելիս շաղգամը եփում էր և ջուրը խմում։ Հացը անմիջապես դադարում էր։

Աստուրը մի մեծ կողով էր պատրաստել ուռենու ոստերից։ Ինքը և Բայազը աշնանը շաղգամը քանդելուց հետո, դրանով տեղափոխում էին և հորում մի հատուկ տեղ, ձմռանը օգտագործելու համար։ Մի քանի կողով շաղգամ էլ թելը Մեսրոպի համար էին առանձնացնում։ Այնքան հռչակավոր էր Խոդեդանի շաղգամի քթոցը, որ շատ գյուղացիք հերթով բանեցնում էին այն։

Բայազը իրենց խմելու ջուրը վերցնում էր Կատվաձորի աղբյուրից։ Գնում էր վաղ արևածագին, կուժը ուսին դրած։ Այդ ժամերին, երբեմն իրենց քարափից իջնելով այդտեղ էին գալիս Քիշոն և Ծաղկանուշը՝ ատաղձագործ Հակոբի կինը։ Երեքով կանգնում էին աղբյուրի մոտ, զրուցում էին, և կժերը լցնելով՝ բաժանվում։ Երկուսը բարձրանում էին ձորի ստվերոտ լանջով, իսկ ինքը՝ արևոտ կողով։

Երբ տանը գործ չէր լինում, մանավանդ հով երեկոներին, Բայազը Իրենց քարափին կանգնած իլիկ էր մանում։ Իլիկի պոչը այնպիսի համաչափությամբ էր զարկում ծնկանը, և բուրդը անվերջ բարակացնելով երկու ձեռքը գլխի հետ աստիճանաբար վերև բարձրացնում, որ իլիկը երկարելով կախվում էր ձորի մեջ, բանաստեղծական մի հաճելի բզզոց արձակելով։

Իլիկիս պոչը նախշուն էր,
Յարս եկավ, աշուն էր,—

երգում էր Բայազը։

Իլիկը ներքև իջնելիս, վայրի կատուները, նապաստակները և սկյուռները երբեմն հավաքվելով, ետևի թաթերին կանգնած, խաղում էին նրա պոչի հետ։

Խոդեդանը և Բայազը քնում էին գլուխները իրենց ամուսնական բարձի վրա քով քովի դրած։ Ամռանը պառկում էին տանիքին, իսկ ձմռանը՝ թոնրի մոտ կամ տաք բուխարիկի առաջ։ Բայազը քնելիս գլխին կապում էր ամպագույն լաչակը, իսկ Աստուրը ծածկում էր տափակ գդակը, որ գիշերվա համար էր։

Մանուկները պառկում էին բոլորովին մերկ և հասակի կարգով։ Խոդեդանի կողքին պառկում էր Բայազը, Բայազի կողքին՝

Հեղինեն, ապա հերթով շարվում էին Լևոնն ու Աշխենը։ Վերջինի մոտ, խսիրի ծայրին, ննջում էր գերդաստանի կատուն՝ Նարգիզը։ Տնակի մեջտեղը՝ սյունի վրա, պլպլում էր ձեթե ճրագը՝ թանձր ու մրոտ պատրույգով։ Գիշերը, երբ բոլոր ձայները դադարում էին, խրճիթը լցվում էր ճռիկների երգով։ Նրանք երգում էին սասունցի այդ շինական ընտանիքի բախտի համար։

Հաճախ, կես-գիշերին, Ասատուրը արթնանալով նստում էր անկողնու մեջ, ծխում էր և ունկնդրում ծղրիդների համերգը։ Դրանց երգը լսվում էր առաստաղի մրոտ գերաններից, բուխարիկի տաք անկյուններից և թոնրի շրթան ճեղքերից։ Այդ հրաշալի երաժշտությունը տևում էր մինչև արևածագ։ Խոդեղանը ճիճիրանների երգին ունկնդիր, գոհությամբ դիտում էր, թե ի՛նչպես Բայազի և իր երեխաների խաղաղ շնչառությունից ելնում իջնում էր իրենց կարկատած հնամաշ վերմակը։

Նա երբեմն ելնում էր դուրս և, Արինոքի ձորաբերանին կանգնած, խավարի միջով նայում էր ահռելի հովտին։ Ձորի միջից իր ականջին էր հասնում գետակի սառը ջրերի խշշոցը Կատվաձորի կանաչ ընկուզենիների սոսափյունի հետ։ Ձորի հանդիպակաց ափին պլպլում էր Օնեի գերդաստանի ճրագը։ Երբեմն-երբեմն լսվում էր, թե ի՛նչպես թեթև քամուց ծանր տանձերը, Օնեի ծառերից պոկվելով, գլորվում էին ձորը։

Տուն մտնելիս, նա կանգ էր առնում թոնրի առաջ և հերթով նայում էր իր զավակներին։ Ո՛ւմ թևը բաց էր՝ ծածկում էր, ո՛ւմ ոտքը դուրս էր ընկել՝ դնում էր վերմակի տակ։ Հեղինեին նայելիս, նա մտաբերում էր Օնեի արորը, որ ծնունդի ժամանակ հանել էին տանիք և մասերն իրարից արձակել։ Լևոնը նրան հիշեցնում էր շան լակամանը, Աշխենը հիշեցնում էր սարդն ու ակլատիզը։

Լուսադեմին, երբ Դաշտադեմից լսվում էր Օնեի տան աքաղաղի հաղթական ծուղրուղուն, որին անմիջապես արձագանքում էին հարևան տների և շենների աքաղաղները, Բայազն արթնանալով և երեսը խաչակնքելով, քաշում էր երդակը։ Քարափին կանգնած մենավոր խրճիթը լցվում էր անտառի կապույտ և սառը լույսով։

Այդքան բազմաթիվ մոտ և հեռավոր կանչերի միջից Ասատուրը հեշտությամբ զանազանում էր թե ո՛ր գյուղից, ո՛ւմ աքաղաղն է կանչում։ Նա չէր արթնանում, մինչև չկանչեին հայ շինականների

կամ Շեկո տան մշակների հավերը։ Նրա լույսը բացվում էր միայն հայրենական աքաղաղներով։

— Օնեի աքլորն է,— ասում էր նա և սկսում էր հագնվել։

Մի տուն կար, որի աքաղաղների ձայնը տհաճ էր նրա համար։ Դա Ախուպի Զատոյի տունն էր։ Հենց որ այդ մեծատան աքլորը կանչում էր, նա գլուխը բարձրացնելով, նորից դնում էր բարձին։

Իսկ երբ լսվում էր Օնեի կամ Պնտխցի Մանուկի աքաղաղների կանչը, Խոդեդանը անմիջապես վեր էր կենում, լվացվում էր աղբյուրի սառը ջրով և, մի պնակ պաղ մածնահատիկ ուտելով ու գավազանը վերցնելով, շտապում էր դեպի Սև սար, դեպի Իրիցանք։

ԱՔԱՂԱՂՆԵՐԻ ԿՌԻՎԸ

Մի առավոտ, երբ Աստուրը գյուղումն էր, իրենց թառի վրայից մի անծանոթ աքլորի շռնդալից կանչ լսեց։

— Էս ի՞նչ բան է, Մարտե աղջիկ,— ուրախացած բացագանչեց հովիվը, անկողնուց վեր թռչելով։

— Մեր ճետն է, Խոդեդան։

— Ա՜յ ես մեռնեմ դրա ձենին, կնիկ, իսկ ես կարծեցի թե Ախուպի տան աքլորն է կանչում։

— Պրծա՞վ, մենք հիմա մեր սեփական աքլորն ունենք։ Դու գիտե՞ս, որ Զատոն քեզանից նեղացել է։

— Ինչո՞ւ։

— Որովհետև, երբ նրա աքլորը ծուղրուղու է կանչում, դու քու գլուխը նորից դնում ես բարձին։

— Լավ եմ անում։ Սրանից հետո է՛լ բոլորովին նրա կարիքը չեմ զգա։

Բայազի աքլորը երկարավիզ էր և նախշուն։ Պոչը սև էր, պարանոցը սպիտակ, ոտքերի բմբուլներն արծաթագույն, իսկ թևերը՝ կարմիր։ Նրա կատարը մուգ կարմրագույն էր, և ուներ հինգ խոշոր ատամ, երեքը դեպի ետ դարձած, իսկ երկուսը՝ առաջ։ Պոչը կազմված էր յոթը խոշոր մանգաղաձև փետուրներից՝ մեկը մյուսի վրա իջնող։ Վերջին փետուրը մյուսներից անջատված էր բավական լայն բացվածքով։

Մի անգամ Կատվաձորում ընդհարվեցին երկու աքաղաղ։ Դրանցից առաջինը Ջատոյի կարմրակատար աքաղաղներից մեկն էր, որ իր կռվարարությամբ անուն էր հանել գյուղում, իսկ մյուսը՝ Բայազի աքլորը։

— Աքլորների կռի՜վ։ Ցուլերի ու ղոչերի կռվից հետո, դա ամենամեծ հանդեսն էր գյուղում։

Կռիվն այն աստիճան կատաղի էր ու հետաքրքրական, որ ամբողջ գյուղը հավաքվել էր ձորաբերանին այդ տեսարանը դիտելու։ Եվ ինչպե՞ս չդիտեին։ Չէ՞ որ իրար էին բախվել երկու տարբեր տների աքլորներ՝ հարուստ հողատեր աղա Ջատոյի և գյուղի հովիվ Ասատուրի աքաղաղները։

— Ի՞նչ է պատահել,— հարցնում էին գյուղացիք միմյանց իբրև կարևոր նորություն։

— Ջատոյի աքլորն է կռվում։

— Ո՞ւմ աքլորի հետ։

— Խոդեդանի։

— Դե գնանք տեսնենք, ասում էին ու վազում իրար ետևից կին, տղամարդ, մանուկ ու ծեր։ Վաղ եկողները շարվել էին Օնեի տանձի ծառի տակ, ոմանք թառել էին ճյուղերին։ Շատերը թխագույն ապառաժներին պառկած նայում էին ներքև, իսկ ուշ եկողները շարվել էին ձորի պռկին։ Այդ բազմության մեջ էին Քիշոն, ատաղձագործ Հակոբը և Ծաղկանուշը։ Եկել էր նաև Ախուպի Ջատոն։ Նա կանգնած էր Օնեի մեջտեղի տանձենու տակ, որ գլուխը չցավար։

Արինոքի ձորաբերանին, Ասատուրի խրճիթի առաջ, նույնպես մեծ բազմություն էր հավաքվել։ Այնտեղ էին Բայազը, Ոսկեհատը, Հեղինեն, փոքրիկ Աշխենը և Լևոնը։ Բայազը տագնապահար նայում էր ներքև, մի ձեռքով իլիկը բռնած, մյուսով՝ հազիվ զսպելով Լևոնին, որ մի մեծ քար վերցրած, ուզում էր սպանել Ջատոյի աքաղաղին։

Ձորում ահավոր կռիվ էր։ Պարանոցների փետուրները ուռեցրած, երկու աքաղաղները կատաղությամբ գրոհում էին իրար վրա։ Կտցահարում էին միմյանց, ետ-ետ էին քաշվում, մի պահ վզները երկարած, մոլեգնաբար նայում էին մեկը մյուսին և, վերստին մոտենալով՝ բախվում էին իրար։ Նորից էին հանդարտվում և նորից

իրար զարկվելով բարձրանում էին օդը։ Բոլորն էլ սրտատրոփ սպասում էին, թե ո՛ւմ աքլորն է հաղթելու։

— Իհարկե Բայազի աքլորը կհաղթի,— կանխագուշակում էին ոմանք։

— Չատոյի աքլորի առաջ աքլոր կդիմանա՞,— պարծենկոտությամբ հայտարարում էին աղայի կողքին կանգնած գյուղացիներից մի քանիսը։ Նրանցից մեկը նույնիսկ մատների վրա բարձրաձայն հաշվում էր, թե Ախուպի տան աքլորը քանի աքաղաղների էր փախուստի մատնել իրենց գյուղում։

— Նույնիսկ էս ձորի կատունները վախենում են Չատոյի աքլորներից, ո՞վ մնաց թե մեր հավերը դիմանան դրանց թափին,— ասում էր նա։

Կռվի ելքը Չատոյի համար ճակատագրական էր լինելու։ Եթե Ախուպի աքլորը պարտվեր, նրա անվան վրա սև բիծ էր ընկնելու։ Ամենքը նրա մասին հեղնանքով ասելու էին. «Ի՛նչ աղա է, նույնիսկ մի հասարակ շինականի աքլորը նրա աքլորին հաղթեց»։

— Հիմա կհաղթի՞, հիմա կհաղթի՞,— վերևից ոգևորությամբ գոչում էր Բայազը, ավելի ու ավելի կռանալով ձորի վրա։

Եվ իսկապես, նրա աքլորը հանկարծ անցավ ջուրը և Չատոյի աքաղաղին հալածեց մինչև Օնեի տանձենիները։ Նա այնպիսի քաջությամբ էր կռվում, որ անկարելի էր դիմադրել։ Չատոյի աքաղաղի բմբուլները ներկվել էին արյունով, նրա կատարից և կռուցից արյուն էր կաթում, արնաշաղախ փետուրները պոկվելով ընկնում էին ժայռերի վրա։ Այլևս կասկած չէր մնում, որ Ախուպի տան աքաղաղը շուտով շունչը փչելու էր։ Նա նույնպես ճիգ էր անում մի կերպ ավարտել կռիվը, բայց Բայազի աքլորը խափանում էր նրա փախուստը, կամենալով մի բնազդական գրոհով վերջ դնել այդ ամբարտավան աքաղաղի գոյությանը, որից դողում էին գյուղի գրեթե բոլոր հավերն ու աքլորները։ Կարծես թե նա ևս զգում էր, որ ինքը գործ ունի մի հարստահարիչ մարդու հետ և կամենում էր խայտառակել, պարտության մատնել այդ մեծատան աքաղաղին։ Չատոն զարմանքից սպրդնել էր, ամոթից չէր իմանում ի՛նչ անի։ Ամենքը նրան էին նայում։ Կարծես պարտվողը ոչ թե իր աքլորն էր, այլ ինքը։

Ախուպի տան համար ստեղծված այս ընդհանուր տագնապի պահին, ո՛րտեղից ո՛րտեղ, կռվի ասպարեզ նետվեց մի գեր, խոշոր

աքաղաղ։ Ժողովուրդը ճանաչեց։ Դա Ախուպի տան սև աքաղաղն էր, որ Զատոյի թոռները գաղտագողի բերելով արձակեցին կովի մեջ։ Բայազի աքլորը միայնակ սկսեց մաքառել Ախուպի տան երկու աքաղաղի դեմ։ Նա խիզախորեն մերթ մեկի, մերթ մյուսի գրոքին հարվածներ տալով, մինչև ձորի պռունկը հալածեց դրանց, կռիվը տեղափոխելով Օնեի տանձի ծառերի տակ։ Աքաղաղները, իրար բախվելիս, այնպիսի բարձր թռիչք էին կատարում, որ Զատոն և իր կողքի մյուս հանդիսատեսները գլուխները ետ-ետ էին տանում՝ նրանց թևերից պաշտպանվելու համար։

Ամենքը հիացած էին Բայազի աքլորի անօրինակ քաջությամբ, որը թեև ցածրումն էր գտնվում, բայց համարձակորեն ետ էր վանում Ախուպի տան աքաղաղների համատեղ գրոհները։

Սակայն շուտով դրությունը փոխվեց։ Զատոյի աքաղաղները վերևից հարձակման անցան և աստիճանաբար դեպի ձորը շպրտեցին իրենց հանդուգն ախոյանին։ Բայազի աքլորը կատաղի դիմադրելով և հուսահատական թռիչքներ կատարելով օդն ի վեր, ետ-ետ էր գնում, երբեմն էլ ուղղակի գլորվելով ժայռերից։ Զատոյի երկու աքաղաղները անխնա հարվածելով և կտցահարելով նրան, որն առանց այդ էլ ուժասպառ էր դարձել, փետրաթափ արին և նրա արնաշաղախ, անշնչացած դին վերևից գլորեցին ձորի մեջ։

— Բայազի աքլորը հաղթվեց,— բերնեբերան գոչեցին հանդիսականները։ Շատերը չհանդուրժելով այդ բացարձակ նենգությունը, նախատինք տվեցին Ախուպի տանը, իսկ Բայազը Լևոնի հետ ձորն ի վար իջնելով, սկսեցին քարկոծել Զատոյի սև աքաղաղին։

— Ո՞ւր եք իմ արծվին քար գցում, հիմա բոլորիդ կսպանեմ,— գոռաց Ախուպի քուրդը վերևից։

— Ապա ինչո՞ւ խորամանկի պես հարձակվեց աքլորիս վրա։

— Տղամարդ աքլոր է, կռվի մեջ մտավ,— պարծեցավ Զատոն։

— Կռվի մեջ պարզ ճակատով կմտնեն, ոչ թե գողեգող,— գոռաց Բայազը և, ջուրն անցնելով, սկսեց ժողովել իր հավի արյունոտ բմբուլները։

— Հավաքի՛ր խորոզիդ բմբուլներն ու գնա, իսկի տեսնվա՞ծ բան է, որ չքավորի աքլորը աղա մարդու աքլորին հաղթի,— քմծիծաղով նկատեց Ախուպի քուրդը։

— Ինչո՞ւ չհաղթեց, բոլորն էլ տեսան, որ հաղթեց,— բացագանչեց Քիշոն ծառի տակից։

— Բայազի աքլորից ուրուրն էր վախենում, եթե մեկ-մեկ գային՝ նա բոլորին էլ կհաղթեր,— ավելացրեց Ծաղկանուշը։

— Ճի՛շտ է,— արձագանքեցին ներկաները միաբերան։

— Էս Բռնաշեն գավառի մեջ դժվար թե մեկն ու մեկի խորոզը կարողանա իմ աքլորին հաղթել,— ասաց Ախուպի տան մեծավորը և, սև կերպասը ուղղելով աչքի վրա, ուղևորվեց դեպի տուն։

Ժողովուրդը ցրվեց։

Նույն օրը լուրը հասավ Իրիցանք։

— Զոռբայի աքլորը զոռբա կլինի,— գոչեց Աստատուրը՝ խարույկի կրակը խառնելով։

ԳԱՅԼԵՐԻ ՀԵՏ

Խոդեդանը ամբողջ ժամանակ լինում էր սարերում։

Տոնեի, Օնեի և Ստեփանի հետ նա իր հոտը Իրիցանքից առաջնորդում էր մերթ դեպի Ծովասար, մերթ դեպի Մառնիկա սարը։ Երբեմն էլ հասնում էր մինչև Ծիրնկատար և Ծծմակա Քիթ։

Մի հռչակավոր կանաչ կար այդ վայրերում, որ կոչվում էր քեմյան։ Դա լայն և նախշուն թփերով մի խոտ էր, որ գիշերները ճրագի պես լույս էր արձակում։ Սակավ էր պատահում, բույց խիստ կաթնատու էր։ Այդ խոտն արածող ոչխարը երկար ժամանակ դադարում էր ճարակելուց և շարունակ որոճում էր։ Դրանից նրա ատամները ոսկեգույն էին դառնում։

Ավետի Հաջին պահանջում էր, որ իր հոտը լավ արոտավայրեր գնա և հատկապես արածի այդ կանաչը, որ նրա կաթը առատ և յուղոտ լինի։ Կաթի յուղայնությունը քուրդը որոշում էր մի չափազանց ինքնատիպ եղանակով։ Գարնանը նա ամեն շաբաթ այցելություն էր գնում հովիվներին։ Աստատուրը պարտավոր էր նրա ներկայության կթել ոչխարը, կաթը եռացնել մի մեծ կաթսայի մեջ և խառնել նորքենու վարոցով (ճիպոտով)։ Հետևյալ առավոտ նա կաթի երեսին գոյացած թանձր սերի վրա դնում էր նորածին գառներից մեկը։ Եթե սերը այդ ծանրության տակ կոտրվեր, կամ ճեղքվածքներ տար, կնշանակե կաթի յուղայնությունը պակաս էր։ Որպեսզի նման բան չլիներ, Խոդեդանը միշտ աշխատում էր հո-

տը այնպիսի սարեր տանել, որ հարուստ էին քեմյանով և ծաղկաշատ արոտներով։

Այդ լեռները լի էին գազաններով։ Շատ էին մանավանդ գայլերը, որոնք գրեթե ամեն օր անհանգստացնում էին խաշներին։ Բայց ահավոր էին Ասատուրի շները։ Նրանք մեծացել դարձել էին ահարկու պահապաններ և սարսափ էին տարածել ամենուրեք։ Բացի իրենից և Ստեփանից, ոչ ոք չէր համարձակվում խավար ժամանակ մոտենալ նրանց։

— Շների համար հա՞ց ուղարկեք գյուղից, ոչխարի համար ա՞ղ բերեք,— բղավում էր Խոդեդանը Իրիցանքից դեպի Արինոքը։ Անտառ եկած գյուղացիները կամ նախրապանները նրա ձայնը հաջորդաբար փոխանցում էին գյուղ և, այսպիսով, նա կապ էր պահպանում Արինոքի հետ, այնտեղից ստանալով հարկավոր պաշարը շների և հոտի համար։

Ասատուրի գելխեղդ շները այնպիսի սարսափ էին տարածել սարում, որ գայլերը, Ավետի Հաջու հոտից ահաբեկված, սկսել էին գրոհել Ախուպի տան թույլ և անպաշտպան հոտի վրա։ Չատոյի ոչխարը գնալով նվազում էր, մինչդեռ Նասրի տան հոտը գիրանում էր և բազմանում։ Չատոն եկել էր այն համոզման, որ իր տնտեսության ամբողջ դժբախտության պատճառը Բուլանուխից բերված գելխեղդ շներն էին, և նա ուզում էր որոնում վրեժխնդիր լինելու մոտկանցի հովվից։

Այդ շները ոչ միայն պաշտպանում էին հոտը գայլերից, այլև շարժում և ուղղություն էին տալիս ոչխարին։ Երբ հոտը ցրված էր, նրանք կողքից գնալով հավաքում էին արձակված մասերը, ամփոփում էին հոտը ցանկացած տարածության և ուղղության վրա։

Անվախ էր Խոդեդանը։ Ճեղքելով գայլերի շարքերը, նա համարձակորեն անցնում էր նրանց միջով։ Այդ լեռնցի հովվապետի համար կատարյալ ուրախություն էր, երբ իր շները գայլահոտ առնելով սկսում էին ոռնալ։ Նա ինքն էլ նրանց հետևելով սկսում էր ոռնալ, կամ այնպիսի վայրենական ձայներ արձակել, որ ահարկու էր դարձնում շրջապատը։ Մերթ մի շան անուն էր տալիս, մերթ մյուսի և մութի մեջ, մահակը ձեռքին բռնած, հարայ տալով վազում էր նրանց ետևից։

Մի գիշեր պատահեց այնպես, որ տասնմեկ գայլերից բաղկացած մի կատաղի ոհմակ հարձակվեց ոչխարի վրա։

— Դողո՜, Բինգյո՜լ, Դավրո՜շ,— խավարի մեջ հարայ տալով գոչեց Ասատուրը և առաջ սլացավ։ Մի ակնթարթ՝ և իր շներից յուրաքանչյուրը նստած էր մի ամեհի գազանի մեջքին՝ ժանիքներն ամուր նրա պարանոցը խրած։ Լեռնական հովիվը ցատկեց տասնմեկերորդ գայլի վրա ու սկսեց խեղդել նրան։ Լուսադեմին երեք հովիվներ մի հաստ շղթա գտան և կատակով անցկացրին Խոդեդանի պարանոցը, գոչելով նրան գելխեղդ շուն։ Վերջինս բռնեց երեքի վզից և այնպես ամուր հոպ տվեց, որ լեզուները դուրս ընկան։ Շները նույնպես հասան օգնության և նա, ընդհանուր քրքիջի տակ, արձակեց ընկերների՝ պարանոցները։

Երեք օր հետո պատահեց մի նշանավոր դեպք։

Լուսնյակ գիշեր էր։ Ասատուրը ուշացած հոտի մի ճյուղը Մառնիկա սարից առաջնորդում էր դեպի Իրիցանք։ Իր հետ կային միայն երեք շուն։ Մի մեծ քարափի մոտ շները սկսեցին հաչել։ Ոչխարները խրտնեցին, սեղմվեցին իրար և, ականջները սրած, բնազդորեն շարժվեցին դեպի քարափը։ Խոդեդանը արագությամբ մոտեցավ հսկա ժայռին և նրա առաջ ներկայացավ մի զարհուրելի տեսարան։ Գայլերի մի ահագին բազմություն նստած էր քարափին։ Անվեհեր հովիվը զգաց սոսկալի վտանգը։ Նա անմիջապես շուռ տվեց ահաբեկված հոտի գլուխը և ոչխարը տարավ այլ ուղղությամբ։ Քիչ հետո տեսավ, թե ի՛նչպես գայլերը վեր կացան և, մի գծի վրա շարվելով, քարավանի պես, դնացին իրար ետևից։ Նա անվրդով կանգնած երկար դիտեց գազանների այդ հետաքրքիր շուն։

Այսպիսի դեպքեր հաճախ էին պատահում։

Ասատուրն իր սովորության համաձայն քնում էր շների մոտ։ Երբ խարույկը հանգում էր, նա գնում էր դեպի ոչխարի մակաղատեղին և ննջում էր, գլուխը նրանցից մեկն ու մեկի կրծքին դրած։ Երազի մեջ նրա աչքերի առջևով իրար ետևից անցնում էին Սև սարի գայլերը՝ իրենց ահռելի կերպարանքներով։ Խոդեդանը մեկիկ-մեկիկ հաշվում էր նրանց, ասես թե իր ոչխարն էր համբարում։

Պատահում էր, որ նա գիշերը քնի մեջ բարձրաձայն հարայ էր կանչում։ Այդ աղաղակի վրա շներն ամբողջ թափով սլանում էին առաջ։ Ինքն էլ իր ձայնից սթափվելով և մահակը վերցնելով, վազում էր նրանց ետևից։

ԹԵՎԱՎՈՐՆԵՐԸ

Բայազն արդեն սկսել էր աշխատել Ավեսի Հաջու արտերում։ Նա և Ոսկեհատը Արինոքի հայ կանանց և աղջիկներին ժողովելով, գնում էին աղայի կորեկի և գլգել արտերը քաղհանելու։ Նվազ ցողունները պոկում էին, իսկ առողջ ցողունների շուրջը բուկ էին տալիս, որ բույսը փարթամանար։ Իսկ ավելի ուշ, երբ կանաչում էր շաղգամը, նրանք շաբաթներով դուրս չէին գալիս մարգերի միջից։ Մինչև արևամուտ քաղհանում և նոսրացնում էին կանաչ տունկերը, ավելորդ թփերը կտրում էին, որ արմատն ավելի զորանար։

Բայց ամառային ամենադաժան աշխատանքը հասունացող արտերի պահպանությունն էր։ Հենց որ արտը հասկ էր կապում, Սասնո սարերի բոլոր հավքերը լցվում էին Բռնաշեն։ Գալիս էին ագռավները, կաչաղակներն ու սարյակները։ Իսկ ճնճղուկներին ու լորերին՝ թիվ ու համար չկար։

Այդ օրերին գյուղերի բոլոր հարսներն ու կանայք, տղաներն ու աղջիկները՝ թափվում էին դաշտերը, որ իրենց բերքը պաշտպանեն։ Բայազը, գյուղի հարսներին ու աղջիկներին առած, գնում էր աղայի արտերը «հապա» անելու, այսինքն հավքերին դուրս քշելու արտերից։ Նրանցից ամեն մեկը մի պարսատիկ էր կրում։ Մեջը հող էին լցնում, պարսատիկի թելի մի ծայրը անց էին կացնում միջնամատից, իսկ մյուս ծայրը բթամատով և ցուցամատով բռնած, օրորում էին օդի մեջ ու շրխկացնելով՝ արձակում։

Ավեսի Հաջու արտերը գտնվում էին Արինոքի ձորաբերանին՝ Բռնաշեն գետի երկարությամբ։ Կանայք քայլում էին կորիների միջով և պարսատիկների մեջ հող լցնելով շպրտում էին հավքերի վրա, հետն էլ զիլ վայրենական ձայներ արձակելով։ Թռչունների երամները, սև ամպի պես, կտրելով ձորը՝ նստում էին դիմացի ցանքսերին։ Այնտեղից էլ «հապա»-ով ետ էին հալածվում Դաշտադեմի արտատերերի կողմից, կամ թռչում էին դեպի մյուս հարևանների արտերը։

Ախուպի Չատոն շատ էր կատաղում, երբ նկատում էր, որ փետրավորները Արինոքի կողմից քշվում էին իր արտերի վրա։ Նա գալիս կանգնում էր ձորաբերանին, որևէ ծառի ստվերի տակ և, կրակելով, ետ էր դարձնում երևացող երամները։

— Ո՞ւր եք ճնճղուկներին իմ ցանքսի վրա քշում,— բղավում

էր քուրդը դեպի ձորի հակառակ պռկին կանգնած «հապա» անող աղջիկների ու կանանց խումբը։

— Դու Ավետի Հաջու հետ խոսիր, աղա, մեզ վրա ինչո՞ւ ես բարկանում,— պատասխանում էին Ոսկեհատն ու Բայազը ձորի մյուս կողմից։

— Մարութա սարի կողմը քշեք,— գոռում էր Զատոն, կրակելով օդի մեջ։

— Մարութա սարի կողմը քշենք, սասունցիք կնեղանան։

— Ուրեմն ս. Աղբերիկի կողմը քշեք։

— Էն կողմից էլ վանահայրերը կնեղանան։

— Որ էդպես է, Դավթի քարի վրայով թոցրեք դեպի Ծծմակա Քիթ։ Մի խոսքով, ո՛ր կողմն ուզում եք՝ հալածեք, միայն թե իմ արտերից թող հեռու թռչեն,— բղավում էր կատաղած քուրդը՝ մեկ անգամ էլ կրակելով օդի մեջ։

Հավքերի երամը, որ առաջին պայթյունից նեռվել էր Արինոք և «հապա»-ով այնտեղից ետ էր շպրտվել դեպի Դաշտադեմ, երկրորդ պայթյունից ահաբեկված, մի մոլեգին պտույտ կատարելով ձորի վրա և երկինք բարձրանալով, տարերայնորեն ուղղվում էր դեպի Ծովասար, մի հսկայական ամպի պես ծածկելով արևի լույսը։ Բայց դեռ այդ սարին չհասած, որոտում էր Ախուպի Խասոյի հրացանը։ Հավքերի այդ ամբողջ բազմությունը, աղմկալի և խուճապահար ետ դառնալով, Արինոքի վրայով սլանում էր դեպի Սև սարի զով անտառները։

— Էսպես էլ կրակ կլինի՞, ոչ ոք չի ուզում, որ իր արտի կողմը թռչեն։ Բա էս անտեր փետրավորները ո՞ւր պիտի գնան,— բարկացած գոչում էին Բայազը, Ոսկեհատը և մյուս աշխատավոր կանայք։

— Հեռո՞ւ թռեք, հեռո՞ւ, այ թևավորներ, այ սևավորներ,— կանչում էին նրանք՝ պարսատիկները վիլ արձակելով։

Առավոտից մինչև երեկո շարունակվում էր «հապա» անող կանանց և աղջիկների վեճը ճնճղուկների, ագռավների և անծեղների համար։ Ամեն ոք ուզում էր իր արտը պաշտպանել։ Ոմանք քշում էին դեպի Դաշտադեմ, ոմանք դեպի Ծովասար, իսկ երբ երևում էր Զատոն, թռչուններին հալածում էին Աստվածածնու լեռների ուղղությամբ կամ, աղաղակներով, փախցնում էին դեպի Դավթի քար և Ծծմակա Քիթ։

Այդ ճորտական աշխատանքին մասնակցում էին նաև գյուղի երեխաները, այդ թվում նաև Խոդեդանի և Բայազի մանուկները՝ Հեղինեն, Լևոնը և Աշխենը։ Նրանք շարվում էին Արինոքի ձորափի երկայնությամբ, հետևելով թռչունների ուղղությանը։ Հենց որ խժռողների երամը երևում էր, նրանք ուժգին աղաղակ էին բարձրացնում։ Այդ ազդանշանի վրա կորիներով անցնող կանայք ու աղջիկները օրորում էին իրենց պարսատիկները և «հապա՛», «հապա՛» գոչելով՝ շպրտում էին հավքերի ետևից։

Արևամուտին մանուկները տուն էին գնում, իսկ Բայազը, Ոսկեհատը և մյուս կանայք շարունակում էին «հապա» անել, մինչև որ բոլոր թևավորները իսպառ քաշվում էին իրենց բները։

ԱՐՋԵՐԸ

Երբ փետրավորները հեռանում էին, այս անգամ արջերն էին ելնում որջերից։ Նրանք խմբերով հարձակվում էին գլգըլի և կորեկի ցանքսերի վրա և ոչնչացնում ահագին տարածություններ։ Գիշերով մտնում էին հասունացած արտերի մեջ, կանգնում էին ետևի թաթերին և առջևի թաթերով ջարդում գլգըլի սպիտակ, խոշոր և ծանր հասկերը։ Շատ արջեր ուղղակի բնակվում էին արտերում։

— Մի տես էդ ի՞նչ հորթեր են լցվել կորեկի մեջ։

— Հորթեր չեն, արջեր են,— պատասխանում էր հարևանը։

Այսպիսի խոսակցություններ հաճախակի էին լսվում Բռնաշենի գյուղերում։

Այդ ամիսներին երբ հասունանում էր ոչ միայն բերքը, այլև անտառները ծածկվում էին մանանայով, Ծովասարի արջերը խմբերով շարժվում էին դեպի Սև սար՝ գազպա ուտելու։ Իրենց ճանապարհին նրանք, մեկ-երկու օրով, կանգ էին առնում Դաշտադեմի և Արինոքի ցանքսերի վրա։

Արջերի դեմ կռվելու համար գյուղերից գնում էին զինված տղամարդիկ։ Նրանք կրակոցներով հալածում էին արջերին կամ արտերի չորս կողմը խարույկներ էին վառում, որ գազանները վախենային մոտ գալ։ Այդպիսի կրակներ երևում էին Ծովասարի և Մարութա լեռան գրեթե բոլոր մասերում։

Արջակռվին մասնակցում էին նաև Խոդեդանը, Ստեփանը և

Օնեն, որոնք հատկապես այդ գործով, երբեմն շտապ, կանչվում էին սարից։

Մի անգամ Ավետի Հաջին նրանց դիմելով ասաց.

— Մարդ է եկել Ծովասարի կողմից։ Էդ սարի լանջերին մեծաքանակ արջեր են երևացել, որոնք շարժվում են դեպի Սև սար։ Նրանք անցնելու են մեր ցանքսերի վրայով։ Ի՞նչ գնով էլ լինի, հարկավոր է փրկել իմ բերքը։

Հովիվները մեկական հրացան վերցնելով անմիջապես մեկնեցին պահակության։ Նրանք Հաջու արտերի շուրջը վեց տեղով խարույկ վառեցին։ Ամեն մեկը հսկում էր երկու կրակի։ Երբ մութը պատեց, լսելի դարձավ, թե ի՞նչպես արջերը սկսեցին ջարդել գլգելի ծանր հասկերը։

Հրացանը որոտաց։

Մի քանի տասնյակ արջեր, իրենց բրդոտ քոթոթներով, սարսափահար դուրս պրծան ցանքսերի միջից և շարժվեցին դեպի Արինոք։

Տեսնելով, որ գազանները գյուղի վրա են հարձակվում, Խոդեղանը պարպեց երկրորդ գնդակը և ահագին մահակը շարժելով հարձակվեց նրանց վրա։

Ստեփանը թեև ամենափոքրն էր, բայց նրա համար արջաբույն կամ հավաբույն մտնելը միևնույն բանն էր, իսկ արջերին արտերից հալածելը՝ մեծագույն բավականություն։ Նա նույնպես բարձրաձայն կրակեց օդի մեջ և, երեք կողմից հարձակման անցնելով, հովիվները արջերին քշեցին դեպի Կատվաձոր։

Ջատոյի գոմերը բաց էին։

Գազանների մի մասը ձորով խույս տվեց դեպի անտառ, իսկ մյուս մասը, վեր ելնելով, լցվեց Ախուպի տան գոմերը։

Լուսանում էր։

Հաջու արտերի շուրջը հետզհետե մարեցին դիշերվա խարույկները։

Առավոտյան, Ախուպի քուրդը իր սովորական ժամին բարձրացավ Տոնեի տանիքը և բղավեց դեպի Ծովասար։

— Փա՛ռք աստծո, արջերն էս գիշեր մեր ցանքսերին վնաս չեն տվել, իսկ ձեզ մոտ ինչպե՞ս է գործը։

— Մեր արտերին էլ վնաս չեն տվել,— լսվեց իր հորեղբոր պատասխանը դիմացի սարից։

— Ուրեմն հաց ունե՞նք այս տարի։

— Ունե՞նք, ունե՞նք։

— Որ էդպես է՝ ապրեցինք,— ասաց Զատոն և, տանիքից իջնելով, գնաց ու կանգնեց Արինոքի ձորաբերանին, ձեռքը դեպի Նասրի տան կողմը թափ տալով.

— Ո՞վ է գիշերով արջերին լցրել գոմերիս մեջ։

— Չգիտեմ, աղա,— ձորի հակառակ կողմից լսվեց Աստատուրի պատասխանը։

— Լսի՞ր, խոդեդա՛ն, ինչպես երևում է, դու և Ավետի Հաջին որոշել եք ինձ քշել Դաշտադեմից։

— Զրպարտանք է, աղա։

— Եթե դու գելխեղդ շներ չբերեիր Բուլանուխից, գայլերը հավասարապես կուտեին թե՛ իմ և թե՛ Ավետի Հաջու ոչխարը, իսկ հիմա նրանք միայն իմ հոտի վրա են հարձակվում։

— Գելի օրենքն էդպես է, աղա, նա միշտ անզորի վրա է հարձակվում,— բացատրեց Աստատուրը։

— Իսկ ճնճղուկների օրենքը ո՞րն է։

— Մի՞թե ճնճղուկների համար էլ մենք ենք մեղավոր։

— Բոլորդ էլ մեղավոր եք։ Գազաններին ու փետրավորներին շարունակ իմ ոչխարի ու արտերի վրա եք քշում, որ ես աղքատանամ ու թողնեմ հեռանամ Դաշտադեմից։ Բայց ես Բոնաշենից գնացողը չեմ։ Միտք ունեմ Դաշտի Ալվարդինջ գյուղի պաղ աղբյուրի վրա մի տուն շինել, բայց հիմնական տեղս էս սարերն են։ Կարծում ես չգիտե՞մ, թե ինչու համար Մոտվանից եկար։

— Ինչո՞ւ համար։

— Որ փախչես խաչապաշտի հող։ Դու թաքնված ֆիդայի ես, և կապված ես Գոմսա Մելիքի ապստամբ գյուղացիների հետ։ Ճիշտ է, իմ աչքը կապված է, բայց ես ամեն բան տեսնում եմ։

— Ուրիշ էլ ի՞նչ ես տեսնում։

— Տեսնում եմ, որ ձեր վերջը վատ է լինելու։ Խաչապաշտներին սիրելու համար ձեզ մի օր կկոտորեն։ Ինչպես որ իմ աքլորները խորոզիդ բմբուլները քամուն տվեցին Կատվաձորում, էդպես էլ մենք ձեր բմբուլները քամուն կտանք մի օր,— քոլոզը գլխին ուղղելով սպառնաց Զատոն։

— Շուտ հեռացի՛ր ձորի պռկից, օսմանցու շուն, թե չէ հրա-

ցանը փորդ կդատարկեմ,— գոչեց Խոդեդանը և զենքն ուղղեց դեպի Ախուպի քուրդը։

Սասունցու ձեռքին հրացան տեսնելով, Ջատոն լեղապատառ վազեց դեպի տուն և վախից կուչ եկավ իր ստվերախիտ ընկուզենու տակ։

ԳԱԶԱՊԱՐԱՂ

Ապրելով Սև սարի վրա, Բայազը վարժվել էր լեռնական ծանր աշխատանքին։ Նա ոչ միայն «հապա» էր անում Ավետի Հաջու արտերը, այլև Ոսկեհատի և մյուս կանանց հետ գնում էր Սև սար զազպա ժողովելու։

Ոսկեհատի քաղած զազպան մեծ հռչակ ուներ Բռնաշենի և Դաշտի գյուղերում։ Տոնեի և Ստեփանի միջոցով նա ծանոթացել էր Սև սարի այն վայրերին, ուր մանանան առատ էր և անուշահոտ։ Կար երկու տեսակ զազպա։ Մեկ տեսակը սպիտակ գույն ուներ և իջնում էր գազի թփերին ալյուրի նման, իսկ մյուս տեսակը իջնում էր ծառերի տերևների վրա՝ թանձր մեղրի նման։

Շաբաթանման գազպան իջնում էր գլխավորապես հուլիս և օգոստոս ամիսների շոգ օրերին, երբ օդը պղտոր էր և անքամի։ Գազպայի այդ տեսակը շատ առատ էր Մուտկանի և նամանավանդ Տալվորիկի ու Ծովասարի կողմերում։ Նա իջնում էր կամաց-կամաց, աննկատելի։ Մի կին կարող էր օրական մի քանի փութ գազպափոշի հավաքել։ Այդ ալյուրից գազպահավաք տանտիկինը պատրաստում էր սպիտակ գնդեր և պահում էր ձմռան համար։

Գազպայի մյուս տեսակը իջնում էր դարձյալ ամառային ամիսներին, երբեմն այնպիսի առատությամբ, որ ծառերի ճյուղերը ծանրաբեռնվելով կռանում էին ցած և մեղրը սկսում էր սաղարթներից ծորալ։ «Անտառը կաթում է»,— այդպես էին ասում գյուղացիներն այդ օրերին։ Մանանայի այդ տեսակը առատ էր հատկապես Սև սարում։ Օգոստոս ամսին այդ սարով անցնել հնարավոր չէր, որովհետև անցորդի հագուստը ծածկվում էր մեղրանման կպչուն նյութով։ Կանայք գնում էին անտառ, կորում էին ծառերի տերևները կամ ամբողջական ճյուղերը, և լվանում էին կարասների կամ տաշտակների մեջ։ Այնուհետև եփում էին այնքան

ժամանակ, մինչև որ ջուրը գոլորշիանում էր և ամանի հատակին մնում էր քաղցրահամ մուգ կանաչագույն մանանան։

Գազպաքաղին Բայազն անբաժան էր Ոսկեհատից և Քիշոյից։ Այդ երեքը միշտ միասին էին սար գնում։ Երբեմն էլ նրանց ընկերակցում էր Ծաղկանուշը՝ ատաղձագործ Հակոբի կինը։ Մի-մի կաթսա կամ տաշտակ շալակած, նրանք շրջում էին անտառի մեջ և, մինչև ուշ երեկո, գազպա էին լվանում ու եռացնում։

Ծովասարի կողմերից գազպա ուտելու եկած արջերը այդ ամիսներին խմբերով շրջում էին Սև սարում։ Նրանք բարձրանում էին ծառերը, կամ ճյուղերը կորացնելով, ագահորեն խժռում էին մեղրը։

Բայազը համարձակորեն մագլցում էր ծառերի վրա և լոզով (մեծ դանակ) կտրում էր մանանայի թանձր շերտով ծածկված ճյուղերն ու ոստերը։ Քանի՞-քանի՞ անգամ նա վայր էր գլորվել ծառերից, կամ հանդիպելով գազպա ուտող արջերին, մենամարտի էր բռնվել նրանց հետ։

Նրանք երբեմն գնում-հասնում էին մինչև Իրիցանք։ Երբ սաղարթների միջով երևում էր Պնտխներ գյուղը, Բայազը՝ Ոսկեհատին, Քիշոյին և Ծաղկանուշին թողնելով անտառում, ինքը միայնակ գնում կանգնում էր Դավթի քարին և կարոտած աչքերով նայում էր Մուշի հարթությանը։

Հարազատ էր այդ վայրը իր սրտին։ Աղջիկ ժամանակ նա յուր ընկերուհիներով մի քանի անգամ հանգչել էր այդ ժայռին, բանջար էր մաքրել նրա վրա, ծաղիկներից պսակ էր հյուսել և երազուն աչքերով դիմել էր դեպի Քրդագոմ։ Իսկ այժմ պատանեկան այդ գերող տարիները այլևս չկային։ Նույնիսկ հարսնության արբեցնող շրջանը չքացել էր անդառնալի։ Յոթ գույնզգույն քողերը, մեկը մյուսի հետևից ծալվելով, դրվել էին սնդուկ։ Բայազը այժմ մայր էր դարձել և անվերադարձ փոխվել էր իր տան ճանապարհը։ Նա այժմ իր գլխին կապում էր մի մավե լաչակ, որ անկյունաձև ծալելով հանգուցում էր ձախ այտի մոտ։

Կանգնում էր Դավթի քարին, մանում իր իլիկը և շարունակում էր նայել դեպի հեռուներ։

Նախ երևում էր Խասգյուղը։ Նրանից այն կողմը, դաշտի մեջտեղը, երևում էր իրենց գյուղը։ Երևում էր անգամ իրենց տան

առաջ կանգնած բարդին՝ արագիլների բույներով։ Երևում էր Մեղրագետը և նույնիսկ այն շամբերը, որոնց ետևից Խոդեդանը փախցրել էր մածնի կճուճը։

Երբեմն նրա գլխի վրայով կռկռալով անցնում էին կռունկների եռանկյունաձև երամները։ Ա՜խ, այդ կռունկները։ Ո՞ւմ մանկությունը չի առնչված այդ թռչունների երազական երթի հետ։ Ո՞վ գեթ մեկ անգամ չի լսել նրանց արբեցնող կանչը կապուտակ երկինքներից։ Նայում էր Բայազը այդ հուսաբեր հավքերի հեռավոր շարանին և նրանց հազիվ լսելի երգի միջով նրա սրտում զարթնում էին մանկության և պատանեկության անհետացած չքնաղ առավոտները։

Ահա Վարդենիս գյուղը, ուր առաջին անգամ իր գլխի վրայով անցավ կռունկների երամը։ Ահա և Արդոնք ու Վարդիսաղ գյուղերը, ուր նա գնացել էր սարի ծամոն ժողովելու գյուղական աղջիկների հետ։

— Աղջի Բայազ, ո՞ւր կորար,— լսվում էր Ոսկեհատի կանչը անտառի միջից։

— Ուշ է, Մառնիկա սարն ամպեց, արի տուն երթանք,— բղավում էր Քիշոն։

— Մենակ կմնաս անտառում, արջերը քեզ կուտեն,— ավելացնում էր Ծաղկանուշը։

Բայազը սթափվում էր երազներից և Դավթի քարի առաջ երկարած իլիկը արագորեն վեր քաղելով, շտապում էր դեպի Իրիցանք։ Նրանք շալակում էին գազպայով լի կարասները և ուշ գիշերով վերադառնում էին տուն, հետևյալ առավոտ նորից սար գնալու համար։

ԴԻՊՎԱԾ ԱՆՏԱՌՈՒՄ

Ասատուրի տարերքը հայրենի բնությունն էր։ Նա սովորաբար գոռում էր, երբ վտանգ էր սպառնում հոտին, կամ երբ շների համար հաց էր ուզում գյուղից։ Մոտկանից Բռնաշեն գալուց մեկ տարի հետո Ստեփանի ձախ ականջի թմբկաթաղանթը վնասվել էր նրա հանկարծակի գոռոցից։

Ս. Աղբերիկի կրոնավորները հաճախ գնում էին անտառ մա-

նանա լիզելու տերևների վրայից, կամ խորհրդածելու անտառի լռության մեջ։ Այդ պահերին նրանք այնքան վերացած էին լինում, որ ամենաթեթև շշուկից ցնցվում էին։ Վանքի վարդապետ Կլկը Օհանը մի քանի անգամ զգուշացրել էր հովիվներին, որ մենաստանի շրջապատում չգոռան։ Թեպետ լեռնականները խոստացել էին չվրդովել կրոնավորների անդորրը, բայց դրանից մեկ ամիս հետո պատահեց մի դեպք, որի մասին ամբողջ գավառն իմացավ։

Վանքի լուսարար Կաթմոսը, երբ գործ չէր լինում, սովորություն ուներ մեկուսանալ անտառի մեջ։ Այդ օրը նա տաճարի հրագները մեկ առ մեկ հանգցրեց, փակեց Սատանաների տան դուռը, հագավ իր սքեմը, ծածկեց մաշված վեղարը և, ժամագիրքը վերցնելով մտավ անտառ։ Նախ լեզվի ծայրով քաղեց մի քիչ մանանա տերևների վրայից, ապա կանգ առնելով մի կաղամախու տակ և, ժամագիրքը բաց անելով, սկսեց իր սովորական մաղթանքը։ Ոչ մի սաղարթ չէր շարժվում։ Այդպես երկար արձանացած, իր բթամատերի վրա կանգնած մրմնջում էր նա, բոլորովին վերացած, հեռացա՛ծ երկրից, երբ մի խիստ հանկարծական գոռոց շանթեց նրա ականջը։ Կաթմոսը սոսկալի ցնցվեց, ժամագիրքն ընկավ նրա ձեռքից, և նա տապալվեց կաղամախու տակ։

— Օգնեցե՞ք, օգնեցե՞ք,— բղավեց նա, դողդոջուն շուրթերը դժվարությամբ բաց ու խուփ անելով։

Լուրը իմացվեց վանքում։

— Կաթմոսն ընկավ։

— Ո՞րտեղ է։

— Անտառում։

Այդպես իրար ձայնակցելով դեպի պատահարի վայրը փութացին վանքի խոհարար Իգնատիոսը՝ շերեփը ձեռքին, վանքի նվիրակը, ժամկոչ Մամբրեն և երկու պառավ լվացարարուհիներ։

Մի արծաթափայլ, լուսաթրթիռ կաղամախու տակ, սրածայր վեղարով և սև սքեմով, մեջքի վրա տարածված էր ծերունի լուսարարը։ Ժամագիրքը ընկած էր իրենից մի քանի քայլաչափ հեռու։

— Ի՞նչ պատահեց քեզ, Կաթմոս,— այս ու այն կողմից ձայնակցեցին սրբազան հայրերը։ Բայց ծերունին, որ կարծես բոլորովին մնջել էր, ձեռքի բարակ մատներով թխթխկացնում էր ականջներին, կամենալով հասկացնել, թե այլևս չի լսում։

— Տեսա՞ր, խլացավ մեր խեղճ Կաթմոսը,— գոչեց ժամկոչը, ժամագիրքը գետնից վեր քաղելով և համբուրելով այն։

— Լսողությունից զրկվեց վանքի լուսարարը,— հառաչեց նվիրակը՝ վեղարը գլխին ուղղելով և աշխատելով բարձրացնել նրան։

— Էսքա՞ն էլ ձախորդ բան,— մրմնջաց խոհարարը՝ շերեփը լիզելով։

Ներկայացավ նաև Կլկըլ Օհանը՝ երկայն սքեմը հագին և թասակաձև գդակը ծածկած։ Եկավ նմանապես և Դաշտադեմցի Գևորգը։

— Մեր աստվածարյալ լուսարարը խլացավ, հայր սուրբ,— գոչեցին վանականները միաբերան։

— Բարբառիր, Կաթմոս, ինչպե՞ս եղավ այդ,— նրա ականջին կռանալով հարցրեց Կլկըլ Օհանը։

— Հայր սուրբ, բթամատերիս կանգնած աղոթում էի այս կաղամախու տակ, երբ մի խափանիչ, որոտալի ձայն դիպավ ականջիս, ու ես ցած ընկա, կարծես թե սատանան ետևից զարկեց։

— Մի՞թե դարձյալ այդ հովիվները դուռացել են վանքի շրջապատում,— զայրացած գոչեց Կլկըլ վարդապետը։

— Այո, գուռացին։ Այդ ամբարիշտ կանչից մեր ականջները նույնպես ցնցվեցին,— դանդաղվեցին խոհարար Իգնատիոսն ու ժամկոչը։

Մինչդեռ նրանք այդպես վրդովված խոսում էին դեպքի մասին, ամբաստանելով հովիվների արարքը, ծառերի ետևից հևիհև գալով, հայտնվեցին Խոդեդանն ու Տոնեն։

— Ա՜յ մարդիկ, դուք էս ի՞նչ փորձանք բերեցիք մեր վանքի գլխին,— հանդիմանեց նրանց Կլկըլ Օհանը։

— Ի՞նչ է պատահել, սրբազան,— հարցրին չեռնականները։

— Մեր լուսարարը խլացավ։ Ես ձեզ մի քանի անգամ զգուշացրել եմ, որ մենաստանի շրջակայքում չգուռաք, իսկ դուք շարունակում եք խափանիչ ձայներ արձակել,— նկատեց վանահայրը սաստիկ խռովքով։— Խոստովանեցեք, ո՞վ գուռաց ձեզնից։

— Ես գուռացի, հայր սուրբ,— պատասխանեց Աստատուրը։

— Ինչո՞ւ գուռացիր։

— Իմ գելխեղդ շներից մեկը ցնկնել էր, հայր սուրբ։

— Ո՞րտեղ։

— Վանքի շրջապատում։ Գոռացի Իրիցանք, որ Ստեփանը գա՝ ձագերը տեղափոխենք։

— Եթե նա չգոռար, ես պիտի գոռայի,— միջամտեց Տոնեն և իրեն հատուկ պարզամտությամբ սկսեց պատմել, թե դրանք ինչպիսի անսովոր ձագեր են, և թե որքան անհրաժեշտ էր Ստեփանին կանչելը։

Դեպքը ինքնին չափազանց ծիծաղաշարժ էր։ Նա առնչված էր ամենաբարձրյալին ուղղված սրբազան մաղթանքի և երկրի ամենաշնական արարածի եղկելի ծնունդի հետ, որ բոլորովին անհարիր էր կրոնավորների ըմբռնումներին։ Այդ էր պատճառը, որ երբ Տոնեն ոգևորությամբ պատմում էր նոր ցնկնած բոճիների մասին, վանականներն իրենց ականջները մատներով ամուր խցկում էին, այդ պղծությունը չլսելու համար։

— Մի՞թե կարելի բան է մի քանի շան լակոտների համար սրբազան հայրերի հանգիստը վրդովել, նրանց ականջներին մոտիկ խափանիչ ձայներ արձակել,— նեղացավ Կլկըլ վարդապետը, առաջարկելով վանականներին շտապ հեռանալ այդ պղծված վայրից և գանգատ ներկայացնել Մուշի առաջնորդարանին՝ դժբախտ պատահարի առթիվ։

— Իմ լսողությունը ետ տվեք, իմ ականջները բուժեցեք,— աղաղակում էր ծերունի լուսարարը, թխթխկացնելով խլացած ունկերին, որոնք ավելի շուտ թոշնած սունկերի էին նման, քան թե մարդկային ականջների։

Կաթմոսին մի կերպ վանգնեցրին, թափ տվեցին սքեմը, ժամագիրքը դրեցին թևի տակ և պատրաստվեցին վանք տանել նրան։

— Քանի որ մեր շան ձագերի պատճառով դժբախտ դեպք եղավ, եկեք դրա հաշիվը փակենք,— ծոծրակը մեղավորի պես քորելով, առաջարկեց Տոնեն։

— Ինչո՞վ,— հարցրեց Կլկըլ Օհանը։

— Մի քանի կապոց սնկով։

Նվիրակը հասկացրեց Կաթմոսին, որ հովիվները խոստանում են մի քանի կապոց բոխի սունկ բերել նրա համար։

— Սունկ չեմ ուզում, ինձ ականջ է պետք,— ոտքերը գետնին զարկելով, գոռում էր լուսարարը։

Կաթմոսին տարան։ Աջ թևը մտել էր ժամկոչը, ձախը՝ նվիրակը։ Հետևից քայլում էր խոհարար Իգնատիոսը՝ շերեփը լիզելով։

Այնուհետև ընթանում էին մի քանի ծեր վանականներ և երկու պառավ լվացարարուհի։

Դանդաղ քայլերով այդ փոքրիկ թափորի ետևից դեպի վանք ընթացավ նաև Կլկը վարդապետը՝ գլուխը կախ և մտածկոտ։

Կաղամախու տակ մնացին Դաշտադեմցի Գևորգը, Ասատուրը և Տոնեն։

— Անտառը հովիվների համար է, վանք են շինել, թող գնան նրա պատերի ներսում աղոթեն,— լռությունը խզելով գոչեց Խոդեդանը։

Ստեփանն արդեն եկել էր։ Գևորգին թողնելով ծառի տակ, Տոնեն և Ասատուրը շտապեցին նրա մոտ՝ նորածին քոթոթներին տեղափոխելու։

Ձագերից մեկի անունը նրանք դրեցին Սևսար և, մաղի մեջ դնելով, մյուսների հետ տեղափոխեցին Իրիցանք։

Մի թեթև հով անցավ անտառով։ Սպիտակ արևափայլ կաղամախիները և մանրատերև ծովագույն լորենիները խշշացին։ Դաշտադեմցի Գևորգը, որ մինչև այդ բոլորովին լուռ էր և խիստ ազդված տարօրինակ եղելությունից, մի պահ նայեց գեղեցիկ անտառին և մտնելով իր քարայրը, ճրագլույսի տակ մանրիկ տառերով արձանագրեց.

«Այսօր մի զարմանալի դեպք պատահեց ս. Աղբերիկի անտառում։ Հովիվ Խոդեդանի հանկարծական գոռոցից խլացավ վանքի ծերունի լուսարար Կաթմոսը։ Գոռոցի պատճառն էր հոտի գեղեցիկ շներից մեկը, որ ցնկնել էր մենաստանի շրջապատում»։

ԱԼԻՆ ՈՒ ՎԱԼԻՆ

Հետևյալ գարնանը, մեծ զատկի տոներին, Դաշտադեմ եկան երկու օսմանցի հարկահան։ Նրանցից մեկը, որ Ալի էր կոչվում՝ բարձրահասակ էր, երկարավուն բարակ վզով, որ իրանի վրա դժվարությամբ պահում էր դեպի ետ-ձգված սեխաձև գլուխը՝ հազիվ նշմարելի աչքերով և սրածայր քթով։ Գլխի պառկած դիրքի պատճառով նրա կարմիր ֆեսի պուխը շարունակ կախված էր ծոծրակի վրա, իսկ պոչանման մորուքը ցցված էր օդում։ Աջ թևատակին կար մի մաշված հաշվեմատյան, գոտուց կախված էր չուգունե թանա-

քամանը, որի երկայն կոթի մեջ տեղավորված էր գրիչը։ Երկրորդը, որ Վալի էր կոչվում, առաջինի համեմատությամբ ցածրահասակ էր և սապատավոր։ Սրա ֆեսի պուխը միշտ կախված էր ճակատի վրա, որովհետև գլուխը իր սուր գագաթով թեքված էր դեպի առաջամասը։

Ալին ու Վալին երկար տարիներ նույն պաշտոնով ծառայել էին Վանի նահանգի հայկական գյուղերում և առաջին անգամն էին ոտք դնում Բոնաշեն։

Հարկահանները եկան երեկոյան հովին և անմիջապես գնացին Ջատոյի տուն։ Աղան իր ընկուզենու տակից ելավ, խոնարհ գլուխ տվեց, մեկական թաս շարբաթով հյուրասիրեց նրանց և առաջարկեց իր ծառայությունը։

Գյուղում անմիջապես տարածվեց, որ նոր հարկահաններ են եկել Ռաբաթից։

Ուր երևում էին այդ օսմանցի պաշտոնյաները, հայ և քուրդ չքավոր գյուղացիները իրենց ոչխարների մի մասը թաքցնում էին անտառներում, իսկ դրանց գառներն ու ուլերը պահում էին կողովների տակ։ Իսկ սարերում, որտեղ դեռ ձյուն կար, հարուստ գյուղացիները սուրուններով ոչխար էին քողարկում ձյունների մեջ։ Հարկահանների մասին ամենից առաջ իմացավ ատաղձագործ Հակոբի կինը՝ Ծաղկանուշը։ Նա իր երեք ուլը թաքցրեց զամբյուղի տակ և, հարևանների տները շտապելով, հաղորդեց անախորժ լուրը։

Քիշոն առանց ժամանակ կորցնելու իր երկու գառներին դրեց կողովի տակ։ Իսկ հինգ ուլերին, որ արածում էին տանձի ծառերի տակ, քարկոծելով իջեցրեց ձորը։

Գրեթե բոլոր շինականները, ո՛վ կարողացավ, իր մեկ կամ մի քանի գառն ու ուլը ծածկեց քթոցով։

Բայց օսմանցի հարկահանները փորձված մարդիկ էին։ Նրանք այծերի պես մկկում էին, մաքիների պես մայում։ Ոմանք նույնիսկ կարողանում էին եզների և կովերի պես բառաչել։

Ջատոյի բակից դուրս գալով, Ալին ու Վալին սկսեցին մկկալ։ Ջատոն էլ էր մկկում։ Այդ երեքը միասին հանում էին մի քանի տասնյակ այծերի և մաքիների ձայն։ Մերձավոր տների կողովների տակ պահված ուլերն ու գառները անմիջապես արձագանք տվեցին։ Այն գյուղացիները, որ անտեղյակ էին հարկահանների գա-

լուն, կարծեցին թե հոտն է իջել գյուղ և դուրս թռան տներից իրենց ոչխարը գոմ տանելու։

— Հոտն արդեն եկա՞վ,— հարցնում էին իրար և շտապում դեպի գյուղամիջյան ճանապարհը։ Եվ թեպետ ոչխարը դեռ չէր վերադարձել արոտից, բայց, այնուամենայնիվ, օդն հագեցած էր անտեսանելի մաքիների ու այծերի բազմատեսակ կանչերով։ Ուլերն ու գառները աշխուժորեն մկկում էին, մայում և, կողովները ցնցելով, դուրս էին թռչում դրանց տակից՝ բնազդաբար վազելով եկող հրավերի ուղղությամբ։ Շատ տանտիկիններ նրանց բռնելով նորից կոխում էին զամբյուղների տակ։ Երբ գառներն ու ուլերը մոտենում էին աներևույթ հոտին, Ջատոն անմիջապես զեկուցում էր, թե ո՛րը դրանցից ո՛մն է պատկանում։ Այդ եղանակով Ալին ու Վալին կարողացան իրենց դավթարի մեջ մի քանի տասնյակ այծ ու մաքի գրանցել։

Վերջին տունը, որին նրանք մոտեցան՝ Օնեի խրճիթն էր։

Քիշոյի կողովը ծակ էր։ Թեպետ նա մի հին փալասով ծածկել էր այն, բայց գառների գլուխները երևում էին։ Մեկի սպիտակ դունչն էր երևում, իսկ մյուսի՝ սև ականջը։

— Ես էս կողովի տակ ուլի ականջ եմ տեսնում,— նկատեց Ջատոն։

— Մենք երկու աչքով ուլ չենք տեսնում, դու մի աչքով ինչպե՞ս տեսար,— ասաց Քիշոն, չարությամբ նայելով Ախուպի քրդին։

— Դե հիմա կտեսնենք, իմ մեկ աչքն է սուր, թե՞ ձեր երկու աչքը,— պատասխանեց Ջատոն և սկսեց մկկալ։ Քիշոն զարմանքից ետ-ետ գնաց, քիչ մնաց ձորը գլորվեր։ Նա առաջին անգամն էր տեսնում, որ իրենց աղան այծի պես մկկում է, բերանը անճոռնի կերպով ծամածռելով։ Բայց կողովի տակից ոչ մի արձագանք չլսվեց։ Մկկաց Ալին։ Քթոցը դարձյալ անշարժ էր։ Մկկաց Վալին։ Կողովը վերստին անպատասխան մնաց։ Այնուհետև երեքը միասին բարձրաձայն մայեցին։

Կողովը ցնցվեց։

— Որ ասում եմ քթոցի տակ ուլ կա՞, վրաս ծիծաղում էիր,— չարախնդաց Ախուպի քուրդը։

— Բա սա ո՞ւլ է,— նեղացած գոչեց Քիշոն, կողովը բարձրացնելով։

— Հիմա մենք քո ուլերին էլ կգտնենք,— սպառնաց աղան։

Ալին ու Վալին թեքվեցին ժայռի վրա և սկսեցին մկկալ ձորն ի վար։ Նրանց կանչերին ներքևից արձագանք լսվեց։ Քիշոյի հինգ ուլերը մագլցելով վերև ելան։

— Գնա երկու կատու բեր,— հրամայեց Ալին՝ դիմելով կողքի մանուկներից մեկին։

— Մենք կատու չունենք,— ասաց երեխան և հեռացավ։

— Դո՛ւ գնա բեր,— կարգադրեց Վալին մեկ ուրիշ մանկան։

— Մեր կատվին երեկ գլորեցինք ձորը։

— Բա էս գյուղում կատու չկա՞,— նեղացավ Ալին։

— Կատուն ձեր ինչի՞ն է հարկավոր, աղա,— հարցրեց Քիշոն, աչքերը կկոցելով և մի չարագուշակ բան կռահելով։

— Որ դնենք քո մարմնի վրա և քեզ մի լավ կատվածեծ անենք,— պատասխանեց Վալին։

Քիշոն և ներկաները ցնցվեցին։

— Անամոթ լրբեր, էդ ո՞ր ղուրանի մեջ է գրված, որ կատու ծեծեք կինարմատի մարմնի վրա,— որոտաց Քիշոն։

Ալին ու Վալին դուրս քաշեցին ատրճանակները և ուզում էին կրակել, երբ Ջատոն զգուշացրեց նրանց՝ ասելով.

— Ջեռք չտաք, սրանք սասունցիներ են, որ կատաղեցին՝ կտան ձեր գլուխը արյունլվա կանեն։ Բավական է, որ մի կրակոց լսվի՝ ամբողջ գավառակը ոտքի վրա է։ Սրանց երկու գյուղը տարիներ առաջ մի գդալի համար ջարդուփշուր արեցին խաբկանցի քրդական ցեղին։

Վերևից, փոշի հանելով, գյուղ էր իջնում նախիրը։

— Ո՞րն է սրա մոզին,— հարցրեց Ալին, դիմելով Ջատոյին։

— Սա է,— ասաց քուրդը, ձեռնափայտը ուղղելով դեպի վերևից իջնող մի գեղեցիկ հորթ, որի ճակատը և պարանոցը զուգված էին լեռնային սավդուկների կապտավուն գալերով։

Հարկահանները մոտեցան և հորթի պարանոցը մի պարան անցկացնելով՝ սկսեցին քաշել։

— Ո՞ւր եք տանում իմ մոզին,— ճչաց Քիշոն։

— Ռաբաթ։

— Ինչո՞ւ։

— Նրա համար, որ քո ոչխարը թաքցրել ես պետությունից։ Բացի այդ, հին պարտք ունես տերությանը,— ասաց Ալին հաշվե-

մատյանը խորհրդավորությամբ բաց անելով։— Շատ որ խոսես, կմտնենք տունդ և քո վերջին կարպետն ու խալին կպոկենք պատից։

Զատոն առաջ ընկավ, իսկ Ալին ու Վալին նրա ետևից քարշ տալով Օնեի մոզին, ձորն ի վար իջան, որ գնան Արինոք։

— Էն ո՞մ տունն է,— դիմացի խրճիթը մատնացույց անելով հարցրեց Վալին։

— Խոդեդանի։

— Նո՞ր է շինել։

— Մի քանի տարվա տուն է,— բացատրեց Զատոն։

— Ոչխար ունի՞։

— Նասրի տան հովիվ է, անպայման կունենա։ Դրանք սուրուններով ոչխար են պահում Խաչառաշի անտառներում։

— Մի մեծ կողով կա դռան առաջ։ Դրա տակը ամենաքիչը մի քանի գառ և ուլ կլինի թաքնված,— ասաց հարկահանը։

Վալին մնաց մոզու մոտ, իսկ Ալին ու Զատոն, գետակն անցնելով, շարժվեցին դեպի Ասատուրի խրճիթը։

Վանքի շրջապատում ծնված գելխեղդ շներից մեկին, որի անունը Սևսար էին դրել, Խոդեդանը և Ստեփանը դրանից մի քանի օր առաջ ժամանակավորապես տեղափոխել էին գյուղ։ Հովիվները կտրել էին նրա ականջն ու պոչը և հանձնարարել էին Բայազին քթոցի տակ պահել նրան։

— Ո՞վ կա տանը,— հեռվից բղավեց Զատոն, մոտենալով Ասատուրի տնակին։

Բայազը դուրս եկավ։

— Մենք ենք տանը։ Ի՞նչ կա, աղա,— հարցրեց գեղջկուհին, կասկածելի նայելով Ախուպի քրդին, որն առաջին անգամն էր իրենց շեմքը գալիս։

— Հարկահաններ են եկել, ուզում են տեսնել ձեր տունը։

— Քանի՞ ոչխար ունեք,— հարցրեց Ալին հեռվից։

— Մենք ոչխար չունենք, աղա։

— Իսկ էդ ի՞նչ կողով է դռան առաջ։

— Էդ մեր շաղգամի քթոցն է,— բացատրեց Բայազը։

— Էդ քթոցի տակ ոչխար կա,— վճռաբար հայտարարեց Ալին։

— Ոչխար չէ, գել է,— ուղղեց Ոսկեհատը, ակիշը ձեռքին խրճիթից դուրս գալով։

— Գելը ի՞նչ գործ ունի զամբյուղի տակ,— դուք էլի՞ մեզ խաբում եք,— զայրացած գոչեց Ալին և կողովին մոտենալով բարձրաձայն մայեց։ Ջատոն նույնպես մայեց։ Ապա երկուսով սկսեցին մկկալ։

Վալին, որ կանգնած էր ձորի մեջ, նույնպես մկկաց։

Մերթ դեպի ձախ դառնալով, մերթ աջ, իրենց ծնոտներն ու բերանները տարօրինակ կերպով ծամածռելով, նրանք մկկում էին՝ թնդացնելով Խոդեդանի քարափը։

Տեսնելով, որ կողովը ոչ մի արձագանք չի տալիս, Ալին սաստիկ զայրացավ և ոտքով ամուր քացի տվեց քթոցին։ Լսվեց մի զարհուրելի կաղկանձ։ Կողովը հարվածից գլորվեց ձորը։ Գայլանման ահագին գամփռը, որի պոչն ու ականջները դեռ վիրավոր էին, մի հանկարծական կատաղի ցատկով բերանի մեջ առավ հարկահանի փոքրիկ կզակը՝ մորուքով։ Ալին սարսափից ճչաց երկու ձեռքով սեղմելով շան կոկորդը։ Նրա թևատակից դավթարը վայր ընկավ։

— Ես քեզ ասացի տակը գել կա, ա՜յ անհավատ անօրեն,— ասաց Բայազը օգնության վազելով հարկահանին։

— Իսկապես որ գել է,— բացագանչեց Ալին, արյունոտ կզակը հազիվ պոկելով գազանի երախից։

Բայազը ներս մտավ և մի վառված շոր բերելով դրեց հարկահանի կզակին։

— Փախչե՞նք,— գոչեց Ջատոն,— սա փորձանքոտ տեղ է. մի քանի ամիս առաջ էս շան տիրոջ ձեռքից ս. Աղբերիկի լուսարարը խլացավ։

— Փախչե՞նք,— ասաց Ալին և մաշված հաշվեմատյանը թևատակին զարկելով և կզակը ձեռքով սեղմած հետևեց Ախուպի քրդին։

— Ամեն կողովի տակ ոչխար չի լինի, էֆենդի,— ծիծաղեց Ոսկեհատը նրա ետևից։

Ալին ու Վալին Օնեի մոզին ձորում թողնելով լեղապատառ փախան Բռնաշենից։

— Վա՜յ թյուրքի փաշեք, վա՜յ անամոթ լրբեր, սև լիներ էն

օրը, որ դուք մեր աշխարհը մտաք,— ձորի պռկին կանգնած գոռում էր Քիշոն նրանց ետևից։

— Այ հայե՞ր, հայե՞ր, խելոք կացեք, հնազանդ եղեք օսմանյան տերությանը։ Ինչո՞ւ կիվկիվի պես կճչաք, որ գան ձեր բուն քանդեն,— ասաց Ախուպի քուրդը, դեպի Օնեի ծառերը ելնելով և նայելով ժողովրդի վրդովված բազմությանը։

— Մեկ անգամ էլ մկկա, աղա, մեկ հատ ուլ է մնացել կողովի տակ,— վերևից հեգնեց Քիշոն։

— Մեկ անգամ էլ կմկկամ, տասն անգամ էլ։ Երբ հարկավոր լինի, կմկկամ։ Օսմանյան տերություն է, թագավոր կա թախտին նստած։

— Փուլ գա էդ թախտը, դուք էլ տակին մնաք, —անիծեց բարկացած դեղչկուհին։

ՄԻ ՁԱՐՄԱՆԱԼԻ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Մի անգամ սարում գժտվել էին Ասատուրը և Օնեն։

Պատճառը հետևյալն էր։

Գիշերը Խոդեդանը քնի մեջ հարայ էր կանչել։ Շները այդ աղդանշանի վրա զարհուրելի հաչոց էին բարձրացրել։ Իր ձայնից և այդ աղաղակից սթափվելով, մոտկանցի հովիվը վերցրել էր մահակը և սլացել առաջ։ Խավարի մեջ գավազանը անզգուշաբար դիպել էր Օնեի գլխին, որը, Տոնեի հետ նույնպես արթնանալով, շտապելիս էր եղել օգնության։

Օնեն Ասատուրի այդ հարվածը վերագրել էր դիտավորության։ Իսկ երբ պարզվել էր, որ հոտի վրա գայլ չէր հարձակվել և այդ ամբողջ իրարանցման պատճառը եղել էին Խոդեդանի երազում արձակած խաբուսիկ ճիչերը, սաստիկ կռվել էր հետը, անվանելով նրան մոտկանցի անասուն, որ սովորություն էր դարձրել երազների մեջ հարայ կանչել։

Առաջին գիշերվա խորովածի ավելորդ պատառի հետ կապված անախորժ պատմությունը նույնպես մոռացված չէր Օնեի կողմից։ Նրա գլխի վրա մի խոշոր ուռուցք էր դոյացել։ Ահա թե ինչու նա արևածագին թողել էր հոտը և խռոված եկել էր դյուղ։

Մի առավոտ Տոնեն վերցրեց իր մահակը և սարից ցած իջավ՝

Օնեին սար տանելու և հաշտեցնելու Ասատուրի հետ։ Միաժամանակ նա մի շերեփ էր խոստացել Քիշոյին, որ ուզում էր հանձնել նրան։

Տոնեն Օնեի տունը հաճախելու մի ուրիշ հիմնավոր պատճառ էլ ուներ։ Տարիներ առաջ, երբ մի ուրիշ առիթով նա եղել էր նրանց տանը, Քիշոն զբաղված լինելով, խնդրել էր նրան օրորել իրենց երեխային։

— Գնա աղջկաս հրշ արա, մեծանա՝ քեզ կտամ,— ասել էր մայրը։

— Անունը ի՞նչ է։

— Ալմաստ։

— Է՜, ես ինչքա՞ն սպասեմ, մինչև երեխադ մեծանա,— ծիծաղելով պատասխանել էր Տոնեն և թոնրատուն մտնելով, օրորել էր Օնեի երկու տարեկան աղջկան։ Երեխան անմիջապես ձայնը կտրել էր և հանգիստ քնել օրորոցում։

Ահա այդ աղջիկն էր պատճառը, որ բռնաշենցի Հովիվը ստեպ-ստեպ էր հանդիպում Քիշոյի մոտ, երբեմն էլ չամիչ էր բերում նրա համար։ Ամեն անգամ տուն հանդիպելիս, կամ դռնով անցնելիս՝ հարցնում էր.

— Աղջիկդ մեծացա՞վ, Քիշո քուրիկ։

— Դու չամիչ բեր, որ ուտի և շուտ-շուտ մեծանա,— պատասխանում էր Քիշոն։

Այդ օրը երբ Տոնեն եկել էր Օնեին սար տանելու, Ալմաստը դարձել էր տասնյոթ տարեկան։

— Օնեն տա՞նն է,— հարցրեց բռնաշենցի Հովիվը բակը մտնելով։

— Չէ՜, տանը չի,— լսելի եղավ խնոցի հարող կնոջ ձայնը։— Ախպեր Տոնե, դո՞ւ ես։

— Ես եմ, Քիշո քուրիկ,— պատասխանեց Հովիվը։

— Ինձ խոստացած շերեփը բերե՞լ ես։

— Բերել եմ, Քիշո քուրիկ, մի նախշուն շերեփ եմ բերել քեզ համար։— Այս ասելով Հովիվը ուսապարկից հանեց ընկուզի փայտից շինված մի գեղեցիկ շերեփ և մեկնեց Քիշոյին։ Տանտիկինը վերցնելով նվերը՝ ուրախացած գոչեց.

— Հարսանիքիդ ճաշը ես էս խորոտիկ շերեփով կխառնեմ, ախպեր Տոնե։

— Ես դեռ միտք չունեմ կարգվելու, Քիշո քուրիկ,— ասաց Տոնեն։— Թող ուրիշները պաակվեն, ես էլ նրանց հարսանիքով կուրախանամ։ Տեսա՞ր Խոդեդանին ինչպես պսակեցի։

— Էդ վայրենու անունը մոռս մի՛ տա,— զայրացած գոչեց Քիշոն, նախատական խոսքեր ասելով նրա մասին՝ իր ամուսնու գլխին մահակով հարվածելու համար։

— Ասատուրը ոսկի մարդ է,— նկատեց Հովիվը։

— Ծուռ է, ծո՞ւռ— բացագանչեց Քիշոն։— Բա գիշերով էն հաստ մահակը Օնեի գլխին կզարկե՞ն։

— Չի տեսել, Քիշո քուրիկ, սխալմունք է եղել։

— Սխալմո՞ւնք է։ Որ սխալմունք է, ինչո՞ւ մահակը իր գլխին չի իջել,— ասաց տանտիկինը խնոցին հարելով։

Երբ հանգստացավ՝ ասաց.

— Ուրեմն աղջկաս չե՞ս առնի։

— Դու ե՞րբ ես ինձ աղջիկ տվել, որ հրաժարվեմ նրանից,— պատասխանեց Հովիվը։

— Նոր ասացիր, որ միտք չունես ամուսնանալու։

— Ունե՞մ,— կտրուկ կերպով նկատեց Տոնեն։

— Որ էդպես է՝ խոսիր հոր հետ։

— Իսկ դու համաձա՞յն ես։

— Ինչո՞ւ, իմ աղջկան քեզնից լա՞վ մարդու պիտի տամ։ Հենց վաղն էլ հարսանիքն անենք,— եզրափակեց Քիշոն։

— Մինչև Օնեն Խոդեդանի հետ չհաշտվի, ես ոչ ձեր աղջկան կառնեմ, ոչ էլ սրանից հետո ձեր տունը ոտք կդնեմ,— հայտնեց Տոնեն։

— Ուրեմն քու բերած չամիչներն իզո՞ւր անցան։

— Ինձ համար չամիչ ու շաքարից թանկը՝ Ասատուրի պատիվն է։

— Դու նրա պատվի մասին մի՛ խոսիր։ Բերդակցի Թելո Մեսրոպը մինչև հիմա էդ ծուռ սասունցու հարվածից ուշքի չի գալիս։ Խեղճին խայտառակ է արել գյուղի մեջ։

— Ինչո՞վ։

— Ավանակի պատճառով։

— Բերդակցի Թելո Մեսրոպին ո՞վ էր ասել, որ նրա հետ մոթլոցի խաղա։

Տանտիկինը Հովվի համար ճմուռ պատրաստեց։ Դրեց նաև

գազպով մածուն։ Ուտելու ժամանակ ներս մտավ Օնեն։ Նա լռությամբ բարևեց և նստեց մի անկյունում։ Գլուխը կապած էր։

— Վեր կաց՝ սար երթանք,— ասաց Տոնեն,— ես քու ետևից եմ եկել։

— Ես սար չեմ գա,— խռոված պատասխանեց գյուղացին։— Վայրենի մարդկանց հետ գլուխ չունեմ։

— Խոդեդանը վայրենի չի։

— Իսկական վայրենի է։ Մեկը, որ գիշերը քնի մեջ հարայ կանչի, վայրենի չէ, ի՞նչ է։

Կարճատև ընդմիջումից հետո հովիվը հարցրեց.

— Ուրեմն չե՞ս գա։

— Չեմ գա,— պնդեց Օնեն։

Բայց Տոնեն այնպես վարպետորեն տարավ գործը, որ շուտով Օնեի հետ ճանապարհ ընկավ դեպի Իրիցանք։

— Դու Աստվատուրից հեռու պառկիր, Օնե,— ամուսնու ետևից բղավեց Քիշոն։

Թեպետ նույն օրը Օնեն ցույց տվեց, որ հաշտվում է, բայց իրականում երկար ժամանակ, գրեթե մեկ ամբողջ տարի, խռոված վիճակի մեջ մնաց Խոդեդանի հետ։

Այդ դեպքից մեկ շաբաթ հետո Տոնեն ամուսնացավ։

Վանքը սկզբում աշխատեց արգելել այդ ամուսնությունը, պատճառաբանելով, թե հարսնացուն չհաս է, բայց հետո երեցները համաձայնել էին այդ գործը հասու համարել, եթե փեսան մի քանի ոսկի տար վանքին։ Իսկ լուսարար Կաթմոսը, որ գժտված էր հովիվների հետ, բոլորովին հրաժարվեց նրա պսակի ճրագները վառել։ Չքավորության պատճառով Տոնեն ի վիճակի չեղավ կատարել վանքի պահանջը։ Այդ հողի վրա նա խռովեց վանականների հետ և մերժեց խոստովանությունը ս. Աղբերիկում անել։

Տոնեի հարսանիքն անցավ շատ անշուք։ Պսակին ներկա էին միայն իր եղբայր Շինական Պողոսը, Աստատուրը, Օնեն, Ստեփանը, Պնտխցի Մանուկը և ատաղձագործ Հակոբը։ Կանանցից ներկա էին Ոսկեհատը, Բայազը, Քիշոն, Աղրութը և Ծաղկանուշը։

Վանքից գաղտնի եկել էր Դաշտադեմցի Գևորգը։

Պսակադրությունը տեղի ունեցավ իր անշուք խրճիթի մեջ։ Վանքի խորանին փոխարինում էր հայ նահապետական օջախը։ Թոնրի առաջ գլուխ-գլխի տված կանգնել էին նորահարսը և նո-

գափեսան։ Պնտխցի Մանուկը և Ստեփանը մի քանի բուռ չամիչ շաղ տվեցին նրանց գլխին։ Պսակն ավարտվեց Տոնեի մի երգով, որի մեջ փառաբանվում էր հայրենի օջախը։ Այնուհետև նրանք բոլորեցին թոնրի շուրջը, խմեցին մի-մի թաս օղի և կերան վայրի հացամեղրը, որ փեսան զգուշությամբ քաղել էր կաղնու փչակներից՝ դրանից մեկ օր առաջ։

Ահա այսպես վերջացավ բռնաշենցի հովվի զարմանալի հարսանիքը։ Հարսի համար Տոնեն ոչ մի ոսկի չտվեց Օնեին։ Նախ այն պատճառով, որ նա գանձ չուներ։ Դժվարությամբ ձեռք բերած ոսկիներից մեկը նա անվերադարձ նվիրել էր Խոդեդանին, իսկ կես ոսկին պահում էր ավելի նեղ օրվա համար։ Բացի այդ, Օնեն նույնպես հրաժարվել էր այդ պահանջից՝ ասելով, որ Տոնեն իր համար ամեն տեսակ գանձերից թանկ է։

— Իր ամեն մի խաղը մի կարմիր ոսկի արժե,— ասել էր նա։

ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Տոնեն ունեցավ մի արու զավակ, հայրը նրա անունը Տավրոս դրեց։ Երբ որդին դարձավ մեկ տարեկան, նրա մայրը մի դժբախտ պատահարից մեռավ։ Տավրոսն սկսեց մեծանալ ուրիշ մայրերի և կանանց կաթով։ Տոնեն նրան շալակած տնից-տուն էր տանում և օրերով թողնում էր սրա-նրա մոտ։

— Մի պուտ կաթ տուր տղիս, հարսո,— ասում էր հովիվը երիտասարդ մայրերին դիմելով։ Նա սպասում էր բակի մեջ, գավազանի վրա հենված, մինչև երեխան կուրծք էր ընդունում և, նորից շալակելով՝ շարունակում էր ճանապարհը։

— Բարով երեխիդ պսակին արժանանաս, ախպեր Տոնե,— բարեմաղթում էին այս ու այն կողմից ծանոթ շինականները։

— Բարու մեջ մնաք, բարով դուք էլ ձեր մուրազին հասնեք,— պատասխանում էր հովիվն ու անցնում։

Երբ Տոնեն բացակայում էր գյուղից, որդուն տալիս էր Քիշոյին, կամ տանում էր Արինոք և հանձնում Ոսկեհատի ու Բայազի խնամքին։ Մեկ ամբողջ տարի Տավրոսը ծիծ կերավ Բայազի մոտ։ Սա իր դռանը ճոճան էր շինել, երեխային դնում էր մեջ, կուրծք էր տալիս, և օրորելով երգում էր աստղաղարդ գիշերնե-րին։

Ալմաստի մահից հետո Տոնեի առաստաղի վրա լռել էր ծղրիդների երգը։ Լեռնական հովիվը այդ դժբախտությունը վերագրել էր այն բանին, որ ինքը վանքի հետ վատ փոխհարաբերության մեջ էր։

— Հարսնացուն չհաս էր, վանքը անիծեց, դրա համար կինս մեռավ։ Ոսկի ունենայի՝ կտայի վանքին, վանքը չհասը հասու կդարձներ ու չէր անիծվի իմ պսակը,— գանգատվում էր վախեցած շինականը։ Այդ երկյուղը սատկացել էր մանավանդ անտառում պատահած դեպքից հետո։ Եվ թեպետ բռնաշենցի Տոնեն դադարել էր վարդապետների համար սունկ ու վայրի մեղր տանել, բայց հոժարակամ հանձն էր առել մի ուրիշ աշխատանք։ Օգոստոս ամսին նա գնում էր անտառի խորքը և տերև էր կտրում վանքի խաշների համար։ Գրեթե ամեն օր ս. Աղբերիկի կողմից, անտառի խաղաղության մեջ լսվում էին այդ հովվի լոզի հարվածները, որոնց արձագանքն անդրադառնում էր Իրիցանքի կողմից։

Մայրական խնամքի բացակայությունը հարկադրեց Տոնեին որդուն շատ վաղ հասակից տանել իր հետ սարերը և կերակրել ոչխարի կաթով։ Նա մանկանը մեջքին առած շրջում էր Սև սարի անտառներում։ Երբ Տավրոսը կաթ էր ուզում խմել, Տոնեն բռնում էր սև մաքու գլուխը և ասում էր.

— Մտիր մաքու տակ, լաս։ Որդին պառկում էր ոչխարի փորի տակ և նրա պտուկներից բռնելով, սկսում էր ծծել։

Երբ Տավրոսը դարձավ հինգ տարեկան, հայրը մորթեց մի նախշուն ուլ և նրա մորթուց ելակ պատրաստեց որդու համար։ Ամառ թե ձմեռ՝ այդ նախշուն ելակն էր նրա հագին։

Տավրոսի մշտական կացարանը հաստաբուն կաղնու փչակն էր, որի մեջ քնում էր նա։

Սարերում ապրելով, բռնաշենցի հովիվը իր տղային սովորեցնում էր վայրի մորի և մասուր ուտել և սնվել անտառի սունկերով ու արմատներով։

Մասուր շատ կար Սև սարում։ Նրանք կարմրին էին տալիս ամեն քայլափոխին։ Խոշոր, հասուն և հյութալի էին նրանք։ Տավրոսը քաղում էր մասուրները, չորացնում էր արևի տակ և հացի պես ուտում։ Ամառը, երբ անտառը կաթում էր մանանայից, նա իր հոր օրինակին հետևելով և ծառից ծառ անցնելով, լիզում էր

կաղնու մեղրոտ տերևները։ Երբեմն էլ հայրը գդալը տալիս էր ձեռքը՝ թե դնա գաղպա կեր։ Տավրոսը մոտենում էր ծառերին և դդալով մանանա էր քաղում տերևների վրայից, ասես պատրաստի ամաններից մեղր էր ուտում։ Այնպես էր պատահում, որ նույն ծառի ճյուղից ճաշակում էին ինքը և հայրը, իսկ մյուս ճյուղից՝ արջը և իր քոթոթները։

Հայրը վարժեցնում էր որդուն թեթև հագնվել և դետնի վրա քնել առանց վերմակի՝ գլուխը կոճղի դրած, ձմռանը ոտաբոբիկ քայլել սառած ձյան վրայով, իսկ ամռանը՝ փշերի մեջ և խոխվեների վրայով բոկոտն վազել։ Նա իր մանկահաս զավակին ամեն օր լողացնում էր սառն աղբյուրների և լեռնային փրփրալի գետակների մեջ։

Հիվանդության կամ մարմնի վրա վերք առաջանալու դեպքում, լեռնցին բուժական զանազան խոտերով ու կանաչներով առողջացնում էր նրան։ Նա դիտում էր, թե ի՛նչպես կաքավը պեպկին ծառի խեժը պոկելով, կտուցով քսում էր իր թևերի կամ փորի վերքի վրա։ Գաղտագողի հետևում էր, թե ի՛նչպիսի խոտեր էր ուտում ոզնին իբրև հակաթույն, և դրանից բժշկություն էր սովորում։ Երբ օձը խայթում էր, ինչպես ընկույզի միջուկն են փորում, այդ ձևով նա, որդու ներկայությամբ, սուր դանակով փորում էր իր մարմնի վարակված մասը և դեն շպրտում։ Ապա ծեծում էր թորթիկ բանջարի ոլորաթուփ տերևը և այն, իբրև սպեղանի, վերքի վրա դնելով՝ ամուր կապում էր։

Որդու տեսողությունը սրելու համար, Տոնեն նրան ցույց էր տալիս ամենահեռավոր, գրեթե աննշմարելի առարկաները՝ մի սունկ ձորի մեջ, կամ մի անծեղ ժայռի կատարին՝ ասելով.

— Էն սունկը տեսնո՞ւմ ես. էն անծեղը թռավ, տեսա՞ր։

Որդու թոքերն ուժեղացնելու համար նրան ստիպում էր վազել նապաստակի կամ կաքավի ետևից։ Ինքը դիտմամբ թաքնվում էր անտառում, որ Տավրոսն իրեն բարձրաձայն կանչեր և դրանից թե՛ նրա ձայնը զորանար, թե՛ որդին սրտոտ դառնար։ Հետզհետե փորձեր էր անում նրան մութ ժամանակ սարից գյուղ ուղարկել, որ որդին սովորեր մենակությանը և չվախենար խավարից։

Երբեք թույլ չէր տալիս, որ երեխան ամանով ջուր խմի։

— Ջոքիր աղբյուրի վրա և կուշտ խմիր,— ասում էր նա,—

կամ ափով խմիր։ Արգելում էր որդուն տաք կամ գոլ ջրեր գործածել։ Սառը ջուր և պաղ թան՝ այդ էր նրա ըմպելիքը։

Հայրը որդուն տանում էր Կատվաձոր, ուր վիթխարի ընկուզենիները իրենց ծանրաբեռնված ճյուղերը օրորում էին նրա քարքարոտ կողերին։ Նրանք միասին լինում էին Բռնաշեն գետի եզերքին։ Թափառում էին ս. Աղբերիկի անտառներում, գնում հասնում էին մինչև Դավթի քար և Ծմակա Քիթ։

Ապրելով բնության ծոցում, Տոնեն վարժեցնում էր որդուն սիրել բնությունը։ Լեռների շքեղ կատարներին կանգնած՝ նա ցույց էր տալիս Տավրոսին փառահեղ արշալույսներն ու վերջալույսները, տրամադրելով, որ այդ հանդիսավոր տեսարանների առաջ որդին գդակը հաներ։

— Այ, տես, հիմա էլ բոլորակ լուսնյակն է ելնում Սիմ լեռան ետևից, նայիր, ինչ սիրուն է,— ասում էր նա։

Հայրը խստիվ պատվիրում էր որդուն երբեք չքանդել թռչունների բները և, նամանավանդ, մրջնանոցները։

— Մեղք են, լաո, աստծու արարածներ են, թող նրանք էլ խլվլան արևի տակ,— խրատում էր հովիվը։

Զգուշացնում էր, որ Տավրոսը որոտի կամ կայծակի ժամանակ չմտնի փչակների մեջ։ Պատմում էր, որ եթե ծիածանի տակով տղա անցնի՝ կդառնա աղջիկ, իսկ եթե աղջիկ անցնի՝ կդառնա տղա։ Երբ ծիածանը շատ մոտ էր լինում, մանուկը սկսում էր վազել, բայց վախենալով թե՝ կարող է աղջիկ դառնալ, ետ էր գալիս։

Լեռնական հովիվը խրատում էր որդուն, տանը գտնված ժամանակ, չթողնել կատվին մտնելու թոնրակը, որովհետև նա կարող էր միզել և հանգցնել օջախի կրակը, որ ընդհանուր սրբություն էր համարվում։ Զգուշացնում էր աղ չթափել, որովհետև համոզված էր, որ աղ թափողը հանդերձյալ կյանքում իր աչքի թերթերունքներով պիտի հավաքի այն։

— Երբ հաց կտեսնես գետնին, վերցրու, համբուրիր և դիր քո ճակատից բարձր, սովորեցնում էր նա։

Ցույց էր տալիս սունկերի տարբեր տեսակները, ասելով.— բոլորն էլ սունկ են և ծածկոց ունեն իրենց գլխին, բայց մեկը անուշ է, մյուսը դառն է, երրորդը օձի սունկ է կոչվում. ով կերավ, կմեռնի։ Էդպես էլ մարդիկն են, լաո։ Բոլորի գլխին գդակ կա, բայց մեկը անուշ է, մեկը լեղի, երրորդը օձի պես խայթում է։

Վաղ գարնանից մինչև ուշ աշուն, ծաղկի և կանաչության այնպիսի բուրմունք էր փչում Սև սարի լանջերից, որ նրա հոտից արբեցնում էին հեռավոր գյուղերի բնակիչները։ Գինարբուկ, կաթնածաղիկ, սոսին-բայբուն և այլ կարգի բազմաթիվ ու բազմերանգ ծաղիկներ բարձրանում էին մարդահասակ և այնպիսի առատությամբ, որ հյուսվում էին ծառերի ու խոտերի հետ, կռանում էին աղբյուրների վրա, ձգվում էին ժայռերն ի վեր և կախվում անդունդներից։

Գարնանաբեր ծաղիկը սավդուկն էր։ Երբ գարունը գալիս էր, ամբողջ Սև սարը ծածկվում էր այդ ձյունաթույր կապտաթերթ ծաղիկներով։ Այդ ծաղիկը զուգում էր Արինոքի ձորը, դյուղական կալերը և խրճիթների տանիքները։ Նա անարգել լցվում էր բոլոր խանդակներն ու ծործորները, մազլցում էր ծառերի բների վրա, բուսնում էր փչակների մեջ, դուրս էր նետվում ժայռերի ճեղքերից։ Մայիս ամսին Դարավոր կաղնու փչակի շորս կողմից զանգակների պես կախվում էր այդ լուսաթաթախ ծաղիկը՝ խառնված լեռան մանիշակների հետ։ Այդ սքանչելի ծաղկից կապտին էր տալիս Խոդեդանի քարափը։ Նա հայտնվում էր անգամ Բայազի թոնրի կողքին, ծաղկում էր նրա թոնրակի մեջ։

Տոնեն սովորեցնում էր յուր որդուն սիրել հայրենի բնության այդ բոլոր հրաշալիքները և սքանչանալ նրանցով։ Հայրը որդու մեջ սեր էր զարթեցնում դեպի յուր ծննդավայրը, յուր ժողովրդի այդ նվիրական հայրենիքը, նրա լեռներն ու ձորերը, նրա ամեն մի քարը և թուփը։

Իսկ ամենից կախարդականը գիշերային խարույկներն էին, աստղալի երեկոների անվախճան կրակները։ Տավրոսը գլուխը դնում էր վառվող դևրանին և, խարույկի բոցերին նայելով, լսում էր իր լեռնական հոր երգախառն հեքիաթները և, թևը նրա ծնկանը դրած, խաղաղ քնում էր Դարավոր կաղնու տակ։

Մի անգամ, երբ Ասատուրը վայրի կաղին էր խորովում հովիվների համար, բալուտներից մեկը ճայթելով, այրեց մանկան երեսը, այնտեղ գոյացնելով մի բոլորակ սպի։ Այդ սպին մնաց նրա դեմքին իբրև մանկության օրերի անջնջելի հիշատակ։

ԱՆՕՐԻՆԱԿ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ

Սարսափելի էր Բռնաշեհի ձմեռը։ Ձյունը բարդ-բարդ նստում էր գյուղական կոնաձև տանիքների վրա, փակում էր բոլոր ճանապարհներն ու անցուղիները և, երկու-երեք մարդահասակ բարձրությամբ, կանգնում էր տների առաջ՝ իբրև պատնեշ գարնան դեմ։

Բուքը մերձավոր բարձունքներից ձյունի ահագին զանգվածները վարելով բերում-կուտակում էր Արինոքի ձորում։ Սառցե պաղլուլակները, երկայն սրերի նման, կախվում էին Օնեի տանձի ծառերից։ Սանամ կաքավները բքահար խմբերով լցվում էին Խոզեդանի երդիկից ներս։ Վայրի կատուները, աղիողորմ մլավելով, ճանկռում էին ատաղձագործ Հակոբի դուռը, աղերսելով մի տաքուկ ապաստարան։

Իրիցանքում Դարավոր կաղնու մոտով այնպիսի ուժգնությամբ էր մոլեգնում բորանը, որ անկարելի էր հավատալ, թե այդտեղ երբևիցե կենդանության նշույլ է եղել, և լեռնականները, ոսկեբոցիկ խարույկների շուրջը բոլորած, հովիվ Տոնեի խաղերն են ունկնդրել ամառային լուսնյակ գիշերներին։

Բուքը ավելով ձյունի սպիտակ ավազափոշին, բերում-խճոլում էր այն հաստաբուն ծառերի փչակների մեջ։ Սև սարի արջերն ու գայլերը, քաղցից հյուծվելով, զարհուրելի ոռնում էին իրենց ցրտաշունչ բայոցներում, թնդացնելով շրջապատի այրերն ու անձավները։

Ամեհի մրրիկը Սև սարի անտառները ալեկոծելով, թռչում էր մինչև Միրնկատար և նրա լանջերից դեպի վար խուժելով, ահեղորեն մոլեգնում էր Ծծմակա Քթի շուրջը, կատաղաբար հեալով Ալվարինջ և Բերդակ գյուղերի վրա։ Նրա մի հոսանքը Թարգմանչաց վանքի արևելյան պարսպին զարկվելով, հոնդում էր Մովսես Խորենացու գերեզմանաքարին և Դավիթ Անհաղթի խաչքարի շուրջը խելակորույս պտտվելով, սլանում էր մինչև Սաչկի դուրան։ Այդ բարձրության վրա նա մի պահ կանգ էր առնում և ապա, բախվելով Արջգլորի ապառաժներին, մի հսկայամարմին կատվի պես մլավում էր Խաչփողանի ոլորաններում՝ ետևի ոտքերով ճանկռելով Տաշո կամուրջի երերուն տախտակամածը։

Իսկ երբ հանդարտվում էր բնության վրդովմունքը և շողում էր

արևը, համատարած անտառը վերածվում էր մի կախարդական պատկերասրահի, մեկը մյուսից գունագեղ, ապշեցուցիչ տեսարաններով։ Այստեղ ու այնտեղ, ձյունի արևափայլ սպիտակության վրա կռնչում էին սև ագռավներն ու երկարապոչ կաչաղակները, մերթ ընդ մերթ խմբվելով Յոթակնանի աղբյուրի սառցապատ եզերքներին, որոնց վրա անդադրում փչում էր լեռնային ջրերի կաթնագույն տաք գոլորշին։

Ահա մի քանիսը թառել են ձյունների միջից սևին տվող անթեղի ծայրին, որի կեսը վառված է, իսկ մյուս կեսը վառվելու է հաջորդ գարնանը։ Այդ այն գերանն է, որի վրա երազել է Օնեն։

Ղա՜, ղա՜, ղա՜,— բարձրագոչ կռավում է մի ծանրամարմին ագռավ, և իր ահագին թևերը կոճղից պոկելով թռչում է դեպի ս. Աղբերիկի կողմը, իր ետևից վարելով մյուս ագռավների թևատարած չուն։

Արինոքի և Դաշտադեմի շինականները այդ օրերին սարից տերև էին փոխադրում գոմերը։ Սասունի ավանդական փայտյա քոշերը հագած, բարձրանում էին մինչև Իրիցանք և, դահուկները կանաչ տերևով բառնալով, մրրկի արագությամբ նետվում էին բարձունքից բարձունք, ձորից ձոր, սատանայական ոստյուններ գործելով անդունդների և կիրճերի վրայով։

1907 թվականի այդ սարսափելի ձմռանը, մի պարզկա առավոտ, Պնտխցի Մանուկը Իրիցանք բարձրացած դիտում էր հայրենի աշխարհը։ Նա որոնում էր ուշացած ճամփորդի, որ տուն տանի կամ հարց ու փորձ անի իր քույրերի կամ աղջիկների մասին։ Այնքան ձյուն էր եկել, որ բոլոր հովիտներն ու ձորերը փակվել էին և ամբողջ Սասունը իրենից ներկայացնում էր սառցակալած ձյունի մի միակտուր հսկայական զանգված։

Սպիտակ հարթության վրա Պնտխցի Մանուկը դահուկների հետքեր նկատեց։ Երևի Խոդեղանը և Օնեն են բարձրացել սար՝ տերև տեղափոխելու, կամ Ստեփանն է հետապնդում արջի ձագերին։ Երբեմն էլ Թելո Մեսրոպն էր սարերով Արինոք գալիս՝ շաղգամ տանելու։

Կանգնած դիտում էր Պնտխցի Մանուկը, երբ հանկարծ անտառի հսկայամարմին ագռավները կռնչյունով իրար անցան։

Մի հաղթանդամ լեռնական, ծանր քլունգ մեջքին կապած,

սառած ձյունի վրայով սլանում էր դեպի Բռնաշեն։ Նա հագել էր սև աբա և բրդյա թանձր անդրավարտիք։ Գդակի շուրջը փաթաթել էր սասնո ապարոշ։ Նրա բռնած ընթացքից և մարմնի հաղթական գիրքից երևում էր, որ այդ մարդը Մշո կողմերից է գալիս և Բռնաշենի վրայով շտապում էր դեպի Ծովասար կամ ավելի հեռուներ։

«Ո՞վ է այդ զարմանալի ուղևորը»,— անցավ Պնտխցի Մանուկի մտքով։ Մի գուցե ծանոթ հովիվներից մեկն ու մեկն է։

— Ասվատո՞ւր,— հնչեց Պնտխցի Մանուկի ձայնը, բայց նրա կանչը անպատասխան մնաց։

— Օնե՞։

Այս կանչը նույնպես արձագանք չստացավ։

Տարօրինակ ուղևորը կատարեց մի քանի ցատք ևս և ամբողջ հասակով տարածվեց արևափայլ ձյունների վրա։

Երբ Մանուկը մոտեցավ, նա արդեն քնած էր։

— Սասնո՛ ծոերից կլինի,— շշնջաց Պնտխցի Մանուկը, զարմացած նայելով նրա շերտավոր հոնքերին, թանձր բեղին և ականջների մազոտ բլթակներից կախված սպիտակ սառույցներին։

Մանուկը կռացավ նրա գոտկատակից հանեց կայծքարը, իր ծխամորճը վառեց, ժպտաց և կայծքարը նորից դրեց տեղը։ Հսկան ոչինչ չզգաց։

— Ո՞վ ես դու, ա՜յ մարդ, վե՛ր կաց, տուն երթանք,— նրա աջ կողը բոթելով, ասաց Մանուկը։ Հսկան շուռ եկավ աջ կողմի վրա և նորից քնեց՝ քլունգը մեջքին։

Անտառում ոտնաձայներ լսվեցին։ Վերևից գալիս էին Խոդեդանը, Օնեն և Ստեփանը։ Առաջին երկուսը լծված էին բարձած դահուկների, իսկ Ստեփանը գրկած բերում էր երկու արջի քոթոթ, որ նոր էր հանել բայոցից։ Նկատելով Պնտխցի Մանուկին մի պառկած մարդու հետ, նրանք դահուկները կանգնեցրին մի ծառի հետև և շտապեցին նրա մոտ։

— Ո՞վ է,— հարցրեց Ասատուրը մոտենալով։

— Չգիտեմ։

— Քնա՞ծ է։

— Նոր քնեց։

— Ո՞վ ես դու, ա՜յ մարդ, կմրսես ձյունների մեջ,—գոչեց Օնեն նրա ձախ կողը բոթելով։

Հսկան անշարժ էր։

— Եկեք էս երկու արջի քոթոթները կապենք սրա մեջքից, իսկ մենք թաքնվենք անտառում,— առաջարկեց Ստեփանը։

— Սպասեցե՛ք,— սա Դարբին Զենոբն է,— հանկարծ բացագանչեց Խոդեդանը, ճանաչելով տալվորիկցի երկաթագործին։

— Զենո՞բ,— գոչեց Ասատուրը, նրա քլունգից քաշելով։

Հսկան աչքերը բացեց և շուռ եկավ մեջքի վրա։ Ճանաչելով Խոդեդանին, նա անմիջապես նստած դիրք ընդունեց, աչքերը տրորելով։

— Ո՞ւր ես գնում, Զենոբ։

— Տալվորիկ։

— Ո՞րտեղից ես գալիս։

— Բուլղարիայից։

— Քնկոտ է, դրա համար էլ անկապ է խոսում։ Բուլանուխ ասելու փոխարեն, Բուլղարիա է ասում,— բացատրեց Մանուկը հեգնանքով։

Հսկան ժպտաց։

— Չէ՞, Զենոբը ճիշտ է ասում, նա Բուլղարիայից է գալիս,— վկայակոչեց Ասատուրը, նայելով նրա քլունգի ծայրին, որ հողոտ էր և նրա պղնձագույն դեմքին, որ ապառաժի ամրություն ուներ։

— Ինչո՞ւ էիր գնացել Բուլղարիա։

— Գործ կար։

— Ի՞նչ տեսակ գործ էր։

— Անդրանիկ փաշան տուն էր շինել էնտեղ։ Գնացի քանդեցի ու եկա,— հանգիստ պատասխանեց Զենոբը՝ ծխամորճը վառելով։

Եվ արդարև, ձյունների վրա նստած մարդը տալվորիկցի դարբին Զենոբն էր։ Նա գալիս էր Բուլղարիայից։

— Ինչո՞ւ քանդեցիր Անդրանիկի տունը,— հարցրեց Օնեն։

— Ինչո՞ւ։

Եվ Զենոբը պատմեց հետևյալը։

1904 թվականի Սասունի մեծ ապստամբության պարտությունից հետո, զորավար Անդրանիկը հրաժեշտ տալով Գևորգ Չաուշին, Սասունից գալիս է Կովկաս և այնտեղից մեկնում է Բուլղարիա։ Այստեղ նա սկսում է իր համար նոր տուն շինել։

Տալվորիկցի դարբին Զենոբը տեղեկանալով այդ մասին և

վախենալով, որ Անդրանիկը կարող է իսպառ կտրվել մայր հողից, վերցնում է իր քլունգը, որ ինքն էր շինել, գնում է Հալեպ և այդ քաղաքի մի քանի սասունցի հացթուխների օժանդակությամբ, նավ նստելով, ուղևորվում է Բուլղարիա։

Հարցուփորձով իմանում է զորավար Անդրանիկի տան տեղը։ Հասնում է այն ժամանակ, երբ որմնադիրներն ու քարտաշները տան հիմքը ավարտած՝ պատերն են շարում։

«Ես որ հնչակի տունը քանդեցի Հալեպում, կարծում ես քոնը կխնայե՞մ»,— շշնջում է Զենոբը և առանց հարցնելու, քլունգը բարձրացնելով սկսում է ճակատից քանդել։

Բանվորները շփոթված իրար են նայում։

— Ո՞վ է այդ տարօրինակ մարդը,— զարմանքով հարցնում են իրար։

— Մոտ չգա՛ք,— զգուշացնում է Զենոբը հայերեն լեզվով, առանց ընդհատելու իր հարվածները։

Անդրանիկին անմիջապես լուր են տալիս, թե մի ածդահա, սև աբավոր մարդ է եկել և քանդում է իր տունը։ Զորավարը իսկույն գալիս է։ Հեռվից նկատելով Զենոբին, ճանաչում է նրան և դառնալով բուլղարացի բանվորներին՝ ասում է.

— Թողեք թող քանդի, միևնույն է, մինչև նա այդ տունը չքանդի, չի հանգստանա։

— Քու տունը միրաթ (անտեր) էղնի, Անդրանիկ,— ասում է Զենոբը,— դու եկար Տալվորիկ, քարողեցիր, թե կռվենք հայրենիքի ազատության համար, իսկ ինքդ հայրենիքից դուրս տո՞ւն ես շինում։ Մի՞թե Սասունում տեղ չկար։ Որ դու էստե՛ղ տուն պիտի շիներիր, մեր տները ինչո՞ւ քանդել տվիր։

— Իրավունք ունես, Զենոբ,— ասում է Անդրանիկը,— քանդիր մինչև հիմքերը։ Եվ քանդում է Զենոբը։ Հայ և բուլղար որմնադիրներն ու քարտաշները մի կողմ քաշված, ապշահար նրան են նայում։ Գլուխը կախ, խուռներում ահավոր մտածությունների և խոհերի մեջ կանգնած նայում է զորավար Անդրանիկը՝ հայացքը մի անորոշ կետի։ Իսկ Զենոբը քանդում է, անդադար քանդում։ Այդ շրջապատում ոչինչ չի լսվում, բացի նրա երկաթակուռ քլունգի ծանրագին հարվածներից։ Ոչ ոք չի համարձակվում մոտենալ նրան։ Մի անողոք, ցասումնալից, վրեժխնդիր ասածու նման քանդում է Զենոբը, աննկուն քանդում։ Երբ հիմքի վերջին քարը փշուր-

փշուր անելով հողմացրիվ է տալիս, քաշվում է մի կողմ և սկսում է ծխել։ Այդ ժամանակ նրան է մոտենում Անդրանիկ փաշան և ձեռքը նրա ուսին դնելով՝ ասում է.

— Բարև, Զենոբ։

— Բարևն աստծունն է, դրա համար եմ ես քու բարևն առնում,— պատասխանում է Զենոբը։— Ես քեզ սիրում եմ, Անդրանիկ, և մինչև կյանքիս վերջը պիտի պաշտեմ քեզ։ Բայց եղավ մի ժամանակ, որ դու էլ շեղվեցիր մեր պապերի ավանդական ճանապարհից։ Վերջին կռվի օրերին դու քու հույսը դրեցիր եվրոպացոց վրա։ Եվրոպացիք մեզ շատ են խաբել, Անդրանիկ։ Նրանք են պատճառը մեր հայրենիքի բնաջնջման։ Մի ազդեցիկ քուրդ ցեղապետի բարեկամությունն ավելի արժեքավոր է, քան թե ինգլիզի և ֆրանկի խոստացած օգնությունը։ Վաղը եթե կռիվ լինի, քուրդը մեր տան կողքին է, իսկ ֆրանկն ու ինգլիզը մեզանից հեռու և խորամանկ։ Հայրենիքը լավ բան է, Անդրանիկ։ Երանի նրան, որ իր տունը հայրենյաց հողի վրա կշինի և ոչ թե օտար արևի տակ։

Ավարտելուց հետո դարբին Զենոբը սրբում է ճակատի քրտինքը, հրողտ քլունգը դնում է ուսին և, առանց մնաս բարև ասելու, հեռանում է այդտեղից։ Նա նավ նստելով գալիս է Տրապիզոն և այնտեղից ոտքով Էրզրումի ու Խնուսի սարերն անցնելով՝ հասնում է Մուշ։

Ուղևորությունը տևում է մի քանի ամիս։

Մուշ քաղաքում նա հագնում է ծանոթ սասունցիներից մեկի լաքաները և Միրնկատարի լանջերը բարձրացած, Բռնաշենի վրայով շտապում է դեպի Տալվորիկ։

— Գնացի՞,— ասաց Զենոբը իր պատմությունը վերջացնելով և լաքաներն ամրացնելով ոտքերին։

— Գնանք տուն, հաց կեր,— ասաց Պնտխցի Մանուկը, նրա առաջը փակելով։

— Իմ խրճիթն ավելի մոտ է,— առաջարկեց Խոդեդանը։

— Է՞ն է Թամոյի ջաղացը,— ձեռքը դեպի Ծովասարը երկարելով, բացագանչեց դարբին Զենոբը, թեև համատարած ձյունից բացի ոչ մի ջրաղաց էլ չէր երևում։

Մի քանի ոստյուն, և Զենոբը Արինոքի ձորն անցած, սլանում էր դեպի Ծովասար։

Ասատուրը, Օնեն և Պնտխցի Մանուկը տակավին պաղ ձյունե-

ին կանգնած, զարմացած նայում էին այդ անօրինակ հայրենասերի ետևից։

Ներքևում ոռնում էր բուքը, ծլնկացնելով ս. Աղբերիկի զանգակները և նրա ծուխը պատառ-պատառ փախցնելով դեպի Անդոկ։

— Իսկական ծուռը դա է,— ասաց Ստեփանը, արջաքոթոթները թևատակին սեղմելով։

ԾՊՏՎԱԾ ԱՎԱԶԱԿԸ

Մշո դաշտի Խվներ գյուղում, որի կեսը հայեր էին, բնակվում էին երեք եղբայր։ Ավագ եղբայրը կոչվում էր Մուսաբեկ, միջնակը՝ Խասմբեկ, իսկ կրտսերը՝ Նհոբեկ։ Դրանք բալաքցի քրդեր էին՝ սերված մի ավազակաբարո տոհմից։

Մուսաբեկը Տարոնի համիդիե գնդերի պարագլուխն էր։

Գևորգ Չաուշը և դարբին Չենոբը շատ էին աշխատել, որ այդ երեք եղբայրը, որպես ճնշված ազգության ներկայացուցիչներ, հայերի կողմը բռնեն և միասնաբար գործեն օսմանյան բռնապետության դեմ։ Բայց նրանց բոլոր ջանքերը ապարդյուն էին անցել։

Կարճահասակ, մարմնեղ, շիկադեմ մի մարդ էր Մուսաբեկը՝ սրածայր բեղով և խորամանկ աչքերով։ Սովորաբար նստում էր արաբական ընտիր նժույգի վրա, իսկ երբեմն էլ հեծնում էր ջորի, որ հարմար էր դժվարագնաց ճանապարհների համար։

Հայ շինականը իր վաստակի լավագույն մասը պարտավոր էր հատկացնել քուրդ ավազակապետին՝ բերքով կամ համարժեք դրամով, ապա կառավարությանը։ Քուրդ բեկերը ոչ միայն բռնատուրք էին գանձում, այլև իրենց ենթակա գյուղերը վաճառում էին իրարու որպես ժառանգական ապրանք։

Մշո դաշտի Արքավանք գյուղը, որ Քրդագոմի մոտ էր, հարկատու էր Մուսաբեկին։ Հայ գյուղապետը մի քանի անգամ ընդդիմացել էր վճարել զարհուրելի բռնատուրքը։ Մուսաբեկը գիշերով հարձակվել էր այդ գյուղի վրա, գյուղապետին խաբելով տարել էր օղան, իր մշակներին կանչելով կապկապել էր նրան և բուխարիկի մեջ դնելով՝ ողջ-ողջ այրել էր։

Այդ միևնույն քուրդը 1879 թվականի մարտ ամսի 23-ին հարյուր հիսուն ձիավորով հարձակվել էր հարևան Ղարս գյուղի վրա և առևանգել գեղեցկուհի Գյուլիզարին։

Այդ երկու դեպքերը ցնցել էին ժամանակակից հայկական կյանքը։ Մինչև անգամ հիսուն մշեցի ազդեցիկ հայեր Պոլիս էին գնացել և սուլթանին խնդրանք ներկայացնելով պահանջել էին խստորեն պատժել այդ չարագործին։

Սուլթանը Մուսաբեկին աքսորել էր Արաբիա։ Սակայն թյուրք ենիչերիներին ամենևին ձեռնտու չէր կորստի մատնել այդ փորձված բանդիտին։ Սահմանադրությունից հետո նա ազատ արձակվելով, վերադարձել էր Խվներ, նորոգել էր իր բոլոր ժանգոտված զենքերը և, Մուշ հրավիրվելով, գաղտնի տեսակցություն էր ունեցել գավառապետ Շեֆքեթ փաշայի և ոստիկանապետ Թալիպ էֆենդու հետ։

Այդ խորհրդավոր հանդիպումից հետո Մուսաբեկը ծպտված շրջագայության ելավ դեպի Քանասարի բարձունքները։ Նրա նպատակն էր ուսումնասիրել այն վայրը, որտեղից նա մտադիր էր սկսել իր ապագա հարձակումը հայկական գյուղերի վրա։ Դրանցից երկուսը՝ Բերդակը և Ալվառինջը գտնվում էին Ծծմակա Քթի տակ՝ Սասուն տանող ճանապարհին։ Մուսաբեկը կարծում էր, թե այդ գյուղերում կարող էին զինված հայեր լինել, որոնք կապ էին պահպանում ռուսական զորքի հետ։ Բացի այդ, նա կամենում էր Թարգմանչաց վանքի դուռը փախցնելու հնարավորությունը ստուգել։

Այդ տարիներին քչերն էին ճանաչում Մուսաբեկին, թեև շատերն էին նրա անունը լսել, իսկ ինքը մեկ առ մեկ ճանաչում էր այն հայ շինականներին, որոնք, ընդվզելով օսմանյան բռնապետության դեմ, փախել էին սարերը։

Անձամբ ճանաչում էր նաև Պնտխցի Մանուկին, որ համարվում էր Դաշտի ազդեցիկ շինականներից մեկը և կապ էր պահպանում Սասունի հետ։

Բոլորովին անճանաչելի կացուցվելու համար, Մուսան հագել էր հասարակ փայտահատի զգեստ և արտաքուստ շատ ողորմելի տեսք ուներ։ Նա իր ձին կապել էր Ծծմակա Քթի արևոտ լանջին և, մի քարաժայռի թիկնած, դիտում էր Մշո դաշտը։ Եռևում, գեղատեսիլ բարձրավանդակի վրա սավառնում էր Թարգմանչաց վանքը իր ամրակուռ պարիսպներով, որ հեռվից նայողի վրա անառիկ ամրոցի տպավորություն էր գործում։

Առաջին մարդը, որ նա տեսավ, Թելո Մեսրոպն էր, որ այդ օրը եկել էր Ծիրնկատար՝ ավել քաղելու։ Ծաղկավոր ավելների

խուրձերը ավանակին բարձած և գավազանը մեջքին թեքությամբ պահած, Մեսրոպը հաղթական անցավ այն քարաժայռի մոտով, որին թիկնած էր Մուսաբեկը։ Տեսնելով մի մենավոր ձի մարգագետնում արածելիս, նա, բնականաբար, կանգ առավ և զարմացած նայեց նրան։

— Բարև, ախպեր,— գոչեց Մուսաբեկը ոտքի կանգնելով։

— Բարև, քիրվո,— հանկարծակիի գալով և փոքր-ինչ շփոթված, ողջունեց Թելոն։

— Ի՞նչ մարդ ես։

— Ես ավել ծախող Թելո Մեսրոպն եմ։

— Ո՞ւր ես գնում։

— Մուշ։ Առաքելոց վանքում մի քիչ ուշացա, թե չէ քաղաք հասած կլինեի։

— Ինչո՞ւ էիր գնացել վանք։

— Ես ու մի խուփեցի վիճեցինք մեկ միլիոնի վրա։ Խուփեցին ասաց, թե մեկ միլիոնը տասը հազար միավոր է, իսկ ես ասացի թե՝ հարյուր հազար է, ու, էսպես վիճելով, գնացինք հասանք վանք։

— Ինչո՞ւ։

— Որ իմանանք, թե մեկ միլիոնը ինչքան է։

— Իմացա՞ք։

— Վանահայրն ասաց, թե մեկ միլիոնը տասը հարյուր հազար միավոր է։

— Ճիշտ ասած, ես կարծեցի, թե եկել ես իմ ձին գողանալու,— նկատեց Մուսաբեկը ծոծրակը քորելով։

— Ես մաքուր աշխատանքով ապրող մարդ եմ, քիրվո, ինչո՞ւ պետք է ուրիշի ձին գողանամ։ Ա՜յ, սա է իմ ապրուստը,— ասաց Թելոն գրաստի վրա բարձած բազմագույն ավելները ցույց տալով։

— Ո՞ր գյուղից ես։

— Մեր գյուղն է Բերդակ, Ծծմակա Քթի տակ,— ձեռնափայտը դեպի արևելք երկարելով, ցույց տվեց Թելոն։

«Իմ ուզած մարդն է»,— մտածեց քուրդը, աչքը պահելով նրա գավազանի ուղղությամբ։

— Բայց մի՞թե ամոթ չէ, որ քեզ պես առողջ տղամարդը ավելի վաճառքով է զբաղված,— նկատեց խորամանկ բեկը։

— Ամոթը դրել ենք կամոդ, կողպեքը փակել ենք, բանալին

ուղարկել ենք Աբդուլ Համիդի մոտ,— շուտասելուվի ձևով արագությամբ պատասխանեց Թելոն։

— Ուրեմն դո՞ւ էլ ինձ նման դժգոհ ես եղել սուլթանից։

— Ես ոչ միայն դժգոհ եմ եղել, այլև երեսուն տարի պայքարել եմ նրա դեմ,— հպարտացավ Մեսրոպը։

— Անտանելի կարգեր էին, այնպես չէ՞։

— Ճաշից չկերանք՝ ծխից քաշացանք,— կարճ ու կտրուկ ամփոփեց բերդակցին։

— Երևի հոլաղուրկ գյուղացի ես։

— Իմ ունեցած հողերը հարուստները գրավեցին։ Դրա համար էլ ավել եմ ծախում։

— Ո՞ր սարիցն ես քաղում։

— Ծիրնվատարի։ Իմ ունեցածը էս մի քոտոտ ավանակն է, էն էլ ուզում են։

— Ո՞վ է ուզում։

— Փղորկվա Կարոն։ Երևի ճանաչում ես։

— Չէ՛, չեմ ճանաչում։

— Թարգմանչաց վանքում, մի ծուռ սասունցու համար, ժողովրդի առաջ ես նրա հետ գրաղ եկա ու տարվեցի։ Պայմանի համաձայն, ես պարտավոր էի իմ ավանակը նույն օրը նրան հանձնել։

— Իսկ ինչո՞ւ չհանձնեցիր։

— Կինս մեջն ընկավ, թե դու ինչո՞ւ մեր ավանակի վրա գրաղ ես եկել, ու էսպես՝ գործը խափանվեց։

Ձին վրնջաց և, ոտքը օդակից հանելով, սկսեց փսխչել։ Մուսան վազեց հետևից և բերելով նորից գամեց դեանին։

— Իսկ դու ո՞վ ես, քիրվա,— հարցրեց Թելը Մեսրոպը, երբ նա իր տեղը եկավ։

— Ես Շեկո տան քուրդ եմ։ Փայտ եմ կտրել անտառում, ուզում եմ տանել Չխուրի կողմերը,— կեղծ հորանջելով ասաց բեկը։

— Մի բան հարցնեմ, քիրվա, երևի կիմանաս։

— Հարցրու։

— Ձի՞շտ է, որ էն ավազակ Մուսաբեկը նորից եկել է։

— Ասում են եկել է։ Խոսքդ էն հայտնի քրդի մասին չէ՞, որ աքսորել էին Արաբիա։

— Նրա մասին է։

— Իսկ դու գիտե՞ս, թե ով էր նրան աքսորել։

— Իհարկե գիտեմ՝ սուլթան Համիդը։

— Պատճառը գիտե՞ս։

— Ինչո՞ւ չէ. գողության և ավազակության համար։ Էդ նա էր, որ փախցրեց մեր գեղեցիկ Գյուլիզարին, իսկ Արքավանքի շինական Փոստա Օհանին, բռնատուրք չտալու համար, ճխտեց բուխարիկի մեջ՝ վառեց։ Նրա ամբողջ տոհմը ավազակ է։

— Ես էլ եմ լսել էդ բալաքցի քրդի մասին, բայց տեսնողներն ասում են, որ նա հիմա հազիվ է ոտքի կանգնում։

— Թող գնա փառք տա Երիտասարդ թյուրքերին, որ իրեն ազատեցին բանտից, թե չէ վաղուց սատկած կլիներ։

— Երիտասարդ թյուրքերը, կարծեմ, հայերի համար էլ օգտակար եղան,— նկատեց բեկը։

— Ճիշտ է, հիմա նրանք մեր բարեկամներն են։

— Իսկ դու հավատո՞ւմ ես նրանց բարեկամությանը։

— Ես չեմ հավատում, բայց մեր մեծերն հավատում են։

— Իսկ դու ինչո՞ւ չես հավատում։

— Մինչև մեր մայր հայրենիքը ազատագրված չտեսնեմ բրոնակալների լծից, ես ոչ մեկի խոսքին չեմ հավատա։

— Մայր հայրենիքը ազատագրելու համար հարկավոր է զենք ունենալ։

— Մեզ մոտ զենք չկա։ Առաջնորդարանի մարդիկ մտնում են տները և ով զենք ունի, խլում են ձեռքից։

— Ինչո՞ւ։

— Ասում են, թե նոր թյուրքերի հետ բարեկամներ ենք, հարկավոր չէ զենք ունենալ։ Մշո առաջնորդ Վարդան վարդապետն ու փաշան դաշինք են կապել։

— Ի՞նչ դաշինք է։

— Վարդան վարդապետը խոստացել է հայերի մոտ եղած բոլոր զենքերը հավաքել և թույլ չտալ, որ նրանք ապստամբեն, իսկ փաշան երդվել է պաշտպան կանգնել հայերին։

— Ուրեմն դու զենք չունե՞ս։

— Մի կոտրած բերդանկա ունեի, էն էլ մեր գյուղի ռեսը տարավ։

— Կնշանակե էս սարերում ֆիդայիներ չկա՞ն։

— Գևորգ Չաուշի սպանությունից հետո ոչ մի ֆիդայի չկա մեր սարերում։

— Դու մի շատ ազնիվ և քաջ մարդու անուն տվեցիր։ Ե՞րբ են սպանել նրան,— հարցրեց քուրդը։

— Գևորգ Չաուշը սպանվել է սրանից մի քանի տարի առաջ, 1907 թվի մայիսի 27-ին։

— Մեզ մոտ, Շեկո քրդերի մեջ էն կարծիքն է տարածված, որ նրան թիկունքից են խփել, որովհետև նա ուզում էր վերականգնել հայ և քուրդ ժողովուրդների նախկին բարեկամությունը և չէր ենթարկվել դաշնակցության կենտրոնի ցուցմունքներին։ Քո կարծիքն ի՞նչ է։

— Ճիշտ է, էդպիսի լուր կա տարածված։ Գևորգ Չաուշը սպանվել է Սուլուխի ճակատամարտում, հերոսաբար կռվելով Քոսա Բինբաշու զորքի դեմ։ Իր զենքի ընկերները նրա վիրավոր մարմինը գիշերով տարել են Մուրադ գետի ափը։ Գևորգը խնդրել է, որ իրեն այդտեղ դնեն, ծածկեն մի քիչ խոտով և հեռանան։ Լուսադեմին մի քուրդ, դաշտով անցնելիս, ծանր տնքոցներ է լսում։ Մոտենում է և տեսնում մի վիրավոր մարդ՝ խոտերով ծածկված։

— Ա՜վ, ա՜վ (ջո՜ւր, ջո՜ւր) — թախանձում է վիրավորը։ Իմանալով նրա անունը, քուրդը ապշահար ինդրում է նրան ջուր չխմել, քաջ գիտենալով, որ դա կարող է փութացնել մահը։ Բայց Գևորգը խմում է ջուրը։ Նրա դիակը սայլով բերել են Մուշ և տարել թաղել են Սաչկի դուրանի վրա։

— Ափսո՜ս Գևորգ Չաուշը,— հառաչեց Մուսան։— Էդ էն հերոս մարդն էր, որ Հունան գյուղի կռվին իր ապստամբ շինականներով օսմանցոց քառասուն ձիավորներին զինաթափ արեց և նրանց բոլորի ձիերի պոչերը կտրելով ուղարկեց Մուշ։ «Ես կորեկի արտի ճնճղուկ եմ, ինձ ոչ ոք չի կարող բռնել»,— պարծենում էր նա։ Եվ խեղճը ինչպե՜ս նամարդաբար բռնվեց։ Բայց ես չեմ հավատում, որ նրա մահից հետո էս սարերում ֆիդայիներ չլինեն։ Ընդհակառակը, նրանք ավելի պիտի շատանան։ Դու բերդակցի ես, երևի կիմանաս, թե ո՛րտեղ է գտնվում Գոմսա Մելիքի խոմբը,— աչքը կկոցելով հարցրեց քուրդը։

— Լսել եմ նրանց մասին, բայց թե որտե՞ղ են ապրում՝ չգիտեմ։

— Իսկ ի՞նչ է անում Անդրանիկ փաշան։

— Նրա տեղն էլ չգիտեմ։ Լսել եմ, որ մի քանի տարի առաջ նա Բուլղարիա է գնացել։ Նրա անունը լսելիս Մուսաբեկը նապաստակի պես դողում է,— ավելացրեց Թելոն։

— Մի առանձին քաջ մարդ չէ էդ Մուսաբեկը։ Մենք՝ շեկոներս նրան չենք սիրում,— անմիջապես վրա բերեց քուրդը։

— Հավատա, քիրվո, էս սարի ծաղիկն ավելի օգտակար է, քան թե էդ լիրբ ավազակը։ Ծաղիկը սարն է զարդարում, վերջը դառնում է ավել, որով մենք մեր տներն ենք մաքրում, իսկ Մուսաբեկը անպետք տատասկ է։

— Ի՞նչ կանես, եթե ձեռքդ ընկնի։

— Կդնեմ ոտքիս տակ՝ կճվտեմ,— առանց իր բուռն ատելությունը թաքցնելու պոռթկաց Մեսրոպը։

— Իսկ եթե սուլթանը ձեռքդ ընկնի, ի՞նչ կանես։

— Նրան էլ կճվտեմ։

— Ուրեմն դու բռնապետներին չե՞ս սիրում։

— Բռնապետը սիրելու բա՞ն է, որ նրան սիրեն։ Հավատա, քիրվո, եթե թագավորներն իմանան, թե ինչ է մտածում մեզ պես հասարակ ժողովուրդը իրենց մասին, նրանք մի օր հանգիստ չեն քնի, կգան ու էս Ծծմակա Քթից իրենց կգլորեն։ Առաջ էլի նրանք ծպտված մտել են ժողովրդի մեջ, իսկ հիմա բոլորովին աչքաթող են արել մեզ։

— Էդ նրանից է, որ իրենց հպատակ ազգերը սկսել են պայքարել անկախության համար։ Նրանք հիմա վախենում են ժողովրդի մեջ մտնել։

— Ուրեմն պետք է էդ ազգերին ազատություն տալ։

— Իմ կարծիքով հայերը շուտով անկախություն կստանան։

— Ո՞վ է մտածում մեր անկախության մասին։

— Անգլիացին։

— Էն ժանգառի գյուլը վկա, քանի ինգլիզը կա, երբեք չհավատաս, որ հայերն ու քրդերն անկախություն կստանան,— ձեռքով երկնքի կապույտը ցույց տալով, ասաց Թելոն։— Անգլիացին ու օսմանցին նապաստակը սելով են բռնում, դու մի՛ հավատա նրանց խոսքին։

— Իսկ ռուս թագավորի մասին ի՞նչ կասես։

— Քեզ մի բան ասեմ, քիրվո, ոչ ռուս թագավորն է մեր բա-

ռեկամ, ոչ էլ սուլթանը։ Երկուսն էլ կուզեն մեկ կտտրել, որ մեր երկիրը վավթեն։

Մուսան, որ այդ ամբողջ ժամանակ ուշադրությամբ Թելո Մեսրոպին էր նայում, հանկարծ տեղից վեր թռավ.

— Ուշացա՞, շատ ուշացա՞,— ասաց նա։

— Փայտը կտրե՞լ ես,— հարցրեց Թելոն։

— Դեռ չեմ կտրել։ Հույս չունեմ տեսնելու, բայց եթե հանդիպեմ Մուսաբեկին, ի՞նչ ասեմ քեզնից։

Թելոն շոքեց, իր դավազանը կրծքին պահած, ինչպես որ հրացանն են բռնում և ասաց։

— Ասենք թե սա հրացան է, քիրվո։

— Ասենք թե...

— Ես էս հրացանը էսպես կպահեի կրծքիս ու կասեի. «Ա՞խ զնդակ, դու ուղիղ գնա խվներ գյուղ, չբվիր աղա Մուսաբեկի սրտի մեջ ու ասա՝ թե ես Թելո Մեսրոպի զնդակն եմ, որ եկա»։ Էղպես ասա նրան։

— Անպայման կասեմ։

Մուսան դառը ծիծաղեց։ Սրբեց ճակատի սպաղ քրտինքը, բարձրացավ, հեծավ իր ձին և ամբողջ թափով սլացավ լեռն ի վար։

— Լսի՞ր, այ մարդ, դու անտառ փայտ կտրելու էիր եկել, ինչո՞ւ դատարկ կերթաս։

— Շուտով կկտրեմ...

«Չլինի թե սա Մուսաբեկն է»,— անցավ Թելո Մեսրոպի մտքով։ Նա մի պահ սարսափեց այդ մտածությունից։ Ինքնաբերաբար ելորեց իր հռչակավոր բեղերը, շռած աչքերով նայեց դեմքին և ապա, գլուխը բարձրացնելով, ասաց.— ասենք, թե դու բալաքցի Մուսան ես, քու հերն էլ անիծած, ո՞վ է քեզանից վախենում։ Սատանայից չվախեցա, քեզանի՞ց պիտի վախենամ, ասաբսըզ իթ ողլի,— բացագանչեց նա։— Ես բերդակցի ավել ծախող Թելո Մեսրոպն եմ, քառասուն տարի սուլթան Աբդուլ Համիդը չկարողացավ ինձ հաղթել, դո՞ւ պիտի հաղթես, քու վաստակողի պապու գանգը...

Քանասարի բարձունքի վրա, Թարգմանչաց վանքի դեմ ու դեմ, կանգնած էր Թելո Մեսրոպը դավազանը մեջքին պահած, իսկ դաշտում լսվում էր Մուսաբեկի նժույգի քառատրոփ վազքը դեպի խվներ։

ՎԵՐՋԻՆ ԱՎԵԼՆԵՐԸ

Հազիվ էր Թելո Մեսրոպը բաժանվել քուրդ ավազակապետից, երբ դիմացից հայտնվեց նրա կինը՝ Հուլունքը։

— Ա՜յ մարդ, դու էս ինչո՞ւ ուշացար, արևն հասավ երկնքի պորտին,— հանդիմանեց կինը նրա վրա հարձակվելով։

— Առաքելոց վանք գնացի, դրա համար ուշացա,— հանդիստ պատասխանեց Թելոն։

— Ինչո՞ւ։

— Ճանապարհին մի խութեցու հետ վիճեցի։ Ուզում էի իմանալ, թե մեկ միլիոնը ի՞նչքան է։

— Էն ժանգառի գյոլը վկա, դու ծուռ ես։ Ուրեմն դու մեկ միլիոնի համար մինչև վա՞նք հասար։ Մուշում հարցներիր՝ քեզ կասեին։

— Մշեցիք չգիտեն։ Միայն վանքի վանահայրը կարող էր ասել, թե մեկ միլիոնը ինչքան է։

— Բայց քու ինչի՞ն է հարկավոր մեկ միլիոնի հաշիվը,— նեղացավ կինը։

— Ա՜յ մառնիկա անտեր, ես ուզում եմ իմանալ, որ եթե ռսի թագավորը ինձ մեկ միլիոն զորք տա, ես քանի՞ օրում մեր երկիրը կմաքրեմ օսմանցիներից։

— Ա՜յ գիժ բերդակցի, վերջ տուր քու էդ ծռություններին։ Դու ի՞նչ ես, որ օսմանյան տերության հետ կոտոշ զարկես։ Օրական մեկի հետ պայման ես կապում։ Անցյալ անգամ էլ մեր ավանակը խոստացար Փղորկվա Կարոյին։

— Եվ կտեսնես, որ ես իմ խոստումը կկատարեմ։

— Չպիտի կատարես։

— Պիտի կատարեմ,— պնդեց Թելոն։

— Էշը մեզ հարկավոր է սարից ավել փոխադրելու և տնական ուրիշ հոգսերի համար։ Մեր ամբողջ ապրուստը էս մինուճար ավանակի վրա է հիմնված։

— Իսկ իմ բեղի պատի՞վը,— գոռաց Թելոն, հարձակվելով կնոջ վրա։

— Պատիվը լավ բան է, բայց էշն է փորը կշտացնում։

— Ա՜յ օռոսպի կնիկ, դու իմ տղամարդկային պատիվն ես շոշափում ընդհանուր մարդկության առաջ։ Եթե ես էն ծուռ սասուն-

ցուն հաղթեի, Փղորկվա Կարոն պարտավոր էր ինձ շալակով վանքից մինչև մեր գյուղը տանել։

— Իսկ դու ինչո՞ւ էնպես չարեցիր, որ Կարոն քեզ շալակեր, և ոչ թե դու նրան։ Հիշո՞ւմ ես, դրանից մի քանի տարի առաջ էլի դու նրան շալակեցիր վանքից մինչև Մուշ։ Բոլորը քեզ խաբում են։

— Լռի՛ր, այ կնիկ, տարվելը՝ խաբվել չէ, ինձ սատանան չկարողացավ խաբել աքլորի կերպարանքով, ո՞ւր մնաց թե մարդիկ ինձ մոլորեցնեն։

— Քու կարծիքով դա սատանա՞ն է եղել։

— Ուրեմն չե՞ս հավատում։ Ա՞յ, էն խև-Վաղեսի քարափի մոտ բռնեցի սատանային։ Արի գնանք, տեղը ցույց տամ,— ասաց Թելոն և կնոջ թևից բռնելով, սկսեց քաշել դեպի Ծծմակա Քթի կողմը։

— Լա՞վ, լա՞վ, հավատում եմ, որ վանքի վանահայրն է ասել, հավատում եմ,— հանգստացրեց Հուլունքը նրան։

— Թե մյուս անգամ էդ մասին բերա՞ն ես բացել, քեզ Ծծմակա Քթից ցած կգլորեմ,— սպառնաց Թելոն, նրա թևը արձակելով։— Մի սատանա էլ դու ես, դելի կերպարանք ես առել, որ ինձ մոլորեցնես։ Վաղվանից ավանակը կտամ Կարոյին։

— Ո՛չ մի ավանակ էլ չես տա,— միջամտեց կինը բարկությամբ։

— Պիտի տամ,— նորից բղավեց Թելոն։— Շատ որ զոռես, լեզուդ պոպոճակեդ (ծոծրակեդ) դուրս կքաշեմ։— Եվ սկսեցին ճանապարհին կռվել մարդ ու կնիկ և ավելներով իրար ծեծել։

— Սարի ավե՞լ,
Ծաղիկ ավե՞լ,
Ցողը վրեն,
Շողը վրեն,—

բղավեց Թելո Մեսրոպը Սաչկի դուրանին մոտենալով։ Մուշը փռված էր իր առջև, բլուրի վրա։ Թելոն չոքեց համբուրեց Գևորգ Չաուշի գերեզմանը, որ ճամփի եզրին էր և սկսեց վայր իջնել դեպի քաղաք։

Բերդակցի ավել վաճառող Թելո Մեսրոպին ճանաչում էին քաղաքի գրեթե բոլոր հայ բնակիչները։ Մանավանդ շատ ուշադրավ էին նրա կարմիր սոլերը կանաչ գուլպաներով, կապտավուն

անդրավարտիքը և երկայն բեղերը, որից մեկի ծայրը դեպի վեր էր ուղղված; իսկ մյուսը՝ դեպի վար։ Երբ նրա գրասեղանը երևում էր Սաչկի դուրանի թեքության վրա գույնզգույն ավելներով բեռնված, ինքն էլ ետևը՝ ձեռնափայտը մեջքին պահած, մանուկները խմբելով ընդառաջ էին վազում, որ նրանից ավելներ գնեն։

— Իմ մամ երեք հատ սպիտակ ավել ուզեց,— ասում էր մեկը։

— Ինձ չորս հատ կարմիր ավել տուր,— քաղավում էր երկրորդը՝ հևիհև մոտենալով։

— Ա՜ռ։ Իսկ քու մամ ի՞նչ տեսակ ավել ուզեց,— հարցնում էր Թելոն հետևյալին։

— Իմ նանեն երկու հատ խաթուն ավել ուզեց։

— Վերցրո՜ւ,— ասում էր նա, արագ-արագ բաժանելով ավելների գույնզգույն կապոցները։ Ամբողջ իշաբեռը դատարկում էր դեռ Տաշո կամուրջին չհասած, հենց Սաչկի դուրանի վրա և, Հուլունքի հետ պնդիջապես վերադառնում էր Ծիրնկատարի լանջերը՝ նոր ավելներ բերելու։

Շատ հարգի էին մանավանդ խաթուն ավելները։ Դրանք ավելների այն տեսակներն էին, որ պահվում էին տներում որպես զարդարանք և գրեթե շատ քիչ էին մասնակցում «ծանր» գործերին։ Երբ հյուր էր գալիս, նրանով էին թախտը ավլում, սրբում գորգերի փոշին։ Նրանց փոխարեն աշխատում էին հասարակ, կամ այսպես կոչված «ծառա» ավելները, որոնց շրջապատում խաթուն ավելը բազմում էր իբրև հարս խանում՝ ծանրաբարո և գեղեցկորեն պճնված։

Խաթուն ավելների տարբեր տեսակներից Թելոն բաժին էր հանում ոչ միայն քաղաքի, այլև գյուղական բնակիչներին։ Նա գարնանը և ամռանը սարի ավել էր տանում Բռնաշենի գյուղերը, իսկ ուշ աշնանը իր տարած ավելների դիմաց մեկ-երկու իշաբեռ շաղգամ էր հավաքում այդ վայրերից։ Մանավանդ շատ էր սիրում Արինոքի քաղցրահամ շաղգամը, որն օգտագործում էր նաև իբրև դեղ հազի դեմ։ Արինոքում նրան շաղգամ մատակարարողը հիմնականում Աստուրն էր, որի հետ նա շատ սերտ բարեկամություն էր հաստատել։

— Ես բերդակցի ավել ծախող Թելո Մեսրոպն եմ։ Ավե՛լ առեք, ձեր տները մաքրեք և անմահական կյանք վարեք։ Սա ավել

չի, խո՜նկ է, խո՜նկ,— ասում էր Թելոն՝ նոր քաղած ծաղկեփնջերը օդի մեջ թափահարելով, որոնց բաժակներից ցողը թափվում էր գետին։

Հազիվ էր նա մեկ-երկու կապոց ավել վաճառել, երբ մոտը վազեց մի կայտառ մանուկ՝ արտակարգ գեղեցկությամբ։

Դա Հասրաթն էր, Մատնիք Եղիշեի որդին, որ հաճախ ընկերներով գալիս էր Սաչկի դուրանի վրա բոռ խաղալու։

— Քեռի Մեսրոպ, հայրիկն ասաց, որ բոլոր ավելները տանեք Իբլի Մուստաֆայի քարվանսարան։

— Տանե՜մ,— ասաց Թելոն և ավանակին խթանեց դեպի ներքև։

Իբլի Մուստաֆան Մատնիք Եղիշեի բարեկամն էր, որի մոտ աշխատում էին վերջինիս երեք դպրոցական դասընկերները՝ Մուրադը, Համբարձումը և Վաղարշակը։ Լայնաթիկունք, հաստաշուրթ մի թյուրք էր Իբլին, որ համարվում էր քաղաքի ազդեցիկ բնակիչներից մեկը։ Նրա քարվանսարան գտնվում էր Ասլան-Ղափլան խանի կողքին, Ալադին բեյի մզկիթի դիմաց։ Իբլու իջևանը հռչակված էր նրանով, որ այնտեղ գիշերում էին գլխավորապես հասարակ դասակարգի մարդիկ՝ գյուղերից եկած չքավոր շինականները, մանր առևտրականներն ու արհեստավորները։ Այդտեղ մի քանի անգամ գիշերել էր նաև Թելո Մեսրոպը, որ ուշ լինելու պատճառով չէր կարողացել Բերդակ վերադառնալ։

Տաշո կամուրջին մոտենալիս, Թելոն և Հուլունքը խաչակընքում էին, հետո էին անցնում։ Թելոն ընթանում էր առջևից՝ քարշ տալով բարձած ավանակին, իսկ Հուլունքը գնում էր ետևից՝ ոտնամանները թևատակին և ոտքերը քշտած։

Այս անգամ էլ նրանք խաչակնքելով անցան Տաշո կամուրջը և դիմեցին դեպի Մուստաֆայի քարվանսարան։

— Ավելները էստեղ բեր,— այս ու այն կողմից կանչեցին ծանոթ բրուտները, երբ նրանք երևացին այդ թաղում։

— Քարվանսարան եմ տանում,— ասաց Մեսրոպը և հրեց ավանակին։

— Մի մասը մեզ տուր,— բղավեցին բրուտները, ամաններով փակելով ավանակի ճանապարհը։

Թելոն բրուտների հետ ապրանքային պարզ փոխանակությամբ էր զբաղվում։ Չորս կարմիր ավելը փոխանակում էր մի

կավե ճրագի հետ, տասներկու խաթուն ավելը՝ մի մածնի հասարակ կճուճի հետ, քսանվեց ծաղկավելը՝ մեկ ջրի կժի հետ և այլն։

— Առ էս ճրագը և ինձ հինգ հատ սալավել տուր,— գոչեց մի երիտասարդ արհեստավոր ավանակի աջ ականջը բռնելով։ Վազելով եկան նաև ուրիշ բրուտներ՝ իրենց ճոռիկավոր ճրագներով, պնակներով և կճուճներով։

— Վաղը կբերեմ,— ասաց Թելոն և, ավանակի կողերին զարկելով, ճեղքեց բրուտների բազմությունը։ Հուլունքը գնում էր առջևից՝ մի կավե ճրագ և փոքրիկ կուժ ձեռքին։ Ետևից ընթանում էր Թելոն, աշխուժորեն բարևելով ամենքին և ներողություն խնդրելով, որ այդ օրվա ավելները պետք է տանի Իբլի Մուստաֆայի քարվանսարան։

Ո՛րտեղով անցնում էր Թելոն, այնտեղ ամենքը կանգնում դիտում էին այդ հռչակավոր բերդակցուն, որ քայլում էր գավազանը թեք դրությամբ մեջքին պահած և երբեմն-երբեմն ձգում էր խոնջանը, որ անդրավարտիքը վայր չընկնի։ Նրանք հիացմունքով նայում էին գույնզգույն ավելների տակ հանդարտորեն քայլող ավանակին, որ օդը հագեցնում էր լեռնային անուշահոտ ծաղիկների բուրմունքով և ակնապարար գունագեղությամբ։

— Մուստաֆա էֆենդի, իշևանիդ համար ավել եմ բերել,— գոչեց Թելոն և գրաստի քթին զարկեց, որ կանգնի։

—՝Ո՞ր սարիցն է,— հարցրեց Իբլին՝ իր մարդկանց հետ դուրս գալով իշևանից։

— Ծիրնկատարի։ Վերջին ավելներն եմ ծախում, էֆենդի,— ասաց Թելոն իշաբեռը դատարկելով։

— Ինչո՞ւ։

— Վաղվանից ավանակս տալիս եմ Փղորկվա Կարոյին։

— Քա ախպեր Մուստաֆա, էս իմ մարդս բոլորովին գժվել է,— մեջ ընկավ Հուլունքը։

— Ինչո՞ւ է գժվել։

— Ուզում է մեր գրաստը Փղորկվա Կարոյին տալ։

— Որ պայման է կապել, պետք է տա։ Պատիվն ավելի բարձր է, քան թե ավանակը,— հաստատեց Մուստաֆան։

— Կնի՞կ, ես ծանրապճեղ մարդ եմ։ Ավելի լավ է ավելները

Միրնկատարից շալակով տուն բերեմ, բայց անունս բարձր լինի, քան թե պատվազուրկ լինեմ ու առջևս էշ լինի։

Սակայն Հուլունքն անդրդվելի էր։ Նա ոտքը բարկությամբ խփեց գետին.

— Գնա քեզ համար էշ գտիր, տուր Փղորկվա Կարոյին, ես իմ Մառնիկա էշը ոչ ոքի չեմ տա։

— Ա՜խ, Շմլակա շուն, դու իմ հոգին վառեցիր։ Կանաչ մեռոն, ինչպես տեսնում եմ, իմ բեղը քեզ համար ոչ մի արժողություն չունի։

Վաղարշակը, Համբարձումը և Մուրադը ավելները քարվանսարա տարան։ Թելոն ճրագը և կուժը տեղավորեց թեռի մեջ և պատրաստվեց մեկնելու, երբ նրա մոտ վազեցին երկու բարակադեմ քիսաչի՝ բաղանիքի հանդերձով։

— Չղջիկների բաղնիքի համար ավել է հարկավոր,— ասաց առաջինը։

— Կնիկդ ամեն անգամ մեզ մոտ է լողանում, իսկ դու բոլորովին աչքաթող ես արել մեր բաղնիքի մաքրության գործը,— գանգատվեց երկրորդը։

— Ավել չկա,— պատասխանեց գյուղացին։

— Գոնե վաղը բերեք,— թախանձեցին քիսաչիները միաբերան։

— Աչքիս վրա,— ասաց Թելոն և ավանակի գլուխը շուռ տվեց դեպի Բերդակ։

ԱՐԵՎԻ ԽԱՎԱՐՈՒՄԸ

Հետևյալ օրը, օգոստոսի ութին, Միրնկատարից վերադառնալով, Թելոն ավելների մի մասը տվեց քաղաքի բրուտներին, իսկ մյուս մասը տարավ Ջորաթաղ և վաճառեց Չղջիկների բաղանիքին։

Հին էր այդ բաղանիքը։ Վերջին տարիներում այնքան էր խարխլվել, որ ավերականոցի տպավորություն էր գործում։ Չղջիկները բույն էին դրել նրա քիվերի տակ։ Այնքան շատ էին, որ մանուկները ցերեկով գնում էին այնտեղ չղջիկ բռնելու։

Մի ժամանակ, երբ այդ բաղանիքը շեն էր և բարեկարգ, այնտեղ լողանում էին քաղաքի մեծավորները և ազնվական դասի մարդիկ։ Իսկ այժմ այնտեղից օգտվում էին միայն մանր արհեստա-

վորները և այն գյուղացիները, որ երթևեկում էին քաղաք։ Երբեմն-երբեմն այդ բաղնեանից օգտվում էր նաև Հուլունքը։ Մեկ-երկու ավել էր տալիս բաղնեպանին և մտնում էր այնտեղ լողանալու։

Ավելները բաղանիքին հանձնելուց հետո Թելոն ավանակով շուկա գնաց, որ տան համար գնումներ կատարի, իսկ Հուլունքը մտավ բաղանիք։ Այնտեղ մի քանի հայ կանայք էին լողանում։ Այնտեղ էր նաև քաղաքի Բերդի թաղի մոլլայի կինը։ Հաղիվ էր Հուլունքն իր մեջքի սպիտակ փրփուրները մաքրել, երբ հանկարծ արագորեն հագնվեց, լողարանից դուրս եկավ և շուկա գնալով գտավ ամուսնուն։

— Բաղնիքդ անո՞ւշ,— գոչեց Թելո Մեսրոպը՝ հեռվից։

— Անուշով մնաս,— ասաց Հուլունքը և մոտենալով նրա ականջին ասաց.

— Քու մեկ միլիոն զորքի ժամանակը հասավ։

— Ի՞նչ պատահեց, այ կնիկ, ինչո՞ւ շուտ էլար բաղնիքից։ Չլինի՞ թե գիշերահավուկները քեզ կծեցին։— Այդ միջոցին մի փոքրիկ շղջիկ դուրս թռավ Հուլունքի թևնոցից և գնաց կպավ Թելոյի քթին։

— Վա՜խկ, ինչ զզվելի բան է։ Ափսոս չե՞ն մեր Մեղրագետն ու Ծծմակա Քթի առուն։ Քանի անգամ քեզ ասել եմ էլ էդ բաղնիքը չերթաս,— նեղացավ Թելոն և դեմքը մաքրեց։

— Քա սպասիր, բան ասեմ, ականջդ մոտ բեր։

— Ի՞նչ կա։

— Պատերազմ է լինելու։

— Ո՞վ ասաց։

— Մոլլի կնիկը։ Մարդու չասե՞ս,— զգուշացրեց կինը ձեռքով նրա բերանը փակելով։

— Դու մոլլի կնկան ո՞րտեղ տեսար։

— Բաղնիքում։

— Բայց ո՞ւմ միջև,— բերանը կնոջ ձեռքից մի կերպ ազատելով հարցրեց Թելոն։

— Ռուսի և օսմանցու միջև։— Մոլլի կնիկը,— շարունակեց Հուլունքը,— սապոն քսեց մեջքիս և ականջիս ասաց, թե էնպիսի մի կռիվ է լինելու, որ մերը մանուկին կուրանա։ Ես քիչ կասեմ, դու շատ հասկացիր։ Սո՜ւս, մարդու չասես,— դարձյալ զգուշացրեց Հուլունքը և նորից ձեռքը սեղմեց ամուսնու բերանին։

Եվ ճիշտ այն պահին, երբ Մեսրոպը դեռ լրիվ չէր հասկացել այդ խոսքերի իմաստը, արևը հանկարծ խավարեց։ Ստվերները երկարեցին, շները սկսեցին անսովոր հաչել քաղաքի փողոցներում։ Աքաղաղներն ու հավերը կանչեցին։ Պայծառ ցերեկը փոխվեց կատարյալ գիշերի։ Երկնքում աստղեր երևացին, և օդը ցրտեց։

— Դու ճիշտ ես, Հուլունք, էս բոլորը արունքի նշան է,— ասաց Թելոն արևի սևացած սկավառակին ապշությամբ նայելով։ Ավանակը, որ մինչև այդ լուռ էր, սկսեց զռալ։ Նրա ականջները տարօրինակ կերպով երկար թվացին Թելոյին։

— Աշխարհը պիտի կործանվի,— ասաց Մեսրոպը և առաջին անգամ իր կյանքում մի ահավոր սարսուռ զգաց։

«Մոսկով գե՛լդի»,— թնդաց սպառնագին մի կանչ ետևում։ Այդ թյուրք սպաներն էին, որ շուկա մտնելով շտապ հավաքում էին այնտեղ թափառող ասկյարներին։

Թելո Մեսրոպը և իր կինը ինքնաբերաբար շարժվեցին դեպի Զղջիկների բաղանիքը, մոլլայի կնոջը տեսնելու հույսով, բայց նա արդեն տուն էր գնացել։ Բաղանիքի քիվերից դուրս էին թափվել հարյուրավոր շղջիկներ և պտտվում էին նրա գմբեթի շուրջը։ Մի քանիսը բախվեցին Հուլունքի ճակատին, սավառնեցին Թելոյի կապույտ անդրավարտիքի շուրջը և, նրա բեղերին քսվելով, սլացան դեպի աստղազարդ երկինք։

Քաղաքի եկեղեցիների զանգերը տագնապալի զողանջեցին։ Նախ զողանջեց Սև ավետարանը, ապա հնչեցին Շեկ ավետարանը, ս. Մարինեն և ս. Կիրակոսը։ Քաղաքի քրիստոնյա բնակիչները խմբերով լցվեցին վանքերի մեջ։

Թելո Մեսրոպը իր կնոջ հետ Զղջիկների բաղանիքից շտապեց դեպի Խաչփողան։ Սև ավետարան եկեղեցին լեփ-լեցուն էր աղոթողների բազմությամբ։ Մոմերը և ջահերը վառվում էին։ Քահանան, շուրջառը հագած, քարոզ էր կարդում բեմից։

Ավանակը թողնելով շեմքին, Թելոն և Հուլունքը մի կերպ ներս խցկվեցին։

Դրսում հրաձգության ձայներ լսվեցին։ Դրանք քրդեր և թյուրքեր էին, որ հրացաններով և ատրճանակներով կրակում էին շեյթանի վրա, որը, ինչպես իրենք համոզված էին, բռնել էր արևի զունը։ Կրակոցը լսվում էր գլխավորապես Արջգլորի վրայից և Սաչկի դուրանի կողմից։

— Կնիկ, մութ է, թյուրքերը կրակում են արևի վրա, մեր էշը կարող է խրտնել,— ասաց Թելոն և, խաչակնքելով, Հուլունքի հետ դուրս եկավ եկեղեցուց։

Ավանակը չէր երևում։

— Մեր գրաստը կորավ, կնի՜կ,— բացագանչեց Թելոն և սկսեց վազել Խաչփողանով։

Ձորի միջից մի երկար խառանչ լսվեց։

— Մեր էշն է, շուտ հասիր ետևից, թե չէ Տաշո կամուրջից ցած կգլորվի,— բղավեց Հուլունքը և ամբողջ ուժով վազեց դեպի Ձորաթաղ։ Ջղջիկների բաղանիքի մոտ նրանք գտան իրենց գրաստը և մութով ճանապարհ ընկան դեպի գյուղ։ Շտապում էին իմանալու, թե ինչ է կատարվում իրենց տանը։ Սաչկի դուրանին հասնելիս, նրանք ետ դարձան և նայեցին քաղաքին։ Մուշը ընկղմված էր խավարի մեջ։ Եկեղեցիների դռներից երևում էր վառված կանթեղների լուսավորությունը։

Հնձի եռուն ժամանակն էր։ Աստղալույսի միջով Թելոն տեսնում էր, թե ի՛նչպես հնձվորները դաշտերում, բարդոցների մոտ կանգնած, տագնապահար նայում էին երկնքին։ Ոմանք գերանդիներն ուսերին շտապում էին դեպի մոտիկ գյուղերը։

Սաչկի դուրանով Բերդակ էին գնում Հուլունքն ու Թելոն։ Վերջինս քթի տակ դանդաղ ասում էր մի հայտնի երգ, որ շատ տարածված էր այդ տարիներին.

Ով որ քաջ է, ի՞նչ կսպասէ,
Արդեն ժամանակն է՝ թող գա։
Մահ, պատերազմի օրհաս է,
Ով որ անվախ քաջ է, թող գա։

Կամ կովենք, մեռնենք, վերջանանք,
Կամ զենքով փրկություն ստանանք,
Կովելով փրկենք Հայաստան,
Աղնիվ մտածողը թող գա։

Այս հինգ դար է մեզ կսպանեն,
Բռնի կրոնքե կը հանեն,
Մեր կին, աղջիկներ կտանեն,
Պատիվ ունեցողը թող գա՛։

Վերջապես մենք ունենք կռիվ,
Ձենքով պիտ մաքրենք մեր հաշիվ,
Մեր հայրենյաց փառք ու պատիվ—
Սերոբին սիրողը թող գա։

Հազիվ էր Թելոն ավարտել իր երգը, երբ դիմացից բոլորովին անսպասելի, հայտնվեց Թալիպ էֆենդին, մի քանի թյուրք ոստիկանների հետ։ Նրանց հրացանների փողերից թեթև ծուխ էր ելնում։ Հավանորեն նոր էին պարպել վերջին փամփուշտները արևի վրա։

— Կանգնի՛ր,— գոչեց ոստիկանապետը, հրացանը դեմ տալով Թելոյի փորին։

Մեսրոպը և Հուլունքը կանգ առան։ Ավանակը նույնպես։

— Ո՞ւր եք գնում։

— Բերդակ,— պատասխանեց Թելոն։

— Էշով ի՞նչ էիք տարել քաղաք։

— Սարի ավել։

— Ա՜, այդ դո՞ւ ես, որ ավելի վաճառքով ես զբաղված։ Վերջապես գտա քեզ։

— Ափսոս, որ խավարի մեջ ես տեսնում ինձ, էֆենդի, լավ բանի նշան չէ,— կատակեց Թելոն։

— Վաղվանից էլ սար չես գնա։

— Ինչո՞ւ, էֆենդի։

— Պատերազմ է։

— Ո՞վ ո՞ւմ դեմ է կռվում, էֆենդի։

— Ես ու դու պիտի կռվենք Մոսկովի դեմ։ Մեծ արյուն է թափվելու։ Անմիջապես պետք է մեկնես։ Չլինի՞ թե ուզում ես, որ Դևեր փաշան հաղթվի։

— Փաշան ո՞ւրտեղ է։

— Սարիղամիշ։ Շուտով մենք հարձակվելու ենք Անդրկովկասի վրա, իսկ ենտեղից էլ բարձրանալու ենք մինչև Մոսկով։

— Ոտքո՞վ,— զարմացած հարցրեց Թելոն։

— Ինչո՞ւ, դու քայլել չգիտե՞ս։

— Քայլել կարող եմ։ Բայց թույլ կտա՞ն, որ մենք ոտքով հասնենք մինչև Մոսկով։

— Ովքե՞ր։

— Ռուսները։

— Եթե բոլորս քաջաբար կռվենք, Մոսկովից էլ ավելի հեռու կերթանք։ Մենք կհասնենք մինչև իրենց թագավորի նստած տեղը և նրա քյոշքի մեջ շաշլիկ կուտենք։

— Լավ ախորժակ ունես, էֆենդի։ Դա էլ կլինի հազար ու մեկ գիշերվա վերջին հեքիաթը,— բարձրաձայն ծիծաղեց բերդակցին։

— Ի՞նչ է, չե՞ս հավատում, դյավուր, որ ծիծաղում ես։ Տեսնո՞ւմ ես արևն ինչպես խավարեց։

— Բոլորովին բռնվեց,— դեպի երկինք նայելով ասաց Թելոն։— Մութի պատճառով իմ էշը քիչ մնաց Տաշո կամուրջից ցած գլորվեր։

— Մի հատ էլ դու արձակիր, թող շեյթանը հեռանա։

— Տուր տեսնեմ, էֆենդի,— ասաց Թելոն և հրացանը համարձակորեն վերցնելով, կրակեց դեպի արևը։

— Լավ ես արձակում։ Ինչպես երևում է, հրացան բռնել գիտես։

— Ամեն տղամարդ պետք է կրակել գիտենա, էֆենդի։ Էս սուրբ գերեզմանը վկա, մենք և Երիտասարդ թյուրքերը միասին ենք կռվել օսմանյան բռնակալության դեմ։

— Էդ ո՞ւմ գերեզմանն է։

— Գևորգ Չաուշի։

— Դուք դեռ հիշո՞ւմ եք նրան։

— Քանի դեռ կա մի հայրենասեր հայ և ազնիվ քուրդ աշխարհի երեսին, նա պարտավոր է հիշել նրա անունը։ Թյուրքերն էլ պետք է հիշեն նրան, որովհետև նա կռվում էր թե՛ հայ, թե՛ քուրդ և թե՛ թյուրք բռնակալների դեմ։

— Հիմա գո՞հ ես քո վիճակից։

— Իմ վիճակի մեջ փոփոխություն չկա, էֆենդի։ Էլի էս ժանգառի թոմբանն է հագիս։ Ես սահմանադրությունից առաջ էլ ավել էի ծախում, հիմա էլ։

— Ինչո՞վ ես ապրում։

— Շաղգամով։ Ավելը տալիս եմ բռնաշենցոց և նրանցից շաղգամ բերելով պահում եմ իմ գերդաստանը։

— Ուրեմն ավել քաղելով հնարավո՞ր է ընտանիք պահել։

— Ինչո՞ւ չէ։ Ամեն մարդ իր չափով է ապրում։ Թույլ տուր վերջին ավելները բերեմ, նոր ինձ պատերազմ տար։ Երեխաներս

մերկ են, էֆենդի։ Եվ վերջապես ի՞նչ վատ գործով եմ զբաղված. իմ աշխատանքով նպաստում եմ քաղաքի և գյուղի մաքրությանը։

— Քանի՞ որդի ունես։

— Չորս։

— Հայրենիքն է թանկ, թե՞ որդին։

— Իհարկե հայրենիքը։

— Դե ուրեմն ավանակդ տուր կնոջդ, իսկ ինքդ ետ դարձիր։

— Որ հրամայում ես՝ կդառնամ։

— Ո՞րն է ձեր գյուղը։

— Մեր գյուղն է Բերդակ, Ծծմակա Քթի տակ։

— Ձեր գյուղում մի մարդ կա, որ տեսել է սատանային։ Ճանաչու՞մ ես նրան։

— Էդ մարդը ես եմ, էֆենդի։

— Իսկապե՞ս։

— Կանաչ մեռոն։

— Ի՞նչ երևույթ ուներ։

— Աքլորի։

— Բռնեցի՞ր։

— Գրկեցի, որ տուն տանեմ, ճանապարհին գրկիցս փախավ,— պատասխանեց Թելոն։

— Ես հավատում եմ, որ դա սատանան է եղել։ Նրանք անմեղ արարածների կերպարանք են առնում, որ մարդկանց մոլորեցնեն։

— Բայց հիմա սատանաները շատացել են, էֆենդի։ Եթե առաջ նրանք ուլի կամ աքլորի կերպարանք էին ընդունում, հիմա մարդու կերպարանքով են երևում մարդկանց։ Իսկ էս արևի խավարումից հետո սատանաներն ավելի կշատանան։

— Չլինի՞ թե ինձ սատանա ես կարծում։

— Քավ լիցի, էֆենդի։ Դու Թալիպ էֆենդին ես, մեր գավառի ընդհանուր ոստիկանապետը։

— Որ ես Թալիպ էֆենդին եմ, ուրեմն՝ գնանք։

— Ո՞ւր եք տանում ինձ։

— Չորանոց։

Թյուրքական ոստիկանների հսկողությամբ նույն պահին Թելո Մեսրոպը հրաժեշտ տվեց կնոջը և Սաչկի դուրանից ընթացավ դեպի Մուշ։

Հուլունքն ամուսնու գավազանը ձեռքին, ավանակի ետևն ընկած, մութի միջով տխուր-տրտում մեկնեց Բերդակ։

Այս ու այն կողմից լսվում էին նորանոր կրակոցներ։ Քիչ հետո արևի ծիրը սկսեց բացվել և ընդհատված ցերեկը պայծառորեն շողաց։

Թալիպ էֆենդին Թելո Մեսրոպին փոխանակ զորանոց տանելու, տարավ քաղաքային բանտ, որ գտնվում էր Բերդի թաղի ետևում։

Մեկ շաբաթ հետո Մեսրոպին բանտից հանելով միացրին հայ շինականների մի մեծ խմբի հետ, որ հավաքել էին Մշո դաշտի և Խութ-Բոնաշենի գյուղերից։

Այնտեղ էին Խոդեդանը, Օնեն և ատաղձագործ Հակոբը։ Այնտեղ էր նաև Փղորկվա Կարոն, որ իր ծոցում խնամքով պահում էր Թելո Մեսրոպի հռչակավոր բեղի մի կտորը։

ՏԱՌԱՊԱՆՔԻ ՕՐԵՐ

1914 թվականի դեկտեմբերին, Սարիղամիշի մոտ, ռուսական զորքերը գլխովին ջախջախեցին Դևեր փաշայի բանակը, որով նա մտադիր էր հարձակվել Անդրկովկասի վրա և գրավել այն։

Պատերազմի և ձմեռային սառնամանիքների այդ ծանր օրերին, հայ շինականները գրաստների պես տնքում էին ռազմական ճանապարհների վրա։ Նրանք Մուշից և զանազան վայրերից շալակով ալյուր, ձավար և այլ պարեն էին փոխադրում դեպի Հասան-Ղալա։

Ասատուրը, Օնեն և ատաղձագործ Հակոբը չորս ամիս աշխատելով վերադարձել էին տուն, իսկ Պնտխցի Մանուկը, Շինական Պողոսը և Երկրագործ Մարտոն, որ ուշ էին հավաքագրվել՝ դեռևս տնքում էին ծանր բեռների տակ։

Թելո Մեսրոպի և Փղորկվա Կարոյի ժամկետը երկարաձգել էին, որովհետև նրանք փորձ էին արել փախչելու Գոմսա Մելիքի մոտ։ Բացի այդ, բացարձակ հայտարարել էին, թե թյուրքերը այդ պատերազմում կհաղթվեն։

Առջևից գնում էր Պնտխցի Մանուկը ալյուրի մի ահագին պարկ շալակին։ Նրա ետևից ընթանում էին Շինական Պողոսը և

Երկրագործ Մարտոն՝ բրնձի հակերի տակ տնքալով։ Ետևից կրունկակոխ գալիս էին Թարգմանչաց վանքի երկու հռչակավոր փահլեվանները՝ Թելո Մեսրոպն ու Փղորկվա Կարոն, աղի ծանր բեռները շալակած։

Ձյունը այնքան խոր էր, որ նրանց գլուխները հազիվ էին երևում նրա միջից։ Քայլում էին ու քթի տակ երգում.

— Վերան դառնար Հասան-Ղալեն,
Մեռներ Դևեր փաշի բալեն։

Մեսրոպի բեղի երկու ծայրերը պաղլուվակների ծանրությունից հավասարվել էին և կախվել ներքև։ Ետևից մեկ-մեկ լսվում էր, թե ի՛նչպես Փղորկվա Կարոն վիճում էր Թելո Մեսրոպի հետ ավանակի վերաբերյալ։ Նա նույնպես մեկ-երկու անգամ ծոցից հանելով Պնտխցի Մանուկին, Շինական Պողոսին և Երկրագործ Մարտոյին էր ցույց տվել Թելոյի բեղի մազափունջը։

— Դարդ մի՛ արա, Կարո ջան, ի՛նչ գնով էլ լինի, ես քու էշը կտամ։ Հենց էս գարնանը կտամ,— հուսադրում էր բերդակցին, մտքում անիծելով կնոջը, որ արատավորել էր իր պատիվը մի ավանակի պատճառով։

Ճանապարհին փոստն եկավ։

Հուլունքը նամակ էր ուղարկել Մեսրոպին։ Թելոն իր շալակը հենեց ձյունի հաստ շերտին և բաց արավ կնոջ նամակը։ Պնտխցի Մանուկը, Շինական Պողոսը, Երկրագործ Մարտոն և Փղորկվա Կարոն շրջապատեցին նրան, առանց շալակները իջեցնելու։

«Քու գնալուց հետո, հոգյակ իմ Թելո,— գրում էր Հուլունքը,— ճոկանդ ձեռքիս, ավանակն առաջիս գնացի Բերդակ։ Գյուղին չհասած, էն սև խուփը գլորվեց արևի վրայից ու նրա երկնային լույսը եռման կաթի պես երեսիս ցիսաց։ Ճժերն իմ առեջ եկան ու տեսնելով քու ձեռնափայտը ձեռքիս — մամո, ո՞ւր է մեր պապն,— հեռվից խժացին։— Ձեր պապոյին պատերազմ տարան,— ասացի ես ու, երեխոցը իմ շուրջը քոմած, մեր էշի հետ ուշաթափ ընկա տուն։

Երբ ամեն եկավ, մի քանի համիդիե ձիավոր ու թուրք զավթիա եկան Բերդակ, մտան բոլորիս տներ ու ինչ կար-չկար՝ թալանեցին տարան։ Մեր գեղացոց լծկանը տարան։ Եվ նմանապես մեր ավանակը տարան։ Շատերի հորերը բաց արին ու հացը տարան։ Ճիշտն ասած, մեր ավանակի համար սիրտս շատ ցավեց։ Իզուր չտվեցինք Փղորկվա Կարոյին։ Նրա մոտից էլ կտանեին, բայց գոնյա մեր խիղճը հանգիստ կլիներ։ Առաքելոց վանքի բակում դու բոլոր ժողովրդի առաջ տղամարդու խոսք տվիր նրան, պոկելով ու նրան հանձնելով քու պատվական բեղի մազափունջը։ Ես շատ սխալվեցի, որ հակառեցի քեզ ու խոս-

տումդ թողեցի անկատար։ Ո՛վ իմանա, Փղորկվա Կարոն հիմա երեսովդ է տալիս, որ իրեն խաբել ես։ Երևի շատերին էլ ցույց է տալիս քու թանկագին բեղի կտորը։ Հիմա՞րս, ինչպես սխալվեցի։ Մի էշն ի՞նչ է, որ հավասարվի տղամարդու բեղին։

Էնքան էլ ձյուն է եկել էս տարի։ Մի շաբաթ առաջ էս ձյուն-ձմեռնոցով Բերդակից գնացի Արինոք, որ Խոդեդանից մի լուր առնեմ քու որպիսության մասին։ Եղա նմանապես և ս. Աղբերիկի վանքում և չոքեչոք գնալով յոթ մոմ վառեցի աշխարհի խաղաղության համար։ Ջմոռանամ ասելու, որ իսկապես վանքի լուսարար Կաթմոսը խլացել է Ասվատուրի բոռալուց և հիվանդ պառկած է։ Որ քեզ ասում էի, թե սասունցիք ծուռ են՝ չէիր հավատում։ Դևտումը փակ էր, սատանաներին չկարողացա տեսնել։

Հանդամանքից օգտվելով ս. Աղբերիկում ֆալ բաց արի քեզ վրա։ Կլկը վարդապետն ասաց, որ քու առաջ երկու մեծ փորձանք կա, եթե էդ փորձանքներից անցնես, կապրես մինչև օր-ծերության։ Իմ կարճ խելքով էդ երկու փորձանքներից մեկն էն է, որ քեզ պատերազմ տարան, Թելո ջան։ Եվ նմանապես իմացա քու մեռնելու տարին։ Քու մահվան տարին Տանուտերը Կարիճն է լինելու։

Չգիտեմ թե ե՞րբ պիտի գարունը բացվի, որ տուն դաս ու միասին երթանք Ծիրնկատար ավել քաղելու, որ մեր ապրուստը հոգանք։ Մեր տունը դատարկ է, ճժեր կվժան անոթի։ Աշնանը մի իշաբեռ շաղգամ էի բերել Արինոքից, դեռ էն շաղգամն ենք ուտում։ Հագնելիք էլ չկա. էրեխոց պորտ ու ճուճ բաց է։

Համիդիե ձիավորներ ու թուրք զավթեք ամեն օր ղշերի պես կֆռռան մեր գյուղերի մեջ։ Մի՞տքդ է, ասում էիր թող Նիկոլ թագավորը ինձ մեկ միլիոն մարդ տա, ես երկու օրվա մեջ մեր հողերը մաքրեմ օսմանցիներից։ Վա՛յ թե հիմա նրանք մեզ մաքրեն մեր հողերից։ Ժողովրդի մոտ մի հատ կոտրած զենք էլ չկա, որ վաղը, մյուս օր եթե մի պտպտոց լինի, գոնյա մեր տները պաշտպանենք։

Աստված տա պատերազմը շուտ վերջանա ու բոլոր դարիբ-դուրբաթները իրենց տները դառնան։ Թե Փղորկվա Կարոն մոտդ է, շատ բարև արա իրեն։ Թե ողջ մնացինք, նրա ավանակի տակին չենք մնա ու քու բեղի պատիվը կփրկենք։ Ամե՛ն։

Ազիզ Թելո ջան, ամեն անգամ քնելիս քու ճոկանը պառկեցնում եմ կողքիս։ Երեկ, թոնիրը բոցելու ժամանակ, մեր տանիքը կաթաց։ Մտա մարագ որ թիակն առնեմ ելնեմ երդիս։ Պատի տակով անցնելիս, տեսա մեր կարմիր աքլորին հավերի մեջ։ Իմ միտքն ընկար դու։— Ախ հավե՞ր, հավե՞ր,— ասացի,— դուք ճետի առեջ կտպշվեք, ապա ես վի՞ր առեջ տպշվիմ։

Տնով ու տեղով, դուռ ու դրկիցով նայում ենք ճամփիդ։ Լուսնյակի լույսով, արևի շողով մի լուր հասցրու։

Քու կարոտյալ Հուլունք։
Մշո դաշտ, Բերդակ գյուղ։

Այս դառը բաների մասին գրված նամակը, որ համեմված էր զվարճալի տողերով, ծանր վիշտ պատճառեց ամենքին։ Թելո Մեսրոպն իր բեռը իջեցրեց և հետևյալ պատասխան-նամակը պատրաստելով, հանձնեց փոստին։

«Հոդյակ իմ Հուլունք, ստացա թանկագին նամակդ և կարդացի ձյունների մեջ։ Եվ դարձյալ ավանակի մասին. թե ողջ մնացի, ես Փղորկվա Կարոյին մի էշ կտամ՝ քուռակն էլ վրեն։

Թե դարուն բացվեց ու ես տուն չեկա, դու գնա Թարգմանչաց վանքի կողմերը և ավել քաղիր։ Ես ճանապարհին մի քանի տեղով նշան եմ արել։ Էնտեղ շատ սիրուն ավելներ են բուսնում։ Էդ էն տեղն է, որ ես ու դու առաջին անգամ իրար ավելներով տփեցինք (ծեծեցինք)։ Իսկ եթե Թարգմանչաց վանքից դեպի Աստղաբերդ գնաս, ձախ կողմիդ վրա կաքավների ձեն կլսես։ Էդ ձենը բռնած որ երթաս, կհասնես Վարդի բլերին։ Վարդի բլերի մոտ մի սիրուն պուրակ կբացվի քու առաջ։ Էդ պուրակը լիքն է խնկահոտ ծաղիկներով։ Բոլոր ավելները քաղիր ու շալակով տար Մուշ։ Մի մասն էլ երեխոց շալակին տուր։ Զգո՞ւշ քելեք, որ Տաշո կամրջից ցած չգլորվեք։ Մեկ-երկու շալակ Մոստաֆայի քարվանսարան տար։ Կտաս առաջին քաղից։ Եվ նմանապես չմոռանամ ասելու, չորս կարմիր ավել կտանես Բրուտի թաղ, կառնես մի ճրագ ու կուղարկես Փղորկվա Կարոյի կնկան։ Կարոն ասում է, որ իրենց տունը մութի մեջ է։ Եթե մեր տան ճրագը կոտրվել է, մի հատ էլ մեզ համար առ։ Եվ նմանապես մի խնդիրք էլ ունեմ։ Վեց հատ խաթուն ավել կտանես Պնտիներ ու կտաս Պնտիցի Մանուկի գերդաստանին։ Ես նրանց պարտք եմ մնացել։ Մի հատ էլ ավելի տուր, որ հոգուս վրա մեղք չլինի։ Թող աշխարք մեզ պարտք մնա, մենք աշխարքին պարտ չմնանք։ Հուլո ջան։ Թե կարող ես Արինոքի ու Դաշտադեմի կողմերն էլ գնա։ Սասունցիք շատ մաքրասեր են և ավելների կարիք կունենան։ Խոդեդանին ասա, թող եկող տարվա համար շաղգամ շատ ցանի, որ աշնանը մեկ-երկու շալակ բերես Արինոքից ու իմ ձագուկներին պահես, մինչև տեսնենք ի՞նչ դուռ կբացվի աշխարհին։

Հուլո ջան, դու անցյալ տարի գնացիր բաղնիք ու իմացար, որ պատերազմ է լինելու։ Քու խոսքը ճիշտ դուրս եկավ։ Նորից գնա Ջղչիկների բաղնիք և իմացիր, թե պատերազմը ե՞րբ պիտի վերջանա։ Եթե մոլլի կնիկը էնտեղ չլինի, հայրաթ մեկ ուրիշ կնիկ կլինի բաղնիքում։ Շորերդ լավ պլուկիր, որ չղչիկները չմտնեն թենոցներիդ մեջ։ Ճիշտ է, թագավորի կնիկ չես, բայց քեզ թագավորի կնկա պես քիբար պահիր։ Մի՞տքդ է էն հրեղեն առավոտը, որ պատմիչի գերեզմանի վրա քեզ առաջին անգամ պագեցի։ Ա՜խ, Հուլո ջան, տարին էն տարին էր, որ առար զիս, ջուխտակ խարուկն էր ոտքիս։ Իմ արախչին ծակ էր, իմ մազերը սրեր էր դուրս, կփիլեր բողի բուլուղի պես։

Շատ լավ ես արել, որ ս. Աղբերիկում ճրագ ես վառել աշխարքի խաղաղության համար։ Դու իմ մասին մի՛ մտածիր, ազիզ, ես բոլոր փորձանքների միջից կանցնեմ ու կգամ տուն։ Քանի կարող ես՝ քու ուշք մեր ճժերու վրա պահիր։ Իմ կողմից պագիր երեխոց թշերը։

Քու զարիբ-զուրբաթ Թելո Մեսրոպ։

Գրված ձյունների մեջ, Սուլուխի կամուրջի մոտ, 1915 թվի հունվարի 15-ին»։

Շաչեց թյուրք հսկիչի մտրակը և նրանք ընկան ճանապարհ՝ բեռների տակ տնքալով։

Տեսնելով, որ թյուրքերը, իրենց բացակայությունից օգտվելով, սկսել են թալանել հայկական գյուղերը, Թելո Մեսրոպը և Փղորկվա Կարոն վճռեցին անպայման փախչել Գոմսա Մելիքի և Զուլումաթ Սմբատի մոտ։ Նրանք արդեն մի քանի անգամ իրենց պարկերը մինչև ռազմաճակատ հասցնելը դատարկել էին ճանապարհին և դատարկ պարկերն էին հանձնել պահեստ։ «Մենք սրանց հավատարիմ ծառայենք, իսկ իրենք էսպիսի տարբերություն դնե՞ն մեր և իրենց մեջ, սրանք սուլթան Համիդից էլ վատ են»,— գանգատվում էր Թելոն։

Այդպես անցնում էին օրեր, շաբաթներ, ամիսներ։

Ինչպես էլ լիներ, այնուամենայնիվ, ամենքն էլ մի երջանիկ մտածում ունեին, որ շուտով պատերազմը կավարտվի և իրենք տուն կվերադառնան։ Նրանք հաստատապես համոզված էին, որ զոհեր կլինեն, ինչպես եղել են բոլոր մեծ ու փոքր պատերազմների ժամանակ, բայց այս անգամ հայերը անպայման անկախություն կստանան։ Ոչ ոքի մտքով չէր անցնում, թե ինչ դիվային ծրագիր էր հյուսված հայության բախտի դեմ։

Երկրագործ Մարտոն, Շինական Պողոսը և Պնտխցի Մանուկը ծրագրում էին միասին անցկացնել 1915 թվականի Վարդավառի կիրակին, որովհետև դրանից մեկ ու կես ամիս առաջ նրանց զինվորական ծառայության ժամկետը ավարտվելու էր և նրանք միասին վերադառնալու էին տուն։ Շտապում էին գոնե հասնելու 1915 թվականի վարուցանքին։ Շինական Պողոսը երազում էր գոնե մեկ անգամ էլ գոգնոցը կապել և սերմանել Մուշի դաշտը՝ սքանչելի Տարոնը։

— Առաջ կգաս իմ գութնվար մեծ արտը շաղելու,— ասում էր Մարտոն։

— Առաջ քոնը կցանեմ, հետո Պնտխցի Մանուկի ճղլակ արտը, ապա կգնամ Բերդակի ու Ալվառինջի կողմերը,— ասում էր Պողոսը՝ երանության ժպիտը դեմքին։

ՎԱՐԴԱՎԱՌԻ ԿԻՐԱԿԻՆ

Ասատուրի և Բայազի երեխաները մեծանում էին։ Հեղինեն արդեն տասներկու տարեկան էր, իսկ վերջնակը՝ Դավիթը, նոր էր մտել երեքի մեջ։

1915 թվի Վարդավառից մի շաբաթ առաջ Բայազն իր երեք զավակներին ուղարկել էր Քրդագոմ՝ հորանց տուն։ Նրանց տարել էր Հեղինեն մի ավանակի դրած։ Հեղինեն վերադարձել էր Արինոք, իսկ Լևոնը, Աշխենը և Դավիթը մնացել էին տատիկի մոտ։

Բայազի զավակները թեև փոքր էին, բայց մայրն ուզում էր, որ նրանք Վարդավառի հրաշալի օրերը անցկացնեն Քրդագոմում, իրենց ջոջոյի մոտ։ Այդ ամիսներին հասունանում էին նաև Դաշտի քաղցրահամ ձմերուկներն ու անուշահոտ սեխերը, որոնք հրուշակված էին ամեն տեղ։

Տարոնի շինականը շտեսնված շքեղությամբ էր տոնում Վարդավառը։ Այդ օրը գյուղացիներն իրենց տները զարդարում էին ծառերի թարմ ճյուղերով։ Եփում էին իրենց ամենահամեղ կերակուրները, թխում էին գաթա։ Ավելի ունևորները մորթում էին վարդևան կոչվող եզները, որ հատկապես պահվում էին այդ օրվա համար։ Երիտասարդները հագնում էին իրենց տոնական ամենաթանկ զգեստները և տոնախմբության էին ելնում Մեղրագետի ափերին։ Նրանք աղավնիներ էին թռցնում, ջուր էին սրսկում միմյանց վրա։ Աղջիկների և տղաների սիրահար խմբերը ջոկ-ջոկ երազում էին Սև սարի և Քանասարի ծաղկազարդ բարձունքներին։

Մանիշակը տոնից երկու օր առաջ կարմիր շապիկներ էր կարել իր թոռների համար, իսկ Ալվառինջու հարսը մի սիրուն արախչի էր դրել Դավթի գլխին։ Ոտքերին հագցրել էր նախշուն գուլպա։

Հագել է կարմիր բուռ,
Նանեն ուտի քու ճուռ,—

ասում էր Սանամը, երեխայի տոտիկները համբուրելով։

Վարդավառի առավոտ Քրդագոմի բոլոր երիտասարդները իրենց տոնական հանդերձներում պճնված, խմբվել էին տանիքներին։ Բնակիչների մի մեծ բազմություն հավաքվել էր գյուղի կենտրոնում գտնվող բլուրի վրա՝ հին զանգակատան առաջ։

Այդ օրը սովորականից ավելի վաղ էին վառվել թոնիրները։ Ծուխը կապույտ օղակներով ելնում էր երդիկներից։ Ուշացած տանտիկինները փութկոտությամբ վերջին գաթաներն էին թխում։ Հարսներն ու աղջիկները, նախշուն շորերը հագած, կժերով ջուր էին բերում աղբյուրներից։

Երկրագործ Մարտոն՝ Բայազի հայրը, որ նոր էր վերադարձել

•լամությունից, դռան առաջ նստած նորոգում էր իր լծասարքը։ Խոդեդանի հարսանիքին Տոնեից ստացած հինգ ոսկով նա մի լուծ գոմեշ էր գնել դրանից մի քանի տարի առաջ։ Գոմեշներից մեկը աշխատանքի ժամանակ ջարդել էր իր սամիները։ Մարտոն նրստել էր բարդու տակ և նոր սամիներ էր շինում, որ տոներից հետո սայլով գնար Սև սար՝ մի քանի գերան բերելու՝ մարագի փտած գերանները փոխելու համար։ Լևոնը և Աշխենը կանաչ ճյուղերով զարդարել էին սայլը և, կարմիր արախչիների մեջ ջուր ածելով՝ բերում ու քրքջալով ցանում էին շինականի գլխին։

— Վարդավառ է, պապի՛,— գոչում էին շարաճճի երեխանները, շարունակելով իրենց հրճվալի խաղը։

— Թողեք սամին շինեմ, որ ձեզ սելով Մուշ տանեմ,— ասում էր Երկրագործ Մարտոն, ուրախանալով իր թոռների անմեղ զվարճությամբ։

Մի քիչ այն կողմը, Մանիշակը, թևերը քշտած, կարմիր գաթաներն էր քաշում թոնրից։ Ալվառինջու հարսը նստել էր մոտը և գրտնակով վերջին խմորի գնդերն էր բացում։ Նրա կողքին պպզել էր փոքրիկ Դավիթը և մի նախշած գաթա գոգը դրած, նայում էր եփվող հացերին։

— Կուգուն տաք է, ջոջո,— ասաց երեխան, գաթի ծայրը մոտեցնելով և արագորեն հեռացնելով բերանից։

— Փչի՛ր՝ թող պաղի, հետո կոտես,— ասաց Ալվառինջու հարսը, շարունակելով իր աշխատանքը։

— Ջոջո, էն գաթեն վառավ, հանի՛ր, էն մեկել գաթեն հիմա կպատի թունդիր,— մատով ցույց էր տալիս Դավիթը։

— Ուշիկ, դու չպատես թունդիր, լաո,— զգուշացնում էր Մանիշակը և կռանալով անմիրոցով խառնում էր կրակը, որ հացերը կարմրեն։

Սանամը երկար ժամանակ չէր եղել իրենց գյուղում։ Նա խոստացել էր Ասատուրի երեխաներին մի քանի օրով Ալվառինջ տանել իր ծնողների և եղբայրների մոտ, որոնք խաղողի հրաշալի այգիներ ունեին։

Հանկարծ չարաճճի աղմուկով թոնրատուն մտան Լևոնն ու Աշխենը։

— Նանե, պապին ծառի տակ նստած սամի է շինում, որ մեզ սելով Մուշ տանի,— ծափ տվեցին նրանք։

— Ե՞րբ է տանելու։

— Վաղը։

— Վաղը ես ձեզ կտանեմ Ալվառինջ։ Մի քանի օր կմնաք էնտեղ, հետո կգաք ու աբոյի (պապի) սելով Մուշ կերթաք։

— Ալվառինջում խաղող կա՞,— հարցրեց Աշխենը։

— Շա՜տ։

— Ջմերո՞վ։

— Ջմերուկ էլ շատ կա։

— Էլ ի՞նչ կա։

— Սեխ կա, շամամ կա։ Էս համայն Մշո դաշտի մեջ Ալվառինջու պես գեղ չկա,— նկատեց պառավը։

— Որ էդպես է, վաղը մեզ Ալվառինջ տար,— գոչեցին մանուկները և, մեկական գաթա տաշտակից առնելով, վազեցին դեպի սայլը և սկսեցին նորից ջուր ցանել պապիկի գլխին։

— Վաղը չեմ ուզում, ինձ հիմա Ալվալինջ տալ,— լաց եղավ Դավիթը, Սանամի լաչակից քաշելով։

Տոնական տենդային պատրաստության մեջ էին ոչ միայն Քրդագոմն ու հարևան գյուղերը, այլև Մուշ քաղաքի շրջապատի բոլոր ավանները՝ Առինջը, Առնջվանքը, Ծափնան, Ջրիկը, Տերգեվանքն ու Մոկունքը։ Ուրախություն էր տիրում Վարդենիս, Առնիստ, Արքավանք և Արդոնք գյուղերում։ Վարդի պես խաղում էին Վարդխաղն ու Ծղակը, Հավատորիկն ու Նորշենը, Թիլն ու Օրգնոցը։

Խասգյուղը, որ Դաշտի նշանավոր շեներից մեկն էր, այդ կիրակի առանձնապես ցնծագին եռուզեռի մեջ էր։ Գրեթե ամեն տուն մատաղ էր մորթել, ամեն ոք համակված էր տոնական բարձր տրամադրությամբ։

Եվ հանկարծ, այդ համատարած բերկրության պահին, լացի և օգնության բարձրագոչ աղաղակներ լսվեցին այս ու այն կողմից։ Նախիրներն անժամանակ շտապեցին տուն վերադառնալ։ Տարոնի դաշտը լցվեց ձիավոր ու ոտավոր անթիվ զորքերով։ Բերդակ, Ալվառինջ և Առաղ գյուղերում խուլ հրաձգություններ սկսվեցին և Դաշտի մի շարք բնակավայրեր՝ կորան ծխի ահավոր քուլաների մեջ։

— Մուսաբեկն է գալի՞ս,— աղաղակում էին քուրդ ձիավորները ավանից-ավան ասպանդակելով։ Անօգնական մայրերի և երեխաների աղաղակը երկինք էր հասնում։ Գեղեցիկ հարսներն ու

կանայք այլանդակում էին իրենց երեսները։ Մայրերը ցեխ ու մուր էին քսում իրենց աղջիկների դեմքերին։ Կրակների միջից փախչում էին կիսախանձ մարդիկ։ Գյուղից գյուղ լալահառաչ վազում էին հարազատներին կորցրած սոսկահար մանուկներ։ Շատերն իրենց նետում էին Մեղրագետի ալիքների մեջ։

Ի՞նչ պատահեց։ Ինչո՞ւ համար Տարոնի շքեղ առավոտը մռայլվեց այդպես։

Նախապես արված որոշման համաձայն 1915 թվականի ապրիլի 15-ին Երիտասարդ թյուրքերի կառավարությունը (Թալեաթ, Էնվեր, Ջեմալ) և սուլթան Բեշաաը գաղտնի հրահանգ էին ուղարկել իրենց բոլոր փաշաներին և քրդական ցեղապետներին՝ ապրիլի 24-ի լուսաբացից բնաջնջել Արևմտյան Հայաստանի ամբողջ հայությունը, որպեսզի առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո հայ ժողովուրդը հանդես չգար, իբրև իրավատեր, ազգային անկախության պահանջով։ Այդ հրամանագրում ասված էր. «Երրորդ իրավատերը — այդ միայն հայը կարող է լինել։ Աստված մի՛ արասցե, որ մեր պարտությանը հաջորդող բանակցությունների ժամանակ ասպարեզ գա «հայկական հարցը», որը կես դարից ի վեր միջազգային հանգամանք առած է և սպառնագին ցցված է մեր կրծքին»։

Ստանալով այդ հրամանագիրը, Բիթլիսի նահանգապետը և Շեֆքեթ փաշան Մշո Դաշտի կոտորածի սկիզբը սահմանում են 1915 թվականի Վարդավառի կիրակին՝ հունիսի 28-ը։

Ս. Կարապետի կողմի գյուղերի կոտորածը հանձնարարվում է Մուշից ուղարկվող թյուրքական զորամասերին և Ջիարեթի մուդուրին։ Ջարբհորի կողմի գյուղերի կոտորածը հանձնարարվում է այդ գյուղերում վերաբնակված չեչեններին։ Իսկ Մուսաբեկին և նրա եղբայրներին բաժին է ընկնում կոտորել Խասգյուղի շրջանի բոլոր գյուղերը՝ Մուշից սկսած մինչև Ջխուր։ Որոշվում է ութ տարեկանից վեր երեխաներին և տղամարդկանց սպանել, իսկ կանանց, ծերերին և ավելի մանր երեխաներին՝ վառել։

Ի նկատի ունենալով, որ օտարականների ներկայությունը այդ կոտորածին ցանկալի չէր, բոլոր օտարերկրյա դեսպանները նախապես ետ էին կանչված Մուշ քաղաքից։

Երկրագործ Մարտոն այնպես էր կլանված իր աշխատանքով, որ բոլորովին չիմացավ, թե ի՛նչպես մի խումբ համիդիե զինվորներ

և թյուրք ասկյարներ լցվեցին բակը։ Նա միայն մեքենաբար կրկնում էր. «Հերի՛ք է վրաս ջուր ցանեք, շան լակոտներ, թողեք էս ջարդված սամին շինեմ, որ ձեզ սելով Մուշ տանեմ»։

Երեք զինյալ թյուրք ետևից սրարշավ գալով, տեղն ու տեղը սպանեցին նրան։ Սամին մտցրին բերանը և սեղմելով սուր ծայրով դուրս բերեցին փորից։ Լևոնին և Աշխենին սպանեցին սայլի վրա, երբ նրանք լծի ծայրերին նստած թոնոցի էին խաղում։ Թևերը կտրեցին և կախ տվեցին արագիլների ծառից։

Դահիճներից մի քանիսը շտապեցին թոնրատուն։ Այն ժամանակ, երբ Մանիշակը կռացած վերջին գաթան էր հանում, ետևից խոցեցին նրան և գլխի վրա շուռ տվին թոնրի մեջ։ Նրանցից մեկը կացնի հարվածով կտրեց հացթուխ կնոջ դաստակը և գրպանը դրեց։

Ալվառինջու հարսը, Դավթին շալով փաթաթած, տանիք էր ելել, իմանալու թե այդ ի՞նչ աղաղակներ են։ Մանիշակի սուր ճիչը լսելով, նա ամուր գրկեց երեխային և, տան հակառակ կողմը իջնելով, սկսեց փախչել։

Ճանապարհը ուղիղ տանում էր Ալվառինջ։ Ոսկեփայլ արտերի միջով Սանամը հասավ Մեղրագետին։ Նա երեխային շալով կապեց մեջքին և ջուրը ճեղքելով արագությամբ անցավ։ Կուզեկուզ էր գնում, որ իրեն չնկատեն։ Ոտաբոբիկ էր նա, գլխին միայն մի մաշված թանձր լաչակ կար։ Հասնելով իր ծննդավայրի այգիներին, նա ամբողջ գյուղը կոտորած տեսավ։ Իր ծերունի հորը և երկու եղբորը սպանել էին խաղողի այգու մեջ՝ ջրտուքի ժամանակ։

Ալվառինջ և Բերդակ գյուղերի կանանց ու երեխաներին հավաքել-տարել էին Ալիզոնան գյուղը, որ Մշո ճամփին էր, և մարագների մեջ լցնելով, վառել էին։

Ալիզոնանի ժողովրդի մի մասը այդ օրը վաղ առավոտյան, իր տոնական հացն ու կերակուրները թոնիրներին թողած, մի քանի ժամով ուխտի էր գնացել գյուղից դուրս։ Բերդակի կողմից հրաձգության ձայն առնելով, նրանք իջել էին Սողոմ գյուղը, որ խճուղուց մի փոքր հեռու էր ընկած։ Ջարդարարներն այդտեղ հավաքված բազմությանը, խասգյուղի մի խումբ բնակիչների հետ, ժողովել էին երիշտեր և այնտեղ վառել։ Ջխուրի կողմի հայ բնակիչներին տարել էին Ավզուտ գյուղը և վառել գերմանացի սպաների մեկի ներկայությամբ։

Մի քանի ժամ՝ և գեղեցկատեսիլ ու հրաշալի Տարոնը ամայացավ։ Հազարաշեն գյուղերը ավերակների վերածվեցին։ Թյուրքական սև ամպերը և Մուսաբեկի աշիրաթները հրդեհեցին, կործանեցին ու ոչնչացրին այն ամենը, որ հայ չարքաշ շինականը ստեղծագործել, կառուցել ու շինել էր այդ նշանավոր դաշտում երեք հազար տարվա անդուլ աշխատանքով։ Ո՛ր տեղից անցնում էր Մուսաբեկն իր հրոսակախմբերով, այնտեղ համատարած մեռելություն էր տիրում։

Սանամը, Ալվառինջը ամայացած տեսնելով, Ծծմակա Քթի տակով սկսեց ելնել դեպի Քան։ Սարն ի վեր մի ահագին նախիր էր բարձրանում։ Լեռներից իջած քուրդ բեկերն ու օսմանյան բաշիբոզուկները, օգտվելով առիթից, դեպի իրենց բնակավայրերն էին քշում հայ գյուղացիների անտիրական մնացած հոտերն ու նախիրները։ Տերգևանքի, Մառնիկի, Շմլակի, Բերդակի և Ալվառինջի հազարավոր կովերն ու եզները բառաչելով դեպի սարերն էին ելնում։ Այնտեղ՝ էին նաև Երկրագործ Մարտոյի մի լուծ գոմեշը՝ Շեկոն և Ասլանը։

Սանամը մտավ նախրի մեջ, որ իրեն չնկատեն և մերթ՝ մի կովի, մերթ՝ մի եզան հետև անցնելով, առաջ էր գնում՝ Ծծմակա Քթի առապարներով։ Անասուններից ոմանց վրա կաթսաներ, խնոցիներ և տնային զանազան կահ-կարասիք էր բարձած՝ օրորոցից սկսած մինչև վերջին խաչերկաթն ու ավելը։ Երկու սև գոմեշ գնում էին կողք կողքի։ Նա ճանաչեց դրանք Շեկոն և Ասլանն էին։ Ալվառինջու հարսը մտավ նրանց մեջտեղ և ընթացավ առաջ։ Նա լսում էր, թե ի՛նչպես ետևից երկու ավազակ վիճում էին նախիրը բաժանելու համար և պարծենում էին իրենց ոճրագործությամբ։

— Դու քանիսի՞ն սպանեցիր, Ալի,— հարցրեց առաջինը։

— Հիսունչորս հոգու։

— Վա՜հ, ինչքան քիչ ես սպանել,— զարմացավ երկրորդը, որի անունը Վալի էր։ Իսկ ես լրացրի երկու հարյուր քառասուն և ինը։ Մարգարեի գլխի վրա երդում եմ տվել, ոչ մի գյավուրի կենդանի չթողնել։

Դրանք Ալին ու Վալին էին, այն երկու օսմանցի հարկահավաքը, որ կողոպտում էին Բռնաշենի գյուղերը և վերջին անգամ արկածի էին ենթարկվել Խոդեդանի դռանը՝ ուզեր փնտրելով նրա շաղգամի քթոցի տակ։ Այդ օրը նրանք իջել էին Դաշտ թալան տանելու։

— Մի հոգու էլ եթե սպանեիր, դրախտ կգնայիր,— նկատեց առաջինը։

— Ընկա թալանի ետևից, թե չէ երեք հարյուրը վաղուց էի գրստել։

— Գոնե երկու հարյուր հիսունը լրացրու։

— Նայում եմ, մարդ չկա։ Բայց մինչև տեղ հասնելը, երևի մեկին կգտնեմ ճանապարհին։ Ա՜յ թե հիմա մի գյավուր հանդիպեր։

— Կի՞ն ես ուզում թե տղամարդ։

— Իմ սպանածների մեծ մասը երեխաներ էին և պառավ կանայք։ Մտա մի գոմ, տեսնեմ լիքը մանուկներ են՝ մեկից մինչև հինգ տարեկան։ Ինձ որ տեսան, սկսեցին խժալ։ Քաշեցի զամես ու բոլորի գլուխները մեկ-մեկ թոցրի։ Մի քանիսի գլուխները ցրիվ տվեցի քարերի վրա, մի հիսունին՝ մեջտեղից ճվատեցի։ Լավ կլիներ, որ մի կին հանդիպեր, կմորթեի ու էս սարի քթից կգլորեի ներքև։

Ալվառինջու հարսը մտածեց, որ եթե իրեն նկատեն՝ ինքը կդառնար վերջին միավորը։ Գոնե մի զենք լիներ մոտը։ Սանամը թույլ չէր տա, որ այդ սպասավոր ավազակը տեղ հասներ։ Միակ մխիթարությունը այն էր, որ Դավիթը խոր քնած էր։

Մի քիչ հետո Ալին ու Վալին նախիրը բաժանեցին իրենց մեջ և ամեն մեկը իր մասը քշեց տարբեր ուղղությամբ։ Մեկը գնաց Շմլակա սարի կողմը, իսկ մյուսը՝ Մոկնաց ձորի։ Սանամը, որ անբաժան էր երկու գոմեշից, ընկավ Վալու՝ պարծենկոտ մարդասպանի բաժնի մեջ։

«Սա անպայման ինձ կսպանի»,— անցավ նրա մտքով։ Նախրից դուրս գալ չէր կարող, իսկ նախրի հետ գնալ ի վիճակի չէր, որովհետև ճանապարհը շատ վտանգավոր էր. «Իմալ էնիմ, իմալ չէնիմ, մահս եկել է ականջիս ետև», ինքն իրեն մտածեց Սանամը։

Նրա բախտից Վալին գնաց նստեց Ծծմակա Քթի ծայրին, որի տակ գահավեժ խորխորատ էր բացվում և, ուսից մի տոպրակ ցած առնելով, սկսեց ստուգել իր մոտ եղած ավարը։ Դրանք ոսկեղեն մատանիներ, օղեր, մանյակներ և այլ կարգի թանկարժեք զարդեր էին, որ նա խառնիխուռն վիճակում լցրել էր տոպրակը։ Մի քանիսն էլ ծոցից հանեց։ Հանկարծ նա ձեռքը տարավ դեպի գրպանը

և այնտեղից դուրս հանեց մի արյունոտ թաթ։ Դա Մանիշակի խմորոտ ձեռքն էր, որ նա կտրել էր թոնրան շրթին։ Դաստակի վրա փայլում էր ոսկյա ապարանջանը, իսկ մատներին՝ երեք խոշոր մատանի։ Սանամը փշաքաղվեց՝ ճանաչելով Մանիշակի ձեռքը։

Վալին փորձեց հանել մատանիները՝ չկարողացավ։ Թաթը դրեց քարի վրա և մի ուրիշ քար վերցնելով սկսեց փշրել, տափակացնել մատները, որ օղերը դուրս բերեր։ Ալվառինջու հարսը մի կողմից մյուսին անցնելով, զգուշությամբ մոտեցավ քարաժայռին։ Դեղջկուհին ուղղեց իր շալակը և արագությամբ ետևից գալով ամբողջ թափով ավազակին հրեց դեպի անդունդը։ Նա միայն լսեց մի հանկարծական վայրենական ճիչ և նկատեց, թե ի՛նչպես Ծծմակա Քթի ապառաժներին զարկվելով մարդասպանը ցաք ու ցրիվ եղավ։

— Դե հիմա գնա դրախտ, անխիղճ գազան,— գոչեց Սանամը՝ ահարկու նայվածքով վերևից կռանալով անդունդի վրա։

Ապա վերցրեց Մանիշակի ջախջախված թաթը, որի վրա դեռ նշմարվում էին խմորի հետքեր, համբուրեց այն և մի փոսի մեջ ծածկելով սկսեց արագորեն իջնել դեպի Ալվառինջ։

Սարերից թեթև քամի էր փչում։ Ետևում վառվում էին հայրենի գյուղերը, իսկ դեմքը զարհուրելի այլայլված էր։

Դավիթը, որ ամբողջ ճանապարհին քնած էր, արթնացավ և սկսեց բարձրաձայն լաց լինել։

Մուշի կողմից մոտ տասնհինգ տարեկան մի պատանի էր վազում ճանապարհով։ Նա ոտաբոբիկ էր, գլխաբաց ու սոսկահար։ Երեսը և հագի շորերը խանձված էին։

— Տղա, դու հա՞յ ես,— գոչեց Սանամը, ուժասպառ ընկնելով իր մեծ եղբոր խաղողի այգու եզրին։

Մայրենի խոսք լսելով, պատանին մոտեցավ կնոջը։

— Հայ եմ, նանե,— պատասխանեց նա։

— Ո՞րտեղից ես գալիս։

— Մշու Բուլանուխից։

— Ձեր գյուղերն էլ կոտորեցի՞ն։

— Ցրոնքն էլ, Խարդոսն էլ՝ ամբողջը կոտորեցին։ Մուշի տակի գյուղերից շատ քիչ մարդ է պրծել։ Ալիզոնանից միայն մեկ հոտաղ է աղատվել՝ Սարգիս անունով։ Ծափնա գյուղից՝ մեկ բանջարքաղ աղջիկ։

— Ո՞ւր ես գնում։

— Փախչում եմ Քան։ Կրակի միջից եմ փրկվել։

— Տղա, լաո, քու բախտն եմ ընկել։ Ես Ալվառինջու հարս էի Քրդագոմ տարած։ Մեր ամբողջ գյուղը կոտորեցին, ես էլ մեռնում եմ։ Թե կարող ես էս մինուճար տղին հասցրու իր հորը։

— Ո՞ւմ երեխան է։

— Հայրը Արինոք կապրի, անունը Խոդեդան է։ Սա իր մինուճար տղան է։ Քրոջն ու ախպորը Քրդագոմում սպանեցին։ Բրոնաշենից եկել էին, որ Վարդավառի տոները մեզ մոտ անցկացնեն։ Էս մեկին ես թոնդրան շրթից փախցրի։ Տե՛ս, իր կուգուն դեռ տաք է,— երեխայի ուռած ծոցը ակնարկելով, ասաց Սանամը։

Պատանին կռացավ, որ երեխային գրկեր, բայց նույն միջոցին իրենց մոտով անցավ ջարդարարների մի խումբ՝ բալաքցի Մուսաբեկի գլխավորությամբ՝ իր հետ վարելով փախստական հայերի մի ստվար բազմություն։

Արևամոտին խասգյուղի ընդարձակ մարագներից մեկում, Գուրսե Սլոյի տան առաջ, վառեցին հարյուրավոր հայ կանանց ու ծերունիների, որոնց Մուսաբեկի աշիրեթները և թյուրք ավկյարները բերել էին Քանասարից։

Այդ բազմության մեջ էր նաև Սանամը՝ Ասատուրի երեխային գրկած։ Դավիթը անդադար գոռում էր և իրեն դուրս էր նետում Ալվառինջի հարսի բազուկների միջից։

Վիթխարի խարույկի առաջ կանգնած էր Մուսաբեկը իր շագանակագույն ջորու հաստ երասանակից բռնած։ Նրա կողքին կանգնած էին Շեֆքեթ փաշան և մեջլիսի դեպուտատ Քաչալ Աբդուլը։ Ապա հերթով շարված էին ոստիկանապետ Թալիպ էֆենդին, Սլո օնբաշին, խամբեկը, Նհոբեկը և այլ ցեղապետներ։

Վերջին րոպեին, երբ բոցը գալարվում էր Սանամի սրունքներով, նա երկու ձեռքով բոցերի միջից դուրս շպրտեց երեխային՝ բացագանչելով.

— Տարե՛ք Արինոք, Խոդեդանի տո՞ն։

Երեխայի ծոցից վայր ընկավ մի գաթա, որի ծայրը խածված էր։

— Երեխային նետիր կրակի մե՛ջ,— հրամայեց Մուսաբեկը մի քրդի, որ ետևից արագորեն գալով հայտնվեց փաշայի և նրա մեջտեղը։

— Մե՛ղք է, էդ երեխային ինձ տվեք տանեմ,— խնդրեց քուրդը։

— Երևում է, որ Շեկո տան քուրդ ես և գյավուրի հետ հաց ես կերել։ Որտեղի՞ց եկար։

— Խութից։

— Մենք շուտով Խութ-Բռնաշենն էլ կկոտորենք,— սպառնաց Մուսան։

— Շեկոները ձեզ թույլ չեն տա մոտենալ Խութա սարերին, բեկ,— պատասխանեց խիզախ քուրդը, ձեռքը դեպի երեխան մեկնելով։ Մուսաբեկը, սուրը հանելով, բոլորի ներկայությամբ ետևից խոցեց անծանոթ քրդին և դիակը հեռացնել տվեց իսկույն։ Ապա նա սառնասրտությամբ վերցրեց գաթան, դրեց իր ջորու բերանը և, երեխայի ոտքից բռնելով ու օդի մեջ թափահարելով՝ շպրտեց կրակի մեջ։

Սանամը, ծնրադիր և բազուկներ դեպի երկինք կարկառած վառվում էր մի ահագին ջահի նման։ Հարվածից այդ վիթխարի բոցը փուլ եկավ՝ իր տակ ծածկելով սարսափից մեռած երեխային։

— Էլ հայ մնա՞ց,— հարցրեց փաշան, գոհունակությամբ շուրջը նայելով։

— Վարսենիկ անունով մի շեկ կին է մնացել, փաշա։

— Որտե՞ղ է պահված։

— Մարագի մեջ։ Ամուսինը հայդուկ է,— պատասխանեց Թալիպ էֆենդին։

— Նրան էլ գցեք կրակի մեջ։

Թալիպ էֆենդին և Սլո օնբաշին կողքի մարագից դուրս քաշեցին մի կիսախելագար կնոջ և հրեցին կրակի մեջ։

— Կարծեմ մեզ հսկող աչք չկա, փաշա,— ասաց Քաչալ Աբդուլը,— թե չէ կարող են հետագայում պատմության մեջ գրել։

— Քանի մենք կանք՝ պատմություն չի լինի, իսկ երբ պատմություն կլինի՝ մենք չենք լինի,— հանգիստ պատասխանեց փաշան, ձեռքը սրին դնելով։

Մութը խտանում էր։

Դահիճները անզգա կանգնած դիտում էին ահռելի ողջակեզը։ Վառված գերանները ճարճատյունով ընկնում էին այդ հսկայական թոնրի մեջ՝ իրենց փայլով լուսավորելով խասգյուղի և շրջակա ավանների ամայացած տները։

Այդ ժանտատեսիլ կրակները երևում էին Դավթի քարից, Ծիրնկատարից և Սիմ լեռան լանջերից։

Նույն օրը Դաշտի կոտորածի բոթը հասավ Բռնաշեն։

— Գաթեք մացին թունդիր կախո՞ւկ,— իրենց ծնկները ծեծելով, պատմում էին կոտորածից դեպի Սև սար ճողոպրած հայ շինականները։

Ամբողջ Սասունը սուգ մտավ։

Բայազն ու Ասատուրը իրենց անձնական մեծ վիշտը մոռացած, կարկամեցին համազգային այդ ահավոր աղետի հանդեպ։

ՅՈԹ ՕՐ

Այն ժամանակ, երբ Խոդեդանի երեխան այրվում էր Խասգյուղի մարագում, Մուշ քաղաքում կատարվում էին ահավոր անցքեր։ Այնտեղ բռնկվել էր հայ բնակչության տարերային դիմադրությունը թյուրքական ջարդարարների դեմ։ Այդ հերոսական ինքնապաշտպանության շունչն ու հոգին էր Մատնիք Եղիշեն։

Թշնամին ռուսական ճակատից վեց լեռնային թնդանոթ բերելով, գիշերով ամրացրել էր քաղաքի կարևոր բարձունքներին։ Մեկ թնդանոթը դրել էին Արջգլորի վրա, մյուսը հաստատել էին Պոլող քարում, երկուսը՝ Սաչկի դուրանում, իսկ վերջին երկուսը՝ Բերդի թաղում։

Ոստիկանապետ Թալիպ էֆենդին, որ նոր էր վերադարձել Դաշտի գյուղերից, Ալադին բեյի մզկիթի մոտով փուքկոտ քայլերով գնում էր դեպի Բերդի թաղ։

Իբլի Մուստաֆան նրան մոտենալով՝ հարցրեց.

— Էֆենդի, ի՞նչ եղան այն հազար երեք հարյուր մշեցի հայերը, որ Վարդան վարդապետի գլխավորությամբ երեկ գիշերը դուրս եկան քաղաքից։

Նրանք արդեն հասել են Ուրֆա։

— Այդքան շուտ չեն հասնի, էֆենդի, Ուրֆան հեռու է,— ասաց Իբլին։

— Ուրեմն ճանապարհին կլինեն,— նկատեց ոստիկանապետը, կռահելով իր սխալը և կասկածանքով նայելով Մուստաֆային։— Իսկ ինչո՞ւ է քեզ հետաքրքրում նրանց բախտը։

— Ինչպե՞ս կարող է չհետաքրքրել, երբ միայն մեր թաղից հարյուր հիսուն մարդ կա նրանց մեջ։ Զաբթիաները նրանց բռնել են փողոցում, զոռով ցուցակագրել են և գիշերով հանել քաղաքից։

— Ավելորդ մի՛ խոսիր, քաղաքի շուրջը թնդանոթներ են դրված, իսկ կացինները պատրաստ են։ Քիչ հետո մենք սկսելու ենք քաղաքի կոտորածը։ Աչքդ այս մզկիթի վրա պահիր։ Հենց որ մոլլան բարձրանա մինարեթ, կոտորածն սկսվելու է։ Մոլլան բարձրանալու է երկու անգամ։ Առաջին անգամ բարձրանալիս, սկսելու ենք կացիններով կոտորել հայերին, իսկ երկրորդ անգամ բարձրանալիս՝ թոփերն են որոտալու։

— Ա՜յ թե ինչ, ուրեմն ազդանշանը մոլլա՞ն է լինելու։

— Այո։ Կացին ունե՞ս։

— Չունեմ։

— Իսկ ինչո՞ւ չունես։ Երկու ժամ հետո ոչ մի գյավուր չի մնալու քաղաքում։ Ծրագրված է ամբողջ հայությունը բնաջնջել, առանց սեռի և հասակի խտրության, մեկ տարեկանից սկսած մինչև իննսուն տարեկան ծերունին։

— Ո՞վ է ծրագրել։

— Հրամանը վերևից է եկել։ Ամբողջ հայությունը սուլթան Ռեշատի կողմից հռչակված է իբրև թշնամի իսլամի կրոնին և հայրենիքին։ Մենք Դաշտը արդեն կոտորել ենք, հերթը հասել է քաղաքին։

— Եթե այս րոպեիս կացին ունենայի, ես այդ կացինը քո գլխին կիջեցնեի, էֆենդի,— բռունցքը նրա գլխին թափահարելով դոշեց Իբլի Մուստաֆան։ Մենք, քաղաքի թյուրք բնակիչներս, թույլ չենք տա ձեզ ձեռք բարձրացնել հայերի վրա։ Այս ամբողջ երկիրը, մասնավորապես այս քաղաքը բուն հայկական է։ Անկարելի է պատկերացնել Մուշը առանց հայերի։

— Այսօր, ուղիղ երկու ժամ հետո այդ անկարելին կարելի կդառնա և դու կպատկերացնես այս քաղաքը առանց հայերի։

— Ի՞նչ է արել մեզ այդ ժողովուրդը։ Նրանք մեզ համար աշխատում են, հարկ են տալիս, շենացնում են մեր տերությունը։ Ոչ, ես մոլլային կասեմ, որ չբարձրանա մինարեթ, ես արգելք կլինեմ այդ կոտորածին։

— Որոշված է, Մուստաֆա, մի՛ ընդդիմացիր ալլահի կամքին։ Ես և Շեֆքեթ փաշան մարգարեի գլխի վրա երդվել ենք՝ Մուշի սան-

ջակի մեջ ոչ մի գյավուրի կենդանի չթողնել։ Այն հազար երեք հարյուր հոգին, որոնց մասին դու հարցնում ես՝ արդեն ալլահի գոգումն են։

— Ինչպե՞ս, նրանք սպանվա՞ծ են։

— Մենք նրանց Ուրֆա գաղթեցնելու պատրվակով հանեցինք քաղաքից և հանձնեցինք Մուսաբեկի և օնբաշի Սլոյի աշիրեթների դատաստանին։ Քեզնից ի՛նչ թաքցնեմ, էֆենդի, նրանք բոլորն էլ սպանված են, իսկ Վարդան վարդապետին քերթել են ճանապարհին։ Մահից առաջ նա զգաց վտանգը և զղջաց, որ անզեն է թողել ժողովրդին։ Մեկ գիշերվա մեջ ճերմակեց և գլխի մազերը փետելով ասաց. «Ավա՜ղ, ինձ խաբեց փաշան։ Ես եմ արել, ես պիտի քաշեմ»։

— Դու և գավառապետը դրախտ կգնաք անպայման, Դևեր փաշան էլ ձեզ հետ։ Շանսատակ լինեք բոլորդ էլ։ Մեր ազգի գըլխին փորձանք չմնաց, որ չբերեցիք։ Օ՜, գարշելիներ, դուք ոչ հավատ ունեք, ոչ կրոն,— ասաց Մուստաֆան և, ամոթից գլուխը ծածկելով, դանդաղ հեռացավ։ Նա մոտեցավ, գլուխը հենեց մինարայի պատին և դառնորեն արտասվեց։

Այդ օրը զարհուրելի կերպով հուզված էր շուկան։ Հրապարակը գնալով լցվում էր հայ և թյուրք արհեստավորներով, որոնք տագնապահար սպասում էին մի ինչ-որ բանի։

Շատ չանցած հրապարակ մտան մի քանի թյուրք վաճառականներ Քաչալ Աբդուլի գլխավորությամբ, որոնք իրենց փեշերի տակ կացիններ ունեին պահած։ Թալիպը մոտենալով ինչ-որ բան փսփսաց Աբդուլի ականջին և շտապեց դեպի Վերին թաղ։

Եվ այն պահին, երբ ամենքը ուշադրությամբ հետևում էին թե ե՛րբ է մոլլան մինարեթ բարձրանալու, շուկայի կենտրոնական մասում հայտնվեց Մատնիք Եղիշեն։

— Մշեցինե՛ր, հայրենակիցնե՛ր, Տարոնի բնակիչներ, Վարդավառի կիրակին արյունոտ կիրակի դարձավ մեզ համար,— բազմությանը դիմելով բարձրաձայն խոսեց նա։— Մուշի դաշտը, ինչպես նաև ամբողջ Արևմտյան Հայաստանը ահավոր վտանգի մեջ են։ Երիտասարդ թյուրքերի կառավարությունը և սուլթան Բեշատը որոշել են բնաջնջել հայ ժողովրդին և բռնագրավել մեր պատմական հայրենիքը։ Քիչ առաջ լուր ստացվեց որ Դաշտի բոլոր գյուղերում համատարած կոտորած է։ Մարագների մեջ վառում են մեր

անմեղ կանանց ու երեխաներին, մեր ծերունի հայրերին ու քույրերին։ Խաբեությամբ Մուշից դուրս տարված մեր հազար երեք հարյուր հայրենակիցներին բալաքցի Մուսաբեկը և Գուրսե Սլոն սրի են քաշել ճանապարհին։

— Մա՛հ դահիճներին,— լսվեցին կատաղի, սպառնական բացագանչություններ ամբոխի միջից։

— Մուշը, մեր հայրենի քաղաքը շրջապատված է։ Մեր սարերի վրա թնդանոթներ են դրված։— Բոլորը շուռ եկան և նայեցին դեպի Սաչկի դուրան ու Արջգլոր։

— Մեր քաղաքի թյուրք աշխատավորներ,— շարունակեց Եղիշեն,— մենք և դուք միասին ենք մեծացել այս քաղաքում։ Իմ շինած օղերն ու ապարանջանները հավասարապես զուգել են թե՛ հայ և թե՛ թյուրք կանանց ականջներն ու բազուկները։ Հայ աշխատավորության հետ ոտքի ելեք կենտրոնական կառավարության ջարդարարների դեմ։ Մի՛ թողեք, որ մեր քաղաքը կոտորվի։ Այդ անիծյալ հրամանը վերևից է եկել։ Վերևից են գալիս մեր խաղաղ խրճիթներն ավերող բոլոր իշխանական հրամանները։

Մատնիք Եղիշեի խոսքի ժամանակ ինչ-որ մի շշուկ անցավ հրապարակով։

— Մոլլան մինարեթ է բարձրանո՞ւմ, մոլլան մինարեթ է բարձրանո՞ւմ։ Եվ հիրավի, սև անթարու մեջ ծածկված, գլխին փաթաթած սպիտակ չալման, թևից մանրահատիկ համրիչը կախած, մի ինչ-որ թյուրք արագ մոտեցավ մինարային։

— Օ՜, մոլլա, մի՛ բարձրացիր մինարեթ, հավիտյան մի՛ նզովիր մեր անունը,— ասաց Մուստաֆան և պատի մոտից շուռ գալով փռվեց նրա ոտքերին։— Մի՛ կոտորեք հայերին։ Նրանք էլ մեզ պես ժողովուրդ են։ Ավերակ մի՛ դարձրեք Մշո դաշտը։ Լացողի մալը առնողին երջանկություն չէ,— գոչեց նա ամբողջ ուժով իր մարմինը սեղմելով նրա ոտքերին և կասեցնելով նրա ընթացքը։ Բայց մոլլան անդրդվելի էր։ Նա ոտքով կոխեց Մուստաֆային և, արագորեն մզկիթի աշտարակն ելնելով՝ ազդանշան տվեց կոտորածն սկսել։

Եվ ճիշտ այն ժամանակ, երբ Քաչալ Աբդուլը մի քանի վաճառականների ետևում թաքնված՝ ատրճանակը ուղղում էր Մատնիք Եղիշեի կրծքին, շանթի պես հրապարակ մտավ քրդական տարազ հագած մի քաջաղնական խումբ։ Քաչալ Աբդուլի գլուխը մեկ հար-

վածով պոկվեց պարանոցից և գլորվեց շուկայի հրապարակով։ Նույն միջոցին մոլլան մինարեթի գագաթից թավալգլոր վայր ընկավ՝ գնդակի մի անվրեպ հարվածով։

Այդ մոլլան ոչ այլ ոք էր, քան ինքը՝ ոստիկանապետ Թալիպ էֆենդին։ Բերդի թաղի մոլլան հրաժարվել էր մինարա բարձրանալ արյունոտ ազանի համար։ Թալիպ էֆենդին սպանել էր նրան, հագել էր նրա անթարին, կապել էր չալման և, նրա համրիչը թևը անցկացնելով, ելել էր մինարեթ ազան կանչելու։

Երկու հարյուրի չափ ոստիկաններ և սև ասկյարներ, որ մտել էին շուկա հայ արհեստավորներին կոտորելու, խուճապահար փախուստի դիմեցին։ Մի քանիսի զենքերը վայր ընկան։

— Կա՛ց,— որոտաց հերոսը և կացիններից մեկը վերցնելով, թափով իջեցրեց առջևից փախչող դահճի գլխին։

— Դաշտը կոտորեցի՞ք, հիմա էլ Մո՞ւշը կուզեք բնաջնջել։

Այդ քրդական տարազ հագած կտրիճը, որ մեկ հարվածով զետին տապալեց Քաչալ Աբդուլին՝ Գոմսա Մելիքն էր, իսկ այն անվեհեր հերոսը, որ մզկիթի աշտարակից վայր գլորեց ոստիկանապետ Թալիպ էֆենդուն՝ Ասատուրն էր։ Խոդեդանի գլխավորությամբ Մուշ մտած շինականների խմբի մեջ էին Պնտխցի Մանուկը, Շինական Պողոսը, Թելո Մեսրոպը, Փղորկվա Կարոն և տասից ավելի ուրիշ գյուղացիներ։ Իսկ Գոմսա Մելիքի վրիժառուների մեջ էին Զուլումաթ Սմբատը, Կայծակ Պետոն ու Սեթոն և մյուս քաջերը։ Նրանք բոլորն էլ զինվելով՝ օգնության էին շտապել հայրենի քաղաքին։

Ասատուրն ու Գոմսա Մելիքը իրենց կտրիճներով և Մատնիք Եղիշեն վաթսուն մշեցի երիտասարդներով, որոնց մեծ մասը արհեստավորներ էին, աջ ու ձախ շանթելով մարդասպաններին, հրապարակից մրրիկի արագությամբ սլացան դեպի Վերին թաղ։ Եղիշեի տունը և Խաչփողանի կից բնակարանները դարձան հայոց դիմադրության գլխավոր կենտրոնատեղին։ Այստեղ հայ ֆիդայիները վերջին անգամ համբուրվեցին իրար հետ, ինչպես սովորություն էր ամեն կռվից առաջ, և նետվեցին մարտի մեջ։

Եղիշեի, Գոմսա Մելիքի և Խոդեդանի կողմից հատուկ հրամանով՝ թյուրք կանանց, երեխաների և ծերերի վրա չկրակել։

Եղիշեի հետ կողք կողքի կռվում էր նաև իր տասնհինգ տարեկան որդին՝ Հասարաթը։ Նա թե՛ կրակում էր և թե՛ դիրքից դիրք

վազելով փամփուշտ էր մատակարարում կռվողներին։ Մի անգամ նա վեցնոց ատրճանակը ձեռքին դուրս խոյացավ դեպի փողոց՝ կատաղորեն գնդակոծելով թշնամու դիրքերը։

— Ո՞ւր ես գնում, Հասրա՛թ,— գոչեց հայրը, ձեռքով անելով, որ որդին ետ դառնա։

— Գնդակս չի հասնում, մի քիչ մոտենամ, որ հասնի,— պատասխանեց խիզախ պատանին, հակառակորդի գնդակների տարափի տակ առաջ վազելով։

Տեսնելով որ հայերի դիմադրությունը դանդաղեցնում է քաղաքի կոտորածը, որ Շեֆքեթ փաշան ծրագրել էր ավարտել մեկ-երկու ժամում, հակառակորդը դործի դրեց թնդանոթները։ Վերին թաղի տները փլատակների վերածվեցին։ Ռումբերից մեկը ծակեց Մատնիք Եղիշեի տանիքը և խլացուցիչ թնդյունով պայթեց նրա մեջ։

Յոթ օր ու գիշեր, գերագույն հերոսությամբ, կռվեցին հայերը թշնամու դեմ։ Նրանց ձեռքին կար ընդամենը ութսուն հրացան։ Այդ ութսուն հրացանով նրանք դիմադրում էին տասնյակ հարյուրավոր զինված զորքի և քրդական աշիրեթների։ Եվ մինչև վերջին շունչը կռվելով և անթիվ զոհեր խլելով ոսոխից, նրանք բոլորն էլ քաջաբար ընկան իրենց քանդված տների, ավերված եկեղեցիների, դպրոցների և արհեստանոցների փլատակների վրա։

Գոմսա Մելիքի քաջերից ընկան Կայծակ Պետոն ու Սեթոն, Պանդուխտ Ավագը, քուրդ Սայդոն, Տեր Քաջերը և ասորի Բաղալը։

Պնտխցի Մանուկը խոյացավ դեպի Արջգլոր՝ թնդանոթի ավերիչ կրակը փակելու։ Նա սպանեց թնդանոթաձգին և սարի գագաթից գլորվեց անդունդը։ Երբ հրանոթը լռեց, Գոմսա Մելիքն ու Զուլոմաթ Սմբատը իրենց ողջ մնացած քաջերով ճեղքեցին թշնամական շղթան և Սաչկի դուրանի առապարներով դիմեցին դեպի Սասուն։ Նրանց հետ դեպի Սասուն սլացան Թելո Մեսրոպը և Փղորկվա Կարոն։

Վերջին օրհասական պահին ընկավ և Մատնիք Եղիշեն։ Նա ընկավ շաբաթ օրը Զորաթաղում՝ Զղջիկների բաղանիքի մոտ, մինչև վերջին փամփուշտը կրակելով։

Խոդեդանը և Շինական Պողոսը նրան տարան մինչև գետակը։ Ոտիզ ջրի ափին, այնտեղ, ուր վերջանում էր քաղաքը, մի ժայռի վրա վայր դրեցին նրան։ Մշո գետակը գոռգոռալով, փրփրալով

գալիս էր վերևից, իր հետ քշելով անհամար դիակներ։ Երկնասլաց բարդիների շարքերը իջնում էին դեպի Տաշո կամուրջը։ Այդ ծառերի տակով տարիներ առաջ Մուշ էր եկել Տոնեն՝ մի կապոց լեռնային սունկ այծապարկից կախած։

Որթատունկի վառ կանաչ թփերը մանրահատիկ ողկույզներով մագլցել էին ժայռի վրա և երկարել մինչև գետակի ջրերը։ Իսկ ջրից այն կողմ երևում էին հայրենի լեռներն ու դաշտերը։ Վերջապես ինին ծաղկել էր յոթ-աղբրանց արյունը։ Մշո դաշտի այդ թավշանման խիստ գեղեցիկ մուգ-կարմիր ծաղիկը նորից իր շքեղությամբ պճնել էր հայրենի աշխարհը։ Տեսիլի պես հեռվում երևում էին Արջգլորն ու Սաչկի դուրանը, իսկ ավելի հեռվում, դաշտի հետզհետե նեղացող շերտի միջով, նշմարվում էր Ծծմակա Քիթը։

— Խութ-բռնաշենցիք, ձեր այս հերոսական արարքը անմոռաց պիտի մնա։ Վերջին պահին դուք օգնության եկաք մեր քաղաքին,— ասաց Եղիշեն, մահամերձ հայացքը շինականներին ուղղելով։

— Իսկ քու անունը դարեր պիտի հիշվի,— մրմնջաց Ասատուրը։

— Ուժերն անհավասար էին, ընդամենը ութսուն հրացան, և ամբողջ սուլթանական Թյուրքիան՝ խորամանկ, նենգ, դավադիր։ Բայց մենակ կատարեցինք մեր պարտքը։ Այս յոթ օրը թող չմոռացվի երբեք։

— Չի՛ մոռացվի։ Քանի դեռ մի հայ կա երկրի երեսին, նա պիտի հիշի այս օրը,— ասաց Շինական Պողոսը։

— Ո՞րտեղ է Տոնեն։

— Նա չկարողացավ գալ,— շշնջաց Խոդեդանը։

— Բարևիր նրան։ Ասա՝ Եղիշեն մեռնելու ժամին քեզ հիշեց։ Ո՞ւր է այն մատանին, որ ինձնից տարավ։

— Նշանածիս մատին է։

— Ինձ մի՛ հիշեք։ Եթե ողջ կմնաք, այդ մատանուն նայելով հիշեցեք Մուշը։ Պատմեցեք ապրողներին, որ մեր քաղաքը կոտորվեց, երբ խաղողը նո՞ր-նո՞ր էր սկսել կորեկ դառնալ,— ասաց Մատնիք Եղիշեն նվաղած, ձեռքի ափերի մեջ մի մանրահատիկ ողկույզ տրորելով։ Ապա նա հանկարծ կիսաթեք նստեց և աչքերը լայն բանալով հարցրեց.

— Ո՞րտեղ է ռուս զորքը։

— Կանգնած է Նեմրութ սարի ետև,— պատասխանեց Շինական Պողոսը։

— Ուշացա՞վ, շատ ուշացա՞վ։ Իսկ դուք գնացեք Սասուն, այնտեղ ահավոր կոտորած է լինելու։

Նույն պահին քաղաքի գետակի պղտոր ալիքները վերևից քշելով բերում էին մի պատանու դիակ։ Նա ամբողջապես սպառազեն էր։ Աջ կողքին կապած էր տասնոցը, իսկ ձախից՝ վեցնոց ատրճանակը։ Երկու ուսերից խաչաձև իջնում էին փամփշտանոցները։ Գալիս էր փոքրիկ հերոսը քարերին ու ժայռերին բախվելով, մերթ սուզվելով ջրի տակ, մերթ բարձրանալով ջրի երես։ Այդ Մատնիք Եղիշեի տղան էր։ Գետն անցնելիս նրան գնդակոծել էին ափից։

— Հասրա՞թ,— գոչեց հայրը չոռած աչքերով ժայռից ներքև նայելով և ճանաչելով որդուն։

Պատանու դիակը ուժգին հորձանքի մեջ պտույտ գալով զարկվեց այն ապառաժին, որի վրա պառկած էր իր հայրը, և ալիքներով մղվեց առաջ։

— Կա՞ց,— ասաց Մատնիք Եղիշեն,— հայրդ գալիս է։ Եվ մինչդեռ Խոդեդանը և Շինական Պողոսը ակնապիշ դիտում էին սոսկալի տեսարանը, մահամերձը վերջին շնչում տենդային մի ճիգով ժայռի վրայից նետվեց գետակի մեջ։

Եվ հայր ու որդի միասին՝ ժայռերին խփվելով, ընթացան դեպի Մեղրագետ։

ԾԱՂԿԻ ԹՈՒՅՆԸ

Կոտրելով Մատնիք Եղիշեի և հայ շինականների հերոսական դիմադրությունը, Շեֆքեթ փաշան իր զինված պահակախմբով մոտեցավ Իբլի Մուստաֆայի քարվանսարային։

— Կործանեցե՛ք այս տունը,— հրամայեց փաշան։

— Ինչո՞ւ, էֆենդի։

— Նրա համար, որ դու եղել ես Մատնիք Եղիշեի մերձավոր բարեկամը և օգնել ես, որ Գոմսա Մելիքի և Զուլումաթ Սմբատի խումբը մտնի քաղաք։

— Ովքե՞ր են դրանք։

— Մի՞թե չգիտես։ Դրանք հայ խռովարար գյուղացիների ըմ-

բոստ առաջնորդներն են, որ միշտ կապված են եղել Գևորգ Չաուշի և զորավար Անդրանիկի հետ։

— Առաջին անգամն եմ լսում ես այդ մարդկանց անունները։

— Իսկ Բերդակ գյուղի բնակիչ Թելո Մեսրոպի անունը ծանո՞թ է ականջիդ։

— Թելո Մեսրոպը ավելի վաճառքով զբաղվող մի զվարճաբան գյուղացի է, որի մոտից ես մի քանի անգամ ավել եմ առել իշևանիս համար։

— Դու նրա միջոցով կապ ես պահպանել հայ ֆիդայիների հետ։

— Անհավատալի բաներ եք ասում, փաշա։ Ո՞վ է այդ սուտ տեղեկությունը հաղորդել ձեզ։

— Դու դեռ շարունակո՞ւմ ես պաշտպանե՞լ հայերին, այն հայերին, որ մինարեթի գագաթից վայր գլորեցին Բերդի թաղի մոլլային և հրապարակում սպանեցին մեջլիսի դեպուտատ Աբդուլ էֆենդուն։

— Դա նույնպես ճիշտ չէ, փաշա։ Մոլլային սպանել է ոստիկանապետ Թալիպ էֆենդին։ Իզուր եք մեղքը հայերի վրա բարդում։

— Իսկ ո՞վ է սպանել ոստիկանապետին։

— Քրդական տարազ հագած մի հայ։ Թալիպ էֆենդին մզկիթի աշտարակից ուղիղ իմ ոտքերի մոտ ընկավ։ Ես ինքս էլ կարծում էի, թե մինարեթ բարձրացողը մոլլան է։ Նրա ոտքերին ընկնելով թախանձեցի որ ետ կանգնի այդ արյունոտ ազանից։ Բայց նա ոտքով կոխեց ինձ և համբիչը թևը ձգած բարձրացավ աշտարակ։ Երբ վայր ընկավ, նոր ճանաչեցի, որ դա իսկական մոլլան չէր, այլ ինքը ոստիկանապետ Թալիպ էֆենդին։ Ամենքն էլ տեսան, որ նա ծպտված է Բերդի թաղի մոլլայի համազգեստով։ Գլխին սպիտակ չալմա կար։

— Բայց ինչո՞ւ մոլլան պետք է հրաժարվեր սրբազան ազանից։

— Որովհետև նա համակրում էր քաղաքի հայերին։ Նրա կինը նույնիսկ բաղնիք էր գնում հայ կանանց հետ և Թելո Մեսրոպից ավել էր առնում մզկիթը մաքրելու համար։ Հավանորեն նրան վախեցրել է նաև Ալիզոնան գյուղի անունը։

— Դու, երևում է, լավ ես իմանում հայոց պատմությունը,— հեգնեց գավառապետը։

— Գիտեմ նաև օսմանյան փաշաների և սուլթանների պատմությունը։ Դեռ երբեք այսպիսի անամոթ բան չի եղել մեր ազգի պատմության մեջ։ Երբ Թալիպ էֆենդին մինարեթից վայր ընկավ, երկու-երեք թյուրք վաճառական մոտենալով արագորեն փախցրին նրան, իսկ տեղը դրեցին սպանված մոլլային, որ մահմեդական ամբոխին գրգռեն հայերի դեմ։

— Լռի՛ր, դավաճան թյուրք, ես նկատում եմ, որ դու համառորեն դեմ ես հայկական կոտորածին։ Դու ինձ հիշեցնում ես Զեքերիա ոստիկանին, որ իր համախոհներով հայերի կողմը անցավ և Սասունի ընդհարումների ժամանակ կռվեց մեր զորքերի դեմ։ Բայց, իմացիր, բեյ, մենք՝ Երիտասարդ թյուրքերս, անդառնալի երդում ենք տված՝ ինչ գնով էլ լինի բնաջնջել հայ ժողովրդին։ Ոչ Վանի, ոչ Բիթլիսի և ոչ էլ Էրզրումի մեջ չպետք է հայ ազգություն մնա։

— Գերմանիան համաձա՞յն է այդ ծրագրին։

— Հրամանը վերևից է եկել։ Հայերի կոտորածի և տարագրության գործը լրիվ համաձայնեցված է Վիլհելմ կայսեր հետ։ Նա ինքն է հրահանգ տվել հայերին գաղթեցնել Միջագետքի անապատները։

— Իսկ Անգլիա՞ն։

— Նա նույնպես այդ հարցում չի կամենա մերժել մեր խնդիրը։

— Ֆրանսիա՞ն։

— Նույնպես և Ֆրանկը։

— Ամերիկան կարող է խոչընդոտ հանդիսանալ։

— Երբեք չի հանդիսանա։ Կոտորածից հետո նա ամենաշատը կարող է նոր որբանոցներ բանալ Հայաստանում։ Բայց չկարծես, թե Երիտասարդ թյուրքերը միայն հայերին կոտորելով պիտի բավականան։ Նրանցից հետո մենք մյուս ցեղերի՝ մանավանդ արաբների հաշիվը պիտի մաքրենք, նաև հույների, եթե նրանք հանդգնեն պատերազմի մեջ մտնել մեր դեմ։ Հրամանի մեջ ասված է. ամեն թյուրք որ կօգնի հայերին, իր դռան առաջ պետք է սպանվի և տունը հրկիզվի։

— Սպանե՛ք ինձ, փաշա, ես դեմ եմ այդ կոտորածին,— վճռաբար հայտարարեց Մուստաֆան։

— Ես իրավունք ունեմ քեզ տեղն ու տեղը ոչնչացնելու, բայց

պետք է կենդանի թողնեմ, որ ապրես և տեսնես ամբողջ Արևմտյան Հայաստանը բռնագրավված մեր կողմից։ Ինձ լուր է հասել, որ քո քարվանսարայի մեջ թաքնված հայեր կան։

— Իմ պահածները միայն կանայք և երեխաներ են, ամենքն էլ իմ ծանոթ արհեստավորների որբացած ընտանիքներից։

— Իսկ ո՞ւր է թաքնված Պնտխցի Մանուկը, այն ապստամբ դյավուրը, որ Արջգլոր բարձրանալով սպանել է մեր թնդանոթաձգին։ Նա է եղել պատճառը, որ Գոմսա Մելիքի և Զուլոմաթ Սըմբատի ողջ մնացած ֆիդայիները, մեր զորաշղթան ճեղքելով, Սաչկի դուրանով սլացել են դեպի Սասուն։

— Իմ քարվանսարայում կա մի վիրավոր գյուղացի, որ ամբողջ գիշերը ցավից տնքում էր։ Ես իմ մարդկանց ուղարկել էի Մատնիք Եղիշեի, նրա կնոջ և որդու դիակները որոնելու, նրանց փոխարեն նրանք գտել են այդ ջախջախված գյուղացուն և գիշերով փախցրել են այստեղ։

— Դա հենց ինքը Պնտխցի Մանուկն է։

— Նա մահամերձ է, փաշա։

— Կարգադրում եմ զինաթափ անել նրան և բերել այստեղ, այլապես քո քարվանսարան մոխրակույտի կվերածեմ։

— Այդ ձեր արհեստն է։ Դուք մեր ժողովրդին սովորեցրիք այրելու և ոչնչացնելու հրեշավոր գործը։ Իզուր չէ, որ այս քաղաքում երբ նոր տուն են շինում, միշտ լսվում է հայ բանվորի մուրճի հարվածը, իսկ երբ մի շինություն քանդել կամենան, թյուրք գործավորը անպատճառ կանգնած է իր ավերիչ քլունգով։

Այդ խոսակցության միջոցին դուռը ներսի կողմից բացվեց և մի վիրավոր գլխաբաց ծերունի, որ հազիվ էր ոտքի վրա կանգնում, հայտնվեց գավառապետի առաջ։

— Ինչպե՞ս է ձեր անունը,— հարցրեց փաշան։

— Պնտխցի Մանուկ։

— Ես ձեր գյուղում չեմ եղել, բայց ձեր մասին լսել եմ։

— Մենք էլ ձեր մասին շատ ենք լսել, փաշա։ Երբեմն Մուշից գալիս էիք Խաչգյուղ Գուրսե Սլոյի տունը թուղթ խաղալու և նարգիլե քաշելու։

— Կանչեցեք այստեղ բալաքցի Մուսաբեկին,— կարգադրեց գավառապետը։

Մուսան անմիջապես ներկայացավ։

— Ճանաչո՞ւմ ես այս գյուղացուն, բեկ,— հարցրեց Շեֆքեթը։

— Խիստ ծերացած է երևում։

— Պնտխցի Մանուկն է։

— Ես նրա ամբողջ ընտանիքը սրի եմ քաշել, փաշա, իսկ ինքը փախել էր Բռնաշեն՝ Ավեսի հաջու մոտ։ Կարգադրել էի Սլո օնբաշուն և քուրդ ցեղապետ Ֆերրոյին, որ վերջ դնեն նրա կյանքին Արինոքի երկու քրդերի ձեռքով, բայց, ինչպես երևում է, ալլահը կամեցել է, որ նա մեր ձեռքով մեռնի։

— Լսիր, Մանուկ էֆենդի,— նրան դիմելով խոսեց փաշան։— Մշո դաշտը և ամբողջ քաղաքը մաքրված է հայերից։ Վերջին զոհը դու պետք է լինես։ Բայց այս երախտագետ թյուրքը կամեցել է երկարացնել քո կյանքը։

— Ես այդ ազնիվ մարդուն չեմ ճանաչում, և ինքս էլ չգիտեմ, թե ով է ինձ փոխադրել նրա քարվանսարան։ Միայն այն եմ հիշում, որ Արջգլորի ապառաժներից վայր գլորվեցի։

— Մուստաֆա, հրամայում եմ, որ դու իմ ներկայությամբ սպանես այս գյավուրին,— կարգադրեց փաշան։

— Երբեք չկարծեք, թե Մուստաֆան կարող է իր ձեռքը ներկել հայի արյունով։ Կուզեի մի բարձր, շատ բարձր մինարեթ լիներ, որ իմ ձայնը մինչև Պոլիս հասներ։ Ա՜խ, ե՞րբ պիտի շան սատակ լինեք, դուք եռագլուխ Դևեր փաշա և արյունարբու Սուլթան Բեշատ։ Ո՞վ հազարավոր անմեղ մորթված և սպանված հայեր, Մուշ քաղաքի և Մշո դաշտի հազարավոր զոհեր, ներեցե՛ք, որ ես թյուրք եմ ծնվել։ Ես սիրում եմ իմ ազգը, բայց ամաչում եմ այժմ այդ անունից։ Սպանեք ինձ, կոխկրտեցեք իմ նզովյալ դին և շպրտեցեք այս գորշացած ջրերի մեջ։— Մուստաֆան երկու ձեռքով կատաղորեն պատառոտեց իր հագուստը և կուրծքը մերկացնելով ծունկի իջավ Պնտխցի Մանուկի առաջ։

— Վե՛ր կաց, Մուստաֆա, դու իրավունք ունես ապրելու,— ասաց Մանուկը նրա թևից քաշելով։

— Իրավունք չունեմ։ Ես ամաչում եմ այժմ հայերի աչքի մեջ նայել։

— Էլ աչքեր չկան, որ այս ոճրագործ փաշաների ամոթը տեսնեն։ Դու կին ունես, երեխաներ ունես, Մուստաֆա։ Դատարկ է Մուշը հիմա։ Գնացեք ապրեք Ջորաթաղում։ Վերին թաղն էլ դա-

տարկ է։ Էլ մարդ չկա, ձեր տեղը լայնացավ։ Առաջ մի քանի թաղ ունեիք, հիմա բոլոր թաղերը ձերն են։ Մեր լեռները ձեզ արոտավայր կդարձնեք։ Չէ՞ որ ձեր հողը քիչ է...

— Մի՞թե կարծում ես, որ ես կապրեմ հայերից ամայացած այս քաղաքում։ Ղուրանն է, ղուրանն է մեր ազգի թշվառության պատճառը և այս մզկիթն ու մինարեն։ Ախ, ե՞րբ պիտի ստեղծվի նոր և արդարացի Թյուրքիան,— զայրույթից կուրծքը ծեծելով բացագանչեց Մուստաֆան և երերուն քայլերով հեռացավ։ Նրա աչքերը դուրս էին ընկած ակնակապիճներից, նա գրեթե խելագարվել էր։

— Ապա ուղիղ կանգնիր, Մանուկ էֆենդի։ Ինձ էր հանձնարարված Դաշտի գյուղերի կոտորածը։ Հրամանը կատարված է։ Վերջին գնդակը փաշայի ներկայությամբ քո կրծքի մեջ պիտի դատարկեմ։

— Անգեն և վիրավոր մարդուն սպանելը քաջություն չէ, բեկ։ Բայց ինձ սպանելուց առաջ՝ լսիր իմ վերջին խոսքը։

— Խոսի՛ր, Մանուկ էֆենդի։

— Մեզ կոտորելուց հետո թյուրքերը ձեզ կկոտորեն։

— Այդպես էր ասում նաև Գևորգ Չաուշը։ Նա վերջին անգամ ինձ տեսնելով՝ ասաց. «Դու մոլորված ես, Մուսա։ Հայրդ՝ Միրզաբեկը բարեկամ էր հայերի հետ։ Մի՛ շեղվիր նրա ճանապարհից։ Օսմանցու հոգին դարբինն է ծեծել։ Կգա ժամանակ, որ վա՜յ կտաս քո գլխին, բայց արդեն ուշ կլինի»։

— Նա ճիշտ է ասել։

— Բայց մի՛ հավատա այդ խոսքին, գյավուր։ Թյուրք փաշաները երբեք քրդերի վրա ձեռք չեն բարձրացնի։

— Ես ողջ չեմ լինի, բայց դու իմ խոսքը հիշիր, Մուսաբեկ,— ասաց Պնտխցի Մանուկը և ոտքի մոտից մի դեղին ծաղիկ արագությամբ պոկելով և դեպի բերանը տանելով՝ գոչեց.

— Կրակի՛ր, շուն, ես մեռնում եմ Մուշը ոտքիս տակ, Սասունն աչքիս դեմ։

Մինչդեռ բալաքցի ավազակապետի զենքը կուղղվեր նրա կրծքին, Պնտխցի Մանուկը հնձված ցողունի պես ծալվեց, ներքև ընկավ քարվանսարայի դռանը։ Բեկի ուշացած գնդակը նրա դիակի միջով անցավ։

— Նա թույն ընդունեց ծաղկի առէջներից,— բացագանչեց

փաշան, այդ տարօրինակ անկումը տեսնելով։— Ի՞նչ համառ են այս դաշտեցի գյուղացիք, բոլորը մեզ դիմադրում են մինչև վերջին շունչը։

— Այս ծերունին ծաղկի թույնը գերադասեց քրդի գնդակից,— շշնջաց Մուսան և ամոթից գլուխը կախեց։

ԱՆԴՈԿԻ ԱՆԿՈՒՄԸ

Տալվորիկցի դարբին Զենոբը Մուշ քաղաքի և Դաշտի կոտորածի սարսափելի բոթն առավ Անդոկ լեռան վրա։ Վերջին լուրը, որ հասել էր նրա ականջին, Պնտխցի Մանուկի եղերական մահվան տխուր պատմությունն էր՝ ծաղկի թույնով։

Զենոբի ձեռքի տակ համախմբվել էին Սասնո բոլոր գավառակների հայրենասեր քաջերը՝ գլխավորապես Տալվորիկ, Իշխանձոր, Գելիեգուզան, Շենիկ և Սեմալ գյուղերից։ Առաջին շարքում կանգնած էին ջրաղացպան Թամոն, ընկուզնակցի մշակ Կիրակոսը, սնըղչի Գրքոն, Թաղվեցի Գասպարը և սրա որդի Պետրոսը, որ մի ահագին տղամարդ էր դարձել։ Մոտկանից եկել էր Բոլոճ Մկրոն։ Սիմ լեռան ստորոտից դեպի Անդոկ էին փութացել Սեմալցի Թաթոն և Գութան Հարությը՝ դարբին Զենոբի քլունգ մաքրողները։ Վերջինս եկել էր իր երեք եղբայրներով։ Ներկա էր նաև Զորերու Երվանդ կոչվող մի պատանի, որ Մուշ քաղաքում նահատակված Կայծակ Պետոյի և Կայծակ Սեթոյի կրտսեր եղբայրն էր։

Այդտեղ էին նմանապես Գոմսա Մելիքի և Զուլոմաթ Սմբատի վրիժառուների վերջին բեկորները։ Վերջապես այդտեղ էին Թելո Մեսրոպը և Փղորկվա Կարոն, որ Սաչկի դուրանով սլացել էին դեպի Սասուն։

Տաշո կամուրջից անցնելու ժամանակ Թելոն վիրավորվել էր ձախ ոտքից։ Ոսոխի գնդակը կողքից սուրալով ճեղքել էր նրա բթամատը։ Թելոն Փղորկվա Կարոյի օգնությամբ կապել էր վերքը և կաղալով հասել էր Անդոկ։

Մուշի անկումից հետո, հուլիսի տասնհինգին, ցարական զորքի առաջապահ զորամասերը, որ կանգնած էին Նեմրութ սարի ետև, իջել էին Մշո դաշտ և մեկ օր հետո, հուլիսի տասնվեցին հանկարծակի ետ էին նահանջել։ Օգտվելով այդ խորհրդավոր նահանջից, Երիտասարդ Թյուրքիան իր բոլոր ուժերը շպրտել էր Սասունի վրա։

Ոտքի էր կանգնել նաև քրդա-բեկական ավերիչ խուժանը։

Արևմուտքից հարձակվել էին Խուլփ գավառակի և Դիարբեքիրի շրջանի քրդական աշիրեթները՝ Հյուսեին և Հասան ցեղապետների գլխավորությամբ։ Հարավից օգնության էր շտապել Խանքի աշիրեթապետ Սլեման աղան (Քոռ Սլոն)։ Մոտկանի կողմից եկել էր Շաբաթ աղան, որ վառել էր Խոդեդանի հայրենական տունը։ Խութից եկել էր Ռաբաթի մուդուրը՝ ջորին նստած։

Մուսաբեկը, մի քանի հազար քրդերի գլուխ անցած, Ծովասարի արևմտյան կողմերով խուժել էր Սասուն և մոտենում էր Գելիեգուզան գյուղին, որ գավառի կենտրոնն էր։ Այդ ամբոխի մեջ էր նաև Ջատոյի հորեղբայր Խասոն։

Դարբին Ջենոբը, իր ահարկու քլունգը ուսին դրած, դիրքից դիրք անցնելով խրախուսում էր հայ շինականներին։

— Քաջ-քաջ կռվեցեք։ Եթե մեռնել է պետք՝ պատվով մեռնենք մեր սարերի վրա։

Երեք ամսից ավելի էր, որ Սասունը դիմադրում էր։ Վերջին օրերին ամբողջ հայ բնակչությունը, թվով հիսուն հազար հոգի, հավաքվել էր Անդոկ և Կեպին լեռների միջնահովտում։

Ընկնում է ամուսինը, կինը վերցնում է հրացանը և կրակում։ Ընկնում է հայրը, որդին ծունկի է իջնում նրա դիակի մոտ և կրակում։ Ընկնում է նշանածը, հարսնացուն համբուրում է նրա սուրը և շեշտակի խոյանում առաջ։ Ծունկ ծնկի, մեջք մեջքի և ձեռք ձեռքի զարկելով կռվում են հայոց լեռնական քաջազունները։

Ահա մի կին, որ գնդակների տարափի տակ դեպի դիրքերն է վազում՝ քաջալերելով մարտնչողներին.

— Փամփուշտդ պրծա՞վ, թշնամին շատ ունի, հասիր ու բեր։— Այդ դարբին Ջենոբի կինն է՝ Սոսեն։ Ահա մի անվեհեր հարս, որ կարմիր գլխաշորը օդում ծածանելով և սևաթույր գիսակները քամուն տված, սուրում է բլուրն ի վեր՝ գոռալով.— ում համար թանկ է Սասունը, թող իմ ետևից գա։ Փամփուշտ չունենք, բայց քարեր, փայտեր շատ ունենք։ Ապառաժներով փշրենք թշնամու գլուխը, եղունգներով փորենք նրա աչքերը, ատամներով բզկտենք նրա կոկորդը։

Այդ դարբին Ջենոբի հարսն է՝ Շուշանը։

Ահա մի երիտասարդ հաղթանդամ կին, որ սև ասկյարներին մեկ-մեկ գրկելով բարձրացնում է վեր և քարաժայռի վրայից

շպրտում է անդունդ։ Այդ Գյուլեն է, այն քաջաղնական գեղջկուհին, որ հրդեհի միջից փրկել էր Աստուրի հարսանեկան սնդուկը։

— Տղա Մկրո՜, մեկ-երկու հատ սև բոլոռ էլ դո՛ւ գլորիր ցած,— գոռում էր Գյուլեն իր ծանրամարմին ամուսնու ուսերը ծեծելով։

Թաղվեցի Գասպարը ձեռքի սուր եղանը խրեց մուդուրի մեջկապը, ջորու վրայից վերցրեց նրան, բարձրացրեց բերեց աչքերի դեմ և թքեց երեսին՝ ասելով. «Էդ դո՞ւ էիր ինձ ուզում ճխտել բուխարիկի ծակը և ողջ-ողջ վառել, քո ետևից վերմակ ու բարձ չբերելու համար։ Անդոկի ջրերի մեջ շատ սպիտակ բարձեր կան, գնա գլուխդ դիր նրանց վրա ու հանգստացիր,— ասաց լեռնցին և ճիվաղին գլխի վրայով շուռ տվեց անդունդ։

Ժայռի վրա թառել էր Ախուպի Խասոն՝ կեռ կտուցով, քոլոզը ղլխին, կարծես թե կաչաղակի ծիրտ լիներ։ Աչքերը տրոփում էին ցամաքած ակունքից նայող դոդոշների պես։

— Իսկ դու, Ծովասարի կոկռան գորտ, երբ մի փոքրիկ նախիր էր մտնում արտերիդ մեջ, դու և Զատոն մեր գլուխը տանում էիք բոռալով։ Ապա ինչքա՜ն բարձր պիտի գոռանք մենք, որ ձեզպես վայրենի մի նախիր թափվել է Սասուն և տրորում է մեր բոլոր ցանքսերը, ավերում է մեր տունն ու այգին։

Եղանը դեռ չէր խրվել նրա կոկորդը, երբ մի գնդակ անվեհեր սարվորին ցած տապալեց։ Թաղվեցի Պետրոսը խոնարհվեց հոր դիակի վրա և կրակեց։ Խասոն անծեղի նման ծվաց ու գլորվեց քարաժայռից։

Թաղվեցի Գասպարի կողքին ընկավ ընկուզնակցի մշակ Կիրակոսը։ Անօրինակ քաջությամբ կռվում են գոթան Հարութն իր երեք եղբայրներով, սեմալցի Թաթոն և Ջորերու Երվանդը։

Հերոսաբար մարտնչում են Գոմսա Մելիքի և Զուլումաթ Սըմբատի վրիժառուները։ Ոտքերը քշտած և թևերն ուժգին տարուբերելով թիակով անվրեպ հարվածում է ջրվոր Վարդանը՝ մեկ սրա գլխին, մեկ նրա գլխին։

Վարդանն ընկավ։

Քաջ-քաջ կռվում են Մտքամոլոր Առաքելն ու Ընկնավոր Մանոն։ Նրանք էլ նահատակվեցին։ Զուլումաթ Սմբատը շեշտակի գընդակով սպանեց Ցարխինի աշիրեթապետ Սլեման աղային և ինքն էլ վիրավոր զարկվեց Գոմսա Մելիքի ոտքերի մոտ։

Մի գորշ, վիթխարի քարաժայռ ահեղ դղրդալով սլացավ անդունդ։ Այդ ջրաղացպան Թամոն էր, որ Գրքոյի հետ Անդոկի գագաթից ներքև էր գլորում մեծ-մեծ սալաքարեր։ Յուրաքանչյուր ընկնող քար բեկորների բաժանվելով և հարյուրավոր ուրիշ վիրդեր իր ընթացքի հետ վարելով, տասնյակ հարյուրավոր զորք ու ճշիրեթ է սպանում։ Իսկ թշնամին ալիք առ ալիք մագլցում է դեպի Անդոկի և Ամպոնի լեռան գիրքերը։ Հրանոթների և հազարավոր հրացանների խլացուցիչ որոտով սև հրեշը թավալվում է վեր։

Մեկ-մեկ ընկնում են Սասունի քաջերը անմահությամբ ու փառքով պսակելով իրենց անունը և հիշատակը։ Ընկնում են նրանք «փամփո՜ւշտ», «փամփո՜ւշտ» աղաղակելով, ականջները ռուսական բանակների և հայ կամավորների ոտնաձայնին պահած, աչքերը հառած ազատագրվող Հայաստանի նվիրական երազին։

Թամոն դադար առավ։ Անդոկից դեպի հարավ-արևելք երևաց Ծովասարը։ Այնտեղ էին Դավթի Բերդն ու ջրաղացը։ Ինչ որ կար՝ բոլո՜ր, բոլորը այնտեղ էր։ Մի մեծամարմին ծերացած այծ մոտեցավ և սկսեց լիզել Թամոյի ձեռքը։ Այդ այն սպիտակ ուլն էր, որ Ստեփանը Բռնաշենից տարել էր Ճախրական և արձակել Դավթի վայրենացած այծերի մեջ։

— Էս մեկն էլ գլորենք, Գրքո,— ասաց ծերունին և ձեռքով այծի լուսափայլ ճակատը հրելով, ինչպես երազում, և ուսերը դեմ տալով մի վիթխարի որձաքարի, շուռ է տալիս ցած։

Մի՞թե իրավ դու պիտի մեռնես, Սասուն։ Ոչ ոք, ոչ ոք չկարողացավ ընկճել քո ազատասեր ու հպարտ հոգին։ Հազարավոր տարիներ դու, ամեն անգամ դյուցազնական դիմադրությամբ, ի դեր հանեցիր թշնամիներիդ վայրենական ցանկությունները և հայածեցիր նրանց քո սահմանից հեռու։ Տարոնի դաշտը և քո բոլոր սարերը ծածկված են հերոս որդիներիդ անթառամ շիրիմներով։ Քո անունը սրբազան գրերով է գրոշմված մեր աշխարհի պատմության մեջ և մեր ժողովրդի սրտում։ Քո լեռների միջից դուրս եկան մեր ռազմի և գեղեցկության բոլոր աստվածները և քո Կաթնաղբյուրի փրփուրներից ելավ մեր Քուռկիկ Ջալալին։ Իսկ այժմ մի՞թե հոգեվարքի մեջ ես, մի՞թե պիտի հատնես դու, ո՜վ նվիրական Սասուն։

1915 թվականի հուլիս ամսի քսանմեկն էր։ Վերջին ահավոր և օրհասական մարտն էր գնում Սասունի համար։ Անդոկի կողերին զարկելով և զարկվելով կռվում են Սասունի վերջին քաջերը՝ Դարբին Զենոբը, Գոմսա Մելիքը, Սեմալցի Թաթոն, Գութան Հարութը, Զորերու Երվանդը, Փղորկվա Կարոն, Թելո Մեսրոպը և շատ ուրիշ հերոսներ։

Անսպասելի հայտնվելով մարտի մեջ են մտել Խոդեդանը և Շինական Պողոսը։

Արդեն ընկել են թշնամու բազմաթիվ ցեղապետներ։ Ծանր վիրավորված է Մոտկանի Շաբաթ աղան։

Դարբին Զենոբը խոյացավ և իր ահագին քլունգը թափով իջեցրեց քուրդ աշիրեթապետ Հուսեին բեկի գլխին։ Նրա ետևից Գոմսա Մելիքի մի ամեհի հարվածից ցած տապալվեց ցեղապետ Հասան աղան։

Արևն իր վերջին ճառագայթները հավաքեց Մարութա լեռան, Կեպինի և Անդոկի գագաթներից։ Սասունն ընկղմվեց խավարի մեջ։

Անդոկի անկումից հետո մարդկային այդ ահագին զանգվածը բաժանվեց հատվածների և յուրաքանչյուր հատվածը ճակատագրի մի անողոք հարվածով շարժվեց առաջ։

Դրանցից մեկը, Խոդեդանի և Շինական Պողոսի առաջնորդությամբ, դիմեց դեպի Բռնաշեն։ Երկրորդ խմբին ուղեկցող դարձան Գոմսա Մելիքը, Թելո Մեսրոպը և Փղորկվա Կարոն, իսկ տալվորիկցիների մի մեծ խումբ դարբին Զենոբի գլխավորությամբ իջավ դեպի Ֆոֆրու քարը։ Այդ խմբի մեջ էին ջրաղացպան Թամոն, անբոչի Գրքոն, Սեմալցի Թաթոն, Զորերու Երվանդը, Գութան Հարութն իր երեք եղբայրներով և Թաղվեցի Պետրոսը։

Ճանապարհին Զենոբը վիրավորվեց։ Ընկերները վերցրին նրա մարմինը և մոտակա քարայրը տարան, որ գտնվում էր Սատանի կամուրջի դիմաց։

Մոտ հինգ հարյուր սև ասկյար և քուրդ աշիրեթապետներ պաշարեցին Զենոբի քարայրը։ Երեք օր շարունակ այդ մի բուռ քաջերը դիմադրեցին դրսից հարձակվող հակառակորդին։ Նրանք այդ միևնույն քարայրի մեջ թաղեցին Սասնո լեգենդար դարբին Զենոբին իր կնոջ հետ և լուսադեմին նրա որդու՝ Կրտսեր Զենոբի առաջնորդությամբ, ճեղքելով թշնամու պատնեշը, ճանապարհ ընկան դեպի Մուշ։

ՈՍԿՈՎ ԼԻ ԿՃՈՒՃԸ

1916 թվականի փետրվար ամսի մի ձյունապատ գիշեր թյուրքական ասկյարը և քուրդ ցեղապետները, Մուսաբեկի և Խամբեկի գլխավորությամբ, պաշարեցին Խութ-Բոնաշենի գյուղերը։ Այդ Սասնո միակ գավառակն էր, որ շեկոների դիմադրության շնորհիվ զերծ էր մնացել կոտորածից։

Արինոքը նույնպես պաշարված էր։ Ամեն խրճիթի դռանը երկու, իսկ ամեն երդիկի վրա մեկ զինված ասկյար էր կանգնած։

Ասատուրի երդիկի վրա կանգնել էր մի հրացանավոր թյուրք և դիտում էր թե ինչ է կատարվում ներսում։ Դռանը հսկում էին մի ասկյար և մի բաշիբոզուկ։

Այդ օրը Խոդեդանը ուշ էր քնել։ Նա կերակրել էր Հաջու ոչխարը, Ստեփանի հետ մաքրել էր նրա տանիքների ձյունը և ուշ գիշերով վերադարձել էր գյուղ։ Ճռիկները սկսել էին իրենց համերգը առաստաղի գերանների վրա, երբ Ասատուրը, առանց հանվելու, անկողին մտավ։ Դաշտերում երկար ժամանակ լսվում էր իր ահարկու շների հաչոցը։

Լուսադեմին նրանց տանիքը ցնցվեց և սառած ձյունի մի հաստ կտոր, երդիկից պոկվելով, ընկավ թոնրի մեջ։

— Կնիկ, երդիկից մարդ է նայում,— ասաց Խոդեդանը, անկողնուց վեր թռչելով։

Բայազը և Հեղինեն զարթնեցին և ահաբեկված նստեցին անկողնու մեջ՝ երեսները խաչակնքելով։

— Ո՞վ է տանիքի վրա,— գոչեց Ասատուրը ներքևից։

— Ես եմ,— լսելի եղավ ասկյարի պատասխանը վերևից։ Այդ ձայնի վրա մի հրացանափող երդիկից ներքև երկարեց։

— Ո՞վ է մեր մուլլային մինարեթի գլխից ցած գլորել։

— Ո՞ր մինարեթի։

— Ալադին բեյի։

— Չգիտեմ,— կարճ կապեց Խոդեդանը։

— Մի՞թե չես լսել, որ քրդի տարազ հագած մի գյավուր սպանել է Մուշի ոստիկանապետ Թալիպ էֆենդուն։

— Թալիպ էֆենդին մուլլա՞ է,— հարցրեց Ասատուրը ներքևից։

— Ոստիկանապետը ինչպե՞ս կարող է մոլլա լինել,— բարկացավ դահիճը վերևից։

— Ապա ի՞նչ գործ ուներ մինարայի գլխին։

— Ինչպես երևում է, այդ դու ես նրան վար գլորել աշտարակից։

— Դուք մի ամբողջ ազգ սպանեցիք, էֆենդի, մի մոլլան ի՞նչ է, որ նրա համար դարդ եք անում։ Թալիպ էֆենդու պես կեղծ մոլլային պատիվ է ցած գլորել մինարայի գլխից։ Նա իրավունք չուներ պղծելու ալլահի տաճարը։

— Ուրեմն դու ճանաչո՞ւմ էիր մեր ոստիկանապետին։

— Այդ մարդը կաշառակեր մի սրիկա էր, ես ինքս եմ նրա բռի մեջ յոթ ոսկեդրամ դրել։

Հեղինեն բարձրաձայն լաց եղավ։ Նույն պահին նրանց խրճիթի դուռը տապալվեց, և շեմքին հսկող զինվորները կեռ դաշույններով ներս խուժեցին։

— Հա՞յ, եք։

— Հայ ենք,— պատասխանեց Խոդեդանը հաստատորեն։ Բայազը և Հեղինեն իրենց երեսները վերստին խաչակնքեցին։

— Թե որ հայ եք, առաջ ընկեք գնանք,— հրամայեց ասկյարը, կեռ դաշույնը շողացնելով։

— Ո՞ւր եք տանում մեզ։

— Արինոքի ձորը։

— Տանում ենք ընկույզ թափ տալու,— խորամանկ ժպիտով ավելացրեց երկրորդ զինվորը։

Ասատուրը հասկացավ ահավոր ոճիրը։ Նրանց տանում էին Արինոքի ձորում սպանելու։ Հարազա՞տ հովիտ։ Քանի՞ տարի շարունակ Խոդեդանը և Տոնեն ընկույզ էին թափ տվել այդ ձորի մեջ, իսկ այժմ նրանց առաջնորդում էին այդ միևնույն ծառերի տակ սպանելու։

— Հագնվե՛ք,— հրամայեց առաջին ասկյարը։

Բայազը և Հեղինեն, ամոթից և սարսափից դողալով, սկսեցին հագնվել։ Ասատուրը, որ անվրդով կանգնած էր, համարձակություն ունեցավ հարցնելու։

— Ո՞վ է ձեզ իրավունք տվել իմ խրճիթի դուռը ջարդել գիշերով։ Չէ՞ որ ես Հաջի աղայի հովիվն եմ։

— Անունդ ի՞նչ է։

— Խոդեդան։

— Խրճիթի մասին մի մտածիր։ Ավելի լավ կլինի ասես, թե ո՞ր կճուճի մեջ ես պահել ոսկին։ Երևում է՝ շատ ոսկի ունես։

— Ունեմ,— պատասխանեց հովիվը։

— Որտե՞ղ ես պահել, շուտ հանիր։

— Ա՜յ, էն կճուճի մեջ,— ասաց Ասատուրը, դառն ժպիտով մատնացույց անելով պատի տակ դրված և հնամաշ կարպետով ծածկված կավյա գեղեցիկ խեցին։

Մարդասպաններն իրար հրելով վազեցին դեպի մատնանշված կճուճը։ Կարպետը ետ տարան, և, ամանը բոլորովին դատարկ տեսնելով, սաստիկ զայրացան։

— Դու մեզ խաբեցիր, գյավո՛ւր,— որոտաց դահիճներից մեկը։

— Խաբեցի՞։— Եվ Խոդեդանը նրանց արնակալած աչքերի մեջ նայելով թուրքերեն ասաց հետևյալը.— դուք խավար գիշերով մտաք իմ տուն։ Եթե լուսով գայիք, կտեսնեիք անարատ ոսկին, որով լիքն է իմ կճուճը։ Ուզո՞ւմ եք ձեզ ցույց տամ իմ ոսկին։

— Ցույց տուր,— պահանջեցին ասկյարները։

— Ահա ոսկին,— պատասխանեց հովիվը, մատնացույց անելով Բայազի և Հեղինեի վրա։— Սա իմ հարսանիքի կճուճն է, որ ինձ կապեց էս սիրուն կնոջ հետ։ Մենք կազմեցինք ընտանիք։ Մենք հարսանիք արինք էս տնակի մեջ։ Ոսկին՝ դա իմ անշուք խրճիթն է, որի դուռը դուք ջարդեցիք։ Էս գերաններն են, էս ճռիկներն են, էս խաղաղ քարափն է Սև սարի վրա։

— Շո՛ւտ արա, գյավո՛ւր, ոսկի տուր մեզ, այն ոսկիներից, որ տվել ես Թալիպ էֆենդուն։

Ասատուրի աչքը դիպավ իր թոնրին, որ Ոսկեհատն էր շինել։ Հիշեց քավոր Տոնեի խաղերը հայրենի օջախի շուրջը։ Հիշեց ամայացած Մուշն ու Սասունը և իր անմեղ զոհված երեխաներին։ Ահա խաչերկաթը, որի վրա Ոսկեհատը իր հարսանիքի ճաշն էր եփել։ Ահա այն ակիշը, որով տանտիկինը թոնրից դուրս էր քաշել իր հարսանիքի տաք գաթաները։

— Ո՞ւմ տունն եք մտել,— որոտաց հովիվը, ծանր խաչերկաթը թոնրի վրայից արագությամբ վերցնելով և ուժգնորեն իջեցնելով առաջին պատահած դահճի գլխին։

Մարդասպանը փռվեց։

— Ահա ձեզ ոսկի,— գոռաց նա հաջորդ ուժգին հարվածը երկրորդ բաշիբոզուկի քունքին իջեցնելով։ Սա նույնպես տապալվեց։

Նույն միջոցին տանիքին ոտնաձայն լսվեց, որին անմիջապես հետևեց մի ծանր խոխոռոց։ Հրացանը, որի փողը ներս էր երկարած երդիկից, վերևից վայր ընկավ թոնրի մեջ։

— Իմ ետևից,— գոչեց կատաղած սասունցին, հրացանը վերցնելով և կապելով դաշույններից մեկը։ Բայազը նույնպես զինվեց։ Խոդեդանը հասկացավ, որ մեկը, ետևից գալով, դաշույնով սպանեց երդիկին հսկող ասկյարին։ Բայց թե ո՞վ էր այդ փրկարարը՝ հայտնի չէր։ Այդ մասին էր մտածում Ասատուրը, երբ վերևից մի կանչ լսվեց.

— Խոդեդա՛ն, ես եմ տանիքիդ։

— Դու ո՞վ ես։

— Շնկոն եմ, քու խաչեղբայրը։ Եվ լեռնական քոլոզավոր քուրդը, երդիկից կռանալով, վայր նայեց արյունոտ դաշույնը ձեռքում պահած։

Ասատուրը զարմանքից քարացել էր։

— Ես եկա քեզ օգնելու, Խոդեդան։ Ամբողջ գիշերը չեմ քնել։ Մոտկանի լեռներից վազել եմ Բռնաշեն, որ քեզ կոտորածից ազատեմ։

— Մարտե աղջիկ, մենք փրկված ենք, Շնկոն է երդիկին,— գոչեց Ասատուրը և զինված դուրս գալով, իր տանիքի վրա, համբուրեց հավատարիմ քրդի ճակատը։

— Շտապիր, Խոդեդան, Բռնաշենի հայերին տարել են կոտորելու։

— Ո՞րտեղ։

— Արինոքի գերեզմանատանը։

Հեռվում համազարկ լսվեց։

— Կոտորում են,— բացագանչեց լեռնցին տանիքից իջնելով։ Նրա ետևից պաղ ձյունների վրայով դեպի արևմուտք ընթացան Շնկոն, Բայազը և Հեղինեն։

Ահա և գերեզմանատունը։

Մոտ երկու տասնյակ սևազգեստ ասկյարներ հրացանները երկարած կրակում էին հայ անզեն և անպաշտպան բազմության վրա։ Այնտեղ էր Արինոքի, Դաշտադեմի և հարևան գյուղերի հայ

բնակչությունը։ Շինականների մեծ մասը տղամարդիկ էին, գըլխավորապես փորմշակներ և հոտաղներ։ Ոմանք կիսամերկ և շապկանց։ Այդ նշանակում էր, որ նրանց հանկարծակիի բերելով, դուրս էին քաշել անկողիններից, ժամանակ չտալով անգամ հագնվելու համար։ Ասատուրը ճանաչեց։ Այդտեղ էին այն բոլոր վառվռուն երեխաները, որ շամիչ էին հավաքել իր հարսանիքին և այն հրաշալի երիտասարդները, որ մինչև առավոտ գովանդ էին խաղացել իր խրճիթի առաջ։ Նրանց մեծ մասը արդեն կոտորվել էր։

Սասունցին ծունկի իջավ մի ժայռի ետև և սկսեց կրակել։ Դահիճները իրար ետևից վայր տապալվեցին։ Մնացյալները, խուճապահար, զենքերը շպրտեցին և պատրաստվեցին փախչել։ Խոդեդանը, Շնկոն և Բայազը մերկացնելով իրենց դաշույնները, ուժգին աղաղակներով նետվեցին թշնամու վրա։

— Առեք ձեզ ոսկով լի կճուճ,— գոռում էր Ասատուրը դաշույնը ուժգնությամբ մերթ մեկի, մերթ մյուսի կրծքի մեջ մխրճելով։

Սպառնական ու կատաղի էր դարձել նաև Բայազը։ Սև սարի արջերի հետ մաքառող այդ լեռնական գեղջկուհին, որ իր հետ վերցրել էր նաև իրենց խաչերկաթը, անվրեպ հարվածներով փշրում էր դահիճների գանգերը։

Մարդասպաններից ոչ մեկը չազատվեց։ Գերեզմանատունը ներկայացնում էր մի արյունոտ տեսարան։ Դիակները կուտակված էին ձյունների վրա։ Վիրավորներից ոմանք դեռ ծանր տնքոցներ էին արձակում։

Արեգակը պսպղում էր Բռնաշենի պաղ ձյունների վրա, երբ տասնչորս նորեկ ասկյարներ Խոդեդանին, Բայազին և Հեղինեին կապկապելով առաջնորդեցին դեպի Արինոքի ձորը։

Գյուղի միջով անցնելիս, Ասատուրը քրդերեն ասաց Շնկոյին.

— Ստեփանին ասա՝ շները արձակի։

Գյուղից բավական հեռացել էին, երբ տասը ամեհի շներ ուժգին հաչոցով սլացան դեպի հրացանավոր դահիճները։ Դրանք Խոդեդանի գելխեղդ շներն էին, որ գոմերից օգնության էին շտապում հավատարիմ տիրոջը։ Հասնելուն պես նրանցից ամեն մեկը մի հրացանավորի վայր տապալեց և սկսեց խեղդել։ Մյուս ասկյարները նկատելով վտանգը՝ կրակեցին։ Շները, մեկը մյուսի

ետևից, փռվեցին ձյունների վրա։ Միայն մեկը նրանցից պատահաբար կենդանի մնաց։ Այդ Սևասրն էր։ Ասատուրը նրան յուր մարմնով ծածկեց, աղերսելով, որ չսպանեն։

Այդ տագնապի և աղաղակի ծանր պահին հայտնվեց Ավեսի Հաջին։ Նա ոտքից գլուխ զինված էր։ Քուրդը իր շների անշունչ մարմինները տեսնելով, կատաղությունից խենչարը մերկացրեց։ Նա այդ շների համար Զաչան բեկին տվել էր հիսուն ոչխար։ Այդ նպատակով նա տարիներ առաջ Խոդեդանին ուղարկել էր Բուլանուխ։ Այժմ սառը ձյունի վրա փռվել էին ահարկու գազանները, իսկ իր հավատարիմ ծառան կապված էր։

— Ո՞վ սպանեց իմ շներին,— որոտաց Հաջին հարձակվելով առաջին զինված ասկյարի վրա։

— Ես սպանեցի,— պատասխանեց դահիճը։

— Իսկ ո՞ւր եք տանում սրան,— հարցրեց քուրդը, բռնելով Ասատուրի թևը։

— Տանում ենք սպանելու։

— Բաց թողեք սրան։ Սա իմ հովիվն է։ Երբ առաջին օրը նա իմ մոտ եկավ, ես պարտավորվեցի նրա կյանքը պաշտպանել վտանգներից։ Այս ասելով, Հաջին խենչարով քանդեց Խոդեդանի, նրա կնոջ և աղջկա կապանքները։

— Էլ ո՞վ սպանեց իմ շներին, ես իմ յուրաքանչյուր սպանված շան փոխարեն կրկնակի վրեժխնդիր կլինեմ,— գոչեց քուրդը։

— Ես սպանեցի,— պատասխանեց երկրորդ ասկյարը, հրացանի փողը նրա կրծքին ուղղելով։

— Չհամարձակվե՛ս,— որոտաց Հաջին։

— Մենք երեկ կոտորեցինք Մուշն ու Սասունը, այսօր կոտորում ենք Խութ-Բունաշենը և չենք խնայի կրակելու նաև մի հանդուգն քրդի կրծքին։

Այդ խոսքի վրա Ասատուրը ետևից բռունցքի մի ծանր հարված իջեցրեց մարդասպանի գլխին։ Հրացանը վայր ընկավ։ Հաջին մոտեցավ և իր կեռ դաշույնը մխրճեց նրա կուրծքը։ Դահիճը վայր գլորվեց և մի ակնթարթում անշնչացավ։

— Էլ ո՞վ սպանեց իմ շներին,— որոտաց կատաղած քուրդը, հրացանը գետնից վերցնելով։

Երկու ասկյարները իրենց ընկերների վախճանը տեսնելով՝

զենքերը սարսափից վայր նետեցին և ծունկի իջան Ավեսի Հաջու և նրա հովվի առաջ։

Բայազը և Հեղինեն աղատ շունչ քաշեցին։

— Ո՞ւր էիք տանում սրանց,— հարցրեց քուրդը։

— Արինոքի ձորը։

— Դե, գնանք այնտեղ ընկույզ թափ տալու,— հրամայեց քուրդը։

Երբ ձորաբերանին հասան, աղան կանգնեցրեց նրանց և անդունդը ցույց տալով ասաց.— ով քրդի շանը սպանի, շան պես պիտի սատկի։ Այն ձյունների տակ շատ ընկույզ կա։ Զմռռանաք մի քիչ էլ մեզ համար ժողովել...

Հրացանը որոտաց, և դահիճները անդունդ գլորվեցին։

Ավեսի Հաջին ձեռքը դնելով իր հովվի ուսին՝ ասաց.

— Ես փրկեցի իմ պատիվը, Խոդեդան, իմ տնտեսության պատիվը։ Մնաց այս մեկ շունը։ Պահիր նրան։ Նա դեռ պիտանի կլինի իմ խաշների համար։

— Կպահեմ, աղա,— ասաց Ասատուրը։

ԱՐԻՆՈՔԻ ՁՈՐՈՒՄ

Խոդեդանին և նրա ընտանիքին ազատելով չարդարարների ձեռքից, Ավեսի Հաջին հեծավ իր ձին և գնաց Հարևան գյուղերը՝ այնտեղի հայ բնակիչներին օգնելու։

Նասրի տանը նստած, Ասատուրը ընկղմված էր տխուր մտածությունների մեջ։ Նա լուր չուներ ոչ Տոնեի, ոչ Օնեի և ոչ էլ Քիշոյի կամ ատաղձագործ Հակոբի մասին։

Շնկոն արդեն գնացել էր։

Բայազին ու Հեղինեին թողնելով Սալվարդի և մյուս քուրդ կանանց խնամքին, Խոդեդանն անցավ սառած գետակը և սկսեց ելնել դեպի Օնեի տանձենիները։ Ձորում մի սարսափելի տեսարան ներկայացավ իր առաջ։ Անդունդի ժայռերից մեկի վրա Ասատուրը տեսավ Օնեի ջախջախված դիակը։ Ձույգ բազուկների վրա, ձյունների մեջ տարածված, պառկած էր իր հովիվ ընկերը, որի հետ նա կապված էր այնքա՜ն քաղցր ու դառն հիշատակներով։ Մեջքի բրդյա շալը քանդված էր, իսկ բեղը դարձյալ ոլորված էր վզի

նաև։ Ի՞նչ կարող էր պատահած լինել։ Հավանորեն նրան գլորել էին ձորը։ Իսկ Քիշո՞ն։ Խոդեդանը նայեց վերև։ Ահա և մի կնոջ մարմին։ Քիշոն էր։ Աստված իմ, ամբողջ ընտանիքը կոտորված էր։ Կատվաձորի մեջ, իր ամուսնուց ոչ հեռու, տարածված էր գեղեցկադեմ և թիկնեղ հայ գեղջկուհին։

Ասատուրը ծունկ իջավ Օնեի մոտ և գլուխը նրա մեջքին թեքած սկսեց դառնորեն արտասվել։

— Ինչո՞ւ քեզ սպանեցին, Օնե։ Ինչո՞ւ, դու ընկած ես էստեղ, ու չկա մեկը, որ քու մեջքը ծածկի։ Առաջին օրը, երբ ես Սև սար եկա, դու ասացիր, թե՝ ինչքան էլ ախ ու վախ անենք, մեր թլոլ Դավիթը էլ ետ չի դառնա։ Նրան Շմշրմ խանումի աղջիկը սպանեց եղեգների մեջ։ Ինչպե՞ս անենք, Օնե։ Ուրեմն թողնենք, որ Մսրա Մելիքը մեզ սրի քաշի՞ ու մեր ազգ ու տակը չնչի՞ աշխարհի երեսից։ Ինչո՞վ էիր մեղավոր դու։ Ինչո՞վ էր մեղավոր Քիշոն։ Ի՞նչու անխղճաբար սպանեցին ձեզ Սև սարի վրա։ Մի անգամ իմ մահակը մութի մեջ՝ սխալմամբ իջավ քու գլխին։ Դու մի ամբողջ տարի ինձ հետ խոռով մնացիր։ Ապա ինչպե՞ս անենք մենք, երբ Մսրա Մելիքը գիշեր ու ցերեկ մեր ազգի գլխին իր մզրախն ու կոպալն է զարկում։ Մեր մարմնի վրա էլ սաղ տեղ չմնաց։ Էլ ո՞ւմ հետ խոռվենք մենք, ո՞ւմ գանգատ գնանք, որի՞ առաջ մեր ուռած գլուխը բաց անենք։

Նա մոտեցավ Քիշոյին։ Ինչո՞ւ չես ծածկում Օնեի մեջքը, անխիղճ։ Չէ՞ որ դու ասում էիր, թե նա մրսկան է։ Խոռվածի պես պառկել ես իրարից հեռու, ամեն մեկդ տարբեր դիրքով։

Ոչի՞նչ, ոչի՞նչ չկարողացավ հիշել Խոդեդանը այդ վշտալի պահին։ Նրա աչքերի առաջ պատկերացավ միայն այն աստվածային առավոտը, երբ, Սև սար գնալիս, նա անցավ Օնեի տանձենիների տակով, և Քիշոն նրան մի աման թանջուր տվեց։ Ինչպիսի՞ ագահությամբ նա ըմպեց այդ լեռնական սառը ըմպելին և, թրջված ընչացքները սրբելով, ճակատը ուղղեց դեպի լեռներ։

Օնեի դեռ առաջ կատարվել էր մի սոսկալի ողբերգություն։ Հայ շինականը ընդդիմացել էր հարազատ օջախից դուրս գալ։ Ասկյարները սպանել էին նրան և գլորել ձորը։ Կատաղած Քիշոյի ձեռքն էր ընկել իրենց խոփը։ Նա դրանով փշրել էր մարդասպաններից երկուսի գանգը և, թշնամու ձեռքը չընկնելու համար, իրեն վայր էր նետել Արինոքի ձորն ու ջախջախվել։

Վերևից ոտնաձայն լսվեց։ Իջնողը Տոնեն էր։ Նա նույնպես ծպտված էր քրդի տարազով։

— Ո՞վ ազատեց քեզ,— հարցրեց Ասատուրը, ճանաչելով նրան։

— Զատոյի որդի Ռաշիդը։ Տղայիս հորել էի ձյունների մեջ, իսկ ես հիվանդ պառկած էի գոմում։ Երբ ատկյարները մեզ տանում էին սպանելու, Ռաշիդը մոտեցավ և բռնելով իմ թևից՝ ասաց.— ո՞ւր եք տանում սրանց։ Սա իմ հովիվն է, իսկ սա իմ գառնարածը։ Զատոն և իր մյուս որդի Ֆլիդը բարկացան վրան, թե ինչո՞ւ է նա մեզ ազատել, բայց Ռաշիդը նրանց մի կողմ հրեց և մեզ ներս տարավ։

— Իսկ ի՞նչ եղան Օնեի տղաները և թոռները։

— Տղաներին ազատել է Ավետի Սալիմը, իսկ թոռներին ալյուրի ամբարի մեջ թաքցնելով ազատել են Օնեի մեծ հարսները՝ Բասոն և Նազելին։

— Հիմա ո՞րտեղ են։

— Բասոն նրանց տարել է խութ՝ իրենց աղա Մամո Սալիմի մոտ։ Նրանց հետ գնացել են նմանապես ատաղձագործ Հակոբը և Ծաղկանուշը։

Տոնեն նայեց վերև։ Ձյան հաստ շերտով ծանրաբեռնված տանձենիները կռացած էին ձորի վրա։ Մի քիչ այն կողմ սկսում էր անտառը բակը։ Նա հիշեց այն օրը, երբ սարից իջավ Դաշտադեմ՝ Օնեին Իրիցանք տանելու և հաշտեցնելու Խոդեդանի հետ։ Այդ տան մեջ նա օրորել էր Քիշոյի փոքրիկ աղջկան՝ Ալմաստին։ Որքա՞ն արագ անցավ ժամանակը։ Որքա՞ն շուտ փոխվեց ամեն ինչ։

Մի շաբաթ հետո, երբ օսմանյան ջարդարարները հեռացան Բռնաշենից, Ասատուրը, Ստեփանը և Տոնեն ողջ մնացած շինականներին հավաքելով, քլունգներ ու բահեր առած, գյուղից գյուղ անցան և ձորերում, ջրաղացների գլխին, դերեզմանոցներում սպանված և անթաղ մնացած գյուղացիների դիակները ժողովելով՝ ամփոփեցին շիրիմների մեջ։

Քիշոյին և Օնեին նրանք թաղեցին Արինոքի քարքարոտ ձորաբերանին, իրենց տանձենիների տակ։

Ս. ԱՂԲԵՐԻԿԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Դաշտադեմի և Արինոքի կոտորածից հետո Զատոն սկսեց անվախորեն շրջել գյուղի մեջ և հավաքել սպանված հայ շինականների անասուններն ու կահ-կարասին։

Նա գնաց կանգնեց Օնեի ամայացած տան բակում և տիրաբար աչք ածեց շրջապատի վրա։ Այդ տան սքանչելի դիրքը և ընկուզենիներով հարուստ Կատվաձորը սաստիկ գրգռում էին նրա ախորժակը։

— Դե հիմա տեսնենք, թե դու, Ստեփանը և Օնեն ինչո՞վ կարող եք ինձ վնասել,— ասաց Ախուպի քուրդը, մի սպառնալի հայացք նետելով Խոդեդանի խրճիթի կողմը։— Ռուսների վրա աչք էիք դրել, տեսա՞ք թե ձեր քեռին մինչև ուր փախավ։

Զատոն պպզեց։ Նա ձեռքը խրեց ձյունի հաստ շերտի մեջ։ Թեպետ ամբողջ շրջապատը ձյունով էր պատած, բայց գետինը կանաչ էր։ Երկայն ցողունները, ասեղների պես ձյունը ճեղքելով, ելնում էին վեր։ Տեղ-տեղ կանաչն այնքան էր բարձրացել, որ կռացել էր ձյունների վրա։

— Շուտով ցանքսը կսկսվի,— շշնջաց աղան, ձեռքը ձյունից հանելով։ Նա մոտեցավ Օնեի տանը։ Նախ տարավ Քիշոյի խնոցին։ Ապա վերադարձավ և պատի տակ դրած հնամաշ արորը ուսին դնելով, ընթացավ դեպի տուն։

Հազիվ էր մի քանի քայլ արել, երբ Արինոքի կողմից մի հաղթական կանչ բախվեց նրա ականջին։

— Սրիկաներ, դուք ասում էիք թե ռուսը վախեցավ գնաց, ուրախանում էիք հրացան կրակելով։ Ուռուս հատիա (ռուսը եկել է)։ Նա մոտենում է ս. Աղբերիկին, թե տղամարդ եք, ինչո՞ւ եք փախչում։

Այդ Հաջու եղբայր Ավետի Սալիմն էր, որ իր տանիքին կանգնած գոռում էր բոլորցոց տան քրդերի հասցեին, որոնք, երկայն քոլոզները ծածկած, սառած ձյունի վրայով փախչում էին դեպի հարավ՝ իրենց հետ քշելով վանքի նախիրը և ջորիները։

Զատոն այդ խոսքերը լսելով՝ շփոթվեց։

«Ուռուս հատիա։ Նա մոտենում է ս. Աղբերիկին։ Ե՞րբ եկան, ե՞րբ լցվեցին Մուշ։ Չէ՞ որ նրանք նահանջել էին մինչև Ալաշկերտ», ինքն իրեն ասաց քուրդը և, Օնեի արորը ձյունների մեջ նե-

տելով. շտապեց տուն։ Հասավ թե չէ, ձեռքը դրեց մաուզերին և կարգադրեց գոմից հանել նժույգը։

Եվ իսկապես, ցարական զորքը, որ հուլիսի տասնվեցին նահանջել էր մինչև ռուսական սահմանը, սկսել էր հաղթականորեն առաջ շարժվել։ Նա գրավել էր Խնուսը, Մուշը և ոտք էր դրել Սև ասարի վրա։

Ոչ մի խութ չէր դիմանում ռուսական զենքի առաջ։ Նրա հրանոթի և գնդացրի ուժգին որոտը խուճապ էր ստեղծել թյուրքական զորքի և բնակչության մեջ։ Գերմանական չապլին հրացանը, որով զինված էր սև ասկյարը, խլացել էր ռուսական փառապանծ մոսինի առաջ։

1916 թվականի գարնանը ս. Աղբերիկի վանքի մոտ տեղի ունեցավ ուժեղ ընդհարում հակառակորդի հետ։ Թյուրքական զորքին օգնելու համար այնտեղ էին հավաքվել բոլոր զինված ցեղապետներն իրենց աշիրեթներով՝ Մուսաբեկի, Խասմբեկի և Նհոբեդի գլխավորությամբ։

Դաշտադեմից եկել էր Չատոն՝ մաուզերներով զինված իր երկու որդու հետ։ Նա հագել էր բրդե նախշուն շալվար և դրել էր գույնզգույն թելերից գործած մի գեղեցիկ արախչի, որ երկու տարի առաջ թոցրել էր ատաղձագործ Հակոբի գլխից և պահում էր իր սնդուկում։ Արախչու շուրջը կապել էր փուշի, որ հանգուցված էր իր ձախ աչքի վրա։ Ռուսների դեմ կռվելու համար նա եկել էր ուշ գիշերով, որ գլուխը չցավար։

Երբ Արինոքում լուր տարածվեց, որ ռուսները գալիս են, Սալվարդը շտապեց իր ամուսնու մոտ և պահանջեց թույլ չտալ, որ Նասրի տան քրդերը զենք վերցնեն նրանց դեմ։

— Եթե քո աշիրեթի քրդերից մեկն ու մեկը կրակել է ռուսների վրա, կնշանակե, դու ինձ վրա ես կրակել,— ասաց նա։ Արինոքի քուրդը, որ առհասարակ դեմ էր խաչապաշտներին դիմադրելու անմիտ փորձերին՝ պատասխանեց.

— Ես վաղուց երդվել եմ մեր տան սրի վրա օգնել հայերին և, չկա մի ուժ, որ ստիպի ինձ խախտել իմ երդումը։ Այս ասելով Հաջին զինվեց, հեծավ իր սպիտակ երիվարը և, մաուզերն առնելով, շտապեց դեպի ս. Աղբերիկ՝ Նասրի, Բաբիրի, Բլալի և Ղասրմի տան քրդերին համոզելու՝ գնդակ չարձակել խաչապաշտների վրա։ Ճանապարհին իմանալով Չատոյի և նրա երկու զինված որդիների

անհայտացման մասին, ենթադրեց, որ նրանք գնացել են ռուսների դեմ։ Նասրի տան գլխավորը խթանեց իր ձին և փութաց նրանց ետևից։

— Ե՛տ դարձիր,— գոչեց Ավետի Հաջին,— նկատելով Զատոյին երկու որդիների հետ։

— Դո՛ւ ետ դարձիր,— պատասխանեց Ախուպի քուրդը։

— Վերադարձիր Հուրի Մալաքիդ մոտ. պատերազմի դաշտը տղամարդու գործ է,— հեգնանքով ավելացրեց ավագ որդին, մաուզերն ուսից ներքև առնելով։ Բայց նույն միջոցին սուրաց Հաջու գնդակը և Ախուպի սմբարտավան քուրդը արյունաշաղախ վայր տապալվեց հոր և եղբոր ոտքերի առաջ։

Զատոն պատրաստվեց ետ դառնալ և Նասրի տունը ջնջել երկրի երեսից, բայց այդ ժամանակ ռուսական զորքը սկսեց կրակ բանալ։ Մերունին իր մյուս որդու հետ ընկավ առաջին իսկ համազարկին։

— Նրա մեկ աչքը Շեկո տան քրդերը հանեցին, իսկ ջուխտակ աչքի լույսը ռուսները մարեցին,— ասաց Ավետի Հաջին դեպի ս. Աղբերիկ նայելով։ Այնքան ժամանակ, քանի դեռ վանքի ճակատը երևում էր, նա ետ-ետ գնաց իր ձիու վրա, իսկ երբ ս. Աղբերիկն անհետացավ տեսադաշտից, նժույգի գլուխը շուռ տվեց դեպի Արինոք։

Ս. Աղբերիկի ճակատամարտը տևեց մինչև կես գիշեր։ Այդ կռվում ընկան Խամբեկը և բազմաթիվ քուրդ ցեղապետներ։ Այդ կռվում ընկավ նաև Գուրսե Սլոն։ Մուսաբեկը, ջորին նստած, հազիվ կարողացել էր մի կերպ ճողոպրել դեպի Ռաբաթ։

Ս. Աղբերիկի ճակատամարտում, ռուսների և հայ կամավորների կողմում արիաբար կռվելով, զոհվեցին վանքի քահանա Կլկել Օհանը, խոհարար Իգնատիոսը, ժամկոչ Մամբրեն և նվիրակը։ Իսկ լուսարար Կաթմոսը կաթվածահար էր եղել, տեսնելով թե ի՛նչպես գրոհում են վանքի վրա և անհամար կրակներ են փայլատակում խավարի մեջ։

Միայն մի հոգի անհայտացել էր ս. Աղբերիկից։ Այդ Դաշտադեմցի Գևորգն էր։ Պատմում էին, որ նա իր ձեռագրերի մի մասը պահել էր ձյունների մեջ և, վանքի մազե պարանը վերցնելով, գնացել է անտառ՝ փախած դևերին կապկպելու, որոնք, իբրև թե, առաջին իսկ համազարկին խույս էին տվել Սատանաների տնից։

Իրողությունն այն էր, որ Գևորգը, իսկապես, մի կծիկ մազե ապարան վերցնելով, չքացել էր վանքից, բայց թե ո՞ւր էր գնացել՝ հայտնի չէր։

Զատոյի, Խամբեկի, Գուրսե Սլոյի և այլ ցեղապետների սպանության լուրն առնելով, Արինոքի և շրջակա գյուղերի հարուստ քրդերը նույն գիշերը փախել էին Ռաբաթ, իսկ այնտեղից էլ Խութա սարը շուռ գալով, գնացել էին դեպի Դիարբեքիրի կողմերը։ Նրանց հետ փախել էին նաև Ավեսի Սալիմը և Նասրի տան մի քանի ուրիշ քրդեր։

Իսկ Հաջին չփախավ։ Ս. Աղբերիկից վերադառնալով, նա իջավ Արինոքի ձորը և գնաց նստեց իր բերդի ավերակների վրա։

Գրավելով ս. Աղբերիկը և ընկճելով սև ասկյարի և քուրդ ցեղապետների միացյալ դիմադրությունը, ռուսական զորքը արևածագին սկսեց իջնել դեպի Արինոք։

Կոտորածից ազատված հայ շինականները անձկությամբ էին սպասում ռուս զորքին։— «Ուռո՞ս, ուռո՞ւս, մեր աչքը լուս»,— ասում էին նրանք և, խաչակնքելով, վազում էին ընդառաջ։

Զորքի առջևից սերմնացանական գոգնոցը կապած, քայլում էր Շինական Պողոսը։ Աղ ու հացը ձեռքին՝ զորքին դիմավորելու ելան Աստատուրը՝ շունը ետևից, և Ստեփանը։

Զորքի ետևից ընթանում էին Արինոքի և հարևան գյուղերի հայ շինականները՝ իրենց կանանց և երեխաների հետ։ Այնտեղ էին Ոսկեհատը, Բայազը և Հեղինեն։

Կեսօր էր, երբ մարտական թմբկահարությամբ ռուսական զորքը մտավ Արինոք և շարժվեց դեպի Դաշտադեմ։ Դեռ զորքը չէր մոտեցել Կատվաձորին, երբ այնտեղից դուրս եկավ Ավեսի Հաջին՝ սպիտակ ձիու վրա։ Նա մենավոր էր և զինված։ Զորքին տեսնելով, քուրդն այլայլվեց, կորցրեց իրեն և չիմացավ փախչե՞լ թե անձնատուր լինել։ Նա, ինքնաբերաբար, մի մեծ խաչ հանեց երեսին, հայացքն ուղղելով դեպի ս. Աղբերիկ։

— Քրիստոնյա՞ է,— հարցրեց խարտյաշ հրամանատարը մի հայ կամավորի, որ իր կողքին էր քայլում։

— Ամեն խաչ հանողը քրիստոնյա չէ, զորավար, կերպարանքից երևում է, որ քուրդ է,— նկատեց հայ զինվորը, տարօրինակ հայացք նետելով ձիավորի վրա,

Սվիններով մի ամբողջ անտառ էր շարժվում դեպի Ավեսի Հա-

ջին։ Հեծյալն իրեն վայր նետեց թամբից և, սանձը բռնած, շվարած կանգ առավ։

— Զինաթափվի՛ր,— որոտաց ռուս հրամանատարը,— առաջ գալով։

Հաջին բաց թողեց ձիու սանձը և, զենքերն արձակելով, դրեց զորքի առաջ, աննկատելի կերպով հրացանի խզակոթից հանելով մի ինչ-որ բան։ Ապա գլխից վայր առավ մետաքսե փուշիներով ոլորած սպիտակ քոլոզը և լուռ կանգնեց։ Նա թեպետ չէր մասնակցել ս. Աղբերիկի ճակատամարտին, բայց վախենում էր, որ իրեն կսպանեն։

— Զգա՞ստ,— գոչեց երիտասարդ հրամանատարը, հրացանի փողը նրա կրծքին ուղղելով։

Ավեսի Հաջին ձախ ձեռքով բռնեց քոլոզը, իսկ աջ ձեռքը բնազդաբար պահեց աչքերի առաջ։

Սևասարը սկսեց հաչել։

— Սրան մի՛ սպանեք,— հայերեն գոչեց Խոդեդանը, և մոտենալով դեպի վեր հրեց հրամանատարի զինափողը։

Այդ միջոցին ետևից մի պառավ կնոջ լացի ձայն լսվեց։ Այդ Ոսկեհատն էր։ Նա մոտեցավ և իրեն նետեց ռուս հրամանատարի ոտքերին։

— Հաջին հայերին շատ լավություն է արել, Հաջուն մի՛ սպանիր, լաո։ Հաջին որ չեղներ, ամբողջ Արինոքն ու Դաշտադեմը կկոտորեին։

— Ճի՛շտ է,— լսվեցին բացագանչություններ այս ու այն կողմից։

Ռուս հրամանատարը հայ շինականների, մասնավորապես Ոսկեհատի և Ասատուրի թախանձանքին զիջելով, ազատություն պարգևեց զինաթափված քրդին։

— Ես իմ զենքերը կորցրի, բայց իմ պատիվը չեմ կորցրել,— ասաց նա և, իր ձին հեծնելով, դանդաղ հեռացավ։

Զորքը շարժվեց։ Ռուսները հաղթական թմբուկով իջան ձորը և սկսեցին ելնել դեպի Դաշտադեմ։

Գյուղից դուրս, Օնեի և Քիշոյի տանձենիների տակ հավաքված, նրանց ճանապարհն էին պահում Դաշտադեմի բնակիչները։ Շատերը իջել էին ձորը զորքին դիմավորելու։

Բոլորից առաջ քայլում էր Շինական Պողոսը, ապա շարժվում

էր նվագախումբը։ Նրանց ետևից ընթանում էին ռուս խարտյաշ հրամանատարը, Խոդեդանը և Ստեփանը։ Այնուհետև բարձրանում էր զորքը՝ ալիք առ ալիք։ Կանայք, հարսներ, աղջիկներ և երեխաներ պոկում էին ձյունների տակից նոր ազատված առաջին թարմ կանաչն ու ծաղկունքը և շպրտում էին զորքի վրա, վերցնում էին նրանց ոտքի տակի հողը և համբուրում էին։

Օնեի տանձի ծառերի տակով, որ նոր էին բողբոջել, անցավ ռուսական զորքը՝ զենքերի և սվինների փայլով ճառագած։

Շինական Պողոսը զորքին տարավ և կանգնեցրեց Զատոյի ընդարձակ բակում՝ ընկուզենու տակ։

Ռուսների գալու առթիվ կանայք վառել էին թոնիրները, հաց էին թխել, կերակուրներ էին եփել։

Մինչև ուշ գիշեր ռուսական զորքը հաց կերավ Դաշտադեմում։ Մի քանի հարբած զինվորներ սվիններով փշրել էին Զատոյի մեղրափեթակները։ Ախոպի տան մեղուները պարսերով դուրս էին թափվել կավակուռ փեթակներից և մոլեգին պտույտներ էին գործում գյուղի մեջ։ Նրանց բզզոցից ականջ էր խլանում։

ՀԱՋԻՆ ԳՆՈՒՄ Է ՔՐԴՍՏԱՆ

Այդ գիշերը Ավետի Հաջին ռուսական զորքի պատվին մեծ տոնախմբություն կազմակերպեց։ Նա նրանց առաջ բաց արավ իր անուշահամ գազպով լի կարասները, որ Ոսկեհատն ու Բայազն էին պատրաստել մեկ տարի առաջ։ Քանդեց իր մեղրի կավե փեթակները, հյուրասիրեց նրանց ընտիր խորտիկներով և խմիչքով։

Թյուրքերը, Մուշի և Բիթլիսի կողմից փախչելիս, խուճապ առաջացնելու նպատակով սպանել էին մի քանի ցեղապետների, այդ թվում նաև գելխեղդ շների հայտնի ցեղապետ Զաչան բեկին, և նրանց գլուխները կտրելով ցույց էին տալիս ամենքին, ասելով. «Ձմնաք ռուսների մեջ, ձեր բոլորի վերջը էսպես է»։

Դաշտադեմից և Արինոքից նույն գիշերը փախել էին Հաջու եղբայր Ավետի Սալիմը և մյուս հարուստ քրդերը՝ իրենց կանանցով։

Հաջին նույնպես որոշել էր հեռանալ Բռնաշենից։ Ախոպի տան քրդերի վրեժխնդրությունից խուսափելու համար նա կամե-

նամ էր մի առժամանակ թաքնվել Խութի և Մոտկանի Շեկո տան քրդերի մոտ, իսկ այնուհետև անցնել Քրդստան։

Այդ վայրից հեռանալու նրա վճիռը վերջնական դարձավ նույն գիշերը Արինոքում կատարված մի սոսկալի դեպքից հետո։ Զատոյի կանանցից երկուսը, որ գաղտնի թաքնվել էին գյուղում, հայ կանանց շորեր հագած և խենչարներով զինված, լուսադեմին մտել էին Ավեսի Հաջու կանանոցը, սպանել էին Հուրի Մալաքին և Արինոքի ձորով փախել էին դեպի Ռաբաթ։

Գիշերվա տոնախմբությանը հաջորդող այս եղեռնական դեպքը այնպիսի ցնցող տպավորություն էր գործել Հաջու վրա, որ նա, կիսախելագարի պես, դուրս էր վազել տանից, թևերի վրա առած իր սիրած կնոջ մարմինը։

Առավոտ վաղ նա շտապեց Դաշտադեմ։

Խոդեդանը այդ գիշերն անց էր կացրել Զատոյի տանը ռուս խարտոյաշ հրամանատարի և Շինական Պողոսի հետ։ Ավեսի Հաջին նրան դուրս կանչեց և առանձին ասաց.

— Ես դնում եմ Քրդստան։

— Ինչո՞ւ,— զարմացավ հովիվը։

Եվ քուրդը, արցունքներ թափելով, պատմեց Հուրի Մալաքի սպանության հանգամանքները, անհունապես ողբալով իր ամենասիրած և ամենագեղեցիկ կնոջ մահը։ Վերջում նա ասաց.

— Իմ պապերը քրդստանցի են, ուզում եմ քաշվել մեր հողը։ Ի՞նչ գործ ունեմ հայու երկրի մեջ։

Ասատուրին, որ խիստ վշտացած էր ցավալի դեպքից, շատ դուր եկան իր տիրոջ խելացի խոսքերը, ուստի նա հարցրեց.

— Ինչո՞վ օգնեմ քեզ, աղա։

— Միայն մեկ բանով. ինձ անվտանգ անցկացնելու Շամիան, որ էնտեղից Քրդստան գնամ։ Ռուսները կարող են ինձ ճանապարհին սպանել։

— Չեմ թողնի,— ասաց հովիվը։

— Շնորհակալ եմ, Խոդեդան, եթե դու և Ոսկեհատը չլինեիք, երեկ խաչապաշտները ինձ կսպանեին։ Դուք փրկեցիք իմ կյանքը։

— Էլի կփրկենք, աղա։ Ս. Աղբերիկի կովին դու չես մասնակցել։ Ռուսի դեմ գնդակ չես արձակել։ Մեզ սպանողներին դու սպանեցիր, ինչո՞ւ թողնենք, որ քեզ սպանեն։

— Սալվարդից հետո աշխարհն ինձ համար ամայացավ, խո-

դեղան։ Ուզում եմ քաշվել մեր երկրի հեռավոր լեռների մեջ և այնտեղ անցկացնել իմ կյանքի վերջին օրերը,— ասաց Հաջին։

Մեկ ժամից հետո ռուսական զորքը շարժվեց դեպի Ծովասար։ Ասատուրը ցանկություն հայտնեց զորքին առաջնորդ դառնալ։ Նրա հետ, մի փոքրիկ նախշուն խուրջինով, ճանապարհ ընկավ նաև Ավեսի Հաջին։

Երբ Խութոմն էին, լեռնային մի կանաչ ձորակի մեջ, քուրդն ասաց.

— Նստիր էս թմբի վրա, բան ունեմ քեզ ասելու։

Նրանք նստեցին։

Թավշյա կանաչի վրա լսվում էր զորքի հաղթական ոտնաձայնը։

— Մի վերջին խոսք է մնում ինձ, Խոդեդան,— սկսեց Հաջին ծխամորճը վառելով։— Գնալուց առաջ ես ուզում եմ լուծել մի գաղտնիք, որ մինչև այսօր ծածուկ եմ պահել։ Գոնե դու իմացիր իմ պատմությունը։ Չէ՞ որ մենք անվերադարձ ենք բաժանվում։

— Բաց արա սիրտդ իմ առաջ, աղա, մի չլուծված հանելուկ կա քու մեջ, ես էդ վաղուց եմ նկատել։

— Իմ նախնիները հայ են եղել, Խոդեդան,— ասաց Ավեսի Հաջին։— Ես ծննդով պատկանում եմ հայ նախարարական մի հինավուրց տոհմի, որ հնում ապրելիս է եղել Բռնաշենում։

Ասատուրը ուշադիր լսում էր։

— Մեր տոհմի հիմնադիրը եղել է Բռնիկ անունով մի հայ իշխան, որն ապրել է չորրորդ դարում։ Նրա բերդի ավերակները մինչև այսօր էլ երևում են Սև սարի վրա, Արինոքից դեպի հյուսիս-արևմուտք։ Նրա անունով մեր գավառակը կոչվել է Բռնաշեն։ Բռնիկի կալվածքի մեջ մտել են Արինոք, Դաշտադեմ, Կծանք, Կոստ, Օշուտ և Լորդնձոր գյուղերը։ Նրա վանքը եղել է ս. Աղբերիկը, որն իր հրամանով է շինված։

— Հեծիր քո ձին և գնա Սև սար ման արի։ Որտեղ ձիդ չոքավ, էնտեղ իմ վանքը շինիր,— ասել է նրան երազում մի սպիտակ ձիավոր։ Բռնիկ իշխանի ձին չոքել է Օշուտ սարի վրա, Կատվաձորի պռոնկին։ Այդտեղ էլ իշխանը հրամայել է շինել իր տաճարը։ Վանքի քարերը կտրված են Մշո դաշտի Ազաղբյուր գյուղի ձորում։ Վերջին քարը կտրելիս՝ վարպետն ասել է. «Արդեն պրծավ», և այդ քարի հետ եկել բարձրացել է շինության գագա-

թը։— «Սուրբ Կարապետ հազար-հազար, սուրբ Աղբերիկ մեկն ի աշխարհ»,— այսպես է ասել ժողովուրդը։ Շինությունը սպիտակ է, դրա համար էլ կոչվել է սպիտակ ճակատ սուրբ Աղբերիկ։

Այդ վանքի շինությունից մոտավորապես ութ հարյուր տարի հետո, քրդական մի շարք ցեղեր հարավից, գլխավորապես Դիարբեքիրի կողմից գաղթելով, հաստատվել են Խութ-Բռնաշենում և մի շարք ուրիշ գավառակների մեջ։

Օսմանյան թյուրքերը, Միջին Ասիայի անապատներից առաջ շարժվելով, 1453 թվականին գրավեցին Կոստանդնուպոլիսը։ Այնուհետև, նրանք դեպի հարավ-արևելք դառնալով, պատերազմ սկսեցին Պարսկաստանի դեմ։ Շահ Իսմայիլ թագավորը իրար ետևից կորցրեց իր բոլոր բերդերն ու քաղաքները, այդ թվում և Դիարբեքիրը։ 1555 թվականին հաշտության պայմանագիր կնքվեց, որով Սասունը, Վանը և Ալաշկերտի հովիտը անցան օսմանցիներին։ Սուլթանները Արևմտյան Հայաստանը բաժանեցին հինգ նահանգների (վիլայեթների), որոնք այնուհետև սկսեցին կառավարվել թյուրք փաշաների կողմից։

Օսմանցիների առաջին գործը եղավ քրդական ցեղերին օգտագործել իրենց գլխավոր հակառակորդի՝ Պարսկաստանի դեմ, նրանց վստահելով այդ սահմանների հսկողությունը։ Այդ պատճառով նրանք հայկական նահանգների մեջ բազմաթիվ գյուղեր մաքրեցին հայ բնակիչներից և նրանց հողերը հանձնեցին քուրդ աղաներին։

Մինչև Սասունի ամիրայությունը և օսմանյան տիրապետության սկիզբը, հայերը և քրդերը իրար հանդեպ չեն ունեցել ոչ մի ազգային և ուրիշ կարգի թշնամական հարաբերություններ, բացի իշխանության ձգտումից, որ հայ անհատներն էլ ունեցել են իրար հանդեպ։ Նրանք շատ մոտիկ և բարեկամ հարևաններ են եղել։ Սասունի լեռնականները, հայ և քուրդ՝ երկուսն էլ համարվել են մեկ ցեղախումբ և կոչվել են ամիզադե, այսինքն հորեղբոր որդիներ։

Այդ գավառակների հայերն ու քրդերը, զինված խմբեր կազմելով, երկար ժամանակ պայքարել են թյուրք, թաթար և այլ կարգի զավթիչների դեմ, երբեք չենթարկվելով այդ իշխանություններին։

Քուրդ ազնվականը միշտ բարձր է գնահատել հայ կնոջ գե-

ղեցկությունը և շնորհքը։ Հայ կինը նրա համար եղել է միջոց իր ցեղն ազնվացնելու։

Մի օր, իր նժույգն հեծած և հրացանը թևը ձգած, Բռնաշեն է եկել մի քուրդ ցեղապետի զավակ։ Բռնիկ իշխանի հետագա ժառանգներից մեկը՝ իշխան Արաբոն արու զավակ չունենալով, իր միակ աղջկան՝ Հայկանդուխտին կնության է տվել այդ երիտասարդ իշխանավորին։ Պսակը կատարվել է ս. Աղբերիկում։ Հարսանիքի ժամանակ հարսի մազերը հյուսել են տասներկու ճյուղ և ամեն ճյուղը հյուսելիս մի քառյակ են երգել՝ մեկը հայերեն, իսկ մյուսը քրդերեն, իբրև բարեկամության նշան։ Այդ սովորությունը մինչև այժմ էլ պահպանվել է հայ և քուրդ աշխատավորների մեջ։

Հայուհին ամուսանալով քրդի հետ, իբրև օժիտ, ստացել է իր հոր կալվածքը Դաշտադեմ, Արինոք, Կծանք և Օշուտ գյուղերով։ Այդ գյուղերն իրենց բնակիչներով անցել են նրա հովանու տակ։ Աղջկա հոր մահից հետո այդ տունը այնուհետև կոչվել է իշխան Արաբոյի տուն։

Հայկական իշխանական տները, ուրիշ վայրերում քայքայվելով, իրենց ինքնուրույնությունը պահպանել են միայն Սասունի, Մոկսի, Ռշտունիքի և մի շարք այլ լեռնային շրջաններում։ Օսմանցիների տիրապետության ժամանակ Խութ-Բռնաշենում և բուն Սասունում իրենց գոյությունը դեռևս պահպանած ավատական տները սկսել են աստիճանաբար անհետանալ։ Նրանց մի մասը ասպարեզից հեռացել է, իսկ մյուս մասը քրդանալով խառնվել է եկվորին։ Այդպես է եղել նաև մեր տան հետ, որի մեջ մի քիչ ավելի վաղ էր երևացել քուրդ իշխանը։ Մենք քրդացել ենք այն ժամանակ, երբ չենք կարողացել պահպանել մեր ունեցվածքը մեզ շրջապատող հսկայական բեկության մեջ։ Քրդացած հայ իշխանները դառնում էին հավասարազոր՝ քուրդ բեկերի հետ։ Այդ ձևով էլ շատ հայ գյուղացիներ ընդունեցին քրդությունը, որովհետև այդպիսիները ստանում էին զենք կրելու և ձի նստելու իրավունք, աղատվում էին հալածանքից, հարկերից և պահպանում էին իրենց հողն ու տնտեսությունը։

Քրդացած հայեր շատ կան. Բագրացի քրդերը՝ Բագրատունի հայերն են, Ռշկոցիք՝ Ռշտունցիներն են։ Բալաքցիները և շեկոնները, որոնք ապրում են Սասունի և Մուշի սարերում, սերվում են իսլամացած մի քանի հազար հայ ընտանիքներից։ Մեր մեջ կա նաև

մի քրդացած ցեղ, որ արևապաշտ է։ Արևը ծագելիս համբուրում են այն քարը, որին դիպչում են առաջին ճառագայթները։

Ինչպես որ հայերն են քրդացել, այնպես էլ քրդերն են թրքացել։ Բիթլիսի թյուրք բնակչության մի զգալի մասը թրքացած քրդեր են։

Հաջին թափ տվեց ծխամորճի մոխիրը և, նրա անցքը կեղտից մաքրելով՝ շարունակեց.

— Սուլթան Սելիմը Մոլա Իդրիսին,— որ բիթլիսցի մի ազդեցիկ քուրդ է եղել և մեծ աջակցություն է ցույց տվել թյուրքերին Պարսկաստանի դեմ վարած կռվում,— իր մոտ հրավիրելով նրան է հանձնել մի քանի կապոց դրոշակ և հինգ հարյուր ոսկեկար խալաթ՝ քուրդ ազնվականներին բաժանելու համար։ Այդպիսի դրոշակներից և խալաթներից մեկը Մոլա Իդրիսը ուղարկել է մեր տոհմի նահապետին, որն այդ ժամանակ նստած է եղել Բռնաշեն գետի եզերքին, մի կանաչ թմբի վրա։ Նրա մոտ հյուր է եղել շեկ, փոքրիկ մորուսով մի ռուս ճանապարհորդ Աֆանաս Զուբով անունով։ Այդ ճանապարհորդը երկար տարիներ եղել է Աֆրիկայում և Հալեպի վրայով բարձրանալով Սասունի լեռները, նպատակ է ունեցել ուսումնասիրել քրդացած հայերի կենցաղն ու լեզուն և Կովկասի վրայով գնալ Ռուսաստան։

Մեր տոհմի նահապետը, որ այդ ժամանակ կոչվել է Ավեսի Սիմոն, նրա պատվին բացել է մի սիրուն սեղան հարյուր հիսուն տարբեր տեսակի կերակուրներով։ Դրոշակը և ոսկեկար խալաթը բերել են այն ժամանակ, երբ նրանք ճաշը ավարտած, պատրաստվել են որսի գնալ։ Ավեսի Սիմոնը, որ սաստիկ ատելություն է տածել դեպի սուլթանը, նրա ուղարկած դրոշակը վերցնելով, հյուրի ներկայության շարտել է Բռնաշենի գետը, իսկ խալաթը գցել է մի ավանակի մեջքին, կամենալով ասել, որ այդ զգեստը ծածկողներին սպասում է ավանակի վիճակ։

Սուլթան Սելիմի մարդիկ տեղեկանալով այդ ըմբոստությանը, շտապել են ապստամբին բռնելու։ Ռուս ճանապարհորդը խորհուրդ է տվել իր բարեկամին փախչել Ռուսաստան։ Նահապետն այդ առաջարկը գտել է խելացի, և նրանք միասին դուրս են եկել Բռնաշենից։

Բիթլիսի մոտ կա մի փոքրիկ ձոր, որ կոչվում է Ջլիֆտա։ Այդ այն վայրն է, որտեղ, ըստ ավանդության, ձյունների մեջ խրվելով

սառել է անցորդներից մեկի էշը։ Այդ դիպվածի տեղը այնուհետև կոչվել է պաղ-էշ և իր անունն է տվել այժմյան Բիթլիս քաղաքին։ Ահա այդ ձորում, գիշերով անցնելու ժամանակ, նրանց վրա հարձակում է եղել։ Ավեսի Սիմոնի մարդկանցից հինգը սպանվել են։ Նահապետը տեսնելով, որ դրությունը վտանգավոր է և կարող են ռուս ճանապարհորդին սպանել, նրան հանձնարարել է դեպի Ալաշկերտ գնացող մի հայ բարեկամի, իսկ ինքը Դատվանի վրայով իջել է Ռշտունիք, կամենալով անցնել Մոկս և Ջուլամերիկի լեռներով փախչել Պարսկաստան։

Ալաշկերտցի հայը Աֆանաս Ջուբովի հետ ուղևորվել է դեպի Կովկաս։ Ճանապարհին մի խումբ զինված թյուրքեր, երկու կողմից գալով, բռնել են նրանց։ Հային տեղն ու տեղը սպանել են, իսկ ռուսին, պայուսակը խլելով և աչքերը կապելով, առաջնորդել են վտանգավոր ճանապարհներով։ Նրան հասկացրել են, որ իրեն տանում են Բիթլիս, բայց հասցնելով Նեմրութ սարի ետև, գաղտնաբար խոշտանգել են և դիակը նետել քարերի մեջ։ Մի օր հետո այդտեղ բանջար հավաքելու են եկել երկու հայ պառավ։ Նկատելով մի ջախջախված դիակ և օգնության կանչելով իրենց գյուղի նախարապահին, երեքով հողին են հանձնել ռուս ճանապարհորդի դին՝ խաչակնքելով և արտասվելով նրա դժբախտ գերեզմանի վրա։

Մեր տան նահապետը Մոկաց աշխարհի լեռներով Քրդստան փախչելով, չի կարողացել անցնել Պարսկաստան և բնակություն է հաստատել Բիշերիկի լեռնային շրջանում։ Նա և նրա ժառանգներն այդտեղ ապրել են մոտ երկու հարյուր տարի։ Այնուհետև նրանց հետագա սերունդները, օսմանցիներից նեղվելով, գաղթել են Խութ, ապա Բռնաշեն և վերջնականապես հաստատվել են Արինոքում՝ իրենց նախկին հայկական կալվածքի մի մասի վրա։

Թեպետ մեր իշխանական դիրքը վաղուց խախտված է և մեր այժմյան վիճակը՝ շատ խղճալի է անցած ժամանակների համեմատությամբ, բայց քանի որ աղայությունը քրդերի մոտ ժառանգական է, ուստի մեզ աղա են ասում, իսկ մեր տանը՝ աղա Ավեսի կամ Արաբոյի տուն։

Խաչապաշտ ճանապարհորդի պատճառով օսմանցիները և քրդական շատ ցեղեր շարունակ հալածել են մեզ։ Իմ հայրը զոհվել է քուրդ նշանավոր ցեղապետ Եզդանշիրի ապստամբության ժամա-

նակ, որի դրոշի տակ թյուրքերի դեմ կռվում էր հարյուր հազար քուրդ զինվոր։ Իսկ իմ պապը սպանվել է ավելի առաջ՝ Բադիր խան բեյի օրերին։ Ախոպի տան քրդերը գիտեն այդ մասին և մինչև այսօր էլ մեզ հետապնդում են իբրև հակառակորդ մարդկանց։ Իմ խմորը չէր թթվում մինչև տանտիկինը խաչ չքաշեր վրան։ Ես իմ տան մեջ Հուրի Մալաքի հետ հայերեն էի խոսում, իսկ մյուսների հետ՝ քրդերեն։

Այս է իմ պատմությունը։

Ես փհարկե, իմ ներկա վիճակով քուրդ եմ համարվում, և իմ պապերի հայրենիքը Քրդստանի լեռներն են, բայց իմ տոհմի ակունքը հայկական է և իմ ծննդավայրը Սասունն է։ Վերցրո՛ւ, ինչ որ ասացի, այստեղ է գրված։— Այս ասելով Ավեսի Հաջին իր նախշուն խուրջինը բաց անելով, նրա միջից դուրս քաշեց սև կազմով մի ավետարան, որ փակված էր մետաղյա փակիչով։ Կազմի վրա դրոշմված էր մի խաչ և մի ձիավոր՝ սուրը ձեռքին։ Այդ գիրքը, որին քուրդը դեֆտեր էր ասում, կազմված էր երեք հարյուր քսանյոթ գորշ-դեղնագույն մագաղաթից։ Վերջում հիշատակարան կար։ Ազատ թերթերի վրա հերթականությամբ գրանցված էր Ավեսի Հաջու նախնիների պատմությունը՝ սերունդ առ սերունդ։ Այդ տոհմագրության ամենավաղ շրջանը վերաբերում էր մեր թվականության յոթերորդ դարին և բացվում էր ս. Աղբերիկի շինարարությամբ։ Յուրաքանչյուր նահապետ, վախճանից առաջ, այդ վանքի հայրապետներից մեկին իր մոտ հրավիրելով, նրա ձեռքով շարադրել էր իր տան պատմությունը։ Ռուս ճանապարհորդի և Ավեսի Սիմոնի պատմությունը արձանագրված էր տասնյոթերորդ դարի առաջին կեսում։ Թիշերիկում ապրած տարիների պատմությունը արձանագրված էր հայերեն և արաբերեն տառերով։

Ասատուրը զարմանքից կարկամել էր։

Այդ հենց այն խորհրդավոր մատյանն էր, որ Ավեսի Հաջին պահում էր իր տոհմական սնդուկի մեջ և որը այնքան ցանկացել էր ձեռք բերել Դաշտադեմցի Գևորգը։ Նրա համար այժմ շատ գաղտնիքներ լուծվեցին։ Մասնավորապես հասկանալի դարձավ, թե ինչո՛ւ շեկոնները բոլոր կռիվների ընթացքում հավատարիմ էին մնացել հայերի հանդեպ ունեցած իրենց բարեկամության մեջ։

— Այս գիրքը,— լռությունը ընդհատելով խոսեց Հաջին,—

գրվել է Բռնիկ իշխանի հրամանով ս. Աղբերիկի քարայրի մեջ և կոչվել է Բռնիկ իշխանի կամ Արաբո տան ավետարան։

— Իսկ ինչու՞ է երկու տարբեր անունով կոչվել։

— Որովհետև այն գրվել է Բռնիկ իշխանի ժամանակ, բայց իշխան Արաբոն իր աղջկա հարսանիքի օրը այն նվիրել է երիտասարդ քրդին, խնդրելով, որ իրենց տոհմի հետագա ամբողջ պատմությունը արձանագրվի նրա մագաղաթների վրա։ Այդ օրվանից Բռնիկի կալվածքի վրա ապրող քրդացած հայ իշխանները կոչվել են Արաբո տան իշխաններ։

— Մի խնդիր ունեմ,— շարունակեց քուրդը,— կտանես այս դեֆտերը և կհանձնես էջմիածին՝ հայոց կաթողիկոսին։ Այդ է իմ վերջին փափագը։ Իմ տոհմը անհետանում է աշխարհից, իսկ յուրաքանչյուր հեռացող ուզում է մի հիշատակ թողնել իրենից հետո։

— Ուրեմն նախնիքներդ հա՞յ են եղել,— գոչեց Խոդեդանը, երկու ձեռքով վերցնելով փառակազմ մատյանը և մի խոր հառաչանք արձակելով։

— Բնիկ բռնաշենցի են և ապրել են հենց այս սարերի վրա,— ասաց Ավետի Հաջին, նստած տեղից վեր կենալով և ձեռքը մեկնելով դեպի Սև սարի կողմը. ս. Աղբերիկի ուղղությամբ։

— Իսկ ո՞վ էր Հուրի Մալաքը,— հարցրեց Ասատուրը կամենալով այդ առեղծվածն էլ լուծել։

— Ա՜խ, Սալվա՜րդ, Սալվա՜րդ,— հառաչեց քուրդը, երբ նայում էր հարազատ լեռներին։

— Ո՞ւմ աղջիկն էր նա, աղա,— շարունակեց հովիվը,— էդպիսի հայրենասեր աղջիկ ես դեռ տեսած չկամ։

— Այս գրքի վերջում գրված է նրա մասին։ Հուրի Մալաքը Գոմսա Մելիքի աղջիկն էր։ Երբ Մուսաբեկը Արքավանքի հայ գյուղացուն վառեց բուխարիկի մեջ, Մելիքի հայրը ըմբոստության կոչով դիմեց ժողովրդին և մեռավ կախաղանի վրա։ Հոր մահից հետո տղան թողեց շինական աշխատանքը և երդվեց նրա հիշատակի առաջ կռվել Հայաստանի ազատագրության համար։ Նա իր միակ աղջկան տարավ Քրդագոմ և հանձնեց Սանամ անունով մի կնոջ խնամքին, որի ամուսինը իր քեռին էր, իսկ ինքը զենք վերցնելով բարձրացավ Ծիրնկատար։

Երբ աղջիկը տասնյոթ տարեկան դարձավ, ֆիդայիները նրան

նվիրեցին մի դաշույն, որի կոթի վրա գրված էր «վրեժ»։ Մի տարի հետո նա այդ դաշույնով սպանեց Մուսաբեկի ազգականներից մեկին, որը Մավի անունով մի չերքեզ աղջկա փախցնում էր Մուշ՝ փաշայի հարեմում իբրև գերի պահելու համար։ Այդ կռվի ժամանակ սպանվեց Գոմսա Մելիքի քեռին և ծանր վիրավորվեց գերի չերքեզուհին, որը շուտով մահացավ։

Բիթլիսի վալին և Մուշի գավառապետը հրաման արձակեցին, որ եթե այդ աղջիկը հայի հետ ամուսնանա, կամ հայի տանը գտնվի, նրա ամբողջ ընտանիքը սրի է քաշվելու։ Շեկո տան քրդերից մեկը սիրահարվեց այդ աղջկան և նրան գիշերով բերեց իր տուն։

Այդ քուրդը ես էի։

Նրա հորը՝ Գոմսա Մելիքին, զգուշության համար արգելված էր քրդի տուն մտնել։ Դրա համար էլ նա իբրև կատու հավաքող էր Արինոք գալիս՝ ծպտված շորերով և անունը փոխած։ Կատվաձորի պռունկին կանգնած նա երկա՞ր, երկա՞ր նայում էր իմ ապարանքի կողմը և պարկը վերցնելով, ծանր քայլերով հեռանում էր։

Փաստորեն Սալվարդը մի օղակ դարձավ իմ և ֆիդայիների միջև։ Այդ էր պատճառը, որ նա ջրի գնալիս «Պարզիր աղբյուր» էր երգում։

Զորքը շարժվում էր։ Նա մերթ ծածկվում էր խութի ստվերում բլուրների ետև, մերթ երևում էր դրանց արևաշող լանջերի վրա։

Հաջին նայեց երկինքն ի վեր և, խուրջինը վերցնելով, ասաց.

— Ես գնացի, Խոդեդան։ Սա Քրդստան տանող ճանապարհն է։ Արինոքի քրդերը էս կողմով գնացին։ Ամեն ջուր իր գետի մեջ է թափվում, ամեն կռունկ պետք է հասնի իր երամին։ Ապա ձեռքը անհուսորեն թափահարելով ասաց.

— Մենք սխալվեցինք, Խոդեդան։ Թյուրքերը մեզ համար Քրդստան չեն ստեղծի։ Իզո՞ւր, իզո՞ւր սուր քաշեցինք հայերի վրա։ Իզուր գործիք դարձանք օսմանցու ձեռքին։ Մենք բոլորս կզղջանք, բայց ուշ կլինի։ Հակառակը պետք է լիներ, հակառակը։

— Ինչպե՞ս պետք է լիներ, աղա։

— Քուրդը և հայը պետք է միանային և խփեին օսմանցուն։

Ասատուրը Սև սարի լանջին կանգնած երկա՞ր, երկա՞ր նայեց Ավեսի Հաջու ետևից։ Գնաց Արինոքի քուրդը, առանց զենքի ու

զարդերի, միայն մի երկայն սպիտակ քոլոզ գլխին և մի հնամաշ խուրջին ուսը գցած։ Ճանապարհին նա սկսեց տխուր սուլոցով մի երգ ասել, և այս էր դրա իմաստը.

Առավոտուն արևն ելավ,
Շափաղ զարկեց լեռներուն,
Բլբուլ շադրը զարկեց
Վարդի բլբերուն։

Դե բացվի՛ր, վարդ, մի՛ թոռմիր, վարդ,
Ես բլբուլ եմ, չունեմ երամ գնալու։

Բլբուլն ասավ, մեջ իմ վարդին
Փուշ չկա,
Էնքա՛ն լացի, գիշեր-ցերեկ,
Թուխ աչքերիս քուն չկա։

Դե բացվի՛ր, վարդ, մի՛ թոռմիր, վարդ,
Ես բլբուլ եմ, չունեմ երամ դնալու։

Անքուն, անքուն մի հավք եմ ես,
Կորցրած երամ ու հանգիստ,
Հուրի փերին ձեռքես թռավ՝
Ոսկե երազն իմ կյանքիս։

Դե բացվի՛ր, վարդ, մի՛ թոռմիր, վարդ,
Ես բլբուլ եմ, չունեմ երամ դնալու։

ՀՐԱԺԵՇՏ ԱՐԻՆՈՔԻՆ

Ասատուրը մինչև Ճախրական առաջնորդեց ռուս զորքին։

Թամոն, Անդոկի գագաթից վերադառնալով, վերստին բաց էր արել իր ջրաղացը և սկսել էր աղալ վերջին սասունցիների աղունը։ Ուռենու տակ նստած նա նայում էր Ծովասարին, երբ լուր բերեցին, թե խաչապաշտի զորքը գալիս է։ Ծերունին գրկեց խոդեդանին և արտասվեց ուրախությունից։

— Իսկ քու աղեն ի՞նչ եղավ, լաո,— հարցրեց Թամոն։

— Փախցրի Քրդստան։

— Ինչո՞ւ։

— Նրա համար, որ ռուսների վրա չկրակեց, մեզ էլ ազատեց կոտորածից։

— Որ էդպես է, լավ արիր, լաո։ Լավ մարդուն միշտ լավություն պետք է անել։

— Հաջու պապերը հայ են եղել,— իբրև նորություն հայտնեց Հովիվը։

— Ո՞վ ասաց։

— Ինքը։ Բաժանվելիս նա ինձ տվեց իր տոհմի գիրքը։

— Օ՜, սա թանկագին գանձ է,— նկատեց Ճախրականցին, ձեռքն առնելով քրդի դեֆտերը, որի վրա խաչ և ձիավոր կար։— Հանձնիր Դաշտադեմցի Գևորգին։ Նա շատ էր ուզում էդ մատյանը ձեռք բերել։ Գևորգը դրա համար երկու անգամ իմ ջրաղացն է եկել ս. Աղբերիկից։

— Անպայման կհանձնեմ։

— Դա անկասկած Բռնաշենի նշանավոր մագաղաթն է, որ կորել է ս. Աղբերիկի քարայրից՝ Թարգմանչաց վանքի դուռը շինելուց հետո։ Երևի մեջը շատ կարևոր բան կա գրված հին քրդերի և հայերի մասին, և նմանապես ս. Աղբերիկի մասին,— ասաց Թամոն։

— Նրա տոհմի հիմնադիրը եղել է Բռնիկ անունով մի հայ իշխան, որի անունով մեր գավառը կոչվել է Բռնաշեն։ Էդ իշխանի հրամանով է շինված ս. Աղբերիկը։

Այդ օրը խաչապաշտ զորքը գիշերեց Ծովասարի թավշյա լանջերին։ Թամոն նրանցից մի քանիսին տարավ իր ջրաղացը։ Նրանք պառկեցին թեռների վրա, նրա պատերի տակ և կանաչ տանիքին։

Առավոտյան, երբ ծերունի ջրաղացպանը ռուս զորքին ցույց էր տալիս Սասնո բերդը, Ասատուրն այնտեղ տասնութամյա մի պատանի տեսավ, որ նետ-աղեղով լոր էր որսում Բերդի շրջակայքում։

— Գիտե՞ս ում տղան է,— հարցրեց Թամոն։ Խոդեդանը երկար զննեց պատանու արտաքինը, բայց չկարողացավ ճանաչել նրան։

— Կիրակոսի տղան է։

— Ո՞ր Կիրակոսի։

— Ընկուզնակցի էն խեղճ մշակի, որին առաջին օրը տեսար Դավթի ջաղացում։

Ասատուրը վերհիշեց տարիներ առաջ այնտեղ հանդիպած այն թշվառ գյուղացուն, որի տառապալից պատկերը հետագայում շատ հաճախակի կանգնել էր իր աչքի առաջ։

— Հայրդ ո՞ղջ է, լաո,— հարցրեց հովիվը։

— Սպանվել է Անդոկի կռվում,— պատասխանեց վշտահար պատանին։

— Անունդ ի՞նչ է։

— Եզնիկ։

— Էս որբ տղին ինձ տուր, Թամո,— ասաց Խոդեդանը սաստիկ կարեկցելով փոքրիկ աղեղնավորին։— Մի կտոր հաց եղավ, միասին կուտենք, չեղավ՝ թող միասին քաղցած մնանք։

— Տար, լաո, սրան տիրություն անելով, դու դրանով խեղճ Կիրակոսի գերեզմանի վրա աղոթած կլինես։

Ռոսանները Ծովասարը և Աստվածածնի լեռները վերցնելով, շարժվեցին դեպի Տիգրանակերտ։

Ասատուրը այլևս չառաջացավ զորքի հետ։ Նա մնաս բարով ասաց Թամոյին, և Եզնիկին առած, Ճախրականից վերադարձավ Արինոք։ Զորքին առաջնորդ դարձավ Թամոն, որը, փակելով Դավթի ջրաղացը, նրանց առաջն ընկած, գնաց Դիարբեքիրի կողմերը։

Խոդեդանը Արինոք հասնելով ամբողջ գյուղը ամայացած գտավ բնակիչներից։ Կարգադրություն էր եղել, որ կոտորածից ազատված հայերը շտապ թողնեին այդ վայրերը։ Դրանից մեկ օր առաջ գնացել էին Ստեփանն ու Շինական Պողոսը՝ իրենց ընտանիքներով։

Քարափի վրա կանգնած Ասատուրին էին սպասում Բայազն ու Հեղինեն։ Գյուղի դաշտերում ու ձորերում ամենուրեք բառաչում էին անտիրական կովերի, եզների և գոմեշների նախիրներ։ Մայում էին ոչխարների բազմաթիվ հոտեր, նորածին գառների և ուլերի հարյուրավոր խայտաբղետ խմբեր։

Կատվաձորից իր ականջին հասավ գետակի խշշոցը՝ կանաչ ընկուզենիների սոսափյունի հետ։ Մի ժամանակ, գրեթե ամեն լուսաբացին, իրենց մոր ետևից դեպի այդ ձորի աղբյուրն էին վազում իր երեխաները։ Իսկ այժմ նրանցից ոչ ոք չկար։ Մնացել էր միայն Հեղինեն։ Իրենց կատուն արդեն մտել էր ձորը և վերստին խառնվել վայրի գազաններին։

Այդ բարձունքի վրա կանգնած քանի՞-քանի՞ գիշերներ նա լռությամբ նայել էր դիմացի քարափին, որտեղից երևում էր Օնեի պլպլացող լույսը և լսում էր, թե ի՛նչպես լեռնային հովից ձորն էին

կաթում նրա ծառերի հասունացած տանձերը։ Ինչպիսի անձկությամբ նա սպասում էր Օնեի աքաղաղի կանչին, որպեսզի օրը լուսացած լիներ իր համար։ Իսկ այժմ ոչ մի ձայն չէր լսվում այդ հայաբնակ գյուղից, ոչ մի աքաղաղ չէր ողջունում արևածագը։ Անգամ լռել էր ահարկու Զատոն, որ գրեթե ամեն առավոտ, Տոնեի տանիքին կանգնած, գոռում էր դեպի Ծովասար։

Խոդեդանը բռնեց մի եզ, բարձեց նրա վրա մի մաշված կարպետ, դրեց իրենց ամուսնական բարձն ու վերմակը և Հեղինեին նստեցրեց վրան։ Չմոռացավ վերցնել նաև լագլագով կճուճը, որ ծարավելիս դրանով ջուր խմեին։

— Գնա՛նք, Մարտե աղջիկ,— ասաց նա և ձեռնափայտը վերցնելով՝ Բայազի ու Եզնիկի հետ ճանապարհ ընկավ դեպի Կծանք, այնտեղից էլ՝ Մուշ։ Նրա ետևից գնում էր միակ կենդանի մնացած շունը՝ Սևասարը։

Վերջին անգամ Աստուրը ետ դարձավ և նայեց քարափի վրա կանգնած իր մենավոր ու թափուր խրճիթին։ Դուռը բաց էր։ Շեմքի մոտ ընկած էր Թելո Մեսրոպի հին ավելներից մեկը, որի ծաղիկները դեռ չէին թափվել։ Պատի տակ դրված էր իրենց շաղգամի կողովը։ Զույգ ծիծեռնակների ծլվլոցը նրա աչքերը արտասուքով լցրեց, և նա երեխայի պես լաց եղավ։

— Մեկ Շենից գաղթեցի, մեկ էլ հիմա եմ գաղթում։ Ա՜խ, տո՛ւն, հեղ մ՚լե քեզ կտեսնե՞մ,— գոչեց Խոդեդանը և շարունակեց իր ճանապարհը։

Ամբողջ ազգն էր գաղթում։

Դեռ առավոտ էր, երբ հովիվը Պնտխների մոտով իջավ Մշո դաշտ։ Իր առաջ կանգնած էր ավերակ Խասգյուղը։ Բուլանուխ գնալիս Աստուրը եղել էր այդ գյուղում։ Բացի այդ, նա մի քանի անգամ աշնանը Արինոքից ընկույզ և վարդալուշ էր տարել այդ վայրերը ցորենի հետ փոխանակելու։ Ամեն անգամ Խոդեդանը այդ գյուղը տեսել էր շեն, լի կենսուրախ աշխատավոր մարդկանցով։ Թոնիրներից հեռավոր դաշտերի վրա տարածվում էր անուշահոտ հացի բուրմունքը։ Նախիրը տեղ չգտնելով, հեռանում էր գյուղից, կեր որոնելով Մեղրագետի արգավանդ եզերքներին։ Արագիլներն ու կռունկները ոչխարի հոտերի նման արածում էին մարգագետիններում։ Իսկ այժմ այդ շենը ամայի էր ու ավերակ։

Այդ միևնույն վիճակի մեջ գտավ նա Շմլակ, Ալվառինջ և Բերդակ գյուղերը։

Կանգնել էր Աստատուրը Բայազի գյուղի առաջ և մշուշոտ աչքերով նայում էր Մեղրագետին։ Այդ միևնույն դաշտում երեք հազար տարի առաջ լողանում էր վարդամատն Աստղիկը։ Այդ միևնույն գետի մեջ տասնյոթ տարի առաջ լողանում էին հայ հնձվոր աղջիկները։ Նա մոտավորապես որոշեց այն աղբյուրի տեղը, որի ակունքից փախցրել էր Բայազի կճուճը։ Այդտեղ էր, որ նորահարսը նստել էր ապիտակ ձիու վրա, և ընկերուհիներն անջատման ժամին պարել էին մանգաղի հրաշալի պարը։ Այդ դաշտի վրա ոտք դնելով, խոցեղանը հառաչեց, հիշելով այն նվիրականը, որ անվերադարձ կորել էր, այն անկրկնելին, որ այլևս չկար։

Վերջապես նա հասավ Մուշ։ Քաղաքը զարմանալիորեն լուռ էր։ Մշո աշխույժ ու բանուկ շուկան թափուր էր ու անհրապույր։ Էլ չէր լսվում հայ մրգավաճառի ձայնը, էլ չէր երևում հայ մշակն այնտեղ, էլ չէին կանչում՝ Մշո չամի՞չ։ Լեռնային գետակը գոռոմ-գոչոմով անցնում էր այդ սգավոր քաղաքի տակով։ Նա գազազած խփում էր իր եզերքներին, կարծես հառաչելիս լիներ իր կորած տերերի համար, և վշտից խելակորույս, վազում էր Մեղրագետի գիրկը, նրա արյունոտ ալիքների մեջ հանգչելու։

Տաշո կամուրջի մոտ Աստատուրի առաջ վազեց մի ոտաբոբիկ, գլխաբաց ծերունի և բռնելով եզան սանդը՝ բարձրաձայն գոչեց. «ավելները տարեք Մուստաֆայի քարվանսարան»։

Անցորդներից մեկն ասաց, թե դա քաղաքի հայտնի իշևանատեր Իբլի Մուստաֆան էր, որ բոլորովին գժվել էր դրանից մի քանի շաբաթ առաջ։ Թյուրքերը փաշայի հրամանով վերջին պահին վառել էին նրա իշևանը և սպանել էին նրա երեք բարեկամ հայերին, որ աշխատում էին այնտեղ։

Ամեն առավոտ Մուստաֆան սգավորի պես նստում էր իր քանդված խանի ավերակների վրա և մոխիրը երեսին քսելով բացագանչում էր. «Մուշե՛ղ, Համբարձո՛մ, Վաղարշա՛կ, գյալլն բուրա»։ Պատասխան չստանալով, նա վազում էր դեպի Տաշո կամուրջը, կարծելով, թե նրանք այնտեղ են գնացել, և ընդհատ-ընդհատ քրքջալով, որոնում էր նրանց ամայության մեջ։ Երբ որևէ անցորդ էր տեսնում բարձկանով քաղաք մտնելիս, կարծում էր թե Թելո

Մեսրոպն է սարից իջնում և հոհոալով գոռում էր բարձրաձայն. «ավելները տարեք Մուստաֆայի քարվանսարան»։

— Ես Թելո Մեսրոպը չեմ, ես Արինոքից գաղթեցի,— ասաց Խոդեդանը և, գլուխը դառնությամբ օրորելով, անցավ այդ խելագարված թյուրքի մոտով։

ՏՈՆԵՆ ԲԱԺԱՆՎՈՒՄ Է ՍԵՎ ՍԱՐԻՑ

Սև սարում արդեն ծաղկել էին սավդուկները։ Հաստատուն կաղնու փտած կեղևների միջից զանգակների պես կախվել էին գարնանային այդ զեղեցիկ զարդարանքները՝ լեռնային մանուշակների հետ գիրկընդխառն։

Տոնեն Տավրոսին կանգնեցրել էր Կաղնու տակ և, ամենայն հանդիսավորությամբ, նրան սովորեցնում էր խաչ հանելու կերպը։ Նա ուզում էր 'որդուն անտառից գյուղ ուղարկել՝ իմանալու, թե ի՞նչ եղան Շինական Պողոսը, Խոդեդանը և Ստեփանը։ Ինչո՞ւ մարդ չի գալիս Իրիցանք։

— Հենց որ գյուղի մոտ շեկ զինվոր կտեսնես, խաչ հանիր երեսիդ։ Աջ ձեռքիդ երեք մատը կդնես ճակատիդ, հետո կիջնցնես փորիդ, հետո կդնես կրծքիդ աջ կողմը, վերջում կդնես կրծքիդ ձախ կողմը,— խրատում էր հայրը։

Որդին մի քանի անգամ կրկնեց այդ վարժությունը և, գդակը ծաղիկներով զարդարած, մի փունջ սավդուկ էլ ձեռքը բռնած, ընթացավ դեպի գյուղ։ Անտառի եզրին հայրը մեկ անգամ էլ ցույց տվեց որդուն խաչ հանելու կերպը և «ով ջուխտակ Մարաթուկ, անփորձ պահպանիր մինուճարիս», ասելով ու նրա երեսը համբուրելով ճանապարհ դրեց։

Տավրոսը հազիվ էր մոտեցել Օնեի տանը, երբ տեսավ մի շիկագեմ զինվորի, որ զենքը ձեռքին դեպի Կատվաձորն էր իջնում։

— Քո՞ւրդ, արմենի՞ն,— գոչեց զինվորը հրացանը երկարելով դեպի երեխան։ Մանկան աչքերը շաղվեցին։ Նա, այլայլվելով, մի մեծ խաչ հանեց երեսին և ծաղկեփունջը նետեց սվինի վրա։ Զինվորը ժպտաց, վերցրեց սավդուկները և երեխային ուսին դրած՝ գյուղ տարավ։

— Արմե՞ն։

— Արմե՞ն, արմե՞ն,— մեքենաբար կրկնում էր մանուկը։ Այդ յուրաքանչյուր խոսքից հետո ռուս զինվորը համբուրում էր նրան, իսկ երեխան, իր գդակի սավդուկները հանելով՝ շարում էր ռուս զինվորի գլխարկին։

Բոլորից վերջը Սև սարից քաժանվեց Տոնեն։

Երբ Տավրոսը վերադարձավ և լուր բերեց, որ Դաշտադեմը դատարկ է, նա գրեթե խելագարվեց։ Մի գիշեր ևս նա անցկացրեց Իրիցանքում։ Առավոտյան կռացավ համբուրեց Դարավոր կաղնու բունը, որ բուրում էր մանուշակներից։ Ապա իր հաբանը լցրեց Յոթնակնանի աղբյուրի սառը ջրով և վեր կացավ։ Փչակի միջից հանեց որդուն, նրան առավ իր շալակը և, առանց դյուղ իջնելու, Սև սարով շտապեց առաջ։

Փայտփորիկը քնած էր։

Նա ընթացավ արշալույսով ողողված անտառի միջով։ Ահա դողդոջուն կաղամախիները, որ օրորվում են այգաբացի զեփյուռից։ Ահա տերևախիտ կաղնիները՝ գիրկընդխառն կանգնած ծաղկաբույր լորենիների հետ։ Ահա լեռնական թխկենիները, որ լայն տերևներ արձակած փակում են իր ճանապարհը։ Ահա վայրի խընձորենին, որ վարդագույն ծաղիկները հառաչանքով շաղ է տալիս իր վրա։ Ահա անուշահոտ նորքենին, որ կողքից կռանալով քաշում է իր գոտուց, շողացնելով իր կարմիր մեջքը։ Ահա գեղեցիկ կեչին, որ մեղմորեն շշնջում է նրան. «դուրս չգաս այս անտառից»։

Տոնեն անցավ մակաղատեղին։ Բազմահազար հոտը անգլուխ արածում էր անտառի մեջ։ Հարյուրավոր նորածին գառներ ու ուլեր ետևի ոտներին կանգնած, թափահարում էին կաղնի ծառերի տերևոտ ոստերը։ Մաքիների և այծերի մի ստվար բազմություն խռնվել էր աղեզների վրա։ Նրանք ագահորեն լիզում էին աղաքարերը, կեռ եղջյուրները միմյանց բախելով։

Մնացի՞ն։

Իր ետևում մնացին ագռավների տնկած հազարավոր ընկուզենիները, և այն զարմանալի նշենին, որի մասին արձանագրել էին պապերը հարյուրավոր տարիներ առաջ, և այդ ամբողջ կախարդական անտառը իր գունագեղ մշուշներով, և այն հրաշալի արևաշող կանաչը, որ այդ միջոցին ծալվում էր նրա ոտքերի տակ իբրև երազանք, իբրև անվերադարձ երջանկություն։

Տոնեն մեկ անգամ էլ վազեց դեպի Յոթնակնանի աղբյուրը և

ետ վերադարձավ։ Նորից վազեց և նորից ետ եկավ։ Ինքն էլ չիմացավ՝ թե ինչու։ Նրա հայացքը միայն մի արտահայտություն ուներ այդ պահին. «Ինչո՞ւ, թնություն, դու այսքան գեղեցիկ ստեղծեցիր մեր աշխարհը։ Ինչո՞ւ ձգեցիր այս ադամանդյա լերինքը խուժդուժ ազգերի ճանապարհին և նրան անվանեցիր Հայկական Տավրոս»։

Դավթի քարի մոտ նա դադար առավ։ Անդունդի վրա կախված առասպելական ժայռին հենված, սևսարեցին սկսեց նայել գոգավոր հարթությանը։ Իր առջև փռված էր Մուշի երկայնաձիգ և կանաչ դաշտը։ Նրա միջով հանդարտորեն և անձայն հոսում էր Մեղրագետը։ Բայց գյուղերը լուռ էին։ Նրանց երդիկներից առաջվա նման էլ չէր բարձրանում հորդահոս ծուխը։ Լուռ էին Պնտրխները, Ալվառինջն ու Բերդակը։ Լուռ էին Հացիկն ու Քրդագոմը։ Հեռավոր ճանապարհների վրա երևում էին գաղթականների հալածական խմբեր, որոնք Ծծմակա Քթի տակով ընթանում էին դեպի Մուշ։

Տոնեն նստեց Դավթի քարի վրա մի ծաղկած վարդենու մոտ, որ աճել էր ապառաժի միջից։ Տավրոսը գլուխը դրեց հոր գոգը։

— Պապո, մենք ո՞ւր կերթանք,— հարցրեց որդին սպիտակ վարդերից մեկը թփից պոկելով։

— Մո՞ւշ,— պատասխանեց հայրը։

— Ինձ չամիչ կառնե՞ս։

— Կառնեմ,— ասաց Տոնեն։

— Պապո, մենք ե՞րբ կդառնանք Մուշից։

— Մենք Մուշից էլ չենք դառնա, լաո,— պատասխանեց հայրը, որդու գլուխը տխրությամբ շոյելով։

Դավթի քարի վրա նրանք կերան վերջին հացը և խմեցին անտառի վերջին ջուրը։

Հայրը երկար ժամանակ լուռ էր։ Նա այդ բարձունքից մշուշոտ աչքերով նայում էր Մուշի դաշտին։ Իր աչքերի առաջ փուլ էր գալիս հայոց աշխարհը, դատարկվում, ամայանում էր հրաշալի Տարոնը։ Անդառնալի ցաք ու ցրիվ էին լինում աշխարհի վրա հարազատ շենների վերջին անօգնական բնակիչները։

Եվ նա գդակը ետ տալով, և գլուխն առնելով ափերի մեջ, հուզված սկսեց երգել իր «Մնաք բարով»։ Սկզբում նրա ձայնը խուլ ելևէջներով թափվում էր իր սրտի մեջ։ Գնալով նա ուժգնա-

ցավ և Դավթի քարի վրայից որոտալի ելևէջներով տարածվեց շրջապատի վրա։ Դեռ երբեք այդքան տրտում և արտակեղեք չէր երգել բռնաշենցի այդ տարաբախտ հովիվը.

— Մընա բարով Եփրատեսը.
Մընան բարով Տարոն ու Տավրոս,
Ինանկնյան աղբերք,
Բյուրակնյան լերինք,
Մընան բարով մեր նախնյաց շիրիմք։
Սասուն ու Տաղոնք,
Գրգուռ ու Նեմրութ,
Մընան բարով մեր Մեղրի ջուրք
Եվ աղբերակունք,
— Երթա՞նք, հապա երթանք։
Մընան բարով Խութ-Բռնաշեն,
Եվ Դաշտադեմ և Արինոք,
Եվ հարազատ Իրիցանք,
— Երթա՞նք, հապա երթանք։
Մնան բարով մեր վանորայք,
Մենաստան և նշխարք սրբոց,
Դաշտ ու ծաղկունք, երամ թրռչնոց։
Երամք թրռչնոց,
Ձեր ձագերով վայելեցեք
Մեր վայրն հայոց,
Մինչ դառնանք մենք, կամ մեր սերունդք,
Կամ մեր սերունդք...

Նա քնած որդուն առավ իր շալակը և, իր տխրագին ողբը շարունակելով, վայր իջավ Դավթի քարից։ Մերթ ուժգին և մերթ հանդարտ թնդում էր նրա խելագար երգը հայրենի ձորերի ու ժայռերի մեջ։ Իր երգում նա մնաս բարով էր ասում թավ անտառներին, որոնց այլևս չէր տեսնելու, և հայրենի լեռներին, որոնցից անջատվում էր անվերադարձ։

Ծծմակա Քթի տակ Տավրոսն արթնացավ։

— Էն է Սև սարը,— հոր շալակից ետ դառնալով ասաց որդին։— Ա՜յ, էն Դավթի քարն է, —մատնացույց արավ նա։

— Առանց էդ սարի ես մեռած եմ, լաո,— պատասխանեց հայրը, վերջին անգամ նայելով հարազատ լեռան։

Մի շաբաթ հետո Մուշ քաղաքում Տոնին մեռավ։ Նա պառկած էր իր բարեկամ Մատնիք Եղիշեի ներքնահարկում, որը նրան էր

տվել Խոդեդանի հարսանիքի մատանին։ Ամբողջ վերնահարկը կոր-ծանված էր։ Առաստաղը տապալվելով, իր մի ծայրով կախվել էր Խաչփողանի վրա, իսկ մյուսով՝ իջել էր այն սեղանին, որին Տոնեն դրել էր սնկերի կապոցը։ Ավերակ պատին երևում էր Եղիշեի հոր ջարդված լուսանկարը՝ ծանր մուրճով գութանի խոփը կռանելիս։ Ներքնահարկում, ուր հանգչում էր լեռնցին, փայտե կոտրած սնդուկի շուրջը թափված էին հին ձեռագրեր։ Դրանք Եղիշեի պապի թղթակցություններն էին, որ նա գրել էր «Արծվիկ Տարոնո» թերթի խմբագրությանը 1863—1865 թվականներին։ Մի փոքր այն կողմը, դռան ճեղքից փչող գարնանային քամին ննջեցյալի պաղ ոտքերին էր հարվածում մի պատառոտված թուղթ՝ Մասիսի նկարով և հայտնի մակագրությամբ.

«Արդյոք գալո՞ւ է մի օր ժամանակ,
Տեսնելու Մասսի գլխին մի դրոշակ.
Եվ ամեն կողմից պանդուխտ հայ ազգիք
Դիմել դեպ յուրյանց ազատ հայրենիք»

Այստեղ ու այնտեղ, այդ փոշեթաթավ և ցաքուցրիվ թղթերի ու հիշատակների մեջ պապղում էին հատ ու կենտ մատանիներ և օղեր, ո՛վ գիտե, ի նկատի առնված ո՛ր նորապսակների և զույգերի համար։

Շինական Պողոսը, Խոդեդանը և Ստեփանը Տոնեի ունեցած կես ոսկով քաթան առան, պատանեցին նրան և տարան թաղեցին Մշո Շեկ ավետարան եկեղեցու բակում, որ նայում էր սարալանջի այգիներին։ Նրա հետ դրեցին նաև իր հաբանը և հաստ ձեռնափայտը։

— Հանգիստ ոսկորներիդ, Տոնե,— գդակը վերցնելով, խոսեց Աստատուրը։— Քու գերեզմանի առաջ երեք տղամարդ են նստած և երեք կին. Պողոսն է, ես եմ, Ստեփանն է, Ոսկեհատն է, Բայազը և Աղրուքը։ Ի՞նչ ասեմ, Տոնե, դու մեռար, որովհետև քեզ դուրս շպրտեցին Սև սարից։ Խաղաղությամբ ննջիր Տարոնի օրհնյալ հողի դրկում։ Կանցնե՞ն տարիներ։ Հայաստանի վրա արև կծագի՛, Տոնե։ Մենք էլ չենք լինի էս աշխարհում, բայց էն երգը, որ դու վառված ասացիր, անմե՛ռ կմնա հայ շինականի սրտի մեջ։ Էդ մեր Դավթի ջաղա՛ցն էր, մեր Թոնդրան կրա՛կն էր, մեր տաք ու պաղ խաչերկա՛թն էր...

Յուրաքանչյուրը մի բուռ հող վերցրեց և շաղ տվեց ննջեցյալի վրա։ Երբ գերեզմանը ծածկվեց, Սևասարը մի քանի պտույտ գործեց նրա շուրջը, հոտոտեց գետինը, տխրագին հաչեց ու հեռացավ։

Բոլորը գնացին։ Թարմ շիրիմի վրա միայն մի երեխա մնաց։ Այդ Տավրոսն էր։

— Պապո, քեզ ինչո՞ւ դրին հողի տակ։ Պապո, մենք ե՞րբ կգնանք Սև սար,— հեկեկալով ասում էր նա։

Հետևյալ օրը, մանկան արտասուքը զսպելու համար, հորեղբայրը նրան մի բուռ չամիչ տվեց և, իր ձեռնափայտը վերցնելով, դիմեց դեպի Արևելյան Հայաստան։

Ճանապարհին մի տխուր դեպք պատահեց։ Խնուսի մոտ, որտեղ Բինգյոլի արևմտյան ճյուղը թափվում է Արածանու մեջ, Զարբհորի կամուրջից անցնելու ժամանակ, Տավրոսն անհայտացավ։

Ոսկեհատը, Բայազը և Աղրութը շատ լաց եղան, կարծելով թե նա անզգուշաբար ընկած կլինի հորդառատ գետի մեջ։ Նրան երկար որոնեցին Շինական Պողոսը, Խոդեդանը, Ստեփանը և Եզնիկը, բայց ոչ մի տեղ չկարողացան գտնել։

ԽՆՈՒՍԻ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Զարբհորի կամուրջն անցնելով, նրանք մոտեցան Խնուսի Խաչալույս գյուղին, որ գտնվում էր Բերդի մոտ, Դոման և Քաղքիկ ավանների շրջապատում, Արոս գետի ափին։ Արևմուտքից և հարավից երևում էին Բյուրակնի և Խամուրա լեռները, հարավ-արևելքից՝ Զեռնակա սարը, իսկ հեռվում մշուշին էր տալիս մենավոր Սիփանը։

Բինգյոլի հովը դիպավ Ասատուրի ճակատին։

«Խնուս խոշա,
Բինգյոլ՝ բարդա»,

մրմնջաց Խոդեդանը՝ հիշելով քրդական ժողովրդական երգի հայտնի խոսքերը։

Խնո՞ւս։ Այդ այն երանելի գավառն էր, ուր Ասատուրը երազել էր մի որևէ աշխատանք որոնել, եթե Հաջին իրեն ծառայության չընդուներ կամ թույլ չտար բնակվելու Արինոքում։

Խոդեդան անունը լսելով, մի կին, որին Խիմաթ էին ասում, շտապով եկավ և նրա հետ եղող բոլոր սասունցիներին տարավ իրենց գյուղը։

Ինչպես չար արարքը, այնպես էլ բարի գործը, վաղ թե ուշ, գալիս են մարդու առաջ։

Ո՞վ էր Խիմաթը։

Դա խաչալուսեցի խոշոր, կապույտ աչքերով, սպիտակ, վարդագույն դեմքով և ուժեղ թևերով մի հայ գեղջկուհի էր, որի ամուսինը և բազմաթիվ ազգականները սպանվել էին պատերազմի ժամանակ։ Խիմաթի քույրը ամուսնացած էր Վարդով գյուղացի Թորգոմի հետ, այն թշվառ փորմշակի, որին Խոդեդանը դրանից տասնյոթ տարի առաջ օգնել էր Հացիկ գյուղում։

Քույրն էլ, փեսան էլ սպանված էին։

Խիմաթն ուներ մի քանի զավակ, որոնցից մնացել էին մի աղջիկ և ծաղկատար դեմքով մի տղա, որի անունը Գերազատ էր։ Այդպես էր պնվանել իր կրտսեր որդուն, երազելով այն օրը, երբ ինքը օսմանյան գերությունից կազատվի և կտեսնի ազատ կյանք։ Մայրը որդուն դիմելով հաճախ ասում էր. «Ե՞րբ պիտի վերանա քու «գերին», լաո, որ քեզ մենակ «Ազատ» կանչեմ»։

Խաչալուսյա գյուղի կոտորածից ազատված բեկորները իրար գլխի հավաքվելով՝ կամաց-կամաց կարգի էին բերել իրենց քանդված օջախները։ Ծլել էին ցորենի, գլգելի և կորեկի արտերը։ Ագռաթներից նորից ծուխ էր ելնում։

Խիմաթը Ասատուրին և մյուս սասունցիներին գյուղ տանելով տեղավորեց իրենց տներում, բոլորին արտեր տվեց և խնդրեց, որ այդտեղ ապրեն։

Շատ շուտով Բայազը, Ոսկեհատը և Աղրութը մտերմացան Խիմաթի հետ։ Խաչալուսյա գյուղում ռուսական մի փոքրիկ զորամաս կար։ Հայ գյուղացիների և ռուս զինվորների միջև բարեկամական կապեր էին հաստատվել, թեպետ իրար լեզու չէին հասկանում։ Կանայք հաց էին թխում և լվացք անում նրանց համար, իսկ տղամարդիկ սննդամթերք և պարեն էին հայթայթում։

Խոդեդանը ամեն օր եփած հացը բառնում էր եզան և Շինական Պողոսի հետ տանում էր զորանոց։ Սրբեմն էլ Ստեփանի և Եզնիկի հետ գնում էր Խոզլվու սարը խավարծիլ քաղելու և եղնիկ որսալու՝ ռուս հրամանատարների համար։

Ռուսներին բան հասկացնելու գործում ամենից համարձակը և ճարտարագետը Խիմաթն էր, որն ամբողջ Խնուսում՝ անուն էր վաստակել իբրև հմուտ «ուռուսվար» խոսողի։ Մանավանդ շատ հռչակավոր էր նրա «ճշտոն», որով Խիմաթը սկսում էր իր խոսակցությունը ռուս սալդաթների հետ։ Ով որևէ բան էր ուզում հասկացնել ռուս զինվորներին կամ հրամանատարներին՝ Խիմաթին էր օգնության կանչում։ Այնքան շատ էին դիմողները, որ նա մտահոգությամբ բացագանչում էր. «Քա ես որ էս գեղի մեջ չլինեմ, բոլորը լա՞լ են։ Ուռուսվար ի՞նչ դժվար բան է, որ դուք չեք կրնա խոսա»։

Լեզվի հարցում ամենից շատ դժվարանում էին սասունցիք։ Երբ Խիմաթը «ուռուսվար» էր խոսում, Աստատուրը, Ստեփանը, Շինական Պողոսը, Բայազը և Ոսկեհատը բերանները բացած զարմացած նայում էին նրան։ Օգտվելով առիթից, Խոդեդանը և Շինական Պողոսը Խիմաթին մի քանի անգամ տարան ռուս հրամանատարների մոտ և նրա միջոցով հարց ու փորձ արեցին Տոնեի որդու մասին, թե արդյոք նրանք իրենց ճանապարհներին պատահաբար չե՞ն հանդիպել Տավրոս անունով մի սասունցի տղայի, որ կորել էր Զարբհորի կամուրջի վրա։

Մի օր երբ Խիմաթը տանը նստած խմոր էր շաղում, ներս մտավ Բայազը։

— Քա, Խիմաթ, զուրբան էղնիմ քըզի, սալդաթ է եկել, էլի տես՝ ի՞նչ կըսե։

— Քա էս սասունցիք հուհու (բոլորովին) լա՛լ են։ Քա աղջի, ուռուսվար ի՞նչ դժվար բան է, որ դուք չեք կրնա խոսա,— ասաց Խիմաթը ձեռքերը խմորից հանելով և զարմացած նայելով Բայազին։

— Բան-ման է բերել։ Հետս խոսում է, չեմ հասկանում։ Արի տես՝ իր միտքն ի՛նչ է։

Խիմաթը ձեռքերը լվաց, սրբեց գոգնոցով, դնաց կանգնեց սալդաթի դեմ և, թևերը մեջքին կանթելով, հանդիսավորությամբ հարցրեց.

— Հշտոն՞։

Ռուս զինվորը, որ քսան-քսանմեկ տարեկան մի սիրունադեմ խաղտյաշ երիտասարդ էր, նկատելով հայ կնոջ համարձակ խոսելաձևը, հասկացավ նրա միտքը, մտերմաբար ժպտաց և ձեռքը դեպի լվացքի կապոցը տանելով ասաց.

— Բեյո։

— Վլա՞նք,— երկու ձեռքերը իրար վրա տրորելով և շոր լվանալու կերպը ցույց տալով, հարցրեց Խիմաթը։

— Դա,— ասաց սալդաթը, գլխով համապատասխան շարժում անելով։

— Հիմա հասկացա՞ր, խոպոպ, թե իր միտքն ինչ է,— Բայազին դիմելով, հարցրեց Խիմաթը։— Մի բոխչա շոր է բերել, կուզի որ լվաս։

— Կլվամ,— ասաց Բայազը։— Մի հարցրու, տես, թե սապոն ունի՞։

— Սապոն բերե՞լ ես,— հարցրեց Խիմաթը այս անգամ մի ձեռքը մյուսին քսելով, իբրև թե օճառը շորին տրորելով փրփուր է հանում, և շեշտակի նայելով զինվորի երեսին։

Ռուսն այդ շարժումից իսկույն կռահեց, թե խոսքն ինչի մասին է և կապոցից մի կտոր օճառ հանելով ցույց տվեց նրան։

Խիմաթը քաջալերված ռուսերեն խոսելու իր ճարտարությամբ, այս անգամ դիմեց Բայազին, կամենալով իմանալ, թե լվացքը ե՞րբ պատրաստ կլինի։

— Լվացքը ե՞րբ կտաս,— հարցրեց նա։

— Երկու-երեք օրից հետո,— պատասխանեց Բայազը։ Այս անգամ Խիմաթը դարձավ զինվորին և նախ նրա կապոցը և ապա երեք մատը ցույց տալով ասաց.

— Երեք օրից հետո կգաս կտանես։

— Խարաշո,— ասաց զինվորը և գոհունակությամբ պատրաստվում էր հեռանալ, երբ Խիմաթը բռնեց նրա թևից և երկու ցուցամատները իրար կպցնելով ուզում էր հասկացնել, թե ծնողներ ունի՞։

— Հեր, մեր, ախպեր, քույր ունի՞ս։

Այդ խոսքի վրա զինվորը շփոթվեց, չգիտեր թե ինչ պատասխաներ. բայց նայելով նրա մատներին, որ շարունակում էին իրար քսվել, հասկացավ թե խոսքը ինչի մասին է։

— Դա,— ասաց զինվորը և լռեց։

— Ա՜խ, յամա՞ն,— գլուխը կարեկցաբար օրորելով բացագանչեց գեղջկուհին։— Ես մեռնիմ քու էդ չալ ու բալաք աչքերին, քու էդ խորոտիկ խաժ աչքերին։ Ա՜խ, քոռներ քու մեր, որ քեզի չվաստակեր, որ դու չիգեր, ընկներ էս սար ու ձոլեր, աշխարհե

աշխարհ։ Ո՞վ բերեց քըզի էս հեռավոր երկրներ, լաո։ Յարաբ հիմա ի՞նչ կենե քու մեր։ Ի՞նչպես կմոռաս ու կխաշվի խեղճը իր արցունքների մեջ։ Պատերազմը պոռ բան է, լաո։ Պատերազմը ստեղծողի տունը թող էս Խնուսա բերդի պես ավերակ դառնա։

Զինվորը շփոթվել էր։ Չէր իմանում ինչ ասի։ Խիմաթի աչքերը լցվել էին արցունքով։ Նա հիշում էր իր բազմաթիվ հարազատներին, որ սպանվել էին ընդամենը մի քանի ամիս առաջ։ Դառնությունից, վշտից օրորում էր գլուխը և երկա՞ր-երկա՞ր նայում էր ռուս զինվորին, որը նույնպես հուզվել էր սաստկորեն։

Ապա Խիմաթը մայրաբար հրեց սալդաթին թե՝ գնա և ետևից երեք մատը ցույց տալով ասաց.

— Երեք օրից հետո կգաս ու քու լվացքը կտանես, խոպո՞ւկ։

Երբ զինվորը հեռացավ, Խիմաթը լվացքի կապոցը հանձնեց Բայազիին և կես հպարտ, կես բարկացած եղանակով ասաց.

— Քա աղչի, ուռուսվար ի՞նչ է, որ դուք կդժվարանաք։ Վաղը մյուս օր, որ Խիմաթ մեռնի, էս ամբողջ գեղով լա՞լ պիտի մնաք։

Բայազը ծիծաղեց և շնորհակալություն հայտնեց Խիմաթին՝ ասելով.

— Խիմաթ քույրիկ, աստված ամեն մարդուն մի շնորհք կիտա։ Քըզի լե էդ շնորհքն է տվել։ Էդ շնորհքով մնաս։

Խիմաթը ինքնագոհ, հպարտ քայլերով գնաց շարունակելու խմոր հունցելը, իսկ Բայազը ռուս զինվորի շորերը տարավ լվանալու։

Ճանապարհին նրան հանդիպեց Աղրութը։

— Քա, աղչի, էս Խիմաթ ի՞նչ լավ ուռուսվար կխոսա։ Կասես թե ուռուսի կնիկ է։

— Բա նրա հիշոն՞ն։ Էս համայն Հայաստան աշխարհքի մեջ նրա պես հիշոն ասող չկա,— հաստատեց Աղրութը։

Մի շաբաթ հետո, երբ Խիմաթը և Ոսկեհատը հաց էին թխում զորքի համար, իսկ Բայազն ու Աղրութը լվացք էին անում, եկան հայտնեցին, թե պետք է թողնել Խնուսը։

— Հշոն՞,— զարմանքով գոչեց Խիմաթը, խմորոտ ձեռքերը կողքերին կանթելով երկու մեծ հարցականների պես։

Բայց այս անգամ նրա հիշոն անպատասխան մնաց։

Խիմաթը Արոս գյուղում ազգականներ ուներ։ Նա Գերազատի և իր աղջկա ձեռքից բռնած՝ շտապեց այնտեղ։

Խնուսի հովիվները իմանալով, որ Խաչալույս գյուղում բնակություն էր հաստատել սասունցի մի նշանավոր հովվապետ, դրանից երկու օր առաջ Ասատուրին և Ստեփանին տարել էին իրենց սարերը, կամենալով մշտական ծառայության պահել իրենց մոտ։ Սևսարը ընդամենը մի քանի անդամ էր հաչել այդ երազական լեռների վրա։

Այդտեղ էլ նրանք առան Խնուսից գաղթելու լուրը։

Խոդեդանը կապեց եզը, թեռը գցեց եզան մեջքին, դրեց նախշուն վերմակն ու բարձը, Հեղինեին նստեցրեց վրան, Ավետի Հաջու դավթարը խնամքով պահեց խուրջինի մեջ և, ձեռնափայտը վերցնելով, նորից բռնեց արևելքի ճամփան։

Նրա հետ էին Շինական Պողոսը, Ստեփանը, Եղնիկը, Ոսկեհատը, Բայազը և Աղրութը։

Ասատուրի ճակատից վայր ընկավ Բինգյոլի հովը։ Ետևում մնացին Խամուրա սարն ու Խնուսի գետը, Արոս գյուղն ու Խաչալույսը, Դոմանն ու Քաղքիկը։ Ետևում մնաց Խոզվա կարմիր սարը իր կարմրախայտ խավարծիլներով և կարմիր եղնիկներով։

Նոր դոման իջավ Հայաստանի վրա։

ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Արաքսը ակիզը է առնում Բյուրակնյան լեռների հյուսիսային լանջերից։ Բասենի հովտում, դեպի արևելք թեքվելով, նա մտնում է Երասխաձորի անդնդախոր կիրճը։ Այնուհետև, ձախ կողմից նր մեջ ընդունելով Ախուրյան գետը, Արաքսը սկսում է հոսել դեպի Արարատյան մեծատարած դաշտը։

Ամբողջ ժամանակ Խոդեդանը և իր խումբը գնում էին այդ ոլորապտույտ գետի մայրական ափերով, որ սաստիկ հորձանքներով դեպի արևելք էր մղում իր կատաղի ջրերը։

Կանայք գնում էին առանձին։ Եզան վրա նստած էր Հեղինեն։ Նրա ծնկների մոտ ճոճվում էր կճուճը՝ շիթեր թափելով Ասատուրի ամուսնական բարձի և վերմակի վրա։ Բարձկանի աջ կողքով քայլում էր Բայազը՝ իլիկ մանելով։ Ձախով Աղրութն էր գնում՝ Շինական Պողոսի կինը, որ հաստ շյուղերով գուլպա էր գործում, իսկ

ետևից ընթանում էր Ոսկեհատը՝ ակիշը թևի տակ, նույնպես ձեռագործով զբաղված։

Տղամարդիկ քայլում էին գետի անմիջական եզերքով։ Տեղտեղ Արաքսն այնպիսի ուժգնությամբ էր բախվում քարաժայռերին, որ նրա շիթերը ցայտելով հասնում էին մինչև ուղևորները, զովացնելով ու երբեմն էլ թրջելով նրանց զգեստը։ Խոդեղանի և Ստեփանի մեջտեղով քայլում էր շունը։ Եղնիկը մերթ ընդ մերթ նետ-աղեղը լարելով հավքեր էր որսում և, վազելով, վերստին միանում էր խմբին։

Ճանապարհի մոտ սևին էր տալիս մի արտ։ Սերմացուն պարկով դրված էր ավոսի մեջ։ Ո՛վ իմանա, ո՛ր շինականն էր թողել ու հեռացել։

— Եկեք էս արտը ցանենք,— ասաց Շինական Պողոսը և գոգնոցը կապելով մոտեցավ սևահերկին։

Ցանեցին, մի քիչ հանգստացան, հաց կերան և նորից ընկան ճանապարհ։

Ետևից և առջևից գնում էին հարյուրավոր այլ գաղթականներ՝ սամբ առ խոմբ, տոհմ առ տոհմ, բեկոր առ բեկոր։ Ոմանք նստած էին սայլերի վրա, եզների կամ գրաստների մեջքին։ Մի քանիսի շալակին երեխաներ կային։ Գնում, աննկուն գնում էին առաջ, թողած տուն ու տեղ և հայրենի օջախ, թողած հազարամյա սրբազաղախ հողը իրենց նախահայրերի, իրենց մերձավորների աճյուններն ու հիշատակները։ Գնում էին և ետ էին նայում... Նորից էին արժվում և վերստին կանգնելով հայացք էին նետում հարազատ հեռաստաններին։ Այն, ինչ որ մնում էր նրանց ետև՝ դա մի արտ էր, այլ մի ամբողջ երկիր, մի հատարակ բակ չէր, այլ մի սիրասուն ընդարձակ հայրենիք...

Իջավ լուսնյակ գիշերը։

Արաքսը զսպված մռնչում էր իր ապառաժյա եզերքների մեջ և ծավալվում էր դեպի Կաղզվան։ Սայլերը դանդաղ ընթանում էին արար ետևից։ Օ՜, այդ գաղթականական սայլերի ճռինչը։ Ուղևորներից մեկը լուսնյակին նայելով տխրագին երգում էր.

Էլ մի՛ տար լույսդ, պայծառ արեգակ,
Լուսնի շուրջ կապիր դու սուգի մանյակ,
Անցավ մեր երկրեն վայրենի խուժան,
Ջորցուց-թոռմեցուց ծառ, ծաղիկ, շուշան։

Եվ գիշերային լռության մեջ այդ սրտակեղեք երգը իր «ավաղ-ավաղներով» խառնվում էր Արաքսի հորձանքներին, գալիս փշրվում էր պանդուխտ սասունցիների սրտի մեջ և լացացնում ամենքին։

Մուշից դուրս գալուց մի ամիս հետո Աստուրը, Ստեփանը և Շինական Պողոսը իրենց ընտանիքներով մտան մի ավերակ քաղաք, որ գտնվում էր Ախուրյան գետի աջ ափին՝ Ալաշա սարի ետև։ Այդ Անին էր։

Նրանց նպատակն էր կարճ ճանապարհով բարձրանալ Արագածի լանջերը և այնտեղից էջմիածին գնալ։

Նրանք Անի մտան հյուսիս-արևմտյան կողմից, որ Ղարսի դուռ էր կոչվում, և ընթացան դեպի քաղաքի կենտրոնը։

Դեռևս տասներորդ դարի վերջերին Անին ամենախոշոր քաղաքն էր Հայաստանում, և խոշորագույն քաղաքներից մեկը ամբողջ Արևելքում։ Նա զարդարված էր շքեղ ապարանքներով, հոյակապ շենքերով և ուներ հարյուր հազարից ավելի բնակչություն։

Յուր ձեռնափայտին հենված և գդակը ձեռքում պահած նայում էր Խոդեդանը այդ կործանված քաղաքին։ Նրա ամեն մի ավերակը հիշեցնում էր Սասնո բերդը, որ նա տեսել էր Ճախրականում։ Փառահեղ, հազարանուն հեքիաթների ու երազանքների կարգն անցած Անին էր կանգնած իր առաջ։ Ու թեպետ Արաքսի որոտը, գաղթականական սայլերի գիշերային ճռինչը, քոչվորների սրտակեղեք երգերը դեռևս արձագանքում էին նրա սրտի մեջ, բայց այդ պահին նրա վրա իշխողը այդ ամայի քաղաքն էր։ Մի ամբողջ ժամ ուղևորները լռիկ կանգնած դիտում էին քաղաքի Միջնաբերդը, որ կիսակործան սյուներով և փշրված կամարներով սավառնում էր նրանց առաջ մայր տաճարի ձախ կողմից։

Իսկ պարիսպնե՞րը։ Որքան խորհրդավոր էին նրանք և ահարկու։ Դիտողների ոտնամանները, գուլպաները և անդրավարտիքի եզրերը կարմրել էին որձաքարերի, դարշնագույն խիճերի և փոշու այդ համատարած կարմրության մեջ։ Ո՛ւր նայում էին՝ մի փշրված խոյակ էր ընկած, ո՛ր կողմը դառնում էին՝ նրանց ոտքը դիպչում էր մի զարդաքանդակի, նրանց հայացքը հանգչում էր մի տապալված որմնանկարի վրա։ Աստուրը մերթ-մերթ ցավագին կերպով գլուխն էր շարժում՝ հիացմունքի, վշտի և ափսոսանքի ծանր հոգոցներ հանելով։

Գիշերը նրանք անցկացրին մայր տաճարի ավերակների մեջ, իսկ առավոտյան՝ ընկան ճանապարհ։

Նախշուն հակերն ու բեռները շալակած և դանդաղաքայլ, նրանք անցնում էին հայրենի քաղաքի փլատակների միջով։ Բոլորից առաջ ընթանում էր Խոդեդանի բեռնակիր եզը, որի վրա նստած էր Հեղինեն։ Մերթ ուղևորները երևում էին ամբողջ հասակով, մերթ միայն նրանց գլուխները և հակերն էին երևում, մերթ նրանց սրունքները, որ բեկբեկվում էին կիսականգուն շինությունների և արքայական կործանված շքամուտքերի առջևով։ Նրանց ստվերները քարշ էին գալիս ետևից, մերթ արձակվելով ու բացվելով պատառոտված վերմակների պես և մերթ երկարաձգվելով, ինչպես հսկայական պարան։

Հազիվ էին մոտեցել պարիսպներին, երբ Ստեփանը նկատեց, թե ի՛նչպես մի անծանոթ տղամարդ մի ահագին դուռ շալակած, որի սև կապերը անցնում էին նրա թևերի տակով, շտապում էր դուրս ելնել քաղաքից։

— Հորեղբայր, դուռն են տանում,— գոչեց Ստեփանը նրա թևից քաշելով։

— Ի՞նչ դուռ։

— Բերդի դուռը։

Ստեփանը վազեց։ Նրա ետևից վազեց Ասատուրը՝ իր շան հետ։ Հարկավոր էր տեղն ու տեղը ոչնչացնել այն ավազակին, որ հափշտակում էր հայրենի քաղաքի նվիրական բեկորը։ Խոդեդանը ուզում էր այնպես գոռալ, որ կողոպտիչը տեղն ու տեղը խլանար, վայր ընկներ ուշագնաց։ Բայց ինչպե՞ս աղաղակել այդքան փառահեղ և հավիտենապես լուռ քաղաքում։

— Կանգնի՛ր, թե չէ կսպանեմ,— իր աղաղակը հազիվ զըսպելով, գոչեց Ասատուրը և, առանց բեռը իջեցնելու, սաստկացրեց քայլերը։

Բայց մարդը, պարիսպներից դուրս գալով, սկսել էր շարժվել դեպի հյուսիս։ Նա ընթանում էր առաջ, առանց ետ նայելու, կքած իր հսկայական բեռի տակ։ Նա, ըստ երևույթին, ոչ մի կանչ չէր լսում։ Ծանրությունից նրա ոտքերը մխրճվում էին ճանապարհի կարմիր փոշու մեջ և դուռը ներքևի անկյուններով դիպչում էր գետնին։ Բեռնակիրը տակից երբեմնակի ցնցումներով ուղղում էր շալակը՝ ավելի ու ավելի վար կռանալով և գրեթե ընդունելով հո-

ռիզոնական դիրք։ Կարծես թե մի ահագին կրիա էր սողում այդ ժայռերի միջով։

Տեսնելով որ շալակտարը բոլորովին անտարբեր է իրենց կանչին, Խոդեդանը և Ստեփանը Դվինի դռնով շտապեցին նրա ետևից։ Նախ քան նրան կհասնեին, Սևսարը մի քանի ոստյուն գործելով, շրջանցեց ճանապարհը և կանգնելով մի ժայռի, սկսեց դիմադից ամբողջ ուժով հաչել նրա վրա։

Ուղևորը դուռն անմիջապես հենեց պարիսպներից դուրս շինված մի բաղնիքի կիսակործան բեկորի և, թաշկինակը հանելով, սրբեց ճակատի քրտինքը։ Նա ծանրորեն շնչում էր մեծ-մեծ հևոցներ արձակելով։

— Բռնեցինք, վերջապես,— գոչեց Ասատուրը և ձեռնափայտը բարձրացրեց, որ հարվածի։ Հանկարծ մի ուրախագին ճիչ արձակեց և զարմանքից ետ-ետ գնաց։

Նրանց առջև կանգնած էր Դաշտադեմցի Գևորգը։

Երեքով գրկախառնվեցին։

— Թարգմանչաց վանքի դուռն է,— ասաց Գևորգը իր շալակի բեռը ցույց տալով։

— Իսկ մենք կարծեցինք, թե Բերդի դուռն են տանում։

— Ոչ, սա այն նշանավոր դուռն է, որի պատմությունը դուք գիտեք։

— Ո՞րտեղից ես բերում։

— Մշո դաշտից։ Մուսաբեկն այս դուռը Թարգմանչաց վանքից գիշերով փախցրել էր Բիթլիս, որ հանձնի նահանգապետին։ Երբ հայ կամավորները Բաղեշ մտան, ես, ս. Աղբերիկից մի կծիկ պարան վերցնելով, շտապեցի այնտեղ և կազմակերպեցի դռան փոխադրությունը։

— Ինչո՞վ։

— Մինչև Ղարս բերել եմ զինվորական ֆուրգոնի վրա դրած՝ մի հայ բժշկի և կամավորների օգնությամբ, իսկ Ղարսից մինչև էստեղ՝ շալակով։

— Ո՞ւր ես տանում։

— Երևան։

Հասան նաև Շինական Պողոսը և Եղնիկը, իրենց հետ բերելով Հեղինեին ու մյուս կանանց, որոնք ամբողջ ճանապարհին զբաղված էին իլիկ մանելով և դուլպա գործելով։

Այնքան անակնկալ էր այդ հանդիպումը, որ ամենքն ապշել էին։ Խոդեդանի աչքում Դաշտադեմցի Գևորգն այնքան մեծացավ, որ ամբողջ Անին լուսավորվեց։ Ինչպիսի՜ անձնազոհություն, ազգային արժանապատվության ինչպիսի՜ տարերային ուժ կար այդ գեղջուկ մարդու մեջ, որ, ամենայն վտանգ արհամարհելով, Մուշի հեռավոր դաշտից Անի էր հասցրել հայրենական արվեստի նվիրական բեկորներից մեկը՝ բարբարոսական ոչնչացումից փրկելու համար։

— Իսկ ս. Աղբերիկի ձեռագրերը ի՞նչ եղան,— հարցրեց Աստուրը։

— Բաժանել եմ գաղթականներին, որ էջմիածնում ինձ հանձնեն։ Ափսո՜ս, որ չկարողացա ձեռք բերել Ավետի Հաջու հռչակավոր դավթարը։

— Վերցրո՛ւ, ինձ մոտ է,— ասաց Խոդեդանը և շալակն իջեցնելով, այնտեղից դուրս քաշեց խնամքով փաթաթված մի գիրք, որի կազմի վրա մի մեծ խաչ և ձիավոր էր դրոշմված։

— Ինչպե՞ս ձեռքդ ընկավ,— բացագանչեց Դաշտադեմցի Գևորգը։— Չէ՞ որ նա այս գիրքը գաղտնի պահում էր իր տոհմական սնդուկում։

— Բաժանվելիս տվեց ինձ, որ հանձնեմ Հայոց կաթողիկոսին։

— Իսկ ինքն ո՞ւր գնաց։

— Քրդստան։

— Որքա՞ն եմ շարշարվել, որ այս մատյանը իմ ձեռքն ընկնի։ Հայրս որքա՞ն մեռոն է տվել Նասրի քրդերին սրա համար։ Շնորհակալ եմ քեզնից, Խոդեդան։ Քո ծառայությունը իզուր չանցավ Ավետի Հաջու մոտ։ Սա Բռնաշենի հին ավետարանն է, որ գրվել է ս. Աղբերիկի քարայրում և կորած է համարվել մոտավորապես հազար երեք հարյուր տարի,— ասաց Դաշտադեմցի Գևորգը՝ Արաբոյի տան մատյանը ձեռքը վերցնելով և զգուշությամբ բաց անելով մետաղյա փակիչը։

— Հիշո՞ւմ ես այն գործիքները, որ ցույց տվեցի ձեզ ս. Աղբերիկի ատորերկրյա անցքում։

— Հիշում եմ։

— Այդ գործիքներով է շինվել իմ շալակի դուռը։ Ինչքան բառ կա այս ավետարանում, այնքան նախշ է դրված այս դռան վրա,—

բացատրեց Կլկը Օհանի տղան, Ավետի Հաջու գիրքը փաթաթելով և խնամքով թաքցնելով յուր ծոցի մեջ։— Գոնե իմացա՞ր, թե նա ո՛րտեղ էր պահում իր մնդուկի բանալին,— հարցրեց Գևորգը։

— Իմացա։

— Ո՞րտեղ էր պահում։

— Իր հրացանի խզակոթի մեջ։— Զմոռանաս նրա խնդիրքը կատարել,— պատվիրեց Աստուրը։

— Անձամբ կհանձնեմ վեհափառին։

Փոքր դադարից հետո նրանք Թարգմանչաց վանքի դուռը դրեցին եղան մեջքին, ծածկեցին վերմակով ու բարձով, ամուր կապեցին և ճանապարհ ընկան։

Տղամարդիկ գնում էին առջևից, իսկ ետևից գալիս էր կանանց խումբը։ Բայազը իլիկ էր մանում։ Ոսկեհատը եռանդագին շարժում էր յուր հաստ շյուղերը, ձեռքի ակիշով երբեմն կռանալով և այս կամ այն գետնաթումբը կամ բանջարը պոկելով ճանապարհի եզրից։ Նա և Աղրութը, մինչև Անի հասնելը, արդեն մեկական զույգ գուլպա էին գործել տղամարդկանց համար։ Վերջին երկու զույգը նրանք ավարտել էին Միջնաբերդի փլատակներին նստած։

Ճանապարհի եզրին կանգնած էր մի կիսակործան մենավոր եկեղեցի։

— Ի՞նչ վանք է,— հարցրեց Ստեփանը։

— Հովվի մատուռը կլինի,— պատասխանեց Դաշտադեմցի Գևորգը, որը լավ գիտեր Անի քաղաքի պատմությունը։

— Ինչո՞ւ է պարիսպներից դուրս շինված։

— Հին պատմություն է,— ասաց նա և ճանապարհը հաճելի դարձնելու համար, պատմեց այդ հոյակապ տաճարի կառուցման գեղեցիկ լեգենդը։

Տանջալից ուղին ավարտվում էր։

Արևմտյան կողմում մնաց Ալաջա սարը, իսկ հյուսիս-արևելքում՝ Շիրակի հարթությունը։ Վաղորդյան մշուշի միջից իր կուրծքը բացեց Արագած լեռը։ Իսկ երբ մի փոքր ավելի բարձրացան, հարավ-արևելքում, ուղիղ երկնքի ծայրում, փայլեց մի ուրիշ լեռ։

— Մասի՞սը, Մասի՞սը,— բացագանչեց Գևորգը, ձեռքը մեկնելով դեպի երևացող սարը։

— Ո՞րն է Մասիսը,— գոչեցին ուղևորները իրենց տեղերում քարանալով։ Կանգ առավ և բարձկան եզը, որը կրում էր սրբազան

բեռը։ Ոսկեհատը և Աղրութը դադար տվեցին իրենց փայտյա շյուղերին։ Բայազի իլիկը կանգ առավ։

Եվ նայեցի՞ն։

Անհանգի՞ստ, ապշած, հիացած նայեցին Արարատին։ Գուցե դեռ ոչ ոք այդպիսի տենչանքով չէր նայել այդ լեռան։ Խոդեդանին թվաց, որ եթե իր ձեռքի գավազանը մի փոքր երկարեր, կխրեր նրա ձյունների մեջ, այնքան մոտիկ էր այդ սպիտակ բարձունքը, այնքան պաղ ու սառնաշունչ։ Մինչև այդ տեսած բոլոր սարերը այնպես փոքրացան, այնպես նսեմացան այդ հսկայի առաջ։

Նրանք գտնվում էին Արևելյան Հայաստանի սրտում։

Այդ պահին ամենքի մտքով անցավ բռնաշենցի հովիվը, որ այնպես փափագում էր Մասիսի գագաթը տեսնել Մուշի լեռներից։

— Հեղ մ'լե նայենք լուսահոգի Տոնեի աչքերով,— առաջարկեց Ասատուրը և գդակը հանեց։

Եվ նրանք, ագահորեն, մեկ անգամ էլ նայեցին Արարատին՝ քավոր Տոնեի, իրենց վաղամեռիկ ընկերոջ փոխարեն։

ԷՋՄԻԱԾՆԻ ԴԱՇՏՈՒՄ

Ամառ էր։

Էջմիածնի մայր տաճարից դեպի հարավ ս. Գայանեի վանքի շուրջը, նրա մերձակա անտառներում և Ներսեսի լճի եզրին խռնված էին հարյուրավոր հին և նոր հայ փախստականներ։

Արինոքից բերված եզը մի քանի տարի ամենայն հավատարմությամբ ծառայել էր Խոդեդանին։ Նա այդ բարձկան եզով Խնոսի սարերից հասել էր մինչև Լեռնային Ղարաբաղ և 1918 թվականի հուլիսին վերադարձել էր Էջմիածին։

Նստած էր Ասատուրը ս. Գայանեի վանքի հյուսիսային պատի մոտ՝ Արարատյան դաշտի կիզիչ արևի տակ։ Աջ կողքի վրա ընկողմանած դանդաղ որոճում էր բեռնակիր եզը՝ փնչացնելով և կանաչագույն լորձունք թափելով բերանից։ Կոնքի հաստ ոսկորները, գավակի երկու կողքից ցցվելով, իրենց քերծվածքներով զրգռում էին իշամեղուների և ճանճերի ախորժակը։

Գլուխը եզան պարանոցին թեքած, աջ թևը դրած նրա կեռ եղջյուրին, իսկ ձախով գավազանը կրծքի մոտ պահած, Խոդեդանը

լուռ մտորում էր։ Բարձկանը մերթ ընդ մերթ պոչը խարազանի պես շարժելով հարվածում էր կողերին՝ իշաճանճերին հեռացնելու համար։ Այդ հարվածներից նրա ականջները պարբերաբար ցնցվելով դիպչում էին Աստուրի կզակին և քունքերին։ Մի պահ սթափվելով իր մտքերից, և նորից պարանոցին հենվելով, հովիվը թեը ամուր պահում էր նրա կեռ, փայլուն եղջյուրների վրա։

Ձախ կողմից նստած էր Ստեփանը՝ գդակը թեքությամբ դրած Սևսարի գլխին, շան ահարկու կերպարանքը շրջապատից ծածկելու և մասամբ էլ նրան դաշտային անսովոր արևից պաշտպանելու համար։ Ստեփանի կողքին նստած էին Շինական Պողոսը՝ աբան տակը ծալած, Դաշտադեմցի Գևորգը և Եզնիկը՝ նետ-աղեղը ձեռքին։ Դիմացը կանայք էին նստած՝ Բայազը, Ոսկեհատը, Աղրուքը և մանկահասակ Հեղինեն։

Ազգային գունագեղ տարազը, փուշիներով պճնված կարմրավուն գդակները, ծաղկավոր և զոլավոր անդրավարտիքները, կապույտ ելակները և բրդյա գույնզգույն գուլպաները մի բոլորովին ուրույն երևույթ էին հաղորդում գաղթականների այդ խմբին, խըստորեն զանազանելով նրանց բոլոր մնացյալներից։

Աստուրի ուշադրությունը բևեռված էր լճի շրջակայքում գտնված մի խումբ սովահար գաղթականների վրա, որոնք աչք չէին հեռացնում իր բարձկանից, որը գրեթե ողջ մնացած միակ կենդանին էր այդ ամբողջ շրջապատում։ Երրորդ օրն էր, որ նրանք պատրաստվում էին պատառոտել այդ թշվառ անասունին, և ակնդետ հետևում էին նպաստավոր միջոցի։ Իսկ Խոդեդանի եզը, մարդկային ցավերին ու դավերին անտարբեր՝ ծանր փնչացնելով, շարունակում էր պոչով և ականջներով հարվածել իշաճանճերին։ Կանաչագույն թանձր լորձունքը նրա ռունգերից և բերանի անկյուններից դանդաղ ծորալով թրջում էր էջմիածնի արբաստան գետինը։ Նրա կճղակներում խառնված էին Բռնաշենի, Խնուսի և Արարատյան դաշտի հողը։ Նրա եղջյուրների վրայով գալարվել էր Սև լեռան քամին, Բյուրակնյան լեռների հովը, Ղարաբաղի զեփյուռը։ Նրա սրունքների և կողերի վրա շաղախվել էին Արաքսի մայրական շիթերը և Անիի ավերակների կարմրափոշին։

Հայաստանի չափ հոգնած էր այդ եզը, նրա չափ տանջված և ծերացած։ Բայց նա տոկուն էր և կարող էր քայլել քարքարոտ առապարներով, իր կեռ եղջյուրները զարկելով ճանապարհի ա-

պառաժներին և տնքալով իր տաժանելի բեռան տակ։ Դա ինքը շարքաշ Հայաստանն էր նստած Արարատյան դաշտի վրա։

Դիմացից ծանր ոտնաձայն լսվեց։ Գևորգյան ճեմարանի կողմից նրանց մոտեցան մի բարձրաստիճան պաշտոնյա և մի զինվորական։ Առաջինը դաշնակցական նորաստեղծ պառլամենտի անդամ էր, տև կարճ մորուքով և եվրոպական համազգեստով մի միջահասակ պարոն, որ ձեռքին բռնել էր գեղաքանդակ գավազանը։ Երկրորդը ցից բեղերով թիսադեմ մի խմբապետ էր, որի մոխրագույն փափախը և թեքությամբ մինչև կրունկները իջնող հայկական կեռ թուրը ավելի ահարկու էին դարձնում նրա առանց այդ էլ սպառնալի կերպարանքը։

Դաշնակցական պառլամենտի անդամը մոտենալով գաղթականների այդ խմբին, և նրանց երևույթից նկատելով, որ սասունցիներ են՝ հարցրեց.

— Կամենո՞ւմ եք նորից Սասուն վերադառնալ։

— Սասուն։ Իսկ ո՞ւր է Սասունը,— բացագանչեց Շինական Պողոսը՝ ձեռքերը անհուսորեն օդի մեջ երկարելով։

— Կգնաք, շուտով ամենքդ էլ Սասուն կգնաք։ Հայաստանը ազատ հանրապետություն է հռչակված։ Ամերիկայի պրեզիդենտ պարոն Վիլսոնը զբաղված է Հայաստանի սահմանները որոշելու գործով։

— Կամա՞ց, ոտքիդ տակ բոլոճ կա,— բացագանչեց Խոդեդանը, մի խոշոր պատենավոր միջատի մահակի ծայրով փախցնելով պարոնի կրունկի տակից։

— Վիլսանն ո՞վ է,— հարցրեց Ասատուրը, բոլոճին քաշելով անվտանգ տարածության վրա և գլուխը եզան պարանոցից վեր բարձրացնելով։

— Ամերիկայի նախագահն է։

— Մաճ բռնել գիտի՞։

— Նա ամբողջ Ամերիկայի տերն է, ինչո՞ւ պետք է մաճ բռնի,— նկատեց պառլամենտի անդամը, զարմանքով նայելով այդ տարօրինակ լեռնականին և դեմքը փոքր ինչ խոժոռելով։

— Ուրեմն հովի՞վ է։

— Ոչ էլ հովիվ է։

— Ոչ մաճ բռնել գիտի, ոչ էլ հովիվ է։ Էդպիսի մարդը ինչո՞ւ պետք է մեր դարդն ու ցավը հասկանա։

Խոդեդանը մի փոքր լռեց, ապա ճակատը թեթևակի քորելով՝ ասաց.

— Կարելի՞ է մի հարց տալ։

— Խնդրեմ։

— Երբ մեզ կոտորում էին, պարոն Վիլսանը դահի վրա՞ էր։

— Այո։

— Ապա ինչո՞ւ մեզ չօգնեց։

— Նա հեռու էր մեզանից։

— Ես մի քուրդ ընկեր ունեի, անունը Շնկո էր։ Երբ մեզ կոտորում էին, նա ձյուն-ձմռնոցով ահագին տարածությունից եկավ-կանգնեց իմ տանիքին և իմ ընտանիքին ազատեց կոտորածից։

— Ճիշտ է,— հաստատեցին նստածները միաբերան։

— Եթե մի հասարակ անտիրական քուրդ իր անօգնական տեղովը կարողացավ մի հայ ընտանիք ազատել, մի մեծ ու հարուստ տերություն չէ՞ր կարող մի փոքր ազգություն ազատել։ Իհարկե կարող էր։ Կարող էր, բայց չուզեց։

— Իսկ ինչո՞ւ չուզեց։

— Չուզեց, որովհետև սրտացավ բարեկամ չէր,— ասաց Ատատուրը։

Զորականը և պառլամենտի անդամը զարմացած իրար նայեցին։

— Այնուամենայնիվ ես պետք է ձեզ պաշտոնապես հայտնեմ, որ պարոն Վիլսոնը հայ ժողովրդի ամենամեծ բարեկամն է և նա կօգնի մեզ՝ ստեղծելու մեր իրական և վերջնական հայրենիքը։

— Մեղրագե՞տն էլ մեջն է,— հեգնեց Հովիվը։

— Ավելի՛ն։ Հայաստանը տարածվելու է Սասունից մինչև Տրապիզոն, Տրապիզոնից մինչև Սևանա լիճը և ավելի հեռուներ։

— Չհավատա՛ք։

— Ինչո՞ւ չհավատալ, երբ քարտեզը պատրաստվում է։ Դա փաստ է։

— Էդ փոատը էս եզան մեջքից ուժե՞ղ է,— ձայնը բարձրացնելով նկատեց Խոդեդանը, «փաստ» բառը չհամկանալով և ձեռքը եզան մեջքին զարկելով։

Բայազը տեսնելով, որ ամուսինը կարող է տաքանալ և գործը բարդացնել, իլիկի ծայրով աննկատելի սեղմեց նրա ոտքը։

— Ի՞նչ ես կամենում դրանով ասել դու, ծուռ սասունցի։

— Էս բարձկան եղը մեզ Բոնաշենից մինչև Էջմիածին բերեց։ Ուզում եմ ասել, թե պարոն Վիլսանի ծրագիրը էս եղան մեջքի չափ ուժե՞ղ է, որ մեզ նորից էնտեղ տանի,— փոքր ինչ ավելի բորբոքվելով խոսեց Աստատուրը, կնոջ իլիկը մի կողմ հրելով։

— Ես շատ եմ լսել սասունցիների քաջության և ուղղամտության մասին,— ասաց պառլամենտի անդամը,—բայց առաջին անգամն եմ տեսնում, որ նրանք այդքան թերահավատ են դեպի Ամերիկայի և Եվրոպայի մեծամեծները, որոնց գլխին տղամարդու գդակ կա...

— Չենք հավատում, էլ չենք հավատում ոչ Գերմանիայի, ոչ Ամերիկայի, ոչ էլ ինգլիզի ու ֆրանկի մեծամեծներին։ Ստեփան, ի՞նչ կա էդ շան գլխին։

— Գլխարկ։

— Դա շո՞ւն է թե տղամարդ։

— Շուն է։

— Ամեն գլխարկ դնողը տղամարդ չէ, պարոն, ոչ էլ ամեն մինարա ելնողը՝ մոլլա,— պառլամենտի անդամին դառնալով, շարունակեց Խոդեդանը։— Մեզ երեք թագավոր կոտորեցին. սուլթան Ռեշատը, Վիլհելմ գերմանացին և Նիկոլա ցարը, որոնցից ամեն մեկի գլխին մի ոսկեղեն գլխանոց կար։ Ծուռ ակոսը միշտ մեծ եզիցն է։

— Հեռացեք մեզնից, լաո, իր սիրտը լցված է։ Մեր աչքի առաջ Մուշն ու Սասունը կոտորվեց։ Մեր գլխով անցածից աստված է շվարել,— միջամտեց Բայազը փլիկը ձեռքին կանգնելով իր բարկացած ամուսնու և պարոնի միջև։

— Բայց լսիր, քույրիկ, մենք եկել ենք ձեզնից սալդաթ հավաքագրելու։

— Մեզ մոտ սալդաթ չկա, լաո։ Մեր սալդաթները երկիրը մնացին,— բացագանչեց գեղջկուհին մի վշտալի հառաչանքով։

— Դե որ զինվոր չեք տալիս, գոնե էդ եղը տվեք։ Մեզ լծկան է պետք։ Մայր հայրենիքը անօգնական վիճակի մեջ է։

— Տարեք, թող ձեզ լինի,— ասաց հովիվը և եղան ոսկրոտ մեջքին զարկելով բարձրացրեց վեր։ Եթե ձեր ազատ ու անկախ հանրապետության փրկությունը սրանից է կախված, տարեք, թող էս անբան անասունը փրկություն դառնա մայր հայրենիքին։

Պառլամենտի անդամը և գորապետը դեռ չէին հասել մայր

տաճարի պարիսպներին, երբ սովյալ դաղթականների մի ստվար բազմություն լճի կողմից կացիններով գրոհեց նրանց վրա և հոշոտեց խեղճ բարձկանին։

Զինվորականը կրակեց։ Ըմբոստների խելահեղ ամբոխը հարձակվեց հայրենիքի փրկիչների վրա։ Երկու պարոնները հազիվ կարողացան ճողոպրել դաշտից։

Խոդեդանը ամբողջ հասակով կանգնած և երկու ձեռքով իր հատատ մահակին հենված, տխրությամբ նայում էր այդ սոսկալի տեսարանին։ Վշտից նա ցավոտ ճակատը դանդաղորեն իջեցրեց իր բռունցքված ձեռքերին, որ գրկել էին գավազանը։

Սուրբ Գայանեի վանքի ետևից նայում էր որբացած և սգավոր Մասիսը։

ԲՆԱԿԱՏԵՂԻ ՈՐՈՆՈՂՆԵՐԸ

1921 թվականի գարնանը Արագած լեռան հարավ-արևմտյան լանջերին շրջում էին հինգ շինական։

Առաջընթաց ուղևորը մի հաղթանդամ ծերունի էր, որի հաստաբուն ձեռնափայտը, հագի զոլավոր շալվարը, նախշուն գուլպաները և մաղեղեն աբան, ինչպես և մեջքի եռածալ կարմիր գոտին լեռնական տոհմապետի վեհություն էին տալիս նրան։ Ծերունու ետևից ընթանում էր մի բրդոտ շուն, որի վզից օղակավոր հաստ շղթա էր անցկացված։

Այդ լեռնական մարդը Խոդեդանն էր։

Մնացյալ ուղևորներից երեքը, որ նույնպես ձեռնափայտեր ունեին բռնած, բրդյա թանձր շալվարներ և կիսաթև աբաներ հագած տղամարդիկ էին, մաղակալված երեսներով և երկայն մորուքներով։ Չորրորդ ուղևորը մի աղեղնավոր լայնաճակատ պատանի էր, որի կզակը նոր էր ծածկվել աղվամազով։

Ասատուրի ետևից ընթացող այդ տղամարդիկ Շինական Պողոսը, Ստեփանը և Դաշտադեմցի Գևորգն էին։ Լայնաճակատ պատանին, որի ձեռքին նետ-աղեղ կար, Եղնիկն էր։

Այդ մարդիկ բնակատեղ էին որոնում։ Հինգն էլ բնավեր ուանչպարներ էին, պանդուխտ երկրագործներ, օթևանի և մշակության կարոտ։

Նրանք քայլում էին Արագածի կանաչ լանջերով։ Ուշադիր դիտում, ստուգում էին բնակավայրերի դիրքը, հողի և ջրի վիճակը։ Տեսած գյուղերը մեծ մասամբ ավերակ էին, գրեթե ամայի և տխուր։ Մի քանի տեղ նրանք երկար կանգ առան։ Այդ վայրերում լեռնային աղբյուրներ և գետակներ կային։ Օդը առողջարար էր, և հողը թեև խիստ սակավ էր ու քարքարոտ, բայց կարող էր պիտանի դառնալ մշակության համար։

Որքան ուղևորները վեր էին ելնում, այնքան աղբյուրներն ու լեռնային արոտները բազմանում էին, և օդը ավելի ու ավելի կազդուրիչ էր դառնում։ Ամենուրեք երևում էին ուրարտական և նախաուրարտական շրջանի բերդերի ավերակներ, ապառաժներ և քարայրներ խորհրդավոր փորագրություններով, և զանազան իծագրեր, որ ներկայացնում էին քարերի վրա տարբեր դիրքերով նստած այծի կամ ոչխարի պատկերներ։

Եվ դարձյալ Դաշտադեմցի Գևորգն էր, որ իր աշխարհագրական և պատմական գիտելիքներով օգնության հասավ։ Այն բնակավայրը, որ նրանք հետազոտության էին ենթարկում, կոչվում էր Թալին։ Հնում նա կազմում էր Հայաստանի Այրարատ նահանգի Արագածոտն գավառի մի մասը։ Այդ վայրը դեռևս մեր թվականության երկրորդ դարում ծանոթ էր հույն աշխարհագետ Պտղոմեոսին՝ Թալինա անունով։ Յոթերորդ դարում նա եղել էր Կամսարական տոհմի նշանավոր բնակատեղին։ Տասներորդ և տասնմեկերորդ դարերում Թալինում իշխում էին հայ Բագրատունի իշխանները։

Սովետական Հայաստանի կազմավորման առաջին շրջանում Թալինը մտնում էր Ալեքսանդրապոլի գավառի մեջ և կոչվում էր վեցերորդ գավառամաս։ Այդ գավառամասի կենտրոնը կոչվում էր Վերին Թալին (Մեծ կամ Հին Թալին)։ Վերին Թալինից դեպի հարավ գտնվում էր Ներքին Թալինը (Փոքր կամ Նոր Թալին)։

— Էս գյուղի անունը Ռինդ է,— ասաց Դաշտադեմցի Գևորգը, ձեռնափայտը ուղղելով դեպի մի կարմրաշեն վանք, որի շուրջը ավերակ տներ կային։ Դրանց մեծ մասը հիմնահատակ կործանված էր։ Կարմիր վանքը նույնպես քանդված էր ճակատից։ Դիմացը մի փոքրիկ լեռնագագաթ կար, որ հավերժական պահակի պես վերե-

վից հսկում էր այդ վանքի թախծալի մենությանը։ Սարի բարձունքին երեք արծիվ էին նստած, որի համար նրանք այդ լեռնագագաթը անվանեցին Արծվասար։ Կողքը մեծ ձոր կար։ Այդ ձորը նրանք կոչեցին Հինգ Ռանչպարի ձոր՝ իրենց ուղևորության հիշատակին։

Այդ գյուղի դիրքը և շրջապատը հատկապես գրավեցին ուղևորներից երեքի՝ Խոդեդանի, Ստեփանի և Եզնիկի ուշադրությունը։

Ճանապարհորդները Արծվասարի և Հինգ Ռանչպարի կողերով շարժվեցին դեպի արևելք, եռևում թողնելով Աշնակի քարքարոտ սարահարթը։ Նրանք հասան այդ լեռնամասի ամենաբարձր գյուղը, որ Վերին Բազմաբերդ էր կոչվում, և իսկապես, բազմած էր մի ահագին քարափի վրա։ Այդտեղից ընդարձակ հորիզոն էր բացվում դեպի Արարատյան դաշտը և դեպի Մասիսները։

Շարունակելով իրենց լեռնային վերելքը, հինգ ուղևորները հասան Մաղդա և Ավան կոչվող հայկական գյուղերին, որոնք նույնպես գտնվում էին սքանչելի դիրքի վրա։

Այդ գյուղերի ջրերի վիճակը ստուգելու նպատակով ուղևորները, Խոդեդանի գլխավորությամբ, ելան մինչև Արագածի ձյունոտ գագաթները։ Նրանց աչքերի առաջ բացվեց Ամբերդի նշանավոր ձորը իր կիսակործան վիթխարի ամրոցով և վանքով։ Ձորի սառն ու ձյունափրփուր ջուրը տասներկու խոշոր առուներով ելնում էր սարահարթի վրա և այնտեղից, տարբեր ուղղություններով, գահավիժում էր ներքև։

Նրանց ոտքերի տակ գտնվում էր Հայաստանի ամենաբարձր և ջրառատ լեռներից մեկը, որ հնում հռչակված էր «մեծասքանչ լեռն Արագած» անունով։ Տասից ավելի մեծ և փոքր լճեր զարդարում էին այդ մեծատարած լեռան կուրծքը, որոնցից ամենախոշորը, որ Սև լիճ էր կոչվում, գտնվում էր իրենց կանգնած տեղից մի քիչ այն կողմ։

Խոդեդանը իր մարդկանցով, ոտքը անդունդի պռկին մի սեպացած ապառաժի դրած, նայում էր կիսավեր ամրոցին։ Ներքևում երկու գետակները՝ Ամբերդն ու Արքաշանը, աջից և ձախից գալով գրկում էին իրար և անհետանում Քասախի մեծացած ալիքների մեջ։ Այդ այն վեհատեսիլ անառիկ վայրն էր, ուր ամենայն հայ, աչքը եռանկյունաձև այդ բարձունքի տխուր ավերակներին հառած, ակամա ձայնակցում էր կոշեցի հայրենասեր գուսանի հինավուրց երգին.

Ամբերդն ու Ալիշանը,—
Սև բերդն է մեծ նշանը,—
Տիրում էր Սմբատ իշխանը,
Ո՞ւր է արծիվդ, Ալագյա՛զ։

Մառախլապատ քու գագաթը,
Կրծքիդ համեղ անուշ կաթը,
Ծծում էր Աշոտ երկաթը,
Ո՞ւր է արծիվդ, Ալագյա՛զ։

Արարատն է քեզ ցավակից,
Զրկվել ես հայ զավակից,
Վառվում ես քու կրակից,
Կուրծքդ հրաբո՛ւխ, Ալագյազ։

Մի քարայծ ոստնեց ժայռի տակից և իր սուր, երկայն եղջյուրներով ճեղքելով օդը, սլացավ ձորալանջի արևոտ կողերով։ Դա Արագածի հռչակավոր քոչն էր, որի մնացորդները ապավինել էին այդ հեռավոր ծերպերին։ Ստեփանը և Եզնիկը հրճվալի կանչերով ընկան նրա ետևից։

Ջուրը կար, խոտը և ծաղկունքն առատ էր։ Քարայծը և հավքերի տեսակները նույնպես պակաս չէին։ Հարկավոր էր ստուգել ձայնի տարածման աստիճանը Արագածի վրա։ Այդ հանգամանքը կարևոր պայման էր լեռնաբնակների համար։ Չէ՞ որ նրանք պետք է սարից սար և ձորից ձոր իրար կանչեին։

Նախ գոռաց Ստեփանը։ Կանգնեց քարաժայռին և ամբողջ կոկորդով բոռաց։ Բայց նրա ձայնը ոչ մի արձագանք չտվեց։ Գոռաց Եզնիկը։ Սա նույնպես պատասխան չստացավ։

— Էս երկիր ձեն չերթա, հողբե՛ր,— բացագանչեց Ստեփանը, հուսահատությամբ ներքև իջնելով ժայռից։

— Դուք իջեք Ամբերդի ձորը, ես վերևից գոռամ,— ասաց Շինական Պողոսը։

Ստեփանը և Եզնիկը իջան ձորի ամենախոր տեղը։

— Լսվո՞ւմ է,— հարցրեց լեռնցին վերևից գոռալով։

— Լավ չի լսվում,— պատասխանեց Ստեփանը ձորի միջից։

— Մեր երկիր, որ կգոռայիր, սարերը ձմի պես ձեն կտային,— նկատեց Շինական Պողոսը, երբ նրանք իրենց տեղը վերադարձան։

— Սև սարը հո սար չէր, կարա՞ս էր, կարա՞ս,— ավելացրեց Աշատուրը և բարձրանալով անդունդի վրա կախված մի թխագույն առապարի՝ բարձրաձայն գոռաց։ Այդ կանչի վրա քարաժայռի տակից դուրս պրծան մի խումբ սասունցիներ շփոթված աղաղակներով։ Այդ մարդիկ նույնպես բնակատեղի որոնելու նպատակով եկել էին Արագածը հետազոտելու և, հոգնած լինելով, քնել էին ժայռի ստվերում։

Եվ, ո՞վ զարմանք, նրանք այն միևնույն սասունցիներն էին, որ Տալվորիկի քարայրի մեջ թաղել էին դարբին Զենոբին և լուսադեմին ճեղքելով թշնամու շղթան, դիմել էին դեպի Մուշ։ Մեկը նրանցից Փոքր Զենոբն էր՝ հերոս երկաթագործի որդին։ Երկրորդը, որն անմիջապես գրկախառնվեց Խոդեդանի հետ՝ Թաղվեցի Պետրոսն էր։ Երրորդը Գուլթան Հարութն էր իր երեք շինական եղբայրներով։ Չորրորդը Սեմալցի Թաթոն էր, իսկ վերջինը Զորերու Երվանդն էր՝ Կայծակ Պետոյի և Կայծակ Սեթոյի եղբայրը։

Այս հանդիպումն այնքան անակնկալ էր, որ նրանք ուրախությունից սկսեցին տարբեր ուղղություններով գոռալ դեպի վարի գյուղերը, ակնկալելով որևէ տեղից պատասխան ստանալ։ Սակայն իզուր։ Սարերը արձագանք չէին տալիս։ Եվ շատ տխրեցին ամենքը, որ Արագածի վրա ձայնը ուժգնություն չունի։

Բնակատեղի որոնողները բոլորն էլ շվարած նայեցին Խոդեդանին։ Ապրե՞լ թե չապրել այդ սարի վրա։

— Պե՛տք է ապրենք,— գոչեց Աշատուրը և ձեռնափայտը նետեց Արագածի կրծքին։

ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ

Եվ նրանք՝ բնակատեղի որոնող այդ տասնմեկ սասունցիները, որոշեցին ապրել Արագածի վրա։ Սահմանի մոտիկությունը (միգուցե շուտով երկիր գնային), լեռնային սառնորակ ջրերը, փարթամ արոտներն ու հրաշալի օդը, ինչպես նաև իրենց տեսած գյուղերի նպաստավոր դիրքը մխիթարական հույսեր ներշնչեցին ուղեվորների մեջ ապագայի նկատմամբ։

Ամենից ուրախալին սակայն այն էր, որ նրանք հաստատորեն կանգնած էին Սովետական Հայաստանի նվիրական հողի վրա։

Սովետական Հայաստա՞ն։

Ուղևորները Արագածի բարձունքից ագահորեն նայում էին ծանր երկունքով ծնված այդ երիտասարդ երկրին, որի վրա կազմվել էր Հայկական կառավարություն և սկիզբ էր դրվել հայկական նոր պետականության։

Լենի՞ն, Սովետական Հայաստա՞ն։

Որքա՞ն քաղցր էին հնչում այդ անունները, որքա՞ն սիրելի էին նրանք բոլոր աշխատավոր շինականների հոգուն, բոլոր տառապյալների սրտի համար։ Այդ փոքրիկ երկիրը, որ միայն մի գեղեցիկ բեկորն էր նախկին Հայաստանի, իր վրա էր բևեռել աշխարհով մեկ սփռված հայության ուշադրությունը։ Բոլոր հայրենազուրկ, տարագիր հայերը երազում էին հանգրվան գտնել նրա մայրական կրծքին։

Սասունցի ուղևորները բոլորաձև նստեցին մի բարձրադիր գեղատեսիլ վայրում, այնտեղ, ուր Ամբերդի տասներկու առուները բաժանվում էին իրարից, և մի աչքը Մասիսներին ուղղած, մյուսը Արագածի գագաթներին, պատրաստվեցին դիմում գրել Հայաստանի կառավարությանը։

Դաշտադեմցի Գևորգը, որ իր ծոցում շարունակ թուղթ ու մելան ուներ պահած, հանեց դրանք, դրեց մեջտեղի ողորկ սալաքարին և թիկնեց գրելու.

— Կարճ գրիր,— ասաց Խոդեդանը և ծխափողը վառելով սկսեց դանդաղ թելադրել.

«Մենք՝ սասունցի հովիվներս ու շինականներս, մեծ խնդիրք ունենք Հայաստանի կառավարությանը։ Թող հայտնի լինի նրան, որ մենք իսկական ռանչպար ժողովուրդ ենք և մեր սրտին շատ մոտ է մուրճ և մանգաղի իշխանությունը։ Թող հայտնի լինի նմանապես, որ մենք սարեցի մարդիկ ենք՝ բարձր օդի սովոր։ Դուրան հողի վրա մեր ցեղը մորեխի պես կչարդվի։ Խնդրում ենք կառավարությունից թույլ տալ, որ մեր քոչ ու գերդաստանը Էջմիածնից տեղափոխենք սար տեղ՝ պաղ աղբյուրների վրա։ Արագածի ջրերը նման են մեր Սև սարի գլգլան ջրերին, իսկ օդը կշնկշնկա մեր օդի պես։ Տվեք մեզ Արագած սար, որ ելնենք էնտեղ և մեր կորած սարերի կարոտն առնենք։

Կեցցե՞ Սովետական Հայաստանը»։

— Շեշտիր նմանապես, որ թեպետ Արագածի վրա ձայնը զորություն չունի, բայց մենք համաձայն ենք նրա վրա ապրել,— առաջարկեց Ստեփանը իր քարի վրայից շուռ գալով։

— Կարիք չկա դիմումի մեջ էդ տեսակ բան գրել։ Դա մասնավոր խնդիր է։ Կառավարությունը ի՞նչ գործ ունի մեր բռռալու կամ չբռռալու հետ,— դիտողություն արավ Շինական Պողոսը։

— Ճի՛շտ է,— հաստատեցին մյուս սասունցիներն այս ու այն կողմից։

Այնուհետև բոլորն իրենց բթամատները թաթախեցին թանաքի մեջ և դրոշմեցին դիմումի տակ։ Առաջին դրոշմը դրեց Խոդեդանը։

Եվ ավելացրին այսպես.

— «Մենք մեր դիմումը կնքեցինք մեր բութ մատներով։ Հավատացեք մեր մատներուն»։

Հետևյալ առավոտ Սեմալցի Թաթոն և Գուլթան Հարութը այդ խնդրագիրը հանձնեցին Էջմիածնի գավառի Սովետական Հայաստանի ներկայացուցչին։ Նախապես նրանք պահանջեցին, որ ներկայացուցիչը (որին նրանք չէին ճանաչում) երդվի, թե ինքը այդ դիմումը անձամբ կհանձնի կառավարությանը։

— Ինչպե՞ս երդվեմ, որ հավատաք,— զարմացավ Էջմիածնի ներկայացուցիչը։

— Մեր ներկայության առա «իմ կնկա լաչին իմ գլխին էղնի», և մենք քեզ կհավատանք,— ասացին Գուլթան Հարութն ու Սեմալցի Թաթոն։

Ներկայացուցիչը երդվեց, ապշությամբ նայեց այդ երկու սասունցիներին և դիմումը ձեռքին մեկնեց Երևան։

Դրանից մեկ օր հետո Երևանից լուր ստացվեց, որ Հայաստանի կառավարությունը թույլատրել է սասունցի շինականներին տեղափոխվել Արագածի հարավ-արևմտյան լանջերի վրա, ի նկատի ունենալով, որ նրանք լեռնաբնակ ժողովուրդ են և բոլորովին անսովո՛ր դաշտավայրի պայմաններին։

Սովետական Հայաստանի տարբեր շրջաններից՝ Էջմիածնի և Ալեքսանդրապոլի գավառներից մեծ շարժում սկսվեց դեպի Արագած։

Ասատուրը, Ստեփանը և Եզնիկը բնակության վայր ընտրեցին Ռինդ գյուղը Կարմիր վանքի մոտ և իրենց քոչը Էջմիածնից տեղափոխեցին այդտեղ։ Նրանց միացան նաև Գուլթան Հարութն իր երեք շինական եղբայրներով, Սեմալցի Թաթոն և Թաղվեցի Պետրոսը։

Բազմաթիվ ընտանիքներ տեղափոխվեցին Թալինի շրջանի Շղարշիկ, Կաթնաղբյուր, Դավթաշեն, Աշնակ, Մաստարա, Շենիկ և Ահագչի ավանները։ Մի քանի ընտանիքներ տեղավորվեցին Վերին և Ներքին Թալիններում։ Շատերը գնացին ավելի հեռու։ Նրանք բնակություն հաստատեցին Վերին Բազմաբերդ, Կաքավաձոր, Ագարակ և Ներքին Բազմաբերդ գյուղերում։

Մի խումբ ռանչպարներ դիմեցին դեպի այժմյան Աշտարակի շրջանի Դիան, Մաղդա, Սասունիկ, Ուջան, Արագածոտն և Ավան կոչվող լեռնային գյուղերը։

Վերջին վայրում տուն շինեցին Շինական Պողոսը և Օնեի երկու տղաները, որ նոր էին եկել Շիրակի գյուղերից։

Զորերու Երվանդը օթևան շինեց Ագարակ գյուղում։ Աշնակում, որ այդքան գյուղ էր և հնում հռչակված էր իբրև թագավորական ամառանոց, հաստատվեց դարբին Զենոբի որդին՝ Փոքր Զենոբը իր մի քանի տալվորիկցի համագյուղացիներով։

ՆՈՐ ՏՈՒՆ ԱՐԱԳԱԾԻ ԼԱՆՋԻՆ

Կարմիր վանքի շուրջը հաստատված շինականները եռանդով գործի անցան։ Ընդամենը ութ գերդաստանով նրանք սկսեցին կառուցել մի նոր ավան նախկին քանդված բնակավայրի հիմքի վրա։ Ահա այդ ընտանիքներից մի քանիսների անունները. Խոդեդանի տուն, Ստեփանի տուն, Եղնիկի տուն, Գուրթան եղբայրների տուն, Թաղվեցի Պետրոսի տուն, Սեմալցի Թաթոյի տուն և այլն։

Տղամարդիկ մեջքով մեծ-մեծ քարեր էին կրում և շարում էին պատերը։ Նախ շինում էին մեկի տունը, ապա մյուսի։

Տների կառուցմանը մասնակցում էին նաև մեծահասակ կանայք։ Դրանք թվով հինգ հոգի էին, որոնցից մեկը Ոսկեհատն էր, իսկ մյուսը՝ Բայազը։ Նրանց պարտականությունն էր՝ նոր շինված տների մեջ թոնիրներ պատրաստել։

Ասատուրն իր խրճիթի համար իբրև վայր ընտրեց մի կանաչ թումբ՝ գյուղի հյուսիս-արևմտյան ծայրում, Արծվասարի դիմաց։

Քարի գործը հեշտ էր, իսկ շինափայտ չկար։ Փայտը հայթայթում էին տեղական բնակիչներից, հատկապես Էջմիածնի և Աշտարակի շրջանի Աղավնատուն, Օշական և Ոսկեվազ գյուղերից։

— Փայտ չունե՞ք ծախո՞ւ,— կանչում էին նրանք գյուղից-գյուղ անցնելով և երկար նայելով քարե ցանկապատների ետևից։ Տեղացի հայերը ամեն հնարավոր միջոցներով օգնում էին իրենց բնավեր եղբայրներին։ Նրանք շինափայտը մատակարարում էին առանց որևէ վճարի կամ շատ չնչին վճարով։

Խոդեզանի տան համար հարկավոր եղավ ութ մեծ գերան։ Դրանց համար նա մինչև Բյուրական գնաց։ Այդ գյուղը հարուստ էր գեղեցիկ բարդիներով։

— Գերա՞ն, գերա՞ն եմ ուզում, ո՞վ ունի ծախու գերան,— կանչում էր Աստուրը, գյուղամիջյան քարքարոտ փողոցով դեպի վեր ելնելով և աջ ու ձախ նայելով։

— Ի՞նչ տեսակ գերան է քեզ հարկավոր, եղբայր,— ձայնեց մի տեղաբնակ ծերունի բակի միջից։

— Տանիքի և դռների համար գերան է պետք,— ասաց Խոդեզանը մոտենալով և հենվելով ցանկապատին՝ փողոցի կողմից։

— Հայաստանցի՞ ես,— հարցրեց բյուրականցին նույնպես մոտենալով և ներսի կողմից հենվելով պատին։

— Հայաստանցի եմ,— տանտիրոջ միտքը կռահելով և հպարտությամբ նրան նայելով պատասխանեց զոլավոր անդրավարտիք հագած սասունցին։

— Գաղթեցի՞ք։

— Գաղթեցինք, եկանք հավասարվեցինք ձեզ։

Բյուրականցին մի վշտագին հառաչանք արձակեց։ Նա շուռ եկավ աջ թևի վրա և ցույց տալով դիմացի քսան բարձրահասակ բարդիները, որ շարքով կանգնած էին քով-քովի՝ ասաց.

— Այս քսանից տասը քոնն են, ջոկիր, որ կտրեմ։

— Տասը շատ է, ինձ հինգ ծառ է հարկավոր,— նկատեց հովիվը։

Բյուրականցին մոտեցավ, վերցրեց կացինը և, թևերը քշտելով՝ ծառերից յոթը մեկ առ մեկ կտրելով շուռ տվեց բակի մեջ։

— Տար տունդ շինիր։ Թող աստված քանդի էն անիրավ ավազակի տունը, որ քո տունը քանդեց,— ասաց տանտերը բարդիներն սասունցուն հանձնելով։

— Վերցրո՛ւ արժեքը,— առաջարկեց գնորդը, քսակը արագությամբ դուրս քաշելով ծոցից։

— Բա ես իմ եղբորից բա՞ն կվերցնեմ, աստված որ վերևից տեսնի, ի՞նչ կասի,— նեղացավ տեղացին նրա ձեռքը ետ հրելով։

— Աստված չկա,— կտրուկ պատասխանեց Ասատուրը մռայլվելով։

— Ինչո՞ւ։

— Ասում եմ աստված չկա,— կրկնեց Խոդեդանը։— Եթե աստված լիներ, ես ինչո՞ւ պետք է մի քանի անգամ տուն շինեի։

— Դու մի կողմից ճիշտ ես,— հաստատեց բյուրականցին, երկարատև լռությամբ նայելով այդ զարմանալի մարդու ետևից, որ ահագին ծառերը մի ճյուղի պես ուսին դնելով, մեկ առ մեկ տանում և տեղավորում էր փողոցի ծայրին կանգնած սայլի վրա։

Արարատյան դաշտի և մասնավորապես Լոռու, Զանգեզուրի և Կորիսի շրջանի հայերը Հայաստանի արևմտյան գավառներից եկած բնակիչներին անվանում էին «հայաստանցի» և մեծ հարգանքով ու ակնածանքով էին վերաբերվում նրանց հանդեպ։ Հավանորեն այդպես էին անվանում, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ նրանք Մեծ Հայքի զավակներ էին։

— Հայաստանցի է,— ասաց ծերունի բյուրականցին,— խոսքը ուղղելով իր մի խումբ համագյուղացիներին, որոնք, ճանապարհի եզրերին և պարիսպների ետևում կանգնած, սաստիկ հետաքրքրությամբ և զարմանքով դիտում էին այդ հաղթահասակ սասունցուն։ Մի քանիսը կարեկցությունից և հուզմունքից արտասվում էին։ Ոմանք օգնում էին նրան ծառերը դասավորելու և պարանով կապելու սայլի վրա։

Ասատուրը բերած ծառերը չորացրեց, դրանցից գերաններ շինեց և պատրաստեց իր քարաշեն փոքրիկ տնակը։ Առաստաղը ծածկեց Արմավիրից բերած եղեգով։ Նոր տան դուռը բացվում էր մի երկայն ու նեղ բակի մեջ։ Տան ետևը Խոդեդանը մի բարակ ուռենու շիվ տնկեց։ Ապա ամրացրեց մի ցից և շունը կապեց նրանից։

Այս ձևով տներ պատրաստեցին նաև մյուս ընտանիքները, քրենց շինափայտը բերելով Աղավնատուն, Կոշ և Փարպի գյուղերից։

Առաջին ծուխը բարձրացավ Ոսկեհատի երդիկից։ Ապա բոցկըլտաց Բայազի թոնիրը։ Գյուղացիներն սկսեցին հերթով կրակ

առնել Ոսկեհատի տանից։ Կրակ տարան Գութան Հարությի տունը, Սեմալցի Թաթոյի, Թաղվեցի Պետրոսի, Եզնիկի տունը և մյուս ռանչպարների տները։ Այդպես էր հինավուրց կարգը։ Տարիքով ամենամեծ կինն էր հուր բաժանում։ Մինչև նա իր թոնիրը չբորբոքեր, ոչ ոք իրավունք չուներ կայծ տալ իր օջախին։

Երբ թոնիրները վառվեցին, Ոսկեհատն իր ակիշն առավ և հերթով բոլորի տներն անցնելով ստուգեց և օրհնեց նրանց օջախը։ Նա մեկի կրակը խառնեց մյուսի կրակին, որ գյուղի հիմքը ամուր լիներ։

Նոր գյուղը կոչվեց Իրինդ։

Հրճվում էր Աստուրը տեսնելով իր նոր երդիկի կապույտ ծուխը։ Սև սարեցի հովիվը գդակը վար առավ, հանեց իր թանձր կարմիր թաշկինակը և սրբեց ճակատի քրտինքը։

Նա կառուցել էր իր երրորդ տունը։

— Աստվա՜ծ, դու Խոդեդանի կյանքը կտրե, բայց էս դալար երդիկների ծուխը էլ չկտրես,— ասաց նա, ծունկի իջնելով իր նոր շեմքի առաջ և առաջին անգամ ձեռքերը դեպի երկինք կարկառելով։

ԱՌԱՋԻՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շատ շուտով այդ կիսափուլ վանքի շուրջը երևացին ութ հողե խրճիթներ։ Դրանք Իրինդի առաջին ութ բնակիչների տներն էին։

Երբ բոլորի կացարանները պատրաստ էին, պահանջ զգացվեց գյուղսովետ կազմել՝ նորաշեն ավանի աշխատանքները ղեկավարելու և սովետական իշխանության օրենքները գյուղում կիրառելու համար։ Սովետի նախագահ ընտրվեց Եզնիկը։

Նախագահի առաջին հոգսը եղավ նոր բնակիչներին ապահովել սերմացուով և հաջողությամբ անցկացնել այդ տարվա գարնանացանը։ Աստուրը խորհուրդ տվեց այդ տարի կորեկ ցանել, ի նկատի ունենալով կորեկի մեծ բերքատվությունը։

— Կորեկը մեզ կփրկի, ճոբո (հորեղբայր), բայց որտեղի՞ց ճարենք էդքան կորեկ՝ ցանելու համար,— հարցրեց Եզնիկը սաստիկ մտահոգությամբ։

— Դու լծկան ճարիր, թող արտերը վարեն, ես կորեկ կճարեմ,— ասաց ծերունին։

Հետևյալ առավոտ շատ վաղ, Խոդեդանը վերցրեց մի պարկ և Արծվասարի կողերով ուղևորվեց հարևան գյուղերը։ Եզնիկն էլ չմացավ, թե նա ո՛ւր գնաց։ Ուշ երեկոյան վերադարձավ մի պարկ կորեկ շալակին և մի քանի բուռ դդմի և շաղգամի սերմ կարմիր թաշկինակի մեջ։ Մինչև նրա վերադարձը Գուլթան Հարությը և մյուս հինգ տղամարդիկ վարել էին առաջին արտերը և տնամերձ հողակտորները։

Այդ տարի կորեկը, շաղգամը և դդումը առատ բերք տվեցին։ Վաստակը հավասարապես բաժանվեց գյուղի շնչերի վրա։

Այնուհետև որոշվեց բնակիչներին ապահովել մսի և ճարպի պաշարով։ Ստեփանը, Ասատուրը և Սեմալցի Թաթոն մի որսորդական հրացան առած գնացին սար։ Հերթով կրակելով՝ նրանք մեկ շաբաթվա մեջ սպանեցին տաս-տասներկու քարայծ։ Այդ որսը նույնպես հավասարապես բաժանվեց տների վրա։ Տանտիկինները դրանցից ղաուրմա պատրաստեցին ձմեռվա համար։

Այդ նույն ժամանակ Եզնիկը, Իրինդի ձորերն ու քարափներն ընկած, նետ-աղեղով կաքավ էր որսում համայնքի համար։ Կաքավներ շատ կային Հինգ Ռանչպարի ձորում։ Տաք եղանակներին, երբ նրանք շարք կազմելով սկսում էին պարել, Եզնիկը գաղտագողի դիտում էր նրանց հանդեսը և կամացո՛ւկ լարում էր նետ-աղեղը։ Իսկ երբ նրանք չէին երևում, նա երկու ձեռքի ափերը բերանին դնելով և բաց ու խուսի անելով, սկսում էր կաքավի պես կրկրալ։ Այդ ձևով Եզնիկը իր շուրջն էր գրավում կաքավներին և, հանկարծակի հարձակվելով, որսում էր նրանց։ Օրական երկու անգամ նա գյուղ էր վերադառնում սպանված հավքերի շարանը մեջքին կախած։ Մինչև ուշ աշուն գյուղացիները կաքավի և վայրի աղավնու խորոված էին ուտում։

Ոսկեհատը, Բայազը, Հեղինեն և մյուս կանայք գարնանը մանդակ, զոխ, սիբեխ և դաշտային այլ բանջարներ էին ժողովել ու չորացրել։ Այդ ամենը կորեկի և շաղգամի առատ բերքի հետ մեծապես թեթևացրին Իրինդի անդրանիկ բնակիչների ձմեռվա վիճակը։

Հետևյալ գարնանը գյուղացիները վար ու ցանքսի աշխատանքներին զուգընթաց վերջնական ստուգման ենթարկեցին գյու-

ղի աղբյուրները և հողայի՝ տարածությունները։ Աղբյուրների մեծ մասը գտնվում էր սարում։ Դրախտաձոր կոչվող վայրում գտնվում էր այդ շրջանի ամենահռչակավոր աղբյուրը, որ Մխով աղբյուր էր կոչվում։ Նրանից ներքև գտնվում էին չորս թե հինգ մեծ աղբյուրներ, մեկը մյուսից անուշահամ ու հորդառատ։

Թեպետ ջուրը, ծաղկունքը և կանաչությունը առատ էին, բայց ցարելահողը քիչ էր։ Իշխողը քարն էր, ապառաժը։ Տարիների երկարատև համառ աշխատանք էր հարկավոր, որ այդ վայրի կոճճ անդաստանները ծածկվեին փարթամ արոտներով ու ծառաստաններով։

Այդ գարնանը Բայազը հարևան գյուղից մի թխական բերեց, իսկ Աստատուրը սարից բերեց տասը հատ կաքավի ձու։ Մի ամիս հետո ճուտերը պատրաստ էին։ Բայց դրանք խիստ տարօրինակ հավքեր էին գյուղի համար կարմիր լերկ տոտիկներով՝ առանց գըլխի կատարի։ Ինչքան մեծանում էին, այնքան խատուտիկ էին դառնում և ոստոստալով փախչում էին դեպի սար։ Ո՛չ Բայազի կուտն էր օգնում, ո՛չ էլ թխականի հսկողությունը։

Սակայն Իրինդի բնակիչները չէին հուսալքվում։ Նրանք կազմել էին մի փոքրիկ համայնք, որի մեջ բոլոր հարկավոր ձեռքերը կային։

Խոդեդանը և Ստեփանն աշխատում էին իրենց համայնքի ընտանիքներն ապահովել այծերով ու մաքիներով։ Թաղվեցի Պետրոսին առավելապես լծկանի և կաթնատու կովերի հարցն էր մտահոգում։ Գութան Հարությունը նշանավոր մաճկալ էր և միջոց էր որոնում մի արոր ձեռք բերելու։ Սեմալցի Թաթոն փորձված սերմնացան էր և հողի լեզուն հասկացող։ Հողը գցում էր բերանը և մի քիչ ծամելով իմանում էր, թե տվյալ հողամասը ե՛րբ պետք է ցանել, արդյոք հարկավո՞ր է ուժել թե ոչ։ Հողի գույնից որոշում էր ապագա բերքը։

Գութան Հարությի եղբայրներից մեկը հակոմն ուներ մեղվագործության։ Երկրորդը հմուտ ջրտուք անող էր, չորրորդն աշխատում էր լեռնային ցորենի նոր տեսակ գտնել, որ այդ քարքարոտ վայրում ցանվելով առատ բերք տար։

Եղնիկը, որ ամենաերիտասարդ տղամարդն էր, ոչ միայն կառավարում էր նորաշեն ավանը, այլև կաքավ էր որսում իր համայնքի անդամների համար։

Յուրաքանչյուրը նրանցից, անհատական առանձին տնտեսատեր լինելով, միաժամանակ մտահոգված էր իր հարևանի բախտով։

Աստիճանաբար առաջին դժվարությունները հաղթահարվում էին։ Կյանքը մտնում էր իր կանոնավոր հունի մեջ։

ԲԱՏՐԱԿՆԵՐԻ ՀԱՎԱՔԸ

Թալինի գավառամասի մի շարք գյուղերում կուլակային հարուստ տնտեսությունները կատաղի ատելությամբ էին համակված երիտասարդ սովետական իշխանության դեմ։ Դրանից մեկ տարի առաջ նրանք մասնակցել էին Հայաստանում ծավալված փետրվարյան զինված խռովությանը։ Նրանց մի մասը, դաշնակցական խմբերին միացած, Թալինից շարժվել էր Երևանի վրա, գրավել էր այն, կամենալով տապալել սովետական կարգերը Հայաստանում։

Եվ այժմ էլ, փետրվարյան այդ խռովության ջախջախումից հետո, նրանք սուտ լուրեր էին տարածում Սովետական Հայաստանի մասին, թունավորում էին իրենց բատրակների միտքը, ամբարներում թաքցնում էին հացահատիկի խոշոր պաշարներ, պահում լծկաններն ու սերմացուն, կտրում էին առուների ջրերը և այլն։

Կուլակային տարրերի այդ ոտնձգությունների դեմ պայքարելու և բատրակների դասակարգային պայքարը նրանց դեմ շեշտակի դարձնելու համար Թալինում կազմակերպվել էր բատրակների կոմիտե։ Նման կոմիտեներ ստեղծված էին ամբողջ Սովետական Միության մեջ։ Դրանք սովետական իշխանության ամուր հենարաններն էին գյուղում։

Թալինի բատրակկոմի նախագահ էր նշանակված մի վառվռուն երիտասարդ, որ հինգ տարի հովիվ էր եղել այդ շրջանում։ Նրան կոչում էին Աբո Համազասպ։ Փոքրիկ մարմին ուներ Աբոն, նշաձև կրակոտ աչքեր, որ խիստ կենդանություն էին տալիս նրա ամրակուռ դեմքին։ Համազասպն էր աշխատանքի տեղավորում բատրակներին։ Նա էր պայմանագրեր կապում և ստորագրում կուլակների և անհատական ու կոլեկտիվ ուրիշ վարձակալների հետ, պաշտպանում բատրակների շահերը, հակում նրանց աշխատավար-

ձի վճարմանը և աշխատանքի իրավունքների ճշգրիտ պահպանությանը։ Վայ այն կուլակին, որ կհամարձակվեր շահագործել իր բատրակին կամ կուշացներ նրա վարձը։

Բատրակների նախագահ նշանակվելու հաջորդ օրը, Համազասպը հրավիրեց Թալինի գավառամասի քառանունվեց գյուղերի բատրակների հավաք։ Այդ հավաքին Իրինդից կանչվել էին Խոդեդանը, Ստեփանը և գյուղսովետի նախագահ Եղնիկը։

Արևոտ առավոտ էր։ Իրինդից Թալին էր գնում Ասատուրը։ Նրա ետևից ընթանում էր Սևասարը։ Ճանապարհին ծերունի հովիվը մտածում էր Աբո Համազասպի մասին։ Ի՞նչու էր կանչել իրենց։ Ո՞վ էր այդ երիտասարդը, որի անունը արագորեն տարածվել էր Թալինի շրջանում, որին ճանաչում և սիրում էին բոլոր բատրակներն ու աշխատավոր գյուղացիները, և որից դողում էին բոլոր շահագործողները։

Թալինում, մի բավական ընդարձակ սրահի մեջ, հավաքվել էին մոտ երկու հարյուր բատրակներ։ Նրանք ներկայացել էին խայտաբղետ տարազներով, գույնզգույն խուրջիններով և հաստ մահակներով։ Հավաքին հրավիրված եղիդ և թյուրք բատրակները ազատորեն տեղ էին գրավել հայ բատրակների կողքին, միևնույն նստարանների վրա։ Բոլորի մեջ իր պատկառելի հասակով, Ասատուրի ինքնատիպ և գունագեղ տարազով և ահագին գամփռով, աչքի էր ընկնում Խոդեդանը։ Նա տիրում էր դահլիճի վրա։ Լուռ նստած էր նա առաջին շարքում և ուշի-ուշով դիտում էր առաստաղից նախագահության սեղանին ծածանվող կարմիր դրոշակը Լենինի նկարով։ Ստեփանի ոտքերի մոտ հանգչում էր ահարկու շունը՝ գլուխը Խոդեդանի աջ ծունկի առաջ պահած։

Աբո Համազասպը բաց անելով նիստը՝ հրավիրեց Ասատուրին բեմ ելնել և նստել նախագահության սեղանի առաջ։ Երբ ծերունին բարձրացավ տեղից, թնդաց ուժգին ծափահարություն։ Այդ աղմուկի վրա Սևասարը սկսեց կատաղի հաչել, ծառս լինելով մերթ դեպի բեմը, մերթ դեպի սրահում նստածները։ Ստեփանը հազիվ կարողացավ զսպել նրան և, տիրոջ ձեռքից շղթան վերցնելով, դուրս տանել։ Այդ տպավորիչ միջադեպը սրեց բատրակների հետաքրքրությունը Խոդեդանի հանդեպ։ Նրանք սկսեցին ավելի լավ պատկառանքով նայել զուլավոր անդրավարտիք հագած այդ

լեռնական հովվին։ Շատերը բերնե բերան շշնջում էին. «Սասնա ծռերից է»։

Հիմնական զեկուցումը արավ Աբո Համազասպը։ Նա խոսեց գավառամասի բատրակների և բատրակկոմի անելիքների մասին։ Առանձնապես կանգ առավ Արևմտյան Հայաստանից Թալինի լեռնային գյուղերում վերաբնակված չքավոր գյուղացիներին օգնելու վրա։ Խոսեց հայ, եզիդ և այլազգի բատրակների եղբայրակցան դաշինքի մասին։ Բացատրեց նրանց, թե ի՞նչ է բերել և ի՞նչ է բերելու Սովետական իշխանությունը հայ աշխատավոր գյուղացուն։

— Դուք եք գյուղի տերերը,— ասաց նա, դիմելով բատրակներին։— Սովետական իշխանությունը ձե՛ր իշխանությունն է։— Ճառի վերջում բատրակկոմի նախագահը մատնացույց անելով Ասատուրին՝ ասաց.

— Տեսեք, այստեղ նստած է սևաբեղի հովիվ Խոդեդանը։ Նա առաջ աշխատում էր քուրդ բեկերի և աղաների համար, պահպանում էր նրանց հոտը, թափում էր նրանց տանիքների ձյունը, կռվում էր նրանց բերքը ոչնչացնող արջերի դեմ, իսկ այժմ կաշխատի իր սեփական գյուղի համար։ Նրա կինը «հապա» էր անում հարուստների կորեկի և գլգելի արտերը, քաղհանում էր նրանց շաղգամը, շերտում էր նրանց դդումը, իսկ այժմ կաշխատի միայն իր և իր հարևանների երջանկության համար, առանց շահագործվելու որևէ մեկի կողմից։

Ստեփանը դռան մոտից, իսկ Ասատուրը բեմից ապշած իրար նայեցին։ Վերջինս սաստիկ զարմացավ, թե Աբոն ո՞րտեղից գիտեր, որ ինքը կռվել էր արջերի դեմ և ձմռանը թափել էր աղաների տանիքների ձյունը։ Եվ մանավանդ, որ իր կինը «հապա» էր կանչել հարուստների արտերում կամ քաղհանել էր նրանց շաղգամանոցները։ Նա մեքենաբար վեր կացավ տեղից և գլուխ տվեց ժողովականներին։ Ծերունին ուզեց նստել, բայց բատրակները պահանջեցին, որ նա խոսեր։

— Ի՞նչ խոսեմ, ինչպե՞ս խոսեմ,— ասաց Խոդեդանը։— Խոսելու ժամանակ չէ, խաղ ասելու ժամանակ է։ Այդ խոսքի վրա նա մի պահ լռեց և գլուխը բարձր պահած նայեց մի անորոշ կետի։

— Երնե՜կ էստե՛ղ լիներ Տոնեն,— ինքնիրեն մրմնջաց Ասատուրը։

Բացի Ստեփանից ոչ ոք չիմացավ, թե նա ի՞նչ էր կամենում

ասել այդ մի հատիկ անունով։ Այն տպավորությունն ստացվեց, որ խոսում էր մի թանկագին մարդու մասին, որն անվերադարձ բաժանվել էր իր շրջապատից։

— Տոնե՜ն, Տոնե՜ն լիներ էստեղ,— գոչեց Խոդեդանը և, կարմիր թաշկինակը սեղմելով աչքերին, գնաց ու հուզված նստեց իր տեղը։ Երբ հանգստացավ, արագ վեր կացավ տեղից, կանգնեց բեմի առաջամասի վրա և ասաց.

— Տոնեն մեռած է, ես խաղ կասեմ իր փոխարեն։ Կեցցե՜ Սովետական ազատ Հայաստանը։ Կեցցե՜ բատրակ մարդու և բանվոր մարդու կառավարությունը։ Կեցցե՜ Լենինի արդար օրենքը։— Աբո Համազասպը և բոլոր ներկա գտնվողները ոտքի կանգնեցին և որոտալից ծափերով ծածկեցին Ասատուրի վերջին խոսքերը։

Ծերունի հովվի հակիրճ և ինքնատիպ խոսքը խոր տպավորություն գործեց ժողովականների վրա։ Նրան հետևեցին բաղմաթիվ այլ խոսողներ՝ շրջանի մյուս գյուղերից։

Երիտասարդ բատրակների կողմից հանդես եկավ Եղնիկը։ Նա խոսեց այն մասին, թե ի՛նչպես ինքը սովետական իշխանության շնորհիվ տեր էր դարձել իր բախտին և կառավարում էր մի ամբողջ գյուղ։

Թալինի բատրակների հավաքը Հայաստանի Սովետական կառավարությանը ուղղած բանաձև ընդունեց, որի մեջ հավաստիացնում էր երկրի ղեկավարներին՝ պայքարել գյուղում ստեղծված նոր կարգերի ամրապնդման համար և դառնալ մուրճ և մանգաղի իշխանության անսասան և վստահելի հենարանը գյուղում։

Բատրակկոմի նախագահը մի ոգեշունչ կոչով բոլոր բատրակներին ճանապարհ դրեց դեպի իրենց տեղերը։ Նա խոստացավ չքավորներին օգնություն ցույց տալ սերմացուով, լծկաններով և կաթնատու կովերով, ինչպես նաև բահերով և քլունգներով։ Բաժանվելուց առաջ Խոդեդանը մատնացույց անելով Լենինի պատկերը դրոշակի վրա՝ ասաց.

— Էն նկարից ունե՞ս մոտդ։

— Չունեմ,— ասաց Աբոն։— Թե արտանց ուզում ես՝ քեզ կտամ։

Ասատուրը ձեռնափայտին հենված կարոտալի աչքերով երկար նայեց Լենինի պատկերին։ Համազասպը մոտեցավ և առաջնորդի նկարը որ քորոցով ամրացած էր դրոշակին, ցած առնելով՝ հանձնեց նրան։

— Իմ կողմից նվիրում եմ քեզ։

— Շնորհակալ եմ,— ուրախացած գոչեց հովիվը և, նկարը զգուշությամբ ծալելով, դրեց ծոցը։

Այն միևնույն ճանապարհով, որով եկել էր, ուշ երեկոյան Իրինդ վերադարձավ Խոդեդանը։ Նրա հետ էին Ստեփանը և Եզնիկը։ Երեքն էլ գտնվում էին բատրակների առաջին շրջանային հավաքի զորեղ տպավորության տակ։

ԽՈԴԵԴԱՆԻ ՃԱՌԸ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Հետևյալ տարի, մայիսին, Թալինում բացվեց արևմտահայ աշխատավորության առաջին համագումարը, որին մասնակցում էին մոտ հարյուր քսան պատգամավոր՝ վճռական և խորհրդակցական ձայնի իրավունքով։ Այդ համագումարին մասնակցում էր նաև Աստուրը։ Թալինի շրջանի արևմտահայ բատրակների կողմից համագումարում ընդարձակ զեկուցումով հանդես եկավ Աբո Համազասպը։ Զեկուցողը բազմաթիվ փաստերով ապացուցեց, թե ի՛նչպես իմպերիալիստական Եվրոպան կես դար շարունակ շարաչար խաբել էր աշխատավոր ժողովրդին։— Քանի՞-քանի՞ անգամ Եվրոպան խաբեց մեզ,— ասաց Համազասպը։— Խաբեցի՞ն, դաժանաբար խաբեցին մեզ այդ ոճրագործները,— բացագանչեց նա։— Բայց մեզ փրկության հատան մեծ Լենինը և ռուսական Կարմիր Բանակը։— Խոդեդանը, որ նստած էր առաջին շարքում, բարձրացավ տեղից և սկսեց ուժգին ծափահարել Լենինին, որի մեծադիր նկարը դրոշմված էր բեմի ճակատին։ Նրան հետևեց բովանդակ դահլիճը։

— Թյուրքահայ հողազուրկ, ընչազուրկ չքավոր գյուղացիության բախտը այսուհետև և առհավետ կապված է մեծ Ռուսաստանի, նրա կարմիր պրոլետարիատի և չքավոր գյուղացու բախտի հետ,— շարունակեց զեկուցողը։— Մեզ համար, հայրենակիցնե՛ր, մի բան պետք է պարզ լինի, որ փոքրիկ ժողովուրդները մի զորավոր հենարան պետք է ունենան։ Հայ ժողովրդի հենարանն էլ Ռուսաստանի բանվորների և գյուղացիների իշխանությունը պետք է լինի։ Տաճկահայ աշխատավորությանը եթե վիճակված է է՛լ ավելի երջանիկ ապագա, ապա նա այդ կստանա միայն ու միայն բան-

վորագյուղացիական մեծ Ռուսաստանի եղբայրական աջակցությամբ և հաղթանակով։

Այնուհետև հռետորը կանգ առավ արևմտահայ աշխատավորության նկատմամբ ցուցաբերվող հոգատարության վրա։

— Զգույշ և չափազանց նուրբ սրտով պետք է մոտենալ այդ չարքաշ և վիրավոր ժողովրդին,— ասաց զեկուցողը։— Ամեն կերպ պետք է բուժել նրա ծանր վերքերը, ոգևորել նրա եռանդը և գործով ապացուցել, որ Սովետական Հայաստանը այն երկիրն է, որը կարող է և պետք է իրական հայրենիք դառնա բոլոր արևմտահայերի համար։

Համագումարում ելույթ ունեցան բազմաթիվ պատգամավորներ։ Խոսեց նաև Ասատուրը։ Վերջինիս ճառը լսվեց լարված ուշադրությամբ և ամենախոր տպավորություն գործեց համագումարի պատվիրակների վրա։

— Անցյալ անգամ բատրակների ժողովին ես չկարողացա խոսել։ Իմ միտքն եկավ Տոնեն։ Սիրտս լցվեց, աչքերս ուռան արցունքից։ Հիմա հարց եմ տալիս, ո՞ւր է Տոնեն։ Ո՞ւր են Օնեն և Քիշոն։ Ի՞նչ եղան Պոնտիցի Մանոսկն ու դարբին Զենոբը։ Մովասարի առաջ գիշեր ու ցերեկ աշխատում էր Դավթի հազար տարվա ջաղացը։ Ինչո՞ւ նրա ջաղացպանը թողեց իր հարազատ ճամբարականն ու հեռացավ։ Ես տեսել եմ ոչխարից շատ գելեր՝ քարափին նստած։ Նրանք քարվանի պես ելել են ու լուսնյակ գիշերով ուշիկ գնացել են ոչխարի կողքով։ Մի հատիկ դմակ չեն արնոտել։

Գելը, որ խփում է հոտի մեջ, տանում է մեկ ոչխար, տասը ոչխար։ Փառանին, որ զարկում է գիշերով՝ քշում է հարյուր ոչխար, հինգ հարյուր ոչխար։ Ես ձեզ հարց եմ տալիս, էդ ի՞նչ գել էր, որ օր ցերեկով խփեց մեր անտեր ու անպաշտպան երկրի վրա և երեք միլիոն մարդ քշեց իր օջախից դուրս, որին սպանեց, որին կերավ, որին արնախեղդ արավ ու դուրս հալածեց անապատների մեջ։ Էդ ի՞նչ փառանի էր, որ մտավ հայոց տուն ու մեզ էսպես անխղճաբար կոտորեց և ցրիվ տվեց աշխարհի վրա։ Ո՞ր սարի գելը կհամեմատվի էդ արնաբերան գազանի հետ։ Ես երեք անգամ տուն եմ շինել,— ասաց Խոդեդանը,— չհաշված Խնուսի լեռների ժամանակավոր խրճիթը։ Մեկ տունս շինեցի Շենոմ՝ քանդվեց։ Մյուս տունս շինեցի Արինոքում՝ էն էլ քանդվեց։ Երրորդ տունը քու կարմիր գրոշակի տակ եմ շինել, ո՞վ ամենակարող և ամենաարդար

Լենին։ Իմ նոր տունը շինված է Սովետական Հայաստանի հողի վրա։ Զորավոր պահապան եղիր նրան, ամենազորավոր Լենի՛ն։ Աշխարհի էս դառնակսկիծ անցուգնացի մեջ ես ու իմ Բայազը ոչ մի մեղք չունենք։ Ամենօրյա արևշատություն կմրմնջամ իմ լեռնական խրճիթի միջից քու փառքի ու գործի համար։ Արևշատություն կմրմնջամ իմ անունից և իմ մեռած ընկերների՝ Տոնեի և Ոնեի անունից, դարբին Զենոբի ու Պնտխցի Մանոսկի անունից։ Սև սարում կապրեինք մենք, աշխարհի շարին ու շառին անտեղյակ։ Մենք, որ անգութ ցարի զորքին դիմավորեցինք աղ ու հացով, ինչպե՞ս կդիմավորեինք քեզ, եթե դու մեր սարերի վրա երևայիր քու կարմիր զորքերով...

Մեծ հույսեր ենք կապել քեզ հետ, ո՞վ ամենատես և մեծագործ Լենին։ Չթողնես, որ հայ ժողովրդի հույսերը ցամաքեն և մեր աչքերի մեջ վշտալի արցունք մնա։ Դու բարի կատարում տաս մեր իղձերին և անթառամ պահես խաղաղությունը մեր հոգնած խրճիթների վրա։

Ասատուրը նստեց։ Երկարատև փոթորկալից ծափերից հետո ոչ ոք չէր կարողանում խոսել, այնքան մեծ էր նրա ճառի ներգործությունը։

Վերջում տաճկահայերի համագումարը հետևյալ ողջույնն ուղարկեց Լենինին.

«Մոսկվա, ընկեր Լենինին.

Սովետական Հայաստանի Թալինի շրջանի սասունցի, մշեցի, խնուսցի, ալաշկերտցի և այլ տեղացի թյուրքահայ չքավոր գյուղացիների առաջին համագումարը միաձայն որոշեց հանձին ձեզ, ջերմ կերպով ողջունել Սովետական Ռուսաստանի բանվոր դասակարգին և չքավոր գյուղացիությանը։

Մենք մեր հիացմունքն ենք հայտնում Ռուսաստանի Սովետական հանրապետությանը և նրա քաջարի Կարմիր Բանակին, որոնց ուշադրությունից չի վրիպել, անշուշտ, արևմտահայերի արդար պահանջը՝ վերադարձը հայրենի օջախ։

Մենք հանդիսավորապես խոստանում ենք ձեզ, ընկեր Լենին, ազնվորեն գործադրել մեր ճիգն ու եռանդը Հայաստանի Կարմիր Բանակի կազմակերպման համար։ Խոստանում ենք ամեն կերպ աշխատել, որպեսզի զորանա և ամրապնդվի մեր

շահերի իսկական պաշտպան և միակ փրկարար Սովետական Հայաստանի երիտասարդ հանրապետությունը։

Կեցցե՛ կարմիր և հզոր բանվորագյուղացիական Ռուսաստանը։

Կեցցե՛ երիտասարդ Սովետական Հայաստանը»։

ՆՈՐ ԳՅՈՒՂ

Համագումարից վերադառնալով պատգամավորները մեծ ոգևորությամբ ձեռնամուխ եղան նոր գարնանացանի աշխատանքներին։ Այդ տարի բատրակկոմի նախագահը վարկային ընկերության միջոցով Թալինի բոլոր չքավոր գյուղացիներին սերմացու և մեկական կով տվեց։ Մի կով էլ Խոդեդանը ստացավ։ Այդ առաջին խոշոր անասունն էր, որ Բայազը տեսնում էր իրենց տնտեսության մեջ։

Երրորդ աշնանը Իրինդում հողաբաժանություն եղավ։ Եզնիկը բոլոր գյուղացիներին արտեր տվեց և տնամերձ հողամասեր հատկացրեց բանջարանոցների համար։

Ասատուրի բանջարանոցը գտնվում էր իր տան ետևը, այն թմբի մոտ, որի վրա ուռենի էր տնկել ծերունին։ Թմբից այն կողմը, Խոդեդանը պատրաստեց մի արտ՝ առվույտ ցանելու համար։

Հետևյալ տարին գյուղացիների բանջարանոցները սկսեցին կանաչել։ Տները թաղվեցին կանաչության մեջ։ Ծաղկեց նաև Ասատուրի առվտոցը։ Այդ աշնանը ամուսնացան Ստեփանը, Սեմալցի Թաթոն, Գուրեան Հարությունն ու իր եղբայրները։ Մի քանի ընտանիք էլ դրսից եկան։ Գյուղը սկսեց մեծանալ։ Հետզհետե տների մեջ նորածինների լացի ձայներ լսվեցին։ Բակերում ու կալերում հավեր երևացին իրենց դեղնավուն ճուտերի հետ։ Բայազի արտասովոր կաթվները, որ շարունակ դեպի սարն էին ուստոստում, փոխարինվեցին իսկական վառեկներով։ Գյուղում լսելի դարձավ եզների, կովերի ու հորթերի բառաչ, ձիերի խրխինջ։ Մաքինների և գառների մայունը ցնծությամբ համակեց Ասատուրի սիրտը։ Լեռնալանջերին երևացին կեռումեռ ճանապարհներ։ Գյուղից գյուղ մարդիկ սկսեցին երթևեկել։ Դաշտերում հնչեցին մաճկալների ուրախ երգեր։ Արծվասարի կողերով բեռնված սայլեր ճռռացին։

Երկու տարի հետո կովերի մի խոշոր նախիր դուրս եկավ գյուղից։ Ոչխարն այնքան շատացավ, որ Խոդեդանը և Ստեփանը մի հահագին հոտ կազմելով՝ բարձրացան սար։

Գյուղսովետի նախագահ Եղնիկը խրախուսեց գյուղացիներին՝ շինել քանդված ջրաղացները և առուներ բաց անել գյուղում։ Կարմիր վանքի հետևում վերջին ջրաղացի մոտ Բայազը և Սեմալցի Կրպեն շինեցին մի դընգ, որ գյուղացիները կորկոտ ու ձավար ծեծեն իրենց համար։ Առաջին կորկոտը ծեծեց պառավ Ռակեհատը։

Ոչ թե մեկ գյուղ, այլ հարյուրավոր գյուղեր և ավաններ էին կյանքի կոչված։ Միայն Թալինի շրջանում հայկական շեների կողքին բուսել էին բազմաթիվ քրդական բնակավայրեր, ուր ապաստանել էին Ղարսի կոտորածներից ազատված եզիդ քրդերը։

Թալինի շրջանում վերաբնակված քրդերից շատերը արդեն բնակություն էին հաստատել Իրինդի և մյուս հայկական գյուղերի բնակիչների հետ։ Ասատուրի դռնով օրական տասնյակ քիրվոներ էին անցնում՝ ձիով կամ ոտավոր։ Այդ տան առաջ նրանք մի պահ կանգ էին առնում և սրտագին ողջունում էին իրենց հայ բարեկամին։

— Բարև, Խոդեդան ախպեր, նոր տունդ շինեցի՞ր,— ճանապարհի եզրից բարձրաձայն հարցնում էին նրանք։

— Շինեցի, դուք ողջ մնաք,— ձեռքերը բարեկամաբար թափահարելով պատասխանում էր հովիվը։

— Գերանները ո՞ր տեղից բերեցիր։

— Բյուրականից։

— Մենք էլ Աղավնատնից տարանք։

Ավելի մտերիմները իջևանում էին ծերունու տանը, կամ ոտենու հովանիքը նստած, ժամերով զրուցում էին նրա հետ, հյուրասիրվում էին և ապա նախշուն խուրջինները առած, սարերով գնում էին իրենց գյուղերը կամ օթևանները։

Քիրվոների մեջ կար մեկը, որ առաջին իսկ օրից բացառիկ լավ արեկամություն էր հաստատել Ասատուրի հետ։ Նրա անունը Մըստո էր։ Մատոն այն քրդերից էր, որ գյուղում լինում էր միայն ցանքի և հնձի ժամանակ։ Մյուս ամիսներին գնում էր Վրաստան և ենթակրություն էր անում կայարանում։ Նրա մասին երգ էր հորինված.

Ցորեն մի թիզ՝
Մատոն Թիֆլիս,
Ցորեն բուղում՝
Մատոն գյուղում։

Դա մի երկարահասակ, առողջակազմ քուրդ էր, որ դեղնագույն շի էր կապում գլխին և առանց Խոդեդանին տեսնելու սար չէր մ։

Մի առավոտ լեռներից իջնելիս, Ասատուրը բարձրացավ Արծ-ուարի գագաթը և նայեց հեռուն։ Թալինի, Աշտարակի և Էջմիածնի հարյուրավոր գյուղերի երդիկներից համատարած ծուխ կլնում։ Մեղմիկ զեփյուռից օրորվում էին հազարավոր արտեր։ ունցի և մշեցի երկրագործը շինել էր իր նոր տունը Արագածի ջերին, Սովետական իշխանության փրկարար հովանու տակ և, ջին անգամ իր կյանքում, ազատ շունչ էր քաշում դարավոր ապանքիներց։

— Փառքդ շատ լինի, Սովետական կառավարություն,— բանչեց Խոդեդանը, գլխարկը հանելով և դեպի վեր բարձնելով։

— Ա՛խ, Տոնե,— թառանչեց Ասատուրը՝ հիշելով իր անվեարձ կորած բարեկամին։— Երա՞նի, հազար երանի էս խաղաղ ը էնտեղ էլ բարձրանար...

Արծվասարի գագաթին կանգնած Խոդեդանը հիշեց նաև Շնկոիր քուրդ խաչեղբորը, որի տաղավարի մոտ լեռնային աղբյուոտերի մեջ ծնվել էր ինքը դրանից հիսունհինգ տարի առաջ։ ց այդ քուրդ լեռնականի անբասիր բարեկամությունը Բռնակոտորածի ժամանակ և իր երախտագետ սիրտը խայտաց րանքից՝ ազնիվ և անձնվեր ընկերոջ համար։— Հե՛յ գիտի, ։, գյալո ի՞նչ ես անում դու հիմա։ Նորից Աստվածածնու լեռ- վրա՞ են, թե դու էլ ինձ պես տեղահան եղար։ Հիշեց Շնկոյի ը՝ գեղեցիկ Զոզանին, որ իր ուսապարկի մեջ հաց ու պանիր ոել։— Ա՛խ, երկի՛ր, շաքար էր՝ շան բերան մնաց,— հառաչեոչեց Ասատուրը՝ սարից վայր իջնելով։

Գյուղ հասնելով, նա տեղեկացավ, որ հարևան Կաթնաղբյուր նում կոոպերատիվ խանութ էր բացվել։ Ստացվել էր մեծ ւկությամբ չիթ, շաքար և ամանեղեն։ Բայազը նախշուն չթից հրուն վերմակ ու ներքնակ էր շինել և հախճապակյա մի քանի

սիրուն ամաններ էր առել տան համար։ Հովիվը շատ ուրախացավ, տեսնելով նոր տեղաշորը, ուրախացավ, որ իրենց ենթաշրջանում խանութ էր բացվել, բայց ամանները վերցրեց տարավ խանութ և ետ տվեց։

— Լավ լսիր, Մարտե աղջիկ, չեղնի, չիմանամ, որ դու իմ տուն սադաֆե դուրան ամաններ ես բերել և ուրիշ տեսակ նախշուն պուտուկներ,— զգուշացրեց նա իր պառավին։

Խաղաղ էր ապրում Խոդեդանը Իրինդում։ Իր տանիքը ամեն գարնան ծաղկում էր։ Կարմիր կակաչները ներս էին կախվում երդիկից։ Երկու սիրուն ծիծեռնակ բույն էին դրել իր գերանների վրա ներսի կողմից և կայտառ աշխուժությամբ ել ու մուտ էին անում։

Ասատուրը նորից ուտում էր փայտյա հաստ գդալով և կավյա խոր պնակից։ Արևի շողքը երդիկից ընկնելով, վերստին ոսկեզօծում էր նրա շինական համեստ ճաշը։ Տանը եղած ժամանակ նա սովորություն ուներ նստել թոնրակի մոտ, կամ, թախտի վրա ընկողմած, ժամերով դիտել զույգ ծիծեռնակի զվարթ ելումուտը իր նոր հարկի տակ։ Դիտում էր և դանդաղ խաղում էր տերողորմյայի խոշոր հատիկների հետ, որ շինված էին գոմշի եղջյուրից։

Պատի վրա, որտեղ երեկոներին վառվում էր իրենց ճրագը, Խոդեդանը կախել էր Լենինի նկարը, որ նա նվեր էր ստացել բատրակկոմի նախագահից։ Յուրաքանչյուր անգամ երբ նայում էր առաջնորդի պատկերին, նա յուրովի ասում էր.

— Էսքան աշխարհք ազատեցիր, մեր Խաչառաշը հորի՞ թորգիր գելի բերան։

ՎԵՐԻՆ ՍԱՍՆԱՇԵՆՈՒՄ

Մի անգամ Խոդեդանը մի ուղևորություն կատարեց դեպի Իրենց գավառամասի հարևան գյուղերը, իմանալու թե ո՛վ կա, ո՛վ չկա իր հայրենակիցներից։ Արծվասարի գագաթից տեսած հարյուրավոր երդիկներից ելնող խաղաղ ծուխը նրան այն հույսն էր ներշնչել, թե, երևի, դրանցից մի քանիսը ծանոթ կամ հարազատ մարդկանց օջախներից էր ելնում։

Ինչպես միշտ, այս անգամ էլ նրա հետ էր իր հավատարիմ շունը։

Առաջին գյուղը, որ նա մտավ, կոչվում էր Վերին Սասնաշեն։ Մի խումբ լեռնականներ հաստատվելով այդտեղ, իրենց երկրի անունով էին անվանել այդ նոր բնակավայրը։

Այդ սասունցիների մեջ էր նաև Դաշտադեմցի Գևորգը։ Նրա տունը գտնվում էր գյուղի հյուսիսային ծայրամասում։ Գևորգն ամուսնացել էր և զբաղվում էր հողագործությամբ։ Բոլոր մագաղաթյա ձեռագրերը գաղթականներից հավաքելով և էջմիածնի ձեռագրատունը հանձնելով, նա իր մոտ պահել էր Սողոմոնի գիրքը և էփիմերդեն, որ իր հոր՝ Կլկըլ Օհանի օգտագործած գրքերն էին։ Դրանցով Դաշտադեմցի Գևորգը իր ազատ ժամերին գուշակություններ էր անում տարվա եղանակների, մարդկանց ծնունդի և մահվան հանգամանքների մասին։

Ասատուրը նոր էր ողջագուրվել Գևորգի հետ, երբ տան ետևը ձիու խրխինջ լսվեց։ Մարգագետնի մեջ արածում էր մի կարմիր ձի, որի պոչը և բաշը խուզված էին։ Դա մի հասարակ երիվար էր ոսկրոտ կողերով և փայտյա ասպանդակներով։

— Էս ի՞նչ ձի է արոտի մեջ,— հարցրեց Խոդեդանը գավազանը մեկնելով դեպի արևոտ մարգագետինը։

— Քուռկիկ Ջալալին է։

— Ո՞ւմ ձին է։

— Թամոյի։

— Թամոն էստե՞ղ է,— զարմացավ հովիվը։

— Իմ հարևանն է,— բացատրեց Գևորգը և ձեռնացույց արավ նրա խրճիթը։

Մոտիկ ձորակի մեջ, որի եզրին արածում էր տարօրինակ նժույգը, լսելի եղավ մի թանձր հազ։ Նախ երևաց մի գլուխ, ոչխարենու գդակով, ապա հետզհետե ձորից բարձրացավ մի ահագին տղամարդ՝ թանձր գոտին կապած, որի աջակողմը թեքությամբ խրված էր ծխատուփը։ Նա ձեռքին պահել էր մի կարճակոթ ծխամորճ՝ լայն, սևացած բերանով, որից փոշենման ծուխ էր ելնում, կարծես նոր հանգած թոնիր լիներ։

Մերունին մոտեցավ դանդաղաքայլ, համբընթաց և նկատելով Ասատուրին Դաշտադեմցի Գևորգի դռան առաջ, երկու-երեք քայլաչափ հեռավորությամբ կանգ առավ, գլուխը մի քանի անգամ շարժեց վերից վար՝ առանց աչքերը թարթելու, ապա ձեռքի գավազանով գետինը հարվածելով՝ ասաց.

— Էս է, ինչ որ կա՝ էս է։ Անդո՜կ, Կեպի՜ն, Սխտորքա՜ր՝ ամեն ինչ գնա՜ց...

Թամոն Ճախրականը լքելուց հետո Գրքոյի և մի խումբ ուրիշ սասունցիների հետ Արևելյան Հայաստան էր եկել Ալաշկերտի և Իգդիրի վրայով։ Նա Դավթի ջրաղացից բաժանվելիս, ոչինչ չէր վերցրել իր հետ, բացի մի թեռ կորեկից, մտածելով, որ դժվար տարիներ կլինեն և կորեկը պետք կգա։

Նա առաջին սասունցին էր, որ աղուհացով էր դիմել Հայաստանի նոր ղեկավարներին։ Երբ նրան հարցրել էին՝ թե ի՞նչ կուսակցության է պատկանում, նա պատասխանել էր. «Ես որ Արազից էս կողմն եմ անցել, ուրեմն բոլշևիկ եմ ու բոլշևիկ»։

Առաջին մի քանի ամիսը Թամոն Գրքոյի հետ հաստատվել էր Կաքավաձոր գյուղում, բայց վերջում շոգից և օդի քչությունից նեղվելով տեղափոխվել էր Վերին Սասնաշեն, որ բարձունքի վրա էր գտնվում և լայնատարած հորիզոն ուներ։ Այդ նոր գյուղում Թամոն հարևան էր դարձել Դաշտադեմցի Գևորգին։ Հողաբաժանման ժամանակ նա ստացել էր մի կտոր վարելատեղի և ցանել էր առաջին կորեկը։ Նրա արտը գտնվում էր իր տան եռևով անցնող ձորաբերանի հարավային լանջին, որի կողքով քչքչում էր Արագածից իջնող մի սառնորակ առու։

Զարմանալի լռակյաց և սակավախոս էր դարձել Թամոն։ Այլևս ոչ ոքի չէր պատմում Սասնա ծռերի պատմությունը։ Երբ նրան դիմում էին այդ խնդրով, նա որևէ պատճառաբանությամբ խույս էր տալիս։ Ինքն էր ու իր Քուռիկ Ջալալին։ Նստում էր այդ հասարակ երիվարի վրա, որի թամբը և փայտյա ասպանդակներն ինքն էր շինել, և գնում էր գյուղի շրջակայքը զբոսնելու։ Կամ երբ առվի ջուրը կտրում էին, ելնում էր սար՝ ջուրը կապելու։ Տեսնողներ էին լինում, թե ի՛նչպես նա որևէ քարափին ձին կանգնեցնելով և շուռ գալով, երկա՜ր-երկա՜ր նայում էր դեպի Իգդիրի և Կողբա սարերը և ավելի հեռո՜ւ, ավելի հեռո՜ւ...

— Ինչո՞ւ ես Դավթի հրեղեն ձիու անունը դրել էդ քոսոտ ձիու վրա,— հարցրեց Աստուրը։

— Ես չեմ դրել, ժողովուրդն է դրել։ Ինձ տեսան էդ ձիու վրա ու անունը դրեցին Քուռկիկ Ջալալի։

— Գոնե թամբն ու փայտե զանգուլակները փոխիր, ամոթ է,— հանդիմանեց հովիվը։

— Էսպիսի ձիուն էդպիսի թամբ ու զանգուլակ է պետք,— ասաց Թամոն և ծխամորճը բորբոքեց։ Ծուխն առատորեն հոսեց նրա քթածակերից ու բերանից։ Ջրաղացպանի ամբողջ դեմքը պարուրվեց մի տաք, գորշագույն մշուշով։

Խոդեդանը նկատեց, որ նրա սիրտը նեղվում էր։ Մի ինչ-որ բան էր ուզում մոռանալ և չէր կարողանում։ Մի անողոք մորմոք կրծոտում էր այդ լեռնական ծերունու սիրտը։

Թամոն ագահորեն մի քանի անգամ էլ իրար ետևից կուլ տվեց թանձր ծուխը և, ոտքը դնելով իր ձիու փայտե ասպանդակներին, լռությամբ հեռացավ։

ՀԻՆ ՎԵՃԸ ՀԱՐԹՎԱԾ Է

Վերին Սասնաշենից բաժանվելով՝ Խոդեդանը Աշնակի մոտով ուղևորվեց դեպի Ներքին Թալին։ Այդ գյուղը նստած էր հրաբխային մի քարքարոտ բարձունքի վրա, ուր երևում էր հսկայական որձաքարերով շինված մի հնադարյան կիսակործան պարիսպ։ Պարիսպից ներս դեպի ընդարձակ լեռնադաշտը նայող քարափին գտնվում էր այդտեղի նշանավոր միջնաբերդը, որ շինված էր հազար տարի առաջ։ Միջնաբերդի պատին կար հետևյալ մակագրությունը. «Մի ապերջանիկ հայր կտակում է այս ամրոցը, որպես իր նախասիրած վայր, իր երջանիկ որդուն»։

Միջնաբերդից երկու-երեք կիլոմետր դեպի հարավ, Թալինի լեռնադաշտի վերջին ծայրի վրա, երևում էր մի խարխլված վանք, որը հեռվից մի սգավոր մատուռի տպավորություն էր թողնում։ Միաժամանակ այդ վանքը ուղենիշ էր դեպի լեռներն ընթացող ճանապարհորդի համար։

Ներքին Թալինից դեպի հյուսիս սևին էին տալիս ավերակները մի հին իշևանատան, որ հարցական հայացքը ուղղած կիսակործան պարսպի տխուր երևույթին, ցավոտ ականջներով լսում էր կիկլոպյան ավերակ ամրոցի անչռելի ողբը Արտին սարի ետևից։ Ճանապարհը անցնում էր բերդի տակով։ Այդ վայրը այնքան ժեռոտ էր, որ կարծես թե Հայաստանի բոլոր քարերը կուտակել էին այդտեղ։ Այդ քարուտների մեջ կարմրին էին տալիս անհամար կակաշներ և երբեմն-երբեմն լսվում էր լեռնային կաքավների հաճելի կոթկոթոցը։

Միջնաբերդից դեպի հարավ-արևելք կարմրին էր տալիս մի փոքրիկ խրճիթ, որի լուսամուտը բացվում էր Արարատյան դաշտի վրա։ Խրճիթի դռանը մի սալորի ծառ կար։ Տակը դրված էր մի քարե նստարան։

Թեպետ օդը լեռնային էր, բայց կեսօրվա արևը զգալիորեն այրում էր։ Հաճելի էր նստել մանրատերև սալորենու շվաքում։

— Ո՞ւմ տունն է,— հարցրեց Ասատուրը,— դիմելով բերդի շրջապատում խաղացող մանուկներից մեկին։

— Ատաղձագործ Հակոբի։

— Կնոջ անունը ի՞նչ է։

— Ծաղկանուշ։

Ամեն ինչ պարզ էր։ Ասատուրը կանգնած էր այն շինական արհեստավորի դռանը, որ իր տունն էր շինել Արինոքում։ Նա շունը կապեց ծառից և գնաց նստեց քարե սառը նստարանին։

Նույն պահին մի տարիքոտ կին կուժը ուսին դրած մոտեցավ կարմրաշեն տանը։

Այդ Ծաղկանուշն էր։

Նկատելով, որ իրենց դռանը մի օտարական է նստած, տանտիկինը շտապ քայլերով մոտեցավ շեմքին, կուժը իջեցնելով հենեց պատին՝ սալորենու ստվերի տակ, և դուռը լայն բանալով՝ ասաց.

— Ներս մտիր, ախպեր, հայ շինականի օջախ է։

Իսկապես որ օտարականի տեսք ուներ Խոդեդանը։ Երեսի մազերը, որ անկարգորեն աճել և խճճվել էին, և փոքրիկ մորուքը, որ առաջներում չուներ, անհետացրել էին նրա ծանոթ դիմագծերը։ Տեսնելով, որ ատաղձագործի կինը իրեն բոլորովին չի ճանաչում, Ասատուրը գդակը հանեց և ճակատի թեթև քրտինքը սրբելով ասաց.

— Մի պաղ ջուր տուր՝ խմեմ, քույրիկ, հոգնած ճամփորդ եմ։

Գեղջկուհին նրան ջուր տվեց և իմանալով, որ սարի գյուղերից է գալիս, ասաց.

— Մի մարդու մասին հարցնեմ, ախպեր, տեսնեմ լսած կա՞ս։

— Ո՞վ է։

— Խոդեդանը։

— Քո՞ւրդ է,— իր իսկությունը ծածկելու համար հարեց հովիվը։

— Սասունցի հալ է։ Քրդերն են նրան Խոդեդան ասում։

— Չեմ ճանաչում։ Երևի ձեր հարևանն է եղել,— նկատեց Ասատուրը։

— Երբ առաջին անգամ Արինոք եկավ, իմ ամուսինը նրա համար տուն շինեց։ Դեռ մինչև հիմա նրա ուրագի և սղոցի ձայնը ականջիս մեջն է, և սպիտակ տաշեղները օղակ-օղակ կթափվեն աչքիս առաջ։ Իմ Հակոբը շատ է ուզում նրան տեսնել։

— Էլ ո՞վ է ուզում տեսնել։

— Թելո Մեսրոպը, Փղորկվա Կարոն, Գոմսա Մելիքը։

— Ո՞րն է Թելո Մեսրոպի տունը։

— Գյուղի ճանապարհի վրա է։

— Իսկ Գոմսա Մելիքը ո՞րտեղ է ապրում։

— Բերդի մոտ, մի քանդված եկեղեցու մեջ։ Փղորկվա Կարոյի տունը ձորի գլխին է։

— Նրանք որ տեսնեն Խոդեդանին՝ կճանաչե՞ն...

— Ես էլ կճանաչեմ, թե շատ փոխված չլինի։

Մոտիկից սմբակների ձայն լսվեց և մի երկար խառանչ, որ կարծես թե երիտասարդ ձիու խրխինջ լիներ։ Քուռակը ետևից՝ դեպի բերդի հյուսիսային դուռն էր տարվում մի ահագին ավանակ։

Խոդեդանը ոտքի ելավ։

— Թելո Մեսրոպի էշն է,— ուզում է Փղորկվա Կարոյին տալ,— բացատրեց տանտիկինը դեպի բերդի կողմը նայելով։

— Ինչո՞ւ։

— Հին վեճ է։ Իր բեղի վրա երդում է տվել։ Էսօր նա պետք է իր երդումը կատարի։ Եվ այդ բոլորը եղել է մի սասունցու պատճառով։

Ասատուրը ծիծաղեց։ Ի՜նչ երջանիկ օր էր նա եկել Ներքին Թալին։

— Քուռա՞կն էլ է հանձնելու։

— Էշն էլ, քուռակն էլ միասին։ Հանձնումը կատարվելու է ամբողջ գյուղի հասարակության ներկայության։

— Ինչո՞ւ։

— Որովհետև նա երդում է արել բոլոր ուխտավորների առաջ՝ Թարգմանչաց վանքի բակում։

Ավանակը, որին ճիպոտներով հալածում էին երկու մանուկ և մի գեղջկուհի, ճանապարհին կանգ առավ։ Բերդի պատի վրա

տայուծի քանդակ կար, որի մեջ կանաչ էր բռնել։ Նա շորթեց մի փունջ խոտ տայուծի երախից և, ուտելուց հետո, երկա՜ր զռաց։

Այդ ժամանակ մի հաստաբազուկ, լայնակուրծք տղամարդ, կապույտ անդրավարտիքով և կանաչ գուլպաներով, ընդառաջ վազեց ավանակին և ձեռքի մագե սև պարանը օղակաձև հագցնելով նրա պարանոցը, սկսեց քաշել պարիսպներից դուրս, ձեռքի գավազանով երբեմն հարվածելով նրա մեջքին։ Տղամարդը աջ ոտքից փոքր ինչ կաղում էր։

— Ո՞վ է,— հարցրեց Խոդեդանը։

— Դա ինքը Թելո Մեսրոպն է։ Երևի ժողովուրդն արդեն հավաքվել է,— նկատեց Ծաղկանուշը և հյուրին հրավիրեց ներկա գտնվելու հանդեսին։

Եվ արդարև, ներքին Թալինի բերդի հյուսիսային կողմի մուտքի առաջ բավական մեծ բազմություն էր հավաքվել։ Լեռնադաշտի ամբողջ տարածության վրայով, այգիներից, սարից ու ձորից մարդիկ շտապում էին այդ հետաքրքիր հանդեսին ներկա լինելու։ Բոլորը վազում էին դեպի միջնաբերդը։ Հավաքվածներից շատերը թառել էին բերդի արտաքին պարիսպներին, ոմանք հենվել էին ներքին բերդի բուրգերին կամ նստած էին ուրարտական արձանագրությունների բեկորներին և գերեզմանների վրա, որոնց տակ իշխաններ և արքաներ էին հանգչում։ Առաջին շարքում կանգնել էին Փղորկվա Կարոն, Գոմսա Մելիքը, ատաղձագործ Հակոբը, Բաղլվա Սիսակը, արուքցի Խոշե Իսոն, Ծղակցի Բաղդասարը և Ալիշնա Ազոն՝ իրենց երկրագործական գործիքներով։

Տեսնելով Աստուրին, նրանք գրկախառնվեցին նրա հետ և անմիջապես լուր ուղարկեցին Թելո Մեսրոպին, թե Խոդեդանը եկել է։

— Արի էստեղ, ծուռ սատունցի, մի արի տես, թե մշեցին ինչպե՛ս է կատարում իր երդումը,— ասաց Թելոն և Աստուրին համբուրելով նրան տարավ բերդի առաջ, միաժամանակ իր ետևից քարշ տալով ավանակին։ Նա թռավ կանգնեց բերդի կամարաձև մուտքի աջակողմյան բուրգին և դիմելով հավաքված բազմությանը՝ ասաց.

— Ներքին Թալինի աշխատավորներ, ես մի հին պարտք ունեի Փղորկվա Կարոյին։ Մեր պարտքի պատճառը էս ազնիվ սա-

սունցին էր, որ էսօր հյուր է եկել մեր գյուղը։ Ապա դառնալով Փղորկվա Կարոյին՝ ասաց.

— Կարո, ղուրբան, ների՛ր ինձ։ Չքավոր էի, չկարողացա ժամանակին իմ խոստումը կատարել։ Մի քիչ էլ իմ լուսահոգի Հուլունքն էր մեղավոր։— Այդ խոսքի վրա Թելոն կարմիր թաշկինակով արբեց աչքերի ջուրը և, արցունքները կուլ տալով, շարունակեց.— ների՛ր, ախպեր, քեզ մի ավանակ էի խոստացել, քուռակն էլ վրեն եմ տալիս։ Վերցրու հասանելիքդ ու վերադարձրու իմ բեղի կտորը, որ խիղճս հանգիստ լինի ու կորցրած պատիվս՝ վերականգնված։ Իմացիր, Կարո ջան, որ ես ավել ծախող Թելո Մեսրոպն եմ և իմ երակների մեջ մշեցու ազնիվ արյուն է հոսում։

Ընդացին ուժգին ծափեր և ցնծագին բացագանչություններ։ Փղորկվա Կարոն հրաժարվեց վերցնել պարտքը, բայց Մեսրոպը ավանակի պարանը զոռով դնելով նրա բուռը, պահանջեց որ մազափունջը հանի։

Կարոն ծիծաղեց և ձեռքը դեպի ծոցը տանելով այնտեղից դուրս բերեց մատնոցաչափ մի կապոց, որ փաթաթված էր կարմիր թելով։ Մեսրոպը վերցրեց այն, քանդեց թելը և իր սև մազափունջը շորից հանելով, ցույց տվեց ժողովրդին։ Դա սարյակի ծալված փետուրի նմանությամբ մի կծիկ էր, որ ոչնչով նման չէր Թելո Մեսրոպի անհամեմատ նոսրացած և արդեն դեղնած ընչանցքներին։

— Ի՞նչ սև, երկար բեղ ես ունեցել, Թելո,— լսվեցին հիացական բացագանչություններ այս ու այն կողմից։

— Էդ էն՝ ժամանակվա բեղն է, երբ յոթ փահլեվանի հաղթեցի Թարգմանչաց վանքի բակում և միայն մի հոգուց պարտություն կրեցի,— ասաց Թելոն և մեկ անգամ էլ հիացմունքով նայելով իր սև բեղին ու վերհիշելով իր երիտասարդական թովչական հասակը, մազերը հանձնեց քամուն՝ օդն ի վեր փչելով։

Փղորկվա Կարոն ավանակն ու քուռակը տուն տարավ։

Ահա այսպիսի հանդիսավոր իրադրության մեջ ավարտվեց այդ երկու շինականների վաղեմի վեճը։ Այդ առթիվ, նաև այն երջանիկ առթիվ, որ խոդեդանը գտնվում էր իրենց գյուղում, Թելո Մեսրոպը, Փղորկվա Կարոն, Գոմսա Մելիքը, ատաղձագործ Հակոբը և մյուս շինականները քեֆի նստեցին միջնաբերդի առաջ, խմեցին Թելո Մեսրոպի բեղի կենացը, որ իրենց բոլորի կենացն էր, կերան, պարեցին և զվարճացան մինչև առավոտ։

Ոտքերը և մեջքը կոտրատելով կաքավի պես պարում էր Թելո Մեսրոպը, մերթ ոլորելով իր հռչակավոր բեղերը, մերթ ձեռնափայտը թեքությամբ դնելով մեջքին, բայց միշտ պահպանելով իր հպարտ կեցվածքը, որով նա զանազանվում էր բոլոր մյուսներից։

ԳՅՈՒԼԵՆ

Թելո Մեսրոպը, Փղորկվա Կարոն և Գոմաա Մելիքը իրենց հյուրին ուղեկցեցին մինչև հին Քարվանսարայի ավերակները և ետ դարձան։

Ասատուրը, շունը ետևից, ուղևորվեց դեպի Կաթնաղբյուր գյուղը։ Այդ գյուղի ծայրին մի փոքրիկ ձոր կար, որի միջով մի պղտոր առու էր անցնում։ Առվի վրա կռացած էին մի քանի ուռենի և բարդիներ։ Ուռիներից մեկի ստվերում նստած էին մի հաղթանդամ կին և մի գեղեցիկ հարս։ Նրանց կողքին մի հասակավոր տղամարդ էր պառկած, որ խաղում էր երկու սև բոլոճների հետ և գրեթե ննջում էր։

Կնոջ և հարսի միջև այդ պահին կատարվում էր մի այսպիսի մտերմական խոսակցություն, որ հեղինակը հարկ համարեց նույնությամբ վերարտադրել.

— Աղչի լա՞ո, ձոր չկա, որ աղվես չանցնի, թոսի չկա, որ քամի չքիսնա, ճյուղ չկա, որ չշվշվա հովից։ Ինչ որ կէնես՝ գողտուկ էնե, լաո։ Համալ էնե, որ մարդ չիմնա։ Կսես խը Գյուլեն չը էնե՞։ Գյուլեն լե կէներ, լաո, ու լավ լե կէներ։ Էդ մեր բոլոր ջահելներու գլխով անցած բան է։ Ես լե կէնեի։ Ես մեր բեկերու ու բեկվներու հետ կէնեի։ Կեփեի, կթափեի, կշարաշվեի (կխնամեի) Մկրոյին։ Մկրոն կուտեր, կխմեր ու կերթեր իր նախրի կուշտ կպառկեր։ Ես լե կերթայի իմ դոստ Մալոյի մոտ սիրողություն կէնեի։ Տղա, Մկրո, հըմա՞լ է, թե չէ,— իր կողքի ննջող տղամարդուն բոթելով հարցրեց Գյուլեն։— Դու ասա տեսնենք, Գյուլեն ճիշտ կխոսա՞, թե սուտ կսե։

— Աստված հախ է, Գյուլեն ճիշտ կխոսա,— ծոծրակը քորելով վկայակոչեց Մկրոն, որը թեև ննջում էր, բայց մի ականջով լսում էր կնոջ խրատական քարոզները հարսին։— Գյուլեն կեփեր, կթա-

փեր, կշարաշվեր ընձի ու էվլեմ (նորից) կերթեր իր դոստ Մալոյի մոտ։

— Գյուլեն քեզնից խորոտ էր, լաո։ Հե՞յ-հե՞յ, Տալվորիկա հայ իշխաններ և Դիարբեքիրու աղա քրդեր իրենց ձիեր կքշեին Մստկանա կողմ, որ Գյուլեի քիսպատը (երեսը) տեսնեին։ Էն կախ որ Գյուլեն կժժխեր իր խոռոկներ (կոնքեր), ախ ու վախը աշխարհ կբռներ։— Ջահել ես, լաո,— խոսքը հարսին ուղղելով շարունակեց Գյուլեն։— Թե քու միտք ծուռ է, գնա գյուղի նախագահներու, միլիսեթներու և բատրակկոմի նախագահներու հետ սիրողություն էնե, ո՞ւր է քու խելք կգնես գյուղի ջահել-ջհուլներու հետ։ Էնպես բան էնե, որ համ անողի սրտով էղնի, համ քու սրտով, համ էլ աստծու սրտով։ Էդպես չէ՞, Մկրո,— նորից ննջող ամուսնուն քոթելով, հարցրեց Գյուլեն։

— Էդպե՛ս է,— գլուխը տմբտմբացնելով պատասխանեց Մկրոն և շուռ եկավ մյուս կողի վրա։

Ընթերցողը հավանորեն արդեն ճանաչեց։ Գյուլեն այն հաղթանդամ կինն էր, որ ոչ միայն հրդեհի միջից փրկել էր Խոդեդանի հարսանեկան սնդուկը, այլև հերոսաբար մասնակցել էր Սասունի վերջին ճակատամարտին, մեկ-մեկ գրկելով և անդունդ շպրտելով շատ թշնամիների։

Իսկ տղամարդը Բոլոճ Մկրոն էր՝ Խոդեդանի մանկության ընկերը, որ փոքր հասակից սիրում էր խաղալ պատենավոր միջատների հետ։ Թեպետ նա արդեն հասուն տղամարդ էր դարձել, բայց դարձյալ անտարբերությամբ չէր կարողանում անցնել դրանց մոտով։ Նստում էր և ակում էր խաղալ բոլոճների հետ, մինչև քունը տաներ։

Դրանից մի քանի շաբաթ առաջ Գյուլեն և Բոլոճ Մկրոն ամուսնացրել էին իրենց որդուն և Աշտարակի շրջանից տեղափոխվել էին Թաշինի Կաթնաղբյուր գյուղը։

Հասարակական ակտիվ աշխատող էր Գյուլեն։ Նա ընտրվել էր գյուղսովետի անդամ և ազատ-համարձակ շրջում էր գյուղի մեջ, կարծես գյուղի տերը լիներ։ Հենց որ Գյուլեն երևում էր, տղամարդիկ իրենց վեճերը դադարեցնում էին, իսկ երիտասարդները զգաստանալով կպչում էին պատերին։ Նախկին բնակավայրում եղած ժամանակ Գյուլեն անձամբ հավաքել էր սասունցի տղամարդկանց զենքերը և սայլի վրա դրած տարել էր Էջմիածին ու

հանձնել իշխանության ներկայացուցիչներին՝ ասելով.— մեր դավին օսմանցու հետ էր, սովետական իշխանության հետ մենք դավի չունենք, առե՛ք մեր զենքերը։

Լինելով վերին աստիճանի քաջասիրտ, համարձակ և ազնվամիտ գեղջկուհի՝ Գյուլեն, այնուամենայնիվ, ինչպես ամենայն ոք, ուներ մի մարդկային թուլություն։ Իր ջահել ժամանակ նա սիրահարական կապերի մեջ էր եղել Նիչ գյուղացի Մալո բեկի հետ և հաճախ, իր նորահարսին քարոզ կարդալու առնչությամբ, անդրադառնում էր այդ երանելի ժամանակներին։

Գյուլեն դեռ երկար կարող էր շարունակել իր քարոզը, եթե մի ծանր ոտնաձայն չսթափեցներ իրեն էլ, հարսին էլ։ Այդ Ասատուրն էր, որ անցավ ուռիների տակով։ Հագուստից և քայլքից ճանաչելով իր նախկին համագյուղացուն, Գյուլեն արթնացրեց Բոլոճ Մկրոյին, և նրանք երկուսով հենց ճանապարհի եզրին գրկախառնվեցին նրա հետ։

— Էն երիտասարդ աղջիկն ո՞վ է,— հարցրեց Խոդեդանը։

— Մեր հարսն է,— պատասխանեց Գյուլեն։— Ծառի տակ նստած քարոզ էի կարդում։

— Չլինի՞ թե միտքը ծուռ է։

— Ծուվել է, բայց ղայդեն չգիտե,— անմիջապես վրա բերեց պառավը։

Իմանալով, որ Ասատուրը Ներքին Թալինից է գալիս, Գյուլեն հարցրեց.

— Ճի՞շտ է, որ Ներքին Թալինում գյուղացիներից մեկը մի ավանակ և մի քուռակ է տվել իր հարևանին։

— Ճիշտ է— հաստատեց հովիվը։

— Ի՞նչ բան է։

— Հին պարտք էր։ Տվողը իր բեղի վրա երդում էր արել։

— Ո՞վ էր։

— Թելո Մեսրոպ անունով մի ազնիվ գյուղացի։

Անցնելով Կաթնաղբյուրը, Խոդեդանը սկսեց բարձրանալ դեպի Իրինդ։ Նրան ուղեկցում էր իր հին օրերի ընկեր տավարած Մկրոն։

Ճանապարհը քարքարոտ էր։ Մի տեղ երևում էր խոշոր ցաք ու ցրիվ, կարմրավուն ժայռերի մի հակա շեղջակույտ։ Թվում էր, թե սաթի լանջին գյուղական նախիրն է արածում։ Մի այլ տեղ ժայ-

ռերն ու չեչաքարերը նման էին նստած այծերին, կամ հիշեցնում էին քարափի վրա հավաքված անծեղներին։ Իսկ որքան շատ էին մանր, մոխրագույն վիրգերը, կարծես թե ճնճղուկների երամ էր իջել արտերի մեջ։ Բավական էր մի հարված, որ բոլորը թռչեն։

Այդ քարերի և ապառաժների միջով դեպի սարն էին ելնում Աստուրը և Բոլոռ Մկրոն։ Ներքևում ծառերի տակ Գյուլեն դեռ շարունակում էր քարոզ կարդալ հարսին և մեկ-մեկ շուռ գալով նայում էր նրանց ետևից։

ԱՌԱՋԻՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Ուղևորությունից վերադառնալով՝ Խոդեդանը մեկ շաբաթ կատարածու դարձավ իրենց գյուղում։

Հուլիս ամսին էր։ Քաղաքից մի կարևոր շրջաբերական էր եկել։ Եզնիկը թեև նախագահ էր, բայց գրել-կարդալ չգիտեր։ Անգրագետ էին նաև հարևան գյուղերի նախագահների մեծ մասը։ Իրինդի փոստատարը նույնպես անգրագետ էր։ Նա Թալինից ստացվող նամակները տերերին էր հանձնում հատուկ նշաններ անելով ծարների վրա։

Ամբողջ Կաթնաղբյուրի ենթաշրջանում միայն մի վարժապետ կար՝ Փիլոս անունով, որին ամենքը կոչում էին Վարժապետ Ճրագ։— Թալինու կրակ, վարժապետ Ճրագ,— այդպես էր անվանում նրան Գյուլեն։

Աստուրն այդ օրը հիվանդ էր։ Նրա փոխարեն կատարածու դարձավ Բայազը։ Եզնիկը կարգադրեց նրան շրջաբերականը տանել Վերին Սասնաշեն՝ Դաշտադեմցի Գևորգին կարդալ տալու։ Գևորգը գյուղում չէր։ Բացի այդ, նրան ասացին, որ նա հրաժարվում է կարդալ նոր ուղղագրությամբ գրված շրջաբերականները։ Այդտեղից Բայազը իջավ Կաթնաղբյուր՝ Վարժապետ Ճրագի մոտ։ Նա նույնպես բացակայում էր գյուղից։ Բայազը գրությունը դրեց ծոցը և գնաց-կանգնեց Թալինից դեպի Կաթնաղբյուր և քաղաք գնացող ճանապարհի վրա, որ եթե որևէ գրագետ մարդ անցնելիս լինի՝ շրջաբերականը կարդալ տա նրան։

Ամբողջ օրը Բայազը կանգնեց խճուղու եզրին, արևի կիզիչ ճառագայթների տակ։ Իլիկ էր մանում և երբեմն-երբեմն ձեռքը

ճակատին դրած նայում էր առաջ՝ սպասելով մի գրագետ անցորդի։ Շատ մարդիկ անցան, բայց բոլորն էլ անգրագետ էին։

Իրիկնադեմին, երբ Բայազը հուսահատված ուզում էր գյուղ վերադառնալ, Վերին Թալինի կողմից եկող մի երիտասարդի նկատեց։ Նրա ձեռքը մի նախշուն ճամպրուկ կար, թևին՝ ամառային մի կիսամաշ վերարկու։ Լայնաճակատ էր նա, մազերը ետ սանրած և գեղեցկադեմ։ Եղանակի համեմատ երիտասարդը հագել էր մի կարճափող անդրավարտիք, որ հասնում էր մինչև ծնկները և սատինե կապույտ վերնաշապիկ սպիտակ կոճակներով, որ բացվում էր կրծքի ձախ կողմում։ Մեջքին ծոպավոր գոտի կար, գլխին մի հասարակ կեպի, իսկ ոտքերին ամառային կիսակոշիկներ՝ կարճ գուլպաներով։ Եթե այդ ամենի վրա ավելացնենք նաև նրա կրծքի ձախակողմում կարմրին տվող հնգաթև փոքրիկ աստղը, ապա նրա պատկերը մոտավորապես լրիվ կլինի։

— Տղա ջան, ո՞րտեղացի ես,— հարցրեց Բայազը մոտենալով և փոքր ինչ տհաճությամբ նայելով նրա կարճ շալվարին։

— Լենինականցի։

— Ո՞ւր կերթաս։

— Կաթնաղբյուր։

— Ո՞ւմ տուն,— զարմացավ Բայազը։

— Բոլորի տուն։ Ես ուսուցիչ եմ նշանակված, մայրիկ։

— Ուսուցիչն ի՞նչ բան է։

— Էն, որ դպրոցում դաս է տալիս աշակերտներին։

— Վա՜յ, դու մեր աչքի վրա եկար, ուսուցիչ վարժապետ ջան։ Մի էս շրջաբերականը կարդա, տեսնենք մեջը ի՞նչ կա։ Էսօր ամբողջ օրը արևի տակ խաշվեցի մի գրաճանաչ մարդու սպասելով։

— Ինչո՞ւ, ձեր գյուղում կարդացվոր չկա՞։

— Չկա, լաո։ Մի Վարժապետ Ճրագ ունենք, էն էլ բացակա է գյուղից։

— Տուր տեսնեմ։ Այս ասելով նորեկ ուսուցիչը ճամպրուկը վայր դրեց և Բայազի ձեռքից գրությունը վերցնելով բարձրաձայն կարդաց. «Լենինականի գավառի վեցերորդ գավառամասի Իրինգ գյուղի խորհրդի նախագահին։ Ուսումը սովետական երկրում պարտադիր է և ձրի։ Ձեր գյուղի երեխաներին ցուցակագրեցեք, որ սեպտեմբերի մեկից դպրոց գնան Կաթնաղբյուր գյուղը։ Իսկ մե-

Ծահասակներին հաշվի առեք, որ հաճախեն լիկկայան։ Լենինականի գավխուսբաժնի վարիչ՝ Հովսեփ Կարախանյան»։

— Լիկկայանը ի՞նչ բան է, լաո, մենակ էդ բառը չհասկացա։

— Լիկկայան նշանակում է մեծահասակների անգրագիտությունը վերացնելու դպրոց (կայան)։ Ձեր գյուղում հովիվներ և նախրապաններ կա՞ն։

— Կան։ Օրինակ, իմ մարդը հովիվ է։

— Անգրագե՞տ է։

— Բոլորովին անգրագետ է։ Ստեփանն էլ անգրագետ է։

— Ո՞վ է Ստեփանը։

— Նա էլ հովիվ է։

— Կնշանակե քո մարդը և քեռի Ստեփանը պետք է լիկկայան գնան և իրենց անգրագիտությունը վերացնեն։ Էլ ուրիշ մեծահասակ անգրագետներ կա՞ն։

— Ինչո՞ւ չկան։ Մեր ամբողջ շրջանը անգրագետ է. Բոլոռ Մկրոն, Սեմալցի Թաթոն, Գուլթան Հարությը, Թելո Մեսրոպը, Գոմսա Մելիքը, Փղորկվա Կարոն։

— Դրանք բոլորն էլ պետք է դպրոց գնան։

— Ապրի արևդ, լաո, բերան չէ, ավետարան է։ Անունդ ի՞նչ է, ուսուցիչ ջան։

— Արամ։

— Իսկ ազգիդ անունը ի՞նչ է։

— Խնկոյան։

— Քեզ ուսուցիչ պիտի ասենք, թե՞ վարժապետ։

— Ուսուցիչ։

— Դե գնանք մեր գյուղ, ուսուցիչ Արամ Խնկոյան ջան։

— Ո՞րն է ձեր գյուղը։

— Ա՜յ, էն սարի գլխինը մեր գյուղն է,— ձեռքով ցույց տվեց Բայազը։

— Բայց ես ուսուցիչ եմ նշանակված Կաթնաղբյուր գյուղում։

— Չէ՛, լաո, նրա խոսքն ընդհատեց գեղջկուհին,— ես քեզ պետք է Իրինդ տանեմ։ Ես ու ալևորս մի տուն ունենք։ Էդ տան մեջ մեզ մի անկյուն տուր՝ մնացածը քեզ լինի։

Բայազը վերցրեց ճամպրուկը և նրանք երկուսով շարժվեցին դեպի գյուղ։

Այդ սովետական դպրոցն ավարտած առաջին երիտասարդ

ուսուցիչն էր, որ գնում էր լուսավորություն տարածելու Հայաստանի լեռնային շրջաններից մեկում։

Կաթնաղբյուրին չհասած նրանց առաջ հայտնվեց հաղթահասակ Գյուլեն, որ դպրոցից տուն էր գնում։

— Ո՞վ է,— հարցրեց նա Բայազին մոտենալով և խեթ-խեթ նայելով Արամ Խնկոյանի կարճ շալվարին։

— Ուսուցիչ է, Լենինականից է եկել։

— Ո՞ր գյուղն է ուղարկված։

— Ձեր գյուղը։ Բայց ես նրան Իրինդ կտանեմ։

— Մեր գյուղի վարժապետին ինչո՞ւ Իրինդ կտանես,— նեղացավ Գյուլեն և, Բայազի ձեռքից ճամպրուկը վերցնելով, Արամին քաշեց դեպի իրենց տան կողմը։

Բայազը վերադարձավ Իրինդ և հայտնեց շրջաբերականի բովանդակությունը։ Միաժամանակ ասաց, թե նոր վարժապետ է եկել Կաթնաղբյուր, որ ջրի պես կարդալ գիտե։

Գյուլեն ապրում էր դպրոցի մոտ՝ գյուղի ծայրին։ Դպրոցի մաքրության և պահպանության գործը ամբողջապես նրան էր հանձնված։ Նա հետևում էր նաև գյուղի սանիտարական ընդհանուր վիճակին և շաբաթօրյակներ էր կազմակերպում դպրոցի շրջապատը և գյուղի փողոցները բարեկարգելու և նրանց կուլտուրական տեսք տալու համար։

Նույն երեկոյան ինքը և Բոլոճ Մկրոն իրենց սենյակը հատկացրին Արամ Խնկոյանին, իսկ իրենք տեղափոխվեցին թոնրատուն։

Կացարանը, ուր տեղավորվեց նորեկ ուսուցիչը, ժամանակին մի հին մարագ էր եղել, որի տակով առու էր անցնում։ Մահճակալի փոխարեն Արամը հենց առաջին օրը դրսից երկու սալաքար բերեց, մի մեծ կամ հատատեց նրանց վրա և ծածկեց խոտե ներքնակով։ Վրան փռեց մի բարակ ադեալ և դրեց մի բարձ։ Նրա անկողինը պատրաստ էր։ Այդ անկողնու վրա ընկած էր «Խորհրդային Հայաստան» օրաթերթի համարներից մեկը, որ նա իր հետ գյուղ էր բերել։ Տակը դրված էր իր նախշուն ճամպրուկը։

Արամ Խնկոյանը Գյուլեի հետ գնաց դպրոց, մի քիչ կարգի բերեց դասասենյակները, ապա վերադարձավ տուն, ընթրեց և, հոգնած լինելով, անմիջապես անկողին մտավ։

Առավոտյան նրա ականջի տակ լսվեց մի հաղթական կանչ։

Աչքերը բացեց։ Արևի շողքը լուսամուտից ընկել էր ներս։ Մի ծիրանափայլ աքաղաղ, լուսամուտը թառած, ծուղրուղու էր կանչում։ Խնկոյանը նստեց անկողնու մեջ։— Վա՜հ, այս ի՞նչ բան է,— զարմացած բացագանչեց նա, սենյակի չորս կողմը նայելով։

Դուռը բաց էր։ Նա իր սենյակի պատերի տակ մեծ և փոքր ամանների և կապոցների մի երկար շարան տեսավ, որ հասնում էր մինչև շեմքը։ Ո՛րը ամանով սեր էր բերել, ո՛րը կարագ, ո՛րը եռացրած կաթ կամ խաշած ձու։ Ոմանք բերել էին մեղր, գաթա և տապակած հավեր։ Լուսամուտի ճաղերից դրսի կողմից մի սպիտակ գառ էր կապված։ Շեմքի մոտ երկու կարմիր վառեկ աշխատում էին կտրել իրենց ոտնակապերը։

Նորեկ ուսուցչի համբավը նույն գիշերը արագությամբ տարածվել էր գյուղի մեջ, հասնելով մինչև հարևան ավանները։ Նույնիսկ Ներքին Թալինում լսել էին նրա մասին։ Այդ սպիտակ գառն ու վառեկները գիշերով նրա համար բերել էին Թելո Մեսրոպն ու Փղորկվա Կարոն իրենց գյուղի համայնքի կողմից։ Բերել կապել էին դռանը և գնացել էին աշխատանքի։

Արամ Խնկոյանը հագավ շորերը։ Նա շտապում էր լվացվել և գտնել Գյուլեին, իմանալու համար թե ո՞ւմ համար և ովքե՞ր են ուղարկել այդքան ուտելիք և, մանավանդ, այդ գառն ու վառեկները, երբ հանկարծ ներս մտավ Հեղինեն՝ մի կճուճ մածուն թևի տակ։ Նա կռացավ և ուզում էր մի աման գտնել, որ մածունը դատարկի, երբ Արամ Խնկոյանը նկատեց նրան։

— Աղջի, այդ ի՞նչ բան է,— հարցրեց նա շեմքին մոտենալով։

— Մածուն է, նանեա է ուղարկել,— ցածր, ամաչկոտ ձայնով պատասխանեց Հեղինեն։

— Նանեդ ո՞վ է։

— Բայազը։

— Դա էն իրինդեցի կինը չէ՞, որ երեկ կանգնած էր ճանապարհին։

Հեղինեն գլխով արավ։

— Իրինդից էստեղ մածո՞ւն է ուղարկել։ Եվ վերջապես այսքան ուտելիք ո՞ւմ համար է,— ասաց նա ցույց տալով պատերի տակ շարված ամանները։

— Քեզ համար է,— պատասխանեց աղջիկը կարմրելով։

— Մի՞թե հնարավոր է այդքան բան ուտել։

— Որ մեր մածունը ուտես, ախորժակդ կբացվի,— ժպտաց Հեղինեն և մածունը մի ամանի մեջ դատարկելով, կճուճը ձեռքին շտապեց դուրս։

— Հայտնիր ձեր գյուղացիներին, որ վաղ առավոտյան ժամը չորսին արևը խավարելու է։ Հաջորդ խավարումը լինելու է 1936 թվականի հունիսի 19-ին, առավոտյան ժամը 6 անց 54 րոպեին, «Խորհրդային Հայաստան» լրագիրը ձեռքը վերցնելով նրա ետևից ազդարարեց Խնկոյանը։

Հեղինեն ետ դարձավ, ապշությամբ նայեց երիտասարդ ուսուցչին և կճուճը ձեռքին արագ հեռացավ նրա մոտից։

Նույն պահին կժով ջուրը և սրբիչը ձեռքը Խնկոյանին մոտեցավ Գյուլեն։

— Ովքե՞ր են բերել այս գառն ու հավերը,— հարցրեց Արամը լվացվելուց հետո։

— Թելո Մեսրոպն ու Փղորկվա Կարոն։

— Ո՞ր գյուղից։

— Ներքին Թալինից։ Սար էին գնում։ Անցան մեր դռնով, կապեցին լուսամոտի ճաղից ու գնացին։

— Հարկավոր չէ, բոլորը ետ ուղարկիր։

— Ինչպե՞ս թե ետ ուղարկիր, ուզում ես որ քեզ բրերով դո՞ւրս քշեն գյուղից։ Սասունցի ժողովուրդը պատիվ է անում իր ուսուցչին։ Չէ՞ որ դու եկել ես, որ նրան լուսավորես։

— Այդ դեպքում վերցրու այս փողը և վճարիր բոլորին։ Զմոռանաս նաև վճարելու այն մի կճուճ մածունը, որ Իրինդից բերեցին։

— Ինչպե՞ս։— Գյուլեն զարմանքից գունատվեց։ Նա բացատրեց նորեկ ուսուցչին, որ դեռ աշխարհում չի եղել մի դեպք, որ որևէ սասունցի մածուն վաճառի փողով։— Վա՜յ այն ազգին, որ կտեսնի այդ օրը,— բացագանչեց Գյուլեն։ Տեսնելով որ նորեկ ուսուցիչը բոլորովին անփորձ է, նա մայրաբար խրատեց նրան, որ անզգույշ բաներ չանի սասունցիների շրջապատում։ Բացատրեց, որ այդ մարդիկ սուտ խոսելու մասին գաղափար չունեն։ Որ սասունցու համար ամենամեծ սրբությունը մայրն է, որին հայհոյելը կամ անարգելը վերջանում է արյունով։ Որ սասունցին խոսքը միշտ ճակատին է ասում և բոլորովին խորամանկ չէ։— Զսխալվեք

շաբաթ օրը աղ կամ կրակ վերցնել նրանցից,— զգուշացրեց պառավը։

— Էդ վարտիքդ էլ փոխիր, կա՛րճ է,— վերջում ասաց Գյուլեն խեթ-խեթ նայելով նրա շալվարին։

ՎԱՐԺԱՊԵՏ ՃՐԱԳԸ

Արամ Խնկոյանի ներկայությունը Կաթնաղբյուրում տագնապ էր առաջացրել տեղի միակ գրագետ Վարժապետ Ճրագի մոտ։ Լենինականի գավառաբաժինը Խնկոյանին ուղարկել էր ստանձնելու դպրոցի վարչական աշխատանքը և առաջին խմբի դասերը, սակայն Վարժապետ Ճրագը ոչ մեկն էր զիջում, ոչ էլ մյուսը։ Նա շրջում էր գյուղի մեջ և պախարակում նորեկ ուսուցչին. «բան չգիտի, հագած շալվարիցն է երևում»,— հեգնանքով ասում էր նա։

— Որ բան չգիտի, ապա ինչպե՞ս իմացավ, որ արևը կխավարի,— առարկել էին նրան մի քանի գյուղացիներ, որոնք իսկապես մատնանշված ժամին նկատել էին արևի խավարումը։

Հին ուսուցիչ էր Վարժապետ Ճրագը։ Զորս գործողությունը գիտեր միայն երկու հարյուրի սահմաններում։ Հազար գրել չգիտեր։ Հայերենը կարդում էր միայն հնչական այբ-բե-գե-դայի մեթոդով, փոխանակ բառը լրիվ կարդալու կամ վանկելու՝ հեգելով ասում էր յուրաքանչյուր տառի այբբենական անունը և դրանք միացնելով բառ էր կազմում։ Այդպես էլ սովորեցնում էր աշակերտներին։

Նրա լեզուն զանազան բարբառների խառնուրդ էր։

— Տղաս, էդիկ ի՞նչ տառ է,— «ա» գիրը ցույց տալով, հարցնում էր նա։

— Այբ է,— պատասխանում էր աշակերտը։

— Այբ մ՚ալ ցույց տուր տեսնեմ, էշի գլուխ,— ասում էր Վարժապետ Ճրագը։ Դասի ժամանակ նա շատ էր գործածում «էշ» և «իշվանք» բառերը, կամենալով ասել, թե աշակերտները տգետ են, բան չգիտեն։ Ժամ և ժամացույց ամենևին գոյություն չուներ Վարժապետ Ճրագի համար։ Երդիկից կամ լուսամուտից դասարանի հատակին ընկած արևի շողով նա որոշում էր դասի վերջը կամ սկիզբը։ Գրատախտակի մասին գաղափար չուներ։ Գարնան տաք օրերին դասերն անում էր դպրոցի պատի տակ։ Ինքը

պպզում էր աշակերտների առաջ, կամ նստում էր մի քարի և, տերողորմյան ձեռքում շարժելով, վարում էր դասը։

Շատ հաճախ նա նստած տեղը ննջում էր. աշակերտներն արթնացնում էին նրան՝ թե ժամանակն է տուն գնալու։ Երկու խմբի հետ էլ ինքն էր պարապում և ամենքի հետ՝ միևնույն դասագրքով։ Երբեք ներկա-բացակա չէր անում։ Ինչքան աշակերտները քիչ լինեին, այնքան լավ։ «Պզտիկ կճուճ՝ համով ապուր», այդպես էր նրա բնաբանը։

Վարժապետ Ճրագը հագնում էր երկար անդրավարտիք, որի խոնջանը փոնթում էր մեջքի շուրջը և մի կիսավերարկու, որ սովորաբար գցում էր թևերին և ձեռքերը նրա տակից մեջքի ետև տանելով խաղում էր տերողորմյայի հատիկների հետ։ Նրա հագուստի վրայից անպակաս էին անասունի թրիքը, հարդը, ճնճղուկի ծերտը, փշրին։ Ոտքերին տրեխ էր հագնում, որն այծի սև մազաթելով ամրացնում էր սրունքներին։ Բեղը թանձր էր և սրածայր։

Վարժապետ Փիլոսը չէր ծխում, այլ քթախոտ էր քաշում։ Հենց որ գյուղի մեջ փռշտոց էր լսվում, ասում էին թե Վարժապետ Ճրագն եկավ։ Քիչ գիտելիքով նա կարողացել էր մեծ համբավ ստեղծել իր համար։ Վարժապետ Ճրա՜գ... Դա միակ լուսատուն էր այդ ամբողջ ենթաշրջանում, միակ ճրագը, որ ցրում էր խավարը։

— Իշե՞ էն պուտուկների բերան սեր բան կա՞, քաշիր ճամփըցու Վարժապետ Ճրագին,— կարգադրում էին գյուղացիներն իրենց կանանց։ Ամեն աշակերտ հերթով պարտավոր էր Վարժապետ Փիլոսի համար մի բարձ բերել, որ այդ օրը վրան նստեր դասարանում։

Վարժապետ Ճրագը անկարգ աշակերտներին պատժում էր միջնամատի մատանիքով խփելով աշակերտի գլխին, կամ ձեռքի տերողորմյան գունդ անելով և հեռվից շպրտելով նրա երեսին։ Իսկ տերողորմյայի քարերը խոշոր էին, ամեն մեկը մի ընկույզի չափ։

Ճրագը աշակերտների հետ խոսում էր բարբառով։ Նույնիսկ դասի ժամանակ ուղղումներ էր անում դասագրքում։ Այս վերջին հանգամանքը խիստ բարձրացնում էր նրա կշիռը գյուղացիների աչքում։ Նա երբեք չէր հանդուրժում, որ իր ներկայությամբ որևէ գրագետ մարդ երևար, մանավանդ քաղաքից եկած ուսուցիչ։ Ճրագը չէր պատկանում այն անձնազոհ, համեստ հայ

ուսուցիչների թվին, որ «վարժապետ» անվան տակ ամբողջ մեկ և կես հազարամյակ հերոսաբար լուսավորել էին մեր գյուղական մատաղ սերնդի միտքը։ Վարժապետ Փիլոսը մի բացառյալ մարդ էր, որի նմանները սակավ էին պատահում մեր իրականության մեջ։

Սեպտեմբերի մեկից դասերն սկսեցին։ Այնտեղ սովորում էին նաև Իրինդի և հարևան գյուղերի աշակերտները։ Վարժապետ Ճրագը ոչ մի կերպ չէր համաձայնում դպրոցի վարչությունը և առաջին խմբի դասերը հանձնել նորեկ ուսուցչին։

Առաջին դասի ժամանակ Արամ Խնկոյանը դուռը կամացուկ բաց արավ։ Վարժապետ Փիլոսը նրան տեսնելով արհամարհանքով դոչեց. «Մի արի՛ տեանեմ, այ տղա։ Նստիր ճժերու խեչ և ականջ դիր իմ դասին»։

Խնկոյանը գլխով բարևեց աշակերտներին և մոտենալով նըստեց վերջին շարքում։

— Ճժեր, ո՞վ գինա իր դաս,— դիմեց Վարժապետ Ճրագը իր խմբին։ Սև Հովե տղա, կարդա քու դաս։

— Վարժապետ, ես գիրք չունեմ։

— Թաթո տղա, շան վատակ, դու կարդա քու դաս,— դիմեց վարժապետը նրա կողքը նստածին։ Աշակերտը կանգնեց և սկսեց հեգելով բարձրաձայն կարդալ. «Խոզ։ Խոզը ընտանի կենդանի է։ Խոզի մազից շինում են խոզանակ...»։

— Կանգնիր, տղա,— ընդհատեց Վարժապետ Ճրագը նրան։ Ճժեր, ձեզնից ո՞վ գինա թե ինչ բան է խոզանակ,— խմբին դառնալով հարցրեց վարժապետը։

Դասարանը լուռ էր։

— Խոդեղանի աղջիկ, նանեիդ ասա, մի կճուճ մածուն էլ իմ տունն ուղարկի։

— Վաղն էլ ձեր տուն կբերեմ, վարժապետ,— պատասխանեց Հեղինեն, ամոթից կարմրելով և գլուխը կոխելով գրասեղանի ետև։

— Խոդեղանի աղջիկ; գլուխդ մի՛ կախիր։ Դու անպայման կիմանաս թե ինչ բան է խոզանակ։

— Չգիտեմ, վարժապետ։

— Դե լսեք, իշվանք,— դասարանին դիմելով ասաց Վարժապետ Ճրագը։— Խոզանակ նշանակում է ֆոչա։

— Ֆոչան ի՞նչ բան է, վարժապետ,— հարցրեց Հեղինեն։

— Ֆոչան էն է, իշվանք, որ շոր կսրբեն, ակռա կսրբեն, ոտնաման կսրբեն,— բացատրեց վարժապետը։— Գրքի մեջ սխալ է գրված. վրան գիծ քաշեք ու տեղը գրեցեք ֆոչա։

— Ո՞ր բառի վրա գիծ քաշենք։

— Խոզանակ բառի վրա, իշվանք,— բացատրեց Ճրագը։

Աշակերտներն անմիջապես վերցրին գրիչները, իրենց դասագրքի խոզանակ բառի վրա հատ գիծ քաշեցին և փոխարենը թանաքով գրեցին ֆոչա։

Եվ ամենքը հպարտությամբ ու զարմանքով նայեցին իրենց վարժապետին, որ նույնիսկ քաղաքից ուղարկված գրքերի մեջ ուղղումներ էր կատարում։

Սրամ Խնկոյանը հազիվ էր զսպում իր վրդովմունքը։ Նա կամեցավ միջամտել դասին, բայց վճռեց համբերությամբ սպասել, թե ինչո՞վ էր ավարտվելու այդ զարմանալի հանդեսը։

Մի քանի հոգի էլ բարձրաձայն կարդացին դասը, որից հետո Վարժապետ Ճրագը դադար առավ, որ քթախոտ քաշի։ Այդ ժամանակ նրա աչքը դիպավ պատուհանից դասարանի հատակին ընկած շողքին։ «Ծժեր, կախն է, գացեք փշուր մը ռհաթցեք,— բացագանչեց նա և բռնոթին դրեց պնչերի մեջ։ Դասը ավարտվեց նրա բարձրաձայն փռշտոցներով։ Աշակերտներն ուրախ աղաղակներով դուրս վազեցին դասարանից։

Երբ նրանք մենակ մնացին, Վարժապետ Ճրագը մեծ ինքնաբավականությամբ, համբիչը ձեռքին խաղացնելով, մոտեցավ Սրամ Խնկոյանին։

— Է՞յ, տղա, իմ դասն իմա՞լ էր, հավնա՞ր իմ դաս։

— Բոլորովին չհավանեցի,— խորին անբավականությամբ պատասխանեց նորեկ ուսուցիչը։

— Ինչո՞ւ։

— Նրա համար, որ դուք աղավաղում եք մեր լեզուն։ Ինչպե՞ս կարելի է աշակերտներին սովորեցնել «խոզանակ» գրական մաքուր բառը չնչել դասագրքի մեջ և փոխարենը բարբառային բառ գրել, որ բոլորովին էլ հայերեն չի։

— Տղա, լաո, քու պապ ֆոչա կասեր, թե՞ խոզանակ։ Իհարկե՝ ֆոչա։ Ինչպես որ մեր պապերն են ասել, էդպես էլ պետք է մենք ասենք,— անմիջապես վրա բերեց Վարժապետ Փիլոսը։

— Մեր պապերը երբեք խոզանակին ֆռչա չեն ասել։ Եվ վերջապես այդ ի՞նչ տեսակ լեզու է, որով դուք խոսում եք սաների հետ։ Ամբողջը բարբառ է։

— Ուրեմն դու իմ դասը չհավնա՞ր։

— Մի՞թե դա հավանելու բան էր, որ հավանեի։ Ո՞վ է ձեզ թույլ տվել, իշվանք անվանել աշակերտներին, քթախոտ գործածել դասարանում, փոշտալ դասի ժամանակ, ո՞ր մեկն ասեմ։

«Օհո՛, սա որ Կաթնաղբյուրում ամրացավ, կաշխատի իմ ամբողջ գործը շուռ տալ»,— ինքն իրեն ասաց Վարժապետ Ճրագը։ Եվ նա մտքում դրեց այդ դասից հետո ամբողջ գյուղացիների ներկայությամբ այնպես խայտառակել, վարկաբեկել կարճ շալվար հագած այդ կոմսոմոլ տղին, որ նա հետևյալ առավոտը փախչեր գյուղից և այլևս չվերադառնար Թալին։ Թվաբանության դասից հետո, որի ընթացքում նա մի ման տաք ապուր կերավ (աշակերտներից ոմանք նրա ճաշն ուղղակի դպրոցն էին բերում), նա սրբեց բեղը և տուն գնալով պատրաստեց մի սատանայական նամակ։ Այդ նամակի բոլոր տառերը իրար միացած էին մազանման գծերով։ Ոչ մի կետադրություն չկար։ Իսկ որ ամենից կարևորն է, բոլոր բառերը գրված էին շրջված դիրքով։

Երեկոյան, երբ գյուղացիները դաշտային աշխատանքներից հետո հավաքվեցին գյուղսովետի դռանը, Վարժապետ Ճրագը, նամակը գրպանը դրած, մոտ եկավ։ Այդ միևնույն միջոցին գյուղսովետի առջևով անցավ Արամ Խնկոյանը։ Վարժապետ Փիլոսը նրան տեսնելով արհամարհական գոչեց.

— Լուսաբաժնի ուսուցիչ, մի էստեղ արի տեսնենք։ Ճրագի նպատակն էր միաժամանակ, որ բոլոր գյուղացիները տեսնեն Խնկոյանի կարճ շալվարը և մեկընդմիշտ երես թեքեն նրանից, մանավանդ որ մեծ մասը առաջին անգամն էր հանդիպում նրան։

— Ի՞նչ կա,— համարձակ մոտենալով և գյուղացիներին բարևելով հարցրեց նորեկ ուսուցիչը։

— Ինչ հայերեն գիրք էղնի՝ կարո՞ղ ես կարդալ։

— Կարող եմ,— պատասխանեց Արամը։

— Գազե՞թ, նամա՞կ։

— Թթե հայերեն է, կարող եմ։

Ամենքը լարված հետաքրքրությամբ սպասում էին, թե ինչո՞վ է

վերջանալու այդ զարմանալի հարցաքննությունը։ Ոմանք արդեն կռահում էին հետևանքը։

— Մի էս նամակը կարդա, տեսնենք, մանր է գրված, աչքերս լավ չեն ջոկում,— այս ասելով, Վարժապետ Ճրագը հաղաց և մի ծալծլված թուղթ վերարկուի գրպանից հանելով մեկնեց նրան, ապա դառնալով գյուղացիներին՝ բարձրաձայն ազդարարեց.— ժողովուրդ, լավ լսեք, մեր քաղաքից եկած ուսուցիչը նամակ է կարդում։ Շինականները անմիջապես շրջապատեցին Արամին և մազոտ ականջները սրած՝ սկսեցին լսել թե ի՞նչպես է կարդալու իրենց երիտասարդ ուսուցիչը։

Արամ Խնկոյանը զարմացած նայեց այդ տարօրինակ նամակին։ Հենց առաջին բառի վրա կանգ առավ։ Մտքում մի քանի անգամ փորձեց որևէ ծանոթ բառի կերպարանք տալ նրան, բայց դժվարացավ։ Երկրորդ բառը նույնպես անհասկանալի էր։ Կակազեց, կարմրեց քաղաքից եկած ուսուցիչը։

— Դե կարդա, է՞, դե խոփը հանիր քարի տակից,— բեղերը հպարտությամբ ոլորելով գոչեց Վարժապետ Փիլոսը, տեսնելով թե ի նչպես նեղն է ընկել իր ախոյանը։

— Սա կեղծ նամակ է, բառերը թարս են գրված,— կռահեց նորեկ ուսուցիչը, թուղթը ետ մեկնելով։

— Ուրեմն չե՞ս կարող կարդալ։

— Անընթեռնելի է, հայերեն չի,— ասաց նա։

— Բառ՞,— լիաթոք, բարձրաձայն ծիծաղեց Վարժապետ Ճրագը, որ ամենքը լսեն։— Ուրեմն դու էս հասարակ նամակը չե՞ս կարող կարդալ,— կրկնեց նա, համրիչը գոհունակությամբ մի ձեռքից մյուսը գցելով։

— Ա՞յ տղա, քու թոմբնի տակից քու ճուճ... կերևա, դու մկա կուզես ի գաս իմ տեղ դա՞ս տաս դպրոցում,— արհամարհանքով, ոտքից գլուխ նորեկ ուսուցչին չափելով, ասաց Ճրագը և նամակը նրա ձեռքից վերցնելով, բարձրաձայն կարդաց։

«— Ինիլաթ կարկ տեպաժրավ գարճ ըոն չիցուսու է լեկե ըեմ ղույգ իմ ըիցամի սետ լադրակ ի՞տիգ։ Իմ բմոխ ըենիցաղույգ», որ նշանակում է «Թալինի կրակ, Վարժապետ Ճրագ, նոր ուսուցիչ է եկել մեր գյուղ, մի իմացիր, տես կարդալ գիտի՞։ Մի խոսք գյուղացիներ»։

— Կարդալն էդպես կլինի,— ետևից գոչեցին Վարժապետ Ճրագի մի քանի համախոհները։

— Մեր վարժապետն էնքան գիտուն է, որ քաղաքի գրքերի մեջ ախալներ է բռնում, տ՞ւր մնաց թե նրա պես կարդացվոր լինի,— հպարտությամբ ավելացրեց մեկ ուրիշ ծերունի՝ հենվելով իր ձեռնափայտին։ Արամ Խնկոյանը գլխակախ թողեց հեռացավ։

ՎԵՐԻՆ ԹԱԼԻՆՈՒՄ

Չնայած Վարժապետ Ճրագի և նրա մի քանի համախոհների փորձերին՝ վարկաբեկել Թալին եկած առաջին սովետական երիտասարդ ուսուցչին, զրպարտելով և ամեն տեղ տարածելով, որ նա կարդալ չի իմանում, այնուամենայնիվ Արամ Խնկոյանը, գավառաբաժնի միջամտությամբ, հաստատորեն իր ձեռքն էր վերցրել դպրոցական գործը։ Նա նորոգել էր տվել աշակերտական գրասեղանները և դպրոցի պատին ժամացույց էր կախել։ Գյուղացիները նրա անունը մարգարե էին դրել, որովհետև արևը իսկապես խավարել էր մատնանշված ժամին։

Դասերից հետո Արամ Խնկոյանը գնում էր գրասենյակ կամ գյուղական օդաները և բարձրաձայն «Խորհրդային Հայաստան» և «Բանվոր» թերթերն էր կարդում գյուղացիների համար։ Այլևս ոչ մի կասկած չէր մնում, որ այն սատանայական նամակն, իսկապես, Վարժապետ Ճրագի ձեռքի գործն էր, և դա արված էր նորեկ ուսուցչին հասարակության աչքում վարկաբեկելու և նրան գյուղից հեռացնելու նպատակով։

Այդ օրերին Խնկոյանը պատրաստվեց մի քանի օրով Լենինական գնալ՝ դպրոցի համար գրատախտակ ու դասագրքեր բերելու։ Չէ՞ որ դեկտեմբեր ամսից գործելու էր նաև լիկկայանը։ Հարկավոր էր նախապատրաստվել։ Նա, առանց գյուղացիներին հայտնելու, առավոտ շատ կանուխ շտապեց շրջկենտրոն՝ ձի խնդրելու, քաղաք գնալու համար։

Վերին Թալինը այդ տարիներին մի շատ սովորական գյուղ էր, բայց նա ուներ բնական նախանձելի դիրք և զարգացման լայն հեռանկարներ։ Նրա հյուսիս-արևելյան կողմից բարձրանում էր Արադածը։ Արևմտյան կողմում կանգնած էր Արտին սարը՝ մեջքը Ալաջայի բարձունքին ուղղած։

Շրջկենտրոնի միջով անցնող միակ ճանապարհը կոչվում էր խորհուրդների փողոց։ Նրա վրա կանգնած էր մի քարաշեն տուն, որ աչքի ընկնող միակ գեղեցիկ շինությունն էր ամբողջ Թալինում։ Այնտեղ էին տեղավորված գավառամասի կուսակցական և վարչական ղեկավար օրգաններն իրենց բաժանմունքներով։ Թալինի շրջանը թե՛ տնտեսապես և թե՛ կուլտուրապես համարվում էր Սովետական Հայաստանի ամենահետամնաց շրջաններից մեկը։ Ամբողջ գավառամասում կար ընդամենը ութ ուսուցիչ, որոնցից մեկը Վարժապետ Ճրագն էր։

Բժիշկ չկար շրջանում, բացառությամբ մի բուժակի, որ սպիտակ խալաթն հագած՝ ոտքով շրջում էր գյուղից-գյուղ։ Բժշկական օգնության և խորհրդի համար գյուղացիները հաճախ դիմում էին կոմսոմոլի հրահանգիչ Ռուբեն Այվազյանին, որ քաղաքից եկած մի խանդավառ երիտասարդ էր և մեծ հեղինակություն էր վայելում տեղի աշխատավորության մեջ։ Ներքին Սասնաշեն գյուղում նրան դիմել էի մի սասունցի կին իր հիվանդ երեխային բուժելու։ Այվազյանը նրան մխիթարելու նպատակով ասել էր. «Տաք պահեցեք երեխային, թեյ տվեք, թող քրտնի»։ Հիվանդը երկու օրից հետո առողջացել էր։ Եվ ահա այդ կինը, մի կճուճ մածուն և մի քանի տասնյակ ձու խուրջինը դրած, նվեր էր տարել շրջկոմի հրահանգչին, ամեն տեղ տարածելով, թե նա իսկական բժիշկ է։

Գավառամասի ամենահեղինակավոր և ազդեցիկ անձը կուսհրահանգիչ Գուրգեն Հայկազունին էր, որի թելատակից անպակաս էին «Խորհրդային Հայաստան» և «Պրավդա» օրաթերթերը։ Բոլոր կարևոր տողերի տակ կարմիր մատիտով կամ թանաքով խնամքով ընդգծում էր, որ զեկուցումների ժամանակ ի նկատի ունենա, կամ մեջբերումներ անի։

Գավառամասի գործկոմի նախագահը մի հսկա տղամարդ էր՝ երկարաճիտ սև ոտնամաններով և կարճեզր փափախով։ Զորավարդ Սոմվելյան էր նրա անունը։ Սա տոնահանդեսների և գյուղական հարսանիքների մեջ գյուղացիների հետ թև-թևի տված քոչարի էր պարում, պարապտույտի մեջ առնելով Գուրգեն Հայկազունուն, կոմսոմոլի հրահանգիչ Ռուբեն Այվազյանին, բատրակկոմի նախագահ Աբո Համազասպին և կին հրահանգչուհի Սաթենիկ Դարբինյանին։

Կարծում եք պակա՞ս անձ է գավառամասի միլիցիա Արամա-

յիս Զատիկյանը, մոտ երեսունհինգ տարեկան, բնիկ ապարանցի, շեկ բեղերով այդ քաջակազմ տղամարդը, որ ձի նստելիս կարծես խաղ էր անում աստղերի հետ։ Բատրակկոմի նախագահից հետո միլպետ Արամայիսը ամենաճանաչված պաշտոնյան էր ամբողջ Թալինում։ Գործկոմի բոլոր բաժինները միասին ունեին չորս ձի, իսկ միլիցիան ուներ տասներկու ձի։ Շատ չէին Արամայիսին ենթակա միլիցիոներները։ Նրանք էլ թվով տասներկուս էին։ Միլպետը նստում էր սև ձիու վրա, իսկ նրա ետևից և երկու կողքերից հեծած գնում էին նրա տասներկու միլիցիոներները, բոլորն էլ չքավոր և միջակ գյուղացու զավակներ, մեծ մասամբ բատրակ և ընչազուրկ դասից։

Արամայիս Զատիկյանը իր միլիցիոներներին սովորեցնում էր, որ ամենակարևոր և ամենակայուն պատը աշխարհում միլիցիոների պատն է։ Ի՞նչ տարբերություն կա պետության և միլիցիայի միջև. հաճախ այդպիսի հարց էր առաջադրում նա իր միլիցիոներին՝ քաղխմբակի պարապմունքի ժամանակ։ Եվ նրանք պարտավոր էին հետևյալ հակիրճ պատասխանը տալ. «պետության և միլիցիայի միջև տարբերությունն այն է, որ կոմունիզմի ժամանակ պետությունը վերանալու է, իսկ միլիցիան մնալու է առհավետ»։ Գրեթե նրա բոլոր միլիցիոներները գիտեին այդ տարբերությունը, մանավանդ ապարանցի Գվիդոնը և մաստարեցի Մելիտոնը։

Որ չէ՛ր նստում միլպետ Արամայիսը իր սևուկին և բատրակկոմի նախագահի հետ կողք-կողքի հաղթական անցնում խորհուրդների փողոցով, ամենքը նրանց մասին ասում էին. «Երա՞նի ձեր տիրոջը։ Ցարաբ սրանք հողեղեն են, թե՞ աստվածեղեն»։

Իսկ սպառկոոպի նախագահ Բագրատ Երանելի՞ն։ Շրջկենտրոնում այդ տարիներին գործում էր «Արագած» կոչվող կոոպերատիվը, որն իր ճյուղերն ուներ Մաստարա, Կաթնաղբյուր և Կարմրաշեն գյուղերում։ Այդ ամբողջ աշխատանքը ղեկավարում էր Բագրատ Երանելին։

Հետաքրքիր մարդ էր Բագրատը։ Սա առաջինն էր, որ Թալինում կրկնակոշիկ էր հագել։ Գործկոմի պլենար նիստերում ակտիվ ելույթներ էր ունենում և քննադատում էր միլպետ Արամայիսի ու բատրակկոմի նախագահի աշխատանքները։ Միաժամանակ թունդ անաստված էր։ Բագրատն առաջինն էր, որ իր քեռուն թաղել էր նոր կենցաղով. գերեզմանատանը ճառ էր ասել միջազգային դրու-

Բյան մատին և ՄՈՊՐ-ի լիազոր Զարգանդ Զվակերյանի հետ «Ինտերնացիոնալ» էր երգել՝ գլուխը բարձր պահած։

Բագրատը հետաքրքիր և ինքնատիպ ճառեր էր ասում Հոկտեմբերյան, Նոյեմբերյան և Մայիսմեկյան տոնակատարությունների ժամանակ։ Հենվում էր բացօթյա ամբիոնին և գլուխը աջ ու ձախ տարուբերելով ամբողջ կոկորդով թնդում էր. «Մարքսը և Էնգելսը, ընկերնե՛ր, Լենինի ըղողին, ընկերնե՛ր, սնունդ են տվել, ընկերնե՛ր, ըղրա համար էլ, ընկերնե՛ր, Լենինը Նիկոլին քյալլի բերեց, ընկերնե՛ր»։

Ի՞նչպես կարելի է մոռանալ տոռգման ավագ կարգադրիչ մոսլուղլեցի Եգոր Քաջունուն, կամ ջրբաժան Եգորին, որ կուլակների առուները քանդելով՝ Արագածի ջրերը ուղղում էր քատրակների և չքավոր գյուղացիների ցանքսերի վրա։ Ջրերի միրաբ Եգոր Քաջունին հայտնի մարդ էր ոչ միայն Թալինի, այլև հարևան գավառամասերում։ Մեծ, մսուտ քթով, փոքր, շիլ աչքերով, ծուռ բերանով և խոշոր մատներով այդ ածդահա տղամարդին ամենքն էին ճանաչում։

Կուզիկ էր Եգորը։ Քայլում էր կռացած, հրացանը թևը, բահը աջ ուսի վրայով մեջքի աղեղաձև սապատին դրած, մորակը և լապտերը ձեռքին։ Մի կատարյալ Թերսիդես էր նա։ Մանավանդ զարհուրելի էր գիշեր ժամանակ, երբ Արագածի ջրերը հոտոտելով առաջ էր գնում, և լապտերի դեղնափայլ երերուն բոցը լուսավորում էր նրա խիստ կերպարանքը։

Երկու նշանավոր դեպք ահագին փոփոխություն էին մտցրել Եգոր Քաջունու կյանքում։

Մոսլուղլի գյուղում տոմեսի նախագահ եղած ժամանակ, մի գիշեր, նա երեք տեղով գնդակոծել էր իր տան առաստաղը, տարածելով, որ իբր թե կուլակները պատուհանից մահափորձ են կատարել իր վրա։ Այդ դեպքից մի օր հետո, Ջիլհանքով գյուղի քարափի գլխին Եգորը ատրճանակի երկու կրակով սպանել էր իր ձին և, գունատված, տագնապահար գյուղ վերադառնալով, հայտարարել էր թե, «էլի սպանվելուց պրծա, իմ ձին կարծեմ խփվեց»։ Հետաքննությունից պարզվել էր, որ ոչ մի կուլակ նրա դեմ մահափորձ չէր կատարել։ Ինքը Եգոր Քաջունին էր այդ ամենը արել, իր գերնվիրվածությունը կուսակցությանը և կառավարությանը ցույց տալու, ավելի մեծ վստահություն շահելու և ավելի կաբեռոր

պոստի նշանակվելու համար, մանավանդ որ նա աչք ուներ շրջ-գործկոմի նախագահի պոստին։ Այդ արարքի համար նրան պատժել էին և փոխանակ առաջ քաշելու, նշանակել էին ջրբաժան։

Եգոր Քաջոմին համարվում էր ապառկոոպի նախագահի ամենամոտիկ ընկերը և առաջինն էր ծափահարում նրա հեղափոխական ճառերը լսելիս։

Իր տեսակի մեջ առանձնահատուկ մարդ էր ՓՕԿ-ի նախագահ Կծկուկ Շմավոնը։ Սրա ցեղը իր գոյության օրից երբեք երեսուն տարեկանից դենը չէր անցնում։ Կուլակների դռանը ծանր աշխատանքի տակ ճողում էին և մեռնում երիտասարդ հասակում։ Բատրակ Շմավոնը նույնպես երկար տարիներ շահագործվել էր մշակության մեջ, նույնիսկ ֆիզիկապես կծկվել էր, ապրելով կյանքի դժնդակ պայմաններում։ Հեղափոխությունը արձակել էր նրա ճնշված թևերը, ուղղել էր նրա մեջքը, նրան դրել էր գավառամասի ՓՕԿ-ի նախագահի պատվավոր պոստում, բայց տակավին ամենքը նրան Կծկուկ Շմավոն էին ասում, այնքան ծանր էր անցյալի ազդեցությունը։ Հեղափոխության հենց առաջին օրը այդ բատրակը փախել էր կուլակ Վասակի տանից։ Նրա ականջին դեռ հընչում էին իր տիրոջ վերջին խոսքերը. «Գյադա Շմավո՞ն, շարբխանները բեր»։ Այդ ազատագրված գյուղացին շատ էր պարծենում իր չքավոր ծագմամբ և բոլոր անկետաներում անխտիր գրում էր «բատրակ»։ Գրում էր և ընդգծում, որ ակնբախ լինի։

Շմավոնը ՓՕԿ-ի ամբողջ դրամագլուխը պահում էր իր գրպանում։ Հաշվետվության ժամանակ շատ կարճ էր խոսում։ Երբ նախագահն ասում էր «խոսքը դնում եմ ՓՕԿ-ի նախագահի բերանի մեջ», Կծկուկ Շմավոնը վեր կենալով ասում էր. «Ընկերներ, մեր ՓՕԿ-ն ունի հարյուր տաս մանեթ, կեսը գրպանումս է, կեսն էլ ապառիկ։ Եթե հարցեր կան, տվեք»։

Իշխանությունը գյուղում անցել էր բատրակների ձեռքը։ Կուլակ Վասակի երեք աղջիկներից ամեն մեկը, որ առաջներում թքել անգամ չէր ուզում Շմավոնի վրա, այժմ երազում էր նրա հետ ամուսնանալ։ Իսկ Շմավոնի աչքերը ավելի հեռուն էին ուղղված։ Իր բատրակ ընկերներից մեկը Մարալիկ գյուղում ամուսնացել էր քաղաքից եկած մի գեղեցիկ ուսուցչուհու հետ։ Նա էլ մտածում էր մի այդպիսի ուսուցչուհու հետ ամուսնանալ, որ բոլորն ասեին.

«տեսեք թե ո՞ր հասավ Կծկուկ Շմավոնը, երեկվա անգրագետ բատրակը»։

Կոմսոմոլի հրահանգիչ Ռուբեն Այվազյանի թևն ու թիկունքը Աշոտ Խաչիկյանն էր, լայնադեմ, խաժ աչքերով մի պատանի, որ եղել էր գործկոմի ցրիչը, այնուհետև առաջ էր քաշվել որպես գործկոմի ձիապահ։ Ջիապահությունից Աշոտին ուղարկել էին կուրսեր։ Փոխել էին նրա ծակ տրեխները, նոր հագուստ էին տվել և նա, Թալին վերադառնալով, նշանակվել էր պիոներբյուրոյի նախագահ։

Երբ պիոներները և կոմսոմոլները սրա ղեկավարությամբ շեփորներ հարելով և զվարթ երգելով անցնում էին գյուղական փողոցներով, Կարմրաշեն գյուղի տերտեր Հայկը, ճանապարհը փոխելով, գաղտագողի նայում էր նրանց՝ քթի տակ ցածրաձայն տնտղնացնելով.

Հա՞ թնդում է նոր դհոլը,
Էս շան տղի կոմսոմոլը
Սևացրել է իմ լավ օրը,
Ի՞նչ եմ արել դրա մորը...

Հապա այստեղ եկ, Գարեգին Պիծակ։ Ինչո՞ւ ես ուզում ծրլկվել այս գրքի էջերից, թաքնվելով պիոներական թմբուկների այդ աղմկալի փողհարության տակ։ Թող ապագա պատմագիրները քո փոքրիկ բնութագիրը կարդալով՝ քեզ էլ դասեն տովետական Թալինի անցած-գնացած նշանավոր մարդկանց շարքում։ Դու ինչո՞վ ես պակաս՝ ասենք՝ Եգոր Քաջունուց կամ ՓՕԿի նախագահ Կծկուկ Շմավոնից։

Գարեգին Պիծակը գավառամասի հողաչափն էր, որին գյուղացիները չափրար Գարեգին էին ասում։ Իր ամբողջ ինվենտարը տասը մետրանոց մի սև պարան էր, որով նա հողերն էր չափում, և մի մաշված հաշվեմատյան, որի մեջ իրեն համար հասկանալի լեզվով նա կատարում էր այդ հողերի գծագրությունը և բաշխումը։ Գարեգին Պիծակն էր ուղղում գյուղական չափրարների թույլ տված սխալները և հարթում այդ ուղղությամբ առաջացած վեճերն ու բողոքները։ Երբ մի գյուղ մյուսի հողից զավթում էր, նա էր ստուգում և վերադարձնում հողը նախկին տերերին։ Նրանից էր կախված նաև այս կամ այն գյուղացուն լավ կամ վատ հողաբաժին

տալը, ուստի ամեն ոք աշխատում էր նրան իր տունը հրավիրել։

Ամենից շատ Գարեգին Պիծակը վախենում էր Կաթնաղբյուր գնալ։ Գյուլեն սրա հետ անվերջ վեճի մեջ էր, որովհետև Պիծակը ներքին Թալինի նախագահի տանը կերել էր մի ոչխար և Կաթնաղբյուրի լավ հողից կտրելով հատկացրել էր վերոհիշյալ գյուղին։ Գյուլեն գիշերով քանդել էր նոր սահմանագիծը և քարակույտերը նախկին դիրքին տեղափոխելով՝ գրել էր.

Երբ մաքին մտավ Պիծակի փորը,
Մեջտեղից կիսվեց Արշերի ձորը։
Բայց Գյուլեն կոխեց հին հրամանը
Եվ վերականգնեց նախկին սահմանը։

Մի մարդ կար Թալինում, որին ամենքը Ոսկեբերան Քալանթար էին ասում։ Դա գավառամասի շրջիկ դատավորն էր, որ սպասարկում էր նաև հարևան Մարալիկի շրջանին։ Շատ ինքնատիպ անձ էր Ոսկեբերան Քալանթարը։ Սովորաբար քայլում էր գլխաբաց, գլուխը մի քիչ առաջ թեքած և գլխարկը երկու ձեռքով մեջքի ետև պահած, մանավանդ երբ դատական նիստերից կամ աշխատանքից հետո տուն էր վերադառնում։ Այդ ձևով նա դրսևորում էր իր գործի ամբողջ լրջությունը և կարևորությունը։ Նրան տեսնելիս գավառամասի սպառկոոպի նախագահ Բագրատ Երանելին և չափրար Գարեգին Պիծակը մտահոգությամբ բարևում էին, երբեմն շփոթվելով և բավականաչափ այլայլվելով։ Նույնիսկ ջրերի միրաբ Եգոր Քաջունին բավական զգաստանում էր, երբ դատավորն էր անցնում նրա մոտով։

Գավառամասի բոլոր ղեկավար աշխատողների մեջ մի առանձնահատուկ մարդ էր Պետրոս Թաղվեցին, որ նշանակված էր Վարկային ընկերության նախագահ։ Սա առաջին սասունցի պաշտոնյան էր, որ վիսաթև աբան հագած ամեն առավոտ Իրինդից գալիս էր շրջկենտրոն և ուշ երեկոյան ձիով վերադառնում էր գյուղ։ Վարկային ընկերության նախագահ դառնալով՝ Պետրոս Թաղվեցին հազար հինգ հարյուր քլունգ և բահ էր ձեռք բերել վերաբնակված սասունցիների համար։ Բացի այդ, Հայաստանի Կենտգործկոմի նախագահից երկու հազար ռուբլու վարկ էր ստացել լծկան անասուններ գնելու նպատակով։ Կանչում էր գյուղացիներին, հող էր տալիս և պարտադրում էր, որ եզներ գնեն։ Մի եզն արժեր երեսուն ռուբլի։

Հետաքրքիր մարդիկ էին նաև փոստի կառավարիչ Անուշավան Շաղոյանը, ֆինմասի լիազոր Հազարապետ Գնթունին, շրջկենտրոնի խրճիթ-ընթերցարանի վարիչ Ապրես Փոշոտյանը և անաստվածների բջջի ղեկավար Կարմիր Ճպուռը։

Նոր էին այդ մարդիկ, սովետական և կոնսակցական ապարատի գյուղական անդրանիկ աշխատողներն էին դրանք։ Հագնում էին մեծ մասամբ գորշ, հասարակ շինելներ, կրում էին կաշվե թղթապանակներ և օրն ի բուն տնքում էին, որ իրենց շրջանը առաջադիմի և զարգանա։ Բոլորն էլ հասկանում էին, որ իրենց գավառամասը ոչ միայն վեռնային է, այլև վերաբնակված է մի զարմանալի տոհմիկ ժողովրդով, որի մասին նրանք գիտեին միայն գրքերից և հեքիաթներից։

Դեռևս գավառամասի գործկոմի դռանը չհասած, Արամ Խընկոյանը տեսավ, թե ի՛նչպես մի խումբ մարդիկ փողոցում կանգնած բարձրաձայն վիճում են։ Վիճողներն էին գավառամասի սպառկոոպի նախագահ Բագրատ Երանելին, ՓՕԿ-ի նախագահ Կծկուկ Շմավոնը, փոստի կառավարիչ Անուշավանը, հողաչափ Գարեգին Պիծակը, ֆինմասի վարիչ Հազարապետը, տոռգման հսկիչ Եգոր Քաջունին և գավառամասի շրջիկ դատավոր Ոսկեբերան Քալանթարը։ Նրանցից յուրաքանչյուրն ուզում էր պաշտոնական գործով շրջանի գյուղերը գնալ, և վիճում էին, թե ո՛վ պետք է նստի գործկոմի ախոռում մնացած մեկ հատիկ ձին։

Վերջապես Կծկուկ Շմավոնը հաղթեց բոլորին և, երիվարի սանձը խլելով սպառկոոպի նախագահի ձեռքից, իրեն նետեց թամբի վրա։ Հեռվից երևաց միլպետ Արամայիսը իր հրեղեն ձին նստած։ Նրա կողքից ձիավարում էին ապարանցի Գվիդոնը և Մելիտոս մաստարեցին։

— Իմացեք մի բան, կոմունիզմի ժամանակ նույնիսկ պետությունը վերանալու է, իսկ միլիցիան մնալու է առհավետ,— բարձրաձայն ազդարարեց միլպետ Արամայիսը, կամենալով մի անգամ ևս շեշտած լինել իր պոստի կարևորությունը։

— Կեցցե՛ միլպետի ձին, որ հերոսաբար աշխատում է հեղափոխության գործի համար,— բացագանչեց փոստի կառավարիչ Անուշավանը, հիացմունքով նայելով նրա ետևից, որի հովատակը մյուսներից տարբերվում էր իր գավակի մեծ-մեծ փուլերով և խոշոր, գեղեցիկ խալերով։

— Կեցցե՛ն իմ ոտքերը,— գոչեց Եգոր Քաջունին և հրացանն ու քահը ուղղելով ոտի վրա, իսկ լապտերը դաստակին ամրացնելով՝ ոտքով ճանապարհ ընկավ դեպի լեռները։ Սարերում կուլակները փտրել էին ջրերը։ Նա շտապում էր շարագործներին պատժելու և ջրերը նորից կապելու շքավոր դասակարգի արտերի վրա։

Տարբեր ուղղությամբ մեկնեցին փոստի կառավարիչ Անուշավան Շաղոյանը, ֆինմասի լիազոր Հազարապետ Գնթունին և հողաչափ Գարեգին Պիծակը։

Ոսկեբերան Քալանթարը գլխարկը ետևում պահած մանրիկ քայլերով շրջում էր խճուղու վրա։ Մի սայլ անցավ փողոցով, որ գնում էր դեպի քրդական ենթաշրջանը։ Ոսկեբերան Քալանթարը նստեց նրա վրա և ընթացավ դեպի այն կողմը։ Հրապարակում մնաց միայն սպառկոոպի նախագահ Բագրատ Երանելին, որ փայլուն կրկնակոշիկները ճռճռացնելով ետ ու առաջ էր անում արևի տակ։

Թեպետ Արամ Խնկոյանը Թալին էր եկել գործկոմից ձի խնդրելու, որ քաղաք գնա, բայց քիչ առաջվա պատկերը տեսնելով, բոլորովին հուսահատվեց։ Նրան մնում էր մի մասնավոր ձի վարձել գյուղացիներից կամ ոտքով գնալ։

— Հը, չլինի՞ դուք էլ ձեր աչքը էդ մեկ ձիու վրա էիք տնկել, ընկեր Արամ,— ասաց սպառկոոպի նախագահ Բագրատը հեռվից նրան մոտենալով և մտերմաբար բարևելով։— Ես ձեզ ճանաչում եմ։ Կարծեմ դուք ուսուցիչ եք նշանակված Կաթնաղբյուր գյուղում,— ավելացրեց նա։

— Այո, կարևոր գործով ուզում եմ Լենինական գնալ,— փոխադարձ մտերմությամբ նկատեց Խնկոյանը, ուշադրությամբ նայելով նրա հագի կրկնակոշիկներին, որ բոլորովին նոր էին և ճռճռում էին փողոցի քարերի վրա։

— Դժվար է մեր բանը, ընկեր Արամ, հեղափոխությունը արեցինք, բայց ձի չկա որ նստենք։ Սակայն հարկավոր չէ հուսալքվել։ Մենք, նոր աշխարհ կառուցողներս դժվարություններից վախեցողը չենք։— Բագրատ Երանելին այնքան տգեղվեց, որ տկսեց բավական լսելի ձայնով «Ինտերնացիոնալ» երգել, իր վրա հրավիրելով մոտիկից անցնող գյուղացիների ուշադրությունը։ Այդպես երգելով նա շարժվեց դեպի «Արագած» կոոպերատիվը, իր հետ

տանելով Արամ Խնկոյանին։ Ճանապարհին նա գանգատվեց նորեկ ուսուցչին, որ Մաստարայի և Կաթնաղբյուրի խանութներում մեծ քանակությամբ ձու է կուտակվել, փոխադրական միջոց չկա, որ քաղաք տանեն։

— Ուսուցիչ մարդ եք, գոնե դուք օգտվեք խանութի ձվերից, կոտրած ձուն արժե կես կոպեկ, առողջը՝ մեկ կոպեկ։ Ձուն շատ օգտակար բան է,— նկատեց սպառողության նախագահը, որը նոր մարդ տեսնելիս ագիտացիա էր անում, որ անդամագրվեն կոոպերացիային և ազատորեն օգտվեն խանութի բարիքներից։ Նույնիսկ ապառիկ էր տալիս։

Բագրատ Երանելին խանութի ճակատից մի քանի գույնզգույն լոզունգներ և խոշոր պլակատներ էր կախել, որ ուշադրություն էին գրավում. «Կոոպերատիվի միջոցով՝ դեպի կոմունիզմ»։ «Կեցցե՛ չքավոր և միջակ գյուղացու դաշինքը»։ «Երեսներս դեպի գյուղ»։ Խանութ հասնելով, Բագրատի առաջին գործն եղավ մի շալվար և մի զույգ կրկնակոշիկ վաճառել Արամ Խնկոյանին։

— Վերցրե՛ք, ընկեր Խնկոյան, ուսուցիչ մարդ եք, օրինակ պետք է ծառայեք անգիտակից մասսային։ Ընդամենը երկու զույգ կրկնակոշիկ եմ ստացել։ Մեկ զույգը ես եմ հագել, ինչպես տեսնում եք, իսկ մյուսը ձեզ եմ տալիս։ Հավատացնում եմ, դրանք առաջին կրկնակոշիկներն են, որ մուտք են գործել Թալինի շրջան։ Իսկ շալվարի մասին չեմ ասում։ Ձեր հագածը կարճ է, երկարը հագեք։ Սասունցիների մեջ անհարմար է այդ տեսակ վարտիքով մարդ գալ։

Արամ Խնկոյանը նոր շալվարը հագավ, իսկ կրկնակոշիկները փաթաթեց հին շալվարի մեջ և պահ տվեց նախագահի մոտ։ Նա արժեքը վճարեց և ուզում էր դուրս գալ խանութից, երբ Կաթնաղբյուրի կողմից փոշի հանելով մի ձիավոր եկավ։

Այդ խոզեղանն էր։

Լսելով, որ իրենց ուսուցիչը ոտքով Թալին է գնացել, Առատուրը սաստիկ նեղանում է և, Թամոյի Քուռկիկ Ջալալին վերցնելով, շտապում է նրա ետևից։

— Էդ ձին ո՞ւմ համար ես բերել,— հարցրեց Խնկոյանը զարմացած նայելով ձիու խուզված պոչին և փայտյա ասպանդակներին։

— Քեզ համար բերեցի, վարժապետ,— պատասխանեց Ասատուրը և ասպանդակը բռնեց, որ ուսուցիչը նստի։

Մի քիչ հետո, Քուռկիկ Ջալալին հեծած դեպի Լենինական էր գնում երիտասարդ ուսուցիչ Արամ Խնկոյանը։ Ճանապարհը թեքելով նա բարձրացավ Սոգյուվելի։ Խմեց այդ գյուղի քարայրի սառնորակ ջրից, մի դասընկեր ուներ այնտեղ՝ տեսավ նրան և վանքի ոլորապտույտ ձորը մտնելով, ընթացավ դեպի Մարալիկ՝ չորրորդ գավառամասի կենտրոնը։

Ամբողջ ճանապարհին Խնկոյանը մտածում էր այդ զարմանալի ժողովրդի մասին, որին առաջին անգամն էր տեսնում և որի լուսավորության ու կրթության գործին լծվել էր նաև ինքը։ Նրա աչքերի առջևով հերթով գալիս-անցնում էին բազմաթիվ դեմքեր, մեկը մյուսից հետաքրքիր և անմոռանալի։ Հետաքրքիր էր ոչ միայն այդ ժողովուրդը, այլև այն ղեկավար մարդիկ, որ լծված էին այդ ժողովրդի զարգացման և հառաջադիմության գործին։ Բայց այդ ամենը դեռ սկիզբն էր։ Դեռ ինչե՞ր, ինչե՞ր էր տեսնելու նա։

Քուռկիկ Ջալալին խայտանքով առաջ էր գնում։

Ահա Մարալիկ գյուղը։ Ահա և մեծատարած Հոռոմը՝ դաշտի մեջ՝ գլուխը կիկլոպյան բլուրների ապառաժներին դրած։

Շատ շուտով նա Լենինական հասավ։

ԼԻԿԿԱՅԱՆՈՒՄ

Դեկտեմբերի մեկից սկսեց գործել նաև Կաթնաղբյուրի մեծահասակների դպրոցը, որն առաջինն էր այդ ենթաշրջանում։ Սովորողների մեծ մասը հովիվներ, նախրապաններ և չքավոր գյուղացիներ էին։

Հենց առաջին օրը Իրինդից լիկկայանի պարապմունքին ներկայացան Խոդեդանը, Ստեփանը, Սեմալցի Թաթոն, գյուղսովետի նախագահ Եղնիկը և գյուղի մյուս մեծահասակ անգրագետները։ Ներքին Թալինից եկել էին Թելո Մեսրոպը, Փղորկվա Կարոն և Գոմսա Մելիքը, որոնք ցանկություն էին հայտնել Ասատուրի և Ստեփանի հետ միատեղ սովորել։ Ներկա էր նաև Բոլոճ Մկրոն։ Գյուլեն, իբրև գյուղսովետի անդամ, պահանջել էր, որ Մկրոն վերացնի իր անգրագիտությունը և այլևս չխաղա բոլոճների հետ։

Առաջին դասեղանին նստեցին Խոդեդանը և Ստեփանը։ Երկ-

որդ նստարանի վրա տեղ գրավեցին Թելո Մեսրոպը և Փղորկվա Կարոն։ Սրանց ետևում նստեցին Գոմսա Մելիքը և Սեմալցի Թաթոն։ Վերջին շարքը զբաղեցրին Բոլոճ Մկրոն և գյուղսովետի նախագահ Եզնիկը։

Պարապմունքի սկզբում Արամ Խնկոյանը ողջունեց բոլորին և ասաց, թե Սովետական կառավարությունը խնդիր է դրել ամենակարճ ժամկետում վերացնել անգրագիտությունը երկրում։ «Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակին Սովետական Ռուսաստանում չպետք է լինի ոչ մի անգրագետ», ասել է ընկեր Լենինը։ Նույնը վերաբերում է նաև մեր հանրապետությանը։ Սովետական Հայաստանում չպետք է մնա ոչ մի անգրագետ,— ասաց Արամ Խնկոյանը։— Մեր գյուղերում, դժբախտաբար, կան շատ նախագահներ, որ բոլորովին գրաճանաչ չեն։ Լենինական գնալիս ես անցա Սոգյուվիլի գյուղով, որի նախագահ Արտաշես Գալստյանը միայն իր անվան և ազգանվան առաջին տառերը գրել գիտե։ Անհանդուրժելի է այն դրությունը,— շարունակեց Արամը,— երբ գյուղսովետի կատարածուն մի ամբողջ օր սպասում է Կաթնաղբյուրի ճանապարհին, որ գրագետ մարդ անցնի, շրջաբերականը կարդալ տա։ Այսպես, ուրեմն, ընկերներ, ժամանակն է, որ դուք գրագետ դառնաք։ Ձեր զավակներն արդեն բավական վարժ կարդում են։ Հերթը ձերն է։ Եթե դուք կանոնավոր հաճախեք պարապմունքներին, ես խոստանում եմ ձեզ երեք ամսում գրագետ դարձնել։ Իհարկե, ձեր մեղքը չէ, որ դուք այդ հասակում անգրագետ եք մնացել։ Ձեր պայմանները Սասունում և Մուշում այնպես են եղել, որ դուք զրկված եք եղել կրթություն ստանալու հնարավորությունից։ Բայց մի՛ մոռացեք, որ դուք մի հին և գրագետ ազգի զավակ եք։ Այն գրերը, որ ես ձեզ սովորեցնելու եմ, ստեղծվել են արանից ուղիղ հազար հինգ հարյուր քսանինը տարի առաջ։ Եվ ստեղծողը գիտե՞ք ով է եղել. Մշո դաշտի Հացիկ գյուղի բնակիչ ռանչպար Վարդանի տղան՝ Մեսրոպ Մաշտոցը։

— Հացիկը մեր գյուղի մոտ է, ես էնտեղ շատ եմ եղել,— բացագանչեց Թելո Մեսրոպը տեղից։

— Քրդագոմի կողքին է, Քոսուրա սարի առաջ,— վրա բերեց Աստատուրը։

— Տեսնո՞ւմ եք, դուք նույնիսկ ճանաչում եք այն վայրը, որտեղ ծնվել է մեր ազգի մեծ լուսավորիչը,— շարունակեց Խնկո-

յանը։— Ես տեղեկացել եմ, թե որքան թանկարժեք ձեռագրեր է հանձնել Էջմիածնի մատենադարանին Դաշտադեմցի Գևորգը, որն այժմ ապրում է Վերին Սասնաշեն գյուղում։ Նա Մշո դաշտից փախցրել է Թարգմանչաց վանքի դուռը, որն ամբողջապես նախշ է ու քանդակ։ Այդ ամենը վկայում են մեր ժողովրդի բարձր կուլտուրայի և գրասիրության մասին։ Բայց երբ մենք կորցրինք մեր պետականությունը և ընկանք օտար նվաճողների լծի տակ, նրանք փակեցին մեր դպրոցները և մեր ժողովրդին ձգտեցին պահել խավարի մեջ։ Կամ հարկադրեցին, որ հայ երեխան մոռանա իր մայրենի լեզուն և օտարի լեզուն սովորի, ինչպես, օրինակ, պարսկերենը։ Այդ ձևով նրանք աշխատեցին աստիճանաբար ձուլել և ոչնչացնել մեզ։ Միայն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ օսմանյան փաշաները և թյուրք բռնապետները սպանեցին և բռնի տեղահանեցին երեք միլիոն մարդ իր հայրենիքից։ Դուք այդ ավերիչ պատերազմի զոհերն եք, նրա բեկորները։ Այդ է պատճառը, որ այժմ մեր գյուղերում գրագետ մարդիկ քիչ կան։ Այժմ դրությունը փոխվել է։ Հայաստանը դարձել է Սովետական և միացել է Սովետական հանրապետությունների մեծ ընտանիքին։ Իսկ սովետական երկրում անգրագետ մարդ չպետք է լինի։ Այսօրվանից ձեզ հնարավորություն է տրված վերացնել ձեր անգրագիտությունը։ Սովորեցեք, սիրեցեք և պաշտեցեք ձեր մայրենի լեզուն, որ հանդիսանում է աշխարհի ամենահին լեզուներից մեկը,— ունկնդիրներին դիմելով իր խոսքն ավարտեց երիտասարդ ուսուցիչը։

Այդ ընդհանուր նախաբանից հետո Արամ Խնկոյանը սովորողներին բաժանեց քաղաքից բերված «Կարմիր մաճկալ» դասագիրքը և սկսեց սովորեցնել նրանց Հայոց այբուբենի առաջին տառերը։

Մխիթարականն այն էր, որ գրերից ամեն մեկը իր տեսքով հիշեցնում էր մի որևէ երկրագործական գործիք կամ ընտանի կենդանի։ Ձեռագիր «մ» տառը հիշեցնում էր կեմ ոլորող գործիքը. «շ»-ն նման էր մանգաղի։ Փղորկվա Կարոն փոքրատառ «ա»-ի մեջտեղի գիծը երկարացրեց և ստացվեց մի կատարյալ եղան։ Իսկ երկու «ա»-ն իրար միացնելով և մի պոչ ավելացնելով շինեց մի մեծ փոցխ։ Հենց առաջին դասին այդ փոցխն ու եղանը խրվեցին Թելո Մեարոպի փոկորդը։ Նա ոչ մի կերպ չէր կարողանում արտաբերել

«ա» հնչյունը։ Ստացվում էր ոչխարի մայոց։ Տեղից վեր կացավ և գնաց նստեց վերջին շարքում՝ Եզնիկի և Բոլոռ Մկրոյի կողքին։

— Քեռի Թելո, բերանդ լայն բաց արա և ասա՝ «ա՜»,— բացատրեց Խնկոյանը մոտենալով։

— Ա՜,— արտասանեց Թելոն աշխատելով ճշտորեն ներկայացնել հնչյունի պատկերը, բայց վրիպեց։ Ոչխարի պես մայում էր։

— Քու տունը շինվի, վարժապետ, ես էդ «ա»-ից փախա, իսկ դու էդ հորսելին (եղանը) առել ընկել ես իմ ետևից։— Նա եկավ նստեց իր տեղը և սկսեց այդ տառը գրատախտակից արտագրել տետրակում։ Մեարոպի ճակատից քրտինքը հոսում էր։ Այբուբենի բոլոր տառերը նրա աչքին ծաղկի գլուխներ էին երևում։ Թելոն համաձայն կլիներ առավոտից մինչև երեկո վար անել կամ շալակով օրական մի քանի սայլ խոտ կրել, քան թե այդ տառերից մեկն ու մեկը սովորել։

Հաջորդ գրի վրա բոլորովին հուսահատվեց։

— Գիտե՞ս ինչ, վարժապետ,— բացագանչեց Թելոն դասի ժամանակ,— աշխարհում ամեն ինչ վարժության վրա է։ Որ ատծու չոքերից էլ կախվեմ, ոչ ես քեզ՝պես գրիչ բռնել կսովորեմ, ոչ էլ դու ինձպես գերանդի քաշել։

— Այդ մասամբ ճիշտ է, բայց չպետք է հուսահատվել,— խրախուսեց նրանց Արամ Խնկոյանը։

Անցավ երկու շաբաթ։ Նրանք արդեն տառերի մի մասը սովորել էին, կարդում էին հեգելով և սկսել էին գրոհել այբուբենի հաջորդ գրերի վրա։ Առանձնապես վարժ կարդում էին նախագահ Եզնիկը, Խոդեդանը և Սեմալցի Թաթոն։ Վերջինս իր ազատ ժամերին գնում էր ջրաղաց և ջվալների վրա նստած, տառերը իրար կապելով, «Գևորգ Մարզպետունի» և «Կայծեր» էր կարդում։

— Վարժապետ ջան, էն տառը, որ շան պես պպզած է, անունն ի՞նչ է,— հարցրեց Ստեփանը։

— Դա փոքրատառ «ն» գիրն է, մեր այբուբենի քսաներկուերորդ տառը,— բացատրեց ուսուցիչը այդ բառի պատկերը երկրորդ անգամ գծելով գրատախտակին։

— Իսկ էն շուռ տված կաքավի ատամն ի՞նչ է,— հարցրեց Փղորիկվա Կարոն դասագրքի մեջ նայելով։

— Դա մեր տպագիր փոքրատառ «ջ»-ն է։

Փղորկվա Կարոն և Գոմսա Մելիքը չդիմացան և մեկական գլանակ շինեցին։ Մի գլանակ էլ Թելո Մեսրոպը փաթաթեց։ Խընկոյանը մի քանի անգամ զգուշացրել էր, որ դասարանում չի թույլատրվում ծխել, բայց ոչինչ չէր օգնում։ Երբեմն այնքան ծուխ էր լինում, որ տառերը խավարում էին։

Ամենաթույլ և անհոգ սովորողը նախրապահ Մկրոն էր։ Դասի կեսից ննջում էր, գլուխը մերթ Եզնիկի ուսին զարկելով, մերթ Գոմսա Մելիքի մեջքին։ Երբեմն էլ բոլոճներ էր բերում դասարան և խաղում էր նրանց հետ։

Մի անգամ Արամ Խնկոյանը նկատեց, որ Խոդեդանը աշխատում էր մի ինչ-որ տառ արտագրել տետրակի մեջ և չէր կարողանում։ Վիզը անհանգստությամբ ոլորում էր այս ու այն կողմ, փընչում էր և զայրացած քորում էր ճակատը։— Ես քու ծուռ վիզը, ես քու կուզ պառեկը (մեջքը), ես քու ճոռիկ բերանը։ Վա՛յ Հացկա Վարդանի տղա, չկարողացա՞ր մի հեշտ բան հնարել։ Էդ երևի քու մամու խոնջանի փոնին է,— ինքն իրեն քթի տակ խոսում էր Աստատուրը, նեղանում և հիշոցներ տալիս։

— Վարժապետ, էն ծուռվիզ տառի անունն ի՞նչ է,— համբերությունից դուրս գալով հարցրեց հովիվը, բարկացած նայելով գրատախտակին։

— Դա փոքրատառ «ճ» գիրն է։ Ապա արտասանիր «ճանճ»։

— Ճա՞նճ,— բարձրաձայն գոչեց Աստատուրը և մեծ դժվարությամբ տետրակում նկարեց այդ տառի պատկերը։ Նա քրտինքը սրբեց և մի գլանակ շինելով՝ վառեց լամպից։

Լամպը տրաքվեց։

Հետևյալ օրվանից Բայազն իրենց լամպն առած ամեն երեկո գալիս էր Կաթնաղբյուր։

Գյուլեն, իբրև գյուղսովետի անդամ և դպրոցի մաքրության ու պահպանության գործին հետևող անձ, հաճախ ներկա էր լինում լիկկայանի պարապմունքներին։ Ինքը գրատախտակն էր մաքրում, իսկ Բայազը իլիկ էր մանում գրատախտակի հետևում, ականջ դնելով, թե ի՞նչպես են տղամարդիկ կարդում։ Երբ հերթը հասնում էր Խոդեդանին, նա լամպը պատից ցած առնելով, գնում-կանգնում էր նրա կողքը, միաժամանակ իլիկի ծայրով ցույց տալով կարդացվող տողերը և ավելի շատ շփոթեցնելով ամուսնուն, քան թե

օգնելով, որովհետև ինքը կարդալ չէր իմանում և, իլիկի պոչը բարձր ու ցածր դնելով, խառնում էր տողերը։

Երբեմն էլ Գյուլեն էր գալիս իր ամուսնու մոտ։

— Քա տղա, Մկրո, հերիք է քնես, տառերը մնացին։ Վարժապետ չան, մի քիչ էլ մեր Մկրոյին հարցրու, տեսնենք կարդալ գիտե՞։ Բոլոճ Մկրոն սթափվելով կարդում էր դասը։ Ընդամենը մի քանի տառ էր մնացել, որ նա այբուբենը լրիվ սովորեր։

— Քա տղա, մեկ-երկու մոզի է մնացել, էն էլ տար ախոռ կապիր ու էդ չոլերից եկ տուն,— քաջալերում էր նրան Գյուլեն։ «Մոզի» ասելով նա ակնարկում էր այբուբենի անծանոթ գրերը, իսկ «ախոռ» ասելով ի նկատի ուներ Մկրոյի գլուխը։— Հերիք է խաղաս բոլոճների հետ, լաո։ Կարդա, որ խեղճ չմնանք։ Քեռի Ասվատուրը քեզնից լավ է կարդում։ Եզնիկն ու Սեմալցի Թաթոն քեզնից անցան։

Շաբաթը մեկ անգամ դասերից հետո սովորողները խնդրում էին, որ Փղոբկվա Կարոն երգի։

Դարդոտ էր երգում Կարոն, վառված սրտով։ Երգելիս արցունքները հոսում էին նրա աչքերից։

Երկու ամիս հետո պատահեց մի դեպք, որ տակն ու վրա արավ լիկկայանի աշխատանքները։ Նրանք նստած էին դասի, երբ հանկարծ դպրոցի պատի տակ զուռնի նվագածության ձայն լսվեց։ Թելոն, որ թելադրություն էր գրում գրատախտակին, կավիճը գցեց սեղանին և թաշկինակը հանելով՝ սկսեց ոգևորությամբ պարել։ Տեղերից վեր թռան Փղոբկվա Կարոն, Գոմսա Մելիքը, Սեմալցի Թաթոն և մյուս սատանցիք։ Իրար պոչից բռնելով նրանք պարում էին։ Տեղը նեղ էր, իսկ զուռնան թնդում էր դրսում։ Թելո Մեսրոպը ուղղակի պատուհանից դուրս թռավ։ Նրա ետևից թռան Գոմսա Մելիքը, Փղոբկվա Կարոն, Գուրեան Հարությը և Սեմալցի Թաթոն։ Գնացին Աստատուրը, Ստեփանը, Եզնիկը և Բոլոճ Մկրոն։ Դուրս գնացին նաև Գյուլեն և Բայազը՝ իրենց հետ տանելով լամպը։

Դրսում, դպրոցի պատի տակ, ձյունների վրա, նրանք սկսեցին «յարխուշտա» պարել։ Եվ ինչպե՞ս էին պարում։

Շվարած, գրեթե գոռգոռար և ապուշ կտրած կանգնել էր Արամ Խնկոյանը շեմքի մոտ, նոր կրկնակոշիկները հագին և կիսամութի միջով նայում էր դուրս։ Այդ ամենը այնքան արագ կատարվեց, որ նա ժամանակ չունեցավ նույնիսկ բղավելու նրանց ետևից։

ՀԻՆԳ „ՀՐԱՇՔՆԵՐԸ“

Լիկկայանը և դպրոցական առաջին տարին հաջողությամբ փակելով, Արամ Խնկոյանը ամառային արձակուրդներին էքսկուրսիա դնաց Ռուսաստան։ Վերադարձին, անձնական օգտագործման համար, նա այնտեղից բերեց մի պրիմուս, մի պատեֆոն և ձեռքի էլեկտրական լապտեր։

Երբ գիշեր ժամանակ Արամ Խնկոյանը գյուղի փողոցներով անցնելիս ձեռքի շողարձակով լուսավորում էր ճանապարհը, շատ գյուղացիներ մի կողմ քաշվելով խաչակնքում էին իրենց երեսը։ Սպառկոոպի նախագահ Բագրատ Երանելին հատկապես եկել էր Կաթնաղբյուր, որ այդ կախարդական լամպը մեկ օրով Թալին տանի՝ շրջկոմի հրահանգիչ Գուրգեն Հայկազունուն և բատրակկոմի նախագահ Աբո Համազասպին զարմացնելու համար։ Նա գիշերով նրա լույսը գցել էր ՓՕԿ-ի նախագահ Կծկուկ Շմավոնի ճաղատ գլխին և իրարանցում էր ստեղծել ամբողջ Թալինում, նկատողություն ստանալով անասուածների բջիջի ղեկավար Կարմիր Ճպուռի կողմից։

Մի օր, երբ Արամ Խնկոյանը դպրոցից վերադարձավ, տեսավ մարդկանց մի մեծ բազմություն իր դռանը խռնված։ Ուղիղ շեմքի մոտ կանգնել էր Գյուլեն շերեփը ձեռքին, իսկ կողքին վառվում էր Լենինգրադից բերած պրիմուսը, որ առաջինն էր ամբողջ Թալինում։ Ոչ միայն Կաթնաղբյուրից, այլև հարևան գյուղերից՝ Իրինդից, Շղարշիկից, Դավթաշենից, Աշնակից և Ներքին Թալինից մարդիկ էին գալիս այդ զարմանալի գործիքը տեսնելու։

Ֆսֆսալով, շուրջը մի բոլորակ կապտավուն, սպիտակ բոց արձակելով վառվում էր այդ փոքրիկ շաղգամաչափ գործիքը և ամենքը ապշահար դրան էին նայում։

Թելո Մեսրոպը և Փղորկվա Կարոն ետևից վզները երկարած դիտում էին զարմանալի «հրաշքը»։ Առաջին շարքում կանգնած էին Խոդեղանը, Գուրեան Հարութը և Սեմակցի Թաթոն։ Ոսկեհատը և Բայազը ուղղակի հենվել էին դռանը։ Ներկաների թվումն էին նաև սպառկոոպի նախագահ Բագրատ Երանելին, ՓՕԿ-ի նախագահ Կծկուկ Շմավոնը և ֆինմասի լիազոր Հազարապետը։ Հետաքրքրությունն այնքան մեծ էր, որ Գյուլեն ստիպված եղավ պրիմուսը բերել շեմքի մոտ, որ ամենքը տեսնեն։ Շատերը երանի էին տալիս

Գյուլեին, որ անմիջապես դրա կողքին էր կանգնած և երբեմն-երբեմն կռանալով բորբոքում էր սպիտակափայլ բոցը և վեր կենալով հպարտությամբ նայում էր բազմությանը։ Առհասարակ պետք է ասել, որ Գյուլեն, որպես գյուղսովետի անդամ, չափազանց նախանձախնդիր էր նոր կենցաղի հաստատման գործում։

Վարժապետ Ճրագը, որ շատ էր ուրախացել լիկկայանում պատահած դեպքով, խեթ-խեթ նայեց հավաքված բազմությանը և մոտենալով տվեց իր կտրուկ եզրակացությունը.

— Դրա վրա եփած ճաշը չուտվի։

— Ինչո՞ւ,— աչքերը նրա վրա ոլորելով հարցրեց սպառկոոպի նախագահ Բագրատը։

— Համովը թոնրի ճաշն է։

— Բա էս անթիքա գործիքին անո՞ւն կդնեն,— բարկացավ սպառկոոպի նախագահը։

— Դրա վրա միայն ձու կարելի է խաշել,— ընկեր Բագրատ, էն ձվերը, որ հոտում են ձեր «Արագած» կոոպերատիվի խանութներում, հեգնեց Վարժապետ Ճրագը և դառնալով գյուղացիներին՝ ավելացրեց.

— Ի՞նչ եք հավաքվել էդ աչքակապ սատանայական գործիքի մոտ։ Խերն ու բարին թոնրի մեջ է։ Ձեր աչքով տեսաք, կարճ շալվարով էր եկել գյուղ, ամաչեց, գնաց երկար վարտիք հագավ։ Եվ նմանապես կարդալ չէր իմանում, նոր է սովորել։ Ժողովրդի առաջ մի նամակ տվեցի, չկարողացավ տառերը իրարից ջոկել։ Որ դա օրինավոր վարժապետ լիներ, գյուղացիները դասի ժամանակ լիկկայանից դո՞ւրս կթափվեին, էն էլ լուսամուտից և ձմռան ցրտին։

— Վարժապետ Ճրագ, մի՛ բամբասիր մեր նոր վարժապետին։ Նրա պես կարդացվոր էս ընդհանուր Թալինի մեջ չկա,— սաստեց նրան Գյուլեն։

— Ճի՛շտ է,— արձագանքեցին գյուղացիները միաբերան։

— Ասում են նրա մոտ էնպիսի մի հաստ գիրք կա, որ դու տեսած էլ չկաս,— պարծեցավ Կծկուկ Շմավոնը։

— Դե որ հավատում եք նրա սուտ կարդալուն և էդ պրիմոսի ֆսֆսոցին, ասված ձեզ հետ,— բացագանչեց Վարժապետ Ճրագը և արագ հեռացավ տերողորմյայի հատիկները մեջքի ետևում բարկությամբ խաղացնելով։

Հետևյալ օրը կիրակի էր։ Արամ Խնկոյանը առավոտ կանուխ լարեց պատեֆոնը։ Դա նույնպես առաջին երգասան գործիքն էր ամբողջ Թալինում։ Խնկոյանի սենյակը և նրա շրջապատը ողողվեց մի ախորժելի երաժշտությամբ։ Գյուղացիները հավաքվեցին Գյուլեի և նախրապահ Մկրտչի դռանը։ Ամենք էլ կարծում էին թե երգողը Արամ Խնկոյանն է՝ իրենց գյուղի ուսուցիչը։ Զարմանում էին, որ նա այդքան անուշ ձայն ունի և իր այդ հրաշալի ունակությունը թաքցրել է ժողովրդից։ Աղբյուրը ջրի շտապող հարսներն ու կանայք, կուժերն առած, կանգնում էին ճանապարհին և ականջ ունկնդրում քաղցրահնչյուն նվագը։

Միլպետ Արամայիսը ձիով անցնում էր գյուղի միջով։ Այդ կախարդական երգը լսելիս, ձին կանգնեցրեց և ականջները սրած ու մի քիչ թեքված դեպի ձիու բաշը, սկսեց զարմանքով լսել։ Նրանից մի քանի քայլ այն կողմը կանգնել էր ջրբաժան Եգորը, հրացանն ու թիակը ուսին, լապտերը ձեռքը բռնած։ Նա շտապում էր սար, որ կուլակների առուների ջրերը կտրի, բայց այդ երգը լսելիս կանգ առավ և խոշոր մսուտ քիթը և բերանը խաղացնելով, շռած աչքերով նայեց վերև։

«Չլինի՞ թե կուլակային դավադրություն է», անցավ նրա մտքով։ «Խաբեն գյուղի ընդհանուր բատրակ չքավորների ակտիվը, հավաքեն այդ կախարդական երգի շուրջը և բոլորին կոտորեն»։

Ուղիղ շեմքի մոտ կանգնել էր Վարժապետ Ճրագը և համրիչը ետևում խաղացնելով, մազոտ բերանը լայն բաց արած, ականջ էր դնում զարմանալի երգչին։

— Գի՜ժ է,— բղավեց նա և գլուխը օրորելով թողեց հեռացավ։

Մի շաբաթ հետո, երբ Արամ Խնկոյանը դպրոցից տուն վերադարձավ, տեսավ իր դռանը դարձյալ մեծ բազմություն էր ժողովված։ Իր սենյակի դուռը բաց էր, իսկ ներսը լեփ-լեցուն էր գյուղացիներով։ Նրանք նստած էին պատերի տակ և ծխում էին։ Անկողնու վրա տարածված էր բանվորի կերպարանքով մի հսկա երիտասարդ։ Պարզվեց, որ քաղաքից կինո-մեխանիկ էր եկել շարժապատկեր ցուցադրելու։ Ի դեպ, այդ տարիներին ո՛վ գյուղ էր գալիս, նրան սովորաբար տանում էին ուսուցչի տունը, նույնիսկ վերջինիս բացակայության ժամանակ։ Հատակին դրված էր մի խոշոր և բավական ծանր ապարատ, որ գրավել էր ներսից և դուր-

սից նայող գյուղացիների ուշադրությունը։ Դա առաջին կինո-սարքավորումն էր, որ թափանցել էր տասունցիների մեջ, մի ժողովրդի, որ բոլորովին գաղափար չուներ կինոյի մասին։

Տոմսերի վաճառման գործը իր վրա էր վերցրել Գյուլեն։ Մեկ տոմսը երեք ձու էր։ Եկողը ձվերը դնում էր Գյուլեի գոգնոցը և մի թղթի կտոր առնելով հեռանում էր։

Հարևան գյուղերից բազմաթիվ գյուղացիներ թափվել էին Կաթնաղբյուր՝ կինո տեսնելու։ Օդան, որտեղ ցուցադրվելու էր շարժապատկերը, շատ ընդարձակ էր։ Նստարանների փոխարեն հատակին գերաններ էին դրված և մեղվի դատարկ փեթակներ։ Գյուլեն, Բայազը և Ոսկեհատը նստած էին առաջին շարքում քուրսիների վրա։ Նրանց կողքին, գերանների վրա, նստել էին Խոդեդանը, Բոլոճ Մկրոն, Ստեփանը, Գուրթան Հարութն իր եղբայրներով և Սեմալցի Թաթոն։ Փղորկվա Կարոն, Թելո Մեսրոպը և Գոմսա Մելիքը թառել էին փեթակների վրա, երկրորդ շարքում, և ուշադրությամբ նայում էին պատին։ Հանկարծ օդան մթնեց։

Էկրանի վրա նախ երևաց մի երկար գնացք, որ ծուխ արձակելով գալիս էր հեռվից։ Շոգեքարշը և վագոնները գնալով մեծանում էին։ Ահռելի անիվները շարժվում էին ուղղակի դեպի նստած մարդիկ։ Գյուլեն, Բայազը և Ոսկեհատը ճչալով փռվեցին հատակին։ Թելո Մեսրոպը թռավ փեթակի վրայից և նետվեց դեպի անկյունի պատը։ Փղորկվա Կարոն և Գոմսա Մելիքը մտան գերանների տակ։ Մյուսները, ով ինչպես կարողացավ, տափեց գետնին, որ գնացքն անցնի։ Շոգեքարշը հանկարծ թեքվեց և էկրանի ձախ անկյունով հեռացավ՝ իր հետ քարշ տալով վագոնների շարանը։

Գյուղացիները հազիվ էին ուշքի եկել այդ տագնապից, երբ պատի վրա երևաց արջերի մի մեծ բազմություն, որ վազքով շարժվում էր դեպի նստածները։ Օդայում աղաղակ բարձրացավ։ Բոլորը վեր թռան իրենց տեղից և խառնվեցին իրար։ Ասատուրը և Ստեփանը անմիջապես բարձրացրին իրենց ձեռնափայտերը, մեկը աջ կողմից, մյուսը ձախից, որ արջերին հարվածելով դեպի ետ դարձնեն։ Փղորկվա Կարոն և Գոմսա Մելիքը դուրս վազեցին հրացան բերելու։

— Չվախենա՞ք,— գոռաց Թելոն և Բայազի քուրսին վերցնելով ամբողջ թափով իջեցրեց էկրանի վրա, կամենալով փախցը-

նել արջերին։ Գյուղի տանիքներից մեկում լսվեց հրացանի պայթյուն։

— Օգնեցե՞ք, արջերը լցվել են Կաթնաղբյուրի վրա։ Միլպետ Արամայիսին ասեք, թող՝ իր միլիցիայի կազմով օգնության հասնի՞։— Այդ Բոլոռ Մկրոն էր, որ իրենց գյուղից բղավում էր դեպի Վերին Թալին։

Իբրև նստարան օգտագործած փեթակների մեջ մեղուներ էին եղել, որոնք սկսել էին մթության մեջ խայթել մարդկանց։ Երեխաներից մի քանիսը դուրս վազելով տարածել էին, թե արջերն արդեն մտել են օդան և մութի մեջ խեղդում են հանդիսականներին։

Թելո Մեսրոպի հարվածից լույսը մարեց։ Կինո-մեխանիկը սարսափահար փախավ դահլիճից։ Գյուղացիների վրդովված բազմությունը մահակներով ընկավ նրա ետևից։— Կինոյին բռնե՞ք, կինոյին բռնե՞ք,— ասում էին նրանք և հևիհև վազում, որ դատաստան անեն։

Արամ Խնկոյանը, որ դեպքին ներկա չէր, ճանապարհին տեսնելով փախչող մեխանիկին և տեղեկանալով եղելությանը, նրան շտապով թաքցրեց իր տան մեջ և, կուրծքը դեմ տալով գյուղացիների վրդովված բազմությանը, բացատրեց նրանց, որ այդ արջերը իսկական արջեր չեն եղել, որ դա նկար է։

— Քանի դեռ քաղաքից եկած էդ սատանա վարժապետն էստեղ է, մեր գյուղի գլխին դեռ շա՞տ փորձանք կգա,— իր տանիքին կանգնած ասում էր Վարժապետ Ճրագը և անիծում այն օրը, երբ Արամ Խնկոյանը Կաթնաղբյուր եկավ։

Բայց այդ բոլոր «հրաշքներից» ամենազարմանալին ռադիոն էր։ Ռադիոյին ոչ մի սատունցի չէր հավատում։ Ձենով Օհանի ձայնից զորավոր ձայն՝ նրանք պատկերացնել չէին կարողանում։ Ռադիոյով հարյուրավոր կիլոմետրների վրա մի բան հաղորդելը գերագույն հրաշք էր թվում, դիվական գործ։ Վարժապետ Ճրագը, որ շարունակում էր քարոզել, թե դրանից մի քանի շաբաթ առաջ սենյակում երգողը ոչ թե պատեֆոնն էր, այլ իրենց «գիժ ուսուցիչը»,— այն կարծիքին էր, թե ռադիոյով խոսելը այդ միևնույն մարդու հերթական աչքակապություններից մեկն է, որ այդ սատանան պատրաստվում է նոր դժբախտության ենթարկել գյուղը։

Հետևյալ գարնանը Արամ Խնկոյանի նախաձեռնությամբ Իրինդ գյուղում ռադիո-ընդունիչ դրվեց։ Ընդունիչը դրեցին գյուղսովետի գրասենյակում և ծայրը միացրին Կարմիր վանքի տանիքին, որ գտնվում էր Ասատուրի խրճիթի մոտ։

Իրինդի ռադիոկայանի բացումը շատ հանդիսավոր եղավ։ Ներկա էր ոչ միայն գյուղի ամբողջ համայնքը Խոդեդանի գլխավորությամբ, այլև ներկա էին շատ աշխատավորներ հարևան գյուղերից։ Շրջկենտրոնից եկել էին շրջկոմի հրահանգիչ Գուրգեն Հայկազունին, փոստի կառավարիչ Անուշավանը, բատրակկոմի նախագահ Աբո Համազասպը, միլպետ Արամայիսը, ՓՕԿ-ի նախագահ Կծկուկ Շմավոնը, անասնաբուծների բջջի քարտուղար Կարմիր Ճպուռը և սպառողական նախագահ Բագրատ Երանելին։ Արամ Խնկոյանի հրավերով Կաթնաղբյուրից եկել էին Գյուլեն և Բոլոռ Մկրոն։ Իսկ Ներքին Թալինից՝ Փղորկվա Կարոն, Թելո Մեսրոպը, Գոմսա Մելիքը և ուրիշ գյուղացիներ։ Ներկա էր նաև Վարժապետ Ճրագը։ Նա իր մի քանի համախոհների հետ կանգնել էր վանքից բավական հեռու և սպասում էր, թե ի՛նչպես է խայտառակվելու Արամ Խնկոյանը համայն գյուղացիության առաջ։

Վերջապես Երևանը խոսեց։ Խնկոյանը նախապես պայմանավորվել էր Ռադիոկոմիտեի հետ, որ հաղորդման ժամանակ հիշատակվեն մի քանի նշանավոր մարդկանց անունները։

— Ողջույն Թալինի գավառամասի Իրինդ գյուղի բնակիչներին։ Բարև ձեզ, քեռի Խոդեդան և մորքուր Բայազ։ Ինչպե՞ս է Ներքին Թալինի բնակիչ Թելո Մեսրոպի առողջությունը։ Անցյալ տարի դուք հաջողությամբ ավարտեցիք լիկկայանը։ Նորանոր հաջողություններ ենք ցանկանում Բոլոռ Մկրոյին, Գութան Հարութին և սատունցի մյուս աշխատավոր շինականներին։

— Չե՞նք հավատում, չե՞նք հավատում, ռադիոյի մեջ մարդ կա նստած,— բացագանչեցին գյուղացիներն այս ու այն կողմից։ Ասատուրը, Թելո Մեսրոպը և Բոլոռ Մկրոն սկսեցին իրենց ձեռքի մահակներով խառնել բարձրախոսը։

— Սատանոք բան է, դիտմամբ բերել են գյուղ, որ սխալվենք մի բան խոսանք, շուտ հայտնեն պատությանը — շշնջաց Սեմալցի Թաթոն Փղորկվա Կարոյի ականջին։

Այնքան զարմանալի էր ռադիոյի մուտքը Թալին, որ երբ բոլորը հեռացան, Խոդեդանը և Բայազը ամբողջ գիշերը նստեցին

դրսում կիսափուլ վանքի մոտ։ Միգուցե իսկապես մարդ կար թաքնված բարձրախոսի մեջ կամ որևէ մոտիկ տեղում։ Իրենց բացակայությունից օգտվելով նա կարող էր դուրս գալ և իսկույն անհետանալ։ Հարկավոր էր բռնել նրան։

Կես գիշերին Խոդեդանը գնաց քնելու, իսկ Բայազը նստեց դրսում։ Իլիկը ձեռքին ննջում էր և երբեմն-երբեմն սթափվելով նայում էր բարձրախոսին. չլինի՞ թե հանկարծ թաքնված մարդը դուրս գա և փախչի։

Լուսադեմին նա ուժեղ փորացավ զգաց։

ԲԺՇԿԻ ՄՈՏ

Իր ամբողջ կյանքում Բայազը միայն մեկ անգամ էր հիվանդացել, այն էլ Արինոքում, Համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ, երբ լուր էր առել Մշո դաշտի ահավոր կոտորածի մասին։

Բայազը ոչ միայն ուժեղ փորացավ զգաց, այլև միաժամանակ սկսեց հազալ։ Ոչ ոք չկարողացավ գլուխ հանել նրա հիվանդությունից։ Նույնիսկ Ոսկեհատը, որ ամենագետ էր զանազան խոտերով բուժելու հիվանդներին, անզոր գտնվեց այդ հիվանդության առաջ։

— Արի քեզ տանեմ բժշկի մոտ, Մարտե աղջիկ,— ասաց Խոդեդանը, և սայլի վրա դրած, նրան Վերին Թալին տարավ։

Բուժակն այնտեղ չէր։ Ասատուրը դիմեց կոմսոմոլի հրահանգիչ Ռուբեն Այվազյանին, որ կնոջը բուժի։

— Ես բժիշկ չեմ, ճոբո,— ասաց հրահանգիչը,— ինչո՞ւ եք բոլորդ ինձ դիմում։

— Ապա ո՞ւմ դիմենք։

— Դիմեցեք բուժակին։

— Բուժակն էստեղ չի։

— Այդ դեպքում հիվանդին հարկավոր է տանել Աշտարակ,— խորհուրդ տվեց Այվազյանը։

Այդ տարիներին Աշտարակի շրջանում անուն էր վաստակել Մոսկվայի համալսարանն ավարտած Սաժումյան ազգանունով մի հայրենասեր բժիշկ, որին մշեցի և սասունցի գյուղացիները Շարժումյան էին ասում։

Խոդեդանը Բայազին տարավ ներս, իսկ ինքը դուրս եկավ և կանգնեց միջանցքում։

— Հը, մայրիկ, ի՞նչդ է ցավում,— հարցրեց բժիշկը՝ սպիտակ խալաթը հագին՝ մոտենալով հիվանդին։

— Ա՜խ, բժիշկ Շարժումյան, պորտից վերև իմ սիրտ կցավա։ Ես իմ սրտից եմ գանգատավոր։

Բժիշկը տեսնելով որ հիվանդը այդ խոսքերն ասելու ժամանակ ձեռքը դնում է փորին, հարցրեց.

— Իսկ ո՞րն է քո սիրտը, մայրիկ։

— Ա՜յ էստեղ, հուդա՛,— ասաց Բայազը ձեռքը դարձյալ փորին դնելով։

— Բա դա սի՞րտ է, մայրիկ։

— Քա սևկապուկ, բա դա սիրտ չէ՞, ի՞նչ է։

— Չէ, մայրիկ, դա ստամոքս է,— նկատեց բժիշկը ժպտալով։

— Քա բժիշկ Շարժումյան ջան, ինձ էսքան տարի ստամոքս չկար, հիմա ո՞րտեղից բուսավ էդքան մեծ ստանոք։

— Ո՞րտեղացի ես,— հարցրեց բժիշկը։

— Իսկական քրդագոմցի եմ, բայց հիմա Իրինդ կապրեմ։

— Հազո՞ւմ ես։

— Էմա՜լ կհազամ, էմա՜լ կհազամ, որ իմ սիրտ ու թոք կլցվի իմ բերան։

— Գիշերն ես հազո՞ւմ, թե ցերեկը։

— Գիշերն էլ կհազամ, ցերեկն էլ։

— Դե բաց արա տեսնենք։

— Ի՞նչը բանամ, բժիշկ։

— Շորերդ հանիր, փորդ տեսնեմ։

Բայազը հարցական նայեց բժիշկ Սաժումյանի երեսին։ Նրա դեմքը դողաց։

— Անամոթ լի՛րբ... էս քառասուն տարի կեղնի իմ էրիկ Ասվատուր զիմ ջանի սևն ու սպիտակը չտեսավ, մկա դո՞ւ կուզես տեսնե՞ս։ Քա բժիշկ, դու աբուռ ասված բանը չունե՞ս,— նորից գոչեց Բայազը խեթ-խեթ նայելով նրան, որ հազիվ էր զսպում ծիծաղը։

— Էլ ինչո՞ւ ես բժշկի մոտ եկել։

— Եկել եմ, որ գործիքով նայես և ոչ թե իմ շորերը հանես, բարկացավ գեղջկուհին։

Տեսնելով, որ այդ հիվանդից գլուխ հանել չի կարող, բժիշկը նրան մի անվնաս լուծողական խմեցրեց և Ասատուրին ներս կանչելով ասաց.

— Այս կինը ձեր ի՞նչն է։

— Իմ նշանածն է, բժիշկ։

— Այս կինը ստամոքս չունի, դեմքին լրջություն տալով ասաց նա։

— Քա բժիշկ, դու ինչո՞ւ իմ հոգու հետ կխաղաս։ Ես մյուսներից ի՞նչով եմ պակաս, որ ստամոքս չունեմ։ Նոր ասացիր, որ ես ստանոք ունեմ։ Հիմա ինչո՞ւ կուրանաս քու ասածդ։

Հիվանդի հետ մի քանի ուրիշ կատակներ անելուց հետո, բժիշկն ասաց.

— Ոչ թե քո փորն է ցավում, այլ քո կույր աղիքն է անհանգստացնում քեզ։ Քանի էդ կույր աղիքը փորիդ մեջ է, քո փորը միշտ պիտի ցավա։ Դու պետք է գնաս Երևան, կույր աղիքդ հանես գցես մի կողմ, որ փորդ լավանա։

— Կույր աղիքն ի՞նչ բան է,— հարցրեց Բայազը։

— Դու նույնիսկ չգիտես թե ինչ բան է կույր աղիքը։ Էլ ինչո՞ւ ես բժշկի մոտ եկել,— զարմանքով հարցեց բժիշկը։

— Ես իմ մարմին մեկ կզգամ և գաղափար չունեմ կույր աղիքի մասին,— պատասխանեց պառավը։

Կես ժամից հետո Բայազը, թեթևացած սրտով, սայլի վրա նստած Աշտարակից գնում էր դեպի Իրինդ։

— Դու ինչո՞ւ բժշկին ասացիր, որ ստամոքս չունես,— նկատեց Խոդեդանը ճանապարհին։

— Իսկ դու գիտեի՞ր, որ ստամոքս ունես,— նեղացավ Բայազը։

— Իհարկե գիտեի։

Իրինդի մոտ նրանք հանդիպեցին Թելո Մեսրոպին, որն եկել էր Հինգ Ռանչպարի ձորը ավել քաղելու։

— Ինչպե՞ս եղավ, բժիշկը քո փորացավից բան հասկացա՞վ,— հարցրեց Թելոն Բայազին։

— Քննեցին, ասացին, որ իմ փորի մեջ կույր աղիք կա։ Ես պետք է էդ աղիքը հանեմ գցեմ մի կողմ, որ իմ փորը լավանա։

— Ա՜յ տղա, Ասվատո՛ւր, մեր երկիրը կույր աղիք չկար, էդ ո՞րտեղից եկավ մտավ մեր փորի մեջ,— ասաց Թելոն, ավելի

փունջը ձեռքին զարմացած մոտենալով և հենվելով սայլի ճաղերին։

— Մեր երկիր հիվանդություն կա՞ր, որ կույր աղիք լիներ,— նկատեց Խոդեդանը ծխախոտը վառելով։

Թելոն բոլոր տղամարդկանց բաժանում էր երկու խմբի. ծանրապճեղների և մանրապճեղների։ Առաջինը նրանք էին, որ բեղ ունեին և իրենց վարած պաշտոնը կամ խոստումը կատարում էին տղամարդուն վայել արժանապատվությամբ։ Մանրապճեղների մեջ մտնում էին բոլոր անբեղ երիտասարդները, մանուկ պաշտոնյաները, անփորձ մասնագետները, գլուխ պահող կաթնաշուրթ վարիչները և ամեն տեսակ արկածախնդիր մարդիկ, որոնց գործի և խոսքի լրջությանը չէր կարելի վստահել։

Ըստ Թելոյի մանրապճեղները ժամանակակից աշխարհում գնալով շատանում են ի հաշիվ ծանրապճեղների։ Նա իր կյանքում հիվանդացած չկար և զարմանում էր այն գյուղացիների վրա, որոնք բժիշկների օգնությանն էին դիմում։

— Կհազա՞ս,— փոքր լռությունից հետո հարցրեց Մեսրոպը։

Բայազը գլխով արավ։

— Բժիշկը դեղ է տվել, որ խմի,— ասաց Խոդեդանը։

— Չխմե՛ս,— հայտարարեց Թելոն,— կազմդ կավերվի։ Մի՛ հավատա էդ մանրապճեղներին։ Մեկ-երկու շաղգամ գտիր, եռացրու և ջուրը խմիր։

— Ո՞ւր է թե Արինոքի շաղգամը լիներ,— ծոր տվեց Բայազը։

— Արինոքինը շաղգամ չէ՛ր, խնձոր էր, խնձո՞ր,— հարեց Ասատուրը։

— Բան ասացիք։ Եթե մեր երկրի շաղգամն էստեղ լիներ, կույր աղիքը ի՞նչ գործ ուներ մեր փորի մեջ,— ասաց Թելոն և հրաժեշտ տալով հեռացավ։

Խոդեդանը և Բայազը վերադարձան Իրինդ։

ՆԱՄԱԿ ՄՈՒՇԻՑ

1926 թիվն էր։

Մայիսի քսաներեքին Սովետական Հայաստանի Հաջի Խաուիլ գյուղում բացվելու էր քրդական առաջին համագումարը։ Խո-

դեղանը Թալինի հայ աշխատավորության կողմից պատգամավոր էր ընտրված՝ ողջունելու եղբայրական քուրդ ժողովրդին։

Երեկո էր։ Ասատուրը, թախտի վրա իր սովորական տեղը նըստած, նայում էր Լենինի նկարին, այն մարդու պատկերին, որ իր գորավոր բազկով խաղաղություն էր հաստատել աշխարհի մեկ վեցերորդ մասի վրա։ Հենց այն փաստը, որ ինքը գնալու էր քըրդական համագումարը ողջունելու, վկայում էր սովետների ուժը, այն նոր կարգի ուժը, որ արմատական հեղաշրջում էր մտցրել ժողովուրդների հարաբերությունների մեջ։ Այդ մտքերով էր տարված նա, երբ ներս մտավ իրենց գյուղի փոստատարը։

— Աչքդ լույս, քեռի Խոդեդա՛ն, նամակ ունես։

— Ո՞վ է մնացել, որ ինձ նամակ գրի, լաո,— հանգիստ պատասխանեց ծերունին, տերողորմյայի խոշոր հատիկները սահեցնելով ափի մեջ։

— Ինչո՞ւ, դու իսկի հարազատ չունե՞ս աշխարհի վրա։

— Ով կա՝ Իրինդ կապրի, լաո, ուրիշ տեղ մարդ չունեմ։

— Դու Շնկո անունով բարեկամ չունե՞ս,— նկատեց փոստատարը։

Այդ անունը լսելուն պես ծերունին իսկույն շտկվեց։ Նա մեքենաբար շփեց ճակատը, մի պահ լուռ մնաց, ապա գլուխը բարձրացնելով հարցրեց.

— Շնկոն ո՞ղջ է։

— Ողջ է, որ նամակ է գրում։

— Որ էդպես է, դու մեծ աչքալույս բերեցիր, լաո։ Շնկոն իմ խաչեղբայրն է,— ասաց Ասատուրը և համբիչը բուռը հավաքելով, վայր իջավ թախտից։

— Քո՞ւրդ է։

— Շեկո տան քրդերից է։ Կոտորածին նա մեզ ազատեց։

Փոստատարը, որ մի երիտասարդ կոմերիտական էր Արտավազդ անունով, ծոցագրպանից դուրս քաշեց մաշված ծրարով մի նամակ և մեկնեց ծերունուն։ Խոդեդանը վերցրեց նամակը, ծայրը համբուրեց և ձեռքը դնելով նամակաբերի ուսին՝ ասաց.

— Տեղիցդ չշարժվես։— Մարտե աղջի՛կ,— գոչեց նա դեպի դուրս նայելով։

— Ի՞նչ է,— ասաց պառավը, որ վառված լամպը ձեռքին ներս էր մտնում բակից։

— Լույսը կախիր պատից ու գնա շուտ մեր հունվարի ծնունդ դառներից մեկը բեր։

Բայազը լամպը լռելյայն կախեց առաջնորդի պատկերի մոտ և, դուրս ելնելով, քիչ հետո վերադարձավ մի կարմիր դառ դրրկած։

— Հիմա իրավունք ունես ոտքդ շեմքից դուրս դնելու։ Վերցրու, լաո, սա քու աչքալուսանքն է,— ասաց ծերունին։

Նամակաբերն ամեն կերպ աշխատեց խույս տալ պարգևից, պատճառաբանելով, որ ինքը կոմերիտական է, բայց ոչինչ չօգնեց։ Նա հարկադրված վերցրեց կարմիր դառը և շնորհակալություն հայտնելով Աստատուրին՝ հեռացավ։

— Ի՞նչ բան է,— հարցրեց Բայազը, որ բոլորովին անտեղյակ էր եղելությանը։

— Շնկոյից նամակ կա, կնիկ։

Պառավը ուրախությունից երեսը խաչակնքեց։

Երկու ծերերը ելան թախտի վրա և նստեցին գլուխ-գլխի տված։ Բայազը լամպն իր ձեռքն առավ, որ լույսը մոտ լինի։

Շնկոյի նամակը գրված էր քրդերեն, բայց հայերեն տառերով։ Խոդեդանը բաց արավ նամակի ծալը և լամպի դեմ բռնելով սկսեց դանդաղ կարդալ.

«Իմ եղբայր Խոդեդան.

Այս նամակը գրում է քու դաստաբրակ Շնկոն։ Տասը տարի բաժանված եմ քեզնից, Ստեփանից, պիրկա Ոսկեհատից ու հարսիկ Բայազից։ Բոլորիդ էլ շատ ու շատ կարոտել եմ։

— Մենք էլ քեզ ենք կարոտել, լա՛ո,— ասաց Բայազը լամպը մոտեցնելով։

Բարի լուր առա, որ դուք ապրում եք Սովետ Հայաստանի հողի վրա, Իրինդ գյուղում։ Նամակս գրում եմ Մշո քաղքից, մի ծանոթ հայու ձեռքով։

— Տեսա՞ր, Մուշ է եկել։ Կարող է Քրդագոմ էլ գնացած լինի,— ասաց Բայազը՝ լամպի պատրույգը մի քիչ բարձրացնելով և ականջը ավելի մոտեցնելով նամակին։

Թող հայտնի լինի ձեզ, ազնիվ դաստաբրակ, որ ձեր քաղաքը շատ մալուլ է։ Ենտեղ ապրող աշխատավոր թյուրքերը, որ դեմ են եղել հայկական կոտորածին, այժմ շատ խղճալի վիճակի մեջ են։ Թե Մշու քաղքից մարդ կա էդտեղ, ասեք, որ Իրլի Մուստաֆան մեռել է։ Վերջին անգամ Մուստա-

ֆան եկել կանգնել է իր խանի առաջ, հիշել է իր հայ ընկերներին, լաց է եղել և պատասխան չստանալով վերադարձել է տուն և նույն օրը մեռել է իր տան մեջ։

— Խե՜ղճ Մուստաֆա։ Էդ էն թյուրքն էր, որին մենք տեսանք Տաշտ կամուրջի մոտ,— ողբաց Ասատուրը։

Ես եղա Դաշտի գյուղերում։ Վայրի խոտերն ու թփերը բարձրացել ու ծածկել են ձեր տների ու մարագների խարաբաները։ Նրանց պատերի մեջ ամեն տարի անթիվ մանուշակ է բուսնում։ Էդ ձեր բարաքյաթն է, որ դարձել է վարդ ու մանուշակ։ Մի տեղացի քուրդ, որ ինձ հետ էր, մատով ցույց էր տալիս այս ու այն կողմ ու ասում. Էստեղ ժամանակին մի գյուղ կար. անունը Ալվառինջ էր։ Էնտեղ Քրդագոմն էր։ Էս սարի տակ Բերդակն էր։ Էն մյուս շենլիկը, կարծեմ, Հացիկն էրվ էն սարի ետևը հայ Մառնիկն էր...

— Վա՜խ, վա՜խ, վա՜խ, վա՜խ,— խոր հառաչանք արձակելով և աչքերի արտասուքը սրբելով, գոչեց Բայազը։

Այդ օրը ես երկար նստեցի Մեղրագետի ափին։ Իմ երկու աչքից անձրևի պես արցունք թափվեց ու լցվեց գետի մեջ. մեկը քու կողմից, մյուսը իմ կողմից։ Քիչ մարդ կա Մուշում։ Մոլլաները տարածել են, որ էս հողը անիծված է, դրա համար էլ ոչ մի թյուրք չի համաձայնում ապրել նրա վրա։ Վերջերս ամեն տարի ժաժք է լինում։

— Շուն ոռնա հարամ հողի վրա ապրողի դանդին։ Բա առա՞ջ ինչու ժաժք չէր լինում,— պոռթկաց Բայազը գլուխը զայրույթից տարուբերելով։

Տեսա՞ր ինչպես մեզ խաբեց խորամանկ օսմանցին։ Հայերին կոտորելուց հետո օսմանցի փաշաները սկսեցին քրդերին կոտորել։ Քրդական բոլոր ցեղապետները վայ են տալիս իրենց գլխին։ Նոր են զգում, որ իրենք խաբվել են։

— Տե՛ղն է,— գոչեց Խոդեդանը, կարդալը նորից ընդհատելով։

Քու աղա Հաջին սպանված է։ Նրան սպանել են Զատոյի ազգականները Քրդստանի լեռներում։ Իր ախպեր Ավեսի Սալիմն էլ սպանված է։ Նրան սպանել են քեմալական թյուրքերը։

— Ճրագը մո՛տ բռնիր,— ասաց ծերունին և շարունակեց.

Մոտկանցի Շաբաթ աղեն, որ օգնում էր օսմանցիներին և վառել էր քու տունը, նույնպես սպանված է։ Նրան և Բիթլիսի նահանգապետին քե-

մալական թյուրքերը բռնել են Մոտկանի լեռներում, տարել են Բիթլիս և կախաղան բարձրացրել։

— Տե՛ղն է,— գոչեց Ասատուրը։

— Տե՛ղն է,— կրկնեց Բայազը, լամպի պատրույգը մի փոքր իջեցնելով։

Մուշի մեջ՝ Տաշո կամուրջի մոտ, կախաղան կանգնեցրին ու կախեցին բոլոր քրդերին, այդ թվում նաև Քոլոսիկի քուրդ Հաջի Ֆերրոյին։ Իսկ գավառապետ Շեֆքեթ փաշան Պոլիս գնալիս սատկել է ճանապարհին։

— Տե՛ղն է,— նորից գոչեց Խոդեդանը։

— Տե՛ղն է,— ասաց Բայազը՝ լամպի պատրույգն այս անգամ բարձրացնելով։

Դիարբեքիրում կախաղան կանգնեցրին ու կախեցին Խամբեկի տղա Ֆարիդին, Մուսաբեկի տղաներին, Խճղա Ուսե տղին և Շեյխ Սայիդին։

— Տե՛ղն 'է, բոլորին էլ տե՛ղն է,— ասաց Ասատուրը։

— Իհարկե տեղն է,— վրա բերեց Բայազը։— Ընկեր Լենինի գաղափարով որ գնային, էս լուսը վկա, Խոդեդան, հիմա ես էլ, դու էլ նստած էինք կա՛մ Արիմոր, կա՛մ Քրդագոմ։ Օրենք է. երկու ճնշված պետք է մեջք-մեջքի տան՝ խփեն մի զորության։ Իսկ իրենք էդպես չարին։ Իրենք խաբվեցին օսմանցու քաղցր լեզվից ու ելան խփեցին ճնշված հային։ Բա հիմա տեղը չէ՞, որ իրենք կոտորվեն։ Իհարկե տեղն է։ Ես Շնկոյի պես մարդկանց մասին չեմ խոսում։ Ես դրանց բեկերի ու ցեղապետների մասին եմ ասում։ Տեսնես էն շուն Մուսաբեկն ի՞նչ եղավ,— ասաց Բայազը՝ լաչակը գլխի վրա ուղղելով։

Հաջի Մուսաբեկը իր ջորին թողած հազիվ ոտավոր փախել է Հալեպ։

— Ոտնակոտո՛ր էղներ, ճամփի՛ն մնար։ Տեսա՞ր մեծ շունը շնչակտուր ո՛ւր է փախել,— բացագանչեց պառավը։— Թե տղամարդ էր, ինչո՞ւ չկանգնավ առեջ։ Անզեն հայու վրա իր ուժ կպատե՞ր։

Բայց նրան բռնել են Հալեպի ճամփին, բերել են Տիգրանակերտ և Մուստաֆա Քեմալի հրամանով կախաղան են հանել իր լամուկների, Շեյխ Սայիդի ու մյուս քրդերի կողքին։ Մուսաբեկի վերջին խոսքերն են եղել. «Չեր

զերեզմանին ղուրբան, Գեորգ Ջաուշ և Մանուկ էֆենդի։ Դուք ինձ ժամանակին զգուշացրիք, որ օսմանցիք ձեզանից հետո մեզ են կոտորելու։ Ես ձեզ չլսեցի ու էսօր, կախաղան բարձրացած, վա՜յ եմ տալիս իմ գլխին։

— Վա՜յ տուր գլխիդ, սադայելի ծնունդ, օխը՜շ, օխը՜շ,— բավականությամբ պոռթկաց գեղջկուհին՝ ուրախանալով բալաքցի քրդի մահվան համար։

Իսկ իր ախպեր Նհո բեկին տեսել են Բաղդադի կողմերը՝ վշտից ու բարկությունից իր գլուխը ծեծելիս։

— Հոմո՛ւկ, թող գլուխդ ծեծեիր էն ժամանակ, երբ անպաշտպան հայու վրա թուր քաշեցիք, խեղճ Ասվատուրի ու Բայազի տունը քանդեցիք։ Հիմա ինչ օգուտ ունի քու գլուխ ծեծելը,— նորից պոռթկաց Բայազը գլուխը ցավագին օրորելով։

Աշխարհքը սուլթան Համիդին էլ չմնաց։ Անեծք նրա հիշատակին ու նրա պիղծ գերեզմանին։ Էդ էն արնաբերան թագավորն էր, որ սաղ աշխարհք ինչպես մի հավկիթ իր բռի մեջ՝ կոտրեմ՝ կոտրեմ, թորգեմ՝ թորգեմ։ Ժողովուրդը նրա ձեռքի տակ դողում էր, իսկ նա կարծում էր թե իրեն սիրում են։ Նրա ետեից շանսատակ եղան սուլթան Բեշատն ու հայերի մեծ դահիճ Շանլաթ փաշան և Դևեր փաշան։ Առաջինին երզնկացի մի քաջ հայ տղա է խփել Բեռլին քաղաքում։ Երկրորդ ավազակին ձեր կարմիր զորքերն են սպանել Կասպից ծովի կողմերը։ Մի երկուսին էլ Հռոմի և Թիֆլիսի մեջ զարկեցին։ Նրանք բոլորն էլ թյուրքերի պատերազմական ատյանի կողմից, 1919 թվի հուլիսի վեցի վճռով, դատապարտված էին մահվան կախաղանի՝ էրբև պատերազմի և հայ կոտորածների հանցագործներ։

— Տե՛ղն է,— գոչեց Ասատուրը։

— Տե՛ղն է,— եզրափակեց Բայազը։

Դաստաբրակ Խոդեդան և մեր հարսիկ Բայազ, թե իմ Զոզանի մասին կհարցնեք, իմ Զոզան մեռած է։ Օսմանցին իմ տունը քանդել է ու մեզ քշել է Աստվածածնու լեռներից։

— Ափսո՜ս, լաո,— աչքերը սրբելով հառաչեց պառավը։

Իմ վերջին երկու տղաները դարձել են չանբեզար ու գնացել են քուրդ աշխատավորների մեջ։

— Լա՛վ են արել։ Ով Լենինի ճամփին կանգնի՝ էն կհաղթի։ Վերջը ամբողջ աշխարհը պիտի ֆռռա ու կանգնի Լենինի արդար ճամփի վրա։ Էդ կապիտալիստների, բեկերի ու անխիղճ աղանեռի քոքը կտրվի։ Դրանք հուշա՛պ են, հուշա՛պ։ Դրանք են, որ աշխարհը կռիվ են գցում, մեկին լարում են մյուսի դեմ,— բարկացած ասաց Բայազը առաջնորդի պատկերին նայելով։

Երանի՜, երանի՜ հավասարություն, ազատություն և արդարություն լիներ աշխարհի երեսին։

Հայը, քուրդը, ռուսը, թյուրքն ու արաբը իրար կողք-կողքի ապրեին։ Ամեն մեկն իր տան մեջ, ամեն մեկն իր արտ ու ափի, իր հող ու ջրի վրա։ Աշխարհի մեջ աղա չլիներ։ Բոլորը հավասար դատեին ու հավասար ապրեին՝ իրենց ճակտի արդար քրտինքով։

— Մեռնեմ արևիդ, լաո, իսկական մեր՝ երկրի մարդ ես,— հաստատեց պառավը։

Մնացել եմ ես, ու մի տոպրակ ձեռքիս, շները կհաչեն վրաս։ Տուն չունեմ, ուզում եմ գնալ Հալեպի կողմը։ Էնքան եմ ծերացել, որ տեսնեք՝ չեք ճանաչի»։

— Ինչո՞ւ գնաս, լաո, արի մեզ մոտ ապրի։ Էս իսկական քո ուզած աշխարհն է,— բացագանչեց Բայազը, և դառնալով Աստուրին՝ ասաց.

— Վաղը նամակ գրիր, թող գա Իրինդ, ինչո՞ւ էրթա Հալեպ։ Փյուռք ատածու, հիմա տեղ էլ ունենք, տուն էլ ունենք։ Էն էլ քու մեծ սրպերն է։ Գրի, թող գա մեր տան մեջ ապրի։

— Կթողնե՞ն,— ասաց ծերունին։

— Ինչո՞ւ չեն թողնի։ Եկ ես ու դու առավոտ նամակ գրենք Երևան։ Շնկոն մեղք է, Ասվատուր, աշխատավոր քուրդ է։ Քեզ հետ մեկ մառանի մարդ է եղել։

Այդ ժամանակ ներս մտավ Հեղինեն։ Քիչ անց ներս մտան պառավ Ոսկեհատն ու Ստեփանը։ Նրանք լուր էին առել ստացված նամակի մասին։

Բայազը լամպը կախեց պատից և, պատրույգը բարձրացնելով, սկսեց երկա՜ր նայել Լենինի պատկերին։ Իսկ Խոդեդանը, Շրն-

կոյի նամակը ձեռքում պահած, մտասևեռ նայում էր իր աղջկան, Ստեփանին և պառավ Ոսկեհատին։

Նա արդեն գիտեր, թե ի՛նչ էր ասելու քրդական համագումարին։

ԽՈԴԵԴԱՆԸ ՄՏՆՈՒՄ Է ԿՈԼԽՈԶ

Քրդական համագումարից մի քանի տարի հետո Սովետական Միության մեջ սկսեցին հանրային տնտեսություններ (կոլխոզներ) կազմակերպել։ Մի օր Եզնիկը վերադարձավ շրջկենտրոնից և բացատրեց, թե ի՛նչ բան է կոլխոզը։ Նա ասաց, որ հողը և անասունները այսուհետև պատկանելու են ոչ թե անհատ տնտեսություններին, այլ ամբողջ գյուղին։

Շուտով Իրինդոմ գյուղացիների ընդհանուր ժողով գումարվեց։ Շրջկենտրոնից եկել էր բատրակկոմի նախագահ Աբո Համազասպը, որին հանձնարարված էր կոլխոզներ կազմակերպել Աշնակ և Իրինդ գյուղերում։

Համազասպի համբավը հասել էր Հայաստանի մյուս շրջանները։ Նրա ակտիվ գործունեության մասին խոսում էին բատրակների համահայաստանյան համագումարներում, գործկոմի նիստերում և միտինգներում։ Բատրակ և չքավոր գյուղացիները նրան սիրում էին, իսկ կուլակները նրա անունը լսելիս սարսափահար խաչակնքում էին։

Ասատուրը ժողովին ներկայացավ Բայազի հետ։ Գյուղի գրասենյակում հավաքվել էին հողի բոլոր աշխատավորները՝ ծեր և ջահել։ Բեմի վրա, սեղանի առաջ, նստած էին Աբո Համազասպը, Վարկային ընկերության նախագահ Պետրոս Թաղվեցին և գյուղսովետի նախագահ Եզնիկը։

Նախ խոսեց Համազասպը։ Նա պարզ և հասկանալի օրինակներով գյուղացիներին պարզաբանեց կուսակցության ծրագիրը գյուղի վերափոխման ասպարեզում։ Խոսելիս նա ստեպ-ստեպ խոդեդանին էր նայում, կարծես կամենալով ստուգել իր ասածների ճշտությունը։ Յուրաքանչյուր անգամ Ասատուրը դրականապես շարժում էր գլուխը։

— Ընկեր Համազասպ,— խոսեց Սեմալցի Թաթոն,— մենք նոր ենք եկել էս երկիր։ Մեր կողքին եռլական (տեղական) գյուղեր

կան։ Մեկի մեջ կոլխոզ կազմեք, տեսնենք էդ կոլխոզը ի՞նչ բան է։ Թե լավ բան եղավ, մենք լե կմտնենք։

— Ճիշտ է ասում քեռի Թաթոն, մեր ուշքը դեռ մեր գլուխը չէ։ Երեկ մեր երկիրը փոխեցինք, հիմա էլ ուզում եք, որ մեր ապրելակե՞րպը փոխենք։ Շատ դժվար բան է,— բացագանչեց Գուլթան Հարությը տեղից։

Բատրակկոմի նախագահը հարկադրված եղավ նորից բացատրել ժողովականներին կոլխոզի նշանակությունը։ Երբ հռետորն ավարտեց իր խոսքը, Խոդեդանը, առանց որևէ հրավերի, ելավ բեմ։

Դահլիճը մեկ ակնթարթում խաղաղվեց։

— Մշեցիներ և սասունցիներ, մենք պետք է կոլխոզ մտնողների առաջին շարքերում լինենք, որովհետև մեր տան ծուխը աշխատանքի և եղբայրության ծուխ է եղել,— հանդիսավոր տոնով և բարձրաձայն ազդարարեց նա։— Կոլեկտիվ կյանքը մեզ համար խորթ բան չէ։ Ճախարական գյուղը Դավթի ազնիվ ձեռքով էր շինված։ Դավթի ջրաղացը մեր բոլորիս համար էր շինված։ Հեռու չգնանք, Իրինդ գյուղը մենք ընդհանուր ուժերով շինեցինք։ Լավ իմացեք, հայրենակիցներ,— շարունակեց Ասատուրը,— քանի մենք անհատ մնանք, էնքան անպակաս կլինեն մուսաբեկները։ Եկեք հավասար աշխատենք և հավասար ապրենք։ Մենակ մարդը շուտ կընկնի։ Մեջ-մեջքի տանք, որ մնանք կանգուն։ Մրջյունը որ մրջյուն է՝ մենակ չի ապրում։ Մեղուն, որ մեղու է՝ իր պարսին է կպչում։ Ով ծուլ է՝ մեր մեջ տեղ չունի։ Ով գողող է՝ թող հեռանա մեզնից։ Ով ձրիակեր է՝ թող չերևա մեր աչքին։

Համազասպը, Սզնիկը, Պետրոս Թաղվեցին և բոլոր ժողովականները կլանված ուշադրությամբ լսում էին հռետորին։

— Ստեփա՛ն, դու էս ժողովի մե՞ջ ես,— հանկարծ գոչեց Խոդեդանը՝ աչքը չորս կողմը ածելով և փութկոտությամբ որոնելով նրան։

— Էստեղ եմ, հողբե՛ր,— ձայն տվեց Ստեփանը դահլիճի վերջին շարքից։

Տիրեց խոր լռություն։

— Ստեփա՛ն, Օնեն մեռած է, բայց դու ասա, թե ի՞նչ պատահեց Սև սարում, երբ ես Արինոքից Իրիցանք եկա և դու մեզ համար առաջին դիշերը ճարկաբաղ եփեցիր։

Ժողովը շնչատպառ սպասում էր, թե ի՞նչ պատասխան էր հետևելու բեմից այդքան հանկարծակի տրված խորհրդավոր հարցին։

— Հողբեր,— ասաց Ստեփանը տոքի կանգնելով,— ես էդ գիշերը քու պատվին մորթեցի Տոնեի մաքին և նրա թոքից խորոված պատրաստեցի։ Ուտելու ժամանակ ողորմածիկ Օնեն զալբություն արավ ու մի քանի պատառ ավել տարավ իր բերան։ Դու էնպես սեղմեցիր նրա կոկորդը, որ աչքերը պլշեցին և վերջին ավելորդ բրդուճը դուրս թռավ բերնից։

Այդ խոսքի վրա պոռթկաց ուժգին ծիծաղ և ծափահարություն։

— Էլ բան չունեմ ասելու,— գոչեց Խոդեդանը և մոտենալով Աբո Համազասպին՝ ասաց.— էնտեղ, ուր մարդիկ հավասար պիտի աշխատեն և ախպոր պես ապրեն, էնտեղ իմ տեղն է։ Ցուցակի գլխին իմ ու իմ պառվի անունը գրեցեք։

Հովիվ Ասատուրի օրինակը ոգևորեց մյուսներին։

— Որ հմա՛լ է, ես գրվա,— ասաց Գուլթան Հարությը և մոտեցավ բեմին։

— Որ Ասվատուրը գրվա՛վ, ես լե կգրվեմ,— բացագանչեց Սեմալցի Թաթոն։

— Որ նա գրվել է, ուրեմն էլ չենք խաբվի։

— Ասատվա՞ծ, դու մեր վերջը բարին անես,— ասում էին գյուղացիները և, մոտենալով բատրակկոմի նախագահին, իրենց անունը գրանցում էին ցուցակի մեջ։

Կոլխոզ կազմելուց հետո նախագահ Եզնիկը բերել տվեց մի փաղչ շարքաթ և եփած միս։ Սեմալցի Թաթոն վերցրեց բաժակը և ասաց.

— Արեք էս քաղցրությունը խմենք Խորհրդային կառավարության կենացը։ Աբո, դու Խորհրդային կառավարության կազմի մեջ կա՞ս։

— Իհարկե կամ,— պարծեցավ բատրակկոմի նախագահը։

— Աբո, մենք արդեն դարձել ենք մեկ-մեկ օջախ։ Էդ ըմմեն ձեր կազմի շնորհիվ է։ Մինչև մահ-գերեզման մենք հարազատ կծառայենք պետությանը։

— Բայց կառավարության կենացը գինով են խմում,— նկատեց բատրակկոմի նախագահը։

— Գինին ի՞նչ է, գինին դառն է։ Քաղցրություն որ կա, սրա մեջ է,— ասաց Թաթոն և բաժակը քամեց։— Տղե՛րք, լավ ծծկեք տակը։

— Էս էլ խմենք կոլխոզի կենացը,— առաջարկեց Աբո Համազասպը։

— Էդ մեկը չեղավ, ընկեր Աբո։ Սասունցին չտեսած բանի կենացը չի խմի։ Եկեք հիդա էլ խմենք մեր բարի կամեցողի կենացը,— ասաց Թաթոն։

— Ուրեմն դուք կոլխոզի կենացը հետաձգո՞ւմ եք,— նեղացավ Աբոն։

— Մենք կոլխոզի կենացը հետո կխմենք, երբ նրա արդյունքը կտեսնենք, և երբ բոլորը կմտնեն կոլխոզի մեջ,— պարզաբանեց Գուրթան Հարությը։

— Կգա ժամանակ, որ ամեն մարդու կոլխոզի մեջ չեն ընդունի,— զգուշացրեց Համազասպը։

— Հորի՞, կոլխոզ հըմալ պիտի քաղցրանա՞,— բացագանչեց Թաթոն։

Այդ զրույցի պահին հանկարծ մի երիտասարդ ձիավոր քափ ու քրտինք մտած, հողմի պես եկավ և, մի քանի պտույտ գործելով գրասենյակի առաջ, կանգ առավ շեմքի մոտ։

— Աբոն ո՞ւր է, Աբոն ո՞ւր է, Աշնակի կոլխոզը փլա՞վ։

— Ինչպե՞ս,— մռայլվեց բատրակկոմի նախագահը, Եզնիկի հետ շեմքը դուրս գալով։

— Քանդվե՞ց,— երիվարի բաշը մտած գոչեց ձիավորը։— Իսկ Վերին Սասնաշենում միլպետ Արամայիսին գցել են թոնիր։

— Ովքե՞ր։

— Պառավ կանայք։

— Այ թե ի՞նչ։ Ուրեմն միլպետը հիմա թոնրի մե՞ջ է։

— Խուփը դրել են վրան, իսկ իրենք խմբով նստել են գլխին։ Ամեն մեկի ձեռքին մի մեծ փետ կա։

— Եզնիկ, շո՛տ արա, ձիս բեր,— կարգադրեց բատրակկոմի նախագահը։

Գյուղը մոտ էր։ Աբո Համազասպը և Խորեմանը փութացին Վերին Սասնաշեն։

Խորոված և խանձված մսի հոտը բռնել էր սար ու ձոր։ Նրանք տեսնում էին, թե ի՛նչպես կուլակներից ոմանք իրենց եզներն ու

կովերը Հինգ Ռանչպարի ձորով տագնապահար փախցնում էին դեպի Արագածի քրդական գյուղերը՝ ծանոթ քիրվոնների մոտ։ Կիսամութի մեջ լսվում էր այսպիսի խոսակցություն.

— Դու տեսա՞ր վերմակները։

— Դատարկելիս տեսա։ Երևանից էին բերել։ Ամեն մեկը յոթանասուներկու մետրանոց էր։

— Քանի՞ հատ էին։

— Քառասուն։ Ամեն գյուղին տալիս են մեկ հատ և բոլորին պառկեցնում են տակը։

— Կի՞ն, տղամա՞րդ։

— Ամբողջ գյուղը մի վերմակի տակ է քնելու։ Աշնակի և Իրինդի վերմակները մի քիչ առաջ ուղարկեցին։

— Ի՞նչ գույնի էին։

— Աշնակինը կանաչ էր, իսկ Իրինդինը՝ կարմիր։ Պահեստապետն ասաց, թե բոլոր նախագահներին գրություն է ուղարկված, որ գան իրենց վերմակները տանեն։

— Ամբողջը էդ անիծված բատրակկոմի նախագահ Աբոն է անում։ Դու տեսե՞լ ես նրան։ Պատմում են, թե շատ ջահել տղա է։

— Մի քանի անգամ եմ տեսել։ Մորուքը մինչև գոտին է հասնում։

— Էդքան մեծ մա՞րդ է։

— Որ տեսնես՝ կսարսափես։ Վերմակները նա է գիշերով կայարանից Թալին տեղափոխել։

— Ուրիշ էլ ի՞նչ ես լսել։

— Սոգյութլի գյուղում խոտ են դրել քաղաքից եկած ավտոյի առաջ, իսկ պիոներ բյուրոյի նախագահին փաթաթել են խոտի մեջ և կոխել դռան ետև։

Վերին Սասնաշենում իսկապես միլպետ Արամայիսին մի խոմբ կանայք գցել էին թոնիրը։ Խոդեդանին տեսնելով, նրանք վեր թռան՝ փայտերը բռնած։ Ասատուրը բարկությամբ նրանց մի կողմ հրեց, մոտեցավ, խուփը վերցրեց թոնրի վրայից և միլպետի ձեռքից բռնելով դուրս քաշեց նրան։

— Այս ի՞նչ օրի ես, ընկեր միլպետ,— իր ծիծաղը հազիվ զսպելով նկատեց Աբոն։

— Գցեցին, էլի՞։ Դասակարգային պայքար է։ Բա կարծում ես կոմունիզմ կառուցելը հե՞շտ բան է։ Մի տես թե քանի հոգի են։

էսքան պառավ որ թափվեն վրադ, ի՞նչ կարող ես անել։ Տղամարդ չեն, որ տասնոցը քաշես տաս ճակատին,— բարկությամբ նկատեց միլպետը, մոխիրը խանձված շորերի վրայից թափ տալով։

— Էդ կոպալները ինչո՞ւ եք բռնել,— հարցրեց Խոդեդանը։

— Հե՞չ, բուրդ էինք չբխում...

— Բոլորդ միանգամի՞ց։

— Եթե դու չգայիր, մենք դրա բուրդը ուղածիդ պես կչբխեինք,— ասաց պառավներից մեկը աչքերը միլպետի վրա տնկելով։

— Եվ մինչև իրիկուն խորվուն պատրաստ կլիներ,— քմծիծաղով ավելացրեց մեկ ուրիշ կին։

— Ինչպե՞ս պատահեց, որ դու սրանց ձեռքն ընկար,— հարցրեց բատրակկոմի նախագահը, դիմելով միլպետին։

— Տղամարդիկ ասացին, թե իրենք դեմ չեն կոլխոզին, իրենց կանայքն են դեմ։ Եկա, որ սրանց բացատրեմ կոլխոզի նշանակությունը։

— Եկել ես որ մեզ տանես մի ընդհանուր վերմակի տակ կոխե՞ս։ Որ քեզ պես հազար միլպետ էլ սատկի, մենք մի վերմակի տակ մտնողը չենք,— ասացին ու, ետևից հրելով, ինձ գլխի վրա շուռ տվեցին թոնրի մեջ։

Միլպետ Արամայիսի բախտից թոնիրը բավականաչափ ընդարձակ էր և հանգած։ Սկզբում նա տնկվել էր գլխի վրա՝ ոտքերը դուրս։ Բայց հետո, մի կերպ ուղղվելով, կուչ էր եկել այնտեղ՝ ոտքի հաստ սապոգներով անվերջ տրորելով տաք մոխիրը։ Թոնրի տաք կողերին քսվելով վառվել էին նրա ականջների և մատների ծայրերը, ճակատը և քիթը։ Գլխի մազերը և հագուստը խանձվել էին։

Միլպետի այրվածքներին մածուն քսեցին և ձի նստեցնելով ուղարկեցին Թալին։ Բայց նա փոխանակ Թալին գնալու, ձիու գլուխը շուռ տվեց դեպի Աշնակի կողմը։ Ճանապարհին երևաց մի մենավոր վանք, որի գմբեթին մի մարդ էր կանգնած։ Շրջապատում ոչ ոք չկար։ Երբ շատ մոտեցավ, տեսավ որ վանքի տանիքին կանգնողը Բագրատ Երանելին էր՝ Թալինի սպասկոպոսի նախագահը։

Եթե գյուղը մոտիկ չլիներ, կարելի էր հեշտությամբ կարծել թե դա ինչ-որ ուրվական է, կամ տեսիլք։ Բայց դա իսկապես Բագ-

բատ Երանելին էր, որ, պորտֆելը թևի տակ, ջղայնացած գնում ու գալիս էր վանքի տանիքին՝ աշխատելով մի հնար գտնել՝ ցած իջնելու համար։

— Բա՛րև, Երանելի։

— Բա՛րև, Արամայիս,— վարից և վերից իրար ողջունեցին երկու ծանոթները։

— Ինչո՞ւ է գլուխդ կապած։

— Ինձ թոնիր գցեցին, Բագրատ։

— Իսկ ինձ ներքևից շպրտեցին երկինք։

— Մի պատմիր տեսնենք, ինչպե՞ս եղավ։

— Հարկավոր էր բացօթյա ժողով գումարել, որ ամբողջ գյուղը ներկա լինի։ Ինձ ասացին, թե ամենահարմար տեղը եկեղեցու տանիքն է, որտեղից կարելի է խոսել ժողովրդին։ Բերեցին մի երկար սանդուղ։ Ես բարձրացա վանքի գմբեթը։ Կաթնաղբյուրից ներկա էր նաև Վարժապետ Ճրագը։ Դե դու գիտես, թե ես ինչքան լավ եմ խոսում, երբ կանգնած եմ բարձր ամբիոնի առաջ։

— Եվ ճառեցի՞ր։

— Հրաշալի ճառեցի։ Ժողովուրդը քարացած լսում էր։ Դեռ չէի վերջացրել, երբ մի գյուղացի ներքևից գոռաց.

— Մի ասա տեսնենք ձեր միտքն ի՞նչ է, ընկեր Երանելի։ Էդ տաք-տաք ճառերը ինչո՞ւ համար են։

— Մեր միտքն էն է, որ դուք մտնեք կոլխոզ։

Հենց այդ ժամանակ մի ինչ-որ կին, որ կանգնած էր Վարժապետ Ճրագի մոտ, ներքևից բղավեց.

— Ամա՞ն, ժողովո՛ւրդ, վերմակը բերում են, փախե՞ք։

— Դու ճառիր, ընկեր Բագրատ, մենք գնացինք։

Էն տեսա, որ սանդուղը քաշեցին ցած և ամբողջ ժողովուրդը շուռ գալով հեռացավ։

— Դու էլի մաքուր օդի մեջ ես եղել, իսկ ինձ կոխեցին թոնիրը,— հանգստացրեց նրան միլպետը։

— Ուղիղ երկու ժամ է տանիքի վրա եմ, իջեցնող չկա։ Լուր եմ ուղարկել Կաթնաղբյուր, որ մի սանդուղ հասցնեն։

— Դու բոլորովին իզուր ես համաձայնել եկեղեցու գմբեթը բարձրանալ։ Բայց մի՛ հուսահատվիր, ընկեր Երանելի։ Մեր գործն արդար է։ Մարալիկում կուլակներն էնպես են շփոթվել, որ շտապելիս նրանցից մեկը գոմշի ձագի փոխարեն իր էշն է մորթել մու-

թի մեջ, իսկ Սոգյութլի գյուղում պիոներ բյուրոյի նախագահ Աշոտ Խաչիկյանին փաթաթել են խսիրի մեջ և կոխել դուան ետև։ Նոր կյանքը հեշտությամբ չի ստեղծվում, ընկեր Բագրատ։ Մենք կհաղթենք և մեր աշխատավորական գյուղը կբռնի համայնական կյանքի ուղին։

Մինչդեռ նրանք խոսում էին, տեսան Կաթնաղբյուրի կողմից գալիս են ուսուցիչ Արամ Խնկոյանը, Գյուլեն, Բոլոճ Մկրտն և մի քանի ուրիշ սասունցիներ, իրենց հետ բերելով մի երկայն սանդուղ։

Սպառկոոպի նախագահը ցած իջավ վանքի տանիքից և միլպետի հետ ընթացավ դեպի Թալին։

ՈՎ ԷՐ ԱԲՈ ՀԱՄԱԶԱՍՊԸ

Այդ նշանավոր գիշերը Համազասպը, Վերին Սասնաշենից վերադառնալով, հյուր եղավ Խոդեդանին։

Երբ նա մտավ նրանց հասարակ խրճիթը, տեսավ Բայազի թոնիրը, խնոցին և պատերի տակ շարված ամանները, նրա հոգին խայտաց մի անդիմադրելի հրճվանքից։ Համազասպը սկսեց Ասատուրի և Բայազի հետ Մշո և Սասունի բարբառով խոսել, այնքան անուշ և հարազատ լեզվով, որ սաստիկ գրգռեց նրանց հետաքրքրությունը։

— Տղա, դու հուստե՞ն ես,— հարցրեց Խոդեդանը։

— Բուլանուխցի եմ,— պատասխանեց բատրակկոմի նախագահը։

— Բուլանուխի ո՞ր գյուղիցն ես։

— Շերվանշեխցի։

— Շերվանշեխցի՞,— գոչեց Ասատուրը այնպիսի եղանակով, կարծես մի շատ թանկագին հարազատ էր գտնում կամ վերհիշում էր վաղուց մոռացված մի վայրի անուն։ Նա մի պահ զարմացած նայեց Համազասպին, ապա ասաց.

— Տղա լաո, ես եղել եմ Շերվանշեխ։ Նայում է Զեռնակա սարին։ Ձեր գյուղի առաջ Բինգյոլը կգա կթափվի Մուրադ գետի մեջ։

— Ճշմարիտ է,— հաստատեց Համազասպը։

— Կեսօր էր անցա ձեր գյուղի մոտով։ Մի զարմանալի տե-

սարան իմ ուշքը գրավեց։ Մի պատշգամբ կար Բինգյոլի վրա կախված։ Պատշգամբում կանգնած քարեմանն էր մանում մի պառավ. էնքա՜ն ճնճղուկ կար էդ պառավի վրա թառած, էնքա՜ն ճնճղուկ։ Նստած էին նրա գլխին, թևերին, գոգում։

— Էդ իմ ջոջոն է եղել,— արտասվախառն ծիծաղով պատասխանեց Համազասպը, հիշելով իր բարի տատիկին։ Անունը Մարիամ էր։

Այս իմանալով, Խոդեդանը և Բայազը իրենց քուրսիները ավելի մոտեցրին, որ հանգամանորեն լսեին այդ զարմանալի կնոջ և նրա թոռնիկի զարմանալի պատմությունը։

— Ո՞ղջ է,— հարցրեց Ասատուրը։

— Տատոս մեռած է։ Ապրեց հարյուր քսաներկու տարի և հոգին տվեց առանց պառկելու։ Իմ տատը,— շարունակեց Համազասպը,— հագնում էր կարմիր զոլավոր անթարի, որի փեշերը ծալում ու կապում էր ետև։ Անթարու վրեն կապած էր խաս գոտին։ Գոտու աջ կողմը խրում էր քարեմանը։ Գլխին կապում էր խաս փուշի։ Հարյուր քսաներկու տարեկան էր, բայց կուզ չկար մեջքին։ Ատամի մեջ ատամ էր բուսել։ Շատ բարի կին էր։ Հաց էր տալիս անցորդներին, կուտ էր տալիս ճնճղուկներին։ Մեր գյուղի ճընճղուկները էնքան էին սովորել տատիս, որ խմբերով գալիս թառում էին նրա ուսերին, գլխին, թևերի վրա։ Լցվում էին նրա գոգը և կուտ էին ուտում։ Գյուղում տարածվել էր, որ Մայրոն դրախտական է։ Մինչև իր մեռնելու օրը շերեփը ձեռքից չգցեց։ Էնքան ուժով կնիկ էր, որ կարասով հարիսա էր տանում Խնոսի սարերը իր ֆիդայի որդու և նրա ընկերների համար։ Վերջին օրը կերակուր բաժանեց բոլորիս։ Երբ կերել-պրծել էինք, Մայրոն ասաց. «տեղս գցեք, ես մեռնելու եմ»։ Մենք կարծեցինք թե կատակ է անում։ Քեռիս ծիծաղելով ասաց. «Մայրո, դու մեռնող պտուղ չես»։ «Չէ՞, հավատա, ես էսօր կմեռնեմ։ Լուսուն է՛լ ինձ չեք տեսնի»,— ասաց նա։ Տեղը գցեցինք։ Պառկեց ու բոլորիս իր շուրջը կանչեց։ Ես մեր գերդաստանի փոքրն էի, և նա ամենից շատ ինձ էր սիրում։ Թե՝ «Կանչեցեք իմ Համազասպին» ասել էր նա։ Ես էդ ժամանակ կանգնած էի մեր պատի տակ։ Գյուղի փոքրիկ աղջիկները շուրջս հավաքված թմբուկի պես զարկում էին փորիս, որ միշտ բաց էր ու հավկթի պես ուռած։ Ես գնացի։ «Համազասպ,— ասաց ջոջոս,— գնա տերտերին կանչիր, որ ինձ հաղորդի»։

Ես շարաճճի տղա էի։

— Տատո,— ասացի,— ինձ ի՞նչ կտաս, որ էրթամ տերտերոջ ետևից։

Նա խոստացավ ինձ երկու հավկիթ։ Ես ուրախացած դուրս թռա, որ տերտերին կանչեմ։ Քիչ հետո նորընծա Տեր-Մաղաքն եկավ։ Նա մեր քավորն էր։ Մայրոն խոստովանվեց, հաղորդում ստացավ, երկու հավկիթը դրեց բռիս մեջ և ասաց. «Մնացեք բարի» ու ժպտալով՝ մեր աչքերի առաջ հանգավ։

— Ողորմի իր արդար հոգուն,— ասաց Բայազը գլուխը ցավագին օրորելով։

— Մեռավ նա 1908 թվի օգոստոս ամսի տասներկուսին,— իր պատմությունը շարունակեց բատրակոմի նախագահը։— Զարմանալին այն էր, որ երբ նրան տանում էին թաղելու, մեր գյուղի ճնճղուկները ոստոստալով գնում էին ճանապարհի եզրերով։ Նրանք եկան մինչև գերեզմանատունը և ամբողջ ժամանակ տխուր ձայներ էին հանում։

— Տատոյիս մահից վեց տարի հետո սկսվեց համաշխարհային պատերազմը։ Մեր ամբողջ գերդաստանից հրաշքով միայն ես ազատվեցի։ Փոքր էի, բայց լավ լողալ գիտեի։ Տատոս էր ինձ սովորեցրել։ Մի մեծ շվան ուներ. կապած էր իմ մեջքից ու պատրաստամբից կախում էր Բինգյոլի մեջ։

— Երբ Բուլանուխը կոտորվեց, ես նախրապահ էի Մշո դաշտի Խարդոս գյուղում։ Վարդավառի առավոտյան նախիրը տարել էի դաշտ։ Կեսօր էր։ Քնել էի մի քարի վրա։ Երբ աչքս բացի, տեսա Ցրոնքն ու մեր գյուղը վառվում էին։ Էդտեղից ես փախա Մուշ։ Մուշի մոտի գյուղերը նույնպես վառվում էին։ Ես նրանց միջով փախա դեպի Ծծմակա Քիթ։ Ալվանինջ գյուղի այգիների մոտ հանդիպեցի մի պառավ կնոջ։ Նա շալակած ուներ մի փոքրիկ երեխա։

Երեխայի մասին խոսելիս Համազասպի ձայնը դողաց։ Խոդեդանը և Բայազը իրար նայեցին։ Նրանց դեմքը մռայլվեց։

— Ի՞նչ տեսակ կին էր,— հետաքրքրվեց Բայազը։

— Ալվանինջեցի մի պառավ էր։ Ես կռացա, որ երեխային վերցնեմ, բայց հանկարծ մեր մոտով անցավ բալաքցի Մուսաբեկն իր զինված աշիրեթով։ Նրանք փրենց հետ բերում էին մի խումբ

հայ կանանց և ծերունիների։ Մեզ էլ միացրին էդ խմբին։ Տանում էին Խասգեղ։

Արևապատ էր։

Ես և ալվառինջեցի կինը գնում էինք կողք-կողքի։ Երեխան իմ շալակին էր։ Ճանապարհին նա լաց եղավ։ Պառավը նորից գրկեց նրան։ Խասգեղին չհասած՝ խութա Շեկո տան քրդերից մեկը մոտեցավ և բռնելով իմ թևից՝ քրդերեն ասաց.— մե՛ղք ես, ջահել ես, արի քեզ տանեմ պահեմ։

Ես գնացի։

Մյուսներին լցրեցին մի մեծ մարագի մեջ և սկսեցին վառել։ Ես խնդրեցի իմ խնամակալ քրդին, որ նա գնար և ազատեր ալվառինջու վնոջը և երեխային։ Ասացի, որ նրանք իմ հարազատներն են։ Կինը վառվելով բոցերի միջից դուրս շպրտեց երեխային։ Շեկո տան քուրդը Մուսաբեկի ոտքերի մոտով իսկույն առաջ նետվեց, որ փրկեր նրան։ Մուսաբեկը նկատելով այդ, հրամայեց մանկանը նորից կրակի մեջ նետել։ Քուրդը հրաժարվեց։ Դահիճը քաշեց սուրը և Մուշի փաշայի ներկայությամբ տեղն ու տեղը խոցեց այդ ազնիվ քրդին։ Էլ ես չեմ պատմի, թե ինչ կատարվեց կրակի շուրջը։ Մենակ մնալով, սկսեցի փախչել։ Էդ զարհուրելի գիշերը ես անցկացրի մի ամայացած շենի մեջ։ Կարծեմ Պնտխներ գյուղն էր։ Քնել էի մի թոնրատան։ Կես գիշերին երբ արթնացա՝ ոչ ոք չկար։ Ես ու ճիճիրեքն էինք։ Տունը կործանված էր, բայց ծղրիդները երգում էին գերանների վրա։ Նրանք ճռռացին մինչև արևածագ։

— Ուրեմն Պնտխնե՞ր էլ եղար,— հարցրեց Աստատուրը աչքերը սրբելով։

— Եղա, ճոբո։

— Եվ ճիճիրեքն երգո՞ւմ էին։

— Ամբողջ գիշերը, մինչև լուսաբաց։

— Ո՞ւմ տունն էր։

— Ասում էին, թե այնտեղ ապրել է Պնտխցի Մանուկի գերդաստանը։

Խոդեդանը լուռ փղձկում էր։ Նրա արցունքները կաթում էին իր մաշված մատների վրա և թրջում համրակի հատիկները։

— Առավոտյան ես թողեցի Պնտխներ գյուղը և Դավթի քարի մոտով իջա Քոլոսիկ,— շարունակեց Համազասպը։— Մի աղբյուր

կար ճանապարհին։ Հաբանս լցրի սառը ջրով և բռնեցի Շմլակա-սարի ելը։ Իմ նպատակն էր Քանասար հասնել։

Հինգ օրից հետո Ալաշկերտի վրայով ես հասա Իգդիր։ Ապա եկա Թալին և դարձա բատրակ։ Մնացածը դուք գիտեք։

Համազասպի հուզիչ պատմությունը մինչև հոգու խորքը շարժեց այդ երկու ծերերին։ Բայազը արտասվում էր, իսկ Ասատուրը երկար ժամանակ չէր կարողանում խոսք ասել։ Նրա համար այդ գիշեր լուծվեց իրենց բատրակկոմի նախագահի առեղծվածը։ Ուրեմն Համազասպը պատկանում էր շերվանշեխցի զարմանալի պառավի ազգատոհմին։ Իրենց առաջ նստած էր սարսափելի վկան այն ահավոր կրակի, որի բոցերի մեջ վառվել էին իր երեխան և Ալվարինջի հարսը։ Նա այդ մասին ստույգ ոչինչ չգիտեր և ոչինչ էլ չիմացավ։ Բատրակկոմի նախագահը Խոդեդանի հետ ունեցած առաջին իսկ հանդիպումից թաքցրել էր այդ գաղտնիքը և այս անգամ էլ բարվոք համարեց լռել։

Լուսադեմին Աբո Համազասպի աչքերի առաջ կոլխոզի նախիրը բառաչելով դուրս եկավ գյուղից։ Ճշմարիտ է, նվազ էր այն, բայց ապագան նրան էր պատկանում։ Երկրի բոլոր արոտները նրա համար էին ծաղկելու այնուհետև։

Գյուղացիները հավաքվել էին մայր առվի մոտ, ականատես դառնալու տնտեսական այն մեծ տեղաշարժին, որ կատարվել էր այդ օրը իրենց գյուղում։ Ամեն ոք ուզում էր դիտել, թե ի՛նչպես իր անասունը, անհատական նախրից անջատվելով, պետք է միանար համայնական նախրին։

Այնտեղ էին նաև Ասատուրը և Բայազը։ Առվի արևոտ եզրին կանգնած նրանք նայում էին դեպի կանաչ սարալանջը։ Նորակազմ նախրի մեջ բոլորից առաջ ընթանում էին նրանց կովը և երինջը։

Մեկ ժամից հետո գյուղից դուրս եկավ համայնական հոտը։ Խոդեդանը և Ստեփանը սար բարձրացան իբրև կոլխոզի հովիվներ։ Առաջինը հովվապետ էր, իսկ երկրորդը՝ նրա օգնականը։

Բայազը, որ դընգի վրա ձավար էր ծեծում գյուղացիների համար, նույն օրը դընգը հայտարարեց կոլխոզի սեփականություն։ Կոլխոզի սեփականություն դարձան նաև գյուղի երեք ջրաղացները։

Աստուրի և Ստեփանի առաջին հոգսը եղավ կոլխոզի հոտը ապահովել ուժեղ շներով։ Մի օր Ստեփանը գյուղից յոթ գայլանման շան լակոտներ տարավ կոլխոզի ֆերման։ Դրանք Սևասարի ձագերն էին։

Ձագերից մեկը շատ նման էր իր մորը և բնավորությամբ կատաղի էր։ Հովիվը նրա անունը Քաֆքոր դրեց։

ՆՈՐ ԿՅԱՆՔ

Խոդեդանի առաջարկով Իրինդի նորակազմ կոլխոզը կոչվեց «Արագած»։ Այդ կոլխոզի նախագահ նշանակվեց Թաղվեցի Պետրոսը, որ երկար տարիներ ղեկավարել էր Վարկային ընկերության աշխատանքները Վերին Թալինում։

Իրինդի «Արագած»-ի անվան կոլխոզի հիմքը կազմում էին գյուղի բատրակ և չքավոր տնտեսությունները։ Աստիճանաբար այդ կոլխոզը ամրապնդվեց։ Ամրացան նաև նրա հարևան գյուղերի կոլխոզները։ Հանրային տնտեսության հաղթանակով մեծ ծավալ ստացան շինարարական աշխատանքները գյուղերում։ Իրինդը սկսեց ուժեղ թափով զարգանալ։ Բնակիչները սկսեցին հողաշեն տնակների կողքին կարմիր տուֆից քաղաքատիպ տներ կառուցել՝ լայն ու լուսավոր պատուհաններով։

Թաղվեցի Պետրոսը անհատական մանր կալերի փոխարեն գյուղի արևմտյան կողմում ձորաբերանին պատրաստեց մի ընդարձակ կալ, որի շուրջը հիմնվեցին մարագներ, ախոռատներ և կաթնամշակման գործարան։ Կառուցվեց նաև արհեստանոց՝ կոլխոզի կարիքները հոգալու համար։ Մանր դեզերի փոխարեն կոլխոզի կալի մոտ երևացին խոտի և հացահատիկի վիթխարի դեզեր, որոնց ստվերները իջնում էին մինչև ձորը և բարձրանալով, թանձր վերմակների պես ծածկում էին դիմացի սարալանջերը։

Գյուղացիներն այլևս առանձին-առանձին դաշտ չէին գնում, այլ խմբերով, գերանդիքն ուսերին, կանայք ու աղջիկները գնում էին փոցխերով ու մանգաղներով զինված։

Իրինդի հնձվորուհիները ամեն առավոտ դաշտ մեկնելիս, պապական սովորության համաձայն, իրենց հետ տանում էին կեսօրվա պաշարը, սովորաբար մածուն կամ ապուր, որ կճուճներով պա-

հում էին աղբյուրների սառն ակունքներում։ Կեսօրվա շոգին նրանք երկու-երեք ժամով դադար էին տալիս և փունջ-փունջ հավաքելով աղբյուրների շուրջը կամ քարափների ու բարդոցների հովանիքներում, ախորժակով վայելում էին իրենց ճաշը, ուղեկցելով այն կանացիական քաղցր զրույցներով։

Պետրոսի առաջին հոգսերից մեկը եղավ ամրացնել կոլխոզի ոչխարաբուծական ֆերման և նրա հոտի քանակը հասցնել մի քանի հազարի։ Ասատուրին և Ստեփանին օգնելու համար նա մի քանի նոր հովիվներ ամրացրեց ֆերմային։ Բոլորի համար բերել տվեց արտահագուստ և ոտնամաններ։

Թեև Խոդեդանը արդեն ծերացել էր, բայց զարմանալի ոգևորությամբ էր համակված։ Նա կոլխոզի հոտը համարում էր իր սեփականը և ոչ մի ջանք չէր խնայում այն օր-ավուր բազմացնելու և ազնվացնելու համար։ Ուսումնասիրելով յուրաքանչյուր ոչխարի անհատական հատկությունները և ընտրելով լավագույններին՝ նա և Ստեփանը վերջին մի քանի տարում ստեղծել էին տոհմային ոչխարների մի նոր խումբ, որն աչքի էր ընկնում իր բարձր մթերատվությամբ։ Դա բարձրասրունք, ամրակազմ և նրբագեղմ ոչխարների մի գեղեցիկ ցեղ էր, որ հիշեցնում էր Ճախարական գյուղում տեսած առասպելական խոշոր այծերին ու մաքիներին։

Ամբողջ հոտը բաժանված էր տեսակների՝ սև, սպիտակ, կարմիր, և արածում էր ջոկ-ջոկ, ամեն երանգը մի քարափի կամ բլուրի վրա։ Յուրաքանչյուր օղակն ուներ երկու հովիվ և երեք շուն։ Բոլորի պետը Ասատուրն էր, իսկ նրա օգնականը՝ Ստեփանը։ Բոլոր հովիվներից Խոդեդանը զանազանվում էր իր պարթև հասակով, զոլավոր անդրավարտիքով և ահագին մահակով։ Նրա կողքին մշտապես ներկա էր Քաֆքրը, որի շղթան գտնվում էր իր ձեռքում։

Երբ արևը ոսկեզօծում էր սարերի պռունկները, հոտը ելնում էր արոտ։ Լեռնային սառն ու արևոտ օդի մեջ լսելի էր, թե ի՛նչպես այծերն ու մաքիները խոպացնելով շորթում էին գետնից զորավոր և հյութալի կանաչը։ Որքա՜ն հաճելի էր գիտենալ, որ այդ ամբողջ բարիքը պատկանում էր ընդհանուրին, որ այդ խաղաղության մեջ արածող հոտը չէր կազմում մի իշխող անհատի սեփականություն։

Կեսօրին ակվում էր կիթը։

Երկու տասնյակ աղջիկ ու կին, քաղաշար նստած, կթում էին

կոլխոզի ոչխարը։ Ամեն շարքը մի գույնի հոտ էր կթում։ Սպիտակ, խոշոր մաքիները Ասատուրի, Ստեփանի և մյուս հովիվների ձեռքի տակով դիմում էին դեպի կթվորուհիները։ Թշշալով, փրփրալով լցվում էր թարմ ու անուշահամ կաթը լայնաբերան ու խոր դույլերի մեջ։ Կթված ոչխարները, իրենց տաքուկ մեջքերը բավականությամբ թափահարելով, կրկին տրոհվում էին լեռան լանջն ի վեր՝ հոտոտելով կանաչ գետինը։

Թալինի բոլոր գյուղերից և հեռավոր վայրերից մարդիկ Իրինդի սարերն էին գնում հատկապես Խոդեդանի ամեցրած ազնվացեղ ոչխարը տեսնելու, որ անուն էր հանել ամբողջ շրջանում։

Իրինդում և հարևան գյուղերում գնալով շատացան հարսանիքները։ Զուռնի և դհոլի ձայնից սկսեց ստեպ-ստեպ թնդալ Հինդ Ռանչպարի ձորը։ Գրեթե ամեն աշնանը գյուղում մի քանի հարսանիք էր լինում։ Հարսանքավորները երգելով անցնում էին Ասատուրի տան մոտով.

«Հինը քանդվեց, նորը շինվեց՝
Սովետի ձեռքով,
Հազար-հազար հիմքեր փորվեց՝
Սովետի ձեռքով»։

Ծերունի հովիվը տեսնում էր, թե ի՛նչպես իր աչքերի առաջ կառուցվել էր մի բոլորովին նոր աշխարհ, որտեղ մարդիկ ապրում և աշխատում էին համերաշխ։ Չկար այլևս տեր ու ծառա։ Հողը դարձել էր ընդհանրական։ Հոտը պատկանում էր կոլխոզին, այսինքն՝ գյուղի աշխատավորների համայնքին։

Հիմնահատակ կործանվել էր հին, անիծյալ ու անարդար աշխարհը։ Զքացել էր հարուստ հողատերերի և բեկերի անիրավ տիրապետությունը։ Ո՛վ վարն էր նստած՝ բարձրացել էր վերը, ով վերն էր նստած՝ իջել էր ցածը։ Որքա՜ն էր երազել Ասատուրը տեսնել այդ երանելի կարգը։ Տեսնել աշխատավոր մարդուն ազատագրված բռնությունից ու շահագործումից։ Տեսնել մարդը մարդուն հավասար, առանց որևէ ազգային խտրության և տարբերության։

Այլևս Ոսկեհատը հոգնությունից ուշաթափ չէր ընկնում արտերի մեջ «հապա» անելիս։ Այլևս Բայազը չէր մենամարտում Սև սարի արջերի հետ մի անհատի երջանկության համար։

Իսկ ի՞նքը։ Ինքը դարձել էր գյուղի իսկական տերը։ Նա ընտրված էր գյուղսովետի և շրջսովետի անդամ։ Հպարտ ու հաղթական քայլում էր նա Արագածի գեղածիծաղ լանջերով Սովետական Հայաստանի վերածնված հողի վրա։ Այլևս ո՞վ կարող էր վառել իր տունը։ Ո՞ր սրիկան կհամարձակվեր իրեն և Բայազին գիշերով դուրս քաշել տանից և տանել գյուղից դուրս սպանելու։ Իր համար, ամբողջ գյուղի համար, բովանդակ երկրի համար սկսվել էր պատմության մեջ չեղա՞ծ, չլսվա՞ծ մի նոր կյանք։

ՄԵՆԱՏՆՏԵՍ ԹԵԼՈՆ

Ներքին Թալինում նույնպես կոլխոզ էր կազմակերպվել։ Փղորկվա Կարոն, Գոմսա Մելիքը, ատաղձագործ Հակոբը և մյուս գյուղացիք մտել էին կոլխոզ և սկսել էին ապրել նոր կյանքով։ Միայն Թելո Մեսրոպը ժամանակավորապես դուրս էր մնացել կոլխոզից։ Գյուղում ամենքը նրան կոչում էին մենատնտես Թելո։ Ինքն էր ու իր կինը, որի հետ նա ամուսնացել էր ներքին Թալինում, և յոթ անչափահաս երեխա՝ բոլորն էլ աղջիկ։

Իրենց գյուղը մոտիկ գտնվելով շրջկենտրոնին, Թելոն շատ առիթներով շփման մեջ էր մտնում ղեկավար աշխատողների հետ, հաճախակի տեսնում էր նրանց՝ ձիով կամ ոտքով իր դռան առջևով անց ու դարձ անելիս։

Քաղաք գնալիս այդտեղով էին անցնում միլպետ Արամայիսը, բատրակկոմի նախագահ Աբո Համազասպը, ջրերի ավագ կարգադրիչ Եգոր Քաջոնին, սպառկոոպի տնօրեն Բագրատ Երանելին, փոստի կառավարիչ Անուշավանը, ՓՕԿ-ի նախագահ Կծկուկ Շմավոնը, շրջիկ դատավոր Ոսկեբերան Քալանթարը և ֆինմասի վարիչ Հազարապետը։ Այդտեղով էին անցնում նաև կուսշրջկոմի քարտուղար Գուրգեն Հայկազունին, կոմսոմոլի հրահանգիչ Ռուբեն Այվազյանը, գործկոմի նախագահ Զորավարդ Սամվելյանը և շատ ուրիշներ։ Նրա դռան մոտով երթևեկում էր նաև նախկին հողաչափ Գարեգին Պիծակը, որ այդ տարիներին, մասնագիտական կրթություն ստանալով Երևանում, առաջ էր քաշվել իբրև գավառամասի հողբաժնի վարիչ։

Թելոն հպարտությամբ անցնում էր նրանց մոտով՝ ձեռնափայ-

տը մեջքին պահած։ Իր սովորության համաձայն նա բարևում էր միայն այն մարդկանց, ով բեղ ուներ, իսկ ով բեղ չուներ՝ բանի տեղ չէր դնում և կողքով անցնում էր առանց որևէ կարևորություն տալու։ Օրինակ՝ պիոներ հրահանգիչ Աշոտ Խաչիկյանին նա բոլորովին չտեսնելու էր տալիս, որովհետև բեղ չուներ։

Մի առանձին հարգանքով նա բարևում էր միլպետ Արամայինին, որի բեղը թեև խանձվել էր համատարածի ժամանակ, բայց դարձյալ շքեղություն էր տալիս նրա այրված դեմքին, և բատրակոմի նախագահ Աբո Համազասպին, երբ նրանք կողք-կողքի ձիով անցնում էին գյուղամիջյան փողոցով։ Ազդեցիկ էին նաև շրջգործկոմի նախագահ Զորավարդ Սամվելյանի, Եգոր Քաջունու և փոստի կառավարիչ Անուշավանի ընչացքները։

Թելոն ամենից շատ պատկառում էր կուսշրջկոմի քարտուղար Գուրգեն Հայկազունուց։ Նրան ասել էին, թե Հայկազունին իրենց գավառամասի ամենամեծ մարդն է, ուստի նա մի առանձին հարգանքով ողջունում էր նրան, մանավանդ որ Հայկազունին տղամարդուն վայել բեղ ուներ։

Եվ կարելի է ասել, այդ բեղն էր պատճառը, գլխավորապես հողբաժնի վարիչ Գարեգին Պիծակի բեղը, որ Թելոն դուրս էր մնացել կոլխոզից։

— Բեղիդ վրա երդում տուր, որ ես կոլխոզում ավելի լավ կապրեմ, քան թե անհատապես, գամ մտնեմ կոլխոզ,— ասել էր նա հողբաժնի վարիչին ընդհանուր ժողովի ժամանակ։ Գարեգին Պիծակը հրաժարվել էր այդ տեսակ տարօրինակ երդումից, Թելոն էլ հրաժարվել էր կոլխոզ մտնելուց և ձեռնափայտը մեջքին դնելով դուրս էր եկել ժողովից։

Ամենալավ հողերը տվեցին կոլխոզին, իսկ Թելոյին դրեցին մի քարքարոտ խոպանի վրա, գյուղից շատ հեռու։ Հետևյալ օրը, մի չափածո դիմում ձեռքին, Թելոն ներկայացավ հողբաժնի վարիչ Գարեգին Պիծակին։

Դիմումի մեջ գրված էր.

«Հարազատ պաշտոնյա, հարգելի ընկեր,
Արի մի քիչ աղերսանքս լսիր դու։
Սրտիս մեջ ունեմ անփարատ վերքեր,
Եղիր բժիշկ, սպեղանի աքա գու։

Ինը անձից ընտանիքըս բաղկացած,
Հողը վատ է, չէ՞ որ կմնան քաղցած,
Էս ի՞նչ կռեճ տվիր, ա՜յ դու անաստված,
Հնար չունեմ, աղաչանքըս լսիր դու։

Տասներկու վերստ հեռու՝ զոռ է հասնելը,
Մահ ու մեռ է տեղը, դիրքը տեսնելը.
Խոփ չի մտել, չարժե ցորեն լցնելը,
Սերմացուին գոնե ափսոս արի դու։

Ափսոս է Թելոն, մի՛ թողնի վառվի,
Գյուղում ինձ նման հողազուրկ չի ճարվի.
Եթե ուշացնես՝ հողը կսպառվի,
Հույսըս, ապավենս՝ դու ես, դո՛ւռ։

Մենատնտես Թելոյի դիմումը դժբախտաբար անհետևանք մնաց, որովհետև հողաբաժանությունը ավարտվել էր, հողը սպառվել էր և ազատ տարածություն բոլորովին չկար։

Իր բախտից այդ վայրում շատ ծաղիկ ավել էր բուսնում։ Նա այդ ավելները քաղում էր և ավանակի վրա բարձած տանում էր Թալինի շուկան վաճառելու։

Թելոն ուներ մի կով, երկու ավանակ և մի քսնի այծ ու ոչխար։ Այծերն ու ավանակները հարկման ենթակա չէին, ուստի նա զարկ էր տալիս այդ անասունների բազմացմանը։

Ամեն առավոտ կոլխոզի հոտը և նախիրը տարբեր ուղղությամբ էին գնում, իսկ Թելոյի կովը և այծերը՝ տարբեր ուղղությամբ։ Եվ դրանից ճնշվում էր նրա կնոջ՝ Իլիկի հոգին։ Իլիկն ուզում էր մտնել, որ հարևանները չասեին թե իրենց ճամփան տարբեր է ընդհանուրի ճամփից, և մանավանդ նեղվում էր, երբ կոլխոզի կանայքն ու աղջիկները միասին էին գնում աշխատանքի, իսկ ինքը մենակ, առանց ընկերի։

Թելոն այն կարծիքին էր, որ կոլխոզները շուտով կքանդվեն և հողը նորից կբաժանվի անհատ գյուղացիների վրա։ Այդ կասկածը նրա մեջ ուժեղացել էր այն օրվանից, երբ տեսել էր, թե ինչպես, առաջին օրերին, ո՛վ եզնարած էր դառնում, իր եզանն ավելի շատ խոտ էր տալիս, քան թե մյուսների անասուններին։ Իսկ արտերի միջնակները քանդելու ժամանակ ուղղակի դիմադրություն էր լինում կոլխոզնիկների կողմից — հեյ, ո՞ւր ես իմ սինոռը քան-

դում,— բացագանչում էին ոմանք, ետ հրելով քլունգի և բահի հարվածները։

— Ա՜յ կնիկ, մի քիչ էլ համբերիր, շուտով կոլխոզը կքանդվի, ու ամենքը նորից կգան ու կմիանան մեր ճամփին։ Չեն դիմանա, կքանդվեն։ Կիսրար կորեկը կոռնկներն են կերել,— ասում էր Թելոն ու մտքում ծիծաղում ամենքի վրա։

— Խելքը աշխարհք կուտե, իսկ կոլխոզը խելքով է շինված, ինչո՞ւ պիտի քանդվի,— հակաճառում էր Իլիկը։

— Պիտի քանդվի, դու աշխարհի ելից մատյանը չգիտես,— իբրև ծանր խոսք ավելացնում էր Թելոն և կինը ձայնը կտրում էր։

Զարմանալին այն էր, որ Թելո Մեսրոպը իրեն համարում էր այդ գյուղի ամենահարազատ մարդը և իր ձեռնափայտի գլխին դանակով փորագրել էր մուրճ ու մանգաղի պատկերը։ Նա ամեն տեղ տարածել էր, որ ինքը երազում տեսել է Լենինին և երկար խոսել է հետը։ Լենինը իբրև թե ասել է նրան. «Մինչև իմ թուղթը քեզ ցույց չտան, կոլխոզ չմտնես»։ Թելոն Լենինի մասին երգ էր սովորել մի ծանոթ մշեցուց և ճանապարհ գնալիս հաճախ երգում էր այն.

Իլյիչ Լենին Ուլիխանով,
Զարթի՛ր, զարթի՛ր, հոգուդ մեռնեմ,
Էդ ո՞ւր թողիր դու մեզ, գացիր,
Զարթի՛ր, Իլյիչ, հոգուդ մեռնեմ։

Հողը տվիր դու գյուղացուն,
Իսկ բանվորին ազատ օր, տուն,
Լուսը ճեռա վրը քու հոգուն,
Զարթի՛ր, Իլյիչ, շարքդ տանեմ։

Դու ուժով իր ժողովրդով,
Ժողովրդից ուժեղ չկա,
Զարթի՛ր, ումուդ, արև Լենին,
Քեզնից լուսով արև չկա։

— Լենինի մասին երգում ես, իսկ կոլխոզ չես մտնում,— հիշեցնում էր նրան հողբաժնի վարիչ Գարեգին Պիծակը նրա մոտով անցնելիս։

— Կոլխոզը կամավոր է,— ասում էր նա՝ քթի տակ հպարտորեն տնտնացնելով սիրած երգը։

Իր բնույթով վերին աստիճանի ուղղամիտ և ճշմարտախոս մարդ լինելով, Թելոն համարձակորեն քննադատում էր իրենց գյուղի և շրջկենտրոնի այս կամ այն աշխատակցի սխալներն ու թերությունները։

Գյուղսովետը նրանից իբրև պարտադիր մթերում այծի մազ էր պահանջել։ Թելոն մի քանի անգամ ուշացրել էր մազի հանձնումը։

— Ափսո՛ս, որ սովետական պայծառ արևը քեզ վրա է առնում,— ասել էր նրան գյուղսովետի նախագահը։

— Ես չգիտեի, որ արևը կոմունիստ է եղել, թե չէ վաղուց տուրքս տված կլինեի,— պատասխանել էր Թելոն և Վերին Թալին գնալով գանգատվել էր շրջգործկոմի նախագահ Զորավարդ Սամվելյանին գյուղսովետի այդ ապօրինի արարքի և վիրավորական սպառնալիքի համար։

Մի անգամ Թալինից եկել էր բատրակկոմի նախագահ Աբո Համազասպը, որ նրան համոզի վերջնականապես կոլխոզ մտնել։

— Մշեցի մարդ ես, քեռի Թելո, եկ կոլխոզ մտիր, մինչև ե՞րբ անջատ ապրես,— ասաց Համազասպը տեղ գրավելով նրա կողքին ծաղկած ավելներով ներկված մի բարձունքի վրա։

— Մինչև որ դուք ձեր բեղի վրա երդում անեք։ Եթե դուք տղամարդ եք և գիտեք ձեր գործի զորությունը, ինչո՞ւ ձեր բեղի վրա ուխտ չեք անում։ Բացի այդ,— ասաց Թելոն,— Լենինն ասե՞լ է, որ ավել ծախող Թելո Մեսրոպին կոլխոզ մտցնեք։

— Չի ասել։

— Ողորմի իր հոգուն։ Ապա էլ ինչո՞ւ եք զոռում, որ կոլխոզ մտնեմ։

— Որ մենակ մնաս, չես կարող ապրել, անոթի կմնաս,— բացատրեց բատրակկոմի նախագահը։

— Դուք կոլխոզում կուշտ եղեք, թող ձեր միջի անոթին ես լինեմ,— ասաց Թելոն։

— Ուրեմն չե՞ս ուզում մտնել։

— Թե զոռով է՝ կմտնեմ, թե խաթրով է՝ չեմ մտնի։

— Խաթրովը խաթրով է, բայց մենք պլան ունենք։ Քու մենակությունը մեր կոլխոզի աշխատանքը խանգարում է։

— Ձեր պլանից ինձ դուրս դրեք, հաշվեք թե Թելո Մեսրոպը չկա։

— Ինչպե՞ս թե չկա, երբ կողքիս նստած է։

— Ձեռք քաշեք ինձնից։ Իմ դիմումը մերժեցիք, ինձ դրեցիք էս կռեճ խոպանի վրա, հիմա է՞դ էլ եք ուզում իմ ձեռքից առնել,— բարկացավ Թելոն։

— Ընդհակառակը, մենք ուզում ենք էդ խոպանից քեզ ազատել և տանել կոլխոզի հարուստ դաշտերի վրա։

— Իզուր մի քարոզիր, ես էս քարափից բաժանվողը չեմ։ Լենինն ինձ երազի մեջ ասաց, եթե կգան մոտդ և կուզեն քեզ կոլխոզ գրել, մինչև իմ թուղթը քեզ ցույց չտան՝ չմտնես։ Գնացեք էդ թուղթը բերեք՝ իմ պառավի ձեռքից բռնեմ գամ մտնեմ կոլխոզի ծոցը։

Մինչև երեկո Համազասպը մնաց մենատնտես Թելո Մեսրոպի մոտ։ Շատ խոսեցին, վիճեցին, բայց Թելոն համառ էր։ Նա ոտքը պինդ դրել էր գետնին։— Կա՛մ Լենինից թուղթ բերեք, կա՛մ ընդհանուր համայնքի առաջ ձեր բեղի վրա երդում արեք, թե չէ ես կոլխոզ մտնողը չեմ։

Բատրակկոմի նախագահը գլուխը կախ հեռացավ նրա մոտից և քայլերն ուղղեց դեպի Վերին Թալին։

Քարքարոտ հողակտորի եզրին, մի չեչոտ քարի վրա, որից այն կողմը Հինգ Ռանչպարի երախն էր բացվում, նստել էր Թելո Մեսրոպը, ներքին Թալինի վերջին մենատնտեսը և նայում էր նրա ետևից։

— Գնա՞, ղուրբան, գնա՞։ Դու էլ դարձար մանրապճեղ։ Երևի մոռացել ես, թե ի՞նչպես միլիցիան Արամայիսին թոնիր գցեցին, իսկ պիոներ Աշոտին պլուզեցին խսրի մեջ ու կոխեցին դռան ետև։ Շատ որ զոռես, ես էլ քեզ կպլուզեմ, կամ կխաբեմ կհանեմ մեր վանքի տանիքը, որ մինչև երեկո էրթաս գաս՝ իջեցնող չլինի։ Ինձ ավել ծախող Թելո Մեսրոպ կասեն, հա՞...

Ապա նա կանգնեց և ձեռքով արավ իր աղջիկներին, որ գան ավել քաղեն։ Ձորից իրար ետևից դուրս եկան տարբեր հասակի յոթ փոքրիկ, կարմրաթուշ աղջիկներ և աշխուժությամբ անցան գործի։

Նվ, այնուամենայնիվ, Թելոն երբեմն մտածում էր, թե այն երկրորդ փորձանքը, որի մասին Հուլունքը գրել էր նամակում 1915 թվականի ձմռանը, դա իր կոլխոզ մտնելու հետ կապված հանգամանքն էր, որ բավականին գլխացավանք էր պատճառել իրեն։

ՀԵՂԻՆԵՆ ԱՄՈՒՍՆԱՆՈՒՄ Է

Ուռենու դալար ոստը մեծ ծառ էր դարձել։

Արևոտ օրերին Խոդեդանը սիրում էր նստել նրա սլսլան ստվերի տակ, նախշուն կարպետի վրա։ Նա դանդաղորեն քաշում էր տերողորմյայի կարմիր հատիկները և լռիկ մտորում էր իր խոհերի հետ ընկած։

Մեկ-մեկ փակում էր աչքերը և աշխատում էր ամբողջ անցյալը ամփոփել իր մտքի առաջ։ Որքան շատ բան էր փոխվել այն հեռավոր օրից, երբ նա, հրաժեշտ տալով Շեն գյուղին, Աստվածածնի լեռներով դիմեց դեպի Բանաշեն։

Հեղինեն, իր միակ դուստրը, արդեն մեծացել էր։ Թոռնիկ ունենալու հոգսը վերջին տարիներին սկսել էր խորապես զբաղեցնել Աստուրին։ Նա շտապեցնում էր ամուսնացնել աղջկան, որ յուր պապ Զորա-Դավթի գերդաստանի ծուխը հարատևեր։

Գեղեցիկ էր Հեղինեն։ Սև վարսերը յոթ գալարուն հյուսքերով վայր էին թափվում նրա ուսերից։ Այդ լեռնական աղջկա գեղեցկությամբ աքանչանում էին ամենքը։

Մի օր, երբ նա սարից դարձավ, հայրը ասաց նրան.

— Կարգվելուդ օրը հասավ, լաս։ Պետ աղջիկ դարձար։ Աշխարհի կարգն է էդպես։ Ծլեցիր՝ պիտի ծաղկես, ծաղկեցիր՝ պիտի պտուղ տաս։

Մի երեկո Ագարակ գյուղից երկու երիտասարդ եկան Իրինդ։ Նրանցից մեկը ծաղկատար դեմքով մի զուռնաչի էր, իսկ մյուսը Զորերու Երվանդն էր, Ագարակի գյուղսովետի նախագահը։

Բայազը եկվորներին սիրալիր ընդունեց և իմանալով նրանց գալու նպատակը, մարդ ուղարկեց սար՝ Խոդեդանին գաղտնի տեղեկացնելու, թե աղջկան ուզում են. «ուզընկան է եկել մեր տուն, Ասվատուր, մի օրով սարից ցած արի»։ Այդպիսի լուր էր ուղարկել Բայազը ամուսնուն։

Հետևյալ առավոտ, դեռ արևը չծագած, հովիվը գյուղ մտավ։ Նա սարից եկել էր Քաֆրրի հետ, որ մի ահագին շուն էր դարձել։

Զորերու Երվանդը, որին Խոդեդանը անձամբ ճանաչում էր, շատ դուր եկավ Աստուրին, մանավանդ, որ նա գյուղսովետի նախագահ էր։ Այս վերջին հանգամանքը Խոդեդանին հետաքրքրում

էր բացառապես նրա հասարակական դիրքի տեսակետից։ Գյուղսովետի նախագահ է, նշանակում է աշխատում է գյուղի համար, հասարակության համար։ Իսկ հայրենակից լինելու հանգամանքը վճռական դեր խաղաց ծնողների համաձայնությունը առնելու գործում։

Վերոհիշյալ տեսակցությունից մի շաբաթ հետո Հինդ Ռանչպարի ձորը թնդաց ուրախ նվագածությունից։

Այդ առաջին կոլխոզական մեծ հարսանիքն էր գյուղում։

Ասատուրը նախապես մի տիկ օղի առավ և տնից-տուն անցնելով համագյուղացիներին հարսանիքի հրավիրեց։ Ով ըմպում էր մատուցած օղին՝ պարտավոր էր իր ներկայությամբ պատվել հարսանիքը։ Պսակին ներկայացավ գրեթե ամբողջ գյուղը։

Եկել էին նաև հարևան գյուղերից։ Ներքին Թալինից եկել էին ատաղձագործ Հակոբը, Փղորկվա Կարոն և մենատնտես Թելո Մեսրոպը։ Կաթնաղբյուր գյուղից եկել էին ուսուցիչ Արամ Խնկոյանը, Գյուլեն և Բոլոճ Մկրոն։ Աշնակից եկել էր կոլխոզի դարբին Փոքր Զենոբը։ Վերին Թալինից եկել էին Աբո Համաղասպը, շրջանի միլիցիոներ Արամայիս Զատիկյանը և գյուղատնտես Գարեգին Պիծակը։

Վերին Սասնաշեն գյուղից մի շատ պատկառելի մարդ էր հրավիրված։ Հարսանքավորները գրավել էին իրենց տեղերը, երբ հայտնվեց այդ թանկագին հյուրը, որին սպասում էին ամենքը։

Այդ մարդը Թամոն էր։

Թալինի աշխատավորները լսել էին այդ հաղթահասակ նահապետի մասին, բայց քչերն էին տեսել նրան։ Պատկառանքով պատմում էին, որ նա Ճնղափորիկի տնից էր։ Ամեն ոք փափագում էր գեթ մեկ անգամ հանդիպել և ձեռք թոթվել նրա հետ։ Մանավանդ շատ էին ցանկանում տեսնել նրան Քուռկիկ Զալալիի վրա նստած, որի մասին առասպելներ էին պատմում։ Նույնիսկ տարածել էին, որ ծերունին ճանապարհ գնալիս իր ծխամորճը վառում էր երիվարի պայտերից արձակած կայծերով։ Եվ ահա այսպիսի մի նշանավոր անձնավորություն եկել էր Հեղինեի հարսանիքին։

Երբ բակում ձիու խրխինջ լսվեց, հարսանքավորները միաբերան գոչեցին.— քեռի Թամոն է։

Եղնիկը, Թաղվեցի Պետրոսը և մի քանի երիտասարդ դուրս թռան և բռնելով ձիու սանձն ու փայտյա ասպանդակները, օգնեցին հյուրին իջնել։

Թամոն ներս մտավ Սասունի ավանդական տարազը հագած, ձեռքին մի մեծ ձեռնափայտ։ Հարսանքատունը մի մարդի պես ոտքի կանգնեց։ Մերունին բարի երեկո մաղթեց և շեմքից մի քայլի վրա կանգ առնելով իմաստուն աչքերով իր շուրջը նայեց։ Դիմացից նրան մոտեցավ Խոդեդանը։ Սասնա տան երկու նահապետները գրկախառնվեցին։

Պատվելի հյուրը ձեռքով նշան արավ, և հարսանքավորները նստեցին։ Միայն հարսը մնաց կանգնած։ Թամոն մոտեցավ և ձեռքը դրեց նրա գլխին։ Այդ նշան էր, որ Սասնա տան նահապետը օրհնում էր նրա պսակը։

Այնուհետև ներս մտան Դաշտադեմցի Գևորգը, մնջղչի Գրքոն և Շինական Պողոսը, որոնք տեղ գրավեցին ատաղձագործ Հակոբի, Փղորկվա Կարոյի և մենատնտես Թելո Մեսրոպի կողքին։ Այդ շարքումն էին նստած նաև Սեմալցի Թաթոն, Գուլթան Հարությը, Փոքր Ջենոբը և Ստեփանը։

Մեջտեղում նստած էին Թամոն և Ասատուրը։

Պատկառելի մարդիկ էին նրանք, խոհական, ավանդապահ և ծանրաբարո։ Հայացքներով ազդու էին, շարժուձևերով հավասարակշիռ և խոսքերով ժլատ։

Նրանց հանդեպ նստած էին ավելի երիտասարդ սերնդի ներկայացուցիչները. Բատրակկոմի նախագահ Աբո Համազասպը, միլպետ Արամայիս Զատիկյանը, Կաթնաղբյուրի դպրոցի վարիչ Արամ Խնկոյանը, գյուղատնտես Գարեգին Պիծակը, կոլխոզի նախագահ Պետրոս Թաղվեցին և այլն։

Եզնիկը թամադա էր ընտրված։ Նա կարգադրեց լցնել բաժակները և ըմպել Թամոյի և Խոդեդանի կենացը։

— Հարգելի հարսանքավորներ,— ասաց Եզնիկը գավաթը վերցնելով,— եկեք մեր այս ուրախ հարսանիքին խմենք քեռի Թամոյի և քեռի Ասատուրի կենացը։ Դուք գիտե՞ք թե ովքեր են նրանք և ինչո՞ւ հարկավոր է նրանց կենացը խմել,— շարունակեց թամադան։

— Քեռի Թամոն և Խոդեդանը Սասնո նահապետներն են։ Նրանցից մեկը Ճնղճափորիկի տնից է, իսկ մյուսը՝ Դավթի։ Թամոն համփա է ընկել սրանից հարյուր տարի առաջ։ Այս սեղանի շուրջը

նատածներից ոչ ոք չի եղել, երբ նա և քեռի Աստատուրը ճանապարհ են ընկել։

— Մեր Սասնո հարգելի նահապետներ,— խոսքը Թամոյին և Խոդեդանին ուղղելով ասաց Եզնիկը,— ես Կիրակոսի տղան եմ, այն թշվառ մշակի, որ Ընկուզնակից ամեն շաբաթ գնում ու գալիս էր Ճախրական։ Իմ հայրը սպանվեց Անդոկի կռվում։ Նրա մահից հետո դուք առաջինը եղաք, որ հայրություն արեցիք ինձ։ Քո շնորհիվ, քեռի Աստատուր, ես Արինոքից եկա էջմիածին և բնակություն հաստատեցի Իրինդ գյուղում։ Ես քեզ շատ բանով եմ պարտական, հորե։ Մեր կյանքի ծանր տարիներն անցել են։ Մենք այժմ ունենք հայրենիք և պետականություն։ Մենք սկսել ենք ապրել նոր կյանքով։ Ո՞վ տվեց այդ ամենը մեզ։ Այդ ամենը մեզ տվեց Սովետական կառավարությունը։ Թող ուրեմն ժամ առ ժամ աճի և զորանա մեր սովետական երկիրը։

Ճնճղափորիկի և Դավթի տան նահապետների կենացը խմելուց հետո հարսանքավորները խմեցին նորահարսի կենացը։

— Էսօր իմ հարսանիքը չէ, լաո,— Հեղինեին դիմելով ասաց Խոդեդանը,— քո հարսանիքն է։ Իմ հարսանիքի դհոլ ու զուռնեն, ո՞վ իմանա, ո՛ր հարսի համար ականջի օղ է դարձել։ Մեկ քույր ուներ՝ մեռած է, երեք եղբայր ուներ՝ նրանք էլ մեռած են։ Մեր մինուճար զավակը դու ես, և մեր ուշքը քու վրան է։ Քեզնով պիտի վառվի մեր տոհմի հանգած կրակը։ Քու ծնունդը մի անմոռանալի դեպքի հետ է կապված, լաո։ Մարտե աղջիկը ցավերի մեջ էր։ Ոսկեհատը խնդրեց, որ մի արոր հանեմ տանիք։ Մենք արոր չունեինք։ Ձորի բերանից գոռացի Դաշտադեմ լուսահոգի Օնեին։ Նա արորը դրեց ուսին, բարձրացավ իրենց կտուրը և մասերն իրարից քանդեց։ Էդպես ես դու ծնվել, լաո։ Քու ծնունդը կապված է ռանչպարի արորի և ժողովրդի հավատքի հետ։

— Ձորերու Երվանդը,— շարունակեց Հովիվը,— երկու հայրենասեր շինականների՝ Կայծակ Պետոյի և Կայծակ Սեթոյի փոքր եղբայրն է։ Նա էլ է ուզում իրենց ցեղի քանդված օջախը բորբոքել։ Մեր ամբողջ գյուղը էսօր ներկա է ձեր հարսանիքին։ Երեք բան կփափագեմ քեզ ու Երվանդին, լաո։ Կփափագեմ, որ հավատարիմ մնաք ձեր ամուսնական բարձին և հայ շինական ընտանիքի սրբությանը։ Փափագելով կփափագեմ, որ հարգեք ու խոնարհ լինեք ձեր ծնողաց։ Մյուս փափագս էն է, որ առաջին հերթին աշխատեք ձեր գյուղի և

ձեր ժողովրդի համար, հետո ձեզ համար։ Դուք ողջ լինեք, հարսանքավորներ։ Թող էս ուրախ պահը ծաղկի ձեր դռների առաջ։

— Շե՜ն մնաս,— գոչեցին հարսանքավորները։

— Բարի համբավդ միշտ անպակաս լինի մեր ականջից։

— Աստված ուրախությունով անի, Ասվատուր,— բարեմաղթեց Թամոն։

— Ուրախության մեջ մնաս, քեռի Թամո։ Իմ պապ ութսուն տարի առաջ քու ջաղացն է եկել Մոտկանից։ Անուշ լինի էն փուռնիկը, որ կիսել ես նրա հետ։

— Կիսել եմ, լաո, քու պապու հետ տաք փուռնիկ եմ կիսել,— ասաց Թամոն, վերհիշելով շատ տարիներ առաջ մոտկանցի գյուղացու հետ Դավթի ջրաղացում կերած հացը։

— Շատ գոհ եմ, քեռի Թամո, որ դու պատվել ես իմ տունը ու եկել ես Հեղինիս հարսանիքին։ Մեկ վիշտ ունեմ սրտիս։ Էդ էն է, որ Օնեն, Տոնեն և Պնտխցի Մանուկը ներկա չեն աղջկաս պսակին։ Նրանք մեռած են։ Աստված ողորմի իրենց հոգուն։ Դուք, ձեր անուշ ջան ողջ լինի։

Խոդեդանը ըմպեց ձեռքի օղին ու նստեց։

— Խմածդ անո՜ւշ,— գոչեց Շինական Պողոսը։

— Անուշ մնա քու ջա՜ն։

— Անուշ եղավ, ճոքո,— բարեմաղթեց Սեմալցի Թաթոն։

— Անուշի մեջ մնաս, լաո։

Հարսանիքը շարունակվեց մինչև առավոտ։ Ագարակից փեսայի ազապ չարիները ձի էին բերել հարսի համար։ Հեղինեին նստեցրին վրան և դհոլ զուռնով ճանապարհ ընկան։

Արծվասարի տակ հարսանքավորները թևապար բռնեցին.

— Լենինյան է, լենինյան է յարս,
Ջոլի կաքավ, աննմա՜ն է յարս,—

Ցոչելով երգում էին նրանք։

Թաշկինակը ձեռքին իր առնական ամբողջ գեղեցկությամբ պարում էր կոլխոզի նախագահ Պետրոս Թաղվեցին։ Պարում էին Կաթնաղբյուրի ուսուցիչ Արամ Խնկոյանը, բատրակկոմի նախագահ Աբո Համազասպը, միլիցիոներ Արամայիսը, գյուղատնտես Գաբրիելին Պիծակը, գյուղսովետի նախագահ Նազնիկը և մյուս երիտա-

սարդները։ Այդպես նրանք շատ անգամներ միասին պարել էին Արծվաարի վրա, Արտին սարի գագաթին և Արագածի լանջերին, երիտասարդական արշավների և տոնախմբությունների ժամանակ։

Հարսանքավորները ձիավորին առնում էին օղակի մեջ և ստիպում էին կանգ առնել ճանապարհին։ Հեղինեն ամոթխածությամբ նայում էր շուրջը։ Ճիշտ այդպես մի սպիտակ երիվարի նստած իր մայրն էր դուրս եկել հորանց տանից յոթ գույնզգույն քողերով ծածկված։ Այժմ փոխվել են ժամանակները։ Նորահարսի երեսին միայն մեկ սպիտակ քող կար, որ իջնում էր մինչև ծնոտը։

Վերջին անգամ հարսի առաջ քոչարի բռնեցին ջրաղացպան Թամոն, ատաղձագործ Հակոբը, Փղորկվա Կարոն, Սեմալցի Թաթոն, Գուլթան Հարութը, Շինական Պողոսը, Դաշտադեմցի Գևորգը, Բոլոճ Մկրոն և Փոքր Ջենտրը։

Թելո Մեսրոպը առանձին էր պարում։ Նա մի տեսակ խոռվածի պես էր բատրակկոմի նախագահի հետ, որովհետև վերջինս հարսանիքի ժամանակ նորից շշնջացել էր նրա ականջին՝ «ե՞րբ ես կոլխոզ մտնելու»։

— Ինձնից ձեռք քաշիր,— պատասխանել էր Թելոն։

— Որ էդպես է՝ առանձին պարիր։

— Եվ կպարեմ, ո՞մն ես վախեցնում,— ասել էր Մեսրոպը և սկսել էր առանձին կաքավել։

Հարսի ձին ճեղքեց մեծահասակների պարաշղթան և առաջ ընթացավ։ Գյուղի երիտասարդները նրա ձիու առաջ կրակոտ պարելով հասան մինչև Վերին Բազմաբերդ ու վերադարձան։

Ինչ-որ մեկը ճանապարհին երգում էր.

«Ասի՝ արի,
Կարոտս տուր,
Մարավ եմ՝ ջուր,
Տո Սասնա ծուռ,
Իմ անչիգյար յար»։

Մեկ ուրիշը տխուր զեղում էր հեռուներից.

«Ա՜խ, մեկեն ձեռքես թրռար,
Երկնայի՜ն հավքի նման»։

Հեղինեն ընտանիք կազմեց Ագարակում։ Մեկ տարի հետո լուր բերին Ասատուրին, որ իր աղջիկն ունեցել է մի արու զավակ։

— Մեծ ավետիս բերին ընձի,— ուրախացած գոչեց Խոդեդանը և իր թոռնիկի անունը կնքեց Դավիթ՝ իր պապի և տղայի անունով։

ԹՈՌՆԻԿԻ ԵՏԵՎԻՑ

Յոթ տարի Ասատուրը Ստեփանի հետ կառավարեց կոլխոզի հոտը։ Այնուհետև նա չկարողացավ սար բարձրանալ։

Ծերացել էր նաև Քաֆրը։ Հովիվը նրան գամեց իր դռանը և սկսեց կարոտով նայել անցած ճանապարհներին։ Աստիճանաբար նրա շրջագայության սահմանները նեղացան։ Ամենահեռավոր տարածությունը որ կտրում էր՝ իր տնից մինչև գյուղի ջրաղացներն էին։ Մեկ-մեկ՝ գնում-նստում էր ջվալների վրա կամ ջրաղացների առաջ և զրուցում էր այնտեղ եկող-գնացողների հետ։ Երբեմն էլ գնում էր դընգ, ուր Բայազը կորկոտ ու ձավար էր ծեծում կոլխոզնիկների համար և ուշադիր դիտում էր իր ժրաջան պառավի եռանդուն աշխատանքը։

Խոդեդանը ծերացել էր։ Այն մարդը, որ Մոտկանի կապույտ լեռներն ու Սև սարը ոտքի տակ էր տվել, այժմ կուչ էր եկել իր հողաշեն խրճիթի պատի տակ, արևոտ բակի մեջ։ Նրա ականջները ծանրացել էին, աչքերը գնալով խավար էին տեսնում։

Այդ օրերին վրա հասավ մի ծանր հարված ևս, որ ավելի խարխլեց ծերունու առողջությունը։ Ագարակում հանկարծակի մեռավ իր աղջիկը՝ Հեղինեն։ Դավիթը որբ մնաց մոր կողմից։

Աղջկա մահը իմացել էին Իրինդում, բայց աշխատել էին թաքցնել հորից, նրան հանկարծակաև հարված չհասցնելու համար։

Այդ դժբախտ լուրն առնելուց հետո Ասատուրը պատրաստություն տեսավ Ագարակ մեկնելու։ Փեսան՝ Զորերու Երվանդը, օրն ի բուն զբաղված էր հասարակական աշխատանքներով։ Նա ժամանակ չուներ հետևելու որդու խնամքին։

Խոդեդանը և Բայազը խորհուրդ արին և որոշեցին թոռնիկին

Ագարակից Իրինդ տեղափոխել ու մեծացնել իրենց հսկողության տակ։ Մեկնելու օրը Պետրոս Թաղվեցին մի երիվար տվեց Ասատուրին, բայց ծերունին ձին ետ դարձրեց, ասելով՝ թե սիրում է ոտքով գնալ։

Բայազը նրա համար հաց թխեց և եկավ մինչև Հինդ Ռանչպարի ձորը՝ ճանապարհ դնելու։ Ջորում Խոդեդանը ասաց Բայազին.

— Գնում եմ Դավթին բերեմ, կնիկ։ Վաղը ես էլ, դու էլ մեռնելու ենք։ Թող Դավիթը կանգնի մեր տան գլուխ ու մեր գերդաստանի ծուխը շարունակի։ Ինչպես քեռի Թորոսիկը Սասունից Կաղզվան գնաց Մհերին բերելու, էդպես էլ ես կէրթամ Ագարակ իմ մանուկի ետևից։

Եվ նրանք այդ արևոտ հովտի մեջ կանգնած, արտասուքով հիշեցին իրենց սիրելի Հեղինեին, այն գեղեցիկ աղջկան, որ եղել էր իրենց միակ սփոփանքն ու մխիթարությունը։

Ակամա նրանք վերհիշեցին քավոր Տոնեի գովաբանական խաղը իրենց հարսանիքին։ Նրանց ծեր ականջներին հնչեցին ծանոթ երգի վերջին բառերը.

Խաղողի ուռ կոճակ կապեր,
Պըտկեք դուք էլ դըրա նըման։

Գոզի ծառեր պտուղ կախեն,
Պըտղեք դուք էլ դըրանց նըման։

Արինոքի հարսանիքն անցավ։ Նրանք ծաղկեցին այդ երգում հիշատակված բոլոր ծաղիկների ու ծառերի պես։ Սակայն ո՞րքան անողորմ եղավ ճակատագիրը։ Ոչ մեկը չմնաց իրենց զավակներից, իրենց այդ քաղցրիկ պտուղներից։

— Գնաս բարի,— ասաց Բայազը արտասվալից նայելով Խոդեդանի աչքերի մեջ։— Առ էս շորը, լավ փաթաթիր թոռնիկին, որ ճամփին չմրսի։ Այս ասելով պառավը մեջքից արձակեց բրդյա կարմիր շալը և տվեց ամուսնուն։

Բայազը ետ դարձավ, իսկ Ասատուրը ձեռնափայտը բռնած ընթացավ առաջ։ Նրա ետևից գնում էր Քաֆքրը։

Գնում էր Խոդեդանը և ճանապարհին մտածում էր աշխարհի

և իր կյանքի վրա։ Որքա՜ն ճանապարհներ էր կտրել այդ հովիվը։ Քանի՜-քանի՜ հեռավոր վայրեր էր տեսել նա։ Սակայն այդ բոլոր ուղիները ավարտվել էին, անցել էին դրանց հետ կապված բոլոր տենչանքներն ու երազանքները։ Մնացել էր մի վերջին մխիթարություն և մի վերջին շավիղ իր առաջ։ Դանդաղ, գրեթե ճիգ դնելով իր ոտքերի վրա, ընթանում էր նա այդ արահետով՝ աչքերը հառած այդ նվիրական կետին։

Վիթխարի ձորի պռունկներին հատնելով՝ ծերունին ու պառավը ինքնաբերաբար շուռ եկան և հեռվից իրար նայեցին։ Ձեռքերը խաչաձև ծոցի մեջ դրած կանգնել էր Բայազը անդունդի եզրին և նայում էր Ասատուրի ետևից, որի ուսի վրա կարմրին էր տալիս բրդյա թանձր շալը։ Քիչ անց երկուսն էլ չքացան միմյանց տեսադաշտից և ծածկվեցին բլուրների ետև։

Խոդեդանը անցավ Վերին Սասնաշենը և մի կանաչ ձորակ իջնելով սկսեց ելնել դեպի Վերին Բազմաբերդ։

Ձորակի լանջի վրա, արտի եզրին նստած էր մի ալեզարդ ծերունի։ Նստած էր նա մի թմբի, սաստունցու նահապետական տարազի մեջ և, լռությամբ ծխելով, նայում էր դեպի արևմուտք։ Մեղմիկ հովից ցորենի հասկերը գալիս շոյում էին նրա ուսերը և ետ դառնում։

— Բարև, քեռի Թամո,— հուշիկ մոտենալով ողջունեց Ասատուրը։

— Բարին եղնի արևդ։ Դո՞ւ ես, Խոդեդան,— հանգիստ պատասխանեց ծերունին, ուրախանալով իր բարեկամի անակնկալ հանդիպման համար։

— Ծովասարի կո՞ղմ կիշես,— յուրովի նկատեց հովիվը, շանը կանգնեցնելով։

— Աչքս միշտ էն սարերի կողմն է։ Էս գիշեր մի զարմանալի երազ տեսա։ Գնացել էի Ճախրական։ Մոտեցա Դավթի ջաղացին։ Տեսնեմ դուռը բաց է ու մեծ-մեծ մորուքավոր խծանք լիքը պարկերով ել ու մուտ են անում։

— Դուք ո՞վ եք,— ասացի։

— Մենք Դավթի էծերն ենք,— պատասխանեցին նրանք։

— Ո՞րտեղից ես գալիս,— հարցրի նրանցից մեկին։

— Ընկուզնակից։

— Դո՞ւ։

— Հոսնուտից։

— Դո՞ւ։

— Իշխանձորից։

— Ներս մտա։ Տեսնեմ իմ ջաղացը առաջվա պես աշխատում է։ Մի խոշոր մորուքավոր այծ պտտացնում է աժդահա քարը։ Երկու ուրիշը, ետևի ոտներին կանգնած, հատիկը լցնում են ամբարի բերանը։ Երկու մաքի բռնել են պարկը, իսկ մի սպիտակ ծերացած քոսվի ալրատնից ալյուրն առնելով լցնում էր պարկի մեջ։ Ինձ որ տեսան՝ եկան ու փաթաթվեցին իմ վզով, տարօրինակ ձայներ հանելով։ Ուրախությունից ես վեր թռա։ Էս ամբողջ օրը էդ երազի մասին եմ մտածում։ Դաշտադեմցի Գևորգն ասաց, թե բարեգուշակ երազ է։

— Աստված բարին կատարի,— մաղթեց Խոդեդանը։

— Նստիր մի քիչ խոսենք,— առաջարկեց ջրաղացպանը։

Թամոն անտեղյակ էր Աստուրին և Բայազին պատահած դժբախտությանը։

— Թոռնիկի ետևից կէրթա՞ս,— տխրությամբ հարցրեց նա։

— Հա՞, գնում եմ Ագարակ։ Հեղինես մեռավ, Թամո։ Գնում եմ մինուճարիս բերեմ Իրինդ։

Ծերունին ցավ հայտնեց նրան և աչքերը սրբելով՝ ասաց.

— Դու դեռ թոռնիկ ունես, իսկ ես անանուն մնացի աշխարհի վրա։ Ինձանից հետո ճնճղափորիկի տնից երկրի վրա մարդ չի մնում։

— Քանի դեռ մի հատ ջաղացպան կա Հայաստանում, ձեր ազգատոհմը չի մոռացվի,— մխիթարեց Խոդեդանը։ Քոսվիկ Ջալալին ո՞ւր է,— հարցրեց հովիվը։

— Մեր նախագահը հեծել գնացել է սար։ Էն էլ ծերացել է, էն էլ շուտով կմեռնի,— պատասխանեց ծերունին։

Թամոյից բաժանվելով՝ Աստուրը բարձրացավ Վերին Բազմաբերդ և այնտեղից Կաքավաձոր գյուղն իջնելով, դիմեց դեպի Ագարակ։

Հեղինեին գյուղտվեստը թաղել էր դրանից հինգ օր առաջ։ Խոդեդանը գտավ աղջկա գերեզմանը, ընկավ նրա վրա, համբուրեց քարը և շատ արտասուք թափեց։

— Ինչո՞ւ դու մեռար, Հեղին։ Ինչո՞ւ բոլորդ գնացիք ու ոչ մեկը չմնաց ձեզնից,— ցավալի ձայնով հեկեկում էր նա երեսը հողաթմբի տաք քարերին քսելով։

Զորերու Երվանդը, որ դեռ ագում էր սիրելի կնոջ մահը, սաստիկ հուզվեց, տեսնելով պապի սրտացավ վերաբերմունքը Թոռնիկի նկատմամբ։

— Որ դու ոտքով Դավթի ետևից ես եկել, ես քեզ դատարկ չեմ դարձնի, ճոբո,— ասաց նա։— Տար պահիր երեխային։ Եթե որևէ իղձ ունես նրա հետ կապված, թող էդ սուրբ իղձդ կատարվի։

Երկու օրից հետո Աստուրը Թոռնիկին շալակած ընթացավ դեպի Իրինդ։

Ճանապարհին ուղևորները հետաքրքրությամբ կանգ էին առնում և դիտում, թե ի՛նչպես մեջքին մի երեխա կապած և նրա հետ քաղցր զրուցելով, լեռն ի վեր էր ելնում ուժասպառ ծերունին։

Շատերը նրան ճանաչելով հարցնում էին.

— Բարև, Խոդեդան քեռի, էդ ո՞ւմ երեխան է։

— Թոռնիկս է,— հպարտությամբ պատասխանում էր ծերունին ճակատի քրտինքը սրբելով։

— Ո՞ւր ես տանում։

— Իրինդ։

— Տուր մենք տանենք,— ասում էին ոմանք, առաջարկելով իրենց օգնությունը։ Աստուրը բոլորին մերժում էր։

Անցորդները խիստ կարեկցելով, բարի ճանապարհ էին մաղթում նրան, իսկ նա, ոակեբեռը շալակած և շունը ետևից, շարունակում էր իր երջանիկ վերելքը։

Ինչպիսի՜ հույսեր էր կապել ծերունի հովիվը այդ մի հատիկ ժառանգի հետ։ Սերունդ պահպանելու տենչը այրում էր նրա սիրտը։ Նա ուզում էր պահել այդ կենդանի ծիլը, այդ միակ կանաչ ընձյուղը Զորո տան ամբողջ գերդաստանից։ Համառ ծերունին ուզում էր վերականգնել բռնությամբ և անիրավությամբ կործանվածը Սովետական Հայաստանի երջանիկ հողի վրա։

Մութ էր, երբ բակի մեջ երևաց Խոդեդանը՝ Թոռնիկը շալակին։ Բայազը քակեց կարմիր շալը և մանկանը իր բացված թևերի մեջ առավ։

ԿՈՐԾԱՆՎԱԾ ՏՈՀՄԻ ՓԱՌՔԸ

Երեխայի խնամքը Աստուրը հանձնեց Բայազին և Ոսկեհատին, պատվիրելով աչքի լույսի պես պահել նրան։

Խոդեդանը արևոտ օրերին նստում էր բակի մեջ և խաղում էր թոռնիկի հետ։ Նայելով նրան ծերունին հրճվում էր, տեսնելով թե ի՛նչպես իր աչքերի առաջ կանաչում էր իր աշխատավորական տոհմի կործանված փառքը։

Անցան տարիներ։

Դավիթը մեծանում էր։ Նա հաճախում էր դպրոց և արդեն սովորել էր գրել-կարդալ։ Շատ էր ուրախանում ծերունի հովիվը, տեսնելով իր թոռան առաջադիմությունը։ Նա Ագարակից բերել էր այդ մանուկին, որ օգտակար մարդ պատրաստի հայրենիքի համար։ Աստուրը ուզում էր, որ Դավիթը չմոռանար այն երկիրը, որտեղից ինքը բռնությամբ դուրս էր վտարվել, և ուր ապրել էին իր պապերը հարյուրավոր սերունդներով։ Ամեն անգամ, երբ ծերունին որևէ կենաց էր խմում, նա անողոք հայացքով նայում էր թոռան աչքերի մեջ և, իբրև կանոն, բացագանչում էր. «Գացի Մո՞ւշ»։

«Խմածդ անո՞ւշ»,— պարտավոր էր անմիջապես արձագանքել զգաստ պատանին՝ ոտքի կանգնելով։

Մի առավոտ Խոդեդանը շատ վաղ արթնացավ և ձեռնափայտը առնելով գնաց գյուղամիջով։ Նա անցավ կիսափուլ վանքը, մոտեցավ կոլխոզի դրասենյակին և նկատելով, որ նախագահը ներսումն է, կամաց դուռը բաց արավ։

— Պետրոս,— ասաց ծերունին,— մի խնդիր ունեմ քեզ։

— Ի՞նչ կա, քեռի Աստուր,— ոտքի կանգնելով հարցրեց նախագահը, զարմանալով նրա անակնկալ հայտնվելու վրա։

— Դու չես հիշում, բայց ես հիշում եմ, լաո։ Փոքրիկ էիր, պարանը ձիգ տվեցի ու անդունդի բերնից հանեցի քեզ։ Հիմա դու ինձ օգնիր, լաո։ Անդունդի պոկին եմ ու իմ մեջքին չվան չկա։ Ես առանց ոչխար մեռած եմ։ Գիշերները քունս չի տանում։ Մի ճար արա, Պետրոս։

— Դու ծերացել ես, քեռի Խոդեդան, աչքերդ մժել են։ Քեզ հիմա հանգիստ է պետք,— ասաց նախագահը։

— Ինձ հանգիստ հարկավոր չէ։ Ես որ պարապ նստեմ, կմեռնեմ։ Սար ելնել չեմ կարող, բայց գյուղի մեջ կարող եմ աշխատել։ Ինձ մի գործ տուր։

— Ի՞նչ ես ուզում։

— Դու մեր բակը գիտես։ Արի թույլ տուր, որ կոլխոզի ղոչերը գիշերները իմ բակի մեջ մղլեն,— առաջարկեց Աստատուրը։

— Ո՞վ կպահե ղոչերին։

— Իմ թոռնիկը։ Ցերեկները նա կպահի, գիշերները՝ ես։

— Լա՜վ, քեռի Խոդեդան, քո խնդիրը հարգված է,— ասաց Պետրոս Թաղվեցին։

Աստատուրը գլխարկը դրեց, մոտեցավ շեմքին և ուզում էր դուռը բանալ, երբ մի բան հիշելով՝ ետ դարձավ։

— Պետրոս,— ասաց նա,— մի խնդիր էլ ունեմ։ Կոլխոզի շներին լավ պահեք, լաո։ Մեծ ֆերմա է։ Շներին կաթ է պետք, շներին ամեն օր հաց ու միս է պետք։ Լավ շունը ոչխարի կեսն է։

Այս ասելով, Խոդեդանը դուրս եկավ գրասենյակից։ Նախագահը գոհունակությամբ նայեց ծերունի հովվի ետևից, որ այնքան սրտցավ էր դեպի համայնական բարիքը։

Հետևյալ օրվանից կոլխոզի ղոչերը սկսեցին մակաղել Աստատուրի բակում։ Ծերունին մի թախտ էր կապել մուտքի մոտ։ Ամառային գիշերներին նա և Դավիթը միասին քնում էին այդ թախտի վրա։

Քնելուց առաջ պապը մանուկ հովվին նկարագրում էր Սասնո բերդը։ Երբ նա անցնում էր Դավթի քաջագործությունների ճյուղին, թոռնիկը ոգևորվելով թռչում-նստում էր անկողնու մեջ և աչքերը լայն բաց արած, հափշտակությամբ ունկնդրում էր պապին, մեծ-մեծ հիշոցներ տեղալով Մսրա Մելիքի և հիացական բացագանչություններ՝ Դավթի հասցեին։ Դավթի ոսկի շափելու նկարագրության ժամանակ նա իր ձեռքն այնպիսի ուժգնությամբ էր հարվածում օդի մեջ, կարծես այդ բոպեին Դավթի հետ Կոզբադինի գլուխն էր ջարդում։

Առանձին հրճվանքով նա ունկնդրում էր պապի պատմածի այն մասը, թե ի՛նչպես մանուկ Դավիթը ավանակի վրա նստած տրորում է խեղճ պառավի շաղգամի արտը և թե ի՛նչպես պառավը նախատում է նրան դրա համար։ Թոռնիկը լաց էր լինում, երբ պապը նկարագրում էր Դավթի և Խանդութի եղերական մահը և նրանց

շիրիմները, որ իր սեփական աչքով տեսել էր Ճախրական գյուղում։ Իսկ երբ պատմում էր Դավթի վայրենացած հոտի մասին, որ թափառում էր Բերդի անտառներում՝ խառնված Ծովասարի գազանների հետ, մանուկը աչքերի արտասուքը սրբելով՝ ասում էր.

— Բա նրանք տեր չունե՞ն, ճոբո։

— Չունեն, լաո,— պատասխանում էր ծերունին։

Դավթի պատմության զորավոր ազդեցության տակ թոռը խաղաղ ննջում էր պապի ծոցը մտած։ Նրա քնելուց հետո Խոդեդանը երկար ժամանակ մնում էր արթուն և գլուխը բարձին դրած՝ նայում էր բոլորակ լուսնին։ Ոչխարները մինչև ուշ գիշեր լիզում էին նրա մաշված ձեռքերը, ճակատը, հոտոտում էին վերմակը, ոտքերի մատները և նա մեծ բավականություն էր զգում դրանից։

Որոշ օրերին Աստուրը թոռան սովորեցնում էր, թե ի՛նչպես պետք է ոչխարը պահել, ի՛նչպես խնամել նրան, ի՛նչպես աղ տալ, տանել ջրի, լողացնել կամ բուրդը խուզել։ Երբ ծնված գառը չէր շնչում, կամ դժվարությամբ էր շնչում, նա գառան բերանը սրբում էր մաքուր շորով և բերանի մեջ օդ էր փչում։ Եթե ծնված գառը վտիտ էր և չէր կարողանում ծծել, մորը պառկեցնում էր և կաթը կթում էր նրա բերանի մեջ։ Զույգ և որբ գառներին գցում էր կաթնառատ կամ գառ չունեցող մայրերի տակ։ Խորհուրդ էր տալիս վաղ գարնանը հոտը արածացնել գյուղամերձ արոտներում և ապա աստիճանաբար քշել դեպի լեռնային արոտները։ Բուսականությամբ հարուստ վայրերում հոտը պետք է շարժել դանդաղ և նեղ ճակատով, իսկ բուսականությամբ աղքատ արոտներում՝ ավելի արագ և ընդարձակ ճակատով։ Նախազգուշացնում էր, որ անկանոն կերակրման դեպքում, ոչխարները սկսում են իրար բուրդ ուտել, որի հետևանքով կոշտեր են առաջանում նրանց աղիքների մեջ և պատճառ են դառնում մասսայական մահացության։ Այդպիսի դեպքերում հարկավոր է բուրդ ուտող ոչխարներին մեկուսացնել հոտից։

Խոդեդանը զոհությամբ ժպտում էր, երբ լսում էր համայնական նախրի բառաչը և այծերի ու մաքիների ուրախաձայն կանչերը։ Նա վաղուց երազել էր տեսնել աշխարհը կառուցված առանց բեկերի և աղանների և հրճվում էր տեսնելով, թե ի՛նչպես իր աչքերի առաջ և իր մասնակցությամբ կառուցվում ու ամրապնդվում էր այդ երանելի կարգը։

Երբ իր առվտնոցը սկսում էր ծաղկել, Աստուրը վերցնում էր գերանդին ու փոցխը և անցնում էր տան ետև։ Նա աշխատում էր մինչև արևը մայր էր մտնում, մինչև կոլխոզի հոտը գալիս էր տուն։

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Սկսվել էր Երկրորդ համաշխարհային պատերազմը։ Թալինի շրջկենտրոնում մեծ փոփոխություններ էին կատարվել։

Ռազմաճակատ էին մեկնել միլպետ Արամայիս Զատիկյանը, սպառկոոպի նախագահ Բագրատ Երանելին, փոստի կառավարիչ Անուշավանը և ֆինմասի լիազոր Հազարապետը։

Պատերազմ էին գնացել նաև Կաթնաղբյուրի ուսուցիչ Արամ Խնկոյանը, կուսշրջկոմի քարտուղար Գուրգեն Հայկազունին, կոմսոմոլի հրահանգիչ Ռուբեն Այվազյանը, պիոներ բյուրոյի նախագահ Աշոտ Խաչիկյանը և շատ ուրիշներ։

Ռազմական բարձրագույն կրթություն ստանալու համար Մոսկվա էր մեկնել նաև բատրակկոմի նախագահ Աբո Համազասպը, որ քսանհինգ տարի աշխատել էր այդ շրջանում։

Համազասպը Մոսկվա մեկնելիս անցել էր Աշտարակի շրջանով։ Նա մեկ շաբաթ հյուր էր եղել այդ գավառակի Ավան գյուղում՝ Շինական Պողոսի մոտ։ Պողոսը, որ Աբո Համազասպի հետ ծանոթացել էր Հեղինեի հարսանիքին, նրան մանրամասն պատմել էր Տավրոսի՝ իր եղբոր որդու անհայտացման ցավալի դեպքը։

— Նրա երեսի վրա մի բոլորակ սպի կա,— ասել էր Շինական Պողոսը։

Մոսկվայում սովորելով Համազասպը հաճախակի վերհիշում էր Թալինի շրջանը և այնտեղ անցկացրած աշխատանքային եռուն տարիները։ Այդ պահերին նրա աչքերի առաջ կանգնում էր Խոդեդանի և Բայազի խաղաղ տնակը, որի առաստաղի տակ նա անց էր կացրել մի անմոռանալի գիշեր։ Համազասպի ականջին հնչում էին բատրակների հավաքին, տաճկահայերի համագումարին և կոլխոզի կազմակերպման առիթով Աստուրի արտասանած նշանավոր ճառերը։

Բատրակկոմի նախագահն ապրում էր քաղաքի կենտրոնում։

Նա հաճախ տեսնում էր, թե ի՛նչպես մի երիտասարդ հայ նկարիչ, գրեթե յուրաքանչյուր օր, Մարոսեյկա փողոցից դուրս գալով, ընթանում էր դեպի Կարմիր հրապարակ։ Միակ բանը, որ նրան զանազանում էր մայրաքաղաքի միջավայրից, այդ այն էր, որ այդ երիտասարդը շրջապատի համեմատությամբ խոսում էր բարձրաձայն և քայլում էր զգալի փութկոտ։

Շուտով Մոսկվայում բացվեց այդ երիտասարդ նկարչի անդրանիկ ցուցահանդեսը։ Աբո Համազասպը առաջին այցելուներից մեկը եղավ։ Նրա առաջ ներկայացավ մի զարմանալի հետաքրքիր պատկերասրահ։ Կտավների վրա խոյանում էին հսկայական կաղնիներ՝ խոռոչավոր փչակներով, սաղարթախիտ ընկուզենիներ՝ հովիտների վրա կռացած, լեռնագոչ աղբյուրներ՝ հակինթյա ջրերով, և բոցավառ խարույկներ, որոնց կրակը ցոլանում էր մինչև երկինք։ Նկարներից մեկը կոչվում էր «Դավթի քար»։ Երկրորդ նկարի տակ գրված էր «Զարբհորի կամուրջի վրա»։ Ահա և ուրիշ նկարներ. «Քեռի Վալոդը», «Ալաշկերտի դաշտում», «Սև գոմեշը» և այլն։

«Այս նկարների հեղինակը այն մանուկն է, որը անհետացել է 1916 թվին»,— ինքն իրեն ասաց Աբո Համազասպը և ցուցահանդեսից դուրս գալով անմիջապես դիմեց դեպի այն տունը, որ գտնվում էր Մարոսեյկա փողոցի վրա։ Դա առաջը փոքրիկ բակով մի առանձնարան էր, որ հիշեցնում էր ռուսական ազնվական հինավուրց կալվածներից մեկը։ Նա սեղմեց էլեկտրական կոճակը։ Դուռը անմիջապես բացվեց։ Երիտասարդ արվեստագետը նրան դիմավորեց շեմքի վրա։

«Նա է»,— հաստատորեն եզրակացրեց բատրակկոմի նախագահը, երիտասարդի աչ այտին մի բոլորակ սպի նկատելով։

— Ներեցե՛ք, դուք այն մանուկը չե՞ք, որ կորել է Զարբհորի կամուրջի վրա։

— Այն եմ,— պատասխանեց նկարիչը վերհիշելով իր մանկության ամենատխուր օրերից մեկը։— Իսկ դուք ո՞րտեղից գիտեք իմ կյանքի պատմությունը,— զարմացած հարցրեց արվեստագետը։

— Ձեր հորեղբոր պատմածից։

— Մի՞թե նա ողջ է,— բացագանչեց նկարիչը։

— Ձեր բոլոր ազգականները ողջ են և ապրում են Աշտարակի շրջանի Ավան գյուղում,— ասաց Աբո Համազասպը։

Հավաստի տեղեկություններ քաղելով իր հարազատների ողջության մասին, Տավրոսը սաստիկ հուզվեց և, Համազասպին հրավիրելով ներս, հակիրճ շարադրեց իր անհայտացման տխրալի պատմությունը։

— Զարբհորի կամուրջը,— ասաց նա,— շինված էր Արածանու վրա և շրջապատված էր ծառերով ու ծաղիկներով։ Այդ կամուրջին մոտենալիս, հորեղբայրս ինձ շալակեց, որ ես գետի մեջ չընկնեմ։ Մեր շորերը և անկողնու մի մասը, որ դրված էին քեռի Ասատուրի բարձկանին, կամուրջի վրա փուլ եկան։ Հորեղբայրս ինձ վայր առավ, որ բեռը կապեր։

Գիշեր էր։ Մեր մոտով շատ մարդիկ էին անցնում։

Երբ կամուրջի ճաղերին հենված նայում էի գետի ալիքներին, ուղևորներից մեկը ինձ իր շալակն առնելով՝ տարավ այդ բազմության հետ։ Ես կարծեցի թե նա իմ հորեղբայրն էր, ուստի, հոգնած լինելով, անմիջապես քնեցի նրա մեջքին։ Երբ աչքս բացի՝ ինձ գտա մի լայն կողովի մեջ, որ կախված օրորվում էր մի ծերացած գոմեշի աջ կողի վրա։ Գոմեշը աջ ու ձախ արածելով առաջ էր գնում։ Այդպես ես անցա Ալաշկերտի դաշտը։ Մի քանի տեղով անասունը նստեց, որ հանգստանա, բայց ես վախենում էի կողովից ցած իջնել։

Երեկոյան դեմ ճանապարհով մի ռուս ձիավոր անցավ, պայուսակը մեջքին և հրացանը թևը գցած։ Իմ լացի ձայնը լսելով, նա ետ դարձավ և ինձ վերցնելով դրեց թամբին։

Մենք ծանոթացանք։ Նրա անունը Վալոդ էր։ Թամբի վրա մենք մի պահ զարմացած նայեցինք իրար։ Պարզվեց, որ դա այն միևնույն զինվորն էր, որին ես տեսել էի Դաշտադեմում՝ քեռուս տան մոտ։ Նա հիշեց այն ծաղիկները, որ ես շարել էի իր զինվորական գլխարկի վրա։ Շատ ուրախացավ քեռի Վալոդը ինձ գտնելու համար և որդու պես սեղմեց կրծքին։ Նա ինձ հաց ու ջուր տվեց և առավ շինելի տակ, որ չմրսեմ։ Քեռի Վալոդը, ինչպես երևում էր, ծանոթ էր այդ վայրերին և ինձ հետ մեկ-մեկ հայերեն էր խոսում։ Երևի նոր էր սովորել։ —Իշի՛ր, հասանք Սարիղամիշ,— ասաց քեռի Վալոդը ձիուց ներքև թռչելով։ Այդտեղ էր, որ ես առաջին անգամ գնացք տեսա և սարսափած սկսեցի փախչել։ Քեռի Վալոդը հաղիվ կարողացավ բռնել։

Սարիղամիշից մենք եկանք Ղարս, իսկ այնտեղից էլ՝ Ալեքսանդրապոլ։

Այդ քաղաքի հարավ-արևմտյան մասում կար մի զորանոց։ Այնտեղ շատ ռուս զինվորներ էին ապրում։ Բոլորն էլ շեկ էին և շատ նման էին քեռի Վալոդին։ Ամեն երեկո նրանք հավաքվում էին իրենց վրանների առաջ և գարմոն էին նվագում։ Տեսնելով, որ զորանոցի պայմաններում հնարավոր չէր ինձ պահել, քեռի Վալոդը մտածեց մի ելք գտնել։

Զորանոցի մոտ կար մի մանկատուն, որի դարբասը բացվում էր փողոցի վրա։ Մի կիրակի քեռի Վալոդը ինձ այնտեղ տարավ։ Մանկատան բակում խաղում էին շատ երեխաներ։ Բոլորի մազերը խուզված էին և ամենքն էլ միատեսակ էին հագնված։ Հենց որ քեռի Վալոդը ինձ շալակած ներս մտավ, նրանք իսկույն շրջապատեցին մեզ։ Մանուկները զարմացած ինձ էին նայում։ Ոմանք քաշում էին իմ հագի ուլի փոստից, կարծելով, թե ես սարից բռնված վայրենի եմ։ Քեռի Վալոդը կանչել տվեց մանկատան կառավարչին և ինձ նրան հանձնելով՝ պատվիրեց լավ խնամել։

— Սա իմ տղան է,— ասաց քեռի Վալոդը հայերեն։

— Ո՞րտեղից գտաք,— հարցրեց մանկատան կառավարչուհին, որ մի երիտասարդ կին էր։

— Բասենի դաշտում, մի գոմեշի վրա։ Թող էստեղ ապրի։ Ես նրան հետո Ռուսաստան կտանեմ,— ասաց քեռի Վալոդը և մի կտոր շաքար տալով ինձ ու ինչ-որ բան շշնջալով կառավարչուհու ականջին՝ հեռացավ։

Մանկատանը իմ գլուխը խսկույն խուզեցին և ինձ ուղարկեցին լողանալու։ Սովորական տաք ջուրը խաշեց իմ մարմինը և ես ճչալով դուրս փախա ցնցուղի տակից։ Մանավանդ շատ լաց եղա, որ բաղնիքում գտնված ժամանակ իմ ուլենու ելակը և բոլոր շորերը վառել էին։ Ինձ նոր հագուստ տվեցին և խառնեցին մյուս երեխաների հետ։ Ամեն շաբաթ օր քեռի Վալոդը այցելությունն էր գալիս և յուրաքանչյուր անգամ որևէ ուտելիք էր բերում ինձ համար։

Մանկատան բոլոր երեխաները արդեն ճանաչում էին քեռի Վալոդին։ Երբ նա դարբասից ներս էր մտնում, բակի այս ու այն կողմից բացագանչում էին. «Տավրոս, շեկ պապադ եկավ»։

Քեռի Վալոդը մեր մանկատան երեխաներին շատ էր սիրում։

Երբեմն գալիս էր ընկերներով և մինչև ուշ երեկո գարմոն էր նվագում նրանց համար։

Մի առավոտ շատ վաղ քեռի Վալոդը մեր մանկատուն եկավ։

— Գնում ենք Մոսկվա,— ասաց նա և ինձ արագ շալակելով՝ գնաց կառավարչուհու մոտ։

— Ո՞ւր եք տանում մեր երեխային,— հարցրեց կառավարչուհին։

— Մոսկվա,— ուրախացած պատասխանեց իմ խնամակալը և շնորհակալություն հայտնելով ու նրա ձեռքը սեղմելով, դուրս եկավ բակից։ Փողոցով շատ զորքեր էին անցնում։ Նրանք գալիս էին հարավից և երգելով գնում էին դեպի հյուսիս։ Ռուսաստանում հեղափոխություն էր եղել։ Բանվորներն ու գյուղացիները տապալել էին ցարին և հաստատել սովետական իշխանություն։ Ռուսական զորքերը ճակատներից ետ էին դառնում։ Զորանոցները դատարկվում էին։ Քեռի Վալոդը միացավ մի ծանոթ զորամասի և նրանց հետ ուժգին երգելով ընթացավ դեպի հյուսիս։

— Շուտով մենք հասանք Մոսկվա։ Պատկերացրեք իմ վիճակը։ Մի վայրի, անմարդաբնակ անտառից հանկարծ ընկնում եմ աշխարհի ամենամեծ քաղաքներից մեկը։ Թե ինչո՞ւ էր քեռի Վալոդը ինձ Մոսկվա բերել, այդ ես իմացա հենց նույն օրը։

Դրանից ամիսներ առաջ, դեռևս Ալաշկերտի դաշտում, Վալոդը նամակ էր ստացել Մոսկվայում ապրող իր տատիկից։ Նրա տատը, որ մի բարի ռուս կին էր, հանգանակության օրերին մեծ միջոցներ էր տրամադրել օսմանյան կոտորածներից տուժած հայ փախստականներին օգնելու համար։ Նա այդ մասին նամակով հայտնել էր քեռի Վալոդին և խնդրել, Մոսկվա գալու ժամանակ մի հայ երեխա բերել՝ իբրև որդեգիր պահելու։ Երբ քեռի Վալոդը ներս մտավ, տատիկը, որին Նատալիա Պետրովնա էին ասում, ուրախությունից ինձ իր գիրկն առավ և, լսելով իմ պատմությունը, դառնորեն արտասվեց։ Վալոդը պատվիրեց, որ ինձ միայն սառը ջրով լողացնեն և կերակրեն գլխավորապես սնկեղեն կերակուրներով ու կաթնեղենով։

— Ես հենց այդպիսի մի սասունցի տղա էի ուզում,— ասաց Նատալիա Պետրովնան։

— Իսկ ինչո՞ւ անպայման սասունցի,— հարցրեց բատրակոմի նախագահը,— ընդհատելով նրա պատմությունը։

— Թե ինչու անպայման սասունցի, այդ էլ կապված է անհետ կորած այն դժբախտ մարդու հետ, որի պատկերը դուք կարող եք տեսնել պատին։

Բատրակկոմի նախագահը շուռ եկավ։ Ուղիղ իր դիմաց, մի մաշված շրջանակի մեջ երևում էր շեկ, փոքրիկ մորուսով մի մարդու նկար։ Ոչ միայն շրջանակն էր մաշված, այլև ամբողջ պատկերը խունացած էր։

— Ո՞վ է,— զարմացած հարցրեց Աբո Համազասպը։

— Դա մի ռուս ճանապարհորդ է, որ ապրել է տասնյոթերորդ դարի երկրորդ կեսում։

— Անո՞ւնը։

— Աֆանաս Զուբով։ Այդ մարդը եղել է այս տանն ապրող Զուբովների տոհմի հիմնադիրը։ Այդ տոհմի վերջին շառավիղն ես Նատալիա Պետրովնան և իր թոռնիկ քեռի Վալոդը։

— Ե՞րբ է կորել նա։

— Աֆանաս Զուբովը մեկն էր այն ռուս հանդուգն ճանապարհորդներից, որ երիտասարդ հասակում գնացել է Աֆրիկա։ Աֆրիկայում, գլխավորապես Հաբեշստանում, երկար տարիներ ապրելուց հետո, նա Հալեպի վրայով բարձրացել է Սասունի լեռները և այլևս չի վերադարձել։ Նրա հետագա ամբողջ պատմությունը ծածկված է հավիտենական խավարով։

— Իսկ ինչո՞ւ է գնացել Սասուն։

— Որպեսզի ուսումնասիրեր քրդացած հայերի կենցաղն ու լեզուն։

Ահա այս անհետ կորած խիզախ ճանապարհորդն է պատճառը, որ Նատալիա Պետրովնան սասունցի մի մանուկ էր պահանջել իբրև որդեգիր։

Անցան տարիներ։ Ես սկսեցի մեծանալ այն տանը, ուր մենք հիմա նստած ենք։

Նատալիա Պետրովնան և քեռի Վալոդը իմ մեջ նկարչական ձիրք նկատեցին և սկսեցին հետևել իմ զարգացմանը։

Վաղ մանկությունից իմ վրա խոր ներգործություն էին արել մեր գյուղի անտառները, լեռները և մարդիկ։ Վերջիններիս, այսինքն մեր գյուղի բնակիչներին ես պարզ չէի հիշում, բացի իմ հորից, որի դիմագծերից ոմանք զորեղ առկայծում էին իմ հիշողության մեջ։ Իսկ առարկաները և շրջապատող բնությունը ավելի

խորն էին դրոշմել իրենց պատկերը իմ հոգու վրա։ Բոլորի մեջ ամենազորեղն ու անմոռանալին Սև սարն էր։ Ես հիշում էի այդ լեռան վրա եղած նշանավոր վայրերը. Յոթնակնանի աղբյուրը, Դարավոր կաղնին, մանավանդ սավդոսկը, որ այնքան առատորեն ծաղկում էր Արինոքի ձորում։

Ահա այսպես էր, որ ես անհետացա Զարբհորի կամուրջի վրա և կորցրի հարազատներիս,— իր պատմությունն ավարտեց Տավրոսը։ Բայց թե ո՞վ է եղել իմ անհայտացման պատճառը, այդ բանը մինչև հիմա առեղծված է ինձ համար,— ավելացրեց նա։

Երիտասարդ նկարչի ցուցահանդեսի հաջողությունն այնքան մեծ էր, որ նա որոշեց այցելել իր հարազատներին և նկարներ անել նրանց սովետական շրջանի կյանքից։

Մեկնելու օրը նրա մոտ եկավ Աբո Համազասպը։ Նա զինված էր։

— Գնո՞ւմ եք։

— Այո։

— Իսկ ես մեկնում եմ ռազմաճակատ։

Նրանք ձեռք թռթվեցին իրար հետ։

— Խնդրում եմ մանրամասն նկարագրեցեք ձեր ճանապարհը,— ասաց Համազասպը։ Այն մարդիկ, որոնց դուք հանդիպելու եք ձեր ուղևորության ընթացքում՝ հարազատ են ինձ։ Սիրով կուզենայի վերադարձիս նրանց հետագա պատմությունը կարդալ։

— Ես այդ պատմությունը կշարադրեմ բոլորիս համար,— պատասխանեց Տավրոսը։

ԱՅՑ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ

«1942 թվականին ես Մոսկվայից եկա Երևան։ Նույն տարվա ամռանը, մի կիրակի, իմ նկարչական պայտասակը վերցնելով ուղևորվեցի դեպի Ավան։ Ճանապարհի աջ ու ձախ կողմերում ծփում էին լեռնային հրաշագեղ արտերը ոսկենկար տեսարաններով։ Դեմից փչում էր Աշտարակի այգիների արբեցնող բուրմունքը։

Իրիկնապահին մտա Կոշ։ Ես անցա կոլխոզային այդ հռչակավոր գյուղի միջով և ընթացա դեպի լեռները։

Համայնական նախիրը գյուղ էր մտնում, երբ հասա Ավան։

Այդ գյուղը գտնվում էր Արագած լեռան հարավային լանջին, մի հովասուն բարձրավանդակի վրա։ Նրա միջով անցնում էր մի կանաչ ձորակ։

Նորակառույց դպրոցի մոտ խաղում էին մի քանի մանուկներ։ Իմանալով, որ ես Շինական Պողոսին եմ ուզում, նրանք իսկույն վերցրին իմ ճամպրուկը և ինձ առաջնորդեցին դեպի մի քարաշեն խրճիթ, որ գտնվում էր գյուղսովետի գրասենյակի դիմաց։ Քարքարոտ բակում, ձեռնափայտին հենված կանգնել էր մի հաղթանդամ ծերունի։

— Աչքդ լույս, Պողոս ամի,— Տավրոսն է եկել,— բացագանչեցին այս ու այն կողմից։ Այդ կանչերը լսելով, ծերունին նորից նայեց իր չորս կողմը, կարծես ստուգելու համար թե ո՞րտեղից են այդ պատիր ձայները գալիս։

Ես մոտեցա նրան։ Նա անշարժ կանգնած էր իր տեղում և լայն, չռած աչքերով նայում էր ինձ։ Ես մեծացել և անճանաչելի փոխվել էի։ Այն նախշուն ուլի փոստից հետք անգամ չէր մնացել։

Ծերունին զարմանքից գդակը հանեց։ Ես նույնպես հանեցի իմ գլխարկը նրա հանդեպ։ Նա բոլորովին սպիտակել էր։ Երազի պես հիշում էի հորս դիմագծերը։ Այո, այդ նա էր, իմ հորեղբայրն էր կանգնած բակում։

— Տավրոս, դու եկա՞ր,— մրմնջաց նա բազուկների մեջ առնելով ինձ։— Մենք քեզ շա՜տ փնտրեցինք Զարբհորի կամուրջի վրա։

Դեռ չէի նստել, երբ չորս կողմից վրաս թափվեցին կանայք ու աղջիկներ, ծեր ու ջահել տղամարդիկ և սկսեցին համբուրել ինձ։ Իմ հորեղբոր կինը՝ Աղրութը, որ այդ ժամանակ կով էր կթում ներսում, այնպես էր շտապել, որ վազելիս շուռ էր տվել կաթով լի ամանը։

— Աչոք լոստք լինի,— Պողոս ամի,— ասում էին նորանոր մարդիկ և շարվում իմ շուրջը։

Ես նրանցից գրեթե ոչ ոքի չէի ճանաչում։ Գիտեի միայն, որ դրանք բոլորը իմ ազգականներն ու համագյուղացիներն էին, որ կորցրել էին ինձ 1916 թվականին, գաղթի ճանապարհին, վեց-յոթ տարեկան հասակում և այժմ գտնում էին ինձ քսանվեց տարի հետո, երեսուներկու տարեկան հասակում։

Ավանում ես ապրեցի մեկ շաբաթ։ Այդ գյուղը բաղկացած էր հարյուր հիսուն տնից։ Բնակիչների մեծ մասը սասունցիներ էին։ Կային նաև վերաբնակվածներ Մուշի, Խնուսի և Ալաշկերտի շրջաններից։

Բռնաշենցոց թաղը գտնվում էր գյուղի արևելյան մասում։ Այնտեղ ես տեսա քեռիներիս, որոնք կազմել էին բազմամարդ ընտանիքներ։ Ըստ սովորության նրանք իրենց տները շինել էին գյուղի ծայրամասում և հովանավորել ընկուզի ծառերով։ Օնեի թոռները հասուն երիտասարդներ էին դարձել և կառավարում էին գյուղը։

Ավանում ես միշտ լինում էի իմ հորեղբոր հետ։ Նա ուներ երկու տղա, որոնցից մեկը բանակ էր գնացել, իսկ մյուսն աշխատում էր որպես կոլխոզի բրիգադիր։ Երկուսն էլ ամուսնացել էին և կազմել ընտանիքներ։

Շինական Պողոսը, որ եղել էր այդ գյուղի հիմնադիրներից մեկը և համարվում էր շրջանի լավագույն սերմնացանը, պահակություն էր անում կոլխոզի կալում։ Ազատ ժամերին մենք միասին շրջում էինք գյուղից դուրս։ Լինում էինք Կոշի մեծ առվի վրա, որի ջրերը քշքշալով իջնում էին Արագածի լանջերից։ Մտնում էինք այդ առվի վրա շինված ջրաղացները, որ կոլխոզի սեփականությունն էին կազմում։ Թափառում էինք այդ գյուղի հնագարյան բերդի շուրջը, զնում-հասնում էինք մինչև Կուզ-Մամե կոչվող ժայռը, որ մի սապատավոր պառավի նման կռացած նայում էր Կոշ իջնող ճանապարհի վրա։ Այդ վայրերում գեղեցիկ քարափներ կային։ Նստում էինք նրանց հովանիքներում և երկա՜ր, երկա՜ր զրուցում էինք։

Ավան գյուղի արևմտյան կողմում, Կուզ-Մամեից վերև, կար մի հորդառատ աղբյուր։ Կապույտ էր այդ աղբյուրի ջուրը, այդ պատճառով էլ հնուց ի վեր կոչվում էր Կապույտ աղբյուր։ Մի օր, երբ այդ ջրի մոտ նստած նկարում էի հորեղբորս, այնտեղ եկավ մի լայնաթիկունք զինվորական։ Նա հագած ուներ երկարաճիտ փայլուն կոշիկներ և զինվորական աստղազարդ գլխարկ։

Մենք ծանոթացանք։ Նրա անունը Եղնիկ էր։ Վաղ հասակում զրկվելով ծնողներից, նա բնակություն էր հաստատել Իրինդ գյուղում և երկար ժամանակ կառավարել էր այդ գյուղը։ Գնդապետ Եղնիկը նոր էր վերադարձել ռազմաճակատից։ Ծանր վիրավորվել էր Կերչի համար մղված մարտերում և մեկ ամսով եկել էր հա-

բազատների մոտ հանգստանալու։ Նա Ավանով շտապում էր Իրինդ։

Կապույտ աղբյուրի մոտ ես վճռեցի ուղեկից դառնալ նրան։ Երեկոյան, երբ Իրինդ գնալու մասին հայտնեցի հորեղբորս՝ նա ասաց.

— Լավ գյուղ է Իրինդը։ Կէրթաս ու կիջնես Խոդեդանի տունը։ Այդ անունը հարազատ հնչեց ականջիս, բայց չկարողացա մտաբերել, թե ո՛ւմ մասին էր խոսքը։

— Խոդեդանը ո՞վ է,— հարցրի ես։

— Նա քո հոր հետ հովիվ է եղել սարում, լաո։ Նրա տունը գյուղի ծայրին է,— ասաց նա։

Հետևյալ օրը ես և գնդապետ Եզնիկը լեռներով ճանապարհ ընկանք դեպի Իրինդ։ Առաջին գյուղը, որ հանդիպեցինք՝ Մաղդան էր։ Այդտեղի բոլոր բնակիչները սասունցիներ էին, մեծ մասամբ Գելիեգուզան և Հեթինք գյուղերից։ Մաղդայից հետո երկրորդ գյուղը, որ մենք անցանք՝ Դիանն էր։ Դա նստած էր ձորի մեջ գտնվող մի քարափի վրա։ Գյուղի տակը, ձորալանջին, մի պաղ աղբյուր էր հոսում։ Աղբյուրի առաջ երիտասարդ ուռիներ կային, որոնց ստվերում մենք մի փոքր հանգստացանք։

Դիանի նշանավոր ձորից հետո մեր առաջ բացվեց մի առավել անխնդալոր ձոր։ Դա Կաքավաձորն էր։ Ահավոր էր այդ ձորը։ Վերևից նայողին սարսափ էր պատում։ Դեռ գյուղը չմտած՝ մեր առաջ ելավ մի միջահասակ տարիքոտ կոլխոզնիկ։ Նրան կոչում էին սնրդչի Գրքո։ Եզնիկը պատմեց, որ այդ ծերունին Սասունի Ընկուղնակ գյուղացի էր, մշակ էր եղել իր հոր հետ և ժամանակին այցելելով Ճախրական, բժշկել էր Դավթի հիվանդ այծերին։

Այդ պատմության հուզիչ տպավորության տակ մենք հրաժեշտ տվինք Կաքավաձոր գյուղին և սկսեցինք ելնել դեպի Վերին Բազմաբերդ։ Այդ ավանը շինված էր բարձունքի վրա։ Վեցերորդ գյուղը, որ մնաց մեր ներքևում՝ Վերին Սասնաշենն էր։

Կեսօրից անց էր, երբ հասանք Արծվասարին, որի փեշերը կորչում էին Հինգ Ռանչպարի վիթխարի ձորի մեջ։

Մի կանաչ կածան սարի կողերով ելնում էր վեր։ Երբ այդ ճանապարհով դեպի Իրինդ էինք բարձրանում, Եզնիկն ասաց.— սա այն ձորն է, որ մեր անունով կոչեցինք սրանից քսաներկու տարի

առաջ։ Ես էս ձորում ժամանակին շատ կաքավներ եմ որսացել։ Գիտե՞ս ինչքան կաքավ կար էս քարափներում։

Մեր կողքից հայտնվեց ետևից եկող մի երիտասարդ աղջիկ, որ դատարկ կուժն ուսին տուն էր գնում։ Նա վերադառնում էր հնձվորների մոտից։

— Աղջի, դու ո՞ւմ աղջիկն ես,— հարցրեց Եղնիկը։

— Գուլթան Հարությի։

— Դու ինձ հիշո՞ւմ ես։

— Ոչ։

— Ինչպե՞ս թե ոչ։ Իսկ դու գիտե՞ս, թե քեզ հետ ես ինչքան գովանդ եմ խաղացել և կուշտ-կուշտ ծիծաղել...

— Ի՞նձ հետ,— զարմացավ աղջիկը։

— Այո, քեզ հետ։

Հարցուփորձից պարզվեց, որ Եղնիկը գովանդ էր խաղացել այդ աղջկա մոր հետ, երբ նա ջահել հարս էր եղել, իսկ աղջիկն եղել էր օրորոցում։

Խոդեդանի տունը իրոք գտնվում էր գյուղի ծայրին։

Խոդեդանը, որ մի թիկնեղ ծերունի էր, մեջքին կարմիր գոտի կապած, փոցխում էր տնամերձ առվույտը, որ նոր էր հնձել։

— Բարև, քեռի Ասատուր,— ողջունեց գնդապետ Եղնիկը հեռվից։ Ծերունին փոցխը բռնած զարմացած նայեց նրան, չկարողանալով ճանաչել լայնաճակատ սառունցուն։

— Գիտեմ, դու ինձ չես ճանաչի, քեռի Խոդեդան։ Կովից եմ գալիս, շատ եմ փոխվել։ Մի գուցե էս երիտասարդին ճանաչես։ Այս ասելով Եղնիկն ինձ ուղղեց դեպի ծերունին, իսկ ինքը, փայլուն սապոգները շողացնելով կանաչ առվույտի վրա, անհետացավ գյուղի մեջ։

Ասատուրը երկար ժամանակ ուշադրությամբ նայում էր ինձ, չկարողանալով կռահել իմ ով լինելը։ Այդ միջոցին մի պառավ, որ կերակրում էր ուռենու տակ պառկած շանը, մոտեցավ և ուշադիր նայելով դեմքիս՝ գոչեց.

— Տղա, լաո, չլինի՞ դու Դաշտադեմցի Տոնեի տղան ես։

Ես գլխով դրական պատասխան տվի։

— Քա վո՞ւյ, մեռնիմ արևիդ, լաո,— ասաց պառավը գլուխս գրկելով և ջերմությամբ համբուրելով։ Ապա դառնալով Խոդեդանին՝ ասաց.— քավոր Տոնեի կորուկ տղեն է։

— Երեսին կոճակի չափ մի սպի պետք է լինի։ Նայիր տե՞ղն է,— պատվիրեց Աստուրը։

— Տե՛ղն է,— պատասխանեց պառավը, մեկ անգամ էլ ուշադիր նայելով դեմքիս։

Ծերունին իմանալով իմ ով լինելը, սաստիկ հուզվեց և օրհնեց ինձ՝ ասելով.— բարով եկար, լաո։ Քու ողորմածիկ հոր հետ ես շատ հովվություն եմ արել Սև սարում։ Դու էն ժամանակ մի թիզ տղա էիր։

— Լուս դառնա նրա հոգին, լաո։ Քու պապ հանդե Մշու Շեկ ավետարան ժամի կուշտ պառկուկ,— յուրովի ասաց պառավը, խոր հոգոց քաշելով։

— Էն սապոգներով սիրուն տղամարդն ո՞վ էր,— հարցրեց Խոդեդանը, կարմիր թաշկինակը հանելով և սրբելով ճակատի քրտինքը։

— Գնդապետ Եզնիկն է,— ասացի ես։

— Եզնի՞կն է,— զարմացած հարցրեց ծերունին և ավելացրեց. կովի՞ց եկավ։

— Այո,— պատասխանեցի ես։

— Քելե տուն էրթանք, լաո, դադրած ես,— ասաց պառավը, որի անունը Բայազ էր։

ԽՈԴԵԴԱՆԻ ՀԱՐԿԻ ՏԱԿ

Բայազն ու քեռի Խոդեդանը ինձ առաջնորդեցին իրենց կոնաձև խրճիթը, որի երդիկից արևի շողքը ընկել էր թոնրակին։ Շողքի տակ մի կատու, մեջքի վրա պառկած, խաղում էր իր պոչի հետ։ Պառավն իսկույն բացեց թոնիրը և այնտեղից հանեց նոր եփած հարիսան։ Կավե մի խոր պնակի մեջ հարիսա լցնելով՝ դրեցին իմ առաջ։ Բայազը տեղ գրավեց իմ դեմ՝ քուրսու վրա։ Նա մերթ ընդ մերթ փայտե հաստ գգալով յուղ էր ավելացնում՝ ասելով.

— Կե՛ր, լաո, իմ աչքի վրա եկար, բարով եկար։ Երկուսս էլ կոլխոզնիկ ենք, լաո։ Փառք աստծո, դեռ մինչև հիմա կշեռքով հաց կերած չկանք։

Աստուրը լուռ էր։ Նա իր տերողորմյան էր անվերջ քաշում, երբեմն-երբեմն նույն բառերը կրկնելով և ավելացնելով.

— Կե՛ր, լաո, կուշտ կեր։ Աղջի՜, հարիսա լից, ե՛ղ լից։

— Իրինդը լավ գյուղ է, լաո,— շարունակեց Բայազը։ Մեր գյուղի բոլորտիք սիրուն աղբյուրներ կան։ Էս կողմը էրթաս՝ Սեմալցի Թաթոյի աղբյուրն է։ Էն կողմը էրթաս՝ մեր երեք պլպլան աղբյուրները կգոշգոշան խաս չայիրների ու ծաղկունքի մեջ։ Դրախտաքար բարձրանաս՝ մեր անուշ օդից ու խոտերի հոտից գլուխդ կբժժա։ Մեր Մխով աղբյուրի ջրի պես ջուր չկա։ Գյուղից ցած իջնես՝ Կաթնաղբյուրի ջրբուխը կքչքչա քարափի տակից։ Մեր սարերի ջրերը խշշալով, փրփրալով կգան վերևից ու կբանեցնեն կոլխոզի երեք ջաղացն ու մեկ դընգը։ Դընգի վրա ես կաշխատեմ, լաո։ Կոլխոզն էլ աղբյուրի ջրի պես բան է։ Անհատը մեկ ջուր է, կոլխոզը տասնմեկ։ Մեկ աղբյուրի ջրով աղորիք չի դառնա, ամա տասնմեկ աղբյուրի ջուրը ջաղաց էլ կգվռցու, դընգ էլ։

— Ո՞վ է ձեր կոլխոզի նախագահը,— ընդհատեցի ես Բայազին։

— Թաղվեցի Պետրոսն է,— ասաց նա և շարունակեց։— Պետրոս մի՛ ասա, խաս ոսկու կտոր ասա։ Պետրոսը կոլխոզի համար երեք հատ մեծ պահեստ է շինել, գոմեր է շինել։ Մեր կոլխոզի կալի պես խորոտիկ կալ Թալինի մեջ էլ չկա։ Անցյալ անգամ շրջկոմի քարտուղարն էկավ Պետրոսի հետ գյուղի մեջ պըտտեց ու ասաց. «քու կերած հացը հալալ է, Պետրոս։ Հիմա մտածիր, որ գյուղի համար էլեկտրական լույս բերես, բաղնիք շինես»։

— Ճի՛շտ ,է— միջահատեց Խոդեդանը և ավելացրեց.

— Ե՛ղ լից։

Բայազը յուղ լցրեց և շարունակեց.

— Կոլխոզի մաքիներին հաշիվ չկա։ Մեր սար որ չէրթաս՝ ղմակ է, որ կզարկվի իրար։ Հովիվների գլխավորը Ստեփանն է։ Էն էլ քու հոր հետ հովիվ է եղել Սև սարում։

Երբ ճաշն ավարտել էինք, Բայազն ասաց.— գնանք՝ ես քեզ մեր գյուղը ցույց տամ։— Ես սիրով համաձայնեցի։

Ասատուրը գնաց առվույտը փոցխելու, իսկ մենք դուրս եկանք փողոց։

Արևը մայր էր մտնում։

— Էս դիմացի խորոտիկ տունը տեսնո՞ւմ ես, լաո, որ դեղին դղումներ կան տանիքին։ Էդ հովիվ Ստեփանի տունն է։ Էն ջոջ պառավը, որ նստած է տան առաջ, Ոսկեհատն է, Ստեփանի մերը։

էն պատերը, որ կարմիր տաքտեղներից կրոցբոցան՝ Գուրգեն Հարությի և իր եղբայրների տներն են։ Էն կողքի տունը Սեմալցի Բաթոյի մարագն է։

Մենք սկսեցինք դանդաղ ելնել դեպի սարալանջը։

— Քաղքցու պես տներ ունենք, լաո։ Փափուկ մահճակալների վրա կքնենք։ Սաղաֆե ամաններից ճաշ կուտենք։ Կոլխոզ որ չեղներ, էդ ըմմեն հո՞ւստե կեղներ,— յուրովի բացագանչեց նա։

— Իսկ ինչո՞ւ ձեր տանը սաղաֆե ամաններ չկան։

— Մենակ մեր տանը չկա։ Երբ Կաթնաղբյուրում կոոպերատիվ բացվեց, ես գնացի ու տաս հատ ֆարֆուռե խորոտիկ ամաններ առա։ Էս իմ ալևորը եկավ սարից.

— Ես որ էդ ամաններով կերակուր ուտեմ, անոթի կմնամ, մեր տան խաչերկաթն էլ կպաղի,— ասաց նա։ Տնից, որ դուրս եմ եկել, վերցրել-տարել է կոոպերատ, «առեք ձեր դուրան ամանները,— ասել է նա,— իմ պառվու փարեն ետ տվեք»։

— Գի՞տես ե՛րբ էկանք էս գյուղը,— ասաց Բայազը նայելով Իրինդին և շարունակելով ընդհատված պատմությունը։— 1921 թվին էկանք։ Դիմում գրեցինք Հայաստանի կառավարությանը, թե մենք սարի մարդ ենք, ու կառավարությունը մեզ էս սարը տվեց, որ տուն շինենք ու բազմանանք։ Մենք ութ գերդաստան էինք, որ էկանք էս Կարմիր վանքի մոտ։ Մեզ ճիժ չկար, ճիվ չկար, հորթիկ չկար։ Առաջին երեխան Սեմալցի Խաչիկի տանը ծնվեց։ Անունը Մարիամ դրեցինք։ Մարիամ հիմա չորս հատ երեխա ունի։ Էդ ութ գերդաստանը էս քսաներկու տարվա մեջ թուռա արձակեց, դարձավ ութսուներկու գերդաստան։ Բրիշակ էր էս գյուղը, լաո։ Քար քարի դրեցինք, գերան գերնի թալեցինք՝ Իրինդ շինեցինք։ Մեր պապերն ասել են՝ «արբե քրտինքդ, որ բացվի սրտիկդ, որ լենանա տնիկդ»։ Հիմա ամեն երդիկից ժանգառի ծուխ կելնի։ Ամեն տան առաջ ճիժ ու ճիվ կխաղա։ Էս ամբողջ սարերը քար ու կոճ էր։ Մեր մատի խունկը թափավ էդ քարերը քոմելով։ Հիմա նայիր ի՛նչ խորոտիկ արտեր ունենք, ի՛նչ կանաչ արոտներ։ Կովից առաջ, որ աշուն կգար, հարսնիքը հարսնիքի կրնկին կզարկեր։ Գիշերը մինչև լույս զուռնա էր, որ կփչեր, ու էս Հինգ Ռանչպարի ձորը կդմմար զուռնի ձենից։ Էն Ծղնիկը, որ քեզ հետ էկավ, լաո, գիտե՞ս ինչ գովանդ կխաղար հարսնիքների մեջ։ Իրինդի սիրուն աղջիկնե-

թի համար հեռու տեղերից օրը հազար մարդ կէրթար ու կգար, հազար ուզընկան կիջներ մեր տների առաջ։

— Ա՜խ, լաո, ի՜նչ լավ էր էն ժամանակ։ Կռիվ որ եղավ, մեր բոլոր ջահելները հավաքվեցին, թոփ ու թվանք առան ու գնացին գերմանացու դեմ կռիվ։ Քոռնա Հիտլերի աչքը, լաո։ Սև շան ճրագուն ճիրա վըր իր հոգուն։ Մի էնպիսի խոլերա քաշվի ջանը, որ մսերը թափվեն, լուլեքը մնան...

Լավում էր սարերից իջնող ջրերի սառը խշշոցը։ Արծվասարի կողերով գյուղ էր իջնում հնձվոր կանանց և աղջիկների խումբը։

— Էն կնիկը, որ բոլորից առաջ կէրթա, փոցխը թևին,— մատնացույց արավ Բայազը,— Մայրանուշն է։ Տասը տղամարդու գործ մենակ կանի։ Էն մյուսը, որ գերանդի ունի ձեռքին՝ մեր հաշվապահի կնիկն է։ Նրա գերանդին էնքան սուր է, որ եթե դնի արտի ծերին, իրիկվան գա՝ ամբողջ արտը քաղված կլինի։

— Էս ճամփով որ էրթաս՝ կէրթաս Վերին Սասնաշեն։ Էն ելվրիկ ճամփով որ քելես՝ կբարձրանաս Շղարշիկ։ Է՞ն է Շղարշիկը, քարափին նստած։ Էս կողմով որ էրթաս՝ կհասնես Դավթաշեն և Աշնակ։ Էն սելգնա ճամփեն որ բռնես՝ կիջնես Կաթնաղբյուր ու Թալին։ Բոլորը սասունցի են, մշեցի, խութեցի։ Օսմանցին մեր պապերի հողը զավթեց, բայց մեր ազգ ու խունկը աշխարհքի մեջ անմեռ է։ Որ հազար տարի էլ անցնի, էլի մենք մեր հողի մեջ ենք, մեր Մարութա սարի առաջ...

Այդ ժամանակ մեզ մոտեցավ կոլխոզի պահեստապետը, ամոթխած և համակրելի դեմքով մի կին։ Նա հայտնեց, որ ջրաղացների ջուրը գալիս է, Բայազը պետք է դընգը բաց աներ, որ կոլխոզնիկները գիշերը կորկոտ ծեծեին։

— Կաքավ նստեց վըր իր թառուն, լուսնյակ մտավ ջաղցի առուն,— երգեց Բայազն ու իլիկը ձեռքին շտապեց աշխատանքի։

Այդ գիշերը գնդապետ Եղնիկն անց էր կացրել աստղազարդ երկնքի տակ, այն տան կտուրին, ուր ապրել էր տարիներ առաջ։ Իսկ ես գիշերեցի Խոդեդանի բակում։

Ամբողջ գիշերը Ասատուրը քնի մեջ բարձրաձայն հարայ էր կանչում, զանազան շների անուններ էր տալիս, գոռում էր նրանց վրա և վազում նրանց ետևից։ Առավոտյան ինձ ասացին, որ նա

գրեթե ամեն օր այդպիսի ձայներ է արձակում երազի մեջ, մանավանդ լուսնյակ գիշերներին, որը արդյունք էր Մոտկանի լեռներում և Սև սարում անցկացրած իր հովվական կյանքի վաղեմի տպավորությունների։

ՈՍԿԵՀԱՏԸ

Երբ աչքս բացի, գլխիս վրա կռացած տեսա մի բարեժպիտ պառավ։ Նա իր կոշտ, խորշոմած ձեռքերով քնքշաբար շոյում էր իմ ճակատը և մազերը։ Առաջին խոսքը, որ լսեցի՝ այս էր.— փառք քեզ, սուրբ երկնավոր, որ Տոնեի ու Ալմաստի ծիլը կանաչ թուռա է քշել աշխարհքի վրա։

Նրա անունը Ոսկեհատ էր։

Դա այն մեծահասակ կինն էր, որ Բայազը նախընթաց երեկոյան ցույց էր տվել ինձ՝ կաղամբների մարգի մեջ նստած՝ դանդուռ քաղելիս։

Ես հագնվեցի։

Պառավ Ոսկեհատը ինձ տարավ իր տունը, որ գտնվում էր գպրոցի առաջ։ Պատմեց, որ երբ իմ մայրը մեռել է, նա ինձ գըրկած տարել է կաթնատու հարսների մոտ կերակրելու, մինչև ես վարժվել եմ սև մաքու կաթին և կտրվել եմ կրծքից։

Ես նկատում էի, որ պառավ Ոսկեհատը զուրկ էր ճարտար լեզվից։ Բայազին հակառակ՝ նա իր զգացածն ավելի շատ լռությամբ էր արտահայտում, քան թե խոսքով։ Նա երկա՞ր-երկա՞ր նայում էր ինձ, գլուխը հուզմունքից տարուբերելով, կարծես կամենալով ասել. դու փոքր ես եղել, լաո, դու ի՞նչ կհասկանաս, թե ով էր քու պապը և թե ինչե՞ր անցան ու դարձան մեր գլխով։

Ոսկեհատն ինձ պահեց իր մոտ ճաշի։ Նա վառեց թոնիրը և ինձ համար թանբոլոր եփեց, որ ես կերա մեծ ախորժակով։ Երբ ճաշը ավարտված էր, նա շատ խորհրդավորությամբ մի արկղ դուրս քաշեց թախտի տակից։ Այնտեղից հանեց ճնճղուկի մեծությամբ մի մաշված քսակ, որ պատրաստված էր խոյի ամորձիքի մաշկից։ Ասաց՝ որ այն եղել է իմ հոր քսակը, որ այնտեղ իմ վաղամեռիկ հայրը Խոդեդանի հարսանիքի ոսկիներն է պահած եղել և այն կես ոսկին, որով Մուշ քաղաքում քաթան էին առել իմ թըշվառ հոր մարմինը պատանելու համար։

Երբեմն ամենահասարակ իրը սրբություն է դառնում, երբ հիշեցնում է մի անվերադարձ անցած թանկագին անձի, որի ձեռքը դիպել է դրան, կամ որի հետ առնչված է նրա անունը և հիշատակը։ Հուզմունքով, գրեթե սրտի ախորժալուր դողով ես սկսեցի տրորել ձեռքիս մեջ այդ փոքրիկ մաշված պարկը, որի վրայով մոտավորապես կես դար էր սահել։

— Կարգվա՞ծ ես,— երկար լռությունից հետո հարցրեց Ոսկեհատը։

— Ոչ,— պատասխանեցի ես։

— Կարգվիր, լաո, թուռա քշիր աշխարհքի մեջ,— ասաց նա և ավելացրեց.— կարգվիր, որ Տոնեի գերդաստանի ծուխը շարունակես։ Քու հայրը չիգյարով մարդ էր, լաո։ Երբ նա խաղ կասեր՝ քար ու փետ կիլեր իր չորս բոլոր։

Արդեն երեկո էր։ Ոսկեհատը նստեց կաղամբների մարգի մեջ և սկսեց դանդուռ հավաքել։ Քաղհանում էր ու զրուցում։ Ես ուշադիր լսում էի այդ պառավ կնոջը։ Ուզում էի, որ նա երկա՞ր խոսեր, միշտ այդպես հետաքրքիր ու հմայիչ։

Ոսկեհատը տարիքով ամենամեծ կինն էր Իրինդում։ Չկար նրա պես ընտիր կերակուր պատրաստող։ Ոսկեհատի եփած թանապուրը անմահական էր։ Լեռներից ու դաշտերից քաղում էր տեսակ-տեսակ հոտավետ կանաչներ ու նրանցով համեմում էր հայ նահապետական գյուղի այդ հին ու հարգելի ճաշը։

Թոնիրներ շինող էր Ոսկեհատը։ Ինձ պատմեցին, որ այդ կինը Մոտկանի և Բռնաշենի գյուղերում ժամանակին շինել էր մոտ հազար հինգ հարյուր թոնիր։ Իրինդում և հարևան ավաններում գործող թոնիրները նույնպես նրա և Բայազի շինածն էին։ Շինում էր, վառում էր կրակը, ձեռքի ակիշով խառնում էր այն, օրհնում էր օջախը և հեռանում։

Թեպետ պատկառելի տարիք ուներ և կոլխոզվարչության կողմից ազատված էր ամեն կարգի աշխատանքներից, այնուամենայնիվ նա սիրում էր նստել իրենց տնամերձ բանջարանոցում և աշխատել։ Նրա խորշոմած մատները անդադար շարժման մեջ էին։ Մի մոլախոտ էր պոկում, մի կոշտ էր փափկացնում, մի ծռված թուփ էր ուղղում, արևկող տալիս, որ աճեր, զորանար։

Գյուղի երիտասարդ աղջիկներն ու հարսները հաճախ գալիս էին նրա մոտ, իմանալու, թե այս կամ այն ճաշը ի՛նչպես պետք է

եփել, որ անուշ լինի։ Ոսկեհատը ճանաչում էր սարի բոլոր բանջարներն ու կանաչները։ Հողի տեսակից և օդի շվոցքից իմանում էր, թե այս կամ այն վայրում ի՞նչ տեսակ ծաղիկ է բուսնում։ Նա ջահել աղջիկներին բացատրում էր, թե ինչ ձևով են պատրաստում և պահում զանազան բանջարներ ձմռան համար։

Այս կամ այն ընտանիքում ծագած վեճը հարթվում էր, երբ նրա շեմքից ներս էր մտնում Ոսկեհատը՝ մանավանդ, երբ ներկայանում էր ակիշը ձեռքին։ Մի տեսակ հաշտարար աստվածուհի էր նա, որ շարունակ վառ էր պահում օջախի կրակը և հակում էր հայ գյուղի և ընտանիքի խաղաղությանը և մաքրությանը։

Պատահում էր, որ Աստուրը նույնպես դուրս էր գալիս բակից, նստում էր պատի տակ և լուռ դիտում էր պառավ Ոսկեհատի խաղաղ աշխատանքը։ Պահեր էին լինում, որ այդ երկու ծերերի հայացքները հանդիպում էին իրար և նրանք հեռվից, մեկը՝ պատի տակ նստած, մյուսը՝ բանջարանոցում, լռությամբ երկա՞ր-երկա՞ր նայում էին միմյանց։ Եվ այդ լռության մեջ ինչե՞ր ասես չէին հիշում և վերապրում։

ԹԱՄՈՅԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ԱՌԱՋ

Իրինդում լսեցի, որ Վերին Սասնաշենումն էր ապրում Դաշտադեմցի Գևորգը, որին կոչում էին վարդապետի տղա, և որը ներկա էր եղել իմ հոր հարսանիքին։ Պատմում էին, որ նա Մշո դաշտից Էջմիածին էր փախցրել Թարգմանչաց վանքի դուռը։

Օրը արևոտ էր։ Երկինքը պայծառ։ Գյուղական ճանապարհը հաճելի։

Վերին Սասնաշենը շինված էր մի սարահարթի վրա։

Կոլխոզի կալում պահակ էին կանգնած երկու հոգի։ Նրանցից մեկը կորացած մեջքով մի կարճահասակ ծերունի էր, իսկ մյուսը՝ մի երիտասարդ։

— Ո՞վ է ձեզանից ճանաչում Դաշտադեմցի Գևորգին,— հարցրի ես՝ դիմելով նրանց։

— Դաշտադեմցի Գևորգը սա՛ է,— ասաց երիտասարդ պահակը՝ մատնացույց անելով դեպի կարճահասակ ծերունին, որը, արևի դեմ աչքերը կկոցելով, զարմացած նայում էր ինձ։ Իմանալով իմ

ով լինելը, Ծերունի Գևորգը գրկեց ինձ և ջերմորեն համբուրեց։ Ապա հայրաբար շոյելով իմ գլուխը, հուզված ձայնով ասաց.

— Ցորնի հատիկը ո՛ւր էլ երթա, վերջը կգա ջաղցի բկով կանցնի...

Հաճելի՞, անո՞ւշ երեկո էր։

Գևորգի տանը ճաշելուց հետո, ես ակսեցի նրա հետ ցածրաձայն դեպի գյուղի տակը, ուր կանաչ տարածություններ կային։

Արեգակը մայրամուտին հասնելով, ոսկեփոշի էր սփռել Արագածի խաղաղ լանջերին։ Մենք դանդաղորեն իջանք դեպի մի գեղեցիկ ձորակ, որից այն կողմը գտնվում էր Ներքին Սասնաշեն գյուղը։ Հանկարծ իմ առաջնորդը կանգ առավ։ Մեր առաջ երևաց մի սպիտակ մենավոր տապանաքար։

— Գիտե՞ս ով է պառկած դրա տակ,— հարցրեց Ծերունին։

— Չգիտեմ,— ասացի։

— Թամոն է էդ քարի տակ հանգչում։

— Ո՞վ է Թամոն,— հարցրի ես։

— Մի՞թե չգիտես. Սասունցի Դավթի ջաղացպանը։ Այստեղ չկա մեկը, որ նրա ջաղացում ալյուր աղացած չլինի։ Փոքրիկ Ճընճղիկի սերնդից էր։ Խոդեդանին ասա, նա քեզ շատ բան կպատմի Թամոյի մասին։

Երբ ավելի մոտեցանք, գերեզմանաքարի առաջ տեսանք մի ծերունու, որ գլուխը գրկած արտասվում էր վերջալույսի շողերի տակ։

— Գրքո, դո՞ւ ես,— հարցրեց իմ հյուրընկալը։ Ծերունին գլուխը բարձրացրեց և սրբեց խոշոր ջինջ արցունքները, որ հոսում էին նրա աչքերից։

— Սիրտս փլավ, լացա,— ասաց ծերունին իմ ուղեկցին ճանաչելով։

— Արցունք թափելով բան դուրս չի գա, Գրքո,—հորդորեց Գևորգը։— Բոլորս էլ անցողական ենք։ Դավիթը որ անցել է, իր ջաղացպանը կմնա՞։

— Ջաղացպա՞ն, էդպե՞ս էլ ջաղացպան։ Ուրիշ մարդ էր Թամոն, Գևորգ, ուրի՞շ։ Է՛յ գիդի աշխարհ, ո՞ւմ գլխով կանցներ, որ Թամոն կթողներ Ծովասարն ու Ճախրականը ու կգար էսքան հեռավորության վրա կմեռներ,— հառաչեց Գրքոն։

Վերջալույսի շողերի տակ, Թամոյի գերեզմանի վրա արտաս-

վող մարդը, դա այն միևնույն կոլխոզնիկն էր, որին մենք Եզնիկի հետ տեսել էինք Կաքավաձորում, դրանից մեկ շաբաթ առաջ։ Դա Գրքոն էր։ Այն մարդը, որ Սասունում բժշկել էր Դավթի առասպելական այծերին, և Եզնիկի հոր հետ մշակություն էր արել Ընկուզնակ գյուղում։

Գևորգը պատմեց, որ նա հաճախակի կանչվում էր Թալին բուժական գործերով և ամեն անգամ այդտեղից անցնելիս այցելում էր Թամոյի շիրիմը և արտասվում վրան։

— Էս էլ նրա կորեկի արտն էր, ձեռքը դեպի ձորալանջը երկարելով, ասաց Գրքոն։— Ինչքա՜ն անցնում էի էստեղով, նստեցնում էր ինձ էս կանաչ թմբի վրա ու Ծովասարից էր խոսում, Դարբին Ջենորից և Ֆոֆրո քարից։ Էլի էն էր, էն Թամոն։ Հագնում էր Սասունի տարազ, քայլում էր դանդաղ, պատմում էր դանդաղ, բայց միշտ խելացի, միշտ իմաստուն։ Վերջին անգամ քաղաքից նրա մոտ մարդիկ եկան։ Վախենում էին թե նա կարող է մեռնել և հետը տանել «Սասնա ծռերի» պատմությունը։ Նրան տարան Իրինդ։ Ես էլ իր հետն էի։ Թամոն Իրինդ գնաց Քուռկիկ Ջալալու վրա նստած։ Մինչև կես-գիշեր պատմեց Թամոն։ Խմեց ու պատմեց, պատմեց ու խմեց։ Լուսադեմին նա կարծես թե թեթևացավ, սիրտը դատարկվեց։ Վեր կացավ ծածկեց իր գառան գդակը, մնաս բարով ասաց ամենքին և Քուռկիկ Ջալալին հեծնելով, գնաց դեպի Սասնաշեն։

Գրքոն լռեց։

— Իսկ ի՞նչ եղավ նրա Քուռկիկ Ջալալին,— հարցրի ես։

— Պատերազմ որ եղավ, Թալինի մի երամակ ձիերի հետ նրան էլ գրավ տարան։

Թամոն մեռնելուց առաջ խնդրել էր, որ իր գերեզմանի վրա շաբաթը մեկ անգամ մի բուռ ալյուր շաղ տան։ Եվ շատ անցորդներ կատարում էին նրա ցանկությունը։ Գրքոն հանեց իր գրպանից մի բուռ ալյուր և, երբ հեռանում էր, շաղ տվեց նրա շիրմին։

Այս հուզիչ տեսարանը այնքան խորապես ազդեց հոգուս, որ ես վշտացած սրտով գլխարկս հանեցի և գլուխ խոնարհեցի Դավթի բերդից ու նրա ավանդական ջրաղացից անարդարորեն հեռու թաղված ժողովրդական այդ պաշտելի մարդու շիրմի հանդեպ։

Երեկոյան վերադարձին, երբ քեռի Աստուրին պատմեցի Թամոյի մասին, նա թառանչելով ասաց.

— Թամոն մեռած է, լաո։ Պառվիս հետ հե՛ղմ լե կուզեմ էրթալ նրա քարին...

Այդ խոսքից հետո խոդեդանը երկար ժամանակ լռեց։ Նա մտասևեռ նայում էր պատի մոտ դրված կանթը կոտրած մի խեցու, որի վրայից տեղ-տեղ անհետացել էր խիստ կարմիր երանգը։

— Թամոն էլ անցա՞վ, հարսանիքս էլ անցա՞վ, շուտով ես էլ կանցնեմ,— լռությունը խզելով բացագանչեց ծերունին։

— Տեսնո՞ւմ ես էն լագլագով կճուճը, որ դրված է պատի մոտ։

— Տեսնում եմ,— ասացի։

— Էդ էն կաթնամանն է, որ ես փախցրի աղբյուրից։ Հետո քու պապ տարավ Մուշ, մեջը շամիչ լցրեց ու գնաց Քրդագոմ՝ էս պառավիս տուն։

Այդ խոսակցության միջոցին ներս մտավ Բայազը։ Ասատուրը նայեց նրան և շարունակեց։

— Գիտե՞ս ի՛նչ խորոտիկ աղջիկ էր, ինչպե՞ս կլողար Մեղրագետի մեջ, ինչպե՞ս կշողար ալիքների տակ։ Հիմա ավերված է ու փլած...

— Իսկ ե՞ս։— Այդ խոսքի վրա նա տարամերժորեն շոյեց իր սպիտակ բեղը և մորուքը։— Ես որ քո հոր հետ կքելեի՝ Սև սար կճմեր ոտքիս տակ, լաո։ Իմ մեկ զարկով ապառաժից բոց կցխար։ Քրդական մի գեղեցիկ խոսք կա, ասում է՝ «Զահել տղան ու քուռակ ձին զարմանք բան է, որ չեն թռչում դեպի երկինք»։

— Գնա՞ց,— հառաչանքով ասաց ծերունին իր փոքրիկ մորուքը բռան միջից արձակելով և շեշտ նայելով դեպի հեռուն։

— Ի՞նչը գնաց,— ակամա գոչեցի ես,— կարծելով թե մի որևէ հավք անցավ վերևից։

— Գնա՞ց էն, որ ոչ մի խաղով և ոչ մի տաղով էլ ետ չի դառնա։ Զոզաններից իջանք, լաո։ Մեր խրխինջն ու թռիչքը վերջացավ։ Սրանից դենը՝ դուրան է ճամփան, գլխիվայր կէրթանք ու հանգիստ կէրթանք...

Ծերունին լռեց։

ԱՌԵՂԾՎԱԾԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Հետևյալ օրը արևածագից առաջ ես խոդեդանի թոռնիկի հետ, որի անունը Դավիթ էր, ուղևորվեցի դեպի Իրինդի ամառանոցը։ Իմ նպատակն էր տեսնել այդ գյուղի ոչխարաբուծական ֆերմայի հովվապետ Ստեփանին, որ փոխարինում էր իր հորեղբորը։

Դավիթը թեև փոքր էր, բայց այնպիսի համարձակությամբ էր մագլցում ժայռերը, որ ես դժվարանում էի նրա հետ ոտք փոխել։ Դրախտաքար կոչվող փարթամ արոտի մոտ, մի բարձրադիր քարափի վրա նստած էր մի զինված հովիվ։ Այդ Ստեփանն էր։ Երբ Դավիթը բավական հեռավորության վրայից հայտնեց նրան իմ ով լինելը, նա գրեթե գլորվելով եկավ ներքև և ինձ առավ իր թևերի մեջ։

Հազիվ էինք գրկախառնվել, երբ սարում իրարանցում ընկավ։ Ֆերմայի աշխատավորները իրենց խոտհարքի մեջ կալանել էին Թելո Մեսրոպ անունով մի կոլխոզնիկի՝ իր յոթ աղջիկների հետ։

— Թելո Մեսրոպն է,— ասում էին նրանք և շտապում դեպի այն վայրը, ուր գտնվում էր այդ զարմանալի մարդը, որի անունը, ինչպես ես նկատեցի, հանրածանոթ էր Թալինի գյուղերում։

— Ա՜յ Թելո, դու էլի ավե՞լ ես քաղում,— ծիծաղելով հարցրեց Ստեփանը։— Ե՞րբ եկար մեր սարը։

— Գիշերով եկա։

— Իսկ կոլխոզի հո՞ւնձը։ Չէ՞ որ հացքաղը ակավել է։ Կոլխոզի նախագահ Սիսակը երևի հիմա քեզ է փնտրում։

— Թող փնտրի։ Սիսակն ո՞վ է, որ ես նրա ձեռքի տակ աշխատեմ։ Ինձ սուլթան Աբդուլ Համիդը չկարողացավ իր կամին լծել, հիմա էս ազատ երկրում կուզեք որ ես կոլխոզում աշխատեմ, ուրիշները գան իմ ազնիվ աշխատանքն ուտե՞ն։

Հետաքրքիր մարդ էր Մեսրոպը։ Վերին աստիճանի տպավորիչ և ազդեցիկ կերպարանք ուներ։ Մանավանդ խիստ ուշագրավ էին նրա բեղերը, հագի շորերը և ձեռնափայտը, որ նա թեք դրությամբ պահում էր մեջքի վրա։ Լինելով չքավոր գյուղացի, նա ժամանակին նույնիսկ օժանդակել էր կոլխոզի կազմակերպմանը, բայց ինքը կոլխոզի մեջ չէր մտել, երկար տարիներ ապրելով իբրև մենատնտես։ Դրանից մի քանի տարի առաջ նա բատրակկոմի նախագահի խորհրդով վերջապես անդամագրվել էր կոլխոզին, բայց համայնական աշխատանքի հետ դեռ լրիվ չէր համակերպվել։

Թելոն ուներ յոթ անչափահաս աղջիկ։ Յուրաքանչյուրը մեկ տարով մեծ էր մյուսից։ Նա իր բոլոր աղջիկներին կոչել էր թռչունների անունով։ Մեկի անունը Սինամ էր, մյուսինը Դեղձանիկ, երրորդինը Տատրակ և այլն։ Ավագ աղջկա անունը Կաքավ էր։ Սա պարտավոր էր հսկել մյուս վեցին և նրանց տանել աշխատանքի։ Ամեն առավոտ հայրը իր աղջիկներին ուղարկում էր Արջերի ձորը՝ ավել քաղելու։ Շաբաթ և կիրակի օրերը նա այդ ավելները տանում էր Թալինի կոլխոզշուկան և վաճառում։

Կոլխոզի նախագահ Սիսակը նրան մի քանի անգամ պարապանքի էր ենթարկել ընդհանուր ժողովում, բայց ոչինչ չէր օգնել։ Նա շարունակում էր խույս տալ համայնական ծանր աշխատանքից և ապրել կողմնակի եկամուտներով։ Հողբաժնի վարիչ Գարեգին Պիծակը մի օր կանչել էր Թելոյին իր մոտ՝ իմանալու թե ինչո՞ն նա չի մասնակցում կոլխոզի աշխատանքին։

— Ա՜յ Մ՚եսրո՛պ, քեզ վրա Սիսակը գանգատվում է, դու աշխատանքի դուրս չես գալիս, կոլխոզի արտերը կծղել են, իսկ դու մասնավոր առևտրով ես զբաղված։ Դա կոլխոզնիկին վայել բան չէ։

— Ես անիծել եմ Սիսակի վաստկողի պապու գանգը,— պատասխանել էր Թելոն և շուռ գալով դեպի շեմքը՝ գոչել էր.— աղջի Կաքավ, ներս արի։

Այդ կանչի վրա ներս էր մտել Թելոյի երեց աղջիկը՝ մի գեղեցիկ ավել ձեռքին։

— Ավլի՛ր մեր հողբաժնի վարիչ ընկեր Պիծակի սենյակը։

Չնայած Թելոն ապրում էր իր աղջիկների վաստակով, բայց խիստ դեմ էր կանանց ղեկավար աշխատանքին։ Երբ իմացել էր, որ հարևան գյուղի նախագահը կին է, Թելոն բացագանչել էր. «Ես անիծել եմ էն կալի խեր, որի առաջին կամին կով է լծուկ»։ Նա հաճախ նստում էր միջնաբերդի պատի տակ և տամա էր խաղում իր կնոջ վրա։

— Երկու փութ գարի տուր իմ կինը քեզ տամ,— ասել էր նա իր հարևանին։

Ահա այս զարմանալի մարդուն էին բռնել սարում իր յոթ աղջիկների հետ։ Զբավարարվելով իրենց գյուղի շրջակայքում եղած ավելներով, Թելոն իր սահմանները տարածել էր մինչև Իրինգի սարերը, մինչև Դրախտաքարի խոտհարքը։

Հպարտ կանգնած էր այդ հաղթահասակ ծերունին, գավազանը թեքությամբ մեջքի վրա երկու ձեռքի կանթերի մեջ պահած։ Նրա շուրջը շարվել էին իր կարմրաթուշ աղջիկները՝ ավելների ծաղկավոր խուրձերով։ Բոլորից առաջ կանգնած էր Կաքավը։

Առիթից օգտվելով ես սկսեցի թանձր գույներով կտավի վրա առնել Թելո Մեսրոպին իր յոթ աղջիկների հետ։

— Տղա չունե՞ս,— հարցրի ես նկարելու ժամանակ։

— Գաղթի ժամանակ Զարբհորի կամուրջի վրա մի տղա փախցրի։ Լուսաբացին իմ մոտով մի ուս գոմեշ անցավ։ Դրեցի նրա մեջքին։

Այդ խոսքի վրա վրձինը իմ ձեռքից վայր ընկավ և ես գրեթե բարձրաձայն գոռացի՝ իմ առջև կանգնած տեսնելով այն մարդուն, որ պատճառ էր դարձել իմ անհայտացմանը և կյանքիս հետագա ամբողջ ընթացքին։

Երբ Թելոն իմացավ, որ ես սև գոմեշի կողովում դրված այն մանուկն եմ, հանկարծական ուրախությունից, որ խառն էր շփոթության և զարմանքի հետ, վազեց առաջ և ինձ իր թևերին առնելով սկսեց համբուրել։ Նրա յոթ աղջիկները, հոր օրինակին հետևելով, ուրախագին բացագանչություններով փարվեցին ինձ։

Երբ հանգստացան և այդ հոգեկան բոլոր բռնկումներն անցան, ես վերսկսեցի և հաջողությամբ ավարտեցի Թելո Մեսրոպի և նրա յոթ աղջիկների խմբանկարը։

ԽՈԴԵԴԱՆԻ ԻՂՁԸ

Մի ամիս հետո, երբ բաժանվում էի, քեռի Ասատուրն ասաց.

— Արի իմ մոտ նստիր, մի բան ասեմ, լսա։

Ես գնացի։

Երեկո էր։ Խոդեդանը նստած էր նախշուն կարպետի վրա, իր մի ամիս առաջ քաղած առվույտի դեղնած դեզի մոտ, ուռենու սլսլան հովի տակ։ Նա լռությամբ իր տերողորմյան էր դանդաղ քաշում և նայում հոսանած (թառամած) առվույտին, որի շվաքում պառկած էր իր պառաված շունը։

— Մի ամիս առաջ, երբ դու եկար, էս առվույտը կանաչ էր, լսա,— լռությունը խզելով ասաց ծերունին։ Նո՞ր-նո՞ր էի քաղում

ու փոցխում։ Հիմա դեղնած է և դիզված կողքիս։ Էս խոտը մեկ էլ չի կանաչի։ Էն բան, որ քաղած է՝ անցած է արդեն։ Ես էլ առվույտի պես դեղնեցի։ Իմ կանաչ ճյուղերն ու թփերը գնացին։ Ինչքան խաս ծաղիկ կար՝ ըմմե՞ն անցավ...

Ասատուրը լռեց։ Նրա աչքը դիպավ իր շանը, որ թաթերի վրա պառկած, իրեն էր նայում։

— Ես էլ եղել եմ քեզ պես։ Երկուսս էլ ծերացանք, Քաֆրը։ Ո՛չ ակռա մնաց, ո՛չ աչքի լույս,— ասաց նա և դառնալով ինձ՝ ավելացրեց.

— Սրա մորը ես երկրից բերեցի։ Անունը Սևսար էր։ Երբ գաղթեցինք՝ ընկավ իմ ետև ու եկավ։

Այդ միջոցին խրճիթից դուրս եկավ Բայազը։

— Աղջի, շունն անոթի է, կաթ լից շանը։

Մինչ պառավը զբաղված էր Քաֆրրին կերակրելով, Խոդեդանը վերսկսեց իր զրույցը։

— Լսել եմ, որ վաղը Մոսկով կէրթաս։

— Գնալու եմ,— ասացի ես։

— Բարի ճանապարհ, լաո։ Դու քու աչքով տեսար, որ Մարտեաղչկա պատմածը ճիշտ էր։

— Բոլորը ճիշտ է,— նկատեցի ես։— Ձեր գյուղն ամեն կողմից օրինակելի է։

Ասատուրը նայեց ինձ և շարունակեց.

— Էսօր իմ պստիկ փորն է ուռել։ Իմ օրերը հաշվված են, լաո։ Չգիտեմ ե՞ս շուտ կմեռնեմ, թե էն մարդի մեջ նստած պառավը, որ հարյուր տարեկան է։ Թամոն, Տոնեն, Օնեն, Պնտիցի Մանուկը՝ բոլո՞րը մեռած են։ Աշխարհը ձեզ մնաց, լաո։ Մարդու ծնած տեղը,— շարունակեց ծերունին,— նշխարքի պես բան է։ Քու պապ սուրբ Աղբերիկի պսակատանը խաչ է պահել մեր գլխին։ Ես նրա հետ Սև սարի վրա վերունի ճանճի մեղր ու գազպա եմ կերել։ Ես էնտեղ սև մաքու կաթ եմ խմել։ Կարող է պատահել, ես մեռած լինեմ ու դուք առանց ինձ էն կողմ էրթաք։ Իմ փափագը տարեք ձեզ հետ։ Յոթակնանի մի պաղ աղբյուր կա Իրիցանքում։ Իմ փոխարեն նրա ջրից մի կում խմեք։ Գերեզմանումն էլ լինեմ՝ հոգիս կփառավորվի։ Ես էն սարերում հիսուն տարի հովիվ եմ եղել ու ականջներիս մեջ գիշեր ու ցերեկ շների հաչոց կա...

ՀՅՈՒՐԱՍԵՐ ԽԻՄԱԹԸ

Հետևյալ օրը քեռի Խոդեդանն ինձ ասաց,— Խիմաթը Եղվարդումն է։ Դու չգիտես նրան, բայց Եղնիկը լավ գիտե։ Ճանապարհով անցնելիս, գոնե մեկ ժամով, հանդիպեք նրա մոտ։

Ես և Եղնիկը նույն օրը եկանք Աշտարակ և ավտո նստելով սլացանք դեպի Եղվարդ։

Ճանապարհին գնդապետ Եղնիկն ինձ մանրամասն պատմեց Խիմաթի մասին, ասելով թե ի՞նչպես Խնուսի լեռներում այդ կինը ռուս զինվորներից և հրամանատարներից հարց ու փորձ էր արել իմ մասին, կամենալով գոնե որևիցե տեղեկություն իմանալ Չարբհորի կամուրջի վրա պատահած դեպքի վերաբերյալ։

Խնուսից գաղթելով՝ Խիմաթը իր փոքրիկ աղջկան և տղային առած եկել էր Ղարս։ Այնուհետև մի առժամանակ ապրել էր Ալեքսանդրապոլում և Էջմիածնում, իսկ 1920 թվականից հաստատվել էր Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղում։ Այստեղ նա ամուսնացրել էր Գերազատին (այդպես էր նրա որդու անունը), և իր աղջկան։

Աղջկա անունը Հրանուշ էր։ Սրան պատանի Եղնիկը տեսել էր Խնուսի Խաչալույս գյուղում, շատ տարիներ առաջ, երբ հովիվ Ասատուրի և Ստեփանի հետ գնում էր Խոզլվա սարը եղնիկ որսալու և խավարծիլ քաղելու ռուս հրամանատարների համար։ Մասամբ այդ էր պատճառը, որ Եղնիկը շտապում էր դեպի Եղվարդ։ Այդ գյուղը գտնվում էր Արայի լեռան հարավային ստորոտում և հրուշակված էր իր ցորենի անմման դաշտերով։

Խիմաթը բոլորովին ավտո տեսած չկար։ Նա ապրում էր լեռան կողմը, որ խաղաղ էր և զուրկ ամեն տեսակ աղմկոտ երթևեկից։

Իրենց դռանը ավտո տեսնելով և ճանաչելով Եղնիկին, Խիմաթը համբուրեց նրան, բացագանչելով — Եղնի՞կ, ես մեռնեմ էդ ախտոմոբիլի ոտներուն։

Աղջիկը թևից քաշեց, ասելով թե, ավտոմոբիլը ոտ չունի, ակ ունի։

— Քա ես մեռնեմ իր ակերուն, որ Եղնիկին ու Տավրոսին բերել հասցրել է Եղվարդ։

Խիմաթն ուզում էր, որ ամբողջ գյուղն իմանար, թե Եզնիկը եկել էր ավտոյով և կանգնել էր իր դռանը։ Ուստի նա արագությամբ ելավ կտուրը և բարձրաձայն կանչեց.

— Քա, Գերազատ, շուտ արի։ Եզնիկն ու Տավրոսը ախտոմոբիլով են եկել։ Ես մեռնեմ դրանց ախտոմոբիլի ջուխտակ ակին։ Արի աջառ զարկ գետին, մորթե՞։

Եզնիկը միջամտեց, ասելով թե՝ աջառ մորթելու կարիք չկա, որովհետև շտապում ենք։

— Քա քոնուկ Գերո՞, արի ոչխար մորթե, — տանիքից բղավեց Խիմաթը։

Նորից ասացինք, թե ոչխարի կարիք էլ չկա։

— Քա տղա, Գերո՞, վազեվազ արի գառ զարկ գետի՛ն։

Մենք ասացինք թե շուտով գնալու ենք, դրան էլ կարիք չկա։

— Քա խոբուկ Գերո՞, մի երկու հավ բռնի մորթե՞։

Վերջում ասաց.

— Էն մատղաշ ջնդրոզներից (վառեկներից) մորթե, թող Եզնիկն ու Տավրոսը ուտեն, հետո գնան։

Երբ Խիմաթը ցած իջավ տանիքից, Եզնիկը նրան հայտնեց Խոդեդանի և Բայազի բարևը։ Խեղճ կինը լաց եղավ Խնուսի սարերը հիշելով։

Երկու օր հետո Եզնիկը մեկնեց ռազմաճակատ։

— Բարի ճանապարհ, Եզնիկ, — ասացի ես և ավելացրի. մենք դեռ կհանդիպենք Իրինդում։ Կգնանք այնտեղ գովանդ խաղալու։

— Իրի՞նդ, — մրմնջաց նա և այդ գեղեցիկ անունը մեղրի պես հալվեց նրա շրթունքներին։

Դրանից շատ ամիսներ չանցած, կսկիծով լսեցի, որ գնդապետ Եզնիկը հերոսաբար զոհվել էր Նովորոսիյսկ քաղաքի արյունոտ ճակատամարտում։

Եզնիկի նահատակության լուրը առնելուց հետո լրագրերը հաղորդեցին Նովորոսիյսկի վերագրավման մասին։ Ծովափնյա այդ քաղաքի համար մղված մարտերում հերոսության փառքով էր իրեն պսակել Թալինի բատրակկոմի նախագահ, սովետական խիզախ դեսանտայինների գումարտակի հրամանատար Աբո Համազասպը, որին ես հանդիպել էի Մոսկվայում։

Երկու տարի հետո, 1945 թվի մայիսի հինգին, Աբո Համազասպը, իրենց գավառամասի կուսշրջկոմի քարտուղար Գուրգեն Հայկազունու, Կաթնաղբյուրի ուսուցիչ Արամ Խնկոյանի, կոմսոմոլի շրջկոմի քարտուղար Ռուբեն Այվազյանի, միլպետ Արամայիս Զատիկյանի և ապարանցի Գվիդոնի հետ հաղթական երթով մտել էր Բեռլին»։

ԲԱՑԱԶԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Խորեդանի Թոռնիկը մեկ տարով գնացել էր քաղաք մասնագիտական կրթություն ստանալու։

Բայազը պատրաստվեց տեսության գնալ նրան։ Այդ կինը իր կյանքում քաղաք տեսած չկար, եթե չհաշվենք Մուշը և Անին, մանավանդ Անին, որի ավերակները ծանր կսկիծ էին պատճառել Աստուրի հոգուն։ Ճանապարհի համար Բայազը խաշեց ձու, թրխեց գաթա և հետը վերցրեց իր երկարապոչ փլիկը։

Լուսադեմին նա հասավ Երևան։

Հրազդանի հին կամուրջի մոտ մի ակնոցավոր, կորաքամակ ծերունի, իր փոքրիկ արհեստանոցի դռանը նստած, հերյունը ձեռքին հապճեպությամբ նորոգում էր մի մաշված ոտնաման։

— Տղա, լաո, Աբովյան Պողոսը ո՞րտեղ է,— նրան մոտենալով հարցրեց Բայազը։

— Ո՞րտեղ է ապրում,— ասաց կոշկակարը, կամենալով օգնած լինել անծանոթ պառավին։

— Նա չի ապրում, լաո, նրա վրա տրամվայ կաշխատի։

— Հասկացա։ Դու Աբովյան փողոցն ես ուզում։ Ա՜յ, էս ճամփով կբարձրանաս վեր,— մախաթը ձեռքին մատնացույց արավ կոշկակարը,— մի քիչ կգնաս և ձախ թևիդ վրա ծռվելով կհասնես Շահումյան փողոցին։ Դրանից հետո եկողը Աբովյան փողոցն է։

— Ապրի արևդ, լաո,— ասաց Բայազը գոհունակությամբ։

— Ո՞ւմ մոտ ես գնում։

— Թոռնիկիս։

— Բարի ճանապարհ, մայրիկ։ Երևի առաջին անգամն ես Երևան գալիս։

— Հա՞, լաո, առաջին անգամն եմ ուրք գնում քաղաք։

— Ո՞ր շրջանից ես։

— Թալինի։

Այդ անունը լսելիս, կոշկակարը գլուխը կախեց և երկար ժամանակ լուռ մնաց։ Ապա ակնոցները քթին ուղղելով, հարցրեց.

— Ինձ չե՞ս ճանաչում։

— Չէ՛։

— Ես Կաթնաղբյուր գյուղի Վարժապետ Ճրագն եմ։

— Վա՜յ վարժապետ Փիլոս, դիմավորուկ սուրբ Կարապետ, Սահակ հայրապետ, էս ի՞նչ օրի եմ տեսնում քեզ,— բացագանչեց Բայազը՝ զարմացած խաչակնքելով։

— Աշխարհը շարխ է, քույրիկ։ Մինչև Աբովյան փողոց հասնելը, ի՞նչ իմանաս, թե ի՛նչ կգա քո առաջ։

— Միշտ էստե՞ղ ես եղել։

— Չէ՛, նոր եմ Ռուսաստանից եկել։ Մի շաբաթ չկա, որ էս կամուրջի գլխին կոշիկ եմ կարում։ Շատ ուսուցիչ կա՞ Թալինում հիմա։

— Էնքան հնձվոր չկա, ինչքան ուսուցիչ։

— Դե որ նրանք շատացել են, ես էլ պետք է կոշիկ կարեմ։ Ի՞նչ է անում լուսաբաժնի ուսուցիչ Արամ Խնկոյանը։

— Խնկոյանը պատերազմ է գնացել։ Իմ աղջկա հարսանիքից հետո չեմ տեսել նրան։

— Զգո՞ւյշ գնա, որ ավտոյի կամ տրամվայի տակ չընկնես։ Երևանը մեծ քաղաք է։ Եթե թոռնիկիդ չգտնես, ուղիղ գնա Գյուղացու տուն։ Կոլխոզից թուղթ ունե՞ս,— հարցրեց Ճրագը։

— Իհարկե ունեմ։ Բա ես առանց կոլխոզի թղթի տե՞ղ կէրթամ։

Հարց ու փորձով Բայազը հասավ քաղաքի կենտրոնական հրապարակին, որտեղից սկսվում էր Աբովյան փողոցը։ Հրապարակի աջ կողմից բարձրանում էր Կառավարական տան շենքը։ Ձախ կողմից կանգնած էր Արարատ տրեստի նորակառույց պալատը։ Հյուսիսային կողմից նայում էր Հայաստանի Կուլտուրայի տունը՝ մարմարյա սպիտակ ճակատով, որի առաջ շողշողում էր մի գեղեցիկ ավազան։ Ջրի մի վիթխարի սպիտակ սյուն վեր բարձրանալով խաղում էր նորածագ արևի ճառագայթների հետ և նորից

փլչում ավազանի մեջ։ Հարավից հրապարակի վրա նայում էր Լենինի հուշարձանը։ Տեսարանն այնքան գրավիչ էր, որ Բայազը շփոթվել էր այդ երփներանգ շենքերի մեջ, ինչպես արբեցնող երազում։ Ամեն ինչ նոր էր նրա համար, անսովոր և հետաքրքիր։

Առաջին բանը, որ նա արավ, այն էր որ մեկ-երկու բուռ ջուր զարկեց երեսին, գոգնոցով սրբվեց և լճի եզերքին նստելով՝ բաց արավ իր կապոցը։ Այնտեղից հանեց լավաշ, մի քանի խաշած ձու և սկսեց կճպել։

Լաչակը գլխին նստել էր Բայազը Հայաստանի մայրաքաղաքի կենտրոնական հրապարակում, ավազանի մոտ, և ախորժակով, ու մի քիչ էլ ամաչելով, հաց էր ուտում։ Այդ ժամանակ նրան մոտեցավ մի միլիցիոներ՝ կուրծքը շքանշաններով լի։

— Լսի՛ր, մայրիկ, էստեղ չի կարելի հաց ուտել և, նամանավանդ, հավկիթ կճպել հրապարակում։

— Ներողությո՛ւն, լաո,— կճեպները գետնից հավաքելով և ավազանի եզրից ելնելով, ասաց Բայազը փոքր ինչ շփոթված։— Նոր եմ եկել քաղաք։ Էստեղ ջուր կար, ասացի լվացվեմ ու մի պատառ հաց ուտեմ։

— Ի՞նչ է, ձեր դռան աղբյո՞ւրն է,— չորությամբ նկատեց միլիցիոները։

— Ինչո՞ւ մեր դռան, բոլորիս աղբյուրն է, լաո։ Էս ամբողջ պալատները, էս հրաշք քյոշքերը բոլորիս համար են շինված։ Դու ճիշտ ես ասում, էստեղ չպետք է հավկիթ կճպել։ Հիմա դու քու մտքի մեջ կասես, անտեր կնիկ է, ով գիտե, ինչի համար է եկել քաղաք։ Բայց ես տեր ունեմ, լաո։ Իմ տերը սովետական իշխանությունն է։ Էդ քու դոշի նշաններից մի հատ էլ իմ ծոցի մեջ կա։

— Իսկ ինչո՞ւ ես ծոցդ դրել։

— Մարդուց է կախված։ Մարդ կա իր բոլոր նշաններն ու պխերը դրսից կկախե, մարդ կա ներսից։

— Ի՞նչ նշան ունես։

— Հայրենական պատերազմի։

— Ինչո՞ւ համար ես ստացել։

— Բուրդ մանելու համար։ Հիտլերի քու աչքի մեջ իմ էս իլիկի պոչն էլ է մտել։ Ո՞րտեղացի ես, լաո՛, քեզ ինչ-որ մի տեղ տեսած կամ։

— Ապարանցի եմ։

— Քա էս բոլոր ապարանցիք զարգացել, միլիցիա են դարձել,— զարմացած բացագանչեց Բայազը։— Մեր Թալինումն էլ մի հատ ապարանցի միլիցիոներ կար, անունը Գվիդոն էր։

— Դու Թալինցի՞ ես։

— Հա՜,— գլխով արավ Բայազը։

— Գվիդոնը ես եմ։

— Վա՜յ, Գվիդոն ջան, բա Թալինում տարածել էին, որ դու սպանված ես։

— Սպանվելուց պրծա։ Ո՞ր գյուղիցն ես։

— Իրինդ։ Ես Խոդեդանի կնիկն եմ, Գվիդոն ջան։

— Իմացա։ Ձեր գյուղսովետի նախագահ գնդապետ Եզնիկը իմ կրծքի վրա զարկվեց։ Նրա հետ զոհվեցին նաև պիոներ բյուրոյի նախագահ Աշոտ Խաչիկյանը, սպառկոոպի նախագահ Բագրատ Երանելին, ֆինմասի լիազոր Հազարապետ Գնթունին և իմ մոտիկ ընկեր մաստարեցի Մելիտոնը։ Իսկ ես, բատրակոմի նախագահ Աբո Համազասպը, շրջկոմի քարտուղար Գուրգեն Հայկազունին և Կաթնաղբյուրի ուսուցիչ Արամ Խնկոյանը մինչև Բեռլին հասանք։— Քաղաքացի, մայթով անցիր,— հանկարծ բացագանչեց Գվիդոնը, ակնարկելով մի շիք հագնված տղամարդու, որ պորտֆելը ձեռքին շտապով անցնում էր Արարատ տրեստի շենքի առջևով։ Քաղաքացին հեռվից ժպտալով բարևեց, և լռությամբ ընթացավ դեպի վեր։

— Ո՞վ է,— հարցրեց Բայազը։

— Կծկուկ Շմավոնն է։ Հիշո՞ւմ ես, Թալինում մի բատրակ կար, որ ՓՕԿ-ի նախագահ էր։

— Հիշում եմ։

— Հիմա համալսարանի դասախոս է։ Քաղաքատնտեսություն է կարդում ուսանողներին։— «Գյադա, Շմավո՜ն, չարբխները բեր»,— նրա ետևից բացագանչեց միլիցիոներ Գվիդոնը, վերհիշելով կուլակ Վասակի խոսքերը։

— Ես ինչքան գիտեմ, Շմավոնը ճաղատ էր։

— Հիմա թե՛ մազ կա գլխին, թե՛ խելք։ Նոր տուն ունի, նոր կին։ Կուլակ Վասակի աղջիկներից մեկն էլ աղախին է նրա մոտ։ Իսկ սրան ճանաչո՞ւմ ես,— մատնացույց արավ միլիցիոներ Գվիդոնը մի միջահասակ, լրջախոհ մարդու, որ գլխարկը երկու ձեռքով ետևում պահած մայթով ցած էր ընթանում։

— Չէ՛։

— Ոսկեբերան Քալանթարն է։

— Թալինի շրջիկ դատավո՞ր։ Հիմա ի՞նչ է անում։

— Հայաստանի Հանրապետական դատախազի օգնականն է։

— Իսկ ի՞նչ եղավ Կաթնաղբյուրի ուսուցիչ Արամ Խնկոյանը։

Նա նշանակված է Հայաստանի լուսավորության մինիստրության դպրոցական տեսուչ։

— Գվիդոն ջան, գիտե՞ս ես քիչ առաջ ո՛ւմ տեսա Ճանապարհին։

— Ո՞ւմ տեսար։

— Վարժապետ Ճրագին։ Զանգվի կամուրջի մոտ նստած կոշիկ էր կարում։

— Ճրագը Երևանո՞ւմն է։

— Նոր է եկել Ռուսաստանից։

— Ամբողջ Թալինում տարածել էր, որ Արամ Խնկոյանը կարդալ չի իմանում։ Կեղծ նամակ էր գրել խեղճի վրա։ Թե ինքը կարդալ գիտեր, ինչո՞ւ է հիմա կոշիկ կարում։ Փոշտալով ման էր գալիս գյուղի մեջ, կարծում էր, թե ամենազարգացած մարդը ինքն է։ Իսկ էս վարդագույն մեծ շենքը գիտե՞ս ում համար է,— արհմիությունների նորակառույց գեղեցիկ շինությունը ցույց տալով հարցրեց Գվիդոնը։

— Չգիտեմ։

— Էդ շենքում աշխատելու է մեր շրջանի կոմսոմոլի շրջկոմի քարտուղար Ռուբեն Այվազյանը։ Նա հիմա Հայաստանի բոլոր արհմիությունների նախագահն է։

— Է՜, Գվիդոն ջան, դու որ էդքան զարգացել ես, նրանք պիտի զարգանային ու զարգանային,— նկատեց Բայազը, ուրախացած նայելով Ոսկեբերան Քալանթարի ետևից, որ գլխարկը ետևում պահած հանդիստ քայլերով ընթանում էր դեպի Հանրապետական դատախազություն։

— Զգա՞ստ, քաղմասի միլպետն է գալիս,— ազդարարեց ապարանցի Գվիդոնը, երկու ոտքերը հավաքելով իրար մոտ և գլխով անելով, որ Բայազը մի կողմ կանգնի։

— Քա, վո՛ւյ, էս մեր Թալինի միլպետ Արամայիսն է,— ուրախացած գոչեց Բայազը՝ հեռվից ճանաչելով նրան։ Միլպետի քթի

և ճակատի վրա երևում էին այրվածքի փոքրիկ սպիներ, իսկ կուրծքը կարծես թե շքանշանների խարույկ լիներ։

— Այս կինը, ընկեր պետ, ավազանի եզրին նստած հավ-կիթ էր կճպում և խանգարում էր քաղաքի ընդհանուր կարգը,— դեմքին լրջություն տալով զեկուցեց Գվիդոնը։

— Այդ գեղջկուհին Բայազն է, քեռի Խոդեդանի կինը, Հայաստանի ամենակարգապահ և նշանավոր կանանցից մեկը։ Նա քաղաքի կարգը խանգարել չի կարող, բայց քաղաքում շփոթվել կարող է։ Նրա ամուսինն է համատարածի ժամանակ ինձ թոնրի միջից հանել։ Ես նրանց աղջկա հարսանիքին քոչարի եմ պարել լոանյակ գիշերով։

Բայազը համբուրեց միլպետի ճակատը, ասելով.— ինչքան ուրախ եմ, Արամայիս ջան, որ բոլորդ էդպես զարգացել եք։ Անցած-գնացած բան է, մի ասա տեսնենք, Վերին Սասնաշենում քեզ ովքե՞ր գցեցին թոնրի մեջ։

— Աբաջենց Նուպարը, Շողակաթ տատին, մորքուր Վարդիշաղը, ո՛ր մեկն ասեմ,— մատների վրա թվարկեց միլպետը։

Այդ խոսակցության միջոցին ավազանի մոտով մի խումբ կանայք և աղջիկներ անցան մեծ-մեծ ավելներ և ցախավելներ ձեռքներին։ Մի միջահասակ տղամարդ, որ շատ նման էր Թելո Մեսրոպին, խմբին կանգնեցնելով և իր ձեռքի ավելը ցույց տալով ասաց.— Էսա ավելն է, որ մաքրություն կբերա։ Էսա մաքրությունն է, որ առողջություն կբերա։ Դրա համար էլ մենք պետք է օրական ութ ժամ ավել ու ցախավել էդպես տանենք ու բերենք, որ ժողովրդին առողջություն բերենք։

— Եղբայր ջան, երևում է, որ դու իսկական ապարանցի ես։ Ներքին Թալինում մի մարդ կա, անունը Թելո Մեսրոպ է։ Թե ավելի կարիք ունեք, նրան ասեմ, թող ձեզ համար սարի ավել ուղարկի,— առաջարկեց Բայազը։

— Ասա թող ուղարկի։ Թե կարող է ինքն էլ թող գա։ Մենք մաքրողների կարիք շատ ունենք,— ասաց խմբի պետը։

Բայազը ամեն մեկին մի խաշած ձու տվեց։ Մի-մի հատ էլ տվեց Գվիդոնին և միլպետ Արամայիս Ջատիկյանին ու կապոցը վերցնելով, պատրաստվեց հեռանալ։

— Ո՞ւր ես գնում,— հարցրեց միլպետը։

— Պլանի գլուխ։ Իմ թոռնիկը էնտեղ է, եկել եմ մոտը։

— Գյուղ գնալիս քեռի Խոդեդանին շատ բարև կանես իմ կողմից։

— Բարու մեջ մնաս,— ասաց Բայազը և Գվիդոնի ուղեկցությամբ ելավ հրապարակից։

Իլիկը ձեռքին, Բայազը սկսեց բարձրանալ Աբովյան փողոցով։ Երբեմն-երբեմն կանգ էր առնում և զարմացած նայում էր մարդկանց բազմությանը, շինություններին, ելնող ու իջնող ավտոներին։ Շատ անցորդներ դեմից կամ ետևից դառնալով նայում էին Բայազին և հիանում նրա առողջ հաղթանդամ կեցվածքով, աշխատավորական գունագեղ տարազով և մանավանդ նրա իլիկով, որ գրավում էր բոլորի ուշադրությունը։

Ամենքը իր վրա էին զարմանում, իսկ ինքը՝ ամենքի։

Դիմացից երևաց մի ժպտադեմ ծերունի, փոքրիկ մորուսով, որ վարդերի մի փունջ ձեռքին, երգելով գալիս էր.

Ես ձեր բալան եմ,
Ղարաբալան եմ,
Մնացածը հե՞չ,—

Վարդ առեք շաղոտ,
Քե՛ֆ արեք խաղով
Երևանի մեջ։

Ես է՛ս եմ, որ կամ,
Վարդով ման կգամ
Մինչև կյանքիս վերջ։

Մնվել եմ վարդով,
Կմեռնեմ վարդով՝
Երևանի մեջ։

Նա մոտեցավ Բայազին։

— Իլիկիդ զուրբան, երևում է, որ աշխատավոր կնիկ ես։ Էս մի վարդը Երևանի հին բնակիչ Ղարաբալայի կողմից շքանշան կրծքիդ,— ասաց նա և մի շաղոտ կարմիր վարդ առանձնացնելով ամրացրեց նրա կրծքին։ Նայեց նրան, ժպտաց և գնաց։

— Երանի՞ քու տիրոջ,— շշնջաց Բայազը նրա ետևից, ճանապարհը շարունակելով։

ՎԵՐԱԴԱՐՁ

Դավիթը Երևանում ապրում էր Աբովյան փողոցի վրա, մի մեծ շինության չորրորդ հարկում, որ ժամանակավորապես հատկացրել էին նրան։

Բայազը մեկ ամբողջ ամիս մնաց իր թոռնիկի մոտ։ Այդ մեկ ամսվա ընթացքում նա կրակի երես չտեսավ։

Մոտ յոթանասուն տարի Բայազը ապրել էր գյուղական միջավայրում։ Նա հիշում էր, թե ի՛նչպես Արինոքում բուխարիկի մեջ ճաթճաթում էր բոխի փայտը, հաճելի ջերմություն արձակելով չորս կողմը։ Նա իր լվացքը շարունակ արել էր ձորերի մեջ և չորացրել շիկացած ժայռերին։ Լվացքի ջուրը թափել էր կանաչ գետնի վրա՝ հենց իր դռան առաջ։

Այդպես էր նաև Իրինդում։

Իսկ այստեղ՝ Երևանում, Բայազը զրկված էր այդ բոլոր միջոցներից։ Այստեղ նույնիսկ ազատ ման գալու հնարավորություն չկար։ Նրա իլիկը Արինոքում ժայռերին զարկվելով իջնում էր ձորը։ Բայազը երբեմն վերևից տեսնում էր նրա պոչի հետ խաղացող նապաստակների, սկյուռների և վայրի կատուների գլուխները։ Այնտեղ ոչ մի վտանգ չէր պատահում։ Իսկ այս շենքի չորրորդ հարկի պատշգամբից այնքան դժվար էր իլիկը ներքև իջեցնելը։ Ամեն անգամ փորձանք էր սպասվում։

Եվ մի օր իսկապես պատահեց մի դեպք, որ եթե բակի երեխաները չլինեին, նա ընդմիշտ զրկվելու էր իր հոչակավոր իլիկից։

Բայազը գրեթե ամեն օր կանգնում էր պատշգամբում և ժամերով իլիկ էր մանում։ Նրա իլիկը պտտվելով իջնում էր մինչև առաջին հարկը և նույնիսկ դիպչում էր գետնին՝ պոչով փորելով հողը։

Մի կիրակի, երբ նա զբաղված էր իր ձեռագործով, իրենց բակը մտավ մի ուրախ տղամարդ և թևերը բարձրացնելով սկսեց երգել ու պարել.

Ղարիբ ղուշ եմ, դարդի թուշ եմ,
Դալուլե, դալուլե, դալուլե ջան։

— «Դալուլեն» է եկե՞լ,— բացագանչեցին բակի մանուկները և, տներից դուրս թափվելով, շրջապատեցին նրան։ Եկան նաև

շատ մեծահասակ մարդիկ, այր և կին։ Ոմանք ընտանիքներով հավաքվեցին պատշգամբներում և այնտեղից կռացած դիտում էին բացօթյա հանդեսը։ Բայազը, որ առաջին անգամն էր տեսնում «Դալուլեին», այնպես էր հափշտակվել այդ տեսարանով, որ ինքն էլ չիմացավ, թե ի՞նչպես մի շարաճճի մանուկ ներքևից գալով կըտրեց նրա կախված իլիկը և փախավ։ Նա միայն զգաց, որ իր ձեռքը թեթևացավ և վար կախված թելը փոնթվեց օդի մեջ։

— Վա՜յ, իմ քարմանս տարան,— բղավեց նա պատշգամբի ճաղերից ներքև կռանալով։

Այդ կանչի վրա բակի պիոներները խմբով ընկան փոքրիկ շարագործի ետևից, որ իլիկը գրկած կուզեկուզ փախչում էր պատշգամբների առջևով։ Նրանք բռնեցին այդ անպիտան տղային, իլիկը ձեռքից առնելով վերադարձրին Բայազին, իսկ իրեն հանձնեցին միլիցիայի ձեռքը, որպես հասարակական կարգը խանգարողի և հափշտակություն կատարողի։

Նույն միջոցին ինչ-որ տեղից զանգ տվեցին։ Տանը մարդ չկար։ Լսափողը վերցրեց Բայազը։ «Ալլո՞, ալլո՞»,— լսվեց հեռախոսի միջից.

— Ալլոն դու ես, չաո, սա Խոդեդանի թոռնիկի տունն է,— ասաց Բայազը և լսափողը կամաց ցած դրեց։

Նույն օրը երեկոյան, երբ Դավիթը վերադարձավ տուն, տեսավ Բայազը թախտի վրա նստած լաց էր լինում։

— Ի՞նչ է պատահել, տատո։

— Գնանք էստեղից,— գանգատվեց Բայազը։

— Ինչո՞ւ։

— Չորրորդ հարկ կապրենք, լաո։ Կանաչ գետին չկա, կրակ չկա, իլիկս կախելու տեղ չկա։ Հեռախոսը կզնգա, կշշկլվեմ, չգիտեմ ինչ ասեմ ալլոյին։

— Ի՞նչ ալլո։

— Ես ի՞նչ իմանամ ո՛վ է։ Մի մարդ հեռախոսի միջից միշտ «ալլո», «ալլո» է ասում։

Դավիթը լիաթոք ծիծաղեց և նույն օրը նրան իր հետ օպերա տարավ, որ սիրտը առնի։

— Օպերան ի՞նչ բան է,— հարցրեց տատիկը ճանապարհին։

— Թատրոնի պես բան է,— բացատրեց Դավիթը։

Թատրոնական առաջին ներկայացումը Բայազը տեսել էր

իրենց գյուղում, շատ տարիներ առաջ։ Ինքը, Ստեփանը և Խոդեդանը միասին էին նստած։ Ներկայացման ժամանակ, երբ հերոսն ուզում էր իր սիրած աղջկան փախցնել և չէր իմանում թե ո՛ւր տանի,— «բեր մեր տուն, լաո»,— անհանգստությամբ դեպի բեմը բղավեց Բայազը, և նստած տեղից վեր կենալով վազեց տուն, որ դուռը բաց անի մինչև նրանք կգան։ Երկար ժամանակ նա սպասել էր տանը։ Կերակուր էր պատրաստել նրանց համար։ Տեսնելով, որ ոչ ոք չի գալիս, վերադարձել էր գրասենյակ՝ և զարմացած նստել էր տեղը։ Այնտեղ նրան բացատրել էին, որ բեմի վրա կատարվածը ներկայացում է և ոչ թե իրականություն։ Այդ օրվանից Բայազը լրիվ հասկացել էր թատրոնի իմաստը և այլևս տագնապալի բացագանչություններ չէր անում։

Իսկ օպերա բոլորովին չէր տեսել։

Նստել էր նա Դավթի կողքին, Երևանի օպերայի և բալետի Պետական թատրոնում։ Թե՛ իլիկ էր մանում և թե՛ հետաքրքրությամբ նայում էր բեմին։ Չորս կողմը, բոլոր օթյակներում շքեղափայլ տիկնայք և տղամարդիկ էին նստած, շիք հագնված նազելի օրիորդներ և երիտասարդներ, ուսանողներ, բանվորներ, զինվորականներ։ Մոտիկ նստած հանդիսականներից ոմանք ավելի շուտ այդ կնոջն էին դիտում, քան թե դերակատարներին։

Հանկարծ բեմի հերոսը երկու բազուկներով գրկեց սիրած աղջկան և համբուրելով դուրս տարավ։ Բայազը խրտնածի պես վեր թռավ տեղից։

— Քա տղա, լաո, դու ո՞ւր ես բերել ինձ,— բացագանչեց նա նեղացած նայելով թոռնիկին։

— Օպերա եմ բերել, նանե,— ասաց Դավիթը։

— Քա հարկավոր չէ էդ տեսակ բերան... գնանք էս լրբանոցից։

Ասաց ու դուրս եկավ դահլիճից։

Մի օր հետո Բայազը գյուղ վերադարձավ։ Ինչպես եկել էր, այնպես էլ ետ գնաց...

Կաթնաղբյուրի քարափի քչքչան աղբյուրի մոտ նա հանեց ոտնամանը և սկսեց բոբիկ քայլել դաշտերի միջով։ Ինչպիսի՞ թեթևությամբ էր նա ընթանում կանաչության վրայով։ Իլիկը ձեռքին՝ հանգիստ մանելով գնում էր դեպի գյուղ։

ԽՈԴԵԴԱՆԻ ՄԱՀԸ

Այդ օրը վերջին գիշերն էր։ Նա և Բայազը վերջին անգամ գլուխ էին դրել իրենց ամուսնական բարձին։

Դրանից մեկ շաբաթ առաջ Աստուրը լեռնային կորնգանի մի քանի արտերում սերմանել էր մի նոր խոտահունդ և, վերադառնալով, մտել էր անկողին։

— Մրսում եմ, Մարտե աղջիկ,— ասաց հիվանդը։ Կինը նրան ծածկեց թանձր վերմակով։

1952 թվականը անձրևային էր, ուստի Բայազը հավատացած էր, թե տանուտերը Զուկն է։ Նրա սիրտը մեծ տագնապ էր ապրում, երբ ամուսինը անկողին մտավ։

— Էսօր ի՞նչ օր է,— հարցրեց հիվանդը։

— Հինգշաբթի է,— շշնջաց Բայազը։

— Ուրեմն էսօր իմ մահվան օրն է։ Եթե էսօր անցնի՝ կմեռնեմ մյուս շաբաթվա ուրբաթ օրը։ Էդպես է ասել Կլկը Օհանը։

Ինչպես յուրաքանչյուր մեռնողին՝ այնպես էլ Խոդեդանին վերջին օրերին պաշարել էր մի երկյուղածություն։ Նա տարօրինակ կերպով սկսել էր հավատալ, որ վերջաբանը կատարվում է այնպես, ինչպես նկարագրել էր Դաշտադեմցի Գևորգի հայրը, այն բախտաշեն վարդապետը, որ կարող էր նույնիսկ ծովը մակարդել։

— Քա մրսել ես, բան չկա,— հանգստացրեց Բայազը, ավելի խնամքով ծածկելով նրան, և նստելով հիվանդի ոտքերի մոտ։

— Չէ, Մարտե աղջիկ, ամեն բան վերջացած է։ Ես կմեռնեմ իննսունինը տարուց առաջ, բայց կմեռնեմ էս շաբաթվա մեջ։

Աստուրը թոնրատան դռնից դուրս նայեց։ Բանվորները քարեր էին տաշում բակի մեջ։ Երկրորդ տարին էր, որ թոռնիկը քաղաքից վերադառնալով սկսել էր նոր տուն շինել պապի խրճիթի կողքին։ Շինությունը աստիճանաբար բարձրանալով, պաղ, թանձր ստվերով ծածկել էր Խոդեդանի հողաշեն տնակը։

Մի քիչ հետո ներս մտավ Դավիթը։ Նա նստեց հիվանդի գլխի կողմը, աթոռի վրա։

— Ճորբո, դու մրսել ես,— ասաց նա։— Դու իզուր սար գնացիր։

— Խոտը ծլե՞լ է,— հարցրեց հիվանդը։

— Բոլոր արոտավայրերը ծլել են։ Չտեսնված բերք է սպասվում։ Բայց որ դու դրանից հիվանդացա՞ր...

— Բան չկա։ Իմ հիվանդության մասին մի՛ մտածիր, մտածիր քու նոր տան մասին։ Իմ սերունդը գնաց։ Մենակ կանգնած եմ դաշտի մեջ, ու մահը, բերանը գելի պես բացած, վրաս է գալիս։ Էդ էնպիսի գազան է, որ գելխեղդ շնով չես խեղդի...

Կեսօրից հետո հիվանդի վիճակը ծանրացավ։

Աստատուրը խնդրեց իր մոտ բերեն ծոռներին։ Երեկոյան սարից եկավ Դավթի կինը՝ Շողիկը, երկու երեխայի հետ։ Պապը նրանց տեսնելով՝ պայծառացավ։ Նա տերողորմյան մի կողմ դրեց և ամեն մեկին մի թևի տակ առնելով գրկեց, համբուրեց և հանձնեց մորը։ Ապա համրակը վերստին ձեռքն առնելով՝ սկսեց խաղալ նրա հատիկների հետ և ընդհատումներով նայել իր առաստաղի գերաններին։ Սևացել, խանձվել էին Բյուրականից բերված բարդիների գերանները։ Չորացել էր Արմավիրի եղեգը։ Միծեռնակներն անփույթ ճռվողյունով ներս ու դուրս էին անում։ Նրանց կայտառ ծլվլոցը զվարթացնում էր հիվանդի հոգին։

Ծոռները երկվորյակ էին և ծնվել էին դրանից երեք տարի առաջ։ Աստատուրը նրանցից մեկին կնքել էր Մհեր Դավթի Աստատրյան, իսկ մյուսին՝ Երվանդ Դավթի Երվանդյան անունով։— «Թող մեր ծուխն էլ վառ մնա, Կայծակ Պետոյի և Կայծակ Սեթոյի տան ծուխն էլ։ Չփոխեք նրանց անունները, լաո»,— պատվիրել էր պապը։

Խոդեդանը շոգից նեղվում էր։ Ուզեց նստել։

— Չյունը բերեցի՞ն։

— Թելոն դեռ սարից չի եկել։ Ասել եմ, որ բերի,— պատասխանեց Դավիթը։ Նա երկու ձեռքով գրկեց ծերունուն, որ բարձրացնի, բայց չկարողացավ։

— Ինձպես մի տկար մարդու չկարողացար բարձրացնել,— քմծիծաղով նկատեց Աստատուրը,— ապա ինչպե՞ս ես Թարգմանչաց վանքի բակում գետնով զարկեցի Մշո դաշտի հայտնի փահլեվան Թելո Մեսրոպին։ Էնպես հարվածեցի, որ վանքի զանգակատան աղավնիները օդը թռան։ Մենակ իմ շուրջը եղած քամին տասը մարդ կթոցներ։

— Ձեր սերունդը հսկաների սերունդ է եղել,— կես կատակով կես լրջորեն նկատեց թոռնիկը։

— Սո՞ւտ է։

— Բոլորովին էլ սուտ չէ։ Ստից Սասնա ծո՞ւռ կեղնի։

Կես-գիշերին հիվանդն ավելի վատ զգաց իրեն։

— Իմ աջ կողմը կանգնիր, Մարտե աղջիկ։— Բայազը գնաց և կանգնեց Խոդեդանի աջակողմը։ Ձախ կողմում կանգնած էր Դավիթը՝ կնոջ հետ։ Գլխավերևում կանգնել էին Ստեփանը և կոլխոզի նախագահ Պետրոս Թաղվեցին։ Գիշերով եկել էին նաև Դաշտադեմցի Գևորգը, Գյուլեն և Բոլոճ Մկրոն։ Այնտեղ էին նաև Գուրթան Հարությը, Սեմալցի Թաթոն և Իրինդ գյուղի հիմնադիրները։

— Ոսկոն ո՞ւր է,— հարցրեց Ասատուրը շուրջը նայելով։

Ներկաներն իրար նայեցին։ Այդ հանրածանոթ կինը, որի գերեզմանը Գուրթան Հարությի եղբայրներն էին փորել դրանից մի քանի տարի առաջ, այժմ տարօրինակ հարցմունքի առարկա էր դառնում։

— Հիմա կգա,— կմկմաց Բայազը կամենալով մի բան ասած լինել, հիվանդի ուշադրությունը հետագա հարցերից հեռացնելու համար։

— Չէ՞, չի՛ գա, էլ չի՛ գա։ Ես գիտեմ նա՝ էլ չի գա,— ասաց հիվանդը շոշափելով Բայազի ձեռքը, որ հանգչում էր իր ճակատին։ Կնոջ միջնամատի վրա փայլում էր մի գեղեցիկ մատանի։ Խոդեդանը Բայազի ձեռքը ճակատի վրայից քաշելով բերեց իր աչքերի առաջ։

— Էս մատանին քավոր Տոնեն բերեց Մուշից։ Մատնիք Եղիշեն էր ուղարկել։ Թե նրանք վերադարձան՝ Ոսկեհատն էլ կվերադառնա։ Չէ՞, չի՛ գա, էլ չի՛ գա։ Ես էլ նրանց մոտ եմ գնում...

Բայազը ձեռքը ետ քաշեց։

Թոնրի վրա վառվում էր էլեկտրական լամպը։

— Ես գիտեմ, որ իմ վախճանի ժամն է։ Իմ մասին չմտածեք։ Իմ թիվը լրացել է, և ես կմեռնեմ։

Բայազը լուռ արտասվում էր, գլուխը Ասատուրի բարձի եզրին դրած։ Գյուլեն և Բոլոճ Մկրոն թևերը խաչած մնջել էին Բայազի կողքին։ Դաշտադեմցի Գևորգը արձանի պես կանգնած էր հիվանդի ոտքերի մոտ։ Աչքերը թաց էին։ Թոռնիկը և Շողիկը հեկեկում էին՝ ամեն մեկը մի երեխա գրկած, որոնք նոր էին զարթնել քնից։ Գուրթան Հարությը, Սեմալցի Թաթոն և մյուսները գլխահակ ու մտասևեռ նայում էին հիվանդին։

Խրճիթը հետզհետե ողողվում էր արշալույսով։

— Մեր տոհմը,— ասաց Խոդեդանը, կիսով չափ նստելով անկողնու մեջ և նայելով դեպի առաջ,— ապրում էր Տալվորիկում։ Մեր հազարաշեն առիքի տակ ժամանակին երեսուներկու օրորոց է ճոճվել։ Էդ ջոջ տնից մենակ ես մնացի։ Ես էլ գնում եմ։

— Ամեն քար իր տեղումն է ամուր,— շարունակեց ծերունին։— էն քարը, որ շարժվեց իր տեղից՝ գնացածի հաշիվ է։ Սիրով եղեք իրար հետ։ Հարգեցեք ձեր պապերի և հայրերի սուրբ հիշատակները և էն հողը, որի վրա նրանք ապրել են։ Դրան ասում են հայրենիք։ Օջախի կրակի ուժը քոթուկի մեջ է, իսկ հայրենիքի ուժը՝ օջախի կրակի։ Հայրենիքի սիրո համար էր, որ Դարբին Զենոբը քանդեց զորավար Անդրանիկի տունը օտարության մեջ։ Դե, բարյավ մնաք։ Ողորմի ձեր անցավորաց և ձեզ բարի խորհուրդ տվողներին։

Հիվանդը լռեց։ Ապա հազիվ լսելի ձայնով ասաց.— «Թամոյի մոտ»։ Մի երկու բառ էլ շշնջաց Դավթի ականջին և լռեց։ Բոլոր ներկաները հասկացան, թե ինչ էր ուզում մահամերձը։

Բոպե առ բոպե նրա շնչառությունը նվազեց։ Նա մեռավ ինչպես ճրագը փչես, դեմքը արևածագին ուղղած, տերողորմյան ձեռքի մեջ։

— Ասվատո՜ւր, քա Ասվատո՜ւր, կաց մի բան ասեմ,— ճչաց Բայազը, թևատարած փովելով ննջեցյալի սառը դիակին։

Խոդեդանի թաղմանը ներկա էր ամբողջ գյուղը։ Հարևան կոլխոզական գյուղերից եկել էին Շինական Պողոսը՝ Ավան գյուղից, սնդղչի Գրքոն՝ Կաքավաձորից, Փոքր Զենոբը և մի քահանա՝ Աշնակից, Թելո Մեսրոպը և Փղորկվա Կարոն՝ Ներքին Թալինից։

Թելոն սարսափելի մտատանջության մեջ էր, որովհետև սաբից ձյուն էր բերել հիվանդի՞համար, և ուշ էր հասել։

Քրդական գյուղերից հատուկ պատգամավորություն էր եկել Խոդեդանի վաղեմի բարեկամ Մստոյի գլխավորությամբ։ Քաղաքից եկել էին միլպետ Արամայիս Ջատիկյանը, Ապարանցի Գվիդոնը և Հայրենական պատերազմի հերոս Աբո Համազասպը։ Շրջկենտրոնից եկել էին գյուղատնտես Գարեգին Պիծակը և ուրիշներ։

Մահից մեկ օր հետո, Շինական Պողոսը, Դաշտադեմցի Գևորգը, սնդղչի Գրքոն և Թելո Մեսրոպը վերցրին նաշը։ Սովորության համաձայն երեք անգամ բարձրացրին և վայր դրեցին այն։ Դա-

գաղի ետևից գնում էին միմիայն տղամարդիկ։ Այդպես էր թաղման ավանդական կարգը Սասունում։ Ամբողջ ճանապարհին դագաղը փոխնիփոխ տարվում էր այն չորս ծերունիների և մյուս մեհասակ տղամարդկանց ուսերի վրա։

Առջևից գնում էր Ստեփանը՝ գլուխը բաց և շունը ետևից։

Շրջապատի արտերից բազմաթիվ կոլխոզնիկներ գլխարկները հանելով մոտենում և միանում էին հուղարկավորության թափորին։

— Զորո տան Ասատուրն է մեռել,— ասում էին նրանք և վշտահար շտապում։ Իսկ ավելի հեռավորները, գերանդիներն ու փոցխերը բռնած, տխուր խոնարհում էին իրենց բաց գլուխները մայր հողին, համայնական կիսաքաղ արտերի մեջ, ոսկեփայլ լաների և բարդոցների կողքին կանգնած։ Բարձունքների վրա ջրտուք անողները, բահերը բռնած, տխրությամբ նայում էին վար։

— Խոդեդա՛նն է մեռել,— հեկեկալով բացագանչում էին քուրդ քիրվոները և շվարած կանգնում ճանապարհների վրա։

Վերևում, բարձր քարափի վրա, երևաց ջրերի ավագ կարգադրիչ Եգոր Քաջունին։ Նա հանեց գլխարկը։ Արցունքի մի մեծ, ծանր կաթիլ գլորվեց նրա խոշոր մատներին և բահի վրայով ընկավ ցած։

Երբ մոտեցան և դագաղը վայր դրեցին, սնրղչի Գրքոն մոտեցավ և ձեռքի գավազանով երկու անգամ հարվածեց Թամոյի սպիտակ գերեզմանին, որ նշանակում էր թե՝ մարդ է գալիս կողքիդ։

Հետևյալ օրը լույս տեսավ Թալինի շրջանային լրագրի հերթական համարը Խոդեդանի նկարով և մի մահագրով, որի խորագիրն էր. «Մեռավ հայ աշխատավորական գյուղի նահապետը»։

Յոթերորդ օրը, իրիկնապահին, երեք սգավոր կին մոտեցան Ասատուրի գերեզմանին, որոնցից մեկը, բարձրաձայն ողբալով, իրեն նետեց թարմ հողաշիրմի վրա.

— Դու անմուրազ մեռար, Խոդեդան։ Քու փափագ անկատար մնաց։ Զարժանացար Մշու, Սասունի և Խնուսա սուրբ հողին։ Բայց դու բախտավոր ես նրանով, որ պառկեցիր նոր Հայաստանի հողի մեջ և Ալագյազա ու Մասիսա քամին կշնկշնկա քու վրեն, Խոդեդան ջան։

Այդ կինը Խիմաթն էր։

Մյուս երկուսը Գյուլեն և Բայազն էին։

ՉՈՐՈՒ ՏԱՆ ԾՈՒԽՔ

«Տարիներ հետո, 1955 թվականի գարնանը ես նորից այցելեցի Իրինդ։

Ավանում մնացի մեկ օր։ Իմ հորեղբայրը՝ Շինական Պողոսը արդեն վախճանվել էր։ Նրա գերեզմանը գտնվում էր Կապույտ աղբյուրից ոչ հեռու, մոտավորապես այն վայրում, ուր առաջին անգամ ծանոթացել էի գնդապետ Եզնիկի հետ։

Իրինդ գնալիս, ես քաղեցի լեռնային ծաղիկների մի փունջ և դրեցի այն մարդու շիրմին, ով խաչապաշտ զորքին Մշո դաշտից առաջնորդել էր դեպի Բոնաշեն։

Որքա՜ն տխուր զգացումով է համակվում մարդ, երբ առաջին անգամ լավ ընկերոջ հետ անցած հաճելի ճանապարհը երկրորդ անգամ անցնում է առանց նրան։ Գրեթե ամբողջ ճանապարհին ես խորհում էի Եզնիկի մասին։

Արծվասարի ուսին հասնելով, ես կանգ առա և նայեցի Իրինդին։ Ընդամենը տասը տարի առաջ տեսած այդ գյուղը անճանաչելի էր դարձել։ Աճել էին վարդագույն տուֆից շինված բազմաթիվ տներ։ Փողոցներում էլեկտրական սյուներ էին նկատվում։

Ես սկսեցի աչքով որոնել Խոզեղանի և Բայազի խրճիթը։ Բայց կանաչ տանիքով այդ տնակը այլևս չէր երևում։ Երկհարկանի մի լուսավոր շենք էր կանգնած այն վայրում, ուր ես ենթադրում էի թե կարող է նրանց հյուղը լինել։

Ի՞նչ կարող էր պատահել։ Մի՞թե այդ տունը քանդվել է, մտածում էի ես։ Այն առվտնոցը, որտեղ Աստուրը քաղ էր անում մի ժամանակ, կրկին կանաչին էր տալիս հեռվից։ Թմբի տակ երևում էր այն ուռենին, որի ստվերում սովորաբար հանգստանում էր ծերունի հովիվը։ Իսկ հին տունը չկար։

Ես ճանապարհը թեքելով մտա մի կանաչ շավիղ, որ արտերի եզրով իջնում էր դեպի գյուղ։ Երբ մի փոքր մոտեցա և կռանալով նայեցի, երկհարկանի շենքի ետևում երևաց հողաշեն խրճիթ՝ կանաչ տանիքով։ Ուրեմն Խոզեղանի տունը իր տեղումն է,— մտածեցի ես։ Նրան պարզապես ծածկել էր նորակառույց շենքը։

Ուզեցի մեկն ու մեկին ձայն տալ, բայց շրջապատում մարդ չէր երևում։ Հանկարծ վերնահարկի դուռը բացվեց և մի երիտասարդ, գիրքը ձեռքին, հայտնվեց պատշգամբում։

— Այստեղ եկեք,— ասաց նա։

— Շունը կապվա՞ծ է։

— Դռան առաջ շուն չկա,— եղավ պատասխանը։

— Իսկ ո՞վ կա տանը։

— Ջոջոս է։

Ես ճանաչեցի։ Պատշգամբում կանգնած երիտասարդը Դավիթն էր՝ Ասատուրի թոռնիկը։ Նա նույնպես կռահեց իմ ով լինելը և, ներքև վազելով, գրկախառնվեց ինձ հետ։

Որքա՜ն մեծացել էր Դավիթը։ Նախկին փոքրիկ հովվի փոխարեն պարթևահասակ, հաղթանդամ մի տղամարդ էր կանգնած իմ առջև։

— Դու Ճոբոյիս ես փնտրո՞ւմ,— հարցրեց նա աչքերիս մեջ նայելով։

— Ի՞նչ կա որ...

— Իմ Ճոբոն չկա,— ասաց Դավիթը։— Նա մեռավ սրանից երեք տարի առաջ։ Իր շունն էլ չկա...

Այդ լուրը այնքան ծանր հարվածեց սրտիս, որ ես վշտից տապալվեցի կանաչ ուռենու տակ, որ թանձր հով էր արձակել շուրջը։

— Ուրեմն մահը տարա՞վ նրան,— ասացի։

— Տարավ, մահը տարավ Ճոբոյիս,— հառաչեց երիտասարդը, տեղ գրավելով իմ կողքին։

— Ո՞րտեղ է թաղված։

— Վերին Սասնաշենում։

— Ինչո՞ւ։

— Թաղեցինք նրան Թամոյի մոտ։ Մեռնելուց առաջ ասաց,— թոռնի՛կ, ինձ կտանես ու կդնես էն մարդու կողքին, որ իմ պապու հետ տաք փուռնիկ է կիսել Ճախրական գյուղում ու Դավթի ալյուրից մի պտղունց է խառնել հարսանիքիս հացին։ Բացի այդ,— ասաց նա,— երբ երկիր գնալու լինենք, Թամոն ինձ ձեն կտա, միասին կէրթանք...

Դավիթը մի պահ լռեց։

— Ճոբոյիս ցանկությունը չկատարել՝ ես չէի կարող,— շարունակեց թոռնիկը։

Դավիթը ամուսնացած էր։ Նրա հայրը, որ գյուղսովետի նախագահ էր Ագարակում, գնացել էր ճակատ և զոհվել էր Հայրե-

նական պատերազմի մարտերի մեջ։ Որդին Իրինդում մեծանալով, այնտեղ կազմել էր ընտանիք, վառելով Զորո տան կործանված տոհմի ծուխը և տեր կանգնելով Ասատուրի գերդաստանին։ Այդ կարմրաքար տունը ինքն էր շինել։ Ցածրահարկը մառանն էր, իսկ վերևում ապրում էր իր ընտանիքը։

Կացարանը, ուր ես մտա. մաքուր էր և ճաշակով կահավորված։ Երկու գեղեցիկ մահճակալ դրված էին իրար կողքի։ Մուտքի մոտ երևում էր մի գեղեցիկ բուֆետ՝ հախճապակյա սիրուն ամաններով։ Լուսամուտից ոչ հեռու կար գրքերով ծանրաբեռնված մի պահարան և մի գրասեղան՝ էլեկտրական լուսամփոփով և ընդունիչով։

Դավիթը կոլխոզի ոչխարաբուծական ֆերմայի վարիչն էր։ Նա մասնագիտական կրթություն էր ստացել Երևանում և, գյուղ վերադառնալով, ամբողջապես իրեն նվիրաբերել էր իրենց գյուղի անասնապահության զարգացման և առաջադիմության գործին։ Դավիթը խոսում էր գրագետ լեզվով, բայց սաստունցու նկատելի առոգանությամբ։

— Ճորոն տեսա՞վ քո հարսանիքը,— հարցրի ես։

— Տեսավ։

— Երեխաներ ունե՞ս։

— Երկու տղա։ Մեկի անունը Մհեր է, մյուսինը՝ Երվանդ։ Ճորոն երկուսին էլ գրկեց, հետո մեռավ։

— Ո՞րտեղ են։

— Զոչոյիս մոտ։

Ես Դավթին թողնելով արագ իջա բակը, տեսնելու այն կնոջը, որ Արինոքում ինձ մի ամբողջ տարի կերակրել էր իր կրծքի կաթով։ Դեռ դուռը չբացած՝ շեմքին երևաց Բայազը։ Ճշմարիտ է, ամուսնու մահից հետո նա շատ էր պառավել, բայց տակավին աշխույժ էր և քաջակազմ։ Ինձ տեսնելով՝ նա գոգնոցով սրբեց աչքերը և յուրովի ասաց.

— Խոդեդանը մեռավ, լաո։ Իր արև բախշեց քզի, ու գնաց քու պապու կուշտ։

— Թող քո թոռնիկը և ծոռները ողջ լինեն,— մխիթարեցի ես նրան։

Մուտքի մոտ, արևկողին, տաքանում էր մի ահագին բարձ։

— Մեր պսակի բարձն է, լաո, օդափոխության եմ հանել,—

ասաց պառավը։ Սրա վրա ես Աստուրի հետ հիսուն տարի գլուխ եմ դրել։ Սուրբ Աղբերիկի պսակատնից մինչև իր մեռնելու օրը մենք հավատարիմ եղանք մեր ուխտին։

Առաջին այցելությանը ես այդ բարձը մի քանի անգամ տեսել էի նախշուն կարպետի վրա, որին սիրում էր թիկնել Խոդեդանը՝ ուտելու տակ հանգչելիս, բայց իմ մտքով ամենևին չէր անցել, թե հաստ կտավից պատրաստված այդ թանձր պարկը մի առասպելական իր էր, որի հետ առնչված էր մի շինական ընտանիքի հիսուն տարվա ամուսնական կյանք։

Բայազը պատմեց, թե այդ բարձը շինել էր Ոսկեհատը՝ իրենց հարսանիքից մի քանի օր առաջ, նրա մեջ ածելով Ստեփանի սպիտակ ուլի բուրդը և զանազան թելանման խոտեր, որ նա քաղել էր Արինոքի ձորից։ Հետագայում Բայազը նրա մեջ ավելացրել էր նաև իրենց փետրաթափ աքլորի արյունոտ բմբուլները, որին կըտցահարելով սպանել էին Ախուպի Չատոյի աքաղաղները՝ Կատվաձորի ընկուզենիների տակ։ Գաղթի ժամանակ նրանք այդ բարձը դրել էին մի եզան վրա և Բռնաշենից բերել էին մինչև Թալին։

— Էդպես ապրեցինք մենք, լաո,— ասաց պառավը կռանալով և բարձի հակառակ երեսը արևդեմ դարձնելով։— Չեղավ մի գիշեր, որ մեկն ու մեկիս գլուխը գլորվեր օտար բարձի վրա։ Իր մեռնելու օրն էլ իմ ծոցն էր պառկուկ։

— Դեռ աշխատո՞ւմ ես,— հարցրի ես լռությունն ընդհատելով։

— Բա մարդ առանց աշխատանքի ինչպե՞ս ապրի։ Պարապությունը ժանգ է։ Քանի անգամ Պետրոսն ինձ ասաց. դընգը թող՝ չթողի։ Երբ ուժից ընկա, գնացի նրա մոտ ու թեթև գործ առա։ Հիմա ֆերմայի շների համար հաց կթխեմ, լաո։

— Ո՞վ է ֆերմայի գլխավոր հովվապետը։

— Ստեփանը։ Տեսա՞ր նոր տունը, ի՛նչ մեծ շվաք գցեց մեր տանիքին,— ասաց Բայազը նորակառույց շինությանը նայելով։ Ճիշտ է, մի քիչ վեճ եղավ պապի ու Թոռնիկի միջև՝ բայց վերջը Թոռնիկը հաղթեց։

— Ինչի՞ց էր գանգատվում ճորոն։

— Արևի շողի համար։

Եվ իսկապես ես նկատեցի, որ նոր տունը ծածկել էր հողաշեն խրճիթը, ստվեր էր նետել նրանց տանիքի վրա։ Էլ կարմիր կակաչ-

ները առաջվա նման չէին կախվում Աստուրի երդիկից։ Արևի հատ շողը այլևս չէր ընկնում թոնրի ակին։

«Տղա, լաո, դու իմ երդիկը ինչո՞ւ ծածկեցիր, դու իմ արևի շողը ինչո՞ւ կտրեցիր»,— գանգատվում էր ալևորս։

— Բայց ոչինչ, աշխարհի կարգն է էդպես։ Հինը պետք է գնա, նորը պետք է գա։ Տեսնո՞ւմ ես ի՛նչպես փոխվեց մեր գյուղը,— ասաց Բայազը բակից դուրս գալով և կանգնելով կանաչ թմբի վրա։— Մեր ղարիբները եկան, լաո։ Կարմիր դրոշակը տնկեցին Բեռլինի գլխին ու տուն եկան։ Էս տաս-տասներկու տարվա մեջ Իրինդը նորից առաջվա դրախտը դարձավ։ Մենք հիմա էլեկտրական լույս ունենք, մանկապարտեզ ունենք, նոր դպրոց և ակումբ ունենք։

Գիտե՞ս էս վերջին մի քանի տարվա մեջ ինչքան հարսանիք եղավ մեր գյուղում։ Դավիթ առավ Շողիկ, Պանդուխտ առավ Թուխիկ։ Չորս ամիս առաջ էլ Ստեփանի տղին պսակեցինք։ Նա էլ Հրեղենին առավ։ Ո՞ր մեկն ասեմ, լաո։ Էս Հինգ Ռանչպարի ձորը ամեն աշունքին կդրմմա զուռնի ձենից։ Մի քանի ընտանիք էլ դրրսից եկան։ Միայն արտասահմանի հայերից տաս գերդաստան կապրի մեր գյուղում։ Իրինդը շատ է փոխվել, լաո։ Մեր տների պես տներ քաղաքի մեջ էլ չկան։

Արտերի և մարգերի միջից լսվում էին ընդհատ-ընդհատ կանչեր, բզեզների և ծղրիդների բազմատեսակ ձայներ։ Բայազը շուռ եկավ և ցույց տվեց գյուղից դուրս երևացող կանաչ տարածությունները։

— Գարո՞ւն-գարնանոց է, լաո։ Ամեն թուփ ու դանդուռ ելեր է արևերես։ Կիտուռ, թրթուր թափվել է դուրս։ Սարդ ու սարդեղնակ քարերի տակ գոգնոց կգործեն։ Բվեճ, բողոճ՝ կխլվլան կանաչների մեջ։ Մեղու, մժեղ, թիթեռնակ՝ ծաղկից-ծաղիկ կանցնեն։ Ըմմեն իրար կպլշին, իրար կխիթեն, իրար կսիրեն։ Աշխարհք է, լաո, աստծու ամեն արարած բառոժ տեղ կիշե իր համար արևի տակ։

— Իսկ ո՞ւր է պառավ Ոսկեհատը,— ինչո՞ւ նա չի երևում իր բանջարանոցի մեջ,— հարցրի ես։

— Նա ավելի առաջ է մեռել, լաո։ Խոդեդանից երկու տարի շուտ մեռավ։ Իրենց հին խրճիթի թոնրան տակ է թաղված։

Ես շանթահար էի։ Այս ի՞նչ առասպելական ժողովուրդ է, մտածում էի լուռ կանգնած։

— Ոսկեհատը հարյուր տարի թոնդիր է շինել ու վառել, լաո։ Քու կարծիքով ո՞ւր պիտի թաղեին նրան,— ասաց պառավը։— Ոսկեհատը մեր թոնդրան կրակն էր, իսկ կրակը, լաո, անթեղում են մոխրի տակ, որ օջախը չմարի...

ՈՍԿԵԾԱՂԻԿԸ

Երբ լուսինը ծագեց, Դավիթը մի մեծ գերանդի ուսին դնելով՝ պատրաստվեց ուղևորվել։

— Ո՞ւր ես գնում,— հարցրի ես։

— Սար, խոտհնձի։

— Լուսնյակո՞վ։

— Այո։

Հարմար առիթ էր։ Ես կարգի բերեցի իմ վրձինն ու ներկերը և Դավթի հետ ճանապարհ ընկա համայնական խոտհնձի գիշերային տեսարանը նկարելու։

Արագածի հարավ-արևմտյան լանջերին, մի քանի կիլոմետր երկարությամբ տարածված էին Իրինդի «Արագած» կոլխոզի հրաշալի արոտավայրերը։ Ամբողջ շրջապատը ծածկված էր կորնգանի նմանությամբ մի բարձրահասակ, փարթամ և վառ կանաչով, որ հրաշալի բուրում էր գիշերային անդորրության մեջ։ Ես առաջին անգամն էի տեսնում այդպիսի անտվոր խոտ։

— Ի՞նչ է այս բույսի անունը,— հարցրի ես արոտավայրի անուշահոտությունից արբած։

— Գյուղացիները սրան ոսկեծաղիկ են ասում։ Իմ ճոբոն է ստեղծել։

— Կորնգա՞ն է։

— Ո՛չ։

— Առվույտի տեսա՞կ է։

— Ո՛չ։

— Ապա ի՞նչ է։

— Սա մի տարօրինակ բույս է, որ հինգ թիթեռնածաղիկ ունի, և թռչող ոսկեծաղիկն է հիշեցնում։ Երբ որևէ մեկը մոտենում է

որ քաղի, նրա թերթիկները ճախրում են ձեռքի միջից, որ նշանակում է թե երջանկությունը փախչում է անվերադարձ։

Իմ հետաքրքրությունն այնքան սաստիկ էր, որ ես անհամբերությամբ կռացա քաղելու։ Հենց որ մոտեցա՝ բոլոր ծաղկաթերթերը իմ առջևից թռան թիթեռների նման, ճախրելով լուսնաշողի արծաթափայլի միջով։

— Մի ձմեռ,— շարունակեց Դավիթը,— կերի պակասի պատճառով շատ անասուններ կոտորվեցին Իրինդում և հարևան գյուղերում։ Ճորոն վշտից հիվանդացավ։ Գիշերները չէր կարողանում հանգիստ քնել։ Եվ ահա նա մի երջանիկ միտք հղացավ։ Արագածի վրա նա տեսել էր նախշուն թփերով մուգ-կանաչ գույնի մի անՀնշան բույս, որ աճում էր լերկ հողերի վրա, անջրդի պայմաններում։ Ոչխարը գարնանը հազիվ էր կարողանում բերանով բռնել այդ կանաչը։ Իր կաթնատվությամբ նա չէր զիջում նշանավոր քեմյանին, որի հայրենիքը Սև սարն է եղել։ Հարկավոր էր դրանից մի զորավոր կերակրաբույս ստեղծել։ Այդ նոր բույսի ծաղիկը պետք է բաղկացած լիներ հինգ վարդագույն թերթիկներից և ամեն թերթիկը պետք է հիշեցներ իր զավակներից մեկն ու մեկին։ Նա երբեմն փակում էր աչքերը և երևակայությամբ պատկերացնում էր Արագածի բոլոր լանջերն ու արոտավայրերը այդ երազային խոտով ծածկված։

Ամռանը, երբ այդ խոտը հունդավորվեց, նա քարափից քարափ անցնելով, դրանից մի տոպրակ սերմ ժողովեց։ Առաջին փորձը արավ գյուղից դուրս, մի մարգագետնում։

Արդյունքը վատ չէր։

Խոդեդանը համոզված էր, որ արոտավայրերում սերմանվելով այդ նոր խոտաբույսը մեծապես կուժեղացներ հողը, մանավանդ, եթե խառնվեր կորնգանի կամ առվույտի հետ։ Միաժամանակ նա վստահ էր, որ արոտավայրի խոնավությունը կկերպարանափոխեր այդ գաճաճ տունկը, նրան դարձնելով փարթամ և բարձրահասակ։

Այդպես էլ եղավ։

Մահից մեկ շաբաթ առաջ, Ասատուրը սերմանեց այդ խոտահունդը և անկողին մտավ։ Արդյունքը, ինչպես տեսնում եք, հրաշալի է։ Ստացվել է մի բոլորովին նոր կարգի կերաբույս, որ կոչվում է ոսկեծաղիկ և միայն արտաքուստ է հիշեցնում կորնգանին։ Նրա նախշուն թփերը խավարի մեջ ճրագի պես լույս են

արձակում։ Այդ կողմից նա նման է քեմյանին։ Այս տարի մենք մեր արոտավայրերից կստանանք մի քանի հարյուր սայլ ոսկեծաղիկ, իսկ այդքան խոտը լրիվ կբավարարի մեր ֆերմայի հոտը և նախիրը ամբողջ ձմեռվա ընթացքում։

Վերևից փչում էր գիշերային զեփյուռը շաղախված աստղերի հմայիչ լույսով։ Ես Դավթի հետ ընթանում էի դեպի վեր և, իմ հայացքը լեռներին ուղղած, խորհում էի այն մարդու մասին, որ մահից առաջ աչքերը ուղղել էր գալիք սերունդների երջանկության վրա։

Ջով գիշեր էր։

Գյուղի աշխատավոր բոլոր ձեռքերը սարոմն էին։ Եկել էր նաև հովվապետ Ստեփանը ահագին գերանդին ուսած։

Նրանք կանգնել էին շարք-շարք և գերանդիները համաչափ բռնած հարում էին համայնական խոտը։ Առաջին շարքում ընթանում էին այն ութ տղամարդիկ, որ հիմնադրել էին Իրինդ գյուղը. Ստեփանը, Գութան Հարութն իր եղբայրներով, Սեմալցի Թաթոն և կոլխոզի նախագահ Պետրոս Թաղվեցին։ Այդ հինգ և արդեն ծերացած ռանչպարներին հաջորդում էր երիտասարդների շարքը՝ Դավթի գլխավորությամբ։

Հովը շնչշնչում էր խոտերի և ծաղիկների մեջ, սահում էր հնձվորների թևերի տակով, լցվում էր նրանց ծոցը և նրանց շապիկներն ուռցնելով դուրս էր փախչում։ Որոշված էր մինչև լույսը ավարտել ոսկեծաղկի հունձը, որովհետև շուտով սկսվում էր հացահատիկի քաղը։ Կեսժամյա դադարից հետո Դավիթը բարձրացնելով գերանդին՝ ասաց.

— Էս մի քաղը գնանք իմ ճորոյի կողմից։

— Գնա՞նք,— ասացին հնձվորները և հոպ անելով մի մարդու պես շարժեցին իրենց գերանդիները։ Լեռնային արոտը ահագին տարածության վրա իսկույն մերկացավ։ Հնձված խոտը խիտ ե երկայն լասերով տարածվեց լեռնալանջին։

— Էս մի քաղը գնանք Ոսկեհատի կողմից,— առաջարկեց Պետրոս Թաղվեցին։ Հնձվորները բարձրացրին իրենց փայլուն գերանդիները և պառավ Ոսկեհատի հիշատակը հարգեցին աշխատանքի հաղթական երթով։

— Հիշենք գնդապետ Եզնիկին, ընկերնե՛ր,— գոչեց Ստեփանը։

— Թո՛ղ պայծառ հիշվի նա,— միաբերան բացագանչեցին կոլխոզնիկները՝ գերանդիները շողացնելով մարգագետնի մեջ։

Իմ վրձինը անվրեպ գործում էր։ Ես նկարում էի մի ժայռի կատարից։ Այդտեղից երևում էին Թալինի կոլխոզային գյուղերը։ Իրինդը ցոլում էր էլեկտրական պայծառ լույսով։ Հեռուներում տեսայծում էին Կաթնաղբյուրի, Աշնակի և Ներքին Թալինի կրակները։

Արաքսի մյուս ափին ամբողջ երկիրը ընկղմված էր խավարի մեջ։ Լուսնի աղոտ լույսի տակ քնած էր Արևմտյան Հայաստանը՝ գլուխը Արարատի կրծքին դրած։

ՍԱՐԻ ՁՅՈՒՆԸ

Արևածագին ես իջա Ձորը։ Լվացվելու ժամանակ դիմացի բարձունքին ոտնաձայն լսեցի։ Իմ հանդեպ հայտնվեց մի մարդ, որ վերևի սարերից էր գալիս։

Թելո Մեսրոպն էր։

Նույն տարազն էր հագին, նույն ձեռնափայտը մեջքին, որից կախված էր մի դույլանման փոքրիկ քթոց, կանաչ թուփերով ծածկված։ Նույն տղամարդկային հպարտ քայլվածքը, որ հատուկ է լեռնական մարդուն։ Միայն ձախ ոտքից թեթևակի կաղում էր։

Ինձ տեսնելով, Թելոն գլխարկը հանած հրճվագին բարևեց և ձեռնափայտը քթոցի հետ իջեցնելով դրեց առվի վրա թեքված մի քարաժայռի ստվերում, ջրի կողքին։

Ձորն այդտեղ ամայի էր, արևկող։ Բացի կաքավների կլթկլթոցից և ջրի հանդարտիկ խոխոջից ոչինչ չէր լսվում։

Մեսրոպը կռացավ ջուր խմեց և բեղերը ցամաքեցնելով, նստեց ժայռի հովանիքում՝ քթոցի մոտ։

— Ո՞րտեղից ես գալիս։

— Սարերից։

— Ինչո՞ւ էիր գնացել սար։

— Գնացել էի ձյուն բերելու։

— Ձյու՞ն։ Ո՞ւմ համար է,— զարմացած հարցրի ես։

— Բոլոճ Մկրոյի։ Կաթնաղբյուրի լիկկայանում միասին ենք կարդացել։ Մկրոն հանդե հոգու վրա ընկած կշողցու ու ծանր կտքա։ Սարի ձյուն ուզեց ու խավրծիլ։

Թելոն բարբառով խոսեց։ Կարծես թե ինքն էլ զգում էր, որ իր սերնդի հետ անհետանում է նաև այդ շինական լեզուն և ուզում էր, որ դրանից գոնե մի պատառ մնա մեր գրքերի մեջ իբրև թթխմոր։

— Ո՞ր սարից բերեցիր։

— Անուշ աղբյուրի։ Գիշերով հասա ու դարձա։

— Բայց չէ՞ որ ձյունը լավ չէ հիվանդի համար,— նկատեցի ես։

— Հովնալ կուզե։ Խոդեդանն էլ մեռնելուց առաջ ձյուն ուզեց։ Մինչև հասա, հոգին տվել էր։ Հալհլոցն ընկել է մեր սերնդի մեջ, լաո։ Մեծ ձյունը, որ գնաց, սարի մյուս ձներն էլ հետը կէրթան։

— Ո՞վ էր մեծ ձյունը։

— Խոդեդանը։

Առաջին անգամ ես այդ կենսախինդ և հպարտ մարդու աչքերի մեջ արտասուք տեսա։

— Անցյալ անգամ դու ինձ և աղջիկներիս նկարեցիր սարում, ծաղկած ավելների հետ։ Ո՞վ գիտե, մեր պատկերը երևի տարել կախել ես քաղաքի թանգարանների մեջ։ Քու գործն է։ Կուզես գրքի մեջ էլ դիր, վախեցողը չեմ։ Իմ փափագն էն էր, որ աղջիկներիս արդեն պսակեցի։

— Բոլորի՞ն։

— Ցորնի խրձերը գնացին, մնացին կտավատի խրձերը։

— Նրանց ե՞րբ ես պսակելու։

— Տղա չկա գյուղում։ Մեր ջահել-ջիվանը պակասել է։

— Ինչո՞ւ։

— Երիտասարդները գնում են քաղաք ուսում առնելու և մոռանում են գյուղի ճամփան։ Հաց ուտել սիրում են, բայց գերանդի քաշելու հետ գլուխ չունեն։

— Ապա ո՞վ է աշխատում։

— Մնացել են մի քանի մանրապճեղ, որ բրիգադիր են կոլխոզում, և գյուղի հարսներն ու աղջիկները։ Էն հի՞ն, ծանրապճեղ ոանչպարների սերունդը շարքից դուրս է եկել։

— Ինչպե՞ս է ձեր վիճակը, քեռի Մեսրոպ։

Թելոն նայեց շորս կողմը։— Դու էլ մերն ես, լաո, իմ սիրտ քու առաջ կբանամ։

— Խոսիր, քեռի Թելո, էս ձորում մեզ լսող չկա։

— Ախպեր, ես ռանչպար մարդ եմ, դու հորի՞ պատ կքաշես իմ զարգացման առաջ, հորի՞ կսահմանափակես զիմ ճամփեն, հորի՞ կկրճատես զիմ ու քու ապրուստ։ Թող ազատ շարժվենք, քե՛զ էլ պահենք, մե՛զ էլ։

— Ո՞ւմ մասին է խոսքդ։

— Մեր կոլխոզի նախագահ Սիսակի։ Ասում եմ՝ թույլ տուր էն ձորաբերանին մի քանի թուփ շաղգամ ու ծխախոտ ցանեմ։ Ասում է՝ դու կոլխոզնիկ ես, քեռի Թելո, դու իրավունք չունես պլանից դուրս ընդարձակվելու։ Ախպեր, ասում եմ, արդեն քսան տարի է, որ ես ու աղջիկներս հարազատորեն աշխատում ենք կոլխոզում։ Մեք գավառամասի ընդհանուր ղեկավարները մեզանից գոհ են։ Դու ինչո՞ւ կաղավաղես ընկեր Լենինի տեսակետը։ Ես եմ ու կուզեմ մի քանի ամսան հարիսա ավելի ուտել, ինչո՞ւ պատ կքաշես իմ ախորժակի առաջ։

— Իսկ ավելի գործով չե՞ս զբաղվում,— հարցրի ես։

— Ավել քաղում եմ, բայց առաջվա եռանդը չկա։ Երևանում իմացել են իմ մասին և սարի ավել են ուզել, բայց ո՞վ թույլ կտա, որ Թելո Մեսրոպը թե՛ կոլխոզում աշխատի և թե՛ ավելի վաճառքով զբաղվի։ Խոփը ակոսից դուրս է թռել, լաո։ Իմ էն հրեղեն ձին, որի սանձը սուլթան Համիդն էլ չկարողացավ բռնել, թաշքեր է (հոգնել է) արդեն, և ես իր կողերին ընկած թավալ-թավալ կէրթամ։ Էդ իմ ջահելությունն էր, որ անցավ, իր սմբակները զարկելով Ծծմակա Քթի քարերին և խրխնջալով Մշո դաշտից մինչև Թալին։ Է՛յ Թելո Մեսրոպի ոսկեղեն ձի, ո՞ւր է հանգակտուր կէրթաս։ Ես դեռ երազ ունեմ, որ անկատար է, ես դեռ հունձք ունեմ անքաղ մնացած...

Թելոն լռեց։ Նա շտապում է Կաթնաղբյուր հասնել։

Ես գրեթե բոլոր նշանավոր շինականներին տեսել էի, բացի Բոլոճ Մկրտչից։ Ուստի ցանկացա գոնե վերջին անգամ նրան էլ տեսնել։

Մենք գնում էինք Հինգ Ռանչպարի ձորի միջով։ Առջևից գնում էր Թելոն՝ ձյունով լի քթոցը թևատակին։

— Խե՞ղճ Մկրտ, դարդից հիվանդացավ,— հանկարծ բացագանչեց Թելոն։

— Ինչո՞ւ։

— Ասացին թե ծրագիր են մշակել, որ մեր լեռնային գյուղերը

քոչեցնեն դաշտ տեղ։ Բոլոճ Մկրոն հենց որ էդ լուրը լսեց՝ հիվանդացավ։ «Վա՜յ,— ասաց,— շուտ մեռնեմ, քանի ինձ շոգ տեղ չեն տարել»։

— Իսկ քոչեցնելը ճի՞շտ է։

— Իրինդի աղբյուրների ջրերը տարել են։ Երևի մեզ էլ տանեն։ Գուցե մեր մի քանի մանրապճեղները խաբվեն իջնեն դաշտ, բայց մեծերն ամուր կպած են իրենց ժայռերին։ Արծիվներին թռցնելով՝ չես կարող դաշտ իջեցնել։ Նրանք էլի ետ կգան։ Մի տեսակ հավորիք կա, որ եթե ամառ ժամանակ իր թևը սարի ձյուներին չզարկեց՝ շոգից կսատկի։ Եթե կառավարության կազմի մեջ կաս, գնա ասա մեր Հայաստանի նոր ղեկավարներին, որ մենք էս լեռներից իջնողը չենք։ Մենք էս սարից կիջնենք էն ժամանակ, երբ կէրթանք մեր երկիր...

Գյուղ հասանք այն ժամանակ, երբ տեղի կոլխոզի նախագահը գնում էր Մկրոյի տուն։

Մեսրոպը ինչ-որ գործով զբաղվեց ճանապարհին, իսկ մենք երկուսով ներս մտանք։

Սենյակը լիքն էր հիվանդի ազգականներով, հարևաններով և համագյուղացիներով։ Բոլոճ Մկրոն պառկած էր լուսամուտի երկայնքով դրված մահճակալի վրա, թանձր նախշուն վերմակով ծածկված, իսկ Գյուլեն թևերը խաչած նստել էր պատուհանի դոգը և տխուր նայում էր հիվանդին։

— Հորքուր Գյուլե, իմա՞լ է քեռի Մկրոն,— հարցրեց նախագահը մեր ընդհանուր բարևից հետո։

— Ա՜խ, լաո, Մկրոն հանդե պառկած կշողցու ու ծանր կտքա։ Կասես թե առաջվա առյուծ Մկրո՞ն է։ Մկրոն, լաո, կոկել դարձել է մի մատնոց օսկոռ ու կաշի,— պատասխանեց Գյուլեն վշտահարությամբ գլուխը օրորելով և ավելի թեքվելով ամուսնու վրա։— Թելոն էլ ուշացա՜վ...

— Նա հիմա կգա,— ասացի ես։

— Կրիան որ սար էրթար՝ հիմա վերադարձած կլիներ։ Խեղճ հիվանդի շունչը կտրվեց իր կտուցը բաց ու խուսի անելով։

— Ջյուն եմ ուզում։ Ա՜խ, մի դդալ էն պա՜ղ-պա՜ղ սարի ձնե-րից լիներ՝ դնեի բերանս,— տնքաց տավարած Մկրոն։— Մի հատ մեր Մոտկանա Փորակ սարի էն թթվաշ դալար խավրթիլներից լիներ, քեղբեի, նրա թթվաշ ջուրը ցխար աչքերիս մեջ, հետո թող

աստվածն իմ հոգին առներ,— հառաչեց հիվանդը դռան բացվածքից դեպի անորոշ հեռուն նայելով։

Այդ խոսքի վրա շեմքին երևաց Թելո Մեսրոպը։

— Բերեցի՞ր։

— Ձյունը բերեցի, իսկ խավրծիլ չկա,— ասաց նա փոքրիկ քթոցը իջեցնելով հիվանդի մահճակալի մոտ։ Կանաչ սերթուփերի տակից փայլում էր ձյունը, ասես թե զամբյուղի մեջ սպիտակ աղավնիներ էին դրված։

Մենք դուրս եկանք։

Ես այդ միևնույն օրը Իրինդի վրայով բարձրացա սարը՝ հովիվների մոտ։

Այնտեղ, բարձունքների վրա ամեն ինչ թարմ էր։ Իսկ ավելի վերևում՝ անապական լեռների վրա մի հեշտագին երազանք կար։ Այնտեղ էր ձյունը, ամառվա ձյունը, որին կարոտում են բոլոր շինականները իրենց վերջին շնչում, և բոլոր ուղևորները, երբ վայր են իջնում լեռներից։

ԲԱՑԱԶԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Մի շաբաթ լեռներում ապրելուց հետո ես Դավթի հետ վերադարձա գյուղ։ Քաղաքի ամենաեռուն շրջանն էր։ Աշխատանքի ընդունակ բոլոր ուժերը իջել էին դաշտ։ Ինքը նախագահը բրիգադիրների հետ հանդ էր մեկնել արտերը հնձելու։

Այն օրը, երբ պատրաստվում էի մեկնել, մի անակնկալ դիպված, մեկ գիշերով միայն, հետաձգեց իմ հրաժեշտը։

Ուղևորվելու ժամանակ ինձ մոտեցավ մի կին՝ խնդրելով, որ ես այդ օրը իրենց տանը գիշերեմ։ Հայտնեց, որ ես պետք է քնեմ տանիքին։ Ուզում էի մերժել, բայց Դավիթը, որ հասկանում էր կնոջ խնդիրը՝ ասաց.

— Մերժելու բան չէ, պետք է գնաս։

Պարզվեց, որ այդ կնոջ տղան զոհվել էր Բեռլինում։ Ամեն մայիս ամսին նա իր որդու անկողինը փռում էր տանիքին, ծաղիկների մեջ։ Եվ այդ օրերին, երբ որևէ հյուր էր գալիս իրենց գյուղը, նրան մի գիշերով պառկեցնում էր այնտեղ, որդու կարոտը առնելու համար։

Ես կատարեցի այդ կնոջ փափագը և մի գիշեր անցկացրի նրանց տանիքին, իրենց որդու փոխարեն։

Առավոտ շատ վաղ Բայազն եկավ ինձ տուն տանելու։

— Լավ արեցիր, որ մխիթարեցիր խեղճ Լուսավարդին, լաո,— ասաց նա։— Իր տղան մեր գյուղի փոստատարն էր։ Շնկոյի նամակը նա մեզ բերեց։ Էս էլ էն գառան փոստն է, որ իմ ալևորը նվիրեց նրան իբրև աչքալուս սնք,— շարունակեց Բայազը ներքնակի տակ մի հնամաշ ոչխարենի ցույց տալով։— Բեռլինու ճամփին սպանեցին։ Ասում են թոփ է կպել։ Էդ թոփը Հիտլերի սև ջանին կպներ, ինչպես որ կպավ։ Հիմա էլ մեզ ատոմի ռումբով կվախեցնեն։ Հերու եկել էին մեր Մասսի վրա Նոյան տապան փնտրելու։ Բա ջրհեղեղից մինչև հիմա Նոյի տապա՞ն կմնա Մասսի գլխին։ Ես դրանց պատանքը կարեմ։ Մեկ օր տեսնես խաչապաշտ են, մեկ օր՝ կռապաշտ; մեկ էլ տեսար իրենց հավատը փոխեցին՝ դարձան կրակապաշտ։ Էս բարի լուսը վկա, մեր Անին էլ դրանք կործանեցին, մեր Մուշն էլ, մեր Վանն էլ։ Իմ ալևորը ճիշտ էր ասում. դրանց բոլորին պետք է մի պարկի մեջ լցնես, տանես Արինոքի ձորից ցած գլորես, որտեղից խեղճ Օնեին ու Քիշոյին ներքև գլորեցին։

Ծիծեռնակները զվարթագին պտույտներ էին գործում Ասատուրի տնակի շուրջը, երբ մենք վերադարձանք։

Տանը, կավյա մի խոր ամանի առաջ նստած, մածուն էին ուտում Մհերը և Երվանդը։ Մայր ծիծեռնակը երդիկից սրընթաց մտնելով, երկու օղակաձև շրջան գործեց օդի մեջ և թառելով սևացած գերանին, սկսեց իր ձագերին կերակրել։ Երեխաներից մեկը, որ համառորեն հրաժարվում էր ուտել հողե ամանից, թռչունի շարժվող պոչը նկատելով, առաստաղն ի վեր նայեց.

— Տղա Մհեր, հիմա ծիծեռնակ կծրտե քու բերան։ Շուտ կեր, որ մանկապարտեզ էրթանք,— ասաց Երվանդը, փայտյա մածնոտ գդալը նրա գլխին զարկելով։

— Թող ծրտե։ Մինչև ջոջոն սպիտակ ամանով մածուն չտա, չեմ ուտի,— հակառակեց Մհերը և իր գդալը թափով իջեցրեց Երվանդի ճակատին։

— Ինչո՞ւ եք կռվում,— լաո,— գոչեց Բայազը՝ ներս մտնելով բակից։

— Ջոջո, Մհեր սադաֆե ամանով կուզե ուտել,— գանգատվեց եղբայրը։

— Ինչո՞ւ, էս մեծ կոտիկը պակա՞ս ման է։

— Էս ի՞նչ ման է,— նեղացավ Մհերը և այն, երվանդի առջևից վերցնելով, զարկեց գետին։

Կավյա ամանը երկու կես եղավ։ Մածունը թափվեց։

— Քա վո՞ւյ, էս ի՞նչ արեցիր, լաո, Ճոբոյի գուվնի քասեն կոտրեցիր,—հառաչելով գոչեց Բայազը, ապա դառնալով ինձ՝ ասաց. մեկ տարի չկա մանկապարտեզ կէրթան, սկսել են մեր հողե հին ամաններն ու-պուտուկները կոտրել։ Անցած անգամ մեր եղի ուխալը տարա Դավթի տուն։ Մեկ օր չմնաց՝ ետ բերի։ Խեղճը զարիրի պես նստած էր էն սադաֆե սպիտակ ամանների առաջ։ Էնպե՞ս վախեցած կնայեր նրանց, էնպե՞ս կդողա՞ր, էնպե՞ս կդողա՞ր։ Մեղքս եկավ։ Ասի՝ էս քու տեղը չէ։ Վերցրի ու ետ բերի։ Ա՞յ, էն սև ուխալն էր։

— Աշխարհը շատ է լուսացել, լաո,— նկատեց Բայազը։— Մեր ջահելներն ըմմեն զարգացան։ Ամեն պիոների գլուխը մի կուլտուրայի տուն է, ամեն երեխի գլուխը՝ մի խրճիթ-ընթերցարան։ Հիմա մենակ մեր շրջանից երեսուն-քառասուն մարդ կսովորի Երևանի ու Մոսկովի համալսարանների մեջ։ Հիմա մեր գիտնականները աստղերի հետ գյուլաշ կբռնեն։ Երեկ Բյուրականից մարդ եկավ, կասե ակադեմիկոս Համբարձումյանը էնպես մի աստղատուն է շինել, որ հեռագիր կգցե աստղերի վրա։ Բոլոր աստղերի անուն-ազգանունը գրված-դրված է իր ծոցի մեջ։ Գիտե թե ո՛ր աստղը քանի տարեկան է, ե՛րբ է ծնվել, ե՛րբ կմեռնի։ Կիրովականցի մի տղա էնպես մի դեղ է գտել, որ սատկած ձին եթե խմի՝ պառկած տեղից վեր կելնի ու խրխնջալով կվազե։ Առաջ ո՞վ էր տեսել էդպիսի բան։ Օրը առավոտից է հայտնի, լաո։ Որ մեծերն էդպես գյուտեր անեն, պատիկները իսկի դաղար կմնա՞ն։ Նրանք էլ մի բան պետք է անեն, մի հին բան քանդեն, մի նոր բան շինեն։

— Կոտրե՛ք, լաո, ինչ-որ հին է, կոտրե՛ք,— ամանի կտորները գետնից վեր քաղելով և երեխաներին դիմելով ասաց Բայազը։— Մենք մութ ապրեցինք։ Հողե տնակների մեջ ապրեցինք։ Մենք գացի՞նք։ Ճոբոն գնա՞ց, Օսկոն գնա՞ց, էգուց-էլօր ես էլ կէրթամ։ Դուք բարով մնաք, բարով մեծանաք, բարով վայելեք ապագան։

Հետևյալ օրը Բայազը սովորականից վաղ էր վեր կացել։ Նա մութ-լուսով վառել էր թոնիրը, հաց էր թխել ֆերմայի շների համար և ուղարկել էր սար։

Պառավն ինձ ուղեկցելու եկավ մինչև Վերին Սասնաշեն։

Համայնական բերքառատ դաշտերը հանդարտ ալեկոծվում էին լեռնային զեփյուռից։ Օդը հագեցած էր մի բերկրալի անուշահոտությամբ։

— Տես ի՞նչ արտեր ունենք, լաո։ Ցանքսը բողոմ է քշել։ Ցորենի կռուվները աշնան գառներու պես իրար վրա կհեծնեն,— ասաց Բայազը ոսկեծածան լեռնալանջերը ցույց տալով։

Հանկարծ իմ ոտքը կպավ մի կոտրած կավի, որ թեք դիրքով խրված էր ճանապարհի եզրին և մասուրի պես կարմրին էր տալիս բարձրահասակ հասկերի ու կանաչության միջից։ Ուղիղ իմ ոտքերի տակով մի լորամարգի դուրս թռավ նրա միջից և անհետացավ ալեծուփ արտում։ Ես կռացա և, խոտերն ու հասկերը ետ տանելով նայեցի։ Այդ կոտրված ամանի հատակին փափուկ ծղնոտի վրա սպիտակին էին տալիս չորս փոքրիկ կապտավուն ձվեր։

Բայազի աչքերի մեջ ես արցունք տեսա։

— Մեր մածնի կճուճն է, լաո։ Երկու տարի առաջ տարա, որ դնեմ Խոդեդանի գերեզմանին, ձեռքես ընկավ կոտրվեց։

Եվ, իսկապես, ուշադրությամբ նայելիս ես տեսա մի արագիլ, որի նկարը հազիվ նշմարվում էր այդ անոթի մաշված բեկորի կողին։

Այդ առասպելական կճուճը, որ իրար էր շաղկապել երկու հեքիաթային սրտեր, այժմ բույն էր դարձել լեռնային կաքավների համար։ Նույնիսկ իր կոտրած-ավերված տեղում նրա մեջ կենդանություն և կյանք կար, և այդ էր, որ իմ հոգին լցրեց մի անպատմելի բերկրանքով։

Հինգ Ռանչպարի եզրին հասնելով, Բայազը գրկեց իմ գլուխը, համբուրեց ինձ և իր գեղջկական անուշ լեզվով ասաց.

— Կեղնի՝ մեկել գալուդ է՛լ ընձի չտեսնես, լաո, բայց աշխարհը մի՛շտ կեղնի։ Արինոքում ես քզի մեկ տարի ծծի կաթ եմ տվել։ Զմոռանաս էդ կաթը, լաո։ Ուր էրթաս՝ ճամփիդ կանաչ լինի, փշերը հեռո՞ւ, ծաղիկները շա՞տ...»։

ԽԱՆԳԱՐՎԱԾ ՎԱՆՔԻ ՄՈՏ

Հետևյալ մայիսին, մի լուսավոր առավոտ, Կարմրաշեն կայարանից դեպի Թալինի լեռնադաշտն էր ելնում մի ավտոմեքենա։

Խճուղու կիսապտույտի մոտ ավտոն կանգ առավ։ Նրա միջից դուրս եկավ հիսունին մոտ մի տղամարդ և գլխարկը ձեռքում բռնած կարոտով նայեց դիմացի քարքարոտ բլուրներին։ Երևում էր, որ այդ վայրը ծանոթ էր իրեն։ Մի ժամանակ այդ խճուղին շատ բանուկ էր։ Այդտեղով էին անցնում շրջանի բոլոր ղեկավար պաշտոնյաները և ամեն տեսակ ուղևորները։

Վերևում, բարձունքի վրա մի խանգարված վանք կար։ Այնտեղից լսվում էր մի հուզիչ պարեղանակ։ Նա պատվիրեց, որ մեքենան բարձրանա դեպի Ներքին Թալին, իսկ ինքը կաշկառուտ շավիղներով մագլցեց վերև։

Ուղիղ այդ կիսակործան վանքի առաջ երևաց լայնաթիկունք մի ծերունի, որ ձեռնափայտը կողքը պահած երգում էր ու պարում.

Ծլել էր հարավ քամին,
Ցար գյուլում, թար գյուլում,
Զարկել էր շեկիկ ծամին,
Ցար գյուլում, թար գյուլում։

Ես էմալ էի քու սիրուն,
Ցար գյուլում, թար գյուլում,
Ինչ մեղրեմոմ դեմ գոլուն,
Ցար գյուլում, թար գյուլում։

Հալեր, թափեր գոներուն,
Ցար գյուլում, թար գյուլում,
Գլգլեր մեջ կժներուն,
Ցար գյուլում, թար գյուլում։

Հարավ քամին մաղեր զիս,
Ցար գյուլում, թար գյուլում,
Մեջ քու ծոցին թաղեր զիս,
Ցար գյուլում, թար գյուլում։

Այդ տարօրինակ ծերունին Թելո Մեսրոպն էր։

Թելոն հավանորեն վերհիշել էր իր պատանեկական տարինե-

ը կամ հարսանիքի օրերը, որոնց մեղեդիները մի առանձին քաղցրությամբ են հնչում ծերության օրերին։ Այդ երգով էր նա նշանավորել իր և Հուլունքի անդրանիկ տեսակցությունը Մառնակա սարի լանջին, երբ գնացել էր այնտեղ արջմասուր ուտելու, նպատակ ունենալով հանդիպել սիրած աղջկան։ Այդ երգի ազդեցության տակ էր նա դրոշմել առաջին ամոթխած համբույրը Հուլունքի շիկնած այտերին Մովսես Խորենացու մամռոտած տապանաքարի վրա։

Թելոն այդ դանդաղ պարեղանակն ավարտեց և սկսեց քոչարի պարել։ Պարում էր և դեպի ետ դառնալով բացագանչում էր. «Դե ելեք պարենք, ո՞ւր եք պառկել, ե՛լեք պարենք»։ Առջևը կարմրաքար շիրիմներ էին՝ լուռ և թախծալի։ Իսկ նա պարում էր։ Ձեռնափայտը աջ կողքին պահած քոչարի էր պարում կիսաքանդ մատուռի մոտ։

Մերունին հանկարծ շուռ եկավ։ Տեսնելով, որ մի օտարական դիմացի ժայռին թիկնած՝ զարմանքով իրեն էր նայում, սթափվեց և կանգ առավ զգաստացած։

— Բա՛րև ձեզ, ընկեր Խնկոյան,— հանկարծ բացագանչեց Թելոն, հեռվից ճանաչելով իր ուսուցչին։ Նա ձեռքը ճակատին տարավ և արագ իջեցնելով, գավազանը բռնած վազեց դեպի եկվորը։

— Դուք ինձ վարժատանը դաս եք տվել, ընկեր Արամ։ Շնորհակալություն Մեսրոպ Մաշտոցի տառերի համար։

— Ո՞վ կհավատար, որ մենք նորից կհանդիպեինք, իրար և այն էլ Թալինի այս ավերված վանքի մոտ։

— Աշխարհը մեծ է, իր ճոթը երկար,— անմիջապես պատասխանեց Թելոն ընչացքները ոլորելով։

— Նորից էն ուրախ Թելո Մեսրոպն ես։ Միայն բեղդ առաջվա համեմատությամբ սաստիկ կարճացել է,— նկատեց Խնկոյանը։

— Մարդ քանի մեծնա, ամեն բան լե կկարճնա,— փիլիսոփայեց ծերունին։

— Ո՞վ կա քեզ հետ սովորողներից։

— Բոլորն էլ մեռել են։ Ես եմ մնացել ողջ։ Ուրախ մարդիկ երկար են ապրում, ընկեր Արամ։ Եկա վանքի դուրանը ավել քաղելու, հիշեցի ընկերներիս և սկսեցի մեն-մենակ քոչարի պարել։ Կանչում եմ, ոչ ոք՝վեր չի կենում։ Մեկ տարի առաջ Բոլոճ Մկրոն

մեռավ։ Էն, որ սև բոլոռներ էր բերում դասարան։ Հիշո՞ւմ եք նրան։

— Ինչպե՞ս չէ։ Նա իմ տանտերն էր Կաթնաղբյուրում։

— Ա՜յ, սրանք են իմ վարժատան ընկերները։ Շարված են իրար կողքի, ինչպես լիկկայանի պարապմունքին,— ասաց Թելոն մոտենալով առաջին գերեզմանին։— Սա Գոմսա Մելիքի քարն է։

Խնկոյանը գլխարկը հանեց։ Մեսրոպյան տաքերով չորս մեծախորհուրդ բառ էր դրոշմված այդ կիսատաշ պառկած քարի վրա։ «Ա՜խ, Սալվարդ։ Ա՜խ, Հայաստան»։

— Ո՞վ է եղել Սալվարդը։

— Նրա աղջիկն է եղել։ Իր կյանքի վերջին տարիներին Գոմսա Մելիքը նշանակված էր մեր գյուղի ոչխարաբուծական ֆերմայի պահակ։ Էս քարափից է նա հսկել ֆերմայի գոմերը ամառային լուսնյակ գիշերներին։ Սա Փղորկվա Կարոյի շիրիմն է։ Հիշո՞ւմ եք, ամեն շաբաթ օր խաղ էր ասում դասերից հետո։ Երբ Կաթնաղբյուր գյուղում առաջին անգամ կինոնկար ցույց տվեցին, Գոմսա Մելիքի հետ դուրս թռավ, որ հրացան բերի արջերի վրա կրակելու։ Է՜յ Փղորկվա Կարո, հիշո՞ւմ ես էն օրը, որ ես իմ ավանակն ու քուռակը ամբողջ ժողովրդի ներկայությամբ հանձնեցի քեզ։ Էս Բաղլվա Սիսակի հողաթումբն է։ Խորենացու Հայոց պատմությունը անգիր գիտեր։ Թարգմանչաց վանքի տոնախմբությանը յոթ փահլևանի հաղթեցի, մեկը Բաղլվա Սիսակն էր։ Մեր գյուղում մի քանի տարի կոլխոզի նախագահ եղավ և վերջը զոհվեց կոլխոզի մեկ փունջ խոտի համար։ Սա Ալիջնա Ազոյի կարմիր քարն է։ Նրան էլ տոնախմբության ժամանակ գետնով զարկեցի։

— Իսկ սա՞ ում գերեզմանն է։

— Ատաղձագործ Հակոբի։ Խոդեդանի տունը նա էր շինել Արինոքում։ Իր կին Մաղկանուշն էլ է մեռել, իր մինուճար տղան էլ։ Դռան վրա մի սև կողպեք կա։ Ասում են՝ իր աներ Տեր-Ավետիսի անեծքն է ծանրացել վրան։ Էս մեկն էլ արուքցի Խոշե Իսոյի կնոջ տապանն է։ Իմ հաղթած յոթ փահլևաններից մեկը Խոշե Իսոն էր։ Խեղճի կինը երեխա չուներ։ Մի օր Մարտունու շրջանից մեկ մաղ ծախող աղջիկ եկավ մեր գյուղ։ Եղսանը նրան ներս տարավ, լողացրեց, շորերը փոխեց և բացակայությամբ պսակեց իր մարդու հետ։ Երբ Խոշե Իսոն սարից եկավ, Եղսանը ասաց նրան. «Էս քո կինը, էս էլ ես։ Սրանից հետո ինձ մամա կասես»։ Հիմա էդ

մեռավ։ Էն, որ սև քոլոճներ էր բերում դասարան։ Հիշո՞ւմ եք նրան։

— Ինչպե՞ս չէ։ Նա իմ տանտերն էր Կաթնաղբյուրում։

— Ա՜յ, սրանք են իմ վարժատան ընկերները։ Շարված են իրար կողքի, ինչպես լիկկայանի պարապմունքին,— ասաց Թելոն մոտենալով առաջին գերեզմանին։— Սա Գոմսա Մելիքի քարն է։

Խնկոյանը գլխարկը հանեց։ Մեսրոպյան տառերով շորս մեծախորհուրդ բառ էր դրոշմված այդ կիսատաշ պառկած քարի վրա։ «Ա՜խ, Սալվարդ։ Ա՜խ, Հայաստան»։

— Ո՞վ է եղել Սալվարդը։

— Նրա աղջիկն է եղել։ Իր կյանքի վերջին տարիներին Գոմսա Մելիքը նշանակված էր մեր գյուղի ոչխարաբուծական ֆերմայի պահակ։ Էս քարափից է նա հսկել ֆերմայի գոմերը ամառային լուսնյակ գիշերներին։ Սա Փղորկվա Կարոյի շիրիմն է։ Հիշո՞ւմ եք, ամեն շաբաթ օր խաղ էր ասում դասերից հետո։ Երբ Կաթնաղբյուր գյուղում առաջին անգամ կինոնկար ցույց տվեցին, Գոմսա Մելիքի հետ դուրս թռավ, որ հրացան բերի արջերի վրա կրակելու։ Է՛յ Փղորկվա Կարո, հիշո՞ւմ ես էն օրը, որ ես իմ ավանակն ու քուռակը ամբողջ ժողովրդի ներկայությամբ հանձնեցի քեզ։ Էս Բաղլվա Սիսակի հողաթումբն է։ Խորենացու Հայոց պատմությունը անգիր գիտեր։ Թարգմանչաց վանքի տոնախմբությանը յոթ փահլևանի հաղթեցի, մեկը Բաղլվա Սիսակն էր։ Մեր գյուղում մի քանի տարի կոլխոզի նախագահ եղավ և վերջը զոհվեց կոլխոզի մեկ փունջ խոտի համար։ Սա Ալիջնա Ազոյի կարմիր քարն է։ Նրան էլ տոնախմբության ժամանակ գետնով զարկեցի։

— Իսկ սա՞ ոմ գերեզմանն է։

— Ատաղձագործ Հակոբի։ Խոդեղանի տունը նա էր շինել Արինոքում։ Իր կին Մաղկանուշն էլ է մեռել, իր միանգամայն տղան էլ։ Դռան վրա մի սև կողպեք կա։ Ասում են՝ իր աներ Տեր-Ավետիսի անեծքն է ծանրացել վրան։ Էս մեկն էլ արուքցի Խոշե Իսոյի կնոջ տապանն է։ Իմ հաղթած յոթ փահլևաններից մեկը Խոշե Իսոն էր։ Խեղճի կինը երեխա չուներ։ Մի օր Մարտունու շրջանից մեկ մաղ ծախող աղջիկ եկավ մեր գյուղ։ Եղսանը նրան ներս տարավ, լողացրեց, շորերը փոխեց և բացակայությամբ պսակեց իր մարդու հետ։ Երբ Խոշե Իսոն սարից եկավ, Եղսանը ասաց նրան. «Էս քո կինը, էս էլ ես։ Սրանից հետո ինձ մամա կասես»։ Հիմա էդ

մաղ ծախող աղջիկը մի քանի երեխա ունի, և վառվել է արուքցի Խոշե Իսոյի տան ճրագը, իսկ բարեհիշատակ Եղսանը հանգիստ ննջում է հողի տակ։ Էս մեկն էլ մի մենատնտես մարդու խաչքարն է, որ միշտ ասում էր «իմ փորի մեջ կոլխոզի հաց չպետք է մտնի»։

— Եվ չմտա՞վ։

— Չմտավ, ընկեր Արամ։ Խեղճը մեռավ առանց կոլխոզի հաց ուտելու։ Մի էդպիսի մենատնտես էլ Իրինդում կար։ Երևի կճանաչես, անունը Ռզգո էր։ Տուրքը շատացրին, բայց էլի կոլխոզ չմտավ։ «Քշո՛ւ, քշո՛ւ, Հարմաթ, կարմիր ճետ կերավ զիմ հող» — ասում էր նա կնոջը։ Վերջին օրն ասաց. «Իմ քրտնքից, իմ տնամերձից կիտաք զիմ խեր (հոգեհաց)։ Ես էլ մի ժամանակ համառեցի, բայց դուք և մեր մյուս ղեկավար ընկերները ինձ վերջ ի վերջո կոլխոզի հացի տեր դարձրիք։ Ասացի, կոլխոզի հացն էլ ուտեմ, հետո մեռնեմ։

— Անո՞ւշ հաց է,— հարցրեց Խնկոյանը, նստելով մի քարի։

— Յոթը տերության հաց եմ կերել, ոչ մեկի հացը էդքան համով չէ։ Հենց որ դնում ես բերանդ՝ հալվում է։ Դեռ կալից պահեստ չտարած՝ իսկույն սպառվում է, էնքան համով է։

— Ի՞նչ ես անում գյուղում։

— Ի՞նչ պետք է անեմ։ Աղջիկներս աշխատում են կոլխոզում, ես էլ մեկ-մեկ ավել եմ քաղում քարափներից։ Էս համայն գավառամասի մեջ ինձպես քոչարի պարող չկա։

— Բայց քու հագուստը քոչարի պարողի հագուստ չէ։ Դու լիկկայանում ավելի լավ էիր հագնված։

— Իմ հագուստ-կապուստը իսան հագած չկա,— պարծեցավ Թելոն, հենվելով իր ձեռնափայտին։— Օլամության մեջ էլ, կամավորության մեջ էլ ես միշտ հայտնի հագվոր եմ եղել։

— Կամավո՞ր էլ ես եղել։

— Ի՞նչ է ասում։ Տղա, դու ծո՞ւռ ես, ի՞նչ է։ Բա Թելո Մեսրոպը որ կամավոր չլիներ, ո՞վ պետք է կռվեր Հայաստանի ազատագրության համար,— բարկացավ Թելոն, խեթ-խեթ նայելով Արամ Խնկոյանին։— Անդոկի կռվից հետո ես, Գոմսա Մելիքը և Փղորկվա Կարոն կամավոր դարձանք։ Ես Ղարսի վերջին կռվին էլ մասնակցել եմ։ Գևորգ Չաուշը և Անդրանիկ փաշան ինձ մոտիկից ճա-

նաչում էին։ Առյուծներ են էս քարերի տակ պառկած, լաո։ Հաստապճեղ Խոդեդանի, Գոմսա Մելիքի և Փղորկվա Կարոյի սերունդն է էս քարափին հանգչում։

Լույսը բացվեց, նայիր առաջ,
Շառագունեց լանջը Մնսյաց.

Ես, Գոմսա Մելիքը և Փղորկվա Կարոն էս երգով ենք դիմավորել կարմիր զորքին Թալիշի սարալանջի վրա, վար առնելով եռագույնը և բարձրացնելով սովետական դրոշը։ Դրանից մեկ ամիս առաջ մեր գունդը Ղզել-Չախչախի մոտ կռվում էր թյուրքի դեմ։ Մենք տեսանք թե ինչպես գեներալ-նահանգապետ Յորղանովը Ղարսը ծախեց թշնամուն երկու պուտուկ ոսկով։

— Ի՞նչպես,— զարմացավ Արամը։

Արևը կլիներ հինգ չվան ու կես, երբ մենք երեքով ճամփա ընկանք դեպի Ղարս։ Մեզ հետ էր նաև Զուլումաթ Սմբատը։ Տեսանք մի թյուրք գյուղացի ամանով մածուն էր տանում։ Մեզ նկատելիս ճամփան փոխեց։

— Ո՞ւր կերթաս,— ասացի։

— Ղարս,— պատասխանեց ճամփորդը։

— Պուտուկով մածունը ո՞ւր կտանես։

— Կտանեմ քաղաք ծախելու, որ երեխաներիս շապիկ առնեմ։

Մածունը ձեռքից առա։— Տղերք, ասացի,— էս մածունը մեր երկրի մածնից ծանր կերևա։ Մատով խառնեցի, տեսա որ կաշմիր ոսկին դիզած է տակը։

— Ա՜յ մարդ,— ասացի,— քու մածունը ոսկի դարձավ, էս ի՞նչ հրաշք է։ Եթե շիտակը չասես, գլուխդ կթռցնեմ։

— Նահանգապետին կտանեմ, ադա,— խոստովանեց գյուղացին ոտքիս ընկնելով։

— Ո՞վ տվավ քեզ։

— Գյուղի մեծերը տվեցին։

Գյուղացու գլխարկի մեջ, աստառի տակը մի նամակ գտանք։ Ղարսի թյուրք ոստիկանապետը պարոն Յորղանովին գրում էր. «Ահա երկրորդ պուտուկն է, որ ուղարկում ենք քեզ։ Մերոնք լավ զինված են և Ղարսի ձորը կարող են կտրել։ Երևանից եկած լու-

որը մեզ տեղեկացրեք։ Ձեր ոստիկանապետ»։ Էստեղ էր, որ Գոմար Մելիքն ասաց. «Հե՜յ վախ, մեր ազգի ձին փեքոլ է անում և սև ագռավն էլ կկռկռա։ Մուշը տվինք, Վանը տվինք, հիմա էլ Ղարսի պես բերդաքաղաքն է ձեռքից գնում։ Բարկացած գնացինք գտանք Ղարսի նահանգապետի տունը և սկսեցինք կրակել նրա լուսամուտներին։ Բայց խլուրդը թաքնվել էր գետնի տակ։

Թելոն Մեսրոպը լսել էր, որ Արամ Խնկոյանը վերադարձել էր Հայրենական պատերազմից, բայց չէր իմանում, թե ի՞նչ պաշտոն է վարում։ Իմանալով, որ նա Լուսավորության մինիստրության տեսուչ էր նշանակված և դպրոցական գործով շտապում էր Լենինական, շնորհավորեց նրան՝ ասելով.— Ճիշտ է, կարճ շալվարով եկար մեր գավառամաս, բայց մենք քեզնից շատ գոհ ենք, ընկեր Արամ։ Դու նրանցից ես, որ մեզը են շինում կյանքում։ Ավելի լավ է աշխարհում տաս հատ մեղու լինի, քան թե հազար հատ ճանճ։

— Իսկ ձեզ մոտ ինչպե՞ս է գործը, աղջիկներդ բավականաչափ աշխոր վաստակո՞ւմ են,— հարցրեց Խնկոյանը, խոսակցությունը փոխելով։

— Էս ամբողջ պայքար աշխորի վրեն է, ընկեր Արամ։ Աշխոր սար կճղե,— ոգևորությամբ բացագանչեց Թելոն և իր քաղաքի ավելների խրձերը վերցնելով՝ Արամ Խնկոյանին ուղեկցեց դեպի գյուղ։

— Ընկեր Արամ, շուտ-շուտ եկեք մեր շրջան։ Ճիշտ է, Թալինը քարքարոտ տեղ է, բայց մի կտոր կանաչ գետին կգտնվի, որ վրան նստեք։ Ինչքան հյուր է գալիս Հայաստան, տանում եք Արտաշատ կամ էջմիածին։ Ինչո՞ւ մեկ անգամ էլ նրանց մեր լեռները չեք բերում։ Չէ՞ որ հյուրի համար հովալի տեղերն են հաճելի։

— Իսկ դու ինչո՞ւ երբեք քաղաք չես գալիս, քեռի Մեսրոպ,— հարցրեց Խնկոյանը բաժանվելիս։

— Էս հասակիս գամ քաղաք ի՞նչ անեմ։ Իմ հայհայը գնացել է, վայվայն է մնացել, ընկեր Արամ։ Ես էն մարդն էի, որ սատանային մի հավի պես թևիս տակ դրած մինչև Բերդակ տարա։ Իսկ հիմա իմ բեղը եկել հավասարվել է ձեր բոլորի բեղին։ Մեկ էլ, ճիշտն ասած, վախենում եմ քաղաք գալ,— ավելացրեց Թելոն։

— Ինչո՞ւ։

— Ասում են էդ քաղաքի մարդկանց փորերը սաղ ավերված է։

Էլ ոակ, էլ ռևմատիզ, էլ կրակ ու տիզ, ըմմեն հիվանդություն եկել մտել է դրանց փորի մեջ։ Իրիկուն կպառկեն՝ առավոտ կքշեն հիվանդանոց։ Վա՜յ իմ թոքեր, վա՜յ իմ կույր աղիք, վա՜յ իմ փոր ու փսոր կասեն ու կվազեն բալնիցեք։ Իմ տեղը սա՛ է, վանքի դուռանը։ Ինչ որ գալու է, ներքև՝ քարերուց չի գա, վերև՝ սարերուց կիգա,— փիլիսոփայեց ծերունին և ավելները աղջիկներից մեկին հանձնելով, ձեռնափայտը բռնած ընթացավ դեպի խանգարված վանքի կողմերը։

ԾԱՆՈԹ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Ավտոն, որ սպասում էր Արամ Խնկոյանին, կանգնել էր գյուղից վերև, հին քարվանսարայի ավերակների առաջ։

Վերին Թալին հասնելով, Խնկոյանը մտավ Խորհուրդների փողոցը։ Հայրենական պատերազմից հետո նա առաջին անգամն էր ոտք դնում Թալին։ Շատ բան էր փոխվել այնտեղ։ Շրջկենտրոնում շինվել էին բազմաթիվ նոր տներ։ Ասֆալտապատ փողոցի երկայնքով շարված էին մի քանի տաքսի ավտոմեքենաներ։ Վարորդներից մեկը դլուխը լուսամուտից հանած կանչում էր. «Երևա՜ն գնացող, Լենինակա՜ն գնացող»։ Այդ այն միևնույն վայրն էր, ուր երեսուն տարի առաջ մարդիկ փողոցում կանգնած վիճել էին գործկոմի ախոռում մնացած մեկ ձիու համար։ Մի քիչ այն կողմը գտնվում էր Բագրատ Երանելու սպառկոոպի խանութի շենքը։

Խնկոյանը հուզվեց, վերհիշելով այդ օրերը և իր երիտասարդ կյանքի արշալույսին հանդիպած այն մարդկանց, որոնց մի զգալի մասն արդեն չկար։

Նրանցից ամեն մեկն ընթացել էր իր բախտի ճանապարհով։ Մի քանիսը, այդ թվում և Բագրատ Երանելին, զոհվել էին Երկրորդ համաշխարհային պատերազմի արյունոտ մարտերում։ Կուսհրահանդիչ Գուրգեն Հայկազունին պատերազմից վերադառնալով նշանակվել էր Գյուղբանկի դիրեկտոր Լենինական քաղաքում։ Կոմսոմոլի հրահանգիչ Ռուբեն Այվազյանը սկսել էր ղեկավարել Հայաստանի արհեստակցական միությունների աշխատանքը և ճանաչված անձ էր հանրապետության մեջ։ Այվազյանը կարճահասակ էր և տարիքն առնելով ավելի գեր ու կլոր էր դարձել։ Այնքան ցածրահա-

սակ էր, որ դեռևս այն տարիներին, երբ նա ամբողջ հասակով կանգնած՝ ելույթներ էր ունենում Թալինի գյուղերում, անծանոթ սասունցիները նրան առաջին անգամ տեսնելով, զարմացած հարցնում էին ժողովի նախագահին, թե ինչո՞ւ է ընկեր Այվազյանը նստած խոսում։

Աղետաբեր էր եղել Թալինի փոստի կառավարիչ Անուշավան Շաղոյանի վերջաբանը։ 1939 թվականին նա ավտոյով գլորվել էր Հինգ Ռանչպարի ձորը և ջախջախվել։

Կուցե հարցնեք, թե ի՞նչ եղավ Ապրես Փոշոտյանը, Թալինի գավառամասի առաջին խրճիթ-ընթերցարանի անդրանիկ վարիչը։ Նա այժմ էլ կա և աշխատում է իբրև արխիվի վարիչ Հայկոոպի մոռացված գրասենյակներից մեկում։

Շատ ողբերգական էր եղել Կարմիր Ճպուռի վերջավորությունը։ Այդ մարդը, որ ղեկավարում էր անաստված միության աշխատանքները Թալինում, իսկ հետագայում երկար տարիներ պաշտոնավարել էր իբրև Պետապի գործակալ, զոհ էր դարձել բնական աղետին։ Ճանապարհով անցնելիս, Ճպուռը կայծակնահար էր եղել Կաքավաձորի անդնդախոր կիրճում։ Կայծակն այնպես էր հարվածել, որ նա տեղն ու տեղը սևացել էր և կպել ժայռերին։

Բավական անստույգ էր ՄՈՊՐ-ի լիազոր Զարզանդ Զվակերյանի վախճանը, որին համատարած կոլեկտիվացման ժամանակ ձերբակալել էին հակապետական թռուցիկներ տարածելու համար։ Թալինում շշուկով պատմում էին, որ իբրև թե Վարժապետ Ճրագը և Կարմրաշենի տերտեր՝ Հայկը հեռավոր Սիբիրի անտառներում տեսել էին մի բարակադեմ մորուքավոր ծերունու՝ Նարեկը թևի տակ։ Իբրև թե դա եղել է ինքը Զարզանդ Զվակերյանը, այն մարդը, որ Բագրատ Երանելու հետ նույնիսկ «Ինտերնացիոնալ» էր երգել Թալինի գերեզմանատանը, վերջինիս քեռու թաղման հանդեսին։

Վերին Թալինում երեք պաշտոնյա շտապով եկան Արամ Խրնկոյանի մոտ։ Դրանցից մեկը Աբո Համազասպն էր, որ Հայրենական պատերազմի ավարտից հետո աշխատել էր իբրև շրջկոմի առաջին քարտուղար, իսկ այժմ պաշտոնից արձակվելով նշանակվել էր Երևանի կինո-թատրոններից մեկի տնօրեն։ Երկրորդը Թալինի ժողկրթբաժնի վարիչն էր, որ ուներ հինգ հարյուր ուսուցիչ, իսկ երրորդը գյուղատնտես Գարեգին Պիծակն էր։

Կաթնաղբյուր գյուղում Գյուլեն գրկախառնվեց Խնկոյանին և արցունքով ցույց տվեց նրան այն կոտրած կամը, որի վրա քնել էր սովետական առաջին ուսուցիչը իրենց խոնավ մարագում՝ դրանից երեսուն տարի առաջ։ Նա ցույց տվեց նաև այն առաջին պրիմուսը, պատեֆոնը և ձեռքի մաշված լուսարձակը, որ համարվել էին առաջին «հրաշքները» Թալինում։ Այդ հնացած իրերի թվում կար նաև այն նավթի լամպը, որ լուսավորել էր Թալինի առաջին վիկկայանի պարապմունքները Կաթնաղբյուր գյուղում։

Մաստարայի մոտով անցնելիս, Խնկոյանը տեսավ դաշտի մեջ կանգնած մի բարձրահասակ մենավոր տղամարդու։ Դա Զորավարդ Սամվելյանն էր, Թալինի գործկոմի նախկին նախագահը, որ պետական պլանները թերակատարելու և մի շարք այլ սխալներ թույլ տալու համար իր պոստից ետ քաշվելով նշանակվել էր գյուղի հանդապահ։

ՎԵՐՋԱԲԱՆ

Մի անգամ Հայաստանի Պետական պատմության թանգարանի աշխատասենյակներից մեկում վիճում էին երեք հնագետ։ Նրանց առաջ սեղանի վրա դրված էին գյուղից նոր բերված մի հարսնթագ և մեջքի արծաթե գոտի։

Հարսնթագը շատ հին էր։ Ճակատի մեջտեղը երեք խոշոր ոսկեդրամներ կային Տիգրան թագավորի նկարով, իսկ կողքերին երևում էին պոկված դրամների տեղեր՝ ոլորված օղերով։ Ինչ-որ մեկը ահեղ բարկությամբ շորթել էր գեղեցիկ թագի զարդարանքները, իր ձեռքի ավերիչ ազդեցությունը թողնելով դրանց վրա։

Ոսկեդրամները թեև փայլեցված էին, բայց խոշորացույցով նայելիս նրանց մակերեսին նշմարվում էին հրդեհի որոշակի հետքեր։ Ծակոտիների մեջ մուր և մոխիր էր երևում։

Արծաթե գոտու վրա արաբական մաշված գրեր կային, որոնց իմաստը հեշտությամբ վերծանվեց «...Այս տունն ընկավ հալածական և համարյուն իր եղբայրները — անմեղ հայությունը պաշտպանած լինելու համար»։

Ո՞ւմ մասին էր խոսքը։ Ի՞նչ առնչություն ուներ այդ պակա-

տավոր ասացվածքը կանացի մեջկապի հետ։ Այդ էր, որ ամբողջապես առեղծված էր մնում և սաստիկ խորհրդավոր էր դարձնում այդ արծաթե գոտին։

Առեղծվածային էր նաև երեք ոսկեդրամների մուրը։ Մութ և հանելուկային էին ոլորված օղերը, որոնք բավական ենթադրություններ և կասկածներ առիթ տվեցին։

— Այս ոսկեդրամները այրվել են Տիգրանակերտի հրդեհի ժամանակ,— ասաց հնագետներից մեկը՝ խոշորացույցը սեղանին դնելով։

— Բայց Տիգրանակերտի հրդեհը շատ վաղուց է եղել։ Մոտավորապես երկու հազար տարի առաջ, հռովմեացի Լուկուլլոս զորավարի ժամանակ։ Ես կարծում եմ, որ թե՛ այրվածքը և թե՛ դրամների վրա երևացող մուրը ավելի ուշ ժամանակի արդասիք է,— առարկեց երկրորդ հնագետը։

— Նե՛րս կանչեցեք բերողին,— կարգադրեց երրորդ աշխատակիցը, որ մի հմուտ ազգագրագետ էր և պատուհանի մոտ առանձին կանգնած լսում էր երկու հնագետների վիճաբանությունը։

Դուռը բացեց և ներս մտավ մոտ տասնչորս տարեկան մի գեղեցիկ պատանի։

— Անո՞ւնդ։

— Մհեր։

— Ո՞ր գյուղից ես։

— Թալինի Իրինդ գյուղից։

— Այս հարանթագը և արծաթե գոտին դո՞ւ ես բերել։

— Այո։

— Ո՞րտեղ ես գտել։

— Իմ ջոջոյի անդուկի մեջ։

— Քո ջոջոն ո՞ղջ է։

— Ոչ, վերջերս մեռավ։

— Նա քեզ ոչինչ չի՞ պատմել այս հարանթագի և մեջկապի մասին։

— Ոչինչ չի պատմել։ Երկուսն էլ փաթաթված են եղել քողերով և պահված են եղել նրա անդուկում։

— Անդուկը միշտ փա՞կ է եղել։

— Մենք երբեք բացված չենք տեսել։ Հայրս ինձ տվեց, որ հանձնեմ Հայաստանի Պետական Թանգարանին։

— Հայրդ ի՞նչ է անում։

— «Արագած» կոլխոզի ոչխարաբուծական ֆերմայի վարիչն է։

— Իսկ ճորոդ ո՞ղջ է։

— Նա ավելի շուտ է մեռել։ Իր գուլֆնի քասեն ես եմ կոտրել մածուն ուտելու ժամանակ։

— Նա ձեր հորը ոչինչ չի՞ պատմել Տիգրան թագավորի ոսկեդրամների մասին։

— Պատմել է։

— Ի՞նչ է պատմել։

— Ասել է՝ թե իր հայրը ժամանակին մի քանի ոսկեդրամներ է գտել Դիարբեքիրի ավերակներում։

— Այդ ոսկեդրամների վրա վաղ այրվածքի հետքեր կան։ Չի՞ ասել թե ինչի՛ հետևանք է։

Մոտկանի Շեն գյուղում հրդեհ է եղել։

— Ե՞րբ։

— Երբ այրվել է Զորո Դավթի տունը։ Գյուլեն է դրանք կրակի միջից հանել։

— Ո՞վ է Գյուլեն։

— Սասունցի կին էր։ Նա մեռավ իմ ջոջոյի մահից մի քանի օր հետո։ Նրա փորի վրա զենք գտան կապած։

— Ի՞նչպես,— զարմացած իրար նայեցին Թանգարանի աշխատակիցները։

— Մի հին ատրճանակ։ Ջահել հասակից կապել էր փորին և մինչև մեռնելու օրը պահել էր շորերի տակ։ Մեռնելուց առաջ շըրջում էր գյուղի մեջ և պատերի տակ նստած կանանց ասում էր. հերիք է խոսեք պատերի տակ։ Գնացեք ձեր լոռըցած աղջիկներին կարգեք։ Իսկ նորահարսներին քարոզ էր կարդում, թե ծանր քեալեք գյուղի մեջ։ Էնպես արեք, որ ձեր կրունկները տղամարդկանց չերևան։

— Իսկ այս ի՞նչ ոլորվածք է հարանթագի վրա։ Կարծես թե մի թարկացած մարդու ձեռք է դիպել այս օղերին։

— Չգիտեմ։ Հայրս ինձ ասաց, որ երբ մեր ճորոն պատկվել է,

հարսանիքից հետո Մուշի գավառապետը մի ինչ-որ գործի համար կամեցել է նրան դատի տալ և բանտարկել։

Նույն օրը թանգարանի դիրեկտորի կարգադրությամբ ազգագրական բաժնի աշխատակիցը պատանի Մհերի հետ մեկնեց Իրինդ՝ տեղում ավելի հանգամանորեն պարզաբանելու Զորո տան հետ կապված ողբերգությունը։

Երկու օր հետո նա Երևան վերադարձավ թանգարան տանելով Բայազի հռչակավոր իլիկը և այն յոթ քողերը, որոնց մեջ փաթաթված էր եղել հարսնթագը։ Դրանք այն գույնզգույն շղարշներն էին, որոնցով Սանամը զարդարել էր Խոշո տան նորահարսին դրանից վաթսունհինգ տարի առաջ։

Ճամփով անցնելիս Մհերը նրան ցույց տվեց Խոդեդանի գերեզմանը, որի վրա քանդակված էր մի գելխեղդ շուն, մի ձեռնափայտ և մի հարան։ Այնտեղ ավելացել էր մի ուրիշ շիրիմ, որի վրա հայերեն հին ուղղագրությամբ գրված էր. «Դաշտադէմցի Գէորգ, որդի Կլկըլ Օհանա, ի սուրբ Աղբերիկ»։

Մինչև ազգագրագետի վերադարձը, բոլորովին պատահաբար, պարզաբանվել էր նաև արծաթե գոտու խորհրդավոր առեղծվածը։

Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից Երևանի Պետական մատենադարանին էր ուղարկվել մի շատ հին ավետարան մետաղյա փակիչով, որի կազմի վրա խաչ և ձիավոր կար։

Այդ Ավետի Հաջու դեֆտերն էր։

Ավետարանի հիշատակարանի մագաղաթներից մեկի վրա հայերեն և արաբերեն տառերով հայտարերվել էր մի այսպիսի արձանագրություն, որ վերաբերում էր շատ վաղ ժամանակներին։ Ավետի Հաջու նախնիքներից մեկը գրել էր. «Երբ ինձ զգուշացրին՝ թե հայերի այդքան բացահայտ պաշտպանությունը կարող է պատճառ դառնալ իմ բովանդակ ցեղի ոչնչացումին, ես նրանց երեսին բացագանչեցի. «այն ժամանակ թող ապագա սերունդը իմ ընտանեկան հավաքական դամբանի վրա արձանագրե. «այս տունն ընկավ հալածական և համարյուն իր եղբայրները — անմեղ հայությունը պաշտպանած լինելու համար»։

Հավանորեն այդ նշանավոր խոսքի վերջին մասը հետագայում նշանաբան էր դարձել հայ քրդական բարեկամությանը՝ փորագրը-

վելով թանկագին հիշատակների վրա։ Այն փորագրվել էր նաև կանացի այն արծաթե գոտու վրա, որ Խոդեդանի հարսանիքին Շնկոն Բայազին էր նվիրել իր և Զոզանի կողմից։

* * *

Անցել են տարիներ։

Ներքին Թալինի խանգարված վանքի մոտ ավելացել է մի նոր շիրիմ։ Այդ Թելո Մեսրոպի գերեզմանն է։ Նա պառկած է Գիմսա Մելիքի և Փղորկվա Կարոյի շարքում։ Նրա կիսատաշ քարի վրա նկարված է մի փունջ ավել և ծուռ ու մուռ տառերով փորագրված է.

«ԹԵԼՈ ՄԵՍՐՈՊ, ՄՇՈ ԲԵՐԴԱԿ ԳՅՈՒՂԻՑ»։

Նորից ծաղկում են ավելները, ամենայն գարնան կարմիր ներկելով ժեռ ու քարափ։ Թելո Մեսրոպի մեծահասակ աղջիկները գալիս են վանքի դուրանը ավել քաղելու և երազի պես վերհիշում են իրենց հոր կյանքը։ Նրանք ավելների գույնզգույն պսակներ հյուսելով դնում են այն մեծապճեղ հռչակավոր շինականի գերեզմանին, որ Թարգմանչաց վանքի տոնախմբությանը հաղթել էր յոթ փահլևանի և միայն մեկ անգամ էր պարտվել կյանքում, երբ այդ միևնույն մրցությանը չափվել էր արինոքցի նշանավոր հովիվ Խոդեդանի հետ։

Թող հողը թեթև լինի Խոդեդանի, Թելո Մեսրոպի և բոլոր նրանց սերնդի մարդկանց շիրիմներին։

Երբեմն-երբեմն իրենց հանգստի պահերին այդտեղ են գալիս գյուղատնտես Գարեգին Պիծակը, ջրերի ավագ կարգադրիչ Նգոր Քաջունին և հանդապահ Զորավարդ Սամվելյանը։ Քաղաքից այդտեղ են գալիս բատրակկոմի նախագահ Արո Համազասպը, Հայաստանի լուսավորության նոր մինիստր Արամ Խնկոյանը, միլպետ Արամայիս Զատիկյանը, Գվիդոն ապարանցին, և Կծկուկ Շմավոնը՝ սեփական ավտոյով։

Գալիս են, ինչ-որ բան են վերհիշում և վերադառնում են իրենց տեղերը։ Իսկ շուրջը զրնգում է Հայաստան աշխարհը, հայ ժողո-

վրդի նոր կյանքը, կյանքն այն հինավուրց երկրի, որ եղել է, կա և կլինի, Հայկական Պարի պես վեհատեսիլ և անկորնչելի, Արա-գածի և Մասիսի պես հավերժական։ Հետևապես կա և կլինի Հա-յաստան աշխարհի այն փոքրիկ գավառամասը, որ կոչվում է Թա-լին, այն քարքարոտ սարահարթը, ուր լեռնային կաքավները ամեն տարի ձու են ածում հեքիաթի պես ապրած և անցած շինական խոզեղանի և Բայազի կոտրած կճուճի մեջ։

Այդ կճուճը այժմ էլ կա։ Եվ եթե որևէ մեկը գարնան ամիսնե-րին անցնելիս լինի Հինգ ռանչպարի ձորով, Ճանապարհի եզրին նա կարող է նկատել կանաչության միջից կարմրին տվող մի ամանի բեկոր, որի մեջ սպիտակին են տալիս կաքավի ձվեր։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Խոսք բանաստեղծ Ավետիք Իսահակյանին	1
Խոսք ընթերցողին	3

Առաջին մաս

Շենում	6
Դեպի Բոնաշեն	14
Թամոյի մոտ	20
Դավթի բերդում	24
Քուվի այծեր	27
Երկու ընկուզենի	30
Դարբին Զենոբը	34
Հայ մշակները	38
Արինոբի ճանապարհին	43
Երկու բուրդ	48
Հանդիպում Կատվաձորում	55
Նոր տուն	59
Հարևանի շեմքին	66
Սև սարի բնակիչները	70
Խորոված ավելորդ պատառը	74
Բոնաշենցի հովիվը	78
Շինական Պողոսը	83
Սուրբ Աղբերիկի գաղտնիքները	85
Գոմսա Մելիքի խումբը	91
Թարգմանչաց վանքի բակում	99
Խոդեղանը գնում է գելխեղդ շներ բերելու	105
Դաշտի գայլը	111
Էս իմ խմաթն է	117
Մատանու հետից	119
Հարսնախոսություն խորհրդավոր կճուճով	126
Ալվարինչու հարսը	132
Պնտխցի Մանուկի մոտ	138

Ճախրականում 145
Փրկանք 163
Խոդեդանի հարսանիքը 148
Ընտանիք և տնտեսություն 171
Աքաղաղների կռիվը 177
Գայլերի հետ 181
Թևավորները 184
Արջերը 186
Գազպաքաղ 189
Դիպված անտառում 191
Ալին ու Վալին 195
Մի զարմանալի ամուսնություն 201
Լեռնային դաստիարակություն 205
Անօրինակ հայրենասերը 210
Ծպտված ավազակը 216
Վերջին ավելները 224
Արևի խավարումը 229
Տառապանքի օրեր 236
Վարդավառի կիրակին 240
Ցոթ օր 251
Ծաղկի թույնը 258
Անդոկի անկումը 264
Ոսկով լի կճուճը 269
Արինոքի ձորում 275
Սուրբ Աղբերիկի ճակատամարտը 278
Հաջին գնում է Քրդստան 283
Հրաժեշտ Արինոքին 293
Տոնեն բաժանվում է Սև սարից 298
Խնուսի լեռներում 303
Ճանապարհին 308
Էջմիածնի դաշտում 315

Երկրորդ մաս

Բնակատեղի որոնողները 323
Սասունցիների դիմումը 327
Նոր տուն Արագածի լանջին 330
Առաջին դժվարությունները 333
Բատրակների հավաքը 336
Խոդեդանի ճառը համագումարում 340
Նոր գյուղ 343
Վերին Սասնաշենում 346
Հին վեճը հարթված է 349

Գյուլեն 354
Առաջին ուսուցիչը 357
Վարժապետ Ճրագը 363
Վերին Թալինում 369
Լիկկայանում 379
Հինգ «հրաշքները» 385
Բժշկի մոտ 391
Նամակ Մուշից 394
Խոդեդանը մտնում է կոլխոզ 401
Ով էր Աբո Համազասպը 408
Նոր կյանք 413
Մենասմտես Թելոն 416
Հեղինեն ամուսնանում է 422
Թոռնիկի եռևից 428
Կործանված տոհմի փառքը 433
Հանդիպում Մոսկվայում 436
Այց հարազատներին 443
Խոդեդանի հարկի տակ 447
Ոսկեհատը 451
Թամոյի դերեզմանի առաջ 453
Աղեղվածի լուծումը 456
Խոդեդանի իղձը 459
Հյուրասեր Խիմաթը 461
Բայազը Երևանում 463
Վերադարձ 470
Խոդեդանի մահը 473
Ջորո տան ծուխը 478
Ոսկեծաղիկը 483
Սարի ձյունը 486
Բայազի հրաժեշտը 491
Խանգարված վանքի մոտ 494
Ծանոթ ճանապարհով 499
Վերջաբան 502

Խմբագիր՝
Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

Տեխնիկական խմբագիր՝
Պ. ՍԱՐՈՅԱՆ

Վերստուգող սրբագրիչ՝
Ա. ԵՐԻՑՅԱՆ

ՎՖ 07329 Պատվեր՝ 1172։ Տիրաժ՝ 20 000։

Հանձնված է արտադրության 31/VIII 1956 թ.։
Ստորագրված է տպագրության 26 XII 1956 թ.։
Թուղթ 58×84 1/16։ Տպագր. 31,9 մամ.=28,1 պայմ. մամ.,
հրատ. 23,8 մամ. +8 ներդիր։
Գինը կազմով 9 ռ. 70 կ.։

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության Պոլիգրաֆկոմբինատ,
Երևան, Տերյան № 91։